



**ՍՓԻՈՔԱՆՅ ԿԵԱՆՔԵՐ  
ԻՆՉՊԵՍ ՈՐ ՏԵՍԱՅ**

ՊԵՅՐՈՒԹ, 2018

Ն-59

ԳՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

9549

**ՍՓԻՒՌԱՀԱՅ ԿԵԱՆՔԵՐ  
ԻՆՉՊԷՍ ՈՐ ՏԵՍԱՅ**

ՊԵՂՈՒՔ  
2018



Խմբագրեց եւ Համադրեց  
ԳՈԿՏ. ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՍՏԱՏՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՓՅՈՒՂԹԻՆ ԱԿՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



MINISTRY OF DIASPORA OF  
THE REPUBLIC OF ARMENIA

ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

« 10 » ..... 02 ..... 2011 թ.  
011/2011-271-11

*Տիկնոջս՝ Արտային եւ զաւակներուս՝ Վահէին եւ Ալի-  
քին, որոնց սէրը եւ ննցուկը կը վայելեմ աշխատանքա-  
յին, ազգային, եկեղեցական եւ հասարակական կեանքիս  
մէջ, ինչ որ կը քաջալերէ զիս աւելին տալու:*

ՀՀ ՍՓՅՈՒՂԹԻՆ ԱԿՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐ  
ՊԱՐՈՆ ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆԻՆ

Հարգելի պարոն Ճեպէճեան,

Ընդունեք մեր անկեղծ շնորհակոթանքները Ձեր «Հայոնմ Գոյապայքարի Դանաքը»  
գրքի լոյս ընծայման կապակցութեամբ: Ընդհակալ եմք գրքի օրինակը մեզ ուղարկելու  
համար:

Այս արժեքավոր գիրքը Ձեր ազգային-հասարակական և հրապարակային գործնւոյթեան  
արգասիքն է: Գիրքն անշուշտ վկայում է Ձեր բեղում գործնւոյթեան և Ձեր մեջ նվիրյալ  
հայի կերպարի արտացոլման մասին:

Մաղբում եմ Ձեզ կամք և անսահման ուժ Ձեր միտքն ու մասնագիտական փորձը բոլրին  
համմնելու համար: Ընդհակալ եմ գրքի համար և վստահ եմ, որ Ձեր գրիչը դեռ երկար  
պիտի շարունակի գրել և ծառայել հայ ազգին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

*Կ. Դեպեյան*  
ՀՐԱՆՈՒՄ ՀԱՎՈՐՑԱՆ

ISBN 978-9953-0-4400-2

Կողքի սկարը՝ «Գունաւոր տուններ»  
Գործ՝ Գեղանկարիչ ՎԱՐԳԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ

«Այո՛, տարբեր գաղափարներ հմտութեամբ իրարու կը զուգորդուին, կրօնականը ազգային գաղափարախօսութեամբ կը պարուրուի, հին բարոյախօսութիւնը նոր տուեալներու լիցքով կը նորոգուի ու նոր տարագ կը ստանայ, քաղաքականը ազգային տեսլականներով կ'իմաստաւորուի, յարանուանութիւնները կը դիտուին իբրեւ անըակտէի մէկ օղակը ազգի հաւաքականութեան, ազգայինը կը տեղադրուի մարդկային պարունակին մէջ եւ վերջապէս, Զրայր Ծեպեճեանի գրութիւնները իւրայատուկ խոհերով դրոշմող եւ հարստացնող վարպետ գրիչ մը, որ կը մղէ ընթերցողը հետաքրքրութեամբ ու ըմբռնչումով երկար ժամեր փարած մնալ ընթերցումին»:  
**Միհրան Զիւրաբեան, Յունաստան**

«Արեւմտահայերէնի յարատեւման լաւատեսութեան փաստերն մէկը Զրայր Ծեպեճեանի նման ազգասէր, քրիստոնէասէր, լեզուասէր անհատներու կեցուածքն է, գրութիւններն են, յարատեւ պայքարը ուժացման դէմ: Սփիւռքահայրու տառապանքը, դժուարութիւնները իրն են նաեւ: Ան կը պայքարի հայրենի, կը պրպտէ, կը յուսարդէ, կը ցաւի: Եւ լաւատեսութեան շունչով կը շարունակէ ապրիլ ու մարտնչել: Զեղինակը հայրենավառ հաւատքով պայքարող հայրենասէր է»:  
**Յովսէփ Նալպանտեան, ԱՄՆ**

«Թոյլ տուէք, որ Զրայրը անուանեմ անկէզ մորենի բոցավառուած հայրենասիրութեամբ, հայ մշակոյթով եւ ինչ որ հայ մարդու, հայ հողի արգասիքն է, նաեւ ինչ որ մարդկային է ու արդար այս անարդար մոլորակին վրայ մղուող պատերազմներով»:  
**Տոքթ. Թորոս Թորանեան, Սուրիա**

«Զրայր Ծեպեճեան՝ սփիւռքածին հայ մարդը, ուսման ու կրթութեան ճամբով կեանքի յառաջխաղացքին հաւատացողը, քրիստոնէական սկզբունքները յաւիտենակչան ճշմարտութիւն դաւանողը, հինը իբրեւ արժէք պահելով հանդերձ, անոր կողքն ի վեր նորը ստեղծելու մարտահրաւերին դիմաց կանգնած հայասերը, ազգասէրը, լիբանանասէրը եւ, վերջապէս՝ պահանջատերը: Լիբանանցի հայն է ան, իր ծննդավայրի տաք ու պաղ օրերու երախտաշատ ուղեկիցը, որուն ստորագրած գրութիւններուն մէջ պետք է փնտռել եւ գտնել այն եռանկիւնը, որով կ'ամբողջանայ Զրայր Ծեպեճեան հայուն, լիբանանցիին եւ քրիստոնէային բաբախուն եութիւնը»:  
**Սեդա Գրիգորեան, ԱՄՆ**

«Զրայր Ծեպեճեան կը ցոլացնէ ոչ միայն Աւետարանի քարոզիչի

մը դիմանկարը, այլ նախ հայ մարդուն, ապա ընդհանրապէս բոլոր գրկեալներուն ու տառապեալներու ցաւերուն կուրծք բացած մարդասէր հեղինակ մը»:  
**Ռուպեր Զատեճեան, Թուրքիա**

«Շատ գնահատեցիք ձեր լաւ հայ մարդու հոգին, լեցուած հայկական հարցի, հայ դատի եւ պահանջատիրութեան ոգիով եւ մնալանոց՝ առանց յուսահատելու՝ յարատեւելու եւ հետապնդելու անհրաժեշտութեան հաւատքով: Յիշատակութեան արժանի են անոր յարաբերութիւնները ու անխախտ կապերը հայրենիքին եւ հայութեան հետ»:  
**Թագուհի Տէվէթեան, Կիպրոս**

«Զրայր Ծեպեճեանի խոսքը վարակիչ է, ուսանելի, ուղղված է ապրել ուզողին, եվ հաջորդվելու ինքնամոռաց զգացումներ է ծնում»:  
**Ռոբերտ Ամիրխանյան, Զայաստան**

«Hrayr Jebajian is an acute observer and a good storyteller. He has the ability to communicate issues in an eloquent way. His descriptive power is very effective. His articles mirror human experiences so vividly and realistically. In all his writings he deals with issues and people with an open, honest, and down-to-earth style. He shares insights that he gained through his life experiences and struggles from his personal and professional life which leave an impact upon the reader.»  
**Rev. Dr. Vahan Tootikian, USA**

«Զրայր Ծեպեճեանին յօդուածներու իւրաքանչիւր վերնագիրը մեր անօրէտային եւ ազգային հաւաքականութեան համար իր ինքնուրոյն պատգամը ունի: Յատուկ մտածում, խորք, սեր, հայրենասէր, քրիստոնէայ՝ համախմբուած ուժակականութեամբ»:  
**Զարմինէ Պօղոսեան, ԱՄՆ**

«I have been captivated by Hrayr's God-given enormous talents combined with his thorough knowledge of our spiritual, national, and cultural values and their impact on our individual and collective life. Hrayr is an outstanding example of the finest in the Christian Armenian character and attributes. His exemplary service and leadership lift him above the crowd and make him a vast source of inspiration to all of us.»  
**Dr. Garbis Der-Yeghiayan, USA**

«Մեր անմիջականութեան մէջ գրանցուած երեւոյթներն ու իրականութիւնները ժամանակի տարածքներուն մէջ տեղադրելով, ճե-

պէճեան յաջողած է մասնակիէն հեզաստի անցումներ կատարել դէպի համընդհանուրը. ազգայինէն դէպի համամարդկայինը, եկարագրի լաւ յատակահիշերու մէկ մանրամասնութենէն դէպի քրիստոնէական ընդհանուր արժէքներու համակարգը: Ազգային, հոգեւոր միութեանական դաստիարակութեան արդիւնք, որ յաջողած է Յրայրի հրապարակագրութեան մէջ գտնել այն ոսկի միջինը, որ համակարգած է հոգեւորին առընթեր ազգայինը, մարդկայինին առընթեր քրիստոնէականը, աշխատունակութեան հետ նաեւ աշխատանքին արդիւնքը բաժնելու հոգեկան գոհունակութիւնը»: **Շահան Չանտահարեան**, Լիբանան

"Having just finished reading your book, I feel an immense sense of gratitude to you for the wealth of wisdom, information, and challenges you share with your fortunate readers. During these weeks of reading it, I had the impression of walking with you the long and hard "path" all Armenians, in one way or another, have to walk in search of a destiny not always clear and that therefore has to be invented. Being an Armenian in Beirut or in Sao Paulo, in Cyprus or in Switzerland, has been an exercise for me in trying to find the right balance among many loyalties, of valuing and opting for the best of several cultures. I am sincerely grateful to you for having published these portraits of a historical reality of which all those who have the chance to read them will feel to be a part. Indeed, "The Armenian's Path of Struggle for Existence" deserves a place of honor in the ranks of the Armenian contemporary literature. I pray that you may continue to carry on this mission for many years to come." **Rev. Dr. Aharon Sapsezian**, Switzerland

## ԽՄԲԱԳԻՐԻ ԽՕՍՔԸ

Անսակարկելի է Հրայր Եւպէճեանի հաւատարմութիւնը: Հաւատարմութիւն՝ հայուն, հայրենիքին, եկեղեցիին, մշակոյթին, պահանջատիրութեան, պատմութեան, մամուլին եւ սփիւռքին: Մէկ խօսքով՝ հայկականութեան:

Պիտեւով, արժեւորելով եւ մեկնաբանելով՝ երեւոյթներ, եղելութիւններ եւ փորձառութիւններ՝ հայու մը աչքերով եւ արժէքներով, Դուկտ. Եւպէճեան կը հասնի տրամաբանական, մատչելի, դաստիարակչական, մոյշ եւ խրամող վերլուծական եզրակացութիւններու: Եզրակացութիւններ, որոնք անպայմանօրէն կ'ընդգրկեն հայուն ազգային, մշակութային, քաղաքական եւ հոգեւոր մարտահրաւերները եւ անգուզական վերապարտի որոշումը եւ անոր կիրարկումը:

Հրայրը հպարտութեամբ եւ հարազատութեամբ կը պատմէ Սոնիային մասին, Անիին, Սարոնին, Նազարին, Խորիսիին, եւ Կիլիկիեցեանին՝ տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ, սկսեալ Նիւ Եորքէն մինչեւ Սանթիակո, Տուպայէն մինչեւ Նիկոսիա, Ալգաւէն մինչեւ Արևոք, Թալիմէն մինչեւ Վարշաւա: Գանձարան մը, որ մատչելի կը դարձնէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Հարաւային Ամերիկայի, Սիչիլի Արեւելքի, Եւրոպայի, Ասիոյ, Աստրալիոյ, եւ Ափրիկէի մէջ ապրող հայուն գոյատեւելու աննահանջ գաղափարախօսութիւնը:

Պրպտող միտք, անխոնջ ուժ, անպատ խանդ եւ իրայատուկ ընձեռում կ'արտացոլայ իւրաքանչիւր յօդուածի ընդմէջէն՝ միշտ բարձրը, լաւը, ճիշդը, դրականը, յուսադրիչը, եւ քաջալերականը, յուսարձակի տակ ստեղծու համաշխարհային հայուն ներդրումը համահայկականութեան զարգացման, վերելքին, նուաճումներուն եւ գոյատեւման մէջ:

Դուկտ. Եւպէճեանի 2011-էն մինչեւ 2017 տարիներուն գրուած ազգագրական յօդուածները, որոնք ժամանակագրականօրէն ներկայացուած են ընթերցողին, լրագոյն վկան են անոր առողջ տեսլականին, բացատրիկ երանդին, խիզախ վերլուծումներուն, հասուն մտածելակերպին եւ հաստատ հաւատքին անցեալ եօթ տարիներուն ընթացքին՝ միշտ առաջնակարգ դասելով հայուն փշոտ քայց անսակարկելի ինքնութեան գոյապայքարի ճանապարհը:

**ԱՐՄԱ ԵՒՊԵՅԵԱՆ**

*Դուկտոր Ընկերակիզուարանութեան*

## **ՍՓԻՒՌԸ՝ ՎԵՅ ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՐՉՐԱԴԻՐ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻՅ**

**(Յրայր ճեպճեանի  
իմացական եւ ճանաչողական նոր բաւիղներում)**

Դեռ 2010-ին, երբ Պէյրութում հրապարակ իջաւ Յրայր ճեպճեանի «Յայուն գոյապայքարի ճանապարհը» նօթագրութիւնների ստուար գիրքը, շատերին թուաց գուցէ, թէ հոգեւոր ու գիտաճանաչողական, որոշ չափով դիւրընկալելի մատուցմամբ ժանրի նման ընտրութիւնը անպայմանօրէն հզօր ներուժի տէր գիտնականի աշխատութիւններում ժամանակի ընթացքին իր տեղը պիտի զիջէր հայագիտական կամ հոգեւոր ոլորտի մի հիմնարար, ծանրանիստ հարցի ցնուրթեան, այնքան որ հեղինակը կուտակած հսկայական նիւթի մատուցման ճանապարհին գիտական բարեխղճութեան կարգապահ իր տեսակով հայ հանրութեան մէջ արդէն ներշնչել էր դրա իրաւունքը:

Բայց ահա եօթը տարուայ ընդմիջումից յետոյ, երբ լոյս է տեսնում նոյն հեղինակի ուսումնասիրութիւնների, հրապարակագրութեան, հսկայածաւալ դիմապատկերների երկրորդ ծաւալուն՝ «Սփիւռքահայ կեանքեր՝ ինչպէս որ տեսայ»՝ փոքր-ինչ անսովոր խորագրով գիրքը, նկատում ենք, որ գնահատութիւնների մէջ սպասուած հարցականը այդպէս էլ չի նուազում. ժանրի եղանակի մատուցման մէջ Յր. ճեպճեանը մնում է նոյն հաւատարմութեան յորձանքում՝ նախընտրելով համայնապատկերի ամբողջական թեթեւասահ, անմիջական, կարեւր լի է ասել, մտերմիկ ոճաւորման կառոյցը:

Դա գալիս է ընթերցողի հետ երկխօսութեան անյազուրդ պահանջից, երբ հարկ է, որ ընթերցողն իր կարգին իրեն արժեւորի, հարստանայ այդ կարգի գրոյցներից, անելին՝ դառնայ հասցեատրուած թիրախ, անմիջական գրուցակից, սփիւռքահայ՝ իր իսկ սիրելի բառով՝ «կեանքերից» մէկը:

Այս առումով Յր. ճեպճեանն իսկապէս շահողի դերում է. նա ձեռք է բերել ընթերցողների կայուն, այս գրքի փաստով յաւելենք՝ ընդլայնուած յարան:

Մեր առջեւ ներհուն դիմագիծ պարզած, խորաճանաչ աստուածաբան, Աւետարանի լայնածաւալ ածուներում Մշակի հետագիծ ձգած դոկտոր Յրայր ճեպճեանն է, որն իր իմացական կազմաւորումն ստացել է անցեալ դարի ութսունական թթ. Նախ, Պէյրութի Յայկագ-

եան եւ Ամերիկեան համալսարանների մթնոլորտում՝ առետրի ու տնտեսագիտութեան պատկառողի, ապա մագիստրոսի աստիճաններով, ապա, շատ աւելի ուշ, Լիւ Եորքի Աստուածաբանական Սեմինարիայում պաշտպանել դոկտորական ատենախօսութիւն: Կարճ ժամանակում Երիտասարդ գիտնականը վերագտաւ ժողովրդին ու Զրիտանեական գերագոյն արժեքներին նուիրումի իր համար թանկ երկրպո՛ լծուելով Սուրբ Գրային Ընկերութեան, Աստուծոյ խօսքի՝ մեր մէջ ու մեզանկից դուրս համայն աշխարհում հայօրէն ծաւալելու, «Աստուածաշունչը» պարզ ու անաղարտ, նաեւ մատչելի մատուցելու ամ այսօր շարունակական անսակարկ ծառայութեան խորհուրդներին:

Յրայր ճեպեճեանի սօթերի այս վերջին հաւաքածուն՝ «Ափիւռքահայ կեանքերը՝ ինչպէս որ տեսայ», ընկերային խորունկ հայեացքի ծանրակշիռ, մէկ ամբողջական շնչի ուսումնասիրութիւն է՝ լայնահուն աչք, որ բացուած է ազգային նորօրեայ երկփեղկ կեցութիւնների վրայ: Գիրքը գիտնականի ազգային, ընկերային-մանկավարժական, հայկական ծանօթ-անծանօթ տարաշերտ երեսներով մտահոգութիւնների, գրամշակութային մեկնական եւ, ի հարկէ, վեհագնայ քրիստոնէական շահագրգռութիւնների վերելքի դերերով ճանապարհն է: Այն հնարաւորութիւն է տալիս ընթերցողին հաղորդակից դարձնելու տեսողութեան նոր հարթութեան կամ, ինչպէս յաճախ ընդունուած է այս պարագային՝ օտար բառ գործածել, նոր «ռեյտինֆի»:

Յարցումը օդի մէջ է՝ ինչո՞ւ հենց 2011-ից, պատասխանը՝ աւելի քան ճշգրիտ՝ «Յունուար 2011-էն ի վեր արաբական աշխարհը կ'ապրի յեղափոխութիւններու հեւք մը: Այսպէս կոչուած՝ «Արաբական գարուն»: Ուրեմն, դիպուկ է նկատառումը. յեղաբեկումների շրջանի սկիզբն է, որ կասկածի տակ է դնում «տարածաշրջանին մէջ ստեղծուած մարդկային կեանքի արժեքները»: Ասուած է զուսպ ու հեռագուած մտաբանորով՝ «Յանգի՛ստ ձգեցէ՛ք տարածաշրջանները: Յոս արժեքներ կան, որոնք պէտք չէ՛ արյին»:

Այս ամէնի մէջ հոգեւոր մտքի գերակայութիւնը, քնականաբար, ընդմիջուած է ազգային բազմաձև խորունկ հարցադրումներով, ինչը հեղինակի ընկերային ընկալչութեան հարստութեան նշանն է: Սակայն «հայուն գոյապայքարի ճանապարհ» հարթօղ խորագետ մտաւորականը այս անգամ հրաժարուել է կիւթերի դատաւումի բնական թուացող եղանակից եւ բռնել է ուսումնասիրութիւնների, յօդուածների ժամանակագրական մատուցման սկզբունքը՝ վերհանելով ժամանակի թռիչքին հպատակուող խօսքի իր սլացքը, որտեղ մեր առօրեայի վազքի միջից փորձել է հանել մշտականին ձգուող պահը վայրկեանի մէջ: Մեր կարծիքով, սա այս գրքի առաջին յատկանշական կողմն է:

Ուշագրաւ է, որ շուրջ քառասուն տարուայ գործունէութեան ծիրից ներս հեղինակը երկրորդ աշխատասիրութիւնն է հրամցում մեզ, ինչից մենք ամբողջացնում ենք նրա՝ այս ժողովածուի նկիւթերի ընտրութեան երկրորդ յատկանշական բնութագիրը. իրականում մեր հեղինակը շարունակում է առաջինից՝ «Յայուն գոյապայքարի ճանապարհ» գրքից բխող ազգային եւ հոգեւոր մտահոգութիւնների մատուցման գտնուած մօտեցումների համակարգը: Այստեղ մենք, նախ, որոնք ենք առաջին հայեացքից ենթակայական հարցադրումները՝ «սփիւռքահայերի կեանքերից» վերջադրուած տիպարներ, որոնց յաճախակցը աշխարհի տարբեր անկիւններից թունդ է հանում մեր ու հեղինակի հոգեաշխարհը՝ Պէյրուէ-Զուլէյթ-Կիպրոս յարափոփոխ ու մշտական վեպածով: Ընդ որում՝ նրա առանցքի վրայ Արաբական տացուկ Օրցում «ծվարած հայի» տրոփող սիրտն է, որը, - եւ սա մօտեցումների երկրորդ քննարկն է հանգրուանն է, - Յր. ճեպեճեանը տարածում է աշխարհացիր ու զաղտնածիր ճամբաներով՝ «վասն կրօնից եւ հայրենեաց», ինչպէս հենց իր ամիթով փորձառութեամբ շեշտադրել էր նորերս վախճանուած Անդրանիկ Ճայրագոյն Վարդապետ Կռանեանը:

Այդ անվերջանալի ճանապարհին Յր. ճեպեճեանը մեզ իր հետ հեփիտէ հասցնում է Ճայրագոյն (մեզ՝ արեւելահայերիս համար դեռ մնում է քննանի տեղանունի «Յեռաւոր» բաղադրիչը) եւ Մերձաւոր Արեւելքի սահմանները, անալոյմանօրէն Սուրիա՝ իր Յոմսով, եւ անընդմէջ շարժումը դէպի Արեւելք՝ ընդհուպ մինչեւ Յունկոնց ու Կամչատկա, յետոյ կտրուկ շրջադարձ կատարում դէպի Յիսիսային Ափրիկէ, Լատինական ու Կենտրոնական Ամերիկաներ, եւրոպական լուսաւոր երկրներ, որոնց շարքին՝ Թուրքիայի արեւմտեան հատուածը՝ միշտ անզուգական Պոլիսով: Եւ դա՛ մտորիներ ի վեր, եւ դա՛ ապափնած իր տեսողութեանը, իր խօսքի ներուժին ու հմայքին:

Դիպուկ է նկատուած, եւ մենք էլ ձգտենք ամրագրել արդէն մեր տրոփի գնահատութիւնը, որ Յրայր ճեպեճեանի եւ Վահրամ Մավեանի գործունէութեան միջեւ քաշուած տեսանելի զուգահեռ կայ, որը ապրումի ու նուիրումի միասնական անցումի արահետ է, ինչը խորքի մէջ բնութագիր է՝ ճանաչողութիւն լինելուց առաջ. բոլորն են իշում Վ. Մավեանի «հայուն բեկորների» վաւերական ու գեղարուեստական փնտառուցը աշխարհի հնարաւոր ու անհնարին չորս ծագերում, «անիւների վրայ»:

Ուզում ենք մասնաւորաբար ծանրանալ Յր. ճեպեճեանի այս գրքի խորագրից՝ մեր արդէն իշատական «ենթակայական» եզրին, որի տակ հասկանում ենք ոչ այնքան պատմական անձանց եւ «պարզ մարդոց»՝ թումանեանական արտայայտութեամբ՝ «անցորդների» ներգրաւումը ընդարձակ պատումի մէջ գեղարուեստական շնորհալի

ներկիսումով, որքան սփիւռքահայ բազմաբղետ աշխարհի համալսարհատկերի կառուցումը՝ իբրեւ ազգային ամբողջական,- թելուզ վեց տարիների,- շարժումի կրորագիծ, ինչու է, իր թափառումներով, աշխարհածեն շարունակական մարտահրաւերներով, տեւական տեղաշարժերով, տոհմական դիմագծի տեղ-տեղ հանդիպող անկումներով, միաժամանակ՝ հայկականի պաշտպանութեան խօսիական ձգտումով, անդուլ մացառումով, իմացական գերակայ զարգացումներով, անկախացած Հայաստան երկրի դժուարին հեւքին կարօտ մղումներով:

Ժամանակին «Մարմարա»ի գլխաւոր խմբագիր Ռուպեր Հատտեճեանը Հր. Ճէպեճեանին կոչել էր «Աւետարանի քարոզիչ» տարողունակ բնութագրումով: Մեզ թում է աւելին. «սփիւռքահայ կեանքերի», եւ առաջին հերթին՝ զրկեալների ու տառապեալներին նեցուկ կանգնած մարդասեր մեր հեղինակը յաճախ է Աւետարանի քարոզի բեմերից ինչում դէպի ժողովրդի իրական ցաները՝ յանձն առնելով կարծիք բանակ՝ պաշտպանելու համար մարդու իրաւունքի դատը համայն աշխարհի հոգերի դիմաց՝ ներանձնական թէ ազգային-հաւաքական նպատակադրութիւններով:

Այստեղ մենք որում ենք գրագետի՝ ազգայինից դէպի համամարդկայինը, եւ, ի լրումն պատկերի սրութեան, համարողկայինի մէջ քրիստոնեական արժեքի պաշտպանութեան բնափիլիսոփայութեան ակունքը: Եւ պատահական չէ, որ հանդիպումների, երկխօսութիւնների ընդմէջէն, ինչպէս ամբողջացնում է տարաբնոյթ մտքերի ներքին հաղորդակցական կապերի տրամաբանութիւնը այս գրքի խմբագիր, ընկերային լեզուաբանութեան դոկտոր Արտա Ճէպեճեանը, ընդելուզում են երեւոյթները, եղելութիւնները եւ փորձառութիւնները, որոնց շնորհիւ գրքի հեղինակը հասնում է «...մատչելի, դաստիարակչական, մղիչ եւ խթանող վերլուծական գերակացութիւններու»:

Ըստ եւութեան՝ սա է գրողական պրպտումների հետեւանք-հաւատարմութիւնը զուգահեռ ընթացող երկու հաւասարումներին՝ մարդակերտումի ու հայակերտումի խաչմերուկների վրայ:

Բերենք միայն մէկ ուսանելի օրինակ գրքի առաջին իսկ պատու-մից, որը, մեր համոզմամբ, բաւարար է՝ հաստատելու համար մարդու կերտումի տեւական ճանապարհին «հայկական հանդիպումների» երջանիկ պատեհութիւնը, որը հպարտութեան շունչ է տալիս Հր. Ճէպեճեանի նիւթին՝ իբրեւ գեղարուեստական տարրի նախապայ-ման:

Այսպէս, 2011-ի յուլիսեան կիրակնօրեայ մի օր հեռաւոր Սան Պաուլոյի Հայ Աւետարանական Կենտրոնական Եկեղեցում իր տուած քարոզի պահին նա բնագրով որում է, որ իրեն շատերը անսում էին՝ դժուարըմբռնելի հայերէնը լսելով, քան լընթացս տրուող պրտուզա-

լերեն թարգմանութեամբ: Գուցէ նրանցից մէկն է իրեն ակնդետ հետեւող յամճառ այս մի դէմքը: «Ռ՛ւ է»,- փորձում է ճշդել եւ ինքն էլ 70-ականների քառասնամեայ վաղեմի անցեալից փրթած յիշողութեան ծալքերից վերհանում անակնկալ պատասխանը. կնոջ այդ տիպարը իրեն ծանօթ էր երիտասարդական շրջանից. Պէրլութի Աւետարանական բարձրագոյն վարժարանի երգչուհին էր, մասնագիտութեամբ՝ երաժիշտ, տնօրէնի դուստր: Այստեղ՝ Բորազիլ Գելտալիան յայտնուել է 1978-ից, քայց մնացել է ուսուցչի նոյն պատգամին:

Կառուցողական ընդհանրական այս եղանակը Հր. Ճէպեճեանը հնտօրէն գործադրել էր իր առաջին գրքում եւս. յիշենք նոյնպէս երա-ժիշտ արուեստագետ, կիթառահար Եաքովու Գուլանեանի հետ երկ-ժամեայ իր հանդիպումը Պէրլութի միջազգային օդակայանում դէպի Կիպրոս թռիչքից առաջ: Նա, որ կապուած է Բախին, Թեօդորաքիսին, յի մտաւնում հայ մշակոյթի դեսպան լինելու «ճիտին պարտքը»: Երկուսի գրոյց արդիւնաւոր երկխօսութիւն է, մինչդէռ Գելտալիայի հետ կապը մնում է ըստ եւութեան՝ միակողմանի հայեացք, ճակատագրի հանդէպ ցաւ, ուրիշ ոչինչ:

Մերուկների կապը հեղինակին բերել է ժառանգորդութեան լեզուական նախահիմքի հանդէպ առաջնային սիրոյ ու հաւատարմութեան նոր պոռթկումի, նոր ճանաչողութեան: Օրինակ հաճելիօրէն յիշեցնում է Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինեալ խօսքին Տաթեւի վանքում հետեւող արջնակի դիմագիծը, որ օրեր շարունակ հետապնդել է եռամեծ աստուածաբանին: Համանման վիճակները հարստացնում են զուգահրի պատկերների հեռագեայ նշանառութիւնը. մի կողմում աստուածային խօսքի դեսպաններն են, «առաքիչները», միւս կողմում՝ ժողովուրդը, պարզ ու հաղորդական կանայք, երեխաներ, որոնք բախշուող հօսքի հոսքեատերերն են:

\*\*\*

Լսել խօսքը, տեսնել դէմքը, վերապրել յուշի անաղարտ պատառիկը, ապագային հաղորդել զգացածից իմաստութեան բանածելը: Ընդ որում՝ գործադրելով երկու ժամանակային գօտիների սահուն խաղարկումները, համարդելով քրիստոնեական ազատ մեկնութիւնների տեսաբանական գնահատութիւնները, ընդառաջելով օտարներին,- հիմնականում՝ արաբների,- ճանաչողական դատումներին, որոնք հարստացնում են մեր քարոյարանութեան գունային ելագծերը՝ թելուզ խճողած հերթագայութեամբ, քանի որ դա է պահանջում հանրագիտարանի ժամանակային սկզբունքը: Ընդունենք, որ դա, եթէ խախտում էլ է, ապա՝ ի շահ նիւթերի հնարաւորինս ամբողջական ընկութեան: Համաշխարհային քաղաքական զարգացումների,



այսօրիկ եւ անցեալի դասերից քաղուած ուրուագծերի մատուցման մէջ Յր. Ծեպեճեանը յենում է աւելի քան համամարդկային շէտադրումներին, այն, ինչ տոյն աշխատասիրութեան գործնական նպատակներէն է:

Սա է այն ճանապարհը՝ եմմաուս - մեր բոլորիս կեանքի ճամբան, որով անցնում է դոկտոր Յրայր Ծեպեճեանը՝ իր սփիւռքահայ (եւ ինչու միայն «իրենց») եւ «օտար» դէմքերով: Ահա՛ նրանցից մի քանիսը՝ բնականաբար ոչ ամբողջական թուարկումով, որոնց անծնագիր-անցագիրը այս գրքում կարգախօս, տողանցք բռնելու պէս է՝ «Բարե՛ն, Յրայ՛ր, ես ալ հայ եմ»:

Իւրատեսակ այս դիմանկարային ծաւալուն վրձնախաղերից մի քանի տողով պարզապէս նշենք Խորէն Եպս. Տողամաճեանին, Ասատուր Տեօվէթեանին, Վարուժան Ահարոնեանին, Վեր. Մանասէ Շնորհոբեանին, Մարիամ Մելքոնեան-Գունտակճեանին, Չարմինէ Պօղոսեանին, Սեպուհ Աբգարեանին, Կիրակոս Գույումճեանին Ներսէս Արք. Պոզապալեանին, Վաչագան Յովհաննեսեանին, Վարդան Թաշճեանին, Վեր. Արմենակ Միսիրեանին եւ, ի հա՛րկէ, Այնթապ-Յալէպ յիշողութեան անմար ծիրով՝ գերդաստանի հպարտութիւն կազմող Բուպեր եւ Յովհաննէս Ծեպեճեաններին, Ալիծին, հօրը՝ Վահէ Ծեպեճեանին, Ենիկէ Գունտուկճեանին, Բուպերտ եւ Ֆիլիպ Յովնանեաններին, Արտաւազդ Մարութեանին, Արմէն եւ Գրիգոր Մազումեաններին, Բարսեղ Կանաչեանին, Էլէն Աշճեանին, Վերճինիա Էքմէքճեանին, Զրիս Պոհճեանին, Էդի, Մանուկ Դեմիրճեանեաններին եւ բազում այլ դէմքերի, որոնցից քաղել է ամենից նուազագոյնը, բայց՝ ամենից թանկը:

Ներածական այս խօսքի մէջ մենք, ըստ էութեան՝ վերբերեցինք դոկտոր Յրայր Ծեպեճեանի կազմած Սփիւռքի մէջ խճողուած, ամենակուլ ովկիանի մեծ ալիքին դեմ կեցած, բայց հայ մնալու ճիգին կառչած մերօրեայ հայորդիների իւրովի հարուստ պահոցից անուններ, որոնք միւսների հետ մեր ժողովրդի գանգուածն են կազմում՝ ականատես վկայ հեղինակի հոգու խճանկարի անփոխարինելի գանձատուփը, որտեղ ընդգծուում է հենց իր՝ Ծեպեճեանական ամբողջական նկարագիրը:

Ուրեմն, վարձքդ կատար, գրիչդ դաւար, սիրելի՛ Յրայր Ծեպեճեան:

Պրօֆեսոր ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ  
Բանասիրական գիտութիւնների դոկտոր,  
«Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրէն

696

2011



«Այս կնոջ դեմքը ծանօթ է. տեղ մը տեսած եմ զինք»:

Կիրակի, 4 Յուլիս 2011-ի պաշտամունքին ընթացքին մեկ կողմեն կը քարոզեմ Պրազիլի Սաու Փաուլոյի 3այ Անտարանական կեդրոնական եկեղեցիին մէջ, իսկ միւս կողմեն դեմս նստած տարիքոտ հայ կին մը կը գրաւէ ուշադրութիւնս: Թեւեւ կեդրոնացումս չի շեղիր, միտքիս մէջ անցեալի հետ առնչուած յիշողութիւնս արթուն կը մնայ:

Ճիշդ էր, որ հայկական եկեղեցիին մէջ հայ ժողովուրդին ուղղուած էր քարոզս, բայց անհրաժեշտ էր քարոզին փորթուզալերէնի թարգմանութիւնը, որպէսզի աւելի լաւ ընկալուի պատգամը: Այդ կը կատարէր Արմէնը: Արմէն Պէրոյի Նազարեան վարժարանը յաճախած եւ 12 տարեկանին՝ 1978 թուականին, Պրազիլ գաղթած էր. հայերէնը բաւականին արմատացած էր անոր մէջ մինչեւ Պրազիլ գաղթելը, հետեւաբար դիրութեամբ կրցաւ թարգմանել քարոզը: Բայց ուշագրաւ էր ժողովուրդին աչքերուն մէջ թափանցող անձկութիւնն ու կապուածութիւնը հայերէնին քան փորթուզալերէնին:


Պաշտամունքէն ետք տեղի ունեցաւ կեսօրուան ճաշը: Պրազիլահայ գաղութին համար Յուլիս ամսուան ընթացքին եկեղեցիներուն եւ միութիւններուն մէջ Կիրակի օրերը տեղի կ'ունենայ խորովածի ճաշկերոյթ: Եկեղեցիին սրահին պատին վրան գետեղուած էին բոլոր հոգեւոր հովիւներուն նկարները, որոնք ուժ, ներշնչում եւ առաջնորդութիւն տուած էին այս համայնքին ու եկեղեցիին: Եկեղեցին երախտապարտ է իր հոգեւոր առաջնորդներուն, որոնք մեծ աւանդ փոխանցած են իրենց:

Բայց կը շարունակեմ դիտել: Կը հասնիմ եկեղեցական ժողովներու անդամներու անուանացանկին, որոնք նաեւ իրենց ծառայութիւնը մատուցած են եկեղեցիին: 3ոն տիկնանց վարչութեան մէջ կը գտնեմ 3ելտալիա Կայծակեան անունը:

Եկեղեցիին հովիւին՝ Վեր. Արահամեանին դառնալով կ'ըսեմ. «Ես կը ճանցնամ այս կինը: 1970-ին Պէրոյէ եկաւ եւ մեր 3այ Անտարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի ատենամարզանքին մեներգեց»:

Ճիշդ էր յիշողութիւնս. ան երիտասարդ երաժշտագետ-երգչուիկն էր, որուն հայրը՝ ճորճ Կայծակեան, մեր դպրոցին տնօրէնութիւնը վարած էր երեսունական թուականներուն, որմէ ետք գաղթած էր Պրազիլ: Այդ տարին ծնողները 3ելտալիան դարձեալ Պէրոյէ բերած էին տեսնելու համար իրենց ծննդավայրն ու դպրոցը եւ կ'երեւի վերջին անգամ ըլլալով:

Այդ օրերուն՝ մեր պատանեկան տարիներուն, Զելտալիա Կայծակ-եանին ելոյթն ու բեմակատարութիւնը, կայծն ու մեկնաբանութիւնը իրենց յատուկ դրոշմը ձգած էին մեր յիշողութեան մէջ: «Այդ անկիւ-նի սեղանը նստած է», ըսաւ Վեր. Աբրահամեան ցոյց տալով ինծի այդ նոյն կինը, զոր պաշտամունքին ընթացքին նկատած էի եւ մտա-բերած, թէ տեղ մը տեսած էի զինք:



Մտեցայ Զելտալիային եւ նստելով իր քովի աթոռին վրայ ըսի. «Կը յիշեմ քեզ երբ Պէյրուս՝ եկար եւ երգեցիր մեզի»:

Զելտալիային աչքերը քիչ մը շփոթեցան, վերջապէս աւելի քան քառասուն տարիներ անցած էին այդ ելոյթէն: Բայց տարիներու ըն-թացքին ան կրցած էր երկար ճամբայ կտրել ու նուաճած էր վաս-տակ ու դիրք: Ան իր կարերոր նպաստը բերած էր հայ ու պրագիւա-կան արուեստի շրջանակներուն մէջ: Այսօր ան բաւական բան կորսնցուցած էր իր 1970-ի իմայքէն, ինչ որ բնական է, բայց տակա-ւին կը շարունակէ իր երաժշտական հետաքրքրութիւնն ու մասնակ-ցութիւնը բերել տարբեր առիթներով:

Խօսակցութեան ընթացքին Զելտալիա տեղ մը կանգ առաւ անց-եալի յուշերուն մէջ թափառելէն եւ ըսաւ. «Այսօր հայերէնով քարոզին կը հետեւէի եւ ոչ թէ թարգմանութեան. ի՞նչ հաճելի է հայերէն լսել»: Զելտալիային հետ այդ օր ժողովուրդը պարեցաւ հայերէն լսելու գո-հունակութիւնը եւ հայերէն խօսելու ջանքը:

Պրագիւլ այսօր ունի աւելի քան 25 հազար հայերէ կազմուած գա-ղութիւն: Զայնութեան մեծ մասը կ'ապրի Սաու Փաուլոյի մէջ: Մամու-

լի յոյութիւնը մեծ բաց մը կը ձգէ գաղութին ազգային, քաղաքա-կան, մշակութային կեանքին եւ հայեցի դաստիարակութեան մէջ: Յետեւին մէկ հայկական վարժարան մը կը գոյատեւէ այս սկայ ու տարածուն քաղաքին մէջ: «Չայ դպրոցը հայերէն կը սորվեցնէ բայց հայերէն խօսիլը պէտք է առօրեայ դառնայ հայ տուններուն մէջ», Տա-թն արք. Ղարաբեանն է, բնիկ Զալէպէն, պրագիւաիայ թեմի առաջ-նորդը, որուն առաջնորդութիւնը աշխուժ է եւ լաւատես: Բայց սրբա-զանը նաեւ իրապաշտ է. «Շատ քիչ են հայ ընտանիքները, որոնք հայերէն կը խօսին տան մէջ»:

Ափիւրոսիայ մեր կեանքերուն խոշոր քաջքուլքն է այս իրակա-նութիւնը. հայերէն խօսողներուն թիւը հետզհետէ կը նուազի կա-մա՛), թէ՛ ակամայ: Բայց չէ՛ որ հաճելի է հայերէն լսելը:

Յուսահատական երեսին միւս կողմը կայ՝ ուրիշ երեսոյթ մը, որ քաջալերական է:

Ստեփան-Նորայր Շահինեան Սաու Փաուլո ծնած 32 տարեկան հայ երիտասարդ մըն է, որ մասնագիտացած է ճարտարապետու-թեան եւ մշակոյթի պատմութեան մէջ: Անոր հայրը՝ Զրայր Շահին-եանը, 1963-ին Զալէպէն եկած է Պրագիւլ. թէեւ մօտաւորապէս յիսուս տարիէ ի վեր Պրագիւլ կ'ապրի, Զրայրը շատ լաւ հայերէն կը խօսի տան մէջ թէ դուրսը. «Զալէպի արմատն է», կ'ըսէ Զրայր. «որ գօրա-ւոր կերպով իր տեղը շինած է իմ եւ ընտանիքիս կեանքին մէջ»:

Ստեփան-Նորայր օժտուած է լուսանկարելու տաղանդով. ար-ուեստ մը, որ ան ժառանգած է իր ընտանիքէն, յատկապէս մեծ հօր-մէն՝ Աւետիս Շահինեանէն: Աւետիս Շահինեան եղած է Զալէպի հան-րածանօթ լուսանկարիչներէն մէկը: Ստեփան հրատարակեց Զայաս-տանի եւ Արցախի եկեղեցիներուն եւ մշակութային կոթողներուն նուիրուած եռալէզու (անգլերէն, սպաներէն եւ փորթուգալերէն) հա-տոր մը: Ան լաւ հայերէն կը խօսի: Աւելի՛ն. ան անդրադարձած է, թէ հայերէնը եւ հայութիւնը «պէտք էր տեսնէի իմ այքերով»: Գիտէի, որ շատ մը պատասխաններ պիտի գտնէի շատ պարզ իրավիճակներու մէջէն, տարօրինակ երեւոյթներէ, ժպիտներէ ու արցունքներէ, բարե-կամութիւններէ, դիպուածով կամ այլ, բայց անպայմանօրէն պիտի գտնէի հողէն, որ կը կազմէր իր արմատները՝ աւելի քան 4000 տա-րիներու պատմութեամբ լեցունը:

Ստեփան-Նորայրի համար ոչ միայն հաճելի է հայերէն լսելը այլ նաեւ ապրիլն ու վկայելը եւ ան այս հպարտութեամբ կը բաժնեկցի իր շրջապատին հետ իր մշակոյթը:

Եթէ արեւմտահայերէնը այսօր կորսուելու վտանգին ենթարկ-ուած լեզուներուն շարքին կը դասուի, այս պիտի նշանակէր, թէ պէտք ունիք արթնութեան եւ հպարտութեան: Արթնութիւնը ոչ

միայն «հաճելի է հայերեն լսել»ով եւ գիտակցելով, որ անոր «արմատները անելի քան 4000 տարիներու պատմութեամբ լեցուն են», այլ անպայմանօրէն պահել զայն, որպէս ազգային արժանի, ժառանգ եւ մեծ հպարտութիւն:

Դելտալիան եւ Ստեփան-Նորայրը երկու տարբեր սերունդներու մեկական ներկայացուցիչներ են, որոնց համար հայերէն լսելը հաճելի է բայց նաեւ շատ անելին: «Շատ անելին» ժառանգին ու արմատին անդրադարձն է: Բայց նաեւ կապուածութիւնը հայը պիտի պահէ արթուն եւ հպարտ: Դոն հայերէն խօսիլը ոչ միայն հաճելի պիտի ըլլայ այլ նաեւ տեսական եւ գործածական:

Եւ հայը այսօր պէտք ունի այս «շատ անելին»:

Ո՛չ կարգախօս է, ո՛չ ալ դասախօսութեան մը ընթացքին արտասանուած հռետորական ճառ մը, այլ տասնինը պատանի-երիտասարդներու խանդավառ ներկայացումը հայկական ժողովրդական երգի մը ընդմէջէն:

Երգը արիեստավարծ ու մասնագիտացած երգչախումբի ելոյթի մը ընթացքին հնչած կտոր մը չէ, այլ Աթէնքի Ազգային Ճեմազեան միջնակարգ վարժարանի ամավերջի հանդէսի գեղարուեստական յայտագիրին ընթացքին մատուցուած ներկայացում մը:

22 Յունիս 2011: Թէեւ շարք մը հայկական վարժարաններու ամավերջի հանդէսներուն ներկայ գտնուած եմ, այս հանդէսը տարբեր էր: Արդարեւ, սփիւռքի այս օճախին մէջ, որ ունի իր ուրոյն պայմանները, սեր եւ գոհունակութիւն կ'արտացոլան, նաեւ խոստում եւ նուիրում այն տասնինը պատանի-երիտասարդներու հնչեցուցած երգին ընդմէջէն, որ անոնք սորված էին տարիներու ընթացքին, թէ՛ «միշտ էլ հայ կը մնանք»:

Յունահայ գաղութն այլ ունի իր պատմութիւնը, որուն ընթացքին ան արծանագրած է նուաճումներ, նաեւ երեւի յուսախաբութիւն, որ սփիւռքահայ մեր կեանքի մեծ խճանկարին մէկ հասարակ յայտարարն է. ձեռք բերել նուաճումներ՝ անպայմանօրէն յուսախաբութիւններու ընդմէջէն: Յունահայ գաղութին պատմութիւնն ալ տարբեր չէ:

Սօստաւորապէս տասը հազար հաշուող յունահայ գաղութը այսօր իր մէջ կը ներառէ մեծ թիւով Զայաստանէն արտագաղթած հայորդիներ: Թէեւ անոնց թիւին նկատմամբ որոշ անորոշութիւն կայ, բայց իրողութիւն է, որ այսօր անոնք կը կազմեն պատկառելի թիւ մը՝ հասնելով քառասուն հազարի: Եկեղեցի, դպրոց, կուսակցութիւն, մամուլ, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ ջով-ջովի կու գան, թէկուզ դժուարութեամբ՝ կազմելու համար հայուն սփիւռքեան տարրերու մեծ օղակը՝ հայապահպանումի ծառայող եւ մեծ գոհողութիւններով մղուած պայքարին օժանդակող:

Այս գոհողութեան մէկ փոքր մասը ճեմազեան վարժարանի ամավերջի հանդէսին արտացոլաց: Երգեցին, պարեցին, արտասանեցին, կարդացին եւ արտայայտուեցան մերթ յունարէնով, մերթ մայրենի լեզուով, որուն հնչիւնաբանութեան մէջ կար յունարէնի դրոշմն ու եղանակը: Նմանօրինակ պատկերի կը հանդիպինք մեր սփիւռքահայ իւրաքանչիւր գաղութի մէջ հասակ նետած պատանիին ու երիտասարդին մօտ:



Նոյն այդ իրականության մեջն կու գար հպարտություն մը, թե սորված էին ինքնությունը՝ իր ազգային, քրիստոնեական եւ մշակութային պատկանելիութեամբ: Հոս կ'երեւի զոհողութեան փոքր իրականութիւնը: Կորն եպս. Տողրամաճեան, որ յունահայ թեմի առաջնորդն է, իր հազարումէկ պարտականութիւններուն եւ պատասխանատուութեան կողքին, ստանձնած է նաեւ հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցումը ճնշագեան վարժարանին մէջ, ուր հայերէնի դասատուին անակնկալ իրաժարումը խուճապ մը ստեղծած է: Սրբազան հայրը վերցուցած է այդ քաղցր լուծը, որպէսզի տասնինը հայորդիներ չկորսնցնեն ազգային աւանդ եւ աւանդին համար իրենց կեանքերուն նուիրական առաքելութիւնը: Բայց կայ աւելին: Սրբազան հօր Հուսէ Բանքը թէ մէկ կողմէն քաջալերել էր տասնինը աշակերտները՝ հաւատարիմ մնալու իրենց սորվածին, միւս կողմէն այդ պատանիները յառաջիկայ տարի իր մօտ իրաւիժը, որպէսզի աւելիով կարելի ըլլայ ամրապնդել իրենց սորվածները, զորս արտայայտեցին 22 Յունիս 2011-ին:

Եթէ քաղաքա-տնտեսական վիճակը աշխարհի տարածքին կը ճնշէ իւրաքանչիւր անհատի վրայ, Յունաստան կ'ապրի այդ բոլորը եւ քիչ մըն ալ աւելի: Տնտեսական եւ ընկերային վիճակը ծանր կը կշռէ երկրին վրայ՝ ստեղծելով յուսահատական մթնոլորտ մը, որուն ընդմէջէն պէտք է նաւարկէ ազգային, կրթական, եկեղեցական եւ քարեխրական իւրաքանչիւր կառոյց: Յունահայ գաղութն ալ, յար ու նման շատ մը հայկական այլ գաղութներու, կ'ապրի իր ճգնաժամը երկրին մէջ ստեղծուած պայմաններուն բերումով:

«Այս օրերուն մեր ազգային կառոյցները պահելը բաւական

դիմար գործ է», յայտարարեց Գեղամ Եաղճեանը, որ գաղութին Ազգային ժողովին ատենապետութեան ծանր պատասխանատուութիւնը ստանձնած է: «Ծիշը է», ըսի իրեն. «քիչ մը ամէն տեղ եւ իւրաքանչիւր գաղութի պարագային մեր ազգային կեանքի գնացքը բարձր գառիվերի մը վրայ է»: «Ուրիշ ելք չկայ», ըսաւ Եաղճեան, «պէտք է բարձրանալ այդ գառիվերը»: Եւ հայուն այս գառիվեր ճամբան է, որ քիչ մը ամէն տեղ, թերեւ տարբեր ընթացքով, բայց նոյն հիմնահարցերով, ճամբայ ելած է բարձրանալու. այդ հիմնահարցերուն հիմնականն ու իրատապը կառչած մնալ է ժողովրդական երգին քառերուն. «Մենք միշտ էլ հայ կը մնանք»:

Պիտի մնանք: Եթէ պիտի մնանք, ուրեմն մեր ազգային կեանքերուն այս գառիվերի ճամբու գնացքին մէջ դասալիք չենք կրնար ըլլալ: Այս գնացքին մէջ կան մեծ ու փոքր զոհողութիւններ, որոնք պիտի գան մեր տուններէն, եկեղեցիներէն, դպրոցներէն՝ հո՛ն, ուր ուժերը կը հաւաքուին, կ'ամբարուին եւ կը դարբնուին, որպէսզի իւրաքանչիւր հայ միշտ հայ մնայ: Մեր ընտանեկան դաստիարակութեան զարգացումները պէտք է վերանայի՝ մեկնելով այս հիմնահարցին ստեղծած պայքարի պրիսմակէն: Մեր հաւաքական կեանքերու վերականգնակերպումը պէտք է ուղղուի նոյն այս հիմնահարցին համար տարուած եւ տարուելիք աշխատանքներուն յաջողութեան համար. այս վերջինը առանց խտրութեան եւ տարբերութեան:

Իւրաքանչիւր հայ իր անկիւնին մէջ իր տեղն ու դիրքը ունի եւ անհրաժեշտ է այդ տեղին ու դիրքին հոգալ ու պահել: Ծննդեան միջնակարգ վարժարանի տասնինը հայորդիները բարձրածայն եւ հպարտութեամբ արտասանեցին. «Մենք միշտ էլ հայ կը մնանք»: Այս իրականութիւն մըն է, որ կերտուեցաւ զոհողութեամբ՝ ըլլայ այդ մեծ կամ փոքր: Այս իրականութիւնը պէտք է շարունակուի եւ պիտի շարունակուի հոս թէ հոն, իւրաքանչիւր գաղութի մէջ, իւրաքանչիւր հայորդիի մէջ, որպէսզի հայ մնանք:

Մեր ազգային եւ հասարակական կեանքին ընթացքը այս գառիվեր ճամբուն վրայ է ճանապարհորդութեան մէջ երբեք դիւրին չէ: Բայց ուրիշ ճամբայ չկայ:

Եթէ «Մենք միշտ էլ հայ (կը) պիտի մնանք»:

# ԱՐՁԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Կիրակի, 11 Յուլիս 2011-ին երկար եւ խճողուած շարքին մէջ կանգնած՝ հանդարտութեամբ եւ համբերութեամբ կը սպասեմ տեսնելու աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը: Ռիօ Տէ ժաներօ ոչ միայն Պրագիլի ամենէն գեղեցիկ եւ հմայիչ քաղաքներուն շարքին կը դասուի այլ նաեւ աշխարհի: Ովկիանոսին եւ լեռներուն միջեւ տարածուած այս քաղաքը ունի գրաւչութիւն մը, որ զլած անցած է գեղեցկութեան բոլոր չափանիշները: Ովկիանոսին եւ լեռներու շողկապին մէջ կայ քանդակագործութեան հրաշալիքներէն մէկը՝ «Քրիստոս Փրկիչ» հսկայական արձանը, որ գետեղուած է եօթը հարիւր մէթր բարձրութեամբ Զորքովատօ լեռան վրայ:

Անշուշտ տարբեր է այս արձանին գեղեցկութիւնը մօտէն դիտելը, քան նկարներուն մէջ տեսնել զայն, նոյնիսկ եթէ քանի մը ժամի կը կարօտի հոն հասնիլը:

Բայց հասայ:

Մտաւորապէս 40 մէթր բարձրութեամբ, 30 մէթր լայնք եւ 635 թօն ծանրութեամբ այս արձանը իսկապէս հրաշալիք մըն է, որուն շինութիւնը տեւած է աւելի քան 9 տարի՝ 1922-1931: Անոր մէջ մէկ կողմէն կայ ճարտարարուեստական կոթողի եւ արուեստի հրաշալիքը իսկ միւս կողմէն ներշնչող ու խօսուն պատգամը:

Քանդակին

մէջ ակներեւ է Զրիստոսի աչքերուն կարեկցանքի եւ գութի հաղորդակցութիւնը: Ճիշդ հոս կը շէշտուի արձանին պատգամը: Զրիստոսի ձեռքերուն հորիզոնական բացուածքը կու

զայ արտայայտելու մարդկութիւնը իր թելերուն մէջ առնելու եւ այդ թելերուն մէջէն խաղաղութիւն ու նոր կեանք շնորհելու իրականութիւնը:

Բայց կայ նաեւ աւելին եւ դուն այդ աւելիին մէջ կ'ապրիս արձանին պատգամին հօգորութիւնը: Թելերուն բացուածքը չի սահմանա-

փակուիլ Ռիօյի տարածքով, այլ կը հասնի ամենուրեք, ուր որ կը զգաս ու կ'ապրիս Զրիստոսի շնորհած խաղաղութիւնը մասնաւոր խաղաղութեան ապրուող իրականութիւնը: Այդ խուռնեցում բազմութեան մէջ կը փորձեմ ապրիլ պահը իր ամբողջութեամբ, որուն մէջ կան իրականութիւններ՝ մէկ կողմէ իմ կեանքիս ու եկեղեցիին առաջնութեան կապուած, միւս կողմէ հայկական քրիստոնէական ինքնութեան:

Կը սկսին միտքիս ու հոգիիս չարչրկումները: Արձանին փոխանցած պատգամը որքա՞ն կենդանի է այսօր ինծի, մեզի եւ հայութեան համար:

Յայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին հիմնադրութեան 165-րդ տարեդարձին առիթով կ'արժէ «զրգռել» մեր միտքերն ու հոգիները՝ տեսնելու համար Ռիօյի «Քրիստոս Փրկիչ»ը արձանին պատգամը, արդեօք անիկա ո՞ր կը գտնուի մեր անմիջական եւ հաւաքական կեանքերուն մէջ: Կարկիկը աւելի լայն բանալով հարց տանք, թէ ո՞ր է հայ ժողովուրդը երբ դէմ յանդիման գտնուիլիք քրիստոնէական եւ կրօնական արժեքափոխումներու:

Կարկիկը լայն բացիք, որովհետեւ իրականութեան մէջ ներկայ աշխարհի մտահոգութիւնները եւ մարտահրաւերները համազգային եւ ամբողջական են, քան հատուածական եւ ներհամայնքային: Յայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին 165-րդ տարեդարձը եւ անոր ստեղծած պարտականութիւններն ու պարտաւորութիւնները պէտք է դիտել, ներառել եւ ներմուծել համազգային տարողութեամբ: Նոյնն է պարագան նաեւ իւրաքանչիւր հայկական եկեղեցիի, հարցերուն հոլովոյթները պէտք է դիտել իրարու հետ եւ իրարմով, նոյնիսկ եթէ իւրաքանչիւրս կը պահենք մեր ինքնուրոյն եւ անկախ դրուածքը: Անհրաժեշտ է խօսիլ ներկայ օրերու իրավիճակին մասին, որքան որ ալ անոնք ըլլան յոգնեցուցիչ եւ դժուար:

Յայ ժողովուրդը՝ իբրեւ զաղուք եւ պետականութիւն, այսօր կը դիմագրուէ հազար ու մէկ մտահոգութիւններ, որոնք կը հանգուցեն հայ հաւաքական ազգային կեանքերը տարբեր տարողութիւններով, այդ հանգուցներու տարածքին մէջ կ'իյնան նաեւ հոգեւոր եւ եկեղեցական շատ մը հիմնահարցեր:

Մէկ կողմէն քրիստոնէական եւ եկեղեցական արժեքափոխը կը տկարանան ու կը հեռանան մեր անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքերէն ու նկարագիրներէն, միւս կողմէն ապակրօն մտածողութիւնը կը սկսի աւելիով արմատանալ մեր ինքնութեան մէջ: Մեր կեանքերը կ'ողողուին ազանդներու եւ այլ վարդապետական մտածելակերպերու հեւքով՝ ստեղծելով նոր արժեքափոխ եւ ազգային, հասարակական ու մշակութային կենցաղ:



Նոր աշխարհի ստեղծած նոր մշակոյթով կը քալենք կամայ-ակամայ՝ էական ու խորքային փոխազդեցով նորով: Տակախն նոր աշխարհի ստեղծած ճարտարարուեստականօրէն արագ, ճնշող ու պահանջկոտ կենսքերը դուռ կը բանան շատ մը հարցադրումներու եւ տեսակետներու ընկալումի:

Հայ մարդն ու հայ հաւաքականութիւնը այսօր շատ հարցեր եւ հարցադրումներ կ'առաջարկէ ու կը դիմագրաւէ իր առօրեայ կենսօրէն պայքարն եւ տագնապն մեկնելով: Իր ամբողջական հասկացողութեամբ կը փնտմէ ելքեր եւ պատասխաններ, որոնք զինք պիտի հասցնեն իմաստին բայց նաեւ այդ իմաստին շնորհած խաղաղութեան: Թէեւ այս հարցերը կը դրսեւորուին առանձին, բայց նաեւ անոնց արծագանգը կ'ըլլայ բարձրաձայն ու տեղեկատուութեան աշխարհին ընձեռած բոլոր կարելիութիւններուն միջոցով:

Հայաստանի քաղաքացի Կարեն Մկրտչեան իր Corrupt Clergy of Armenia Damage Apostolic Church անվերն յօդուածին մէջ (տես՝ [www.keghart.com](http://www.keghart.com) կայքէջի 1 Օգոստոս 2011-ի թիւը) կ'արտայայտէ իր մտահոգութիւնները. «Ինչպէս կ'ըլլայ, որ երկար տարիներու պարսիկ-գրադաշտական եւ թուրք-մահմետական տիրապետութեան տակ կրցանք պահել մեր կրօնը եւ սովորութիւնները, որքան ալ տիրապետող ուժերը փորձեցին փոխել մեր հաւատամքները: Բայց հիմա, միայն քսան տարի անկախացումէ ետք, կը տեսնենք նոր աղանդներու հետեւող մեծ թիւով հայորդիներ: Ինչո՞ւ մարդիկ կը կորսնցնեն իրենց հաւատը ու կը հեռանան եկեղեցիէ: Ինչպէ՞ս կարելի է քրիստոնէացումէ 1700 տարիներ ետք այլ նոր հաւատքներ փնտմել: Ինչպէ՞ս կրնան նմանօրինակ նոր կազմակերպութիւններ հայը հեռացնել ոչ միայն եկեղեցիէն այլ նաեւ ազգային արժէքներէն»:

Մկրտչեան կը շարունակէ իր իսկ բանաձեւումով՝ «մեծագոյն հարցումը՝ ուղղելով հարց տալ. «Ինչն ըրաւ եկեղեցին դէմ կենալու համար այս բոլոր նոր հաւատամքներուն»: Մկրտչեանի փորձրկոտ ներաշխարհը ու հոնկէ դուրս եկած հարցադրումները, բացայայտումները եւ մեղադրանքները ամէն տեղ եւ տարբեր մակարդակներու վրայ յաճախ մեր դիմաց կը դրուին: Բայց կ'արժէ այս ներաշխարհներուն մօտենալ ոչ թէ որպէս քննադատութիւն այլ որպէս զգաստութեան եւ արթնութեան մեծ որակէր մը՝ ուղղուած այլակական երեք յարանաւանութիւններուն, որոնք պէտք է գիտակցին հայկական իրականութեան մէջ առկայ հոգեւոր, քրիստոնէական եւ եկեղեցական երեսօյններուն եւ անոնց ունեցած համազգային տարողութեան:

Հայկական իրականութեան մէջ, յատկապէս Հայաստանի մէջ,

աղանդներու եւ ծայրայեղ վարդապետութիւններու թափանցումը բանավեճի նիւթ եղած է եւ կը լուրջուած է անոնց դէմ պայքարելու: Եղան նաեւ տարբեր բնութագրումներով շիտակը սխալին հետ կամեմատելու երեսօյններ: Անոր կողքին խօսուեցաւ նաեւ հայուն անտարբերութեան մասին, հոգեւոր ու եկեղեցական իմաստով: Ըսուեցաւ, որ հայը կորսնցուցած է իր հետաքրքրութիւնը քրիստոնէական արժէքներու եւ հոգեւոր մշակոյթի նկատմամբ: Անդրադարձ կատարուեցաւ այն մասին, որ եկեղեցիները կը դատարկուին, որ անոնք կարողութիւն չունին հայուն այսօրուան պայքարին գոհացուցիչ եւ լրացուցիչ պատասխաններ տալու եւ շարքը երկար է:

Որքան որ երկարեց յառաջ քշուած բոլոր մտահոգութիւնները, կը մնայ օրուան մեծագոյն հրամակայանը, որուն համաձայն այսօր հայուն պէտք է հոգեւոր եւ եկեղեցական նոր հայեցակէտ: Անհրաժեշտ է, որ հայկական երեք յարանաւանութիւնները վերադասաւորեն իրենց եկեղեցական առաքելութիւնները՝ մեկնելով օրուան տագնապէն ու հիմնահարցէն, որոնք առաւելաբար համազգային են իրենց տարողութեամբ: Անհրաժեշտ է վերաժենել տագնապին տարողութիւնն ու խորքը եւ միասնաբար աշխատիլ հայը քրիստոնէայ պահելու համար:

Մեր հայկական եկեղեցական իրականութիւններուն մէջ եթէ մէկ կողմէ կայ իւրաքանչիւրին ներքին բարեկարգումի անհրաժեշտութիւնը (անպայմանօրէն կայ), կայ նաեւ արտաքին իրավիճակը որուն հիմնահարցերը հարկ է դիտել մեկնելով հաւաքական անհրաժեշտութիւններէ:

Հայ եկեղեցին, իր ընդհանրական հասկացողութեամբ, պիտի պահէ իր կառոյցները եւ կազմակերպչական գործօնները բայց աւելիով պիտի բանայ իր՝ իմա Ջրիստոսի թեւերը հորիզոնական ուղղութեամբ, ընդգրկելու համար հայը իր ամբողջ մտահոգութիւններով եւ պայքարով:

Հայ եկեղեցին, իր ընդհանրական հասկացողութեամբ, պիտի երաշխաւորէ իր ու ժողովուրդին ապահովութիւնը եւ հաստատ մնալ Աստուածաշունչի դաստիարակութեան մէջ: Ջրիստոնէայ անհատին ուժը կախեալ է անոր մօտ Աստուածաշունչի դաստիարակութեան արժէչափէն: Աստուածաշունչի դաստիարակութեամբ եւ վերադաստիարակութեամբ մենք կրնանք դիմադրել աղանդներուն եւ այլ գաղափարախօսութիւններուն յառաջխաղացքին:

Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին 165-ամեակը պէտք է դիտել մէկ կողմէ իբրեւ արժեւորում իր անցեալին ու իրագործումներուն, միւս կողմէ իբրեւ ներկայի ու զալիք օրերու հեռակար: Այս եկեղեցիին առաքելութիւնը պէտք է դիտել նաեւ այս հայե-

ցակետով եւ պայմանները վեր առնել մեր համազգային հիմնահարցերու պրիսմակէն եւ այս՝ Դայ Աւետարանական եկեղեցիին տեսադաշտին մէջ:

Այսօր հարցին միւս երեսը մեր միւս հայ յարանուանութիւններուն պատրաստակամութիւնն է եւ անոր հետ առնչուած մեծագոյն հարցումը. «Պիտի կարենա՞նք ստեղծել այն հաւաքական ճիգը, երբ հայուն ջրիստոնէական տաճարակները, վտանգները, ներկայի ու ապագայի հորիզոնին վրայ երեւոյց մտահոգեցուցիչ երեւոյթները, դառնան համահայկական աշխատանքային կիզակետ՝ ներառելով մեր երեք հայկական եկեղեցական իրականութիւնները»:

Վերջապէս, արձանին պատգամը մէկ է ու յստակ: Անկկա կը խօսի իւրաքանչիւր հայուն, հոս թէ՛ հոն. «Զրիստոս Փրկիչ»ը Նոր կէտանքի շնորհքն է ու նկարագիրը: Պատմութեան բոլոր հոլովոյթներուն մէջ հայը պահած է այս նկարագիրը եւ կոչուած է պահելու զայն գալիք օրերուն՝ անկախ իր համայնքային տարբերութիւններէն:

Իսկ հարցումին, թէ «ի՞նչ ըրաւ եկեղեցին», անհրաժեշտ է պատասխանել. «Կրցաւ պահել արժեքը»: Որովհետեւ ա՛յս է արձանին պատգամը իւրաքանչիւր հայուն, թէ պէտք է պահել Նոյնինքն այս արժեքը:

## ԳԷՊԻ ԷՄՄԱՌՈՒՄ ՌԻՐԻՇԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅԻՐԸ

«Այն արեւն անոնց աչքերը բացուեցան ու զինք ճանչցան»:  
(Գովաա 24.31)



Ուրիշը եթէ մէկ կողմէ մեր ազգային-հասարակական-եկեղեցական կեանքերուն մէջ ակներեւ է, որպէս անձ կամ հաւաքականութիւն, որ չենք ճանչնար եւ ծանօթ չէ, բայց Նոյնպէս այն, որ կը պահանջէ մէկ կողմէ փնտռուող բայց Նաեւ գիտակցութիւն եւ զգաստութիւն: Անհրաժեշտ է ճանչնալ ծանօթ-անծանօթ ուրիշը աւելի լաւ հաղորդակցութեան եւ մարդկային մեր կեանքերուն մէջ արժեքներու կերտումին: Մալխասեան «ուրիշ»ը կը բացատրէ որպէս «այլ», «տարբեր», «աննման», «այլ ոք» եւ «օտար մէկը»:

Ուրիշին հասկացողութիւնը-իրականութիւնը Նաեւ մեր անձերուն մէջ է: Մեր միտքին ու հոգիին մէջ կայ այն մասը, որ այլ է, տարբեր է ուրիշ: Եթէ մէկ կողմէ գիտակցական-անգիտակցական իրականութիւն է, բայց Նաեւ մեր ապրած կեանքերուն հեւքին ու ձգտումներուն մէջ ուրիշը կը դառնայ Նաեւ այն իրավիճակը, որուն չենք անդրադառնար կամ չենք ուզեր ընդունիլ: Մեր անձնական կեանքերուն մէջ կը շինենք պատեր, որոնց ներքեւ կ'ապրինք՝ մենք մեզ անջատե-



լով իրականություններն: Այդ իրականություններուն մեծագոյնը ուրիշն է:

Այս միաստով էմմաուսի ճամբուն վրայ պատահածը, որպէս մեկ-նարանութիւն, մէկ լաւագոյն նկարագրականն է ուրիշին հանդիպումին եւ անոր ճանաչումին անհրաժեշտութեան:

Յիսուսի երկու աշակերտները երուսաղէմէն կ'երթային դէպի էմմաուս: Յիսուս անոնց քովէն կը սկսի քալել բայց անոնք զինք չեն ճանչնար, որովհետեւ «անոնց աչքերը բռնուած էին» (Ղուկաս 24.16): Անոնք չկրցան ճանչնալ ուրիշը, որուն ծանօթ էին, որովհետեւ կ'ապրէին իրենց ստեղծած ներաշխարհին մէջ: Անոնք տխուր էին, «որովհետեւ քահանայապետերը ու մեր իշխանները մահուան մատնեցին զանիկա ու խաչը հանեցին» (Ղուկաս 24.20): Բայց նաեւ կ'ապրէին յուսախաբութեան պահը, որովհետեւ «կը յուսայինք որ անիկա էր, որ Իսրայէլը պիտի ազատեր» (Ղուկաս 24.21): Անոնք կ'ապրէին կասկածի մթնոլորտի մէջ, որովհետեւ քանի մը կիներ Յիսուսի գերեզմանը գացած էին ու «Անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ըսին թէ հրեշտակներու տեսիլն այ տեսան, որոնք ըսեր են թէ անիկա ողջ է» (Ղուկաս 24.23): Ու տակաւին կար անոնց շուարած վիճակը, որովհետեւ կը վերիշիշին Յիսուսի խօսքը. «Քրիստոս պէտք էր այս չարչարանքները կրէր եւ իր փառքը մտնէր» (Ղուկաս 24.26) եւ այս բոլորը ճիշդ էր, թէ՞ սխալ:

Երկու աշակերտներուն համար Յիսուս մնաց ուրիշը, որուն ճանչցան միայն այն ատեն երբ հրաւիրեցին Յիսուսը իրենց տունը: Աշակերտներուն աչքերը բացուեցան երբ Յիսուս «անոնց հետ սեղան նստաւ, հաց առաւ, օրհնեց ու կտորելով տուաւ անոնց» (Ղուկաս 24.29): Եւ աշակերտները ճանչցան Յիսուսը՝ ուրիշը, որ իրենց հետ կը քալէր ամբողջ ժամանակը:

Էմմաուսը մեր կեանքի ճամբան է, որուն մէջէն կը քալենք, որպէս անհատ եւ հաւաքականութիւն, իւրաքանչիւրս ինք իր ուղիով: Մեր կեանքերուն իւրաքանչիւր իրավիճակին մէջ, յաջող կամ ձախող, ուրախ թէ տխուր, յուսահատական թէ ոչ, կայ մեր շինած մարդկային պատերը, որուն մէջ կը փորձենք կերտել մեր կեանքերը մեր մարդկային ուժականութեամբ: Եւ այդ մարդկային ուժականութիւնը ու անոր պարտադրած տրամադրութիւնները մեր աչքերը կը բռնեն եւ կը փորձուիք չտեսնել ուրիշը մեր մէջ բայց նաեւ ուրիշները մեր հաւաքականութեան մէջ:

Բայց աշակերտներուն անդրադարձը ուրիշը ճանչնալէն ետք, զիրենք դրաւ կեանքի մեծագոյն իրականություններուն առջեւ: Անոնք անդրադարձան, թէ Յիսուս՝ ուրիշը, իրենց կեանքի ելութիւնն էր եւ ճամբորդութեան մէջ միշտ ընկերակից. «Ինք մեզի հետ կը խօսէր

ճամբան» (Ղուկաս 24.32): Ու անոնք տեսան ուրիշին կարեկցող հոգին. «Ի՛նչ են այդ խօսքերը, որ քալելով իրարու հետ կը խօսակցիք ու տրոմած ալ էք» (Ղուկաս 24.17): Բայց նաեւ անոնք տեսան, թէ ինչպէս Յիսուս իրենց ուղղութիւն կու տար. «Ով անմիտներ ու թուլասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներուն, որոնք մարգարէները խօսեցան» (Ղուկաս 24.25): Եւ անպայմանօրէն տեսան ուրիշին իւրայատուկ քաջալերանքը. «Չէ՞ որ սրտներնիս մեր ներսիդին կը բորբորէին» (Ղուկաս 24.32):

Եւ միայն մեր չորս կողմի պատերը փլելէն ետք ու զինք հրաւիրելէն ետք է, որ պիտի ճանչնանք Յիսուսը, որ մեզի հետ կը քալէ իւրաքանչիւր վայրկեան, մեզի կը զթայ, ուղղութիւն կու տայ, բայց նաեւ մեզ կը քաջալերէ: Քաջալերանքը անելի լաւ ու նոր կեանքի հասկացողութիւնն է, որ կ'ապրիս պատեղ անդին, մտնելով հաւաքականութեան մէջ, ինչպէս աշակերտները, որոնք Յիսուսը ճանչնալէն ետք «Երուսաղէմ դարձան» (Ղուկաս 24.33):

Յոն անոնք միացան մնացեալներուն՝ ուրիշներուն, եւ տեսան, թէ անոնք այլ կ'ըսէին. «Իրացնէ Տըը յարութիւն առաւ ու Սիմոնին երեւցաւ» (Ղուկաս 24.34): Եւ այս քաջալերանքն է, որ կը ստեղծէ հասկացողութիւն եւ հարդրակցութեան կապ, ճանչնալու համար ծանօթ-անծանօթ ուրիշները, որոնք հետ կ'ապրինք ու կը բաժնեկցիք մեր կեանքերը:

Ուրիշը, որ այլն է՝ տարբեր է օտար մէկը: Ան-անոնք չեն պատկանիր մեր եկեղեցիին կամ համայնքին եւ կամ մեր ազգային-քաղաքական գաղափարախօսութեան: Ու տակաւին ուրիշները, որոնք չեն պատկանիր մեր մշակոյթին, կրօնին ու կենցաղին: Ուրիշները ճանչնալով է, որ կարելի պիտի ըլլայ կերտել ազգային-եկեղեցական-հաւաքական ու համամարդկային մեր կեանքերը:

Դէպի էմմաուս: Յոն, ուր պիտի ճանչնանք ուրիշը՝ Յիսուսը: Բայց նաեւ պիտի ճանչնանք ուրիշները: Եւ այս կարելի պիտի ըլլայ, որովհետեւ Յիսուս մեր ելութեան մէջ է. Ան պիտի քաջալերէ մեզի, որպէսզի տեսնեք զինք բոլոր ուրիշներուն սիրտերուն մէջ:

Դէպի էմմաուս: Ուրիշը բայց նաեւ ուրիշները ճանչնալու ժամադրաւայրը:

# ԵՂՐԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԵԱՆՔ ՄԸ\*

Ասատուր Տոփլեթեան բառին իսկական եւ ամբողջական առումով Սուրիոյ Գոմա քաղաքի հայկական գաղութի նահապետն էր: Չինք կը կոչէի, նաեւ որպէս հարազատ ու քենեկա՝ եղբայր Ասատուր: Եղբայր անուանումը մէկ կողմէ՛ յարգանք էր, իսկ միւս կողմէ՛ անպայմանօրէն կ'ընդգրկէր քնորոշումը՝ նոյնինքն Ասատուրին կեանքի իմաստին ու բովանդակութեան: Ասատուր Տոփլեթեան ապրեցաւ եղբայրութեան կեանք մը, ամբողջական կեանք մը, որուն ընթացքին եղբայրութեան կեանքի տեսլականը վերածեց ծառայութեան կեանքի հասկացողութեան: Անոր ծառայութիւնը միայն ընտանիքին ու հարազատներուն նկատմամբ չէր, այլ նաեւ անխտիր իւրաքանչիւր հայու՝ հայ համայնքին ընդհանրապէս, ինչպէս նաեւ Սուրիոյ հայրենիքին ու իր շատ սիրած Գոմա քաղաքին:

Ասատուր եղբայրութեան եւ ծառայութեան այս կեանքը ապրեցաւ լիուրի կերպով: Իր սերը չպահեց իր անձին ու սրտին մէջ, այլ տուաւ զայն բոլորին՝ առանց տարբերութեան: Գասաւ կարիքաւորին, դժուարութեան մէջ եղողին, տկարին, «ուրախացողին հետ ուրախացաւ եւ լացողին հետ լացաւ»: Գասաւ նաեւ հայ համայնքի կարիքներուն, ուր որ պետք էր: Կառչած մնաց Մայր եկեղեցիին եւ նեցուկ եղաւ անոր, եւ միեւնոյն ժամանակ հասնելով հայկական բոլոր կառույցներուն առանց խտրականութեան: Ասատուրին համար հայը վեր էր ամէն մտածողութենէ, համայնքէ ու հաւատամբէ: Գայը իրեն համար ամբողջական հասկացողութիւն է՝ առանց տարբերութիւններու:

Ասատուրը սորված էր հողին արժէքը եւ անոր կապրածութեան իմաստը: Պէլյանը իր տունն էր, իր երգը, անոր հողին կարօտով ապրեցաւ մինչեւ վերջ: Չնայ եւ տեսաւ իր տունը, զոր ձգած էր պատանեկան տարիներուն: Բայց Ասատուր ըրաւ անելին: Պէլյանի կարօտը իր մէջ ստեղծեց իր նոր սերը եւ այս հայրենիքին՝ Սուրիոյ Գոմա պետութեան, օգտակար եղաւ տարբեր միջոցներով: Գոմա քաղաքը իրեն համար եղաւ իր «հոգեհատորը», այն աստիճան, որ ունէ բաղաբացի այս քաղաքին մէջ՝ ծանօթ թէ անծանօթ, անկարելի էր,

\*Միտասանուած՝ Ասատուր Տոփլեթեանի յուզարկաւորութեան ցարդողութեան ընթացքին, 29 Յունիս, 2011, Գոմա, Սուրիա:

որ յգիտնար, թէ ո՛ր էր Ասատուրին տունը:

Ուրախ էր հայրենիքի անկախացումով: Գայրենասիրութիւնը իրեն համար տակ կարգախօս չէր: Գայրտ էր իր անդրանիկ զանկին՝ Սագոյի նուաճումներով, ինչպէս նաեւ անոր տուած որոշումով՝ մայր հայրենիքին մէջ շարունակելու իր կեանքը: Գողը, լեզուն եւ մշակոյթը սրբութիւններ էին անոր համար:

«Բարի պատերազմը պատերազմեցաւ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի» (Բ. Տիմոթէոս 4.7): Աստուածաշունչի այս համարը որքան իրական ու յարմար է Ասատուրին համար: Անոր կեանքը «բարի պատերազմ»ի համար էր՝ տարբեր ճակատներու վրայ:

Եթէ Ասատուր այսօր ֆիզիքապէս մեզի հետ չէ, բայց տակաւին կայ իր մեղմ ու նոյն ժպիտը, որ նոյն հարազատութեամբ հաղորդակից կ'ըլլայ մեզի հետ նաեւ այսօր: Ասատուրն ալ գոհունակ սրտով կ'ըսէ. «Ընթացքը կատարեցի՝ այս երկար բարի պատերազմի ճամբուն վրայ»:

Բայց մէկ բան եւս, եղբայր Ասատուր: Դուն ո՛չ միայն բարի պատերազմ պատերազմեցար եւ ընթացքը կատարեցիր, այլ նաեւ հաւատքը ամուր պահեցիր: Գատեքը հայ Ասատուրին, սուրիահայ Ասատուրին, քրիստոնեայ Ասատուրին եւ եղբայրութեան ու ծառայութեան համար իր կեանքի տեսլականին:

Ասատուր Տոփլեթեան՝ եղբայրութեան եւ ծառայութեան համար ապրուած նուիրական կեանք մը: Եւ այս կեանքը մեզի պիտի մնայ որպէս ամենէն մեծ ու նուիրական յիշատակը:

Յարգանք՝ Ասատուրին ապրած նուիրական կեանքին: «Բարի պատերազմի» քաջարի զինուորին, որ «ընթացքը կատարեց» եւ «հաւատքը» միշտ վառ պահեց:



# ԸՆԿՃՈՒԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ

Կ'ապրիլից բաւական արագ փոխուող աշխարհի մը մէջ: Բաւարար է Նայիլ մեր չորս կողմը եւ տեսնել, թէ ինքքա՞ն արագ կերպով հարցերը, տագնապները եւ իրադարձութիւնները գիրար կը հրմշտկեն:

Բայց այն ինչ որ կը մնայ իւրայատուկ, շնչահեղձ ըլլալու աստիճան, արաբական երկիրներու մէջ իրարու յաջորդող իրադարձութիւններն են: Կարդագոյն Յեղափոխութենէ մինչեւ Կարմիրը իրարու կը հրմշտկեն եւ այնքան արագ, որ կարելի չըլլար քայլ պահել իւրաքանչիւր հանգրուանի հետ: Մշտնեղ դրուած, տեսուած եւ քաջքուած իրականութիւնը ժողովրդավարական է, ուր հաւաքականութիւններ կ'ուզեն ապրիլ ազատ, առանց կաշկանդումի եւ վայելել բարուը կենաց եւ կենսամակարդակ:

Յետաքրքրական էր հետեւիլ լիբանանեան անգլիատառ «Տէյի Սթար» օրաթերթին 17 Փետրուար 2011-ի քաղաքական մէկ վերլուծումը այս բոլորը իրարու շարկապուած իրադարձութիւններուն մասին: Հեղինակը կը բնութագրէ բոլոր տագնապներուն տուն տուող հիմնական երկու պատճառները՝ ընկճուածութիւն եւ օրինականութիւն:

Արաբական աշխարհի քաղաքացին այսօր ընկճուած կը զգայ, կ'ըսէ հեղինակը: Կ'ուզէ նուազագոյն կենսքի բարուը մակարդակ, ընկերատնտեսական վիճակի բարելաւում, ազատ խօսքի եւ մտածողութեան իրաւունք, քաղաքացիական հաւասարութիւն, իրաւունքներու պահպանում, ապահովութիւն ու տակաւին:

Արաբական աշխարհը ու անոր քաղաքացին այսօր կը փնտռէ իր երկրի վարչամեքենային օրինականութիւնը: Հոն, ուր քաղաքացին պիտի զգայ յարգուած, կարգ ու սարք մը, որ կ'աշխատի թափանցիկ՝ հիմնուած բարոյական արժէքներու վրայ, հեռու գեղծարարութենէ: «Օրինականութիւնն է», կ'ըսէ հեղինակը. «որ դուռ կը բանայ պետական վարչամեքենայի բնականոն գործընթացին եւ կը հաւասարակշռէ նոյն բնականոնութիւնը քաղաքացիի առօրեայ կենսքին հետ»: «Այսօրուան պայքարը», կ'եզրակացնէ հեղինակը, «գաղափարախօսական չէ, այլ կենսաբանական: Մէկ խօսքով, այն իրավիճակը, ուր մարդը եւ երկիրը իրարու հետ եւ իրարմով պիտի ապրին»:

եւ անպայմանօրէն կը բանաս պատմութեան էջերը եւ հարց կու տաս, պատմութիւնը ինքզինք կը կրկնէ չէ՞:

Հայն ալ ապրեցաւ ընկճուածութեան եւ օրինականութեան ձգտումի պայքարը իր բովանդակ պատմութեան տարբեր հանգրուաններուն մէջ: Այս ընկճուածութեան եւ օրինականութեան ձգտումի պայքարին մեծագոյն իրադարձութիւնը հայուն պատմութեան մէջ նոյնինքն հայուն ցեղասպանութիւնն էր: Յեղասպանութեան որպէս հետեւանք հայը տուաւ մարդկային զոհ, մշակութային եւ մտաւորական արժէքի ահաւոր կորուստ, հողային իրաւագրկում եւ տակաւին:

Եթէ Յեղասպանութիւնը 96 տարիներ առաջ էր, իսկ այսօր ինչպէս պիտի ներկայացնէլ հայկական իրականութեան համար:

Համահայկական ու միջազգային քաղաքական իրավիճակներու եւ պարունակներու մէջ հայ ժողովուրդը այսօր կ'ապրի Յեղասպանութեան օրինականացումի քաջքուրդի ընկճուածութիւնը: Հայը կը սրնի արդարութեան եւ ճշմարտութեան օրինականացումին համար: Յեղասպանութիւնը եւ անոր պահանջատիրութիւնը չեն կրնար քաղաքականացուիլ ու գործածուիլ որպէս խաղաքարտ ո՞չ ալ իբրէն քնտրապայքարի խոստում եւ որմէ ետք անտեսում: Հայը կը պայքարի իր արժանապատուութեան ու անոր ապահովութեան համար: Այո, մէկուկէս միլիոն նահատակներու միջազգային ճանաչումը եւ դատապարտումը հայուն արժանապատուութիւնն է, որ կարելի չէ ոտնակոխել:

Ու տակաւին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը հայուն մէկ այլ ընկճուածութիւնն է ու օրինականութեան պայքարը: Եւ ինչ խօսք Ջաւախքի հայութեան սպասումներուն մասին: Եւ վերջին շրջանին, թաքնուած, գաղտնի պահուած ու տակաւին խլամաքցած ու քրտացած հայերու իրաւունքը՝ իրենց հաւատքին եւ ինքնութեան արժէքներուն մէջ ազատ ապրելու, մէկ այլ զոհակն է հայուն այս օրերու ընկճուածութեան եւ օրինականութեան պայքարին:

Բայց ունինք ներհայկական ճակատը նաեւ: Հպարտ ենք մայր հայրենիքով եւ պետականութեան ստեղծումով, իրականութիւն մը, որ երկար տարիներ սպասեցինք. բան մը, որ դարձաւ իւրաքանչիւր հայու ինքնութեան ամուր կողուանը: Հայը աշխարհով մէկ նեցուկ է մայր հայրենիքին եւ անոր վերելքին: Բայց կան նաեւ իրավիճակներ, որոնք աշխատանքի եւ սրբագրութեան պէտք ունին: Հայ քաղաքացիական այսօր պէտք ունի ընկերային եւ տնտեսական աւելի բարուը կենսամակարդակի՝ ապրելու համար հպարտօրէն եւ արժանապատուութեամբ, առանց ձգելու տուն եւ հող եւ ապաստանելու արտա-

սահման: Հայրենի պետականության արտաքին քաղաքականությունը գնահատելով հանդերձ, վերջին շրջանին պետք ունի ներքին վարչամեթոդային ամրապնդումին եւ այլ բնագաւառները ներս աւելի կանոնաւոր միջոցառումներու:

Սփիւռքեան իրականութեան մէջ եւս կայ մշակութային ընկճուածութիւն: Այսօր ԵՄԸՆԵՄՍԸ-ն արեւմտահայերէնը դասած է վտանգուած լեզուներու շարքին: Այս պիտի ենթադրէ, որ այս ընթացքով արեւմտահայերէնը հարիւր տարիներ ետք կրնայ կորսուիլ: Ու տակաւին, ազգային մեր արժէքները կը զիջինք այլ արժէքներու ու կամաց-կամաց կը հեռանանք քրիստոնեական մեր հաւատամբէն՝ տեղ տալով ապակրօս մտածողութեան, որ արեւմտեան աշխարհէն զօրաւոր կերպով կը ներխուժէ մեր կողմերը:

Ընկճուածութիւնը եւ օրինակաւորութիւնը պատմութեան բոլոր հոլովոյթներուն յաճախ իրենք զիրենք կրկնած են եւ միայն պարունակութեանն է բովանդակութեամբ է, որ տարբերած են տարիներու ընթացքին:

Արաբական աշխարհը դեմ կը դնէ այսօր տիրող ընկճուածութեան եւ կը պայքարի օրինակաւորութեան հաստատման ի խնդիր:

Բայց պետք է յիշել եւ վերյիշել, թէ հայն ալ ըրաւ նոյնը եւ իր պատմութեան բոլոր ժամանակաշրջանին:

Եւ հարցումը: Ի՞նչ ըրաւ հայը:

Պօղոս Առաքեալ կը գրէ Տիմոթէոսին, որ կ'ապրէր ընկճուածութեան օրեր իր առաքելութեան մէջ, Եփեսոսի եկեղեցիին մէջ: Ան կ'ըսէ, թէ կը փնտռէ օրինակաւորութիւն եկեղեցիին մէջ, որ երկփեղկուած վիճակի մէջ էր: Եթէ նամակը քաջաւերական էր, յար եւ նման յորդորի, բայց անպայմանօրէն նաեւ պիտի խթանէր Տիմոթէոսը՝ կառչելու իր արժանիքներուն. «Կը յիշեմ քու ունեցած անկեղծ հաւատքը... եւ համոզուած եմ որ դուն դեռ ունիս» (Բ. թուրք առ Տիմոթէոս 1.5): Եւ համոզումը կու գայ այն վճռական իրականութենէն, թէ «Աստուած մեզի երկչոտութեան հոգի չուուաւ, հապա զօրութեան ու սիրոյն եւ զգաստութեան» (Բ. թուրք առ Տիմոթէոս 1.7):

Քրիստոնեան միշտ պիտի յիշէ իր հաւատքին վաւերականութիւնը եւ պիտի վերյիշէ, թէ դեռ ունի գայն, որովհետեւ քրիստոնեական հաւատքին այս իրականութեան մէջ կայ գոյատեւելու եւ տոկալու ուժը: Ուժը ամուր կենալու դժուար առաքելութիւններու առջեւ եւ ուժը ուղիղ կենալու ճարճատող կացութիւններու դիմաց, բայց մանաւանդ ուժը դիմագրաւելու համար ներդրութիւն, ցաւ եւ յուսախաբութիւն: Քրիստոնեան այն անձն է, որ կրնայ ճեղքել կացութիւնները բայց ինք չի ճեղքուիր: Եւ այս նոյն ուժը դուրս կը հանէ վախը մեր սրտերէն ու հոգիներէն:

Փաստուած իրականութիւն է, որ երբ վախը դուրս հանես իրականութենէ կը սկսիս սիրել կեանքը իր ամբողջութեամբ: Կը սիրես մարդը, ընտանիքը, հաւաքականութիւնը եւ հայրենիքը: Սիրոյ ուժը միտքը կ'ընէ յստակ եւ խիզախ եւ ո՛չ մէկ դժուարութեան դիմաց կը տկարանայ, քանի կապուած է արժէքին: Իսկ զգաստութիւնը ինքնազգայում է, որով քրիստոնեան կը դիմագրաւէ ամէն խուճապ եւ տագնապ հաւասարակշռուած մտքով եւ տեսողաշտով: Կացութիւնները վեր առնելով իր ճիշդ պարունակով եւ յարաբերութիւններով, ինչ որ կարելի կ'ըլլայ տեսել գալիքը, հորիզոնէն անդին, յստակաւ տեսութեամբ: Այս զգաստութեամբ է, որ կարելի կ'ըլլայ առաջնորդել հաւաքականութիւնները անելէն եւ խուճապէն:

Հայը հաւատաց իր ազգային հաւատքին պատմական վաւերականութեան եւ արժէքին: Բայց անպայմանօրէն հաւատաց, թէ իր հաւատքը պէտք է տանի հորիզոնէն անդին եւ այս նոյնիսկ ուժով տարաւ գայն Տեղասպանութեան դժոխքէն անդին: Այս հաւատքը եւ հաւատքին ուժը մղեց հայը՝ սիրելու իր ազգը, արժէքը, ինքնութիւնը, քրիստոնեական հաւատքը եւ մշակութային հիմքը: Հայը զգաստ մնաց ամէն տեսակի դժուարութեան եւ տագնապի դիմաց առանց շեղելու հիմնական տեսլականէն, քալելով մինչեւ վերջ՝ նահատակութեան մէջէն ու նաեւ անդին:

Բայց ի՞նչ պիտի ընէ հայը այսօր իր հազարումէկ հիմնահարցերուն դիմաց:

Հայը պիտի վերաշխուժացնէ իր մէջ իր ազգային հաւատքի այս ուժը: Այս ուժով հայը պիտի սիրէ իր ինքնութիւնը, մշակոյթը եւ հաւատքը: Պիտի սիրէ իր հայրենիքը եւ պիտի աշխատի անոր վերելքին, բայց պիտի սիրէ արդարութեան եւ ճշմարտութեան համար իր պահանջատիրութիւնը եւ անոր վաւերականութեան համար ոչ մէկ ճիգ պիտի խնայէ:

Ամէնէն կարեւորը հայը պարտի պահել իր զգաստութիւնը, նոյնիսկ երբ անհաւասար է իր պայքարը: Չգաստութիւն՝ համահայկական, միջազգային հիմնահարցերու մէջ բայց նաեւ ներհայկական հարցերու մէջ:

Ներկայ ժամանակներուն տիրող տարբեր իրավիճակներու մէջ հայուն այսօր պետք է զգաստութիւն: Առանց տարուելու այս կամ այն տեսակի կարգախօսներէն, մեր ներքին ու արտաքին ընկճուածութիւններուն եւ օրինական որոնումներուն արժէ տքնիլ՝ յենելով մեր հաւաքական մտքին: Մեր հաւաքական միտքն է ու այդ մտքին մտայղացումն է, որ մեզ դուրս պիտի բերէ մութ փապուղիին մէջէն:

Հայը ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդ է եւ այս իրականութիւնը հայը կը դնէ, որպէս ժողովուրդ եւ պետականութիւն, յա-

տուկ կարգավիճակի մեջ: Եւ այս ոչ թէ գերակայութեան համար, այլ մեր բոլոր հարցերուն եւ աշխատանքային ծրագիրներու բնագաւառներու մեջէն գերադասելու հիմնական նպատակակէտը՝ Տեղասպանութիւնը եւ պահանջատիրութիւնը:

Պատմութեան կրկնուող իրականութիւնները՝ ընկճուածութեան եւ օրինականութեան գործօնները, հայը պիտի դիմագրաւէ ո՛չ թէ վարդագոյն կամ այլ յեղաշրջումներով, այլ հաւաքական մտքի ստեղծած ուժով եւ այդ ուժին շնորհած սիրովը՝ հողին, մշակոյթին եւ արդար դատին:

Եւ այս սերը հայը պիտի ընէ զգաստ, ինչպէս ըրաւ երբ քալեց Տեր Զօրի մահուան շուքի ձորէն բայց այդ նոյն ձորին մեջէն տեսաւ հայուն վերապրումը:

Ընկճուածութեան եւ օրինականութեան գոյապայքարը եթէ կրկնուող պատմութեան իրականութիւնն է, բայց անպայմանօրէն հայուն վերապրելու հրամայականն է:

## ԽԱՉԻՆ ՈՒՐՈՒՄԿԱՆՆԸ

Զամիլը Ատանա ծնած ու ապրած է: Պատմութեան հանդէպ իր հետաքրքրութիւնը պատճառ դարձած է, որ ան սերտ է իր քաղաքին պատմական ու քաղաքական տուեալները: Ու այդ տուեալներուն մեջ հանդիպած է մեծ իրականութեան մը: Ատանա քաղաքին բնակչութեան աւելի քան ութսուն առ հարիւրը հայեր եղած են: Այս իրականութիւնը սկսած է չարչրկել Զամիլի միտքն ու հոգին եւ ան անպայմանօրէն սկսած է հարց տալ. «Բայց ո՞ր է Ատանայի հայը այսօր»:

19-25 Յոկտեմբեր 2010 Զեյի Թաուն, Գարաւային Ափրիկէ: Կը մասնակցիմ քրիստոնեական միջազգային համաժողովի մը: Աշխարհի տարբեր կողմերէն աւելի քան հինգ հազար եկեղեցական գործիչներ համախմբուած են՝ ըննելու քրիստոնեական հաւաքականութեան ներկայ ժամանակաշրջանի մարտահրաւերները ու անոր անյակից աւետարանչական հրամայականները: Եւ այս համաժողովին մէկ լսարանին ընթացքին Զամիլը անդրադարձած է, թէ կայ հայ մը, որուն կրնայ հանդիպիլ, բան մը որ իր երկար տարիներու փափաքը եղած է: Տեսնել նոյնիսկ հայը, պատմելու համար իր մղձաւանջը, աւելի ճիշդ՝ ուրուականը:



Եւ բարեկամի մը միջնորդութեամբ ուրախացաւ Զամիլը, որ ընդառաջեցի հետը հանդիպելու առաջարկին:

Գլուխը քիչ մը կորած, հազի կարողանալով աչքերը վեր հանել նայելու ինծի, կրցայ տեսնել անոր ցաւն ու ամէկոտութիւնը: «Շնած եմ ոչ քրիստոնեայ ընտանիքի մէջ: Քրիստոնեայ դարձայ եւ ընտանիքս զիս մերժեց ընդունիլ: Կարծայ եկեղեցական գործիչ ու հիմա կը ծառայեմ ժողովուրդիս մէջ Նատոնոյ խօսքին քարոզութիւնը ընելով»: Եւ սկսաւ կամաց-կամաց հանդարտիլ Զամիլ եւ ինքնավստահութիւնը ապահովելով շարունակեց բաժնեկցիլ իր սրտին ցաւը, որ տարիներու վրայ շալկած էր:

«Աղօթքս եւ փափաքս էր տարիներէ հանդիպիլ հայու մը, որպէսզի ներողութիւն խնդրեմ», շարունակեց Զամիլ: «Սկսայ քաղաքիս պատմութիւնը սերտել եւ տեսայ, թէ ինչո՞ւ հայերը այսօր անհետացած են Ատանայէն»:

Զամիլին աչքերը սկսան կամաց-կամաց ջրոտիլ: «Գտայ ճշմարտութիւնը, թէ ինչպէս իմ երկիրս շարժած է ու արտաքսած է հայը իր հողէն»: Քիչ մը թողովելով բայց նաեւ կամաց-կամաց իր հանգստութիւնը գտնելով Զամիլը շարունակեց: «Ներողութիւն պիտի խնդրեմ եղբայրս մեր գործած մեծ ոճիրներուն համար: Տարիներով կը սպասեի հանդիպիլ հայու մը, որպէսզի կարենամ արտայայտել սրտիս ցաւը», ըսաւ ան:

Զամիլը հանեց իր ցաւը, որ տարիներու վրայ երկարած՝ պահած ու ճգնած էր իր սրտին ու հոգիին մէջ: Բայց կար նաեւ իմ ցաւս, զոր ես պէտք է դնէի իր առջեւ, այն ցաւը, որ սերունդներէ ի վեր կը շալկեց ու տակաւին:

«Անցեալ տարի հարիւրամեակն էր Ատանայի շարժերուն», ըսի Զամիլին: «Մեծ-մեծ հայրս՝ Վեր. Յակոբ Գունտաքճեան եւ իր եկեղեցիին ժողովականները բոլորը նահատակուեցան Ատանայի մէջ», եղաւ իմ խապոտ ծայնով պատասխանս, որուն մէջ մեկ կողմէ կար յուզում միւս կողմէ ներդութիւն եւ ցաւ:

Զամիլ չէր կրնար իր արցունքները զսպել: Եթէ մէկ կողմէ հանդիպած էր այս հայուն, միւս կողմէ կար իրականութիւնը, որ դժուար էր շալկել իր մտքին ու հոգիին մէջ:

Զամիլը Քրիստոսը եւ անոր խաչը ըրած էր իր կեանքին ուղեգիծը եւ նոյն այդ խաչին ճշմարտութեան իրականութիւնը ուրուականի մը նման հալածած էր զինք իր իւրաքանչիւր քայլափոխին: Բայց այդ օր Բէյի Թաունի մէջ, թէկուզ շատ հեռու պատմական Չայաստանէն, Զամիլ ճշմարտութեան ուրուականը դարձուց կենդանի ու ապրող իրավիճակի: Ան դուրս հանեց իր ցաւը եւ ներողութիւն խնդրեց իր երկրին գործած բոլոր ոճիրներուն համար:

Բայց իմ պատմութիւնս տակաւին կը շարունակուի:

«Իմ ընտանիքես տաք անդամներ նահատակուած են Մեծ Եղեռնին եւ այս մէկը իւրաքանչիւր հայու արիւնտ պատմութիւնն է»: Ըսի Զամիլին: «Բայց հիմա, որ ճշմարտութիւնը դուրս հանեցիր քու սրտէդ, պէտք է նոյն ուժով աշխատիս այս ճշմարտութեան համար եւ քու ժողովուրդդ մէջ», եղաւ իմ հաստատ եւ ամուր խօսքս Զամիլին, որպէս հրաժեշտ բայց անպայմանօրէն իր կեանքին ու ճշմարտութեան համար իր կեցուածքներուն խթան:

Աղթամարի Սբ. Կաչ վերանորոգուած եկեղեցիին ողիսականը զբաղեցուց միջազգային քաղաքական եւ կրօնական շրջանակները: Եկեղեցական պատարագը դարձաւ քաջքըշուք, ինչ որ միջազգային թէ թրջական թատերաբեմերու վրայ բեմադրուեցաւ ըստ պատշաճի եւ յարմարութեան: Բայց այն ինչ որ դարձաւ մեծ առեղծուած՝ նոյնինքն Սբ. Կաչ եկեղեցիին խաչն էր: Թեքնիք պատճառներու համար, թէ այլ կամէք անկախ ու «արդարացուցիչ» պայմաններ լուսաբանելու եւ յառջ քշելով, թրջական կառավարութիւնը չկարողացաւ «հասցնել» խաչին տեղադրումը եկեղեցիին գմբէթին վրայ այդ պատմական օրին:

Բայց չուշացաւ խաչին ուրուականը: Ան դարձաւ դարձեալ իրական, կենդանի եւ ապրող իրականութիւն եւ պատմական պատարագէն քանի մը օրեր ետք տեղադրուեցաւ իր հարազատ տեղը՝ եկեղեցիին գմբէթին, մարմնաւորելով հայկական եկեղեցիին ազգային ու քրիստոնէական դիմագիծը: Ուշ, բայց ոչ ուշացած:

Ու տակաւին կը շարունակուի ճշմարտութեան անտեսումը: Եթէ մէկ կողմէ խաչը կը գետեղուէր Սբ. Կաչ եկեղեցիին գմբէթին վրայ, միւս կողմէ պատմական Անի քաղաքի մայր տաճարին մէջ կը կատարուէր իսլամական աղօթք, ինչ որ անտեսել էր տաճարին ինքնութիւնը բայց անպայմանօրէն նաեւ անոր հոգին: Եւ չուշացաւ դատապարտումի ալիքը: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կողմէ այս արարքը նկատուեցաւ որպէս «թրջական պետութեան շարունակական գործնութեան» վերացնելու համար հայկական իշխանակը եւ անոր պատմական սրբատեղիներն ու մշակոյթի ժառանգը:

Մահուտ Ալընաք՝ թուրք նախկին երեսփոխան-իրաւաբան, այս արարքը նկարագրեց որպէս «եկեղեցւոյ նուաճումի նամագ»: Թրջական «Թալաֆ» թերթին մէջ (հայերէն պատճենը հրատարակուեցաւ «Նոր Օր»-ի մէջ 11 Նոյեմբեր 2010-ին) ան արտայայտուեցաւ ըսելով, «Անին անցեալ շաբաթ հիւրընկալեց արդի նուաճող մը՝ Ազգայնական Շարժում Կուսակցութեան նախագահ Տեւլէթ Պահչէլին»: Ու դեռ աւելին: Ան այս «նուաճումը» նկարագրեց իբրէ «վիրաւորական, եւ յուսալիչ... որ աշխարհի համար անյետաձգելի անհրաժեշտ»:

## ԿՈՐՄՈՒՄԾ ԲԱՂԱՔ, ՌԷ՝ ՅԱԲԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ


տութիւնն նկատուող նոր դարու ազատութիւններու եւ մարդկայնապաշտութեան դարու այս քառուղիին վրայ մարդկային առումով վիրաւորական եւ յուսալքիչ է նուաճողական նման կոչերուն տակաւին ժողովրդականութիւնն ունենալը»:

Չիա Մերալ՝ թուրք հետազօտող, գրող եւ մարդկային իրաւանց պաշտպան, ապրելով եւ գործելով Անգլիոյ մէջ, իր վերջին իրատարակութեան մէջ «Թուրքիոյ Նախատեսութիւնները», կ'ընէ հետեւեալ եզրակացութիւն-վերլուծումը հայ-թրքական յարաբերութեան համար. «Յայ-թուրք յարաբերութիւնները պիտի մնան անլոյծ, առկախ եւ Թուրքիա պիտի կորսնցնէ բարոյական եւ մտաւորական հիմք երբ ան մերժէ առարկայական մօտեցում եւ դիրք որդեգրել 1915-ի իրադարձութիւններուն հանդէպ եւ անպայմանօրէն քաղաքական միտումներէ եւ հաշուառկներէ դուրս»:

Մահմուտ Ալընաք իր յորդորը կու տայ իր յօդուածի վերջաւորութեան. «Ապագայ սերունդներուն ձգելիք մեր ամենէն թանկագին ժառանգը մարդկային արժեքներով պարուրուած եղբայրութեան պատմութիւնն է»:

Եթէ պիտի կերտուի «եղբայրութեան պատմութիւնը», այս պիտի նշանակէր, թէ անլոյծ եւ առկախ յարաբերութիւնները պէտք է բերել լոյսին եւ ճշմարտութեան: Իսկ փորձը ցոյց տուած է եւ կու տայ, թէ հայ-թրքական իւրաքանչիւր անցուդարձին՝ քաղաքական, ընկերային, մշակութային, կրօնական թէ այլ, ճշմարտութիւնը եւ անոր բացայայտումը ուրուականի մը նման կը հետապնդէ ու դուրս կը ժայթքի իւրաքանչիւր հանգրուանին եւ այս անհատական թէ հաւաքական մեր կենսեքրուն մէջ, ինչ որ անպայմանօրէն պիտի գայ չարչրկելու Քամիլին ու անոր նմաններուն հոգիները: Պիտի գետնդէ խաչը ետ իր արմատին ու դրուածքին՝ Սք. Խաչին ու տակաւին մնացեալներուն վրայ, Անիի մայր տաճարին ու շատ մը այլ եկեղեցիներու նուաճումներուն մէջ եւ անոնց հետ խաչին ուրուականը պիտի գայ դարձեալ ցոյց տալու ճշմարտութեան իրականութիւնը:

Եւ այս խաչին ուրուականն է, որ հայուն ճշմարտութեան եւ պահանջատիրութեան արդարութիւնը կը դարձնէ կենդանի ու ապրող իրականութիւն:



Փերուի Ուրումպա հովիտի լեռնային բարձրաւանդակին վրայ, ծովու մակերեսէն անելի քան 2430 մետր բարձրութեամբ, կը գտնուի աշխարհի եօթը իրաշալիքներէն Մաչու Փիչուն: Ո՛չ միայն քաղաքին հմալքը այլ նաեւ բարձրութեան պատճառած ճնշումը շնչահեղձ կ'ընէ անձը, բայց եւ այնպէս կ'արժէ երթալ ու տեսնել այս ինչ ժողովուրդին՝ Ինգա ցեղախումբին, «իկն գագաթ» քաղաքը:

Քաղաքը շինուած է 1450-ական թուականներուն երբ Ինգա ցեղախումբի թագաւորութիւնը կ'ապրէր փառքի ու զօրութեան ամենէն տիրական օրերը: Բայց 1572 թուականին՝ վախճանով սպանական գաղութատիրութենէն եւ ներթափանցումներէն, ժողովուրդն ու թագաւորութիւնը լքած են իրենց հայրենիքը: Ըստ պատմական տուեալներուն, ամայի եւ լքեալ քաղաքը ժամանակի ընթացքին՝ ծածկուելով խիտ ծառերով ու անտառներով, անկարելի դարձուցած է սպանական տիրապետութեան կողմէ անոր բացայայտումը: Կը շարունակուի առեղծուածային պատմութիւնը այս քաղաքին:

1911 թուականին Միացեալ Նահանգներու Ելլ համալսարանի պատմաբանասիրական ճիւղի դասախօս եւ հետազօտող Յերամ Պիլկամ յայտնաբերելով քաղաքը գայն անուանած է «կորուած քա-

ղաք», որ 2007 թուականին դասուեցաւ աշխարհի եօթը հրաշալիքներու կարգին:

Չրաշալի է դիտել մարդկային պատմութեան ընթացքին կերտուած քաղաքակրթութիւն մը իր ճարտարապետական կոթողներով եւ գեղատեսիլ բնութեամբ, բայց նոյնքան զարմանալի է տեսել անոր քաղաքակրթութեան անհետացումը թշնամիին սպառնալիքներուն պատճառով:

Կը շարունակեմ դիտել ու վայելել այս գեղեցիկ քաղաքը: Մարդիկ ապրած են հոս՝ կերտելով ինքնուրոյն մշակոյթ, լեզու, հաւատք եւ անոր համար յատուկ մեծեան: Ու տակաւին տուն, ընտանեկան ու հաւաքական կեանք, կենցաղ, որոնք շաղախուելով բնութեան գեղեցկութեան հետ, պատճառ դարձած են, որ մարդիկ արժեւորեն այս բոլորը համաշխարհային համակարգին մէջ եւս:

Այսօր դիտելով այս բոլորը՝ գեղեցկութիւնն ու մշակութային կոթողները, հարց կու տամ. «Ո՛ր է այսօր իրական կեանքը այս քաղաքին եւ անոր ապրող նկարագիրին»: Գեղեցիկ անբակներու կոյտին մէջէն կը փորձեմ տեսնել անհետացած ժողովուրդի մը կեանքը: Կը տեսնեմ նաեւ հողին ու արմատին անհրաժեշտութիւնը եւ անոնց գոյապայքարը:

Ինձա ցեղախումբը միակը չէ, որ ծուլումի եւ կորուստի ենթարկուած է: Իսկ Մաչու Փիչուն դարձած է հազարաւոր զբօսաշրջիկներու հնայքին գոհացում տուող անբակ: Միայն այդքան:

«Չին գազաթին» վրայէն կը շարունակեմ որոնել իմ ժողովուրդիս՝ հայուն հին պատմութիւնը, որ այսօր նորի տարագ հագած է իր անկախ ու սեփական պետութեան քսանամեայ նորագոյն իրավիճակով ու նուաճումով:

Չայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններուն անկախութեան (առաջինը ճանչցուած միջազգային համակարգին մէջ իսկ երկրորդը՝ տակաւին) քսանամեայ տարեդարձները կը նշենք, բայց պէտք չէ մոռնալ, որ անոնց պատմութեան տոյն կանգնած է հին երկար ուղի մը, որուն վրայ արձանագրուած է մէկ կողմէ՝ զոհողութիւն, աշխատանք եւ պայքար, իսկ միւս կողմէ՝ անհատակութիւն: Պատմութեան ընթացքին հայրենական զոյգ իրականութիւնները կերտուեցան զոհողութեամբ նուիրեալներու, որոնք հասկնալով հողին ստեղծած արժեքը կառչեցան անոր ու անոր ստեղծած արժեքին անկախացումը դարձաւ ամուր կեանքի խարխիս՝ հայրենաբնակ եւ սփիւռքի հայուն: Սփիւռքահայը՝ իր ինքնութեան եւ վերապրելու տեսլականը տեսաւ իր հայրենի զոյգ հանրապետութիւններուն մէջ. բայց անելին: Չայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններուն անկախացումով հայու ոգին իր ազգային

արժեքներով լեցուեցաւ եւ հպարտացաւ: Այս երկու իրականութիւնները անհրաժեշտ են մեր գոյապայքարի ճամբուն շարունակութեան համար:

Այսօր ինքզինք կը պարտադրել կարելու հարցում մը. «Ինչպե՛ս պահել անկախացած հողն ու անոր արժեքը»:

Թեւ ներկայիս անհետացած է սպանական գաղութատիրութեան վտանգը, ինչպէս էր Ինձա ցեղախումբին պարագային, բայց եւ այնպէս գոյութիւն ունին մեր ազգային կեանքը վտանգող այլ սպառնալիքներ: Մեկնելով այն իրականութենէն, որ «պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» (յար ու նման Ինձա ցեղախումբին պատմական տուեալներուն) հարց կու տամ. «Կարելի է՞, որ Մաչու Փիչուի վարկածը իր հին ժառանգով իրականանայ նաեւ մեր հայ իրականութեան մէջ»: Չայաստանն է որոշ համեմատութեամբ նաեւ Ղարաբաղէն արտագաղթը սպառնալիք ըլլալուն աստիճան մտահոգիչ երեւոյթ է: Չարագատ հողէն հայուն հեռանալն ու զայն լքելը դուռ կը բանայ հայուն արժեքին թուլացումին եւ այդ արժեքն տուեալ տարածքներու դատարկումին:

Սփիւռքահայութեան պարտադրուած կարգավիճակէն մեկնած կրնանք հաստատել, որ ի գին ամէն տեսակ զոհողութեան կը փորձենք ամուր պահել հայու արժեքը իր հողէն դուրս: Սակայն ինչո՞ւ սփիւռքեան փորձառութիւնը կրկնել հայրենի իրականութեան մէջ եւ անկախացած հայրենիքէն հեռանալ՝ տարածուելով աշխարհի չորս ծագերուն:

Յանձնա օտար երկիրներու մէջ կը հանդիպինք Չայաստանէն արտագաղթած հայորդիի, որուն հետ զրոյցի ընթացքին անպայմանօրէն կը շեշտուի արտագաղթի պատճառը. «Ի՞ժուար են մեր պայմանները Չայաստանի մէջ»: Որքան դիպուկ է ժողովրդային ասացուածքը. «Ամէն մարդու մանուկը կու լայ» եւ ամէն մարդ կը կարծէ, թէ ի՞ր «մանուկին լացը» ամէնէն բարձրն է եւ իւրայատուկը: Ճամբորդութիւններուս ընթացքին կը տեսնեմ, որ իւրաքանչիւր երկիր կ'ապրի իրեն յատուկ տագնապներ, որոնք իրենց մէջ մեծ են: Այս եղած է պատմութեան ընթացքը երբ քաղաքական, տնտեսական եւ ընկերային սպառնալիքները միշտ առկայ եղած են ամէնուրեք, թելուզ տարբեր տարողութեամբ:

Չայուն այսօրուան կարգավիճակը իւրայատուկ է իր Տեղասպանութեամբ եւ պահանջատիրութեամբ: Այս իւրայատուկութենէն մեկնելով հայը պէտք է զգաստանայ թէ՛ սփիւռքեան եւ թէ՛ հայրենի ու դարաբարդեան մակարդակով, զգաստանայ, որպէսզի պահէ, բարելաւէ եւ կառչած մնայ անկախացած հանրապետութիւններուն ու համախմբուի յաւերժական հայրենիքի հասկացողութեան շուրջ նոյնիսկ երբ «լացը» մեծ է:



## ՀԱՅ ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ\*

«Կրթ մանուկը իր ճամբան սկսած ազին» :  
(Լուսկազ 22.6)

Կը շարունակեմ դիտել Մաչու Փիչուի աներակները: Անոնք գեղեցիկ են եւ ունին հրաշալի նկարուելու արժանակայէլ հանգամանքը. կայ մշակոյթ մը, որ այսօր չկայ: Իրաւացի է բանաստեղծին խօսքը. «Երբ յիշատակս ալ թառամի այն ատեն ես կը մեռնիմ»:

Յիշատա՞կը: Եթէ անցեալի նուաճուած իրականութիւններէն եկող երեւոյթ է ան, բայց անպայմանօրէն անցեալի արժէքին յարատեւումն է, որ պէտք է խօսի ու ապրի, այսօր եւ վաղը:

Ինզա ցեղախումբը հեռացաւ հողէն, չկրցաւ դիմնակ սպառնալիքներուն, բայց հեռացումին հետ կորսնցուց իր հողն ու անոր արժէքը՝ ետին ձգելով միայն պատմական հրաշալի կոթող «Կորսուած Զաղաք» անունն տակ:

Բայց ի՞նչ է եւ ո՞ր է հայուն փորձառութիւնը: Կորսուած քաղաք, թէ՛ յաւերժական հայրենիք:

Քսանամեակի մէկ եւ մեծ առաքելութիւնն է հաւաքաբար կերտել Յաւերժական Զայրենիք:

Պայկական իրականութենէն մեկնելով անպայման հարցում մը կը ծագի մեր մտքերուն մէջ. «Ինչո՞ւ պէտք է կրթեցն հայ մանուկը»: Պատասխանը պարզ է. «Որպէսզի ունենանք եւ պատրաստենք հայ նոր սերունդը այսօրուան համար բայց անպայման վաղուան համար իր ամբողջական մշակոյթի ժառանգորդի հասկացողութեամբ»:

Պայուն ամբողջական մշակոյթը իր ազգային ինքնութիւնն է, լեզուն եւ պատմութիւնը, երգն ու գրականութիւնը. անելին, Ցեղասպանութիւնն ու պահանջատիրութիւնը եւ քրիստոնեական հաւատքը: Կարելի չէ հայը պատկերացնել միայն ազգային ինքնութեամբ, առանց ներառելու քրիստոնեական հաւատքը: Նաեւ կարելի չէ հակառակը ընել: Եթէ այսօր պիտի խօսիլք հայուն քրիստոնեական հաւատքին, նկարագիրին ու ինքնութեան մասին, ապա կարելի չէ այս մէկը ընել առանց հիմնաւորելու Աստուածաշունչի կարեւորութիւնը մեր սերունդներուն դաստիարակութեան մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս 2011 թուականը հռչակեց հայ մանուկի տարի բայց եւ այնպէս պէտք չէ մոռնալ, որ վեհափառ հայրապետը 2003-ին կատարեց այս յիշատակումներուն առաջինը՝ այդ տարին հռչակելով Աստուածաշունչի տարի: Այս մէկուն պատճառը այն է, որ «Աստուածաշունչը աստուածային յայտնութեան աղբիւր է: Դեռեւաբար ան քրիստոնեական հաւատքի հիմքն է եւ եկեղեցիին կեանքին ու առաքելութեան սիրտը: Զրիստոնեական կեանքին առնչուած որեւէ արժէք կամ մտածողութիւն, դէպք կամ երեւոյթ պէտք է արժեւորուի Աստուածաշունչի լոյսին տակ», Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի կոնդակէն հայ մանուկի տարուան առիթով:

Զրիստոնեական եկեղեցիին հիմքը Աստուածաշունչն է: Իւրաքանչիւր համայնք՝ առաքելական, կաթողիկէ կամ անետարնական, քրիստոնեական դաստիարակութեան մէջ իր վարդապետական շեշտը ունի սակայն այդ վարդապետական շեշտը կու գայ անելցնելու եւ

\*Արտասանուած՝ Մեծ Պահցի շրջանի դասախօսական շարքի ծիրին մէջ, «Պայ մանուկի տարուան» առիթով Սբ. Աստուածածին եկեղեցի, Կիպրոս, Մարտ 2011:

ամբողջացնելու հիմքը՝ Աստուածաշունչը եւ անոր դաստիարակութիւնը:

Հայ ժողովուրդի պատմութեան հոլովոյթներուն մէջ Աստուածաշունչը եղաւ կարեւոր հիմքերէն մին: 301 թուականին հայը ընդունեց քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն եւ դարձաւ առաջին քրիստոնեայ պետութիւնը: Սակայն կարիքը զգացուեցաւ հայերէն գիրը ունենալու, որպէսզի Աստուածաշունչը թարգմանուի հայերէնի եւ հայը արմատանայ իր քրիստոնէական հաւատքին մէջ: Աստուածաշունչի թարգմանութիւնը կոչուեցաւ «Թագուիի թարգմանութեանց»:

Աստուածաշունչի դերին եւ կարեւորութեան մասին խօսելու համար պէտք է հիմք ունենանք պատմական իրողութիւններն ու ճշմարտութիւնները: Եւ հոս կ'արժէ անդրադառնալ հայերէնով տրուած անուկին՝ Աստուածաշունչ, այսինքն Աստուծոյ շունչը: Իսկ պարզ է այն, որ շունչը կեանք է, առանց որուն կարելի չէ ապրիլ: Եթէ հայ մանուկը պիտի դաստիարակեք Աստուածաշունչով, ուրեմն Աստուծոյ շունչը պիտի սրկկեցնէ անոր վրայ, անոր հոգիին, եւ մտադր կեանքին մէջ պիտի սերմանենք Աստուծոյ շունչը:

Իսկ ո՞վ պիտի ընէ այս մէկը. ծնողք, մեծ ծնողք, ընտանեկան յարկ, եկեղեցի եւ դպրոց: Իրարու առնչուած եւ իրարմով ամրապնդուող ջգակներ, որոնք պիտի կազմեն մանուկին քրիստոնէական դաստիարակութեան հիմքեր:

Հայ մանուկին Աստուածաշունչի դաստիարակութեան գործընթացը պէտք է զարգանայ հիմնուելով երեք գլխաւոր հարցումներու վրայ.

Ա. Ինչո՞ւ Աստուածաշունչը սորվեցնել

Մանուկը կը նմանի սպունգի: Ինչպէս սպունգը կը քաշէ ամէն տեսակ հիւր, նոյնպէս մանուկը կը ներծծէ ամէն տեսակ տեղեկութիւն: Այս մէկը աւելի եւս շեշտուած է այս դարուն, երբ մանուկը կ'ապրի շատ աւելի բացուած կեանք մը՝ վայելելով տեղեկատուութեան աշխարհի ընծեռած բոլոր օրինութիւնները:

Ուրեմն, որպէս ծնողք, եկեղեցի ու դպրոց, մանուկը պիտի դաստիարակենք Աստուածաշունչի մեծագոյն եւ նուիրական իրականութեամբ, թէ Աստուած սեր է: «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին զրկեց, որպէսզի ան, որ Անոր հաւատայ չկորսուի հապա յախտեանական կեանք ունենայ» (Յովհաննոս 3.16):

Մանուկին պէտք է սորվեցնել այն, թէ Աստուած սիրեց աշխարհը եւ նաեւ սիրեց այս աշխարհին մէջ գտնուող իւրաքանչիւր անձը: Աստուած իր սերը դրսեւորեց գործնական քայլերով եւ անոր սերը անհասանելի եւ անիրականանալի չմնաց: Այդ գործնական քայլը

եղաւ այն, որ ինք մարդացաւ, աշխարհ եկաւ եւ իր կեանքով նաեւ մահով ու մահաւանդ յարութեամբ փրկեց մարդը եւ անոր շնորհեց նոր կեանք:

Մանուկը այս դաստիարակութեամբ պիտի սկսի սիրել Աստուած, որուն միջոցով պիտի սիրէ ինքն իր անձը. սակայն երբեք հոն կանգ պիտի չառնէ: Ան նաեւ պիտի սկսի սիրել ընտանիքը, բարեկամները, հայրենիքը, մշակոյթը, պատկանելիութիւնը եւ տակաւին: Ամբողջապէս սիրոյ հասկացողութիւնն է, որ Աստուծոյ սիրով եւ Աստուածաշունչին միջոցով պիտի թրծէ հայ մանուկին նկարագիրը եւ ինքնութիւնը եւ մանուկը պիտի սիրէ աշխարհը ինչպէս Աստուած սիրեց:

Բ. Ի՞նչ պէտք է սորվեցնել Աստուածաշունչէն

Անհրաժեշտ է խուսափիլ հայ մանուկին Աստուածաշունչի դաստիարակութեան գործընթացին մէջ դաս եւ դասապահ բնորոշումէ: Մանուկը կրնայ խուսափիլ դասի մթնոլորտէն, սակայն անպայման կը նախընտրէ պատմութիւն հասկացողութիւնը: Մանուկը պիտի սիրէ Աստուածաշունչի պատմութիւնները փոխանակ ընկալելու Աստուածաշունչի դասերը: Բայց միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է մանուկին բացատրել, որ Աստուածաշունչի այս պատմութիւնները իրական են եւ կեանքի ու ինքնութեան համար օրինակելի եւ կիրարկելի:

Բայց տակաւին կայ աւելին. մանուկը նախ պէտք է սորվի Աստուծոյ նկարագիրին մասին քան Աստուծոյ պատասխանատուութիւններուն ու պարտականութիւններուն կամ անոց հետեւանքներուն մասին: «Եթէ չար կենաս, Աստուած պապան խոշոր քար մը պիտի նետ գլխուդ» կամ «Եթէ հնազանդ չըլլաս, դժոխք պիտի երթաս»: Նոյնիսկ թէ իրականութիւն կայ այս խօսքերուն մէջ, բայց եւ այնպէս այդպիսով մեք մանուկը կը վանենք Աստուծմ: Աւելի ճիշդ է, որ մանուկը նախ սորվի, որ «մեք կը սիրենք Աստուած, որովհետեւ ան նախ մեզ սիրեց» (Ա. Յովհաննոս 4.19): Մանուկը պիտի հասկնայ, թէ Աստուած սեր է եւ ինք եւս նոյն սիրով պիտի պատասխանէ Աստուծոյ:

Աստուածաշունչի դաստիարակութիւնը մանուկին մէջ կը սկսի զարգացնել քննական վերլուծում եւ հաւասարակշռութիւն: «Բարի սամարացի»-ին առակը, օրինակ, մէկ կողմէ կը սորվեցնէ մեծ բարեկամ Յիսուսի տիպարը, միւս կողմէ բարեկամութեան անհրաժեշտութիւնը: Միեւնոյն ատեն մանուկը կը խթանէ կամաք-կամաց տրամաբանելու, թէ զիրար չհանդուրժող մարդիկ կրնան իրարու օգնել, նոյնիսկ եթէ իրարմէ տարբեր են ու անկապ: Մանուկը պէտք է սորվի ընդունիլ դիմացինը նոյնիսկ երբ ան իրեն պէս չի մտածեր:

Այսպիսով ալ մանուկը կը սիրէ հայրենիքը եւ կը ծառայէ անոր:

«Այն, ինչ որ Աստուծոյ է, տալ Աստուծոյ, եւ այն, ինչ որ կայսեր՝ տալ կայսեր»։ Մանուկը պէտք է հաւասարակշռէ իր կեանքի տարբեր յարաբերութիւնները՝ սիրել նոյնիսկն կեանքի տարբեր ինքնութիւնները, այս պարագային երկիրն ու հայրենիքը։

9. Ինչպէ՞ս պէտք է սորվեցնել Աստուածաշունչը

Աստուածաշունչի դաստիարակութիւնը լաւապէս կարելի կ'ըլլայ փոխանցել մանուկին եւ թափանցել անոր սրտին ու հոգիին մէջ երբ կը գործածես նոյնիսկն մարմնային զգայարանքները։

«Ուրեմն հաւատքը լսելն է» (Յովմեացի 10.17)։ Մանուկը պիտի սիրէ լսել Աստուածաշունչի պատմութիւնները։ Եթէ պատմասացութիւնը անցնալիս գործածուած լաւ ձեւերն մէկն էր տեղեկութիւնները փոխանցելու, ուրեմն զայն անպայման պէտք է նկատի առնել նաեւ այսօր, որովհետեւ այս ձեւը տակաւին գործածելի եւ արդիւնատու է։ Պատմելով Աստուածաշունչի պատմութիւնը եւ լսելով այդ բոլորին մասին մանուկը պիտի իւրացնէ զանոնք եւ իր կեանքին մէկ մասը պիտի դարձնէ։

Տեսողութեամբ կարելի է գրաւել մանուկին ուշադրութիւնը. մանուկը պիտի դիտէ, կարդայ, որպէսզի ամբարտ ու հիմնաւորէ բոլոր տեղեկութիւնները։ Բայց ան անպայմանօրէն պիտի դպչի եւ շօշափէ, որպէսզի իր մէջ յաւելեալ հանգստութիւն եւ սեր դրսեւորուի։ Աստուածաշունչի պատմութիւնները խաղերու ընդմէջէն կը նպաստենք, որ աստուածաշունչային դաստիարակութիւնը աւելի մատչելի ու դիւրաւ ընկալուի։

Աստուածաշունչը բոլոր ժամանակներու չիկնցող եւ չմաշող կեանքի ուժն է։ Ան կը հանդիսանայ քրիստոնեական մեր հաւատքին հիմքը, որուն վրայ պիտի կերտենք անհատական եւ հաւաքական մեր կեանքերը։ Մանուկը այս դաստիարակութեամբ թրծելը՝ երբ ան տակաւին ճամբան նոր սկսած է, առաւել եւս ամուր հիմքերու վրայ կը դնէ այս դաստիարակութիւնը եւ կ'ամրապնդէ զայն Աստուծոյ շունչով։

2011-ը մանուկի տարի է. մեր պարտականութիւնն ու պատասխանատուութիւնն է հայ մանուկին Աստուածաշունչի դաստիարակութիւն փոխանցել։

## ԾԱՄԲԱՅ ԵՒԱՆ

*«Օր մը նաը մզան Յիսուս եւ իր աշակերտներն ալ ու ըսաւ անոնց. «Ծովակին միւս կողմը անցնի՞ր»։ Ծամբայ էլան»։*

*(Ղուկաս 8.22)։*

Աստուածաշունչի խոշորագոյն իրականութիւնը անոր բացատրութեան մէջ է։ Բացատրութիւնը, որ իւրաքանչիւր անհատ եւ հաւաքականութիւն կը փորձէ կարդալ եւ հասկնալ ինչ իր վիճակին մէջ եւ ա՛յս Աստուածաշունչը կը դարձնէ ուժեղ եւ չիկնցող իրականութիւն, որ կը խօսի կեանքի ճշմարտութիւններու մասին եւ կը դարձնէ զինք ամենէն շատ կարողացուած գիրքը։ Եւ ա՛յս հասկացողութեամբ արժէ նաեւ բացատրել եւ հասկնալ Զրիստոսի եւ իր աշակերտներուն նաւով ծովակին միւս կողմը անցնելու իրականութիւնը։

Եւ կը սկսի պատմութիւնը։ Յիսուս իր աշակերտներուն կ'ըսէ, թէ պէտք էր, որ նաւով «ծովակին միւս կողմը անցնիլ» (Ղուկաս 8.22), եւ նաեւ մտնելով՝ անոնք բոլորն ալ «ճամբայ էլան» (Ղուկաս 8.22)։ Ծամբորդութիւնը սկսաւ հանդարտ, բայց նաեւ մտաւ փոթորկոտ շոյանը. «Փոթորիկ մը ելաւ ծովակին վրայ։ Նաը ջուրով կը լեցունէր նա իրենք վտանգի մէջ էին» (Ղուկաս 8.23)։ Եւ այդ վիճակին մէջ կար աշակերտներուն վախը. «Վարդապետ, վարդապետ, ահա կը կորսուիկը» (Ղուկաս 8.24)։ Յիսուս ելաւ ու «սաստեց հովին ու ջուրերուն խողովութիւնը» եւ «խաղաղութիւն եղաւ» (Ղուկաս 8.24)։ Բայց կար նաեւ Յիսուսի քննադատութիւնը երբ ըսաւ աշակերտներուն, «Ո՛րն է ձեր հաւատքը» (Ղուկաս 8.25)։ Եւ աշակերտները, որոնք «վախի մէջ ինկած էին» զարմացան ու ըսին. «Արդեօք ո՞վ է ասիկա» (Ղուկաս 8.25)։

Եւ ահա հայ ժողովուրդը՝ իր սփիւռքով եւ ի մասնաւորի իր հայրենի պետականութեամբ, որ կը ոգեկոչէ իր անկախութեան 20-րդ տարեդարձը այս տարի, նաեւ «ճամբայ էլած» են, որպէսզի «ծովակին միւս կողմը անցնի»։ Մեր հայրենի եւ սփիւռքեան իրականութիւնները այսօր նաեւ ճամբայ էլած են եւ կը քալեն ու կը ճամբորդեն միջազգային համակարգի մէջ, բայց նաեւ պահանջատէր ու իրաւատէր՝ Յեղասպանութեան եւ անոր պահանջատիրութեան իրողական կարգավիճակով։ Դայն ալ մտած է «նաւը» եւ իր նպատակն է «ծովակին միւս կողմը անցնիլ»։ Դայ ժողովուրդը՝ իր սփիւռքով եւ հայրենիքով, կանչուած է մէկ կողմէ՝ հիմնելու եւ խարսխելու իր պետականութիւնը, բայց նաեւ հասնելու պահանջատիրութեան եւ Յեղասպանութեան արդար հատուցման։

Եթէ ճամբայ էլանք, եւ անպայմանօրէն էլած ենք, բայց նաեւ պիտի տեսնել, թէ ճամբուն մէջ կայ խաղաղ բայց նաեւ փոթորկոտ օրերը։ Եւ այս մեր ներկայ օրերու իրական պատկերն է։ Դպարտ ենք

20-ամյա մեր զոյգ իրադարձություններով՝ հայրենի պետականության և դարաբաղեան հանրապետությունը և սփիւռքեան իրականութեան մէջ ձեռք ձգուած որոշ յառաջխաղացքներով՝ Տեղասպանութեան ու պահանջատիրութեան գոյապայքարին մէջ: Բայց միւս կողմէ կայ նաեւ «փոթորիկը»:

Մէկ կողմէ հայրենի պետականութեան պարագային կայ ընկերատնտեսական ծանր պայմանները և անոր որպէս հետեանը՝ արտագաղթը: Սփիւռքեան մակարդակներու վրայ կայ անհրաժեշտութիւնը ուժերու և աշխատանքներու կեդրոնացեալ համադրումը և դասաւորումը ու տակաւին ցուլումի և արեւմտահայերէնի վտանգուած ըլլալու կարգավիճակը: Ատոր վրայ պիտի աւելցնել արաբական աշխարհի հայաշատ գաղութներու անորոշ ճակատագիրը և Նոյն շրջաններու մէկ երկրէ միւսը յառաջացած և զիրար հրմշտկող յեղափոխութիւնները: Եւ կարելի է տակաւին շարքը և իրադարձութիւնները երկարել:

Վերջին շրջանին հայկական մամուլին մէջ՝ հայերէն թէ անգլերէն, երեւցան թեր ու դէմ յօդուածներ և քննարկումներ, թէ պէ՛տք է միայն քննադատական կեցուածք ունենալ հայրենի պետականութեան և հայկական հարցերու նկատմամբ: Եթէ չափազանց քննադատութիւնը ճիշդ չէ, բայց նաեւ շոյալուած գովասանքը և գովաբանութիւնը անյարմար:

Կայ կարեւոր հիմնահարց մը. «Ո՞ր է մեր հաւատքը»: Եւ եթէ հայուն հաւատքը իր քրիստոնեական հիմքն է, բայց անպայմանօրէն նաեւ իր ազգային, քաղաքական, մշակութային և ընկերային արժեքը և ժառանգը: Հայուն հաւատքը բնորոշողը իր ամբողջական մշակութիւն հասկացողութիւնն է և այս հասկացողութեամբ է, որուն վրայ կերտուած է և որ պէտք է շարունակել կերտել մեր հայրենիքը: Եւ Նոյնինքն այս հասկացողութեան գոյապայքարն է, որով սփիւռքը պիտի շարունակէ գոյատեւել իրրեւ պահանջատիր իրականութիւն: Հայը միշտ կառուած պէտք է մնայ ոչ միայն տեսելու այլ նաեւ պահելու և գործադրելու իր հաւատքը:

Մեր վախերը և զարմանքները, որքան որ ալ իրաւացի ըլլան, պիտի տեսնել, թէ կայ նախապատուութիւն մը, որ վեր է ամէն միջոցառումներէ՝ Հայրենիքը կերտել և Սփիւռքը վերակազմակերպել:

Պիտի տեսնել բայց նաեւ հաւատալ, թէ ճամբայ ելած ենք, որպէսզի «միւս կողմը անցնինք»: Եւ միւս կողմի ճամբուն վրայ նաեւ պիտի հաւատալ, թէ կարելի է հովերուն և ջուրերուն հրաման տալ, որ հնազանդին: Եւ այս առանց սակարկումներու և հաշուառկումներու: Եւ հաւատքն է, որ հայուն պիտի առաջնորդէ հասնելու համար միւս կողմը Նոյնիսկ երբ փոթորիկ է:

Ճամբայ ելած ենք: Ոչ թէ անսպասակ, այլ կառուած մեր հաւատքին՝ հասնելու համար «միւս կողմը»:

Պատեղը կրօնական ինքնութեան, համոզումներու ու դաւանանքի հասկացողութիւն և ընկալում է: Բայց և այնպէս անիկա անպայման հաւաքականութեան ընդհանրական կեանքին մէջ իրրեւ ուղեցոյց ծառայող իրականութիւն է, ուր մարդ կ'ապրի ճշմարտութիւնը՝ իր համոզումներէն մեկնելով: Եթէ հաւատքին մէջ շօշափելի և փաստացի ապացոյցներ չկան, բայց և այնպէս կայ ճշմարտութեան հաւատալը, որ կու գայ լիցքաւորելու անհատական ու հաւաքական կեանքերը՝ կերտելով անհատին և հաւաքականութեան ազգային ինքնուրոյն մշակոյթը:

Հայուն համար հաւատքը իր քրիստոնեական համոզումն է, որ ներմուծուած է ազգային և հաւաքական կեանքին մէջ՝ պատմութեան տարբեր ժամանակահատուածներու ընդմէջէն, դառնալով զօրաւոր խարիսխ ու երաշխիք կեանքը կերտելու ու շարունակելու ի պին ամէն զոհողութեան:

Այս զոհողութեան ճամբան հայուն համար եղած է ու տակաւին է երկար, արինտու ու տագնապալի: Բայց այդ Նոյն հաւատքին կառուցողութիւնը հայուն տուած է կեանք ու աւելի կեանք:

Յ Մայիսին Կիպրոսի Հանրապետութեան բռնազրաւուած շրջանի հայկական մակարա վանքին մէջէն կը փորձեն դիտել կեանքը: Բայց



ի՞նչ կեանք փնտռել աներակներուն մէջ եւ ինչպե՞ս բացատրել կեանքի շարունակականութիւնը Նոյնիւքն վանքին, որ պատմութեան ընթացքին լոյսի եւ ճշմարտութեան փարոս, իսկ այսօր կիսով կանգուն ու ամայի:

Փոքր մատուռին մէջ մատուցուած սուրբ պատարագն ու շարականներու երգեցողութիւնը հոգեպարար է: Ուխտազնազուցիւնն է Մակարա վանքի օրուան առիթով, որուն կը մասնակցիմ բարեկամներով՝ ապրելու համար օրը իր ամբողջական հարազատութեամբ:

Ասիկա Մակարա վանք տուած երկրորդ այցելութիւնն է, բայց եւ այնպէս կրկին ապրեցայ ընդվզումը ամբողջ զգացումներովս ու կիրքերովս: Ինչպե՞ս կրնայ ըլլալ, որ բռնագրաւումէն միայն 36 տարի ետք վանքը արդէն այսօրուան քարուքանդ ու աներակ վիճակին հասած է: Բայց չէ՞ որ պատմական կոթող է՝ ազգային ու միջազգային արժէք ներկայացնող: Ինչո՞ւ պէտք է կործանել այն, որ կանգնուած է կեանքեր կառուցելու:

Բայց հայոց պատմութեան մէջէն յստակ կ'արտացոլայ, որ հայը միշտ ու անընդհատ ապրած է այդ իրավիճակը: Նոյն բռնագրաւողն է, որ Նոյն ուժով ու տարողութեամբ պատմութեան տարբեր ժամանակաշրջաններու, եւ մինչեւ օրս, կը քանդէ մեր կոթողները, նաեւ կեանքը:

Բայց եւ այնպէս, պէտք է դուրս գալ այս զգացական աշխարհէն, որպէսզի կարելի ըլլայ տեսնել կեանքին միւս երեսը՝ վերապրումն ու շարունակականութիւնը:

Եկեղեցական արարողութենէն ետք, կիսով աներուած մատուռին մէջ դարձեալ ապրեցայ պահ մը ամենայն հպարտութեամբ: Դոն՝ Նոյն այդ մատուռին փոքրիկ խորանին վերեւ, այդ օր վառած մոմերուն լոյսերուն տակ տեսայ մէկ հատիկ հայերէն բառ, որ տակաւին յստակ եւ ամուր կառչած է սիւնին՝ ԴԱԻՍԵ: Քանդուած էր վանքը, աներուած, չկար երդիք ոչ ալ պատուհան, խոտերը ծածկած են ամենուրեք, եւ կեանքն ու պատմութիւնը արմատախիլ եղած են, բայց մնացած է զօրաւոր գրաւականը՝ հաւատքը:

Հայուն հաւատքն է առիկա, որ պատմութեան ամենէն դաժան ու տխուր օրերուն մնաց ամուր եւ տոկուն, ինչպէս Մակարա վանքին մատուռին սիւնին վրայ մնացած այդ բառը, որ բառ մը չէ սոսկ, այլ իմաստ: Հաւատքն է, որ իր կարգին քալեց հայութեան արինոտ ուղիէն սակայն չմեռաւ, քանդուեցաւ բայց չոչնչացաւ, թաքնուեցաւ բայց անպայմանօրէն կրկին երեւան եկաւ իբրեւ իսկական եւ կենդանի հաւատք:

Հայուն հաւատքն է առիկա, որ մնաց կանգուն՝ վերապրելով եւ վերաշինելով, գոյատեւելով եւ շարունակելով: Այդ հաւատքն է, որ

ճշմարտութեան եւ արդարութեան վկայութիւնն եղաւ՝ վերապրելու ու շարունակելու:

Մակարա վանքի մատուռի սիւնին վրայ վեհօրէն երեւցող եւ ամուր սիւնին կառչած հաւատքը այսօր եւս շատ խօսուն է. քանդուած պատերուն եւ տանիքներուն մէջէն կայ պատգամ մը՝ ուղղուած իւրաքանչիւրիս. «Հայուն այս հաւատքը պէտք է պահուի եւ շարունակուի»:

Այո՛, հայուն հաւատքը հին է բայց ոչ հինցած: Կարելի չէ Նորի մթնոլորտին մէջ անտեսել այն, որ հիմը եղած է մեր անհատական ու հասարական կեանքերուն: Պիտի կերտենք Նորը բայց անպայմանօրէն պիտի պահենք էականը, այն, որ մեր կեանքերուն տուաւ արժէք եւ արժեւորեց գայն պատմութեան բոլոր գործընթացներուն:

Ինքնաշարժներուն մէջ տեղաւորուած կը պատրաստուինք Նիկոսիա վերադառնալու: Ինքնաշարժին պատուհանէն դարձեալ դիտեցի Մակարա վանքին աներակները եւ հոն տեսայ հայուն կեանքը: Կեսըք մը, գոր հայը կ'ապրի հոս ու հոն, քիչ մը ամէն տեղ եւ ան կը շարունակէ ապրիլ, որովհետեւ իր պատմութեան մէջ եղած են Մակարա վանքեր, որոնք քանդուած են բայց չեն ոչնչացած: Այդ կառոյցները կրցած են ամուր մնալ ամէն տեսակի տագնապի դիմաց եւ չեն ընկրկած: Եւ եթէ աներուած են, բայց եւ այնպէս կրցած են աներակներուն մէջէն դուրս հանել այդ հաւատքը՝ կենդանի եւ աշխուժ, յուսակ ու պայծառ, որ վկայութիւնն է հայուն ապրելու վճռականութեան:

Ու պատգամը կը շարունակուի: Մակարա վանքը իսկապէս պիտի քանդուի, եթէ հայը կորսնցնէ իր հաւատքը: Հաւատք՝ ազգային, քրիստոնեական եւ պահանջատիրական ամբողջական հասկացողութեամբ: Բայց երբեք պէտք չէ հոն հասնիլ, այլ պէտք է ամուր պահել Մակարա վանքին հաւատքը:

# ՄԵՏՐՈՊԻՆ ԵՐԿԱՅՆՄՏՈՒԹԻՒՆԸ

«Մեր երկայնամիտ է»:  
(Ը Կորնթացիս 13.4)

Քրիստոնեական մեր հուանամանքն հիմնական է կեդրոնական իրականությունը կր կայանայ հոն, ուր «Աստուած այնպես սիրեց աշխարհը» (Յովհաննու 3.10): «Այնպես» ունի քանակական եւ թուական հասկացողութիւն բայց նաեւ որակական եւ խորքային: Թուականը կու գայ այն իրականութենէն, թէ Աստուծոյ սերը անսահման է, թէ չկայ ո՛չ թիւ եւ ո՛չ հաշիւ, որ կրնայ քննութեամբ անոր արժէքը, որովհետեւ Ան «Իր Միածին Որդին ղրկեց» Նոյնինքն աշխարհ: Նոյն աշխարհին ու անոր մարդուն տալու յաւերժական սիրոյ վրայ հիմնուած «յաւիտենական կեանք»:

Արդեօք կարելի է՞ կեանք մը արժեւորել թուային ու քանակական արժեքաւորով: Հոս է Աստուծոյ «այնպես»-ի սիրոյն չափանիշը, որ շնորհք է՝ տրուած աշխարհին ու մարդուն, Նոյն այս սիրով ապրելու համար, բայց անպայմանօրէն բաժնեկցելու համար զայն Աստուծոյ եւ հաւաքականութեան հետ: Եւ այս կերտելու համար կեանքեր՝ արժեքաւոր եւ պիտանի, իրարու հետ եւ իրարմով շաղկապուած իրական կեանքի հոլովոյթ մը, որ աշխարհի կեանքին իմաստ կու տայ բայց նաեւ կը պատրաստ յաւիտենականութեան:

Բարի Սամարացիին առակը մէկ լաւ արտայայտութիւնն է Քրիստոսի «այնպես»-ի սիրոյն բաժնեկցութեան: Եթէ դետացին եւ քահանան պահեցին սեր իրենց մէջ, բայց սամարացին տուաւ զայն վիրաւոր հրեային, Նոյնիսկ եթէ անոնք տարբեր էին իրարմէ՝ քաղաքացիական եւ ընկերային մակարդակներու վրայ:

Ու տակաւին «այնպես»-ի սերը ունի իր խորքային եւ որակական հասկացողութիւնը: Քրիստոսի շնորհած սերը երկայնամիտ է: Այս սիրոյն համբերութիւնը կ'երթայ աւելի լաւ վաղուան օրին տեսլականով եւ այդ օրը կերտելու հասկացողութեամբ: Երկայնամիտ սերը կ'անցնի համբերութեան սահմանները եւ կը հաւատայ, թէ այդ համբերութեան սահմաններէն անդին կարելի է կերտել Նորը եւ պիտանի: Բարի Սամարացիին առակը նաեւ իրական է այս իմաստով. ան տեսաւ վիրաւորը եւ խղճաց: Բայց հոն չկեցաւ, այլ «մտտեցաւ, անոր վերքերը փաթեց, վրան ձեթ եւ գինի թափեց»: Ու տակաւին կը շարունակուի երկայնամիտ սերը. «Իր գրաստին վրայ ղնելով տարաւ զանիկա պանդոկ մը եւ անոր հոգ տարաւ»: Բայց հոս ալ չվերջացաւ:

Ան «երկու դահեկան» վճարելով ըսաւ պանդոկապետին. «Հոգ տար անոր ու ինչ որ անի ծախք ընես, ետ դառնալուս ես քեզի կը վճարես» (Ղուկաս 10.33-35):

Երկայնամիտ սերն է, որ կ'ուզէ շինել զալիք օրերը իր ամբողջութեամբ եւ ի գին ամէն գողողութեան ու դժուարութեան: «Այնպես»-ի անսահման եւ երկայնամիտ սերն է այս, որ կ'ապրի այսօր բայց նաեւ վաղուան համար ու տակաւին յաւիտենականութեան:

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ անկիւնադարձային իրականութիւն է Թարգմանացը, որուն ետին կանգնող Մեսրոպ Մաշտոցի միտքին ու հոգիին մէջ տեսանելի է Քրիստոսի «այնպես»-ի սիրոյն անսահման ու երկայնամիտ իրականութիւնները: Ան Աստուծոյ Նոր կեանքի հասկացողութիւնը եթէ մէկ կողմէ խրաքուց իր կեանքին համար, բայց նաեւ ուզեց արմատացնել զայն հայ ժողովուրդին մէջ: Ան Քրիստոսի սերը առնելով վերստին բաժնեց զայն իր հաւաքականութեան հետ՝ ապրեցնելու համար զանոնք այդ օրուան համար բայց նաեւ վաղուան:

Մեսրոպի եւ իր գործակիցներու Նուիրումը հայուն յաւիտենական կեանքը կերտելու անսակարկ պայքարին համար մէկ ապրող վկայութիւնն է Նոյն այդ ոգիին: Մեսրոպի վաղուան օրուան հասնելու իր երկայնամիտ ընթացքը կրցաւ հայուն ազգային-քրիստոնեական ինքնութիւնը տանիլ հորիզոնէն անդին իմնա՝ յաւերժութիւն, ստեղծելով հայերէն տառերը եւ թարգմանելով Աստուածաշունչը մայրենի լեզուին: Մեսրոպ Մաշտոցի կեանքը եւ տեսիլքը մէկ լաւագոյն եւ իրական ապացոյցն է Քրիստոսի երկայնամիտ սիրոյն իրականութեան: Հոն, ուր Աստուծոյ սերը կ'ապրի կերտելու համար աւելի լաւ:

Բայց այսօրուայ իրականութիւններուն մէջ կայ ոչ-քաջալերական երեւոյթներ: Մեսրոպ Մաշտոցի երկայնամիտ սերն ու անոր ստեղծած արժէքը այսօր նեթակայ են խաբխարումի:

Հայրենը, եւ ի մասնաւորի արեւմտահայերէնը, վտանգուած լեզուներու շարքին դասուիլը մտահոգիչ երեւոյթ է: Նաեւ Նոյն հայուն ազգային-քրիստոնեական ու մշակութային արժեքներէն տակաւ առ տակաւ հեռանալը, այս կամ այն պատճառներով, պէտք է վեր առնել որպէս համազգային մտահոգութիւն: Պէտք է նաեւ զգուշանալ կարգ մը տեսութիւններէն, որոնք յառաջ կը քշեն այն, թէ «կարտուրը հոգին է եւ ոչ լեզուն»: Որովհետեւ լեզուն հիմքն է հայուն մշակութային արժեքներու պահպանումի: Եւ հեռու չէ, որ լեզուն կորսուելուն հետ կը կորսնցնենք նաեւ ազգային-քրիստոնեական մեր արժեքաւորը այնպէս ինչպէս երբ մանեակին թելը փրփր է օղակները մէկ-մէկ սկսին թափփփիլ: Լեզուն կորսուելուն հետ կամաց-կամաց կը սկսինք

կորսնցնել մեր միւս եական արժեքները հասնելով հոգիին:

Բարի Սամարացիին սերը եւ երկայնամտութիւնը ոտքի հանեցին մահամերձ վիրաւորը: Նոյն այդ երկայնամիտ սերն է, որ Մեսրոպ Մաշտոցին տուաւ սլացք՝ հայուն ամբողջական մշակոյթը հասցնելու մինչեւ այսօր:

Այսօր, հայ ժողովուրդին պէտք է Բարի Սամարացիին անսակարկ եւ անսահման ու նուիրական սերը. այն, որ կը շնորհէ Աստուած եւ որուն միջոցով կ'ապրինք ու կ'արժեւորենք կեանքեր մեր քրիստոնեական ու մշակութային արժեքներու համար եւ անոնց նկատմամբ: Բայց նաեւ հայ ժողովուրդը պէտք ունի նոյն այդ սիրոյ երկայնամիտ սլացքին, որ հայուն արժեքի կեանքը պիտի տանի վաղուան օրը:

Եթէ հայուն լեզուն եւ անոր մշակութային ժառանգը այսօր վիրաւոր վիճակի մատնելու վտանգին մէջ է, այս պիտի նշանակէ, թէ մենք պէտք ունինք ազգային վերականգնումի: Հոն, ուր դարձեալ վեր պիտի առնենք Մեսրոպին հոգին, բայց անպայմանօրէն նաեւ Մեսրոպին երկայնամտութիւնը:

## ՀՈՓԵՆԻՆ ՄԻՐՏԸ

«Հայերը մեծ ներդրում եւ նպաստ ունեցած են Լեհաստանի ընկերային, տնտեսական եւ մշակութային կեանքին զարգացման մէջ», այսպէս արտայայտուեցաւ լեհ օրէնագետ-տնտեսագետ մը, որուն պատահաբար հանդիպեցայ եւ որուն հետ հետաքրքրական զրոյց մը ունեցայ Վարշաւիայէն Քրաքով շոգեկառքի երեք ժամոց ճամբորդութեան մը ընթացքին:

Հետաքրքրական էր նաեւ այդ պատահական հանդիպումին պատահական օրը՝ 28 Մայիս 2011: Թեւեւ աշխատանքով կը մեկնէի Քրաքով բայց նաեւ ապրելու եւ պեղելու պատմութեան ընթացքին Լեհաստանի մէջ հայկական իրականութիւնը: Այս իմաստով իւրայատուկ ժամադրութիւն մը ունէի նոյնիսկ Յայաստանի առաջին անկախութեան տարեդարձին օրը:

Չրուցակիցս, օրէնսդրական եւ տնտեսագիտական մասնագիտութիւններուն կողքին, հետեւած էր պատմութեան դասընթացքներու եւ քաջատեղեակ էր հայոց Ցեղասպանութեան ողբերգական իրականութեան: «Հայերը շատ լաւ գործարարներ եղած են եւ միշտ աշխատած են լեհ գաղութին մէջ առանց օտար զգալու: Ապահովելով կեանքի բարւոց կենսամակարդակ՝ դարձած են ազնուական քաղաքացի եւ այդ պատճառով դիրքին եղած է նոյնացումը իրենց եւ տեղական գաղութին հետ»:

Եթէ մէկ կողմէն իր հետաքրքրութիւնն ու գիտելիքներու առատ փոխանցումը իմ հետաքրքրութիւնս կը սրեր, միւս կողմէ ծուլումին ու նոյնացումին ցաւը սիրտս կը կրծեր: Անոր ըսածը իրականութիւն է, քանի որ հայերը Լեհաստանի մէջ տարիներ շարունակ ունեցած են ազգային, մշակութային, եկեղեցական եւ ընկերային մեծ ներկայութիւն, որ այսօր նոյնացած է տեղական իրավիճակին հետ: «Եթէ «իջ» մասնիկով ազգանունները պեղես, պիտի տեսնես, թէ հոն հայկական արիւն կայ», կը շարունակէր ան նոյն հետաքրքրութեամբ:

Լեհաստանի մէջ այսօր կայ հայկական նոր իրականութիւն մը: Լեհաստանի մէջ կ'ապրին աւելի քան 45 հազար հայեր՝ մեծամասնութեամբ Հայաստանէն: Անոնք կ'աշխատին նոյն ուժգնութեամբ, ինչպէս աշխատած է պատմութեան տարբեր հոլովոյթներուն ապրած իւրաքանչիւր հայորդի: Մտքիս ու սրտիս մէջ անպայման կայ այն մտահոգութիւնը, որ արդեօք այս գաղութն ալ պիտի ենթարկուի իր մականուններուն ետին լեհական «իջ» մասնիկը կրելու իրավիճակին, ինչ որ ի յայտ պիտի գայ երբ ապագային հայորդիներ հայկական արխիւային աշխատանքի մը ձեռնարկեն: Արդեօք այս գաղութն ալ նոյնանալով տեղական ժողովուրդին հետ պիտի ծուլուի՞

լեհական իրականութեան մէջ: Պատմութիւնը նման փորձառութիւններու ականատես եղած է. այս երկրին մէջ արդեօք դարձեա՞լ պիտի կրկնուի այս երեւոյթը:

Թերեւս ճամբորդութիւնը քիչ մը երկար էր, բայց մեր խօսակցութիւնը առիթ չէր տար ծանծրանալու: «Լեհ ժողովուրդը շատ տառապած է իր պատմութեան ընթացիկն, յատկապէս երկրորդ Զամաշխարհային Պատերազմին. այս իրականութիւնը մեզ դարձուցած է աշխատատեւ ժողովուրդ մը», շարունակեց ան: «Անելի քան երեք միլիոն լեհ սպաննուած է գերմանացիներուն բռնագրաւումին ժամանակաշրջանին: Չոհերուն թիւը նոյնն է, որքան հրեական Ողջակիզումին զոհերուն թիւը», ըսաւ ան: Չարմանքի նշան մը զգուցեալ դէմքիս վրան լեհական ցեղասպանութեան մասին չլսելուս պատճառով հակառակ հրեական Ողջակիզումին մասին տեղեակ ըլլալուս. նոյն պահուն զրուցակիցիս դէմքին վրայ երեւցաւ մեղմ ժպիտ մը, որուն ետին կը տեսնէք յուզմունք եւ տխրութիւն:

«Դրեաները աւելի լաւ կրցած են իրենց հարցը աշխարհին ծանօթացնել քան մենք»: Լեհ զրուցակիցս հետզհետէ բացայայտեց տարիներէ ի վեր իր սրտին մէջ պահած այլ վերջ մը, բայց միւս կողմէ ամրապնդելով հայրենիքին հանդէպ նուիրումութիւնն ու կարօտը: Թեւէ կողքին նստած կը զրուցէի, բայց եւ այնպէս մտքով առանձնացած՝ կ'ապրէի պատմութիւնս ամբողջութեամբ ու զայն կամրջելով լեհական իրականութեան հետ. կը հասկնայի իր ցաւը, որ նաեւ իմս էր: Ցեղասպանութիւնն ու անոր իրական հաշուետուութիւնը:

Բայց ինչո՞ր պատմութեան ընթացքին արձանագրուած նոյնատեսակ դէպքեր եւ իրավիճակներ տարբեր ձեւով ու կշիռով կ'ընկալուին միջազգային ընտանիքին կողմէ:

«Զամայնավար կարգ ու սարքի օրերը դժուար էին, բայց գոհունակ էինք, որովհետեւ մեր երկրին մէջ կ'ապրէինք եւ այսօր ալ նոյն մեր երկիրը պիտի շինենք», հպարտօրէն ըսաւ ան, որ լծուած է տենդազին աշխատանքի՝ պետական անձնակազմի ու վարչամեքենայի մէջ վերցնելով տնտեսական խորհրդատուի պատասխանատու պաշտօնը:

Շոգեկառքը սկսաւ մօտենալ Բրաքովի կայարանին: Ան հաւաքեց իր պայուսակները եւ իրաժեշտ տալով ըսաւ. «Զայերը անկեղծ եւ պարկեշտ ժողովուրդ եղած են մեր երկրին մէջ»:

Ուրախ էի լեհ զրուցակիցիս ազգիս նկատմամբ վկայութեամբ, որուն մէջ կը տեսնէի անոր քննական միտքը, վերլուծումն ու համոզմունքը: Բայց տակաւին կայ յաւելեալ պատմութիւն:

Լեհաստան հպարտ է իր մէկ զաւակով՝ միջազգային երգահան Շոփենով: Անոր անունը կը տեսնես երկրին, մասնաւոր մայրաքա-

ղաք Վարշաւայի տարբեր շրջաններուն մէջ: Իսկ անոր երաժշտութիւնը լսելի է ամէն տեղ: Այդ երաժշտական յօրնումներուն մէջ զգայի է անոր սէրն ու տազնապը իր երկրին ու ժողովուրդին հանդէպ: Շոփեն մահացած է Ֆրանսա եւ ուզած է թաղուիլ Լեհաստան: Ուրական Ռուսիոյ իշխանութիւնները չարտօնելով այդ, կարելի եղած է Շոփենին միայն սիրտը բերել Վարշաւա եւ զետեղել կեղծական շրջանի Սք. Փրկիչ եկեղեցիին մէջ: Շոփենին սիրտը, որ լեհուն է իր երկրին ազգային-հայրենասիրական զգացումով ու կարօտով, իր տեղը գտած է հոն, ուր իր սիրտը միշտ տրոփած է իր ամբողջ կեանքին ընթացքին:



Լեհաստան այսօր անցած է եւրոպական Միութեան համակարգ եւ արդէն սկսած է խօսիլ տալ իր մասին միջազգային ընտանիքին մէջ: Մինչ կը շրջագայէի երկրին տարբեր շրջանները ու ամէն քայլափոխի վերելք մը կ'ապրէի, լեհ զրուցակիցիս հաստատ ու վճռական խօսքերը անընդհատ կը կրկնուէին մտքիս մէջ. «Լծուած ենք մեր երկիրը շինելու»:

Եթէ Շոփենին սիրտը թաղուած է Վարշաւայի մէջ, ուրեմն անոր տրոփիւնը չէ դադարած: Այդ տրոփիւնը այսօր կը մղէ զրուցակիցս եւ լեհ ժողովուրդը, որոնք լծուած են իրենց երկիրը շինելու:

Բայց Շոփենին սրտին նման կան նաեւ հայ ժողովուրդին քոլոր նուիրեալներուն սիրտերը, որոնք թաղուած են հայրենիքի մէջ՝ անկախացած ու պահանջատեր: Այս սիրտերուն տրոփիւնները տակաւին կանգ չեն առած եւ նոյն տրոփիւնները կը յուշեն ու կը զգաստացնեն հայը, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, որ անհրաժեշտ է լծուիլ մեր երկիրը շինելու եւ մեր պահանջատիրութիւնը շարունակելու:

Արժեք է եւ ուժ՝ Շոփենին սիրտը, բայց անպայմանօրէն նաեւ հայունը:



«Արատիփոփ բանտին մէջ կայ թրջահպատակ մը, որ կ'ըսէ, թէ հայ է»: Սոթոսն է, Լառնաքայի յոյն Աւետարանական եկեղեցիին քարոզիչը, որուն կարեւորագոյն առաքելութիւններն են բանտարկեալներուն տրուած կանոնաւոր այցելութիւնները: «Պիտի փափաքէի, որ իրեն այցելես»: Զեռածայնով տեղի ունեցած այս զրոյցին ընթացքին ան մէկ կողմէ տեղեակ պահեց զիս, բայց միւս կողմէ ազգային ինքնութիւնս իբրէն առաջնահերթութիւն նկատի ունենալու փորձով մը, քաջալերեց այդ անձին հետ հանդիպելու:

Սոթոսի նախաձեռնութեամբ եւ յատուկ ժամադրութեամբ հասանք Լառնաքայի Արատիփոփ շրջանի բանտը: Պետք է խոստովանուիմ, թէ իմ ալ առաջին փորձառութիւնս էր բանտ «մտնելու», թէկուզ այցելութեան համար: Կար նաեւ բանտարկեալին հետ հանդիպիլ՝ իր կալանաւորուած վիճակին մէջ, ազատութենէ զուրկ, բայց նաեւ ծանրաբեռնուած իր յանցանքներով, որոնք իր սրտին, հոգիին եւ ամբողջ էութեան վրայ դրուած են:

«Տասնհինգ օրէ ի վեր բանտն է եւ բանտին պատասխանատուները ընդհանրապէս դրական կը խօսին իր վարքին ու կեցուածքին մասին», ըսաւ Սոթոս, մինչ յատուկ սենեակի մը մէջ կը սպասէիք թրջահպատակ հայ ազգակիցիս:

Կիպրացի ոստիկանին առաջնորդութեամբ նիհար եւ բարձրահասակ երիտասարդը մտաւ սենեակ եւ նստաւ մեր դիմացը: Կը դիտէի զինք, մագերը երկար, նաեւ մօրուքը, խումար աչքերով, զուլնը կախ: Մէկ կողմէ կար ամօթխածութիւն, միւս կողմէ կար այն իրողութիւնը, որ մեք անծանօթներ էինք իրեն համար եւ ինք պիտի փորձէր պատմել իր պատմութիւնը: Իսկ պատմութիւնը ներկայացնելը ինքնին առեղծուած էր, որովհետեւ ան միայն թրջերէն կը խօսէր: Ան իր պատմութեան ընդմէջէն պիտի բացայայտէր իր ինքնութիւնը եւ այդ ինքնութեան համար մղած պայքարը, որուն համար կարեւոր էր լսողին հաղորդականութիւնն ու խորին հասկացողութիւնը:

Մեծ ծնողներու քիչ մը թրջերէն սորված էի. բառերը քով-քովի դնելով փորձեցի կազմել նախադասութիւն մը, որուն ստեղծած հաղորդականութիւնը տեսց կես ժամ՝ ապրեցնելով միանգամայն հայուն պայքարը:

«Անուն Սարկոն է,- ըսաւ ան ու շարունակեց.- իօրս անունը Եագուպ էր, հայ էր: Մայրս ալեւի համայնքն է: Զայրս ինձի ըսած էր, թէ մենք հայ ենք»: Զետզետը ինքնավստահութիւնը գտնելով՝ սկսաւ խօսիլ Սարկոն:

«Ես ալ հայ եմ», ըսի անոր:

Սարկոնի դէմքին վրայ փորքիկ ժպիտ մը ուրուագծուեցաւ եւ հոն երևցաւ ինքնավստահութիւն: Կարծեք ամէկուտ արտայայտութիւնը քիչ մը վերացաւ եւ իր նմանը գտած ըլլալու ուրախութեամբ շարունակեց իր պատմութիւնը:

Թրջերէնով ըսաւ. «Ուզեցի ազատ ապրիլ, կ'ուզէի իմ ինքնութիւնս եւ հաւատքս գիտնալ առանց կաշկանդումի. Մերսինէն նաւով եկանք Կիպրոսի գրաւուած կողմը: Ինձի խոստացած էին այնտեղէն փոխադրել եւրոպական երկիր մը»: Խոստացողները: Զաւանթար վաշխառու միջնորդներ, որոնք բաւական կոկիկ գումար մը վերցնելով Սարկոնէն եւ խոստումներ տալով զինք «Աւետեաց երկիր» փոխադրելու, լքած էին զայն դարձեալ թրջական մթնոլորտի մէջ:

«Օ՛ի գիտեր ի՞նչ ընէի: Ուզեցի բախտս փորձել եւ անցայ Կիպրոս»: Եւ Սարկոնի բախտը զինք հասցուցած էր Արատիփոփ բանտը: Ան դուրս եկած էր Թուրքիայէն, որովհետեւ ուզած էր իր ինքնութիւնն ու կենսքը ապրիլ ազատ, բայց այդ ազատութեան փնտռուքը դարձեալ կալանած զինք, այս անգամ այլ վայրի մը մէջ եւ ուրիշ տեսակ կալանքով:

Ճարունակեցինք մեր խօսակցութիւնը: Կ'ուզէր գիտնալ քրիստոնեական հաւատքին մասին, բայց նաեւ հայ ըլլալու իրականութեան մասին: Խօսակցութեան ընթացքին կը նայէի Սարկոնի աչքերուն, ուր կար ինքնութեան կարօտը: Գաղտնի՞ պահուած, կորսուած, թէ ճգմաւած կարօտ էր այդ իր ինքնութեան նկատմամբ: Եւ դարձեալ այդ աչքերուն մէջ կար ճշշուածութենէն դուրս գալու եւ ազատ ըլլալու ցերմութիւնը զգալուն տեսչը:

Մեզի սահմանուած հանդիպման ժամկետը ւարտած էր: Բանտն ալ ուներ իր պայմաններն ու կանոնները: Ոտքի էլայ եւ դարձեալ Սարկոնի աչքերուն նայելով՝ ուզեցի արտայայտել իմ կարեկցութիւնս եւ սէրս: Չհամարձակեցայ իրեն խոստանալ որեւէ տեսակի իրաւական ապահովութիւն, որովհետեւ իր պարագան կնճռոտ էր:

Սարկոնի դէմքին վրայ կար մեղմ ժպիտ մը եւ աչքերը գոհունակ էին: Երեւի ուրախ էր հանդիպումով, բայց անպայմանօրէն հաղորդակցութեամբ: Բաժնուելէ առաջ մէկ բան խնդրեց. «Կրնա՞ս թրջերէն լեզուով Աստուածաշունչ մը հասցնել ինձի»:

Սարկոն ուրիշ լեզու չէր գիտեր, բայց կը փորձէր վերագտնել իր քրիստոնեական հաւատքն ու հայկական ինքնութիւնը: Կ'ուզէր այս երկուքը ապրիլ առանց կաշկանդումի: Կը տեսնէր ինքնութեան արժեքը եւ կ'ուզէր ազատ ըլլալ ըսելու եւ ապրելու զայն: Այդ օր Սարկոն ազատ էր Արատիփոփ մէջ յայտարարելու իր ինքնութիւնը եւ ամրապնդելու քրիստոնեական հաւատքը, նոյնիսկ երբ բանտին մէջ էր:

Չկրցայ օգնել Սարկոսին, որովհետեւ պետական մեծ թիւով օրէնքներ խախտած էր, սակայն կրցայ թրքերէն լեզուով Աստուածաշունչը հասցնել իրեն:

Սարկոսի հաւանաբար վերադարձաւ տուն: Այդ հանդիպումն ետք անոր մասին ոչինչ գիտցայ, բայց կ'ենթադրեմ, որ վերադարձաւ աւելի ազատ ու հարստացած՝ բացայայտելու եւ ապրելու իր ազգային ու քրիստոնէական ինքնութիւնը: Եթէ Սարկոս այդ ազատութիւնը ապրեցաւ բանտին մէջ, ապա նաեւ նոյնը քրաւ երբ վերադարձաւ տուն:

Այսօր մեծ է թիւը սարկոսներուն, որոնք ուղքի էլած են վերագտնելու իրենց ազգային ու քրիստոնէական ինքնութիւնը: Անոնք կը փնտռեն եւ կ'ուզեն ապրիլ ազատ ու հարազատ այն հնգամանքներով, որոնք կազմած են ու տակաւին կը կազմեն իրենց եւութիւնը: Այդ ազատութիւնը իրենց իրաւունքն է, որ տարիներու ընթացքին խլուած է իրենցմէ, պահուած է կամ ճգմուած, իսկ այսօր անոնք կ'ուզեն դուրս գալ այդ բոլորէն:

Բայց եւ այնպէս սարկոսներու վերադարձի ուղին դժուար է. երկար գործընթաց մըն է, որուն համար անհրաժեշտ է պատրաստութիւն, պատրաստակամութիւն եւ հաւաքական ծրագրաւորում: Նոր իրավիճակ մըն է մեր համահայկական իրականութեան մէջ, ուր դուրս կու գան մեծ զանգուածներ, որոնք կը վերադառնան ինքնութեան եւ արմատներուն:

Բայց այս վերադարձի ճամբուն վրայ պիտի ըլլան խոչընդոտներ, զգայնութիւններ եւ զգուշարարութիւններ: Դո՛ւս է, որ այս նոր իրավիճակը պէտք է ստանայ համադրողական աշխատանքի եւ ծրագրաւորումի բնոյթ՝ ներառելով մեր հայկական երեք եկեղեցիներն ու համայնքները: Եթէ մէկ կողմէ զգուշարարումով կը մօտենանք այս նոր իրականութեան, բայց եւ այնպէս զայն պէտք է դիտել քրիստոնէական ընդհանրական գիտակցութեան մտահոգութենէն մեկնելով: Այս վերադարձը մեծ մարտահրաւեր մըն է, որ կը պահանջէ համադրումը մեր բոլոր կարողականութեան եւ կառոյցներու ներուժին:

Բայց մինչ այդ Սարկոսը եւ անոր նմանները պիտի շարունակեն վերադառնալ ինքնութեան եւ ականջ տալ անոր կանչին: Դոն անոնք պիտի ուզեն ազատ զգալ ապրելու եւ վերագտնելու իրենց եւութիւնը:

Սարկոսին եւ անոր նմաններուն վերադարձը՝ իրենց ինքնութեան եւ եւութեան, կը նշանակէ արժեքին վերատիրանալ: Եւ այս արժեքը կարելի է խլել ո՛րեւ մէկէն:

## ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐԱԿ ՅԱՅՏԱՐԱՐԸ

«Այս յուշարձանը վեր է խոյանում այն վայրում, ուր 1915 թուականի ցեղասպանութեան կոտորածներից մագապուրծ հազարաւոր հայեր առաջին անգամ ոտք դրեցին Կիպրոս: Այն արտայայտում է հայ ազգի երախտագիտութիւնը Կիպրոսի ժողովրդին՝ իր բարեարտութեան եւ օգնութեան համար: Այս յուշարձանը յաւերացնում է Մեծ Եղեռնի անթիւ նահատակների յիշատակը»:

Կիպրոսի Լառնաքա քաղաքի ծովեզերեայ պողոտային՝ այսպէս ըսած մարինայի մուտքին Մեծ Եղեռնին նուիրուած յուշակոթողը միանկը չէ աշխարհի տարածքին, ներառեալ մայր հայրենիք: Աշխարհի տարբեր երկիրներու մէջ յուշակոթողներ կը յիշատակեն Մեծ Եղեռնի նահատակները, բայց նաեւ այն երախտագիտութիւնը, որ հայ ժողովուրդը կը յայտնէ տեղացի ժողովուրդին իր ինամքին եւ բաժնեկցութեան համար: Այս պարագային Կիպրոսի բարեխնամ ժողովուրդին ու կառավարութեան:

Կիպրոսի յուշարձանը մտայղացումն է կիպրահայ նախկին պետական ներկայացուցիչ՝ հանգուցեալ Պետրոս Գալայճեանի, եւ իրագործուած է Կիպրոսի եւ Զալաստանի կառավարութիւններուն կողմէ: Յատկանշական է նաեւ յուշարձանին վայրը. անիկա կանգնած է հոն, ուր Եղեռնէն ճողոպրած առաջին խմբակը հասած է:

Եթէ Կիպրոսի մէջ հայեր ապրած էին երկար տարիներէ, բայց եւ այնպէս կիպրահայ իրականութեան




գլխաւոր զարգացումը սկսած է համիտեան ջարդերէն ու Մեծ Եղեռնի վերապրողներու այս երկրին մէջ հաստատուելով:

Այս է նաեւ պարագան սփիւռքահայ զաղութներու կազմաւորման: Եթէ հայոց Յեղասպանութենէն առաջ կարգ մը երկիրներու մէջ կար հայկական որոշ ներկայութիւն, բայց եւ այնպէս սփիւռքի կազմաւորումը գլխաւորաբար կը կայանայ Եղեռնի իրականութեան որպէս հետեանք եւ արդիւնք: Լառնաքայի յուշարձանը եւ մնացեալ յուշարձանները աշխարհով մէկ տարածուած գլխաւոր սկզբնաբարերն են սփիւռքի գոյութեան եւ ապա անոր կազմաւորման:

Բայց ասիկա Եղեռնի զոհերու յիշատակին նուիրուած առաջին յուշարձանը չէ, որուն դիմաց կը կանգնեմ: Թեւ կը դիտեմ ճարտարապետական իմաստով տարբերութիւններ ունեցող կոթողները, բայց անպայմանօրէն խորքը կը միացնէ բոլորը: Յեղասպանութիւնն է: Բայց այդ խորքին հետ առնչուած իւրաքանչիւր պիտակ կը տարբերի միւսէն իւրաքանչիւր երկրի աշխարհագրական վայրէն, կենցաղէն ու տիրող մշակութային եւ ընկերային կարգավիճակներէն մեկնելով: Յեղասպանութիւնը, իր ամբողջական հասկցողութեամբ, ներառելով անոր պարտադրած հայապահպանումի գործօնը եւ պահանջատիրութիւնը, կը դառնայ հասարակ յայտարարը աշխարհատարած հայուն՝ իր տարբեր դիմագիծներուն մէջ:

Այսպէս եղաւ հայուն, ի մասնաւորի սփիւռքահայուն իրականութիւնը: Իւրաքանչիւր սփիւռքահայ երկրի մը մէջ ծնելով ու հասակ առնելով, տակաւին ուսանելով եւ առնչուելով տեղական միջավայրին ու պայմաններուն հետ, ստացաւ իր պիտակը: Իմ պարագայիս՝ լիբանանեանը, որ մէջս կերտեց լիբանանահայը: Լիբանանեանն անկարագիրն եւ դրուածքը ինձի եւ իւրաքանչիւր լիբանանահայու տուաւ իր դրոշմը, որ տարբեր է սփիւռքեան այլ երկիրներու դրուածքէն: Տարբերութիւնը կը կայանայ ո՛չ լաւի կամ վատի եւ ո՛չ ալ առաւելութեան կամ գերակայութեան մէջ, այլ պարզապէս տարբերութեան մը: Տարբերութիւն՝ անկարագիրի ու կենցաղի, ապրելակերպի ու կենցիկի եւ փորձառութիւններու: Լիբանանեան կենցաղը, մշակութային գործօնը եւ երկրամէայ պատերազմական փորձը իրենց դրոշմը ունին իւրաքանչիւր լիբանանահայու վրայ: Իւրաքանչիւր ճամբորդական փորձառութեան անպայմանօրէն նոր տարբերութիւն կը գտնելու փորձը կ'ապրիմ, երբ կը հանդիպիմ հայուն եւ հայկական իրականութեան աշխարհի տարբեր վայրերու մէջ:

Եթէ իւրաքանչիւր հայկական գաղութի մէջ կը հանդիպիմ հայուն՝ իր տարբերութեամբ ինձմէ եւ ուրիշէն, բայց նաեւ կը հանդիպիմ իր տազնապի: Եթէ տազնապը ունի իր հասարակ յայտարարը՝ աշխարհով մէկ սփիւռքահայուն իրավիճակին եւ հայապահպանումի ի



նոյնի, բայց դարձեալ տազնապին պիտակը ու անոր մօտեցումի նպատակը պիտի տարբերին մէկ երկրէն միւսը: Այս իրականութիւնը կը պարտադրէ իւրաքանչիւր գաղութի իրավիճակին ու տազնապին նայելու իր խորքին տունելներէն մեկնելով՝ առանց ընդհանրացումներու եւ առանց շրջանցելու տարբերութիւնները կամ փոխադրելու մի կը միւսին մէջ:

Բայց սփիւռքահայ իրականութիւնները տակաւին փոխուող իրավիճակներու մէջ են:

Եթէ մէկ կողմէ կայ սփիւռքահայուն մէկ գաղութն ղեպի միւսը տեղափոխութիւնը՝ յատկապէս միջին արեւելքէն ղեպի արեւմուտք, բայց նաեւ կայ մեծ արտագաղթը մայր հայրենիքէն ղեպի սփիւռք: Առաջինին պարագային կայ սփիւռքահայ իրավիճակներու տարբերութիւնը, որ սփիւռքեան մէկ գաղութի անդամը կ'ունենայ հասարակման դժուարութիւն իր գաղթած երկրի տեղացի հայորդիին հետ: Դժբախտաբար երկրորդին պարագան կը գերազանցէ առաջինը՝ ստեղծելով արեւելահայուն պիտակը, որ կը տարբերի արեւմտահայէն: Այս վերջինը ակներեւ իրականութիւն է շատ մը սփիւռքահայ գաղութներու պարագային, որ Զայաստանէն գաղթող հայեր կերտած են կէթօ մը առանց կարենալ կամրջելու տեղական հայկական իրականութեան հետ: Զակառակն ալ նոյնքան իրական է:

Կը շարունակենք երթը: Սփիւռքը եւ սփիւռքահայ իրականութիւնները կը ստանան նոր տարբերակ ու կարգավիճակ: Այս նոր տարբերակը կը կերպարանափոխէ հայուն մշակութային դիմագիծը: Ասիկա առկայ է եւրոպական երկիրներէ սկսեալ հասնելով մինչեւ հարա-

լային Ափրիկե և տակաւին ծայրագոյն արեւելք: Յայն տարածուած է այսօր աշխարհով մէկ՝ շինելով մէկ կողմէ տուն և աշխատանք բայց նաեւ ազգային-եկեղեցական կեանք:

Սփիւռքի հայկական խճանկարը կը բարդանայ: Սփիւռքը հասկնալու հիւրոցները և տուեալները նոյնպէս կը դժուարանան: Նոյնիսկ այս համաշխարհայնացած աշխարհին մէջ կարելի չէ սփիւռքը դիտել որպէս մէկ, միագոյն, միեւնոյն և նոյնանման իրականութիւն:

Ասկէ յառաջ պիտի գայ այն իրականութիւնը, թէ սփիւռքահայ իւրաքանչիւր իրականութիւն իր ինքնտրոյն տեղը ունի իր դրուածքին մէջ և իր ազգային-քրիստոնեական մարտահրաւերները դիմակալելու մէջ: Յամասփիւռքեան ու համազգային շահերէն մեկնելով իւրաքանչիւր գաղութ, անկախ իր թիւն և կարողականութենէն, հայկական իրականութիւն մըն է, որուն արժէ հոգալ և նկատի առնել: Կարելի չէ այս օրերուն գաղութները արժեւորել միայն իրենց թուական, պատմական, մարդուծի և տնտեսական կարողականութիւններէն մեկնելով: Անպայմանօրէն այս տուեալները իրենց տեղը ունին համասփիւռքեան տեսադաշտի մէջ տուեալ գաղութի մը կարելորութեան իմաստով: Բայց և այնպէս ներկայ օրերու քաղաքա-տնտեսական և ընկերային դրուածքները կը ստիպեն մեզ վերանայելու սփիւռք հասկացողութեան՝ իր ընդհանրական ու համապարփակ իրողականութեան մէջ և իւրաքանչիւրը ինք իր աշխարհագրական վայրին ու դիրքին մէջ ունեցած կարելորութեամբ: Պետք չէ մտահան ընել այն իրողութիւնը, որ արագ փոխուող աշխարհին մէջ կը փոխուին նաեւ պայմանները, տուեալները և կարողականութիւնները:

Իւրաքանչիւր գաղութ իր դրսեւորած կարելորութեամբ, նաեւ իր տագնապներու մօտեցումներու տարբերութիւններով ընկալելով, տագնապը կրնայ ըլլալ համասփիւռքեան և նոյնանման իր ընդունումով: Կարելի է եզրակացնել, որ կարելի չէ փորձել փոփոխութեան յառաջացման դիմել որոշ գաղութի մը ազգային-մշակութային գործունեութեան մէջ, մանաւանդ եթէ նման քայլ մը չի համընկնիր այդ գաղութի տուեալներուն: Մեր համասփիւռքեան աշխատանքներու վերադասաւորման և համադրողական գործօնները կարելի չէ գետեղել մէկ մեծ ընդհանրական պարունակի մը մէջ, որ կիրարկելի դարձնէ բոլորին նոյն արժէքափերով, որովհետեւ իւրաքանչիւրը ունի իր ուրոյնութիւնը թէ՛ իրականութիւններու և թէ՛ տագնապներու իմաստով:

Սփիւռքի մեր համատարած տեսադաշտին մէջ ազգային գործն ու անոր պահպանումը անհրաժեշտ գրաւական են հայապահպանումի մեր համազգային առաքելութեան մէջ: Ներկայ օրերու և ներկայ ժամանակներու սփիւռքի հասկացողութիւնը այս տուեալներով կը

ընտրուի: Ամենէն պզտիկ սփիւռքի գումարտակը անհրաժեշտութիւն է և կարիք ներկայ օրերու հայապահպանումի մեծ պատերազմին ի խնդիր:

Կը շարունակեմ դիտել Լառնաքայի մէջ կանգնած Եղեռնի յուշակոթողը: Իւրաքանչիւր ճամբորդութեան ընթացքին, ո՛ր որ հանդիպիմ Եղեռնի յուշարձանի մը կամ հայկական կոթողի մը, անպայմանօրէն կը մտածեմ: Յայկական տագնապը և սփիւռքի արտաճանալումը բարդ գործընթաց է մերօրեայ կեանքին մէջ: Իւրաքանչիւրը ինք իր վայրին մէջ ունի իր տուեալները և այդ տուեալները կը տարբերին մէկը միւսէն: Իւրաքանչիւրը ինք իր դրուածքին մէջ տարբեր է, բայց արժէք մըն է անկասկած: Բայց այդ բոլոր տարբեր տուեալներուն և արժէքներուն մէջ կայ հասարակ յայտարարք, որ բոլորս կը դնէ մեծ իրականութեան մը դէմ յանդիման: Տեղասպանութիւնն է հրամայականը և անկէ յառաջ եկած հայապահպանումի և պահանջատիրութեան աւանդը: Բոլոր տարբերութիւնները կը հոսին անկէ, բայց նաեւ կ'երթան դէպի հոն:

Տեղասպանութիւնը և անոր աւանդը կը դառնայ մեծ հասարակ յայտարարք:

Բայց ներկան եւս ունի իր տուեալները, բայց նաեւ հրամայականը: Պիտի կարենա՞նք ստեղծել ազգային միտքը: Այն միտքը, որ պիտի կարենայ տեսնել հայուն տագնապը իր աշխարհատարած տուեալներուն ու տարբերութիւններուն ընդմէջէն: Նաեւ զճել հասարակ յայտարարք, որ հայուն ազգապահպանումի և պահանջատիրութեան աւանդի շարունակականութիւնը երաշխաւորէ: Այն հասարակ յայտարարք, որ համազգային տարողութեամբ բոլոր տարբերութիւններուն մէջէն խոյանալով կրնայ վերածուիլ միասնական, մեծ և իրական արժէքափի:

Եղեռնի յուշարձանը: Տարբերութիւններուն հասարակ յայտարարք: Յոն է, որ կ'ապահովուի հայուն շարունակականութեան երթը:

# ՅԵՂԱՅԻՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Ուիլիլմ Էտուարտ Տի Պուա (1868-1963) կը հանդիսանայ Միացեալ Նահանգներու մէջ ցեղային խտրականութեան եւ արդարութեան համար պայքարող գործիչ: Ան եղած է հիմնադիրը մարդկային իրաւանց շատ մը յանձնախումբերու, իսկ իր մեծ մասնակցութիւնը եղած է իր մղած պայքարը սեւամորթներու արդարութեան համար: Ան ընկերաբան մըն էր եւ առաջին սեւամորթ ամերիկացին, որ իր տոքթօրական վկայականը ստացաւ Զարվըրտ համալսարանէն: Ան բուռն կերպով հաւատացած էր, թէ ծուլումը մարդկային քաղաքակրթութեան համար օգտակար չէ եւ թէ ցեղային այլազանութիւնը անհրաժեշտ է մշակոյթներու զարգացման համար:



Տի Պուա հաւատաց, որ ցեղը կը կազմուի մարդկային մեծ ընտանիքներէ, ընդհանրապէս նոյն լեզուով եւ արիւնակից՝ անպայմանօրէն հասարակաց պատմութեամբ, մշակոյթով եւ զգայնութիւններով: Անոնք կամովին կամ ոչ կ'ապրին միասին, որպէսզի ամբողջացնեն զերագոյն իտելներ կեանքի յառաջդիմութեան համար: Այս իմաստով ան կը հաւատայ, որ աշխարհի պատմութիւնը ոչ թէ մարդկանց պատմութիւնն է, այլ խումբերու, ոչ թէ զգգերու՝ այլ ցեղերու, եւ ով կ'անտեսէ այս իրականութիւնը կ'անտեսէ հիմնական խորհուրդը ամբողջ իրականութեան: Այս իմաստով ան կ'ընդարձակէ իր տեսութիւնները եւ կը սկսի թուել աշխարհի վրայ ապրող տարբեր ցեղերը, ինչպէս սլաւները, անգլիացիները, ռոմանները, սեւամորթները (Ամերիկայի եւ Ափրիկէի), սեմական ժողովուրդները արեւմտեան Ասիոյ եւ հիւսիսային Ափրիկէ ու տակաւին մոնկոլները՝ արեւելեան Ասիա: Ու այս շարքերուն վրայ ան կ'աւելցնէ այն բոլոր փոքր ցեղախումբերը, որոնք կ'ապրին տարբեր շրջաններու մէջ:

Տի Պուա կը մտնէ նաեւ յաւելեալ զարգացումներու մէջ:

Իւրաքանչիւր ցեղի մէջ կը սկսի յիշատակել տարբեր ազգութիւններ եւ հարց կու տայ. «Ի՞նչ է գլխաւոր տարբերութիւններ այս բոլոր ազգութիւններուն»: Ան կը հաւատայ, որ կան ֆիզիքական տարբերութիւններ այս բոլոր ազգութիւններուն միջեւ, բայց նաեւ տարբերութիւններ, որոնք անելի խորք ունին: Եւ թէ խորքային այդ տարբերութիւններուն մէջ կան հոգեւոր արժեքափեր, կան նաեւ ինքնութիւն, պատմութիւն, կրօն, սովորութիւն, մշակոյթ եւ տակաւին գաղափարախօսութիւն, որոնց համար իւրաքանչիւրը կը մղէ իր կեանքին պայքարը: Այս պայքարին մէջ, իւրաքանչիւրը ինքն իր մէջ, Տի Պուա կը տեսնէ մարդկային կեանքի առաւել զարգացում եւ ընդլայնում, ուր այլազանութիւնը եւ ինքնութեան կերտումը մեծապէս կը նպաստեն համաշխարհային քաղաքակրթութեան զարգացման:

«Այս բոլոր վերլուծումներէն ետք, Տի Պուա կու տայ իր ցեղախումբին՝ սեւամորթներուն ինքնութեան եւ զգացապահպանման մէկ մեծ հրամայականը. «Մենք պէտք ունինք ցեղային-ազգային կազմակերպութիւններու: Սեւամորթներու համար համալսարան, թերթ, կառոյց, գրական եւ արուեստի հիմնարկ, որոնք պիտի արտադրեն Միտքը եւ պիտի ուզէի կոչել սեւամորթներու «Ակադեմիան»: Այս բոլորը պէտք են պատմութեան դրական յառաջխաղացքին համար, բայց անպայմանօրէն նաեւ ժխտական ու յետադարձ իրավիճակներու մէջ ամուր պաշտպանութեան համար»:

Այս բոլորին մէջէն, Տի Պուայի յառաջ քշած «Ակադեմական միտքի» անհրաժեշտութենէն մեկնելով, պիտի ուզէինք տեսնել հայուն միտքը: Եթէ Տի Պուա հաւատաց մարդկային կեանքի յառաջխաղացքին մէջ այլազանութեան եւ ինքնութեան պահպանման անհրաժեշտութեան, որքա՞ն պէտք է հաւատալ հայուն մտքին պահպանման անհրաժեշտութեան: Զամաշխարհային քաղաքակրթութեան մէջ իր բաժինը բերած հայ ժողովուրդի իրականութիւնը չի կրնար երկարուիլ այլասերումի եւ ծուլումի ամէն տեսակի բախտորոշ ճնշումներուն: Զայուն միտքը նաեւ անհրաժեշտութիւն է համաշխարհային քաղաքակրթութեան կազմաւորումին համար ու անոր մշակոյթը, կենցաղը եւ քրիստոնեական ինքնութեան պահպանումը նոյնքան կարեւոր գրաւականներ են: Ահա թէ ինչու հայ եկեղեցին, համալսարանը, դպրոցը, ակումբը, մամուլը, մշակոյթը արժանի են ամէն տեսակի զոհողութեամբ պահպանուելու, որպէսզի պահպանուի նաեւ հայուն մտքին արտադրող «Ակադեմիա»ն:

Ներկայ օրերու հայկական բեմահարթակը, հայրենի իրականութեան թէ սփիւռքի, ունի որոշ մտահոգութիւններ, որոնք կու գան տկարացնելու հայկական «Ակադեմիա»ին ուժեղ կռուանը: Եթէ հայրենի պէտականութեան իզօրացումը եւ հայրենի հողէն հայուն հա-

յաթափումը կատեցնելու աշխատանքները կարելու են, ապա նույն-  
քան կարելու են սփիւռքեան մեր կառույցներու պահպանումը: «Յայ-  
կական Ակադեմիա»ի հիմներն են, որոնք պետք ունին պահպանումի  
եւ հզորացման:

Բայց կայ նաեւ այլ կարելու երեւոյթ, որ կու գայ աւելիով մ-  
րապնդելու հայը այլասերումի վտանգին դիմաց: Եւ այս Տեղասպա-  
նութիւնն է եւ անոր հետ առնչուած պահանջատիրութիւնը:

Ազգ մը, որ ենթարկուած է Տեղասպանութեան, ազգ մը, որուն  
պատմութիւնը թաթխուած է իր զաւակներուն արիւնով, չի կրնար  
սակարկութեան դնել իր ինքնութիւնը եւ ինքնութեան ստեղծած  
միտքը: Տեղասպանութեան դաժան ու դժուար փորձը աւելիով գրա-  
ւական է զօրացնելու հայուն միտքը, եւ որուն միջոցով ան «պարտի  
բաժնեկցիլ համաշխարհային քաղաքակրթութիւնը, նոյնիսկ այս  
փորձառութեան ահաւորութիւնը», եւ այս եթէ մէկ կողմէ պահանջա-  
տիրութեան իմաստով, բայց նաեւ համամարդկային պատմութիւն  
կերտելու անհրաժեշտութենէ մղուած, նոյնիսկ այս փորձի տուեալ-  
ներով, որովհետեւ կ'արժէ քաղաքակրթութիւն մը հիմնել ոչ թէ  
սպանդի, այլ համակեցութեան եւ զոյակցութեան հրամայականով:

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան իր ելոյթներէն մե-  
կուն ընթացքին, արաբական աշխարհի տիրող ընդհանուր կացու-  
թեան մասին արտայայտուելով ըսած է. «Ապագան կարելի չէ կեր-  
տել անմեղներու արիւնով, ապա թէ ոչ պատմութիւնը պիտի յիշա-  
տակէ այն բոլոր առաջնորդները, որոնք արիւնով սնած են»:

Բայց արդեօք անդրադարձա՞ւ պրն. վարչապետը, թէ ի՞նք կը  
պատկանի շարքին այն առաջնորդներուն, որոնք արիւնով սնած են:  
Որովհետեւ հայը թափած է իր արիւնը 1915-ին եւ նոյն այդ արեան  
մէջէն կերտած է վերապրումի իր պատմութիւնը: Այս արիւնը սա-  
կայն ունի իր պահանջատիրութիւնը: Յոն, ուր հայուն պատմութիւնը  
կը միացնէ զինք, որպէսզի պահէ, բայց նաեւ կերտէ իր «միտքը», եւ  
այս միտքն է, որ մէկ կողմէ պիտի նպաստէ մարդկային պատմու-  
թեան, իսկ միւս կողմէ պիտի յիշեցնէ, թէ անմեղներու արիւնով շին-  
ուած պատմութիւն մը կայ, որ պետք է հատուցուի: Այս հատուցումը  
չի կրնար ենթարկուիլ այլասերումի, այլ պետք է պահէ իր ինքնու-  
թիւնը:

Յայկական Ակադեմիա: Այլազանութեան մէջէն ինքնութեան  
պահպանում եւ ինքնութեան պահպանումով է, որ կը կերտենք  
պատմութիւն:

Պատմութիւն մը համամարդկային, բայց նաեւ ազգային:

## ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ՄԻԶՈ՛Յ, ԹԷ ՆՊԱՏԱԿ

*«Իսկոյն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու  
բազմութիւն մը եղաւ, որոնք Աստուած կ'օրհնէին ու  
կ'ընէին երկնքի բարձրութեան մէջ Աստուծոյ փառք,  
երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն»:*  
(Մապրէոս 10.39)

Ներկայ ժամանակաշրջանի ընկերա-կրօնական կեանքերու զար-  
գացումներուն մէջ կ'իյնայ նաեւ Քրիստոսի ծնունդի տօնակատա-  
րութեան կերպարանափոխումը: Ծնունդն ու անոր հասկացողու-  
թիւնը պիտի տեսնել Քրիստոսի մարդեղութեան ու նոր կեանքի  
պատգամին մէջ, բայց այսօր ան դարձած է շուկայական հաշուառ-  
կումներու միջոց: «Ուրախ արձակուրդ» ու տակաւին շատ մը այլ  
նշանաբաններ եւ արտայայտութիւններ, սպառողական տնտեսու-  
թեան զարկ տալու ցանկութիւններով, կու գան ողողելու Ծնունդը եւ  
անոր արժէքները:

Զգուշաւոր եւ փափկանկատ դիրքորոշումներն ու քաղաքակա-  
նութիւնը սակարկութեան կը դնեն նաեւ Արժէքը, այս պարագային  
Սր. Ծննդեան պատգամը, որուն յիշատակումը կը սահմանուի եւ կը  
սահմանափակուի արծակուրդի հասկացողութեամբ: Բայց այս ար-  
ձակուրդը եթէ կը գործածուի որպէս միջոց, անպայմանօրէն նպա-  
տակ կը դառնայ շուկայական յարաբերութիւններուն մէջ եւ այս հո-  
գեքանութեամբ քիչ մը աւելի սպառելով կ'աւելնայ շահն ու հատույթը:

Բայց եւ այնպէս գեղեցիկ է տօնածառը: Գեղեցիկ են նաեւ այն բո-  
լոր գարդոնը եւ գարդարանքները, զորս մեր տուններէն ներս մինչեւ  
պողոտաներն ու ցուցափեղկերը կը զարդարեն: Անպայմանօրէն  
շատ բան կ'աւելցնեն ընդհանուր մթնոլորտին եւ արժէքին, եթէ  
անոնք ըլլան միջոց՝ ամբողջացնելու համար Ծնունդի նպատակը  
բայց նաեւ պատգամը:

Նպատակը: Քրիստոս ծնաւ ու մարդացաւ:

Պատգամը: Քրիստոս սիրեց մարդը. «Կանսզի Աստուած այնպէս  
սիրեց աշխարհը մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամեն ով  
որ անոր հաւատարմ չկորսուի, հապա յաւիտեանական կեանք ունենայ»  
(Յովհաննու 3.16): Ան իր սերը դարձուց գործնական եւ իրական  
կեանքի. աշխարհ եկաւ, մարդեղացաւ, որպէսզի «բնաւ մեզ չթողու  
եւ բնաւ մեզ չձգէ» (Եփրայեցիս 13.5):

Քրիստոս փրկեց մարդը: Քրիստոսի սերը ունէր մէկ մեծ եւ խոշոր նպատակ՝ մարդուն փրկութիւնը. «Վասնզի այսօր փրկիչ մը ծնաւ Ղաւիթին քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է» (Ղուկաս 2.11): Քրիստոս փրկեց մարդը եւ արժանի դարձուց գայն շնորհքին, որ արժեքի կեանքն է այս աշխարհին վրայ բայց նաեւ անդենականին մէջ անլի կեանք:

Քրիստոս խաղաղութիւն տուաւ մարդուն. «Արդ մենք հաւատքով արդարացած ըլլալով խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսին ձեռքով» (Յոմմայեցիս 5.1): Քրիստոս իր ծնունդով եւ մարդեղութեամբ մարդուն շնորհեց խաղաղութիւն: Այս խաղաղութիւնը մարդուն տուաւ մէկ մեծ առաքելութիւն. «Որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը» (Բ. Կորնթացիս 5.18): Այս խաղաղութիւնը քրիստոնեան կը վերածէ զօրաւոր անհատականութեան տէր անձի: Չօրաւոր Նոյնիսկ երբ աշխարհ դարձած է կնճռու եւ խնդրայարոյց: Այս զօրութեամբ քրիստոնեան կը մտնէ հաշտութեան պատերազմին մէջ, Նոյնիսկ երբ չորս կողմը կան խաղաղութեան եւ համերաշխութեան շատ քիչ ազդանշաններ:

Քրիստոսի ծնունդը եմմանուելի հասկացողութեան մէջ է՝ Աստուած մեզի հետ: Աստուած մեզի հետ է, որովհետեւ մեզ կը սիրէ, կը փրկէ եւ խաղաղութիւն կու տայ: Քրիստոս իջաւ վար, հոն՝ ուր իւրաքանչիւրս կը գտնուինք, որպէսզի մեզ բարձրացնէ իր մօտ: Իր մօտ կայ անսահման սէր, շնորհքի փրկութիւն եւ խաղաղութեան իրականութիւն: Այս իրողութենէն մեկնելով, իւրաքանչիւրս կը դառնանք խաղաղութեան դեսպան. «Քրիստոսով աշխարհ իրեն հետ հաշտեցուց եւ անոնց յանցանքները իրենց ներքեց ու մեզի վստահեցաւ հաշտութեան պատգամը» (Բ. Կորնթացիս 5.19):

Հաշտութեան պատգամը Քրիստոսի ծնունդի նպատակն է, զոր կարելի չէ սակարկել:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Աւետիսը՝ աշխարհի համար իր շնորհած հաշտութեան կեանքն է:

# 2012

## «ՄԻՓԱՆ»Ի ԱՂԶԻԿՆԵՐՈՒՆ ՀԵԶԱՃԿՈՒՆ ՊԱՐԸ

*«Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում  
ու նայիրեան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում»  
Եղիշե Զարենց*

Պայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Զարենց երբ հպարտօրեն խօսեցաւ իր մեծ սիրոյն՝ Հայաստանի մասին, հաւատաց անոր «արեւահամ բառ»ին, նաեւ նայիրեան աղջիկներուն «հեզաճկուն պար»ին: Շաբաթ, 5 Մայիս 2012-ին կիպրահայ գաղութը պարեցաւ Եղիշե Զարենցի այս սերը մարմնատրուած կիպրահայ գաղութի «Սիփան» պարախումբի 14 երիտասարդուհիներու հեզաճկուն պարերուն ընդմէջէն եւ մեկուկէս ժամ տեւած հայկական ու այլ յօրինումներով, որոնք պարարուեստի գեղեցիկ համոյթ մը կազմեցին:

Բայց նախ կայ ասացուածք մը, գոր պետք է ընդլայնել:

Պատանեկութեանս օրերուն կարդացած եւ լսած էի ժողովրդական ասացուածք մը, որ կ'ըսէ. «Գործ մը սկսէ հայու պէս եւ վերջացոր անգլիացիի պէս»: Բայց ինչո՞ւ հայը կրցած էր խլել լաւ գործ սկսողի համբաւը եւ անգլիացիին գիշած նոյն գործը աւարտողի համբաւը: Ո՛չ մէկ գիտական բացատրութիւն կայ, այլ ժողովրդական ասացուածք ըլլալով հիմնուած էր փորձառութեան եւ դէպքերու վարձացումներու վրայ:

Բայց «Սիփան»ի փորձը շրջեց ժողովրդային այս ասացուածքը:

Ֆելիքս Յարութիւնեանը՝ հայրենի արուեստագետը, միջազգային ելոյթներու մասնակիցն ու մրցանակակիրը, «Սիփան» պարախումբի գեղարուեստական ղեկավարութիւնը ստանձնեց 2011-ին: Ան իր թծախնդիր, խստապահանջ եւ հետեւողական աշխատանքի շնորհիւ կրցաւ պարախումբը հասցնել գեղարուեստականօրէն բարձր մակարդակի: Բայց ոչ միայն այդ: Ան յաջողեցաւ հայ մշակոյթի սերը դարձնել իւրաքանչիւր պատանիի եւ երիտասարդի սրտին ու հոգիին մէջ, որպէսզի անոնք մէկ կողմէ պարեն բայց միւս կողմէ ապրին հայ մշակոյթը: Ասիկա այն սիրոյ նկարագրականն է, որ Եղիշե Զարենց կը փորձէր բացատրել իր բանաստեղծութեան մէջ: Հայկական մշակոյթը պետք է ապրիլ եւ իւրացնել, ապա պարել, որպէսզի ստեղծուի սերը նոյնիսկն հեզաճկուն պարին նկատմամբ:

2012 տարուան փորձառութիւնը քիչ մը տարբեր եղաւ:





Ֆելիքսի անակնկալ անհանգստությունը առկախեց լաւ սկսած աշխատանքը: Եւ հիւանդութիւնը եւ աշխատանքներու առկախումը ստեղծեց մէկ կողմէ անորոշութիւն բայց միւս կողմէ հոգեկան ճնշում: Եւ հարցումը՝ ինչպէս պէտք էր վերջացնել լաւ սկսուած աշխատանքը:

Գօգօ Զելէշեանը Ֆելիքսին աշակերտներէն է՝ Պելյուսի Դամազգայիսի «Քնար» պարախումբէն: Ֆելիքսի բժախնդիր եւ հետեւողական ցուցմունքներուն եւ վարժութիւններուն միջոցով Գօգոն սկսած է խօսիլ տալ

իր մասին լիբանանահայ եւ լիբանանեան պարարուեստի տարբեր շրջանակներուն մէջ: Անելի լաւ դասաւորում կարելի չէր ընել, երբ ուսուցիչը՝ Ֆելիքս Յարութիւնեան, գործը յանձնեց եւ փոխանցեց Գօգոյին, որպէսզի կարելի ըլլայ շարունակել լաւ սկսած բայց առկախ մնացած աշխատանքները:

Կիպրոսի Դամազգայիսի վարչութիւնը եւ «Սիփան» պարախումբի անդամները Մայիս 5-ին կրցան ապացուցել, որ լաւ սկսած աշխատանքը հայուն կողմէ կարելի է նաեւ վերջացնել նոյնիսկ հայուն միջոցաւ: Ուժական ներկայութիւն, բեմական գեղեցիկ ստեղծագործական միտք եւ աշխատանք, համաչափ շարժում եւ գունագեղ տարազներ: Այս ամէնը մեծ խճանկարի մը մէջ ստեղծեցին գեղարուեստական բարձրորակ եւ հաճելի երեկոյ-համոյթ մը:

Երեկոյին գեղեցիկ մտայղացումներէն էր «Նանոր» մանկապատանեկան պարախումբը՝ թիւով 26 հոգի, որոնք ցոյց տուին, որ ոչ միայն կարելի է աշխատանքը լաւ ձեւով ամբողջացնել բայց նաեւ լաւապէս ծրագրել յառաջիկայ տարիներուն համար: Ֆելիքսին եւ ապա Գօգոյին ջանքերուն շնորհիւ կարելի եղած էր մանկապատանեկան այս աշխատանքը եւս յաջողցնել, ինչ որ լաւ գրաւական մը կրնայ հանդիսանալ յառաջիկայ տարիներու ծրագիրներու համար: Յայտագիրին մասնակցեցաւ «Արտուտիկ» մանկապատանեկան երգչախումբը:

«Սիփան» պարախումբի լաւ սկսած, ապա ընդհատուած, բայց դարձեալ վերակազմակերպուած ջանքերը ուրախացուցին Ֆելիքսը, հպարտացուցին Գօգոն, բայց անպայմանօրէն խանդավառեցին կիպրահայ գաղութը: Ֆելիքսին ուրախութիւնը այն էր, որ իր մեծ աշխատանքը կիսատ եւ անաւարտ չմնաց: Գօգոյին հպարտութիւնը,

թէ անորոշ եւ կիսատ մնացած գործը կարճ ժամանակամիջոցի մը մէջ կարելի եղաւ յաջողցնել: Բայց հանդիսատեսին խանդավառութիւնը այն պարումն էր, թէ հայ մշակոյթը ապրող իրականութիւն է՝ հարուստ եւ բարձրորակ, եւ թէ նոր սերունդը ատակ է իւրացնելու զայն եւ բաժնեկցելու հաւաքական կեանքին մէջ: Այս իրականութիւնը բաժնեկցիլը նոյնիսկ Եղիշէ Զարենցի մեծ սէրն է՝ «Անուշ Դաստան»ին եւ անոր աշխարհատարած նայիրեան աղջիկներու «հեղանկուն պար»ին:

Այս սէրն է, որ հայ ժողովուրդը ողջ պիտի պահէ բայց նաեւ ապրող եւ կենսունակ իրականութիւն:

Եթէ մենք սիրեցինք «Սիփան»ի աղջիկներուն հեզաճկուն պարը, բայց նաեւ ապրեցանք պահը հայ մշակոյթի արժեքին: Այս արժեքն է, որ պէտք է պահել եւ փոխանցել:

Սինչ այդ, պէտք է հաւատալ, թէ «գործ մը կարելի է սկսիլ հայուն պէս եւ անպայմանօրէն ամբողջացնել նոյնպէս հայուն պէս»:

Ֆելիքս եւ Գօգօ: Ուսուցիչ եւ աշակերտ: Գործը հայօրէն սկսան եւ հայօրէն ամբողջացուցին:

# ԱՅՍՈՐ ԵՐԱՉ ՄԸ ՏԵՍԱՅ

«Թող որ մեր երազները ըլլան այնքան ընդարշակ կարծես կրկնք չենք երազած: Եւ բող որ Քրիստոսի երազը մեր մէջ բանայ ամէն դուռ»:

Կորնու Լայր, Անկլիքան Եկեղեցիի Եպիսկոպոս

Վեր. Մանատ Ընդհոջեան է՝ մարդը, հովիւը, ազգայինը, հրապարակագիրը, ուսուցիչը, բայց անպայմանօրէն երազողը: Երազը նոր բան մը անելցնելու անոր մնայուն տաճնապէս է: Տագնապը, որ ան վերածած էր իր քնական կեանքի մէկ անջնջելի մասը, եւ ցերեկ ու գիշեր, առանց դադարի, ունէր երազը: Երազի հետ կար կամքը, աշխատասիրութիւնը եւ գործը յաջողցնելու ունակութիւնը: Արժէքներ, որոնք այդ օրերուն՝ 1980-ական թուականներուն, որպէս Քրիստոնէական Ջանկից Գործադիր Մարմինի անդամներ, կը դարբնուէին մեր մէջ, դառնալով ինքնութեան, կոչումի եւ գործի մարտահրաւեր:



Հայ Աւետարանական Եկեղեցիի հրատարակչական գործին «բաղդը լուծն» էր, որ խումբ մը երիտասարդներ, այդ օրերուն եւ երկար տարիներ, կը կրէինք մերթ համբերութեամբ, բայց նաեւ յուսահատութեան եւ յուսախաբուութեան տարբեր հոգեվիճակներու մէջէն, փորձելով գտնել գործը յառաջ տանելու մէկ այլ քայլ ու յառաջխաղացք:

Հրատարակչական գործը մենք չէ որ ստեղծած էինք: Այդ երազին արդիւնքն էր: Խումբ մը հաւատարող ջանիցականներ եւ եկեղեցականներ տեսած էին անհրաժեշտութիւնը «խօսքին» տարածման, բայց նաեւ մամուլով եւ հրատարակութիւններով եւ այս 1930-ական թուականներէն սկսեալ: Այդ օրերէն սկսեալ, եթէ հրատարակչական գործը վստահուած էր Քրիստոնէական Ջանկից Գործադիր Մարմինին, մենք վերցուցած էինք այս «ժառանգը», որպէս աւանդ բայց նա-



1982 Վրտից Եւստար Տրատարակչական Գործին Տնօրէն, Հայ Աւետ. Եկեղեցի (Էշրեհ) Ծախն աջ՝ Վեր. Մանատ Ընդհոջեան, Վեր. Տակոբ Մաղքեան, Գեղտ. Սրտանց Բառնի, Տնօր Մրամ Մարգիսեան, Վեր. Մկրտիչ Մկրտեան եւ Տնօր Հրայր Ճէպեան:

եւ հաւատալով անոր առաքելութեան եւ անհրաժեշտութեան:

Գործադիրի իւրաքանչիւր ժողով, իր երկարաշունչ եւ յաճախ մաշկոտող օրակարգերուն մէջէն, հրատարակչական գործը կը խլէր անոր գլխաւոր մասը: Մկո Մելքոնեանին մտահոգութիւնները. «Այս ձեւով չենք կրնար շարունակել»: Գրաչ Մուրատեանին տնտեսական վերլուծումները. «Այս պիտոճէն չի կրնար շալկել այս գործը»: Արամ Սարգիսեանին կրկնուող յանկերը. «Ո՛րք են մեր գրողները»: Տիգրան Եւմուշագեանին ուսուցչութենէն դէպի խմբագրական գործի վազվզումները, Սուրիոյ բաժնի մեր անդամներուն մնայուն գանգատը. «Է՛հ, ինչո՞ւ կ'ուշանայ «Ջանասեր»ը Հայէպ»: Եւ դէռ Պէրյուկ-Հալիպ ճամբուն մեր հայ վարորդները եւ սահմանի միւս կողմը թերթերը անցնելու իրենց պատմութիւնները. «Վալլահի այս թերթերը սահմանէն անցնելը դիւրին չէ հա՛ր»: Աւետարանչականի հետ մեր հին, բայց միշտ նորոգուող յանկերգ-ընդվզումները. «Այս յատկացումները չենք կրնար անելցնել»: Նիւ Ճրդիկէն մնայուն կերպով կրկնուող եւ շատ արագ կերպով հասնող «խրատները». «Ծախսերը կրճատեցէ եղբայր»: Կարելի չէ մոռնալ Ջանկից Գործադիր Մարմինի եւ Միութեան Կեդրոնական Մարմինի յարաբերութիւններու քաշքշուքները. «Այս տղաքը իրենց սահմանները պէտք է գիտնան»: Եւ ի՞նչ խօսք անոր բովանդակութեան եւ ուղղութեան համար մեր թողոր մտորումները, որոնք կը վերածուէին վէճի, եւ վէճերը՝ հրաժարական նամակներու:

Բայց այս բոլորէն վեր միշտ կար երազին ահագանգը, որ մեզ կը պրօպիեցնէր, թէ կարելի չէր խօսքին քարոզչութիւնը կատարել, որովհետեւ խօսքը մարդուն եւ հաւաքականութեան ինքնութիւնն ու պատկանելիութիւնն շնորհող իրականութիւնն է: Խօսքն է, որ պիտի կերտ-

քրիստոնեական ու ազգային մեր գոյգ արժեքները: Խօսքով է, որ պիտի ամրապնդենք արժեքներուն գոյատևումը: Պատմութեան փորձով տեսած էինք, թէ հաւաքականութիւնը կը մեռնի եթէ դադորի խօսքին՝ «բան»ին քարոզչութիւնը:

Այս իմաստով, բաւական երկար էր ճամբաս հրատարակչական գործին մէջ. նախ Գործադիր Մարմինի մէջ, ետքը հրատարակչական գործը դրուեցաւ յատուկ յանձնախումբի տնօրինումին տակ, ինչ որ մինչեւ օրս տակաւին կը շարունակուի:

Այս բոլոր կազմակերպչական հոլովոյթներուն մէջէն եւ նայելով այդ երկար ճամբուն, որ տարիներու վրայ երկարած քալեցինք միասնաբար, մէկ բան տակաւին կը մնայ ի գօրու՝ երազը: Երազը այն բոլոր երախտաւորներուն, որոնք առաջին իսկ օրերէն չվարանեցան եւ չվախցան երազելէ ընդարձակ՝ «կարծեք երբեք երազած չըլլալին»: Բայց իրենց երազին հիմքը յստակ էր քանի Քրիստոսի եւ Անոր խօսքին քարոզութեանը համար էր եւ որ չճանչցաւ ոչ դժուարութիւն եւ ոչ ալ յուսախաբութիւն: Այլ, ճեղքեց բոլոր դժուարութիւնները եւ բացաւ ամեն դուռ, որ գոցուած էր եւ գոցուելու վիճակի էր եւ տարբեր ժամանակահատուածներու մէջէն, այս ընդարձակուած երազները կրցան հասնիլ մինչեւ այսօր, ուր տակաւին խօսքը՝ «Ջանատը», «Պատանեկան Արծազանգ», «Լոյս» եւ այլ հրատարակութիւններու մէջէն կը շարունակէ ցրուիլ:

Բայց կայ նաեւ շնորհակալութեան երախտագիտութեան խօսքը, այն բոլոր նուիրեալներու բոլոր երազներուն, որոնք տարիներու վրայ երկարած, չյուսահատեցան, ոչ միայն այս ճամբան քալելէ բայց նաեւ շալկելէ առաքելութեան ծանր բեռը, բայց անպայմանօրէն հարուստ, իմաստալից, արժեքաւոր մշակոյթը, իր քրիստոնեական ու ազգային աւանդով, որ մեզ դրաւ որպէս եկեղեցի, հաւաքականութիւն եւ համայնք, հայ ժողովուրդի սպասարկութեան ու անոր ինքնութեան եւ յառաջխաղացքի ընդհանուր պրիսմակին մէջ:

Բայց նաեւ շնորհակալութիւն երազին համար: Եւ իւրաքանչիւր Ջանից Գործադիրի ժողովի ընթացքին Վեր. Մանասէ Շնորհոքեանի ժպիտը, ու «հա՛», այս գիշեր երազ մը տեսայ»: Այս իրականութիւններն են, որ մեր մէջ դրին տազնապին հասկացողութիւնը եւ այդ տազնապով ապրելու ու անոր համար կեանք մը նուիրելու տեսլականը:

Իսկ տազնապը: Քրիստոսի, եկեղեցիին ու հայ ժողովուրդին համար ու անոր համընդհանուր պայքարներուն մէջ կերտելու ապրող նկարագիր եւ իմաստալից կեանք: Ապրող նկարագիրը եւ իմաստալից կեանքը երազին արդիւնքն են, որուն համար նաեւ շնորհակալութիւն:

Բայց պիտի շարունակել երազել, որպէսզի դռները չգոցուին: 75-ամեակէն անդին երազը պիտի դնել ժամանակներու ստեղծած նոր տուեալներուն մէջ եւ պիտի տանիլ զայն դէպի նոր ամեակներ ու ընդարձակուած հորիզոններ:

«Այսօր երազ մը տեսայ»: Բայց այս երազը իրական է, որովհետեւ ան ապրող կեանք է եւ մնայուն արժեք:

## ԱՅՐՈՂ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Չալեպ չեմ ծնած, բայց փոքր տարիքես միշտ կապուածութիւն մը ունեցած եմ Չալեպին եւ անոր միջոցով սուրիական երկրին հետ: Կապուածութիւնս կու գայ այն իրականութենէն, որ ծնողքս՝ հայրս եւ մայրս, բնիկ հալեպցիներ են: Ասոր վրայ կ'աւելնայ նաեւ այն, որ հորեղբայրս՝ տղթթ. Ռոպեր Ճեպճեան, կառչած մնաց հալեպահայ գաղութի արժեքին եւ իրականութեան՝ մինչեւ վերջ, որովհետեւ հաւատք ուներ հալեպահայ գաղութին նկատմամբ իբրեւ սփիւռքահայ իրականութեան ամուր կռուանի: Եւ տակաւին, ան միշտ արժեւորեց հայ եւ արաբ ժողովուրդներուն բարեկամութիւնն ու այդ բարեկամութեան համար ապրեցաւ նուիրական կեանք մը:

Բայց կար նաեւ եկեղեցական եւ միութենական կապուածութիւնը՝ Չալեպի եւ հալեպահայութեան իրականութեան: Չայ Անետարանական եկեղեցիներու սահմանադրական կառոյցը կը ստիպէր, որ յաճախակիօրէն գումարուէին Սուրիա-Լիբանան լայնահաստ ժողովներ եւ համագումարներ: Այս մէկը երիտասարդական շարքերէն սկսեալ, մինչեւ եկեղեցիներու միութեան եւ անոր Կեդրոնական Մարմինին ժողովները: Եղաւ ժամանակ, երբ յաճախական դրութեամբ Չալեպ պէտք էր ճամբորդէիք այս կամ այն ժողովին մասնակցելու: Սկստի ունենալով Լիբանանի քաղաքացիական պատերազմին ստեղծած պայմանները, յաճախ պիտի տրուէայից եւ քիչ մըն ալ ձանձորոյթի նշաններ դրսևորէինք կրկնելով. «Նորը՛ն Չալեպ պիտի երթանք»:

Ժողովներուն հերթականութիւնը պիտի ստիպէր, որ մայրգաղային ճամբորդութիւններու նման, յաճախ Չալեպ այցելէինք եւ այս տարիներու վրայ երկարած: Այս բոլորը կը սկսէր մեր օրերու այսպէս ըսած անուն վաստկած մեր հայ վարորդներուն հետ: Կային Գօգօ Սուսանին, Ակու Ներսուն, Կուկուլի Յակոբը եւ տակաւին՝ Բարսեղն ու երիտասարդական շարքերու ներկայացուցիչ Բանուկը: Բոլորը մեր տղաներն էին, որոնք երկար տարիներու վրայ իրենց կեանքի պատմութիւնը կիսեցին մեզի հետ: Պիտի լսէիք իւրաքանչիւրին արկածային դրութիւնները եւ այդ բոլորին մէջ իրենց ներաշխարհը արտայայտող տագնապները:

Մեր օրերուն բաւական արկածային դրական եր գիրքեր եւ իրատարակութիւններ Սուրիա փոխադրելը: Մեր եկեղեցույ իրատարակութիւնները սահմանէն միւս կողմ անցընելու քաղցր լուծել փորձուցած էին մեր տղաքը: Անոնց մէջ նշանաւոր էր Գօգօ Սուսանին: Ուներ իրեն յատուկ խօսելու ոճ եւ ժպիտը դէմքին՝ սահմանին վրայի պաշտօնեային կը կրկնէր անգիր ըրած իր յատկանշական նախադատութիւնը. «Այս սնտուկը տարբ է, չդպչես հա՛, այլապէս Աստուած պապան կը բարկանայ»:

Ակու Ներսուն ուներ անելի խիստ ու զուսպ նայուածք: Յանդարտ էր ու վճռական: Ամէն անգամ որ կը խնդրուէր իրմէ ինքնաշարժին սնտուկը բանալ՝ ստուգման համար, Ակու Ներսուն կը պատասխանէր. «Բան մը չկայ մէջը»: Նոյնիսկ եթէ ինքնաշարժին սնտուկը հագի կարենար գոցել Ակու Ներսուն, իրենց յատուկ մշակոյթ եւ կենցաղ էր այս արտայայտութիւնը՝ հաղորդակցութեան միջոց մը սահմանի վրայ պաշտօնեային հետ, որուն պնդումներուն միտելոյն պատասխանը կու տար Ակու Ներսուն. «Բան մը չկայ մէջը» յանկերգը կը կրկնէր ան այս անգամ անելի ինքնապատահ եւ քիչ մըն ալ խիստ: Չիւրար լաւ հասկցած ու իրարու վայել հասկացողութեամբ անոնք կը կրկնէին իրենց երկխօսութիւնը՝ Նոյնքան հարազատութեամբ եւ արժեքով:

Ճամբորդութեան հաճելի երեւոյթներէն էին նաեւ Չալեպէն առաջ Մաարա գիւղի ճաշարանները: Թէեւ կը կենայինք քիչ մը հանգստանալու, բայց իրականութեան մէջ այդ հանգստին կը զուգորդուէր անուշեղէնի եւ նախաճաշ-ճաշի խանդավառութիւնը: Յոն կար նաեւ ճաշարանատէրերուն կենցաղը, հիւրը յարգելու մշակութային կրկնուող յանկերգ-արժեքը: Կճարելու ատեն անոնք անպայման պիտի ըսէին. «Խալի ալէնա» (մեր վրայ ձգէ վճարումը): Յիւր էինք իրենց համար եւ արաբական-միջինարեւելեան մշակութային մեծ եւ հիմնական կենցաղային գիծն է հիւրը յարգելը, թէկուզ խօսքով. եւ մենք կը պատասխանէինք. «Մա պիտիր» (չըլլար): Ծանօթ-անծանօթներ էինք, բայց կը հասկնայինք իրարու հաղորդականութեան ստեղծած արժեքին իւրայատուկ շերմութիւնը, որ կը միացնէր մարդիկ իրարու՝ ստեղծելու կեանքի այն պահը, որ գեղեցիկ է եւ պիտանի:

Մեր ժողովները կը սկսէին ճամային «բարի գալուստ»ի խօսքով. ան ընդհանուր ապահովութեան գրասենեակի հայկական բաժանմունքի պատասխանատուն էր, որ արդէն տեղեկացած էր, թէ ժողով մը կա: Պիտի ողջուներ իւրաքանչիւրս, պապ մեր անձնաթուղթերուն հիման վրայ պիտի արձանագրէր մեր անունները իր տոմարին մէջ: Այս մէկը կը կատարէր տարիներ շարունակ, չեմ գիտեր, թէ մեր անունները քանի անգամ գրուած են հոն, մինչեւ որ օր մը ինք ալ բարարարուեցաւ ու ըսաւ. «Պէտք չկայ ընելու այս ցանկագրումը: Նոյն մարդիկն էք, տարիներով կու գաք ու կ'երթաք»:

Այդ օրերուն Սուրիան շատ անելի «փակ» տնտեսութեան սկզբունքները կը կիրարկէր: Կարելի չէր օտար դրամանիշի անունն իսկ տալ, յատկապէս՝ տոլարի: «Կանաչը՛ լաւագոյն որակումն էր. այդպիսով պէտք էր հասնայինք, թէ ինչպէս պէտք էր բացատրէինք պիտոճեական որակումները ըստ պատշաճի: Այն ժամանակ նոյնիսկ

չէինք կրնար պատկերացնել, որ պիտի գայ օր, երբ առանց կաշկան-  
րումի նոյնիսքն «կանաչ»ով գնում պիտի ընէինք սուրիական որբէ  
մէկ վաճառատան մէջ, նաեւ դիրութեամբ փոխանցումներ պիտի  
կատարէինք եւայլն:

Իւրաքանչիւր ճամբորդութեան, այցելութեան եւ ժողովի՝ ապրե-  
ցանք պահը եւ հարազատութիւնը իր ամբողջութեան մէջ: Տեսանք  
բարեկարգումի քայլ առ քայլ յառաջընթացը: Ապրեցանք երգգային  
Յայեպն ու անոր ժողովուրդին եւ կենցաղին ստեղծած հարազատու-  
թեամբ լի ապրող մշակոյթը: Եթէ մէկ կողմէ կար պատմութիւն, ար-  
մատ եւ աւանդ, կար նաեւ մարդկութեան համար կեանքի արժէքը,  
որ իր մէջ կը պարունակէր նկարագիրն ու ոճը: Այդ նկարագիրն է, որ  
մեր կեանքերուն կու տայ արժէք եւ իմաստ:

Շնանք, մեծցանք ու ապրեցանք (եւ տակաւին կ'ապրինք) այս  
տարածաշրջանին մէջ, ուստի գիտենք նաեւ, որ շրջանը կարիքը ու-  
նի հսկայական բարեկարգումներու: Բայց նաեւ գիտենք, որ այս  
տարածաշրջանին մէջ կան մարդկային արժէքներ, որոնք մեր կեան-  
քերուն իմաստ տուին, բարեկամութիւն եւ հաղորդականութիւն  
ստեղծեցին եւ այս բոլորն ծնունդ առաւ մշակութային ջերմութիւնը:

Յունուար 2011-էն ի վեր արաբական աշխարհը կ'ապրի յեղափո-  
խութիւններու հեւք մը: Այսպէս կոչուած «Արաբական գարուն»: Եթէ  
այդ բոլորը մէկ կողմէ տեղի կ'ունենան բարեկարգումի կարգախո-  
սով, բայց եւ այնպէս հոն կայ միջազգային օրակարգերու եւ անոնց  
գիրար հրմշտկելու հաշուառկները: Ուրիշ հարց է, թէ քաղաքական  
վերլուծումները ինչ եւ տեղի ունեցածին մասին, եւ թէ անոնք ուր  
կրնան առաջնորդել: Էականն ու մնայունը տարածաշրջանին մէջ  
ստեղծուած մարդկային կեանքի արժէքներն են, որոնք եւս կ'այրին  
այրող այլ իրավիճակներու շարքին եւ շրջանին մէջ տիրող բոլոր  
իրադարձութիւններուն խառնակութեան մէջ: Այս արժէքները կարե-  
ւոր են ո՛չ միայն շրջանին մարդկային կեանքին եւ անոր քաղաքակր-  
թութեան համար, այլ միջազգային ընտանիքին համար հաւասարա-  
պէս:

Եթէ «օձի պէս խորամանկ» չենք կրնար ըլլալ, գէթ պահուան մը  
համար ըլլանք «աղանկի պէս միամիտ»: Այս միամիտ հոգիով ու  
տրամադրութեամբ եւ բարձրաձայն խնդրանք մը ընենք միջազգա-  
յին համակարգին.

«Յանգի՛ստ ձգեցէ տարածաշրջաները: Դոս կան արժէքներ,  
որոնք պէտք չէ՛ այրին»:

## ԱՆՈՐՈՇ ՎԵՐԱՄՈՒՏՆԵՐ

Ապրիլ 1975-ին սկսած քաղաքացիական կռիւները յեղաշրջեցին  
եւ յեղափոխեցին լիբանանեան իրավիճակը, ներառեալ լիբանանա-  
հայ գաղութը: Փոխուեցան երկրին կարգավիճակը, արտաքին աշ-  
խարհին մէջ տեղ գտած անոր հմայքը, կենցաղը, ապրելակերպը,  
կատե մարդուժը: Լիբանանահայ գաղութն այլ անցաւ (յետադարձ ակ-  
նարկով մը կարելի է տեսնել գայն) շատ երկար եւ նոր պատմութեան  
մը հոլովոյթի հանգրուան մը, որ հաւանաբար կը շարունակուի մին-  
չեւ օրս:

Այդ տարիներուն Յայ Աւետարանական Կեդրոնական Բարձրա-  
գոյն վարժարանի 11-րդ դասարանի աշակերտ էի, եւ կը պատրաստ  
ուէիք ամավերջի հանդէսին ստանալու համար մեր վկայականնե-  
րը: Ապրիլ 1975-էն ետք դպրոցական օրերը եւ դասապահերը մէկիկ-  
մէկիկ սկսան ընդհատուիլ եւ անցան անցումային եւ հանգրուանա-  
յին շրջաններ՝ քիչ մը դաս, քիչ մը պարտադիր արձակուրդ-ընդմի-  
ջում մթնոլորտով: Ամավերջի հանդէսը դարձաւ անորոշ հորիզոնին  
վրայ երեցող-չերեցող (ան)խառնակի իրականութիւն:

Բայց երեւց եւ հասաւ: Թէեւ դպրոցի շրջափակին մէջ շքեղ հան-  
դիսութիւն տեղի չունեցաւ, ինչպէս աւանդութիւն էր կատարել իւրա-  
քանչիւր կրթական տարեշրջանի աւարտին, բայց եւ այնպէս դպրո-  
ցի սրահին մէջ, աւելի սեղմ ու ապահով մթնոլորտի եւ պայմաններու  
մէջ կայացաւ ամավերջի հանդէսը:

Այսպիսով, Լիբանանն ու լիբանանահայ գաղութը դրուեցան նոր  
իրականութիւններու դեմ յանդիման, ուր գլխաւոր յատկանիշներն  
մէկը անորոշութիւնն էր: Մեր անհատական, ընտանեկան եւ հաւա-  
քական ու գաղութային կեանքերը կը կազմակերպուէին, կամ, աւելի  
ճիշդ, կը փորձուէր կազմակերպել թեկանսութեան եւ անորոշու-  
թեան հովանիին տակ:

1975-76 տարեշրջանը սկսաւ քիչ մը ուշ, նկատի ունենալով երկրի  
քաղաքական անորոշ ու անկայատ պայմանները: Երկրորդ պաքա-  
լորտայի աշակերտներ էինք, տարեշրջանը սկսանք Յունուար 1976-  
ին, իսկ կրթական տարին տեւեց միայն մէկ ամիս, սակայն այս ան-  
գամ ամկախումը բաւական երկարեցաւ: Իւրաքանչիւր ընտանիք եւ  
երիտասարդ պիտի որոշէր եւ ընտրէր յարմար ու լաւագոյն միջոցը  
դուրս գալու համար լիբանանեան պատերազմի արհաւիրքէն: Մենք  
ընտանեց օրոշեցինք երթալ Յայեպ, որ եղաւ մեր նոր կայքը:

Յայեպի մէջ վերսկսաւ իմ դպրոցական կեանքս, թէեւ ժամանա-  
կաւորապէս, բայց ամբողջովին նոր տարբերակով: Յարմար նկատ-

ուեցալ գիս արձանագրել Լեւոն Նազարեան-Գալուստ Կիւպէնկեան հայկական վարժարանի պաշալորտայի դասարանը փորձելով բան մը կորզել կորսուած ժամանակներուն փոխարէն: Մեծ տարբերութիւններ կային հոն՝ լիբանանեան մեր դպրոցական կեանքին հետ բաղդատելով: Նոր դպրոց, նոր դասընկերներ, թէւ նոյնանման դասակիւթեր, սակայն ամբողջովին արաբերէն լեզուով: Տակաւին կային նոր մթնոլորտն ու կենցաղը, հակառակ անոր որ շուրջ բոլորը հայեր էին ու ամէն ինչ հայկական էր: Ուսողութեան եւ գիտութեան դասապահերուն ուսուցիչներու բացատրութիւններուն կը հետեւէ փորձելով, գէթ համեմատելով իմ գիտցած անգլերէն եզրերուս հետ, հասկնալ մատուցուածը:

Պէտրութի մէջ 10-րդ եւ 11-րդ դասարաններու աշակերտները շաբաթը անգամ մը կը կատարէին զինուորական վարժութիւն՝ հսկողութեամբ լիբանանեան բանակին կողմէ նշանակուած հայ զինուորական Ստեփան Օզնայեանի: Սուրիական քաղաքացիութիւն ունեցող հայերը գերծ կը մնային այս վարժութիւններէն: Զայլայի մէջ ալ, շատ անէի շէշուուած կերպով, կային զինուորական վարժութիւններու դասապահեր: Իրականութեան մէջ դպրոցի ամբողջ առօրեան կլանուած էր նաեւ այդ մթնոլորտով: Լիբանանի մէջ որդեգրուած քաղաքականութեան հետեւելով, երբ բանակի դասատուէն խնդրեցի, որ զիս գերծ կացուցէ այս դասապահէն, նկատի ունենալով, որ լիբանանեան քաղաքացիութիւն ունէի, ան կտրուկ կերպով «ո՛չ» պատասխանեց: Անելի՛ն. բացատրեց, որ Սուրիոյ պետականութեան կարգախօսն է «Մէկ արաբական հայրենիք», որ կրնայ ընդգրկել բոլոր արաբ քաղաքացիները:

Այս տարիներուն երիտասարդական նորածեւութիւն էր նաեւ տղոց երկար մազերը, ներառեալ ինս: Չինուորական դասատուն ըսաւ, որ պէտք է երթամ սափրիչին եւ ըսեմ, թէ մազերս պէտք է կտրուիլ զինուորական դասապահերու պատշաճ ոճով: Չկրցայ հասկնալ, թէ այդ ինչ կը նշանակէր. սակայն ամէն ինչ յստակ դարձաւ, երբ գլուխս դրի սափրիչին տրամադրութեան տակ եւ շատ կարճ ժամանակամիջոցի ընթացքին մազերս ամբողջովին անհետացան: Երիտասարդական զգացումներս չուշացան, մէկ կողմէ ներութիւն, բարկութիւն կը զգայի, բայց միւս կողմէ զսպուած արցունքներ կային եւ մտորումներ. «Ես ո՛ր եմ»:

Բայց եւ այնպէս փորձեցի շարունակել այս երթը՝ քիչ մը հասկնալով, շատ նիւթեր չհասկնալով, համակերպելով եւ հանդուրժելով բոլոր նոր վիճակները, բայց նաեւ վայելելով Զայլայն ու հալէպահայութիւնը, ապրելով դասընկերներուս ջերմութիւնը: Տեսայ սրտեր, որոնք պատրաստ էին ընդգրկելու ծանօթ-անծանօթ բարեկամու-

թիւններ եւ տեղ տալու անոնց որպէս հարազատի: Զայլայի մէջ ապրած այդ քանի մը ամիսները լաւ հիմնաքարը եղան շարունակելու եւ հասկնալու բարեկամութեան եւ հաղորդակցութեան արժեքներն ու հասկացողութիւնը:

Լիբանան վերադարձիս, թէւ շարունակուեցաւ կրթական եւ ընդհանրական մեր կեանքը, բայց իւրաքանչիւր տարուան հետ կար նաեւ անորոշութիւնը, թէ պիտի կարենանք արդեօք սկսիլ ու բարուը անարտիկն հասցնել տարեշրջանը: Իւրաքանչիւր տարեշրջանի սկիզբը կարծեք մութ փապուղիի մը մէջէն ճամբորդելու փորձ կ'ընէին, թէ՛ն անյստակ, բայց վճռական, որովհետեւ կար հայեցի դաստիարակութիւն եւ ուսում ստանալու հասկացողութիւնն ու անհրաժեշտութիւնը, որոնք վեր էին ապահովական ամէն տեսակ պայմաններ:

Այսօր յետադարձ ակնարկով կը դիտեմ այն երկար ճամբան, ուրկէ անցան Լիբանանն ու լիբանանահայութիւնը, կը նայիմ անձկութեամբ, նաեւ գոհունակութեամբ: Անորոշութիւններով լեցուն այդ թողոր հանգրուաններուն մէջէն փորձեցիք հաւաքաբար մեր երթը շարունակել, թէկուզ մինչեւ օրս շատ դժուարութեամբ, բայց մեր կեանքերուն հիմք ունենալով հայեցի դաստիարակութիւնը: Մեր իւրաքանչիւր վարժարանը իր իւրաքանչիւր կրթական տարեշրջանին իր անորոշ վերամուտով կրցաւ ամբողջացնել տարին՝ քար մը եւս ամրացնելով հայեցի դաստիարակութեան հայկական հիմքին:

Եթէ այսօր լիբանանեան քաղաքական բեմը տակաւին ունի շատ մը անորոշութիւններ, ասոր վրայ պիտի գան անելալու շրջանային իրադարձութիւնները, յատկապէս սուրիական իրավիճակը, որուն իբրեւ հետեւանք սուրիահայ մեր ընտանիքները կ'անցնին դժուար պայմաններ: Պատմութիւնը դարձեալ ինքզինք կը կրկնէ, այս անգամ երկիրներու շրջուած կարգավիճակով:

Թէւ անորոշ վերամուտները պիտի շարունակուին, բայց կայ լիբանանահայութեան փորձառութիւնը: Մութ փապուղիէն լոյսը գտնելու եւ անոր հասնելու ձգտումն ու յաջողութիւնը՝ երկար տարիներուն վրայ: Այս պիտի նշանակէ, թէ անորոշ վերամուտին ատեն իսկ պարտիք շարունակել հաւատալ մեր վարժարաններուն հայեցի եւ գիտական դաստիարակութեան: Զաւատալ, որ մեր հայկական վարժարաններուն տուած դաստիարակութիւնը նոյնքան ուժեղ հիմնաքար է մեր գաւակներուն կեանքերուն համար եւ անոնց ասպարեզային քնազաւաններուն մէջ «տեղ մը հասնելու» մարմաջին երաշխիքը: Պէտք է շարունակենք գիտակցիլ, որ ազգային ինքնութիւնը եւ մեր մշակութային ժառանգութիւնները պահպանելը ասպրուած եւ ասպրուելիք կեանքերուն համար արժեք եւ հարստութիւն է, հայը պէտք է պահէ այդ արժեքն ու հարստութիւնը:

Ու տակալին, եթէ հալեպահայ եւ սուրիահայ ընտանիքներու գաւակները պիտի համախմբուին մեր վարժարաններուն երդիքներուն տակ, այս պիտի նշանակէ, թէ պատրաստ պէտք է ըլլանք ոչ միայն հիւրընկալելու բոլորը, այլ նաեւ մեր բարեկամութիւնը, հաղորդակցութիւնը եւ հասկացողութիւնը կիսել իրենց հետ՝ փորձելով կամրջել կրթական, ընկերային եւ կենցաղային բոլոր տարբերութիւնները:

Անորոշ վերամուտներ բայց անպայման հայ արժէքը պահպանելու մեր առաքելութիւններու առաջնահերթութեամբ ու առաջադրանքով:

## ԻՍԿ ԴՈՒՆ ԾԱՆՕԹԱՅԻՐ

*«Իսկ դուն ծանօթացար իմ վարդապետութիւնս, վարմունքիս, դիպատրութեանս, հաւապքիս, կրկայնմ-  
պտութեանս, սիրոյս, համբերութեանս, հալածանքնե-  
րուս, չարչարանքներուս»:*

(Բ. Տիմոթէոս 3.10-11)

Ծանօթացնել եւ ծանօթանալ բայերուն մէջ կայ երկու տարբեր իրականութիւններ: Առաջինի պարագային, անհատը կը ծանօթացնէ, իսկ երկրորդին՝ կը ծանօթանայ: Առաջինը կը ղեկավարէ, իսկ երկրորդը կը ղեկավարուի: Ու տակալին կը սորվեցնէ ու կը սորվի: Եւ վերջապէս կ'առաջնորդէ ու կ'առաջնորդուի: Այս երկու անհատներու (առաջնորդ եւ առաջնորդուող) յարաբերութենէն դուրս կու գայ այն իրականութիւնը, որ կը ծանօթացուիս: Այս միտք բախիով է, որ Պօղոս Առաքեալ կը գրէ Տիմոթէոսի:

Բայց երեւի քիչ մը անելի պէտք է պէղել, որպէսզի կարելի ըլլայ անդրադառնալ ծանօթանալ բառին ընկերամշակութային եւ լեզուաբանական հասկացողութեան, տարբերութեան եւ ապրուած փորձառութեան: Այս կարելի կ'ըլլայ եթէ վեր առնենք ծանօթանալ բառին յունարէնը՝ *parakolouthen*:

Յունարէն արմատին մէջ ծանօթանալ բառը ունի ֆիզիքական հասկացողութիւն: Այսինքն ծանօթացնողը (առաջնորդը) ֆիզիքապէս կ'ընկերակցի հետեւողին, մինչ կը ծանօթացնէ իրականութիւնը: Այս պիտի ընդգրկէ ֆիզիքական ներկայութիւն եւ առաջնորդութիւն: Բայց նաեւ կայ իմացական տեսութիւնը, ուր հետեւողը առաջնորդի միտքին ու մտածողութեան կը հետեւի: Եւ վերջապէս հոգեւոր-հոգեկանը, ուր ոչ միայն կը հետեւի առաջնորդի միտքին, այլ նաեւ հետամուտ կ'ըլլայ նոյնինքն առաջնորդին կեանքին ու գաղափարախօսու-թեան նմանելու ու անոր նման ըլլալու իրավիճակը:

Այս հասկացողութեամբ է, որ Պօղոս կ'ուզէ Տիմոթէոսի ծանօթացնել իրականութիւնը իր (Պօղոսի) առաջնորդի կեանքին ընդմէջէն: Գոս է, որ Պօղոս Առաքեալ կը դրուատէ առաջնորդի կեանքին արժանիքները եւ չի բացառեր ներկայացնել այդ բոլորը եզակի փորձառու-թեան ու նկարագրի մէջէն կրկնելով. «Իմ» բառը: «Իմ»ը՝ առաջին դէմք եզակի, Պօղոսին (առաջնորդին) կեանքին մէջ տեսանելի է դաստիարակութիւնը, կեանքի նպատակակէտը՝ «վարմունքս եւ դի-

տաւորութիւն», բայց նաեւ այն որու կը հաւատայ՝ «հաւատք», ու տակաւին «համբերութիւնը», «երկայնմտութիւնը», սրտին զարկը՝ «սիրոյս» Եւ անպայմանօրէն կեանքի փորձառութիւնը՝ «հալածանք-ներս ու չարչարանքներս»:

Առաջնորդին համար իրականութիւնը ծանօթացնելու այս գործընթացը կու գայ համապարփակ կեանքով. խօսք, բայց նաեւ ապրուած փորձառութիւն եւ յարաբերութիւններու ու արժէքներու գիտակցութիւն: Այստեղէն պէտք է վեր առնել նաեւ ծանօթացնելու խորքային մտածողութիւնը եւ հասկացողութիւնը, ուր իրականութիւնը կարելի պիտի ըլլայ հետեւողէն հետեւողներուն իմացնել, մինչ ֆիզիքապէս կ'ընկերակցիք իրենց, կ'ուսուցանենք անոնց միտքը եւ մտածողութիւնը, նաեւ նախապատուութիւնները հոգիին ու հոգեւորին գիտակցութեան մէջէն, ուր կը դրսեւորուի իրականութիւնը, երբ «աստուածապաշտութեամբ ապրելու Յիսուս Զրիստոսով» (Բ. Տիմոթեոս 3.1) կը դառնայ կեանքի տեսլական:

Զրիստոսի իրականութիւնը՝ աստուածապաշտութիւնը, կը լիցքաւորուի քանի գիտենք «սուրբ գիրքերը, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու Զրիստոս Յիսուսով» (Բ. Տիմոթեոս 3.15): Փրկութիւնը շնորհք է. կեանք, որ կ'ապրի ու կը վկայէ Աստուծոյ շունչով, որ օգտակար է «սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու եւ արդարութեան մէջ խրատելու համար» (Բ. Տիմոթեոս 3.16):

Աստուծոյ շունչը մեզ կ'ընէ իմաստուն, եւ ոչ միայն գիտութիւն կ'ամբարնէք, այլ նաեւ ապրող փորձառութիւն Զրիստոսի հետ եւ իր միջոցով: Նոյնիսկ շունչը մեզ կը դնէ շիտակին ու սխալին առջեւ. յանդիմանելով թէ սխալին մէջ ենք, բայց նաեւ կը շտկէ մեր կեանքի շեղումները, կը գետնէ մեզ դարձեալ շիտակի պարունակին մէջ: Եւ վերջապէս, նոյնիսկ շունչը մեզ կը վերածէ արդարութեան համար կենալու, ապրելու եւ վկայելու իրականութիւններուն մէջ:

Զրիստոսեան կ'ապրի այս աշխարհին մէջ: Անոր կեանքը չի կրնար ըլլալ կրաւորական եւ անշարժ: Զրիստոսեան եւ եկեղեցիին կեանքը այս աշխարհի բոլոր յարաբերութիւններուն եւ իրավիճակներուն մէջ պէտք է ըլլան նախաձեռնող եւ նախայարձակ: Ան-անոնք պիտի ծանօթացնեն աշխարհի աստուածապաշտութեան իրականութիւնը: Ան-անոնք պիտի դեկավարեն, առաջնորդեն եւ պիտի սորվեցնեն Աստուծոյ շունչը, որ մեր կեանքերուն կու տայ իմաստ, այս դժուար աշխարհին մէջ ու տակաւին անկէ ետք:

«Իսկ դուն ծանօթացար» աստուածապաշտութեան իրականութեան: Իմ, քու եւ իւրաքանչիւր քրիստոնեայի կեանքի առաջնորդութեամբ եւ վկայութեամբ:

## ԻՏԱԿԻՄՅԷՆ ԵՐԿՈՒ ԵՆՄԱՐ, ԿՐՆԱՆՔ ՀՏԿԵԼ

Տարբեր է, երբ աշխարհի հրաշալիք նկատուող կոթող մը կը դիտես մօտէն եւ իրողապէս կը զգաս քանդակին ստեղծագործական հմայքն ու անոր մշակութային եւ պատմական արժէքը: Այս զգացումը ունեցայ Յուլիս 2012-ին, երբ կը դիտէի Իտալիոյ Փիզա քաղաքին նշանաւոր կոթողը՝ ծած աշտարակը: Իր հմայքով ան իսկապէս արժանի է աշխարհի եօթը հրաշալիքներուն շարքին ըլլալու:

Բայց հետաքրքրական է հետեւիլ պատմութեան զարգացումներուն, յատկապէս եկեղեցւոյ զանգակատան (իմա՝ ծած աշտարակին), որուն զանգակները վերցուած են՝ նուազեցնելու համար ընդհանուր ծանրութիւնը: Շինարարութիւնը սկսած է 1173-ին, երբ փոքր ծուրօն մը նշմարուեցաւ առաջին երեք յարկերու ամբողջացումէն ետք: Ծուրօնեան պատճառը հողին բաղկացուցիչ մասնիկներուն տկարութիւնն է. անհրաժեշտ նկատուած է աշխատանքները կատարել՝ սպասելով հողին ամբողջական կազմաւորման:

Կայ նաեւ պատմութեան այլ վարկած՝ զանգակատան աշխատանքներու ընդհատման: Իտալիոյ Թասքընի շրջանը, ուր աշտարակը կը գտնուի, եղած է երկար պատերազմական գօտի, ուստի մարդիկ անբաւարարութեան պատճառով դանդաղած են նաեւ շինարարական աշխատանքները: Աշտարակը ութ յարկ է՝ յիսունհինգ մետր բարձրութեամբ, ունի երկու հարիւր իննսունեօթը սանդուխ: Ծուրօնը, դժբախտաբար, շարունակուած է իւրաքանչիւր տարի մէկ միլիմետր տարողութեամբ, հակառակ այն բոլոր շինարարական փորձերուն, որոնք ի գործ դրուած են կատարելու շարունակուող ծուրօնը: Անիկա ակելի շեշտուած է 1999-2001 տարիներուն, երբ շեղումը հասած է ակելի քան հինգուկէս աստիճանի: Բարեբախտաբար, 2008 թուականին կարելի եղած է շինարարական ձեւերը գտնել եւ այսօր կարելի է ըսել, թէ աշտարակը ակելի քան երկու հարիւր տարի պիտի գոյատեւէ առանց յաւելեալ ծեղու: Այսօր Փիզայի աշտարակը խրոխտ կանգնած է, թէկուզ 3.99 աստիճան ծուր, բայց ապահով գալիք օրերու որքէն փորձանքէ եւ նորանոր շեղումներէ:

Երբ կը շարունակես դիտել Փիզայի աշտարակը եւ կը քանչախաս կորթողին ստեղծագործական աշխատանքին վրայ, հակառակ քիչ մը ծուր վիճակին, անպայման մտքիդ մէջ կ'ամբողջում մը կը կատարուի մեր հայկական իրականութիւններու տարբեր երեւոյթներու եւ այդ աշտարակին միջեւ: Երեւոյթներ՝ ազգային, քաղաքական,





իր կեանքին մէջ:

Եթէ Իտալիա կատարած իմ ճամբորդութեանս ընթացքին Փիզայի աշտարակը առաջին կարելոր նշմարն էր, բայց կայ նաեւ երկրորդը, որուն եւս պէտք է նայիլ:

Մայրաքաղաք Ռոմի հայկական ներկայութեան մէջ իր կարելոր տեղն ու իմաստը ունի Սուրբ Նիկողայոս եկեղեցին՝ կառուցուած 1602 թուականին: Անոր կողքին կայ Լեւոնեան վարժարանը՝ 1883 թուականին կառուցուած, եւ անոր կողքին կանգնած խաչքարը ի յիշատակ Յեղասպանութեան նահատակներու: Երեք կոթողներ՝ ջով ջովի կանգնած, կը վկայեն հայուն վերապրումին ու շարունակականութեան ռազմավարութեան մասին, հայուն կեանքի նպատակակետէն չէղելու ու չծռելու անհրաժեշտութեան մասին:

Յայ եկեղեցին Ռոմի մէջ կերտած իր աւելի քան 410 տարիներու պատմութեամբ տակաւին ամրոցն է քրիստոնեական եւ ազգային հաւատքին ու աւանդին: Իսկ Լեւոնեան վարժարանը իր աւելի քան 130 տարիներու ծառայութեամբ, տակաւին կը շարունակէ մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի կարելոր առաքելու-

թիւները: Բայց կայ նաեւ խաչքար-յուշակոթողը՝ Յայ Դատի ու պահանջատիրական ուղիին վրայ հայը միշտ զգաստ պահելու կոչով մը: Այս երեք կոթողները միասնաբար մէկ վկայութիւն կը կազմեն, ինչ որ տեսայ Վարուժան Ահարոնեանին մէջ, եւ որուն հանդիպեցայ Լոյկնքն Լեւոնեան վարժարանին մէջ:



Վարուժան ծնած է Ռոմ եւ լաւ ներկայացուցիչ մըն է սփիւռքահայուն, յատկապէս ներկայ ժամանակներու իրականութեան: Մայրը Իտալիա հաստատուած է Յայաստանէն գալով, իսկ հայրը՝ Լիպիան: Ան քաղաքական գիտութեանց մէջ մասնագիտացած երիտասարդ մըն է, որ լաւ հայերէն կը խօսի. «Տունը հայերէն կը խօսինք, քիչ մը արեւելահայերէն, քիչ մը արեւմտահայերէն, բայց հայերէն», կ'ըսէ:

Վարուժան կ'աշխատի Լեւոնեան վարժարանին մէջ, որ ներկայիս ունի աւելի քան տասներկու աշակերտ: Անոնք կը պատրաստուին եկեղեցական առաջնորդութեան՝ հայկական տարրեր գաղութներուն մէջ ծառայելու համար: Վարուժանին աշխատանքը առաւելաբար կ'ընդգրկէ վարժարանի մատենադարանին առաքելութիւնը. այդ վայրը կարելոր հիմք է մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի, չճոռղ դրոշմներով լի: Վարուժանին հետ զրուցելով տեսայ, որ հայը կրնայ չճոխի իր արժեքներէն եւ աւանդէն: Վարուժան երիտասարդ հայն է, որ հաւատացած է իր ըրած աշխատանքին կարելորութեան, բայց նաեւ իր ազգային ինքնութեան եւ անոր մշակութային արժեքին:

«Հացի, օղի և ջրի նման, հպարտության պէպր ունին»:

Վահան Թլքեան

Բայց մեր հայրենի եւ սփիւռքեան իրականութիւններուն մէջ տաւ կալին կան ծռած եւ ծռող օրակարգեր:

Թեեւ հպարտ ենք անկախացած հայրենիքով եւ անոր պետականութեամբ, բայց նաեւ մտահոգ ենք անոր մէկը միւսին ետեւէն զիրար հրմշտկող ծռած ու մայուն կերպով ծռող իրավիճակներով: Սփիւռքեան համահայկական ընդհանուր իրավիճակին մէջ եւս կան նմանօրինակ, տարբեր տարողութեամբ, բայց ծուռ կամ ծռած իրավիճակներ:

Ինչ ձեւով ու պարունակով ալ փորձենք վեր առնել մեր հայկական համընդհանուր երեւոյթները եւ ի՛նչ պիտմակով ալ ուզենք դիտել ծուռ եւ ծռած մեր ազգային բոլոր իրականութիւնները, կը մնայ մէկ կարեւոր եւ հրատապ առաքելութիւն ու մարտահրաւեր. «Կրնա՞նք շտկել ծուռը»:

Եթէ պիտաճանաչումը առաջին կարեւոր քայլն է ծռած երեւոյթներու կասեցման, սխալներուն նկատմամբ ներողամտութիւնը երկրորդ հանգրուանն է. ուրեմն շտկելու համար պատրաստակամութիւն, հոգի ու միտք ի զործ դնելը կը կազմեն գործընթացի ամբողջականութեան հասցնող ու կարեւոր օղակը: Եթէ պիտի կառուցենք շտկելու առաքելութեան, այս կը նշանակէ, թէ պարտինք պատրաստել եւ լիցքաւորել հողը եւ աշխատիլ նոյնինքն հողին կազմաւորման ուղղութեամբ, ինչպէս եղած է Փիզայի աշտարակի պարագային:

Հայուն հողը կը պատրաստուի մարդակերտումի եւ հայակերտումի անհրաժեշտ գրաւականներով: Իսկ հայուն հողին կազմաւորումը կը կայանայ ազգակերտման իրականութեան մէջ: Եթէ ազգակերտումի հրամայականը հայրենի մակարդակի վրայ պիտի նշանակէր Հայաստանի հզօրացումն ու անոր պետականութեան եւ ընկերատնտեսական վարչածէի կազմաւորումը, ապա սփիւռքի մակարդակի վրայ հայապահպանման մեծ, ամբողջական եւ ընդհանրական առաքելութեան կառուցիլն ու անոր ի խնդիր ամեն ինչ ընելը:

Իտալիայէն երկու նշմար: Բայց մէկ մեծ ու կարեւոր աշխատանքային հրամայական. «Կրնա՞նք շտկել ծուռը»:

Եթէ Լեւոնեան վարժարանը եւ մեր բոլոր ազգային եկեղեցական կառոյցները այսօր կը շարունակեն գոյատեւել ի զին մեծ գոհողութիւններու, ուրեմն տակաւին կը հաւատանք շտկելու կարեւորութեան: Շտկել սխալը, ծուռը, ծեղու ենթական: Շտկելով է, որ կարելի է պահել արժէքը:

Արժէքը՝ հայ մարդուն, հայ ինքնութեան եւ հայ ազգին:

Լուրիճա Մաթոսեան մանկութիւնը անցուցած է Կիպրոս: Ուսանած է Անգլիա եւ Պետֆորտ համալսարանէն վկայուած է փիլիսոփայութեան մէջ: Նաեւ հետեւած է մասնագիտացած երաժշտութեան եւ թատրոնի մէջ: Ներկայիս կ'աշխատակցի «Պի.Պի.Սի.»ի տեղեկատուութեան ցանցին եւ կը թղթակցի միջազգային թերթերու, ինչպէս՝ «Տը Կարտիըն» եւ «Ինտիփետընը Փոսթ»՝ ստորագրելով գեղարուեստական քննադատական յօդուած-վերլուծումներ: Սակայն, ինչ որ ուշադրութեան արժանացնէ իր պատրաստած «Հրանդ Նիկ» երկու ազգութեան սիրտը» քառասուն վայրկեաննոց կարճ իրկման է: Լուրիճա Մաթոսեան արժանացած է միջազգային մրցանակներու իր այս ֆիլմին պատրաստութեան համար:

Լուրիճան կը զրուցէ Հրանդ Տիկի հետ. ան կը խօսի եւ Տիկի կը պատմէ: Լուրիճա Մաթոսեան կրցած է դուրս բերել Տիկիին «Հասարակ մարդուն» ներաշխարհը, մանկութենէն սկսելով, եւ հոգեմտաւոր աշխարհը՝ հայեցակէտը, ինքնութեան պրպտումները, հայ-թուրք յարաբերութիւնները, քրիստոնէական ու հոգեւոր արժէքները: Եւ այս կարճ ֆիլմին մէջէն Լուրիճա Մաթոսեան յաջողած է բացայայտել Տիկիին «սիրտը» եւ այդ սրտին տրոփիւն տուող հպարտութիւնը, որ չդադրեցաւ տրոփելէ, նոյնիսկ իր մահէն ետք:

«Հայը համազօր է հայիոյանցի այս երկրին մէջ», կը խօսի Տիկի: «Թուրք ժողովուրդը ոչ միայն չի գիտեր Յեղապանութեան մասին, բայց նաեւ կը հաւատայ, թէ հայը թուրքին սպաննած է», կ'ըսէ ան: «Ուրեմն այս ժողովուրդը պէտք է սորվի իրականութիւնը», կ'եզրակացնէ ան:

Եւ այս իրականութիւնը սորվեցնելը Տիկիին կեանքը տարաւ միւսին կատարելութիւն, որ վերջացաւ անարգ սպանութեամբ: Տիկիին կեանքը եղաւ համակ աշխատանք եւ նուիրում այս իրականութեան համար, եւ անոր համար ո'չ մէկ ճիգ խնայեց ան:

Լուրիճա կը շարունակէ. «Ի՛նչ կը կապէ թեզ այս երկրին»: Տիկիին հաստատ պատասխանը. «Իմ երկիրս է: Իմ արմատներս հոս են: Եթէ պիտի փլեն, մենք նորէն պիտի շինենք»: Եւ արմատները, նոյնինքն արմատներուն կապուած հողը, շատ բան կ'աւելցնեն Տիկիին հպարտութեան վրայ:

Քայց Լուրիձա կը շարունակէ «անհանգստացնել» Տիկըը. «Յոս մէկ հատ հայ չեմ տեսներ ես»: Յոս ի յայտ կու գան Տիկընի պայծառատեսութիւնը եւ յստակատեսութիւնը: Գարտուրութիւնը կը խթանէ զինք, որպէսզի ան աներկիւղ պատասխանէ. «Ես կը տեսնեմ. տեսի՞լք թէ իրականութիւն կը տեսնեմ»: Եւ Տիկըն կը տեսնէ՝ քանի ունի հպարտութիւնը իր պապերուն. «Իմ պապերուն երկիրն է այս»:

Լուրիձա Մաթոսեան Տիկընի կ'ընկերակցի մինչեւ վերջ: Կը սկսի տեսնել Տիկը մարդը եւ անոր մէջ մտահոգութիւնը, որ շարձախուած է վախով: Մահուան սպառնալիքներ ստացած է, եւ այս անպայմանօրէն կը մտահոգէ, չէ՞: Մարդկային ո՞ր էակը պիտի չունենայ նոյն զգացումները: Դետեյելով Ֆիլմին ու Նայելով Տիկընի այքերուն եւ Նայուածքին, Մաթոսեան կը սկսի տեսնել անոր ներաշխարհին անորոշութիւնները: Տիկը սակայն գիտէ, թէ ինչպէ՛ս պիտի յարթահարէ այդ ներաշխարհը: Գայ Աւետարանական Պատանեկան Տան մէջ սորված է, թէ «Տէրը իմ հովիւս է, քանի մը կարօտը պիտի չունենամ»: «Չիս խոտաւետ արօտներու մէջ կը պանկեցնէ, հանդարտ ջուրերու քով ինձի կ'առջնորդէ» (Սաղմոս 23):

Մաթոսեանի հետ կ'ապրիս Տիկընի հանդարտութիւնը, որ զինք կը պահէ զգաստ՝ շարունակելու համար իր երթը իրականութեան պայքարին համար: «Պատմութեան մէջ մէկ դարը մէկ նախադասութեամբ կ'անցնի», կը շարունակէ Տիկը: Ուրեմն, կայ աշխատանքին ու գործին անհրաժեշտութիւնը: Եւ հոս՝ Տիկը դեմ առ դեմ կու գայ իր կեանքի ճակատագրին եւ իր հպարտութիւնը կապած անոր կ'ըսէ. «Եթէ ես երթամ, անշուք չեմ երթար», որովհետեւ ան գիտէ, թէ Գրանդ Տիկը «ինչ գործեր ըրած է»:

Տիկընի հպարտութիւնն է այս, հողին ու արմատին ինքնագիտակ-

ցութիւնը, որ զինք կը մղէ Տեղասպանութեան եւ պահանջատիրութեան «իրականութեան» համար ամբողջ կեանք մը Լուրիձայու: Կեանք մը, որ ձգտեցաւ կատարելութեան եւ այդ կատարելութիւնը կինը տարաւ նահատակութեան:

Տիկը կարողացած էր «գուշակել», թէ «անշուք պիտի չերթար» եւ թէ «ինչ գործեր ըրած էր», որովհետեւ Պոլսոյ Թաքսիմի հրապարակը մինչեւ այսօր կ'արձագանգէ. «Բոլորս հայ ենք, բոլորս Գրանդ Տիկը ենք»: Ու տակաւին, Տիկընի հպարտութիւնը խթանեց գաղտնի մնացած, պահուցուած եւ կորսուած շատ մը հայեր, որպէսզի վերագտնեն Նաեւ իրենց հպարտութիւնը:

Եթէ կը գտնուիք Տեղասպանութեան յիշատակութեան հարիւրամեակի սեմին, այս պիտի նշանակէր, թէ պիտի հաւատանք Տիկընի պէս «ինչ գործեր ընելու» անհրաժեշտութեան: Իսկ այս գործերը կրնան իրականանալ, եթէ մեր մէջ ամրապնդեց հայուն հպարտութիւնը: Այս այն հպարտութիւնն է, որով մեր նախահայրերը չզիջեցան ու չսակարկեցին ո՛չ ազգային ինքնութիւնն ու ո՛չ ալ քրիստոնէական հաւատը:

Այս այն հպարտութիւնն է, որ մեր նախահայրերը մղեց, որ Տեր Զօրի դժոխքէն դուրս գան՝ կենդանի ապրող իրականութիւն: Այս ապրող իրականութիւնը հիւղաւանները եւ թիթեղապատ տնակները վերածեց կազմակերպուած սփիւռքի: Գայուն հպարտութիւնը գերակայութեան եւ գերադասութեան համար չէ, եւ ոչ ալ դիմացինը արհամարհելու եւ ստորնացնելու մէջ: Այս այն հպարտութիւնն է, որ պիտի մղէ մեզ՝ հայրենիք եւ սփիւռք, տեր կանգնելու մեր ազգային արժեքներուն, քաջ գիտնալով որ այս արժեքները շատ քան տուած են համաշխարհային քաղաքակրթութեան: Եւ այս նոյն հպարտութիւնն է, որ Տեղասպանութեան ճանաչումը եւ պահանջատիրութեան գործընթացը պիտի վերածէ զգաստութեան կեանքի մը, ուր Լուրիձայի եւ զոհողութեան տրամադրութիւնները պիտի դառնան տեսլական:

«Գրանդ Տիկը. երկու ազգութեան սիրտը»: Եթէ թուրքին սրտին վրայ կայ Տեղասպանութեան ծանրաբեռնածութիւնը, եւ անպայմանօրէն կայ, նոյնիսկ երբ կը դրժ այդ իրականութիւնը, հայուն սրտին մէջ կայ պահանջատիրութեան հպարտութիւնը: Եւ այս հպարտ սիրտով Գրանդ Տիկը կրցաւ «ճեղքել» թուրքին սիրտը:

Գայն այսօր պէտք ունի «հացի, օդի եւ ջուրի»: Քայց Նաեւ պէտք ունի հպարտութեան: Գայուն հպարտութիւնն է այս, որ պէտք է վերականգնել հարիւրամեակի նախօրեակին, եւ այս հպարտութիւնն է, որ հայը պիտի խթանէ, որպէսզի «շատ գործեր ընէ»:

**ՀՐԱՆԴ ՏԻԿՔ  
ԵՐԿՈՒ ԱՉԳՈՒԹԵԱՆ  
ՍԻՐՏ**

**ԼՈՒՐԻԶԱ  
ՄԱԹՈՍԵԱՆԻ  
ՖԻԼՄԸ**

Հիմնուած Տիկընի հետ անձնական զրոյցներու վրայ

Կազմակերպչական Կիպրոսի Համալսարանի Բրտաղիտական Բաժնին եւ ՀԳԻ Կիպրոսի Հայ Դասի յանձնախումբին կողմէ

Կիպրոսի Համալսարանի հանդիսարանին մէջ երկուշաբթի, 13 Փետրուար 2012, ժամը 20:00

## ԵՐԵՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Բաւական աշխատանք տարած ենք, որպէսզի Վալէթան եւ Երեւանը դառնան քոյր քաղաքներ: Կը սպասենք գործնական միջոցառումներու կարգաւորման»: Վարդգէս Դարբինեանն է, որ 2005 թուականին իր կնոջ՝ Լիլիթին հետ Դայաստանէն հաստատուած է Մալթայի Վալէթա մայրաքաղաքը: «Այս ձեռով դարձեալ մեր երախտագիտութիւնը կը յայտնենք Մալթայի կառավարութեան», շարունակեց ան:

Մալթա: Միջերկրականի վրայ փոքր երկիր մը՝ հազուի 300 քառակուսի քիլոմէթր տարածութեամբ, որ կը բաղկանայ երեք կղզիներով՝ Մալթա, Կոգօ եւ Զամիս: Եղած է կռուախնձոր տարբեր թագաւորութիւններու միջեւ, որոնք օգտագործած են այս կղզին իրենց իշխանութիւնը ամրապնդելու համար: Մալթա կը հանդիսանայ Աստուածաշունչի Պօղոս Առաքեալին կղզին, Նկատի ունենալով, որ անոր նաւը խորտակուեցաւ նոյնինքն այս կղզիի ափերուն, եւ ան բաւական ժամանակ ապրեցաւ հոն: 1814 թուականին Մալթա մտած է անգլիական գաղութատիրութեան տակ եւ միայն 1964-ին դարձած է անկախ պետութիւն: 2004 թուականէն սկսեալ դարձաւ Եւրոպական Միութեան անդամ: Պատմութեան տարբեր ժամանակահատուածներուն ինկած է յունական, փիւնիկեան եւ հռոմէական տիրապետութիւններու եւ ազդեցութիւններու տակ: Մալթիզ լեզուին եւ բառապաշարին մէջ այսօր կան արաբերէնէն մուտք գործած շատ մը բառեր:

Մալթա կը հաշուէ մօտաւորապէս 410 հազար բնակիչ: Կղզիին աշխարհագրական դիրքը զայն դարձուցած է գաղթականներու եւ քաղաքական ապաստանեալներու կեդրոն: Շատ է թիւը ափրիկեան ցամաքամասէն «փախչողներուն», որոնք կայք հաստատած են այս կղզիին վրայ սպասելով աւելի բարուր դասաւորումի մը Եւրոպական այլ երկիրներու ապաստանեալի իրաւունք ստանալու իրենց ճիգերուն մէջ:

Բայց Վարդգէսին երախտագիտութիւնը ունի իր պատմութիւնը, որուն մէջ ես ալ ման եկայ 25 Փետրուարէն 2 Մարտ 2012-ին մէկ շաբթուան աշխատանքային կեցութեանս ընթացքին:

Չայերուն առաջին զանգուածը այս կղզիին վրայ ապաստան գտած է 1374-էն՝ Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ետք: Երկրորդ զանգուածը եկած է 1915-ին Ցեղասպանութեան արհաւիրքէն

ետք: Իսկ երրորդը 1990 թուականներէն սկսեալ՝ Խորհրդային Միութեան փլուզումէն եւ Չայաստանի Հանրապետութեան անկախացումէն ետք:

Պայկական պատմական կոթող պէտք է նկատել Թալիսէ (Սուրբ Լիզա) եկեղեցին, որ կառուցուած է 1620 թուականին հայկական գաղութին կողմէ, որպէս հայկական եկեղեցի: Եկեղեցին այսօր սեփականութիւնն է եւ կը գործածուի կաթոլիկ տեղական համայնքին կողմէ: Չայկական գործօն գաղութը կը հաշուէ մօտաւորապէս 250-300 անդամ, որոնք եկած են մայր հայրենիքէն 1990 թուականներէն սկսեալ: Իսկ նախկին գաղութին բեկորները կը հաշուեն մօտաւորապէս 300 անձ, որոնք գիտնէ միայն, թէ իրենց նախահայրերը հայեր եղած են:

«Ամեն ձեռով կը փորձենք հայ մնալ», Վարդգէսն է դարձեալ գրուցակիցս: Համակարգչային ճարտարագիտութեան մասնագետ է, կը փորձէ իր նոր կեանքը կազմակերպել այս կղզիին վրայ: «Ամիսը անգամ մը երեխաները կը հաւաքենք, որպէսզի հայերէն սորվեցնենք, իսկ գիրքերը կը բերենք Չայաստանէն», կ'ըսէ ան:

Եկեղեցական սուրբ պատարագ չի մատուցուիր հետնողական կերպով: «Ատենը մէկ քահանայ մը կու գայ եւ եկեղեցական արարողութիւն կը կատարենք: Ծրագիր մը ունինք փոքր մատուռ մը կառուցելու, բայց կը սպասենք կառավարութեան վաւերացումին»:

Պայկական գաղութը Մալթայի մէջ պաշտօնապէս ճանչցուած է 2009-ին իբրեւ Չայ-Մալթական Կազմակերպութիւն: Այս Կազմակերպութեան ճամբով աշխատանք կը տարուի հայկական մշակոյթը ծանօթացնել տեղական իրակականութեան մէջ, նաեւ զարգացնել հայ-մալթական յարաբերութիւնները: Այդ յարաբերութեան մէջ կայ երախտագիտութեան արտայայտութիւնը, որ մարմնաւորուած է խաչքարի կոթողով մայրաքաղաքի Վալէթայի կեդրոնական Չէյս-





թիկնկ պարտեզին մէջ տեղադրուած:

Գեղեցիկ է խաչքարը իր հայկական ինքնութեամբ եւ մշակոյթով: Մտայղացումն է Աշոտ եւ Վերա Պոյաճեաններուն, կ'արտայայտէ հայուն երախտագիտութիւնը Մալթայի ժողովուրդին՝ երկու հանգրուաններու ընդմէջէն: 1375-ին եւ 1915-ին հոն ապաստան գտած է հայութիւնը: Շնորհակալութեան եւ երախտագիտութեան զգացումներ են, զորս հայ ժողովուրդը կ'արտայայտէ այս խաչքարով եւ յուշակոթողով՝ նոյնինքն հայուն երկու պատմական ողբերգական ժամանակաշրջաններուն Մալթան ունենալուն իբրեւ ապաստանարան:

Թէւ հպարտ էի խաչքարով եւ անոր տուն տուող երախտագիտական արտայայտութիւններով, բայց կար նաեւ տխրութիւնը այդ հայկական յուշակոթողին պատմական ու ներկայ իրավիճակին առնչութեամբ:

Կրնայի հասկնալ ու տեսնել հայուն ամաչին եւ երկրորդ երախտագիտութեան տուն տուող պատճառները. 1375-ին՝ Կիլիկիոյ թագաւորութեան կործանում եւ 1915-ին Ցեղասպանութիւն եւ արեւմտեան Յայաստանի բռնագրաւում: Բայց ինչպէ՞ս բացատրել երրորդը: Վարդգեսի իսկ զգացումներով Վալէթան եւ Երեւանը ջորջ քաղաքներ հռչակելու փափաքով, որ դրսեւորումը պիտի ըլլայ հոն ապաստան գտած հայկական փոքր զումարտակին երախտագիտութեան տեղական կառավարութեան նկատմամբ:

Բայց չէ՞ որ կայ պատմութեան ընդմէջէն ձեռք բերուած փորձառութիւնը նոյնինքն Մալթայի մէջ: Այն 300 հայկական իրականութիւնը, որ միայն «գիտէ, թէ իր նախահայրերը հայեր եղած են»: Նաեւ կայ Թալիսէտ եկեղեցին, որուն հայկական ինքնութիւնը այսօր

միայն պատմութեան արխիւներուն մէջ յիշատակուած է: Եթէ անաչին եւ երկրորդ երախտագիտութիւնները եւ անոնց տուն տուող պատճառները կամովին չէին, արտաքին ազդակներու վրայ իիմուած էին, բայց ինչպէ՞ս նկարագրել եւ վերլուծել երրորդը: Ներկայ անկախացած հայրենիքն դուրս եկող հայորդիներէ կազմուած նոր սփիւռքահայ իրականութիւնը:

Այս անգամ խօսողը Լիլիթն է: Ան կառչած է իր ինքնութեան եւ հայկական արժանապատուութեան: Բայց կը հաւատայ եւ կը փափաքի, որ Յայաստանի մէջ «քաղաքացիների համար ապահովուեն եւ կիրարկուեն հաւասար օրէնքներ: Այդ դեպքում, մեր կարծիքով, ամէն ինչ լաւ կը լինի»:

Եւ անհրաժեշտ է ոչ միայն հաւատալ, բայց նաեւ աշխատիլ, որպէսզի «ամէն ինչ լաւ լինի»:

Խաչքարը, յուշակոթողը, առաջին, երկրորդ եւ երրորդ երախտագիտութիւնները պիտի արդիւնատրուին երբ հայը հաւատայ, բայց անպայմանօրէն աշխատի, որպէսզի «ամէն ինչ լաւ լինի»:

Բայց մինչ այդ կան հայուն երեք երախտագիտութիւնները, որոնց նոյն կայ պատմութեան փորձառութիւնը, անկէ յառաջացած ցաւը: Եւ այս ցաւն է, որ պիտի յաղթահարենք:

Երեք երախտագիտութիւններուն արգասիքը ցաւը յաղթահարելու մէջ է:

Յայուն երեք երախտագիտութիւնները: Ցաւը յաղթահարել, բայց անպայմանօրէն նորը շինել, որպէսզի «ամէն ինչ լաւ լինի»:




# ՃԱՄԲԱՅ ԵՒ ԱՆ ԱՏՏՂԸ ԳՏՆԵԼՈՒ

*«Օր մը նաւը մզան Յիսուս եւ իր աշակերտներն այ ու ըսաւ անոնց ծովակին միս կողմը անցնինք: Ճամբայ ելան»:  
(Ղուկաս 8.22)*

Աստուածաշունչի խոշորագոյն իրականութիւնը անոր բացատրութեան մէջն է: Բացատրութիւնը, որ իւրաքանչիւր անհատ եւ հաւաքականութիւն կը փորձէ կարգալ եւ հասկնալ Աստուածաշունչի ճշմարտութիւնը, ինք իր իրավիճակին մէջ: Վերջինը Աստուածաշունչը կը դարձնէ ուժեղ եւ չիլինցող իրականութիւն, որ կը խօսի կեանքի ճշմարտութիւններու մասին, ինչ որ զինք կը դարձնէ ամենէն շատ տարածուած գիրքը: Այս հասկացողութեամբ, արժէ նաեւ բացատրել եւ հասկնալ Քրիստոսի եւ աշակերտներուն նաւով ծովակին միս կողմը անցնելու իրականութիւնը:

Պատմութիւնը կը սկսի: Յիսուս աշակերտներուն կ'ըսէ, թէ պտը



եւ նաւով «ծովակին միս կողմը անցնիլ» (Ղուկաս 8.22): Նաւը մտնելով, բոլորն ալ «ճամբայ ելան» (Ղուկաս 8.22): Ճամբորդութիւնը սկսաւ հանդարտ, բայց նաեւ մտան փոթորկոտ շրջանը: «Փոթորիկ մը ելաւ ծովակին վրայ: Նաւը ջուրով կը լեցունէր ու իրենք վտանգի մէջ էին» (Ղուկաս 8.23): Այդ վիճակին մէջ կար աշակերտներուն վախը. «Վարդապետ, վարդապետ, ահա կը կորսուինք» (Ղուկաս 8.24): Յիսուս ելաւ ու «սաստեց հովին ու ջուրերուն խռովութիւնը» (Ղուկաս 8.24) եւ «խաղաղութիւն եղաւ» (Ղուկաս 8.24): Կար նաեւ Յիսուսի ցնահաղատութիւնը, երբ աշակերտներուն ըսաւ. «Ո՛ր է ձեր հաւատքը» (Ղուկաս 8.25): Աշակերտները, որոնք «վախի մէջ ինկած էին» (Ղուկաս 8.25), զարմացան ու ըսին. «Արդեօք ո՛վ է ասիկա» (Ղուկաս 8.25):

Կար նաեւ հովիներուն վախը, երբ «Տերոջը հրեշտակը անոնց վրայ ելաւ» (Ղուկաս 2.9): Ու հրեշտակը խաղաղեցուց զիրենք ըսելով. «Մի վախնաք, վասնզի ահա ես ձեզի մեծ ուրախութեան ատենս մը կու տամ» (Ղուկաս 2.10): Հովիները որոշեցին «մինչեւ Բեթլեհեմ երթալ ու տեսնել թէ ի՞նչ է այս եղած բանը» (Ղուկաս 2.15), եւ գտան աստղը՝ «մտորին մէջ պառկած մանուկը» (Ղուկաս 2.16):

Սուգերուն փորձառութիւնն ալ նոյնանման էր: Անոնք տեսած էին աստղը եւ ճամբայ ելած էին զայն գտնելու: Հոն հանդիպեցան Հերովդեսի, որ «խռոված էր եւ բոլոր երուսաղէմն ալ հետը» (Մատթէոս 2.3): Բայց մոգերը չանհանգստացան եւ շարունակեցին իրենց ճամբան: Աստղը «անոնց առջեւն գնաց, կեցաւ մանուկին եղած տեղին վրայ» (Մատթէոս 2.9):

Այս երեք իրադարձութիւններուն մէջ կայ ճամբորդութիւն մը, որուն մէջ կ'երեւի վախ եւ խռովք՝ փոթորիկէն, հրեշտակէն եւ Հերովդեսէն: Իւրաքանչիւրը, ինք իր պարունակին մէջ, ստեղծեց մտահոգութիւն եւ խռովք, բայց վրայ հասաւ խաղաղութիւնը երբ անոնք դէմ յանդիման եկան հաւատքին ու անոր առաջնորդած աստղին: Եթէ այս խաղաղութիւնը եկաւ մերթ բարկութեամբ եւ զգաստութեամբ, «Ո՛ր է ձեր հաւատքը», բայց նաեւ հաստատումով. «Մի՛ վախնաք» ու փորձութեամբ եւ փորձառութեամբ, խռովքը շրջանցելով եւ ուրիշ ճամբով շարունակելով: Այս երեք տարբեր փորձառութիւններուն մէջ կայ մէկ եւ յստակ իրականութիւն՝ աստղին շնորհած խաղաղութիւնը, որ մեզի կու գայ տարբեր իրավիճակներու եւ պայմաններու մէջէն:

Մեզմէ իւրաքանչիւրին կեանքը ճամբայ ելած կամ ելելու իրականութիւնն է: Իւրաքանչիւրս, իր վիճակին մէջ, ճամբայ ելած կը քալէ կեանքի տարբեր պայմաններուն մէջէն: Իւրաքանչիւրիս փորձառութիւնն ալ կրնայ տարբեր ըլլալ: Կը դիմագրաւենք կորսուելու վտան-

զը, իւրաքանչիւր փորձառութեան ստեղծած վախերը եւ փորձառութիւններու խռովքը:

Այսօր համաշխարհային կարգ ու սարքին մէջ կան հազար ու մէկ մտահոգութիւններ: Այսօր խաղաղութիւնը վտանգուած, վախցած եւ խռոված իրավիճակի մէջ կը գտնուի: Բայց կարելի է խաղաղութիւնը խարսխել մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ, եթէ մեր «ճամբորդութիւններուն» մէջ դասալիք չըլլանք եւ շարունակենք ջանքը հասնելու եւ իւրացնելու Բեթլեհեմի աստղը, հոն ուր բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

Եմմանուէ՛ Աստուած մեզի հետ: Ծամբայ ելած ենք: Արդեօք անկպատակ, թէ՞ նպատակասլաց՝ ծովակին միւս կողմը հասնելու համար աստղին ուղղութեամբ, որ կը շնորհէ խաղաղութիւն եւ վեր է ամեն հաշուառկումներ:

Ծամբայ ելած ենք աստղը գտնելու. հոն ուր Զրիստոս ծնաւ: Իր յայտնութիւնը կը բերէ խաղաղութիւն, որ վեր է ամեն վտանգէ, վախէ եւ փորձութենէ:

## ՃՀՄԱՐԻՏ ՄՇԱԿՈՅԹԸ

Մշակոյթի եւ անոր տարբեր գործօններուն ու յարաբերութիւններուն հասկացողութիւններուն հետ սկսայ ընտելանալ համալսարանի տարիներուն, Գայկազեան համալսարանին մէջ, Պեյրուք: Թէեւ մասնագիտական նիւթերս հետաքրքրական էին, բայց եւ այնպէս նոյնքան հաճելի էին միջմշակութային յարաբերութիւններու եւ սերտօրոյթիւններու դասընթացները, ընդամենը՝ չորս դասանիւթերու վրայ երկարած: Ասիկա անբաժանելի մէկ մասն էր պատկաւոր արդեստից եւ գիտութեանց համալսարանական ծրագիրին, ուստի իւրաքանչիւր ուսանող պէտք էր հետեւէր այս դասընթացին՝ իր մասնագիտութեան առընթեր:

Դասանիւթերը կը սկսէին նախաքրիստոնէական շրջանի դիցաբանական ու արուեստի նիւթերով, բայց աւելի ուշ կը հասնէին առաջին դար եւ միջին շրջաններ մինչեւ ժամանակակից մտաւոր-կրօնական, փիլիսոփայական, գրական եւ ընկերային տարբեր բնագաւառներ: Մէկ կողմէ վեր կ'առնէինք քրիստոնէական աստուածաբանութենէն Աստուածաշունչի որոշ հատուածներ, բայց նաեւ իսլամական ջուրակի մասեր: Երեւոյթներու վերլուծումին ընդմէջէն կը սորվէինք եւ կ'անդրադառնայինք տարբեր հաւաքականութիւններու մտածողութեան, ապրելակերպին ու կենցաղին: Բայց այն, ինչ որ հետաքրքրական կը դարձնէր դասապահերը, այն էր, որ նիւթերու առնչութեամբ կը կատարէինք դասարանային «բաց» վերլուծումներ, որոնք յաճախ կը վերածուէին բանավեճերու՝ ներառելով այդ օրերու մեր երիտասարդական եռանդն ու կորովը, ջբացառելով նաեւ երիտասարդական տաքարիւնութիւնը եւ նոյնքան անհանդուրժողականութիւնը:

Գաւառաբար պէտք էր ընդգծէինք հանդուրժողականութիւնը՝ այդ տարիներուն եւ այդ դասընթացներուն ընդմէջէն: Գայկազեանի մէջ կար հայը՝ իր կուսակցական-միութենական եւ եկեղեցական-համայնքային տարբերութիւններով. այս շեշտուած իրողութիւն էր հայկական համալսարանի միջավայրին մէջ: Բայց կար նաեւ ոչ հայը՝ իր քրիստոնէայ եւ իսլամ յարանուանական պատկանելիութեամբ: Անոր վրայ պիտի աւելնային կուսակցական ու քաղաքական հակումները, որոնք բազմազան էին: Կային նաեւ պաղեստինեան եւ այլ քաղաքացիներու առկայութիւնը: Այս բոլորը կը կազմէին մէկ մեծ խճանկար մը: Թէեւ 70-80-ական թուականներուն լիբանանեան պատերազմի թոհ ու բոհի տարիներն էին, բայց եւ այնպէս բոլորս այդ տարբերութիւններով կ'ապրէինք միասին համալսարանի շրջափակին մէջ, անկախ դուրսի եւ անոր քառսի տարբեր իրավիճակներէն ու իրականութիւններէն:

Ապրեցանք միասին տարբեր մտածողություններով, ապրելակերպերով և կենցաղներով: Սորվեցանք, թե ինչպե՛ս կրնանք ստանալ տեղեկություն, բայց նաեւ փոխանցել զայն: Ականատես եղանք տարբեր կեցուածքներու, անոնց հոլովոյթներուն, ենթադրութիւններ կատարեցինք ու տարբեր տեսակի փորձառութիւններ ապրեցանք: Այս մշակոյթի դասապահներուն ընթացքին եւ անոր վերլուծումներուն ընդմէջէն ստեղծուեցաւ կառոյց մը, ուր իւրաքանչիւր կեցուածք ու միտք դրուեցաւ հաւաքական արժէքի պարունակին մէջ, որուն միջոցով իրարու կը կամրջուէին փոխհասկացողութիւններն ու հանդուրժողականութիւնը:

Այս մշակութային երկխօսութեան եւ կամրջումին ընդմէջէն թեւ դրուատիքի արժանացաւ իմս, բայց նաեւ կարելիութիւն ստեղծուեցաւ անցնելու անկէ անդին ու տեսնելու դիմացիկինը՝ Ուրիշը, որ նաեւ արժէք է, եւ զոր պէտք է հասկնալ: Ուրիշը տեսնելով՝ սորվեցանք հաղորդակցութիւնը, անոր ընդմէջէն՝ Ուրիշին պայքարը, յոյզերը, յոյսերը, եւ միտքերը:



Եւ այդ Ուրիշը հասկնալու եւ անոր հետ ապրելու երթը կը փորձեն շարունակել եւ ապրիլ մինչեւ օրս: Արաքական Շոցի մէջ անցուցած ասպարեզային իմ կեանքս պէտք է նկատուի՝ աւելի քան հարիւր տարբեր մշակոյթ, լեզու եւ ինքնութիւն համախմբած դաշտ մը: Այդ բոլորին հետ պէտք է ստեղծել մշակութային յարաբերութիւններու եւ հասկացողութիւններու համոյթ մը, որպէսզի ստեղծուի մարդկային պիտանի պատմութիւնը:

Բռնագրաւուած Կիպրոսի շրջանի թրքական Աիկոսիոյ մամուլէն եկաւ լուրը: Նոյն շրջանի Մերձաւոր Արեւելք համալսարանը որոշած է Աիկոսիոյ Աք. Աստուածածին հայկական եկեղեցին վերածել ու գործածել իբրեւ մշակոյթի կեդրոն:

Աք. Աստուածածին եկեղեցին հիմնուած է 1308 թուականին: 1504-ին սկսեալ եկեղեցին դարձած է հայութեան սեփականութիւնը եւ մինչեւ 1963 եղած է հայ համայնքի հոգեւոր ու ազգային ամրոցը՝ իր կողքին ունենալով Մելքոնեան-Ուզունեան նախակրթարանը եւ Թեղասպանութեան յուշակոթոնը: Հայը ապրեցաւ, սորվեցաւ եւ սորվեցուց այս շրջանին մէջ մինչեւ 1963, երբ յունական եւ թրքական քաղաքները պատճառ եղան զաղութներու տեղափոխութեան: Իսկ 1974-ի թրքական ներխուժումով բռնագրաւումի տակ մնացին հայկական եկեղեցին ու դպրոցը, եւ այդպէս է մինչեւ օրս:

Ակատի ունենալով եկեղեցւոյ պատմական ժառանգութիւնը, Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնն ու անոր յարակից միութիւններ 2009 թուականին ձեռնարկեցին եկեղեցական կառոյցի վերաշինութեան եւ բարեկարգման՝ նկատի ունենալով երկար տարիներու վրայ երկարած անոր լքեալ ու փլատակ վիճակը: Եւ այսօր վերանորոգուած հայկական եկեղեցին որոշուած է տրամադրել իբրեւ մշակութային կեդրոն գործածուելու համար:

Պատմութիւնը դարձեալ ինքզինք կը կրկնէ:

Եթէ բռնագրաւուած է շրջանը, բռնագրաւողը կը վարուի այնպէս, ինչպէս որ կ'ուզէ եւ կը փափաքի: Թերեւս նոյնիսկ պահ մը մենք զմեզ մխիթարենք «երկու չարեաց փոքրագոյնը» հասկացողութեամբ եւ փորձենք տեսնել, թէ աւելի լաւ է, որ դառնայ մշակոյթի կեդրոն, քան... Վերջապէս, այս վերջինը փորձուած ու ապրուած իրականութիւն է արեւմտահայաստանի եւ պատմական Կիլիկիոյ շատ մը սրբատեղիներու համար:

Մերձաւոր Արեւելքի համալսարանի ինստիտուտի պարիզ Իրֆան Կիւսեւի կը շարունակե՛ք՝ ըսելով. «Մենք որոշեցինք եկեղեցին դարձնել մշակոյթի կեդրոն, ուր շատ մը մշակութային ձեռնարկներու միջոցով շրջանին պիտի տանք տարբեր դիմագիծ»:

Եթէ բռնագրաւողը իր բռնագրաւած կառոյցին հետ կրնայ վար-





ուիլ այնպես, ինչպես որ կ'ուզէ, կատոյցին իսկական սեփականատէրը, թէկուզ հեռուէն, մէկ հիմնական հարցում մը կ'ուղղէ. «Ի՞նչ տեսակ մշակոյթ է դիմագիծ պիտի տաք այս շրջանին»:

Մշակոյթ մը, որ ճշմարիտ է՝ հիմնուած փոխյարաբերութիւններու եւ հասկացողութիւններու յատակագիծին վրայ, եւ ուր կարելի կ'ըլլայ տեսնել թեզմէ գատ նաեւ Ուրիշը՝ անոր տազնապը, կենցաղը ու տակաւին:

Աննա Քաթրինա՝ իտալացի ընկերամշակութային յարաբերութիւններու մասնագետը, մշակոյթը կը նմանցնէ սառցալեռան: Ան կ'ըսէ. «Ճիշդ այնպէս, ինչպէս կայ սառցալեռան վերի գագաթը, որ կ'երեւի, նոյնպէս մշակոյթի երեւելի մասերը կարելի է տեսնել, ինչպէս դրսեւորումը, անուն, արտաքին... Բայց կայ սառցալեռան ընդ-յատակեայ մասը, որ չ'երեւիր: Նոյնպէս կայ մշակոյթին չերեցող բաժինը՝ արժեքը, հաւատամքը, սովորութիւնը, փորձառութիւնը, տագնապը, ներշնչումը, որոնք պետք է պեղել, ապրիլ, սորվիլ ու հասկնալ, թէ ի՞նչ են անոնք եւ ինչպէ՞ս կ'ըլլան»: Աննա կ'էզրակացնէ. «Այս գործընթացն է, որ մեզի կը սորվցնէ աւելի ատակ ըլլալ համաշխարհային ու համամարդկային իրավիճակներու եւ կանխել անհասկացողութիւններն ու այն բոլորը, որ կը խաթարէ յարաբերութիւնները»:

Խօսք մը ես՝ Իրֆանին. «Ճշմարիտ մշակոյթն է, որ կը գոյատեւէ: Եթէ մշակոյթին երեւցած մասը յստակ է, այս պարագային եկեղեցին, շէնքը եւ անուըն, բայց տակաւին կայ սառցալեռան չերեցող մասը, այսինքն հայ եկեղեցու հայկական մշակոյթի չերեցած մասը: Պետք է օգնէք ձեր աշակերտներուն եւ դուրս բերէք այս չերեցած մասը՝ Ուրիշը, եւ անոնց սորվցնէք նոյնինքն այս եկեղեցու՝ իմա ձեր մշակութային կեդրոնին, մշակոյթը եւ անոր կորիզը եղող հաւատքը: Յայուն հաւատքը, որ տարիներու վրայ երկարած, ամուր կեցած ու գոյատեւած էր, նոյնիսկ երբ ան ահաբեկուած ու ցեղասպանուած է: Եւ հարց տաք, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս եղաւ այդ մէկը: Եւ այս բոլորին հետ հաղորդակցելով է, որ պիտի կարենք տեսնել իրականութիւնը եւ ընդունիլ ձեր պատմութեան մեծ սխալները»:

«Եւ վերջապէս, մշակոյթի կեդրոնը կը դառնայ ճշմարիտ, երբ ան կ'օժանդակէ պատմութեան շարունակականութեան, եւ ոչ նոյնինքն պատմութեան կրկնութեան: Յայուն հաւատքին կռուանը կը կայանայ նոյնինքն այս իրականութեան մէջ, որովհետեւ ան՝ հայը, հաւատաց իր հաւատքին ու մշակոյթին շարունակականութեան ու տակաւին կը հաւատայ:

Եթէ Սք. Աստուածածին եկեղեցին պիտի վերածէ մշակոյթի կեդրոնի, ջատագովը ղեկը զէթ ձեր աշակերտներուն սորվցնելու ճշմարիտ մշակոյթը եւ անպայման կերտեցէք ճշմարիտ դիմագիծը:

*«Առաջնորդութիւնը գնահիշներու յարակացումն է, արժէքներու կազմաւորում եւ միախառնում, նաև մթնոլորտի եւ կարելիութիւններու սրբոյժում, որոնց միջոցով կարելի կ'ըլլայ յատուցիապաք արշահանալ»:*

*Ռիչըրդ Կ Էնկըլ*

Առաջնորդութիւնը միշտ ալ անկայ եղած է մարդկային պատմութեան մէջ եւ անոր բոլոր հոլովոյթներուն ընթացքին: Քաղաքական, ընկերային, կրօնական, տնտեսական թէ մշակութային քննադատանքներու մէջ առաջնորդութիւնը միշտ ալ կերտած է անհատական թէ հասարակական ու ազգային կեանքերու զարգացումները: Յաւաքականութիւն, երկիր թէ պետականութիւն, միշտ ալ հետամուտ եղած են առաջնորդներու եւ առաջնորդութեան մտքին ու մտայղացումին՝ տեսնելու եւ կերտելու համար կեանքի զարգացումը իր տարբեր ընտրութեաններով:

Միուլա, որ առաջնորդութեան եւ տնտեսական բարոյագիտութեան դասախօս է միջազգային շատ մը համալսարաններու մէջ կ'ըսէ. «Առաջնորդութիւնը անծի ու դիրքի հանգամանք չէ: Ան բարոյական-կենցաղավարական մարդկային յարաբերութիւններու համոյթ մըն է, հիմնուած փոխադարձ վստահութեան, պարտաւորութեան, նուիրածութեան, զգացումի եւ հասարակաց տեսիլքի վրայ, ձգտելով լաւի ու բարիին»:

Այս իմաստով յստակ է, թէ առաջնորդութեան մէջ մէկ կողմէ կայ ծրագրում եւ պատրաստակամութիւն, իսկ միւս կողմէ արժեքներու ստեղծում եւ յստակացում՝ կերտելու համար համակարգ մը, որ պիտանի է: Յամակարգ մը, որ պետք է ներառել տարբեր զգացում, բայց նաեւ խմբաւորել միտքեր հասարակ յայտարարի մը տակ:

Յայկական իրականութեան համար միշտ ալ առաջնորդութիւնը իրամայական հարց եղած է: Սկիւղեան իրականութիւնը, Տեղապատմութենէն ետք ստեղծուած պարտադրուած գաղութներու իրավիճակով, զուրկ պատմական Յայաստանի հարագատ հողին վրայ ապրելու իրաւունքէն: Յայրենի պետականութիւնը իր անկախացած ներկայ իրավիճակին մէջ սկսաւ սեփական առաջնորդութիւն ունենալ, գիտակցելու եւ կերտել: Եթէ սփիւղեան իրականութեան մէջ իրաքանչիւր գաղութ կը փորձէ կազմակերպել իր կրօնական, ազգային, ընկերային եւ քաղաքացիական առաջնորդութիւնը՝ մեկնելով

հազարական գործոցը, մշակութային տուեալները, ինքնութեան պահպանումը, գաղութային դիրքն ու գործոցը ու տակաւին քաղաքական-պատմական կարեւորութիւնը:

Այս իմաստով արժէ վերանայիլ հայկական իրականութեան, նոր հանգրուանի դիմագրաւած մարտահրաւերները եւ անոր դիմաց մեր մշակած առաջնորդութեան ռազմավարութիւնը: Եթէ սփիւռքեան մեր իրավիճակները այսօր, անելի քան երբեք, մեզ կը դնեն իրարու հետ շաղկապուած եւ առնչուած շատ մը օրակարգերու հետ (ազգային-պահանջատիրական, քաղաքական, մշակութային), նոյնը կարելի է ըսել հայրենի իրավիճակի հիմնահարցերուն պարագային: Եթէ նոր հանգրուանի մը սեմին եւք եւ Տեղասպանութեան հարիւրամեակի խորքը եւ պարտաւորութիւնները զգաստութեան կանչելու հանգրուան մըն են, այս պիտի ենթադրէր, որ մենք պետք ունինք առաջնորդութեան մտքին ու ուժին, որ կու գայ ներսէն՝ հայկական իրավիճակէն, ինչ որ կարելի պիտի ընէ ստեղծել նոր սիրտ մը, որ ներազգային է, որուն հմայքը չի կորսուիր եւ որուն ուժը չի տկարանար: Ներքին առաջնորդութիւնն է, որ պիտի կարենայ վերայտակացնել հայուն տեսիլքը, վերախմբաւորել ազգային արժէքը եւ վերստեղծել համահայկական մթնոլորտ-հասարակ յայտարարը, որպէսզի հայկական գործոցը յառաջխաղացք արձանագրէ:

Ներքին առաջնորդութիւնը եւ անոր նոր սիրտը: Հայուն ազգային-պահանջատիրական դարաշրջանին համար ամուր սկզբնաւորութիւնը:

## ՆԻ ԵՈՐՔԷՆ ԲԱՅԻԿ. «ՀԻՄԱ ՏԱՐՔԵՐ ԱՆՁ ՄԸՆ ԵՄ»

«Մեւ, ճերմակ, կարմիր, դեղին՝ խտրականութիւն մեա չունի»: Կիրակնօրեայ վարժարանին մէջ մեր սորված երգերն ընկուն տողերն են ասոնք: Այս երգին ընդմէջէն կը սորվէինք, որ Յիսուսի սերը անխտիր բոլոր ցեղերուն համար է, եւ որ բոլորը կը միանան նոյն այդ սիրոյ հասկացողութեամբ, առանց խտրականութեան: Այդ օրէն սկսեալ սորված էինք մարդը տեսնել ո՛չ թէ իր գոյնով կամ արտաքինով, այլ իր անձին ու նկարագիրին ընդմէջէն:

Նիւ Եորք քաղաքը լաւագոյն օրինակներն է վերոյիշեալ տրամադրութեամբ ապրող այն իրականութեան, ուր սեւը, ճերմակը, կարմիրը, դեղինը միասնաբար կը գոյատեւեն մէկ երդիքի տակ: Այս երդիքը շախարհի ամէնէն աշխուժ քաղաքներէն մէկն է՝ Նիւ Եորքը, ուր քաղաքակրթութիւնները կը միանան, չեմ գիտեր, եթէ անպայման նորը շինելու համար, բայց ստեղծելու համար շատ հրապուրիչ եւ հմայիչ մթնոլորտ մը:

Բայց եւ այնպէս այդ հրապուրիչ ու հմայիչ մթնոլորտին մէջ կայ նաեւ վախը, վտանգը եւ, անելին՝ կորսուելու հաւանականութիւնը, եթէ ոչ ֆիզիքապէս, բայց գէթ անհատականութեամբ, նկարագիրով եւ ինքնութեամբ:

Կիրակի, 22 Յունուար 2012-ին կը քարոզէի Նիւ Եորքի Հայ Աւետարանական եկեղեցոյ մէջ: Մեկնելով նոյն տրամաբանութենէն, որ գոյներն ու քաղաքակրթութիւնները կը միանան, նաեւ կը միանան լեզուները, ու ես կը ստիպուիմ քարոզել թէ՛ հայերէն եւ թէ՛ անգլերէն լեզուներով: Բայց պետք է նաեւ երկու լեզուներով ալ միտքերը կամրջել, որպէսզի կարելի ըլլայ ըստ պատշաճի պատգամը հասցնել ժողովուրդին:

Իրաքանչիւր քարոզի ժամանակ կայ փորձառութիւն մը, որ կու գայ ժողովուրդին նայուածքներէն: Ճիշդ է, որ անոնք քեզ կը դիտեն ու կը լսեն, բայց նաեւ դուն կը տեսնես աչքերը, դէմքի արտայայտութիւնները, որոնք «կը խօսին» քեզի հետ: Կրնայ գալ պահը, երբ կեդրոնացումը կը ծանրանայ դէմքերուն ու նայուածքներուն վրայ ու կրնաս միտքերդ ու զարգացող խօսքերդ իրարու խառնել ու շուարիլ:

Բայց այդ օրը նայուածքներուն մէջ հատ մը շատ իւրայատուկ թուեցաւ ինձի: Անոր աչքերուն մէջ տեսայ կարօտ, բայց նաեւ այդ կարօտին առնչուած պատմութիւն: Յաղթանդամ, միջին տարիքի անձ մըն էր, եւ կը զգայի, որ ունէր բան մը անելի սորվելու ծարաւ, բայց նաեւ հաղորդակցութեան անհրաժեշտութիւն: Յստակ էր, թէ

միջինարեւելեան կապուածութիւն մը կար իր աչքերուն մէջ, եւ կ'ուզէր այդ մէկը փոխանցել ինծի ու բաժնեկցիլ հետս:

Վիզէնը պատմեց իր պատմութիւնը:

Էշրեֆիի մեր թաղամասի տղոցմէ եղած է: Սկսայ անդրադառնալ, որ ամբողջ մանկութիւնս եւ պատանեկութիւնս մեծցած եմ շրջանի մը մէջ, ուր հայկականօրէն շատ բան տեսած ու տուած է: 12 տարեկանի՝ 1972-ին, եկած է Նիւ Եորը՝ լիբանանեան քաղաքացիական կռիւներէն առաջ: 1975-ին ուզած է վերադառնալ Պէյրութ, բայց պատերազմին պատճառով չէ կրցած: Վիզէն շարունակած է իր կեանքը պատանեկութենէ մինչեւ երիտասարդութիւն եւ ներկայ չափահասութիւն՝ ապրելով այս շատ հմայիչ քաղաքին մէջ: Բայց այս քաղաքին հմայքը զինք մղած է կեանքի պայքար մղելու տարբեր բնագաւառներու մէջ: «Ռուսեցայ շատ փորձառութիւններ ու դէմ յանդիման գտնուեցայ բազմաթիւ փորձութիւններու: Եւ այս բոլորին ընթացքին պէտք էր ինքզինքս պաշտպանելի շատ մը փողոցային հրոսախումբերէն, որոնք ամէն ձեռով նեղութիւն կու տային ինծի»: Արդարեւ, փողոցային կռիւի մը ընթացքին դանակի զօրաւոր հարուած մը ստացած է ձախ ոտքէն եւ հոն Նշմարելի մնացած է վերջին սպիւն:

Վիզէն բաւական ժամանակ մնացած է բանտին մէջ, իսկ ներկայիս թէեւ ազատ է, սակայն հսկողութեան տակ: «Պէյրութ եղած շրջանիս Էշրեֆիի Զաթալպաշեան վարժարանը յաճախեցի», շարունակեց Վիզէնը: Զաթալպաշեան վարժարանէն իրեն փոխանցուած է հայախօսութիւնը եւ ազգային ինքնութեան նկատմամբ հաւատքը: «Արարբերենով միայն անունս կրնամ գրել», ժպտալով ըսաւ Վիզէն:

Մասնագիտութիւն կամ արհեստ չունի, բայց կեանքին մէջ ամէն տեսակ աշխատանք կատարած է:

Այս բոլորէն գատ, Վիզէնի աչքերուն մէջ կայ Պէյրութի, Էշրեֆիի ու իր դպրոցին կարօտը: «Քանի մը տարի առաջ ազգականներս Պէյրութ գացին: Իրենցմէ խնդրեցի, որ մեր դպրոցին եւ թաղամասին բոլոր նկարները բերեն»: Վիզէնի համար մանկութեան այդ օրերը եղած են «արմատ ու հիմք», որուն վրայ եթէ չէ կրցած կեանք կառուցել, բայց իրեն համար միշտ ալ հարազատ կը մնան այդ բոլորը:

Վիզէն չկրցաւ բացատրել, թէ ինչո՞ւ ապրած է այդ կեանքը: «Չեմ գիտեր ինչո՞ւ ըրի»: Բայց մէկ բան յստակ է իրեն համար, այն, որ՝ «հիմա տարբեր անձ մըն եմ»:

Իսկ տարբերութիւնը:

«Երկու տարի առաջ եկեղեցոյ դրան քով կը կանգնէի, բայց ներս չէի մտնէր: Մայրս պաշտամունքէն կ'ելլէր, եւ զինք տուն կը տանէր», իսկ հիմա Վիզէն եկեղեցոյ դռնէն ներս մտած է: «Կը սիրեմ եկեղեցին, պաշտամունքը եւ ժողովուրդը». Վիզէն է ըսողը:

Պրածէշտ պիտի տայի Վիզէնի եւ իր ապրած երկար կեանքի պատմութեան: «Բայց այնպէս ըրէ, որ եկեղեցոյ դռնէն դուրս չմնաս այլեւս» նախադասութիւնը եղաւ իմ բաժանումի խօսքս՝ իբրեւ քաջակերտութիւն ու խթան Վիզէնի, «տարբեր անձի մը» նոր կեանքի պատմութեան:

Վիզէն ու անոր պատմութիւնը մէկ օղակն է մեր հայկական իրաւուն շողկապուած իրական կեանքի փորձառութիւններուն, զորս կը տեսնենք հոս թէ հոն, քիչ մը ամէն տեղ: Մեր հայկական իրաքանիւր օղակ փորձառութիւն մըն է, որ ցոյց կու տայ մեր ազգային կեանքի «գունագեղ» եւ «այլատեսակ» ապրող իրականութիւնները, որոնք քով-քովի գալով կը կազմեն մեծ խճանկար մը: Խճանկար, որ մեզ դէմ յանդիման կը դնէ մեր տարբեր իրավիճակներու իսկական պատկերին, եւ որ տեղ մը մեզ կը զգաստացնէ փորձառութիւններուն եւ անոնց որպէս հետեանք արձանագրուելիք դէպքերուն գիտակցելու անհրաժեշտութեան:

Այսօր աշխարհին մէջ շատ են վիզէնները, որոնք հայ եկեղեցիներէն, ազգային կառոյցներէն եւ կազմակերպութիւններու դռներէն դուրս կանգնած են: Դո՛ւ՛ դուրսը, կայ փորձութիւններու ու փորձառութիւններու ահաւոր տարափոք, որ կը զգլխէ, կը տակի մեզ, նաեւ ամէն արժէք ու ինքնութիւն: Այս հոսանքին մէջ կը կորսուի նաեւ «տարբեր անձ մը» ըլլալու հաւանականութիւնը:

Մեր ազգային-եկեղեցական կեանքի մեծ մարտահրաւերներէն է ստիկա, հայ անհատը մեր կառոյցներուն դռներէն ներս պահելը: Վիզէն գիտէ, թէ «հիմա տարբեր անձ մըն է», ուստի չ'ուզէր այդ դռնէն դուրս գալ նորէն:

Եթէ պիտի պահենք մեր ազգային կառոյցները՝ ի զին ամէն զոհողութեան, պէտք է յիշենք, որ փորձառութիւնը ցոյց տուած է, թէ նոյն կիսըն դռնէն ներս տարբեր հայ մը կրնանք ըլլալ:

Եւ տարբեր հայ կերտելը համահայկական մեծ ու հիմնական սուսքելութիւն է:

## Ո՛Վ ԸՍՄԷ, Ո՛ՐՈՒՆ ԸՍՄԷ ԵՒ Ե՛ՐԲ ԸՍՄԷ

Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը եղաւ երկրորդ տունս: Աւելի ճիշդ՝ ընտանեկան յարկ, քանի ինձ միայն կրթական ծրագրի մը ուսուցումը չէր որ ըստ պատշաճի կը տնօրինուէր, այլ դաստիարակութիւն, որ կը կերտէր մեր ազգային քրիստոնէական եւ ընկերային նկարագիրով, ջամբելով հայեցի եւ հոգեւոր գիտակցութիւն դրսեւորուած տարբեր երեւոյթներով:

Մեր դպրոցը, որ սկսած էր գործելու տարագրութենէն ետք ապաստան գտած հայ ժողովուրդի հիւղաւաններու մթնոլորտին մէջ, բայց երբեք ինձ չմնալով: Այսօր, արդէն ան հասաւ ինձնսուն տարուան, իր ծառայութեան առաքելութեան մէջ: Երկար տարիներու այս ծառայութիւնը այնքան ալ ինքնազուտ էր: Դպրոցը ունեցաւ զարգացումներու տարբեր հանգրուաններ, ունեցաւ դժուար եւ փոթորկալից շրջաններ, որոնք իրենց անդրադարձը ունեցան կրթական այս հաստատութեան ինքնութեան եւ առաքելութեան գործունէրութեան վրայ: Բայց Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը կրցաւ ճեղքել բոլոր իրավիճակները, որովհետեւ համոզուած էր իր առաքելութեան:

Այդ առաքելութեան միտքը կերտողները, պատմութեան բոլոր ժամանակահատուածներուն ընթացքին, մնացին հաստատ եւ անփոփոխ, քանի կար հայ նոր սերունդի դաստիարակութիւնը, որ վեր էր ամեն հաշուառկումէ: Եթէ Էշրեֆիի Հայ Աւետարանական եկեղեցին եւ դպրոցի հոգաբարձական տարբեր կազմերը հովանաւորեցին այս հաստատութիւնը, բայց անպայմանօրէն իւրաքանչիւր տնօրէն եւ ուսուցիչ-դաստիարակ, իրենց կարելու բաժինը բերին դպրոցին, իւրաքանչիւր հայ սերունդի մատուցած հոգիներուն եւ միտքերուն զարգացման:

Այս դպրոցին մէջ իմ կեանքս տեսց աւելի քան 14 տարի որպէս աշակերտ եւ երկու տարի որպէս ուսուցիչ եւ 15 տարի որպէս հոգաբարձու: Անպայմանօրէն ընտանեկան յարկ մըն էր, որովհետեւ ինձ կեանք մըն էր որ ապրեցայ, տարբեր տարիքի եւ մթնոլորտի մէջ, ուր իրար շարժապարտած, ստեղծեցին մէկ ազգային-քրիստոնէական ինքնութիւն եւ անոր համար ապրելու ու ծառայելու կոչում: Տասնչորս տարիներու աշակերտական կեանքի մէջ կայ երախտագիտական եւ շնորհակալական արտայայտութիւն իւրաքանչիւր տնօրէնի եւ դաստիարակ ուսուցիչ-ուսուցչուհիի:

Յունուար 2012, Լոս Անճելէս. պիտի քարոզեմ Կլետիլի Հայ Աւե-



Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի  
նախակրթարանի ամալերջի հանդէս (1969 թ.):

Ուսուցչական կազմ. 3-րդ շարք, ծախեն աջ՝  
Օրդ. Ալիս Ալպարեան եւ Օրդ. Արփի Կարպուշեան:  
2-րդ շարք, ծախեն աջ՝ Տիկ. Մարի Իլանճեան:  
Առաջին շարք, ծախեն աջ՝ Պրն. Սայման Աուպատի,  
Տիկ. Էօճեհի Տեր Պետրոսեան, Տիկ. Լուսածին Թագաւորեան,  
Պրն. Յակոբ Լուսարարեան (տնօրէն), Օրդ. Սոնա Նաշեան,  
Պրն. Արամ Պաշայեան եւ Պրն. Անդրանիկ Փաթաթեան:

տարանական եկեղեցիի Կիրակի օրուայ պաշտամունքին: Եկեղեցիի հովիւը Կեր. Դանիէլ Ալպարեանն է, որուն հետ Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի մէջ եղանք դասընկերներ աւելի քան տասնմէկ տարի: 1975-ին դպրոցը աւարտել է ետք կը շարունակենք մնալ լաւ բարեկամներ եւ շարունակեցինք հաղորդակցիլ մինչեւ այսօր, անկախ աշխարհագրական հեռու եւ տարբեր վիճակներու մէջ լլլալէ: Եւ այս մեր դպրոցի կերտած արժէքներն է, որ կարելու գրասկան մըն է մարդկային մեր կեանքերուն հաղորդականութեան համար:

Դանիէլին գրասենեակին մէջ կայ իր հարազատներուն նկարներ, բոլորն ալ ինձի ծանօթ: Իր հորաքոյրը՝ Օրդ. Ալիս Ալպարեան, որ

աւելի քան 32 տարիներ պաշտօնավարած Է Յայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին մէջ, որպէս կրօնի դաստիարակ, նաեւ մեր ուսուցչուհին: Դանիէլին հարցումս չուշացաւ. «ԻՆչպէս է Օրդ. Ալպարեանը»: «Անցեալ Մեպտեմբերին միացաւ իր Փրկիչին», եղաւ պատասխանը:

Չէի լսած Օրդ. Ալպարեանի մահուան լուրը: Անոր աւանդը ապրած էի երկար տարիներ, որպէս աշակերտ: Շարունակեցի դիտել Դանիէլի գրասեղանի վրայ գտնուող Օրդ. Ալպարեանի նկարը, որ իր վերջին նկարներէն մէկն էր: Ժամանակը եւ տարիները իրենց հետքը եւ դրոշմը կը ձգէն իւրաքանչիւրիս կեանքին վրայ: Իր սպիտակագած մազերը եւ դեմքին վրայ երեցող տարիքի ազդանշանները զիս տարին անցեալ՝ բաւական հեռու: Յոն, ուր Օրդ. Ալպարեան մեր պատանի միտքերուն եւ սիրտերուն մէջ կը դարբներ Յիսուսի սերը: Իրեն համար ուսուցչութիւնը կեանք էր. իւրաքանչիւրս իր մէկ սիրելի զաւակը, ուր կոչում կը սեպէր Զրիստոսի ինքնութիւնը սրսկել:

Սբ. Գիրքի իւրաքանչիւր գրաւոր-ընկուածեան կար Օրդ. Ալպարեանի երեք հարցումները. «Ո՞վ ըսաւ, որո՞ն ըսաւ, ե՞րբ ըսաւ»: Աստուածաշունչէն մեր ամած դրուագները վեր կ'առնէր եւ կ'ուզէր, որ մենք պատասխանէինք այս երեք հարցումներուն: Եթէ այդ օրերուն չկրցանք անդրադառնալ Օրդ. Ալպարեանի հարցումներուն իրականութեան մեր կեանքերուն համար, բայց անպայմանօրէն այսօր կը տեսնեք, թէ ինչպէս իւրաքանչիւր գրաւոր իր իւրաքանչիւր հարցումին պատասխանելով ջրիստոնեական ինքնութիւնը սկսաւ արմատանալ մեր կեանքերուն մէջ: Այսօր աւելի քան երբեք կը տեսնեք, թէ ինչպէս Օրդ. Ալպարեան այդ օրերէն սկսեալ մեր կեանքերը կը փորձէր հաշտեցնել Զրիստոսի իրականութեան հետ:

Բայց այդ օր, Լոս Անճելըսի Դանիէլի գրասենեակին մէջ, կարելի չէր մնալ անցեալի այդ յուշերուն մէջ: Պետք էր շարունակել: Դարձեալ նայեցայ Օրդ. Ալպարեանի նկարին, երախտագիտական ոգիով, յուզուած, բայց նաեւ քաջալերուած եւ ըսի իրեն. «Պիտի շարունակեմք»:

Այո՛. կայ աւանդը՝ ազգային-ջրիստոնեական ընտրագրումով, որ պիտի շարունակենք, որովհետեւ հայը չի կրնար իր ազգային-ջրիստոնեական նկարագիրը սակարկել: Ու տակաւին կայ հայ դպրոցին ու հայ դաստիարակին հիմնական դերը մեր նոր սերունդին դաստիարակութեան մէջ: Զայ դպրոցը տակաւին ընտանեկան յարկն է, ուր իւրաքանչիւր հայորդի որպէս զաւակ կը պատրաստուի կեանքին եւ հայ ժողովուրդին ու մարդկութեան ծառայութեան համար:

Օրդ. Ալպարեան միացաւ իր շատ սիրելի Փրկիչին, որուն համար իր ամբողջ կեանքը նուիրեց եւ իր երեք հարցումները, երկար տարի-

ներու վրայ երկարած, եղան մէկ արժեքի համար, որ սերմանեց մեր պատանի հոգիներուն մէջ:

Կայ նաեւ մէկ իրականութիւն մը եւս Օրդ. Ալպարեան: Եթէ դպրոցական տարիներուն միշտ չէ որ ճիշդ կը պատասխանէինք թու հարցումներուդ, այսօր, աւելի քան երբեք, ինքնավստահ եւք մեր պատասխաններուն մէջ.

- Ո՞վ ըսաւ, անպայմանօրէն Զրիստոս՝ ըու միջոցովդ:

- Որո՞ն ըսաւ, իւրաքանչիւր հայ պատանիի:

- Ե՞րբ ըսաւ, երբ մենք նոր հասակ կ'առնէինք այս կեանքին մէջ:

Մեր այս պատասխանները մեր երախտագիտութիւնն են քեզի եւ յոյր նուիրեալներուն, որովհետեւ հայ եւ ջրիստոնեայ մեծաւն ու սպիրիտ արժեք է: Եւ այս է հայ դպրոցին եւ ուսուցչին առաքելութիւնը, որ կարելի չէ փոխարինել: Օրդ. Ալիս Ալպարեան կը պատկանի այն նուիրեալներու խումբին, որ «չանքի մէջ թուլասիրտ չէղան», որպէսզի հայ պատանին «հոգիով բորբոքի» եւ «Տերոջը ծառայէ»: Կանոք արժեքներ են, որոնք կարելի չէ սակարկել:

# ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՆԵՂ ԴՌՒՆԸ

Մակարայ վանք: Կիրակի, 13 Մայիս 2012: Անիվա երրորդ անգամն է, որ կը մասնակցիմ Մակարայ վանքի ուխտագնացութեան՝ միանալով կիպրահայ իմ բարեկամներու: Իւրաքանչիւր անգամ աւելիով կը հիանամ վանքի գեղատեսիլ վայրին ու բարձր բլուրին վրայէն՝ անոր դիմաց բացուող Զայրիկիայի ծովափին, որ միջերկրականեան գեղեցիկ շրջան մըն է, ուր կը զգաս շրջանի ընդհանուր հրապուրիչ մթնոլորտը:

Բայց ամէն անգամ կ'ապրիմ նաեւ մտահոգութիւնը՝ տեսնելով վանքը քիչ մը աւելի փլած, բայց տակաւին հաստատ իր պատմական տուեալներով եւ մուտքի ցուցատախտակին վրայ մեծ տառերով գրուած «հայկական վանք», թէկուզ ոչ հայերէն գրութեամբ:

Բնութեան գեղեցկութեան մէջ Մակարայ վանքի բլուրին վրայէն կ'ապրիմ զգացական պահը: Տարուսեան լեռներուն նայելով հայեացքդ կ'երթայ դէպի աւելի հեռուն, հորիզոնին վրայ երեւցող պատմական Կիլիկիոյ շրջաններուն. պատմական հողերուն վրայ աչքը սեւեռելով եւ Մակարայ վանքին մէջ կանգնած մէկ կողմէ կ'ապրիս ազգային հպարտութիւնը, բայց նաեւ պահանջատիրութիւնը իր ամբողջական հասկացողութեամբ:

Բայց այս անգամ կանգ առի աստիճաններէն վար փոքր դրան առջեւ, որ անցք եւ միջոց է վանքը յարակից շրջափակին կապող: Դուռն ու անցքը ամուր են եւ խորհրդանշական: Բոլոր ներկաները չեն կրնար միանաբար մտնել հոնկէ, այլ պէտք է առիթ տալ իրա-



նու, որպէսզի մէկիկ մէկիկ կարելի ըլլայ անցնիլ այդ նեղ դռնէն:

Կը շարունակեմ դիտել նեղ դուռը եւ անցքը: Անոնց նայելով կը փորձեմ տեսնել հայուն դուռն ու անցքը, զոր ան պիտի թակէ եւ ուրկէ ներս մտնէ դէպի հարիւրամեակ: Հարիւրամեակը Ցեղասպանութեան, որուն գծով արդէն անցանք ճանաչումի մթնոլորտէն եւ իրականական հետապնդումէն դէպի պահանջատիրութիւն: Իսկ պահանջատիրութեան գործընթացը նեղ դուռ է, զոր պիտի թակենք եւ մտնենք անկէ ներս: Նայելով Մակարայ վանքի դրան ու չորս կողմի աւերակներուն պահանջատիրութեան, կը համոզուիմ, թէ «այո՛ր, նեղ է»:

Եթէ Ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին ելք եւ եթէ պահանջատիրութիւնը դարձած է մեր ազգային հաւաքական աշխատանքի օրակարգը, ուրեմն ասիկա կ'ենթադրէ, որ նաեւ նկատի ունենանք աշխատանքային նոր միտք եւ բանաձեւ: Իսկ այս նոր միտքն ու բանաձեւը պիտի ենթադրեն թակել նեղ դուռը եւ զինուիլ անկէ ներս մտնելու տրամադրութեամբ: Պահանջատիրութիւնը երկարաշունչ գործընթաց մըն է, որ մէկ կողմէ կը պահանջէ ներազգային իմաստով պատրաստութիւն եւ պատրաստականութիւն, իսկ միւս կողմէ արտաքին ճակատի վրայ համազգային հիմնահարկերու նկատմամբ հաւաքական տեսադաշտ եւ օրակարգ:

Պէտք է համոզուիլ եւ տեսնել, թէ նեղ դռնէն բոլորս միասին չենք կրնար մտնել, տեղ պէտք է տանք իրարու՝ կարգը զիջելով, համբերելով եւ հանդուրժողականութեամբ, որպէսզի բոլորս ալ կարելիութիւն ունենանք ներս անցնելու: Այս համբերութեամբ եւ զիջողութեամբ պէտք է օժտուինք, որովհետեւ ազգային օրակարգը՝ պահանջատիրութիւնը, մեր բոլորինն է:

Կայ նաեւ այն, որ մտահոգութիւնները, ներազգային եւ մշակութային իմաստով, այսօր, աւելի քան երբեք, համահայկական են եւ համազգային: Կարելի չէ խօսիլ պահանջատիրութեան մասին համաշխարհային քաղաքական համակարգին մէջ, առանց համադրելու եւ ունենալու ազգային յստակ կեցուածք եւ դիրքորոշում, որոնք պէտք է ստանան իրողական կարգավիճակ:

Պէտք է շարունակել երթը: Կարելի չէ պահանջատիրութեան գործընթացին մէջ յարստուել, երբ մեր արժէքները ներազգային իմաստով սկսած են վտանգուիլ եւ կամ վտանգուած ու կորսուած ըլլալու վիճակին ենթարկուիլ: Մեր ազգային իւրաքանչիւր արժէք ինքնին հարստութիւն է եւ ուժ, որ պիտի լիցքաւորէ պահանջատիրութեան երկար առաքելութիւնը: Եւ մեր արժէքներուն օղակներուն մէկիկ մէկիկ թափփփիլը պիտի նշանակէ մեր պահանջատիրութեան նժարը եւ անոր հաւասարակշռութեան խախտումը:

Ներքին եւ արտաքին գործնները իրարու կամրջուած իրականու-

թիւներ են, որոնց ամուր միութիւնը պիտի յաջողցնէ գործընթացը Ստիպուած ենք թակելու ներ դուռը եւ մտնելու անոր մէջէն: Գարիւ ռամենակի մեծ մարտահրաւերն է այս: Կարելի չէ ներկայ օրերու համաշխարհային քաղաքական, տնտեսական եւ ընկերային վիճակներէ մեկնելով մեր ազգային-պահանջատիրութեան օրակարգին նայիլ հին տուեալներով: Պետք է ընդունինք նորը ընդգրկելու իրավիճակը, իսկ նորը լայն դուռը չէ. լայն չէ այնքան, որ իւրաքանչիւր միտող գործէ անջատ ու անկախ, որ ազգային արժեքները ենթարկուին սակարկութեան՝ եակասեն ու հիմնականէ զիջումներ կատարելով: Ազգային մեր հիմքերը կորսնցնելով եւ անջատ ու անհամակարգ աշխատանքային գործելակերպ որդեգրելով կը նուազի մեր պահանջատիրութեան ծանրակշռութիւնը համաշխարհային օրակարգերու վրայ:

Ներ դուռը զգաստութեան անցքն է: Զգաստութիւն՝ այն մասին, որ հարիրամենակը մէկ դար հաշուող մեր ազգային գոյապայքարի եւ Տեղասպանութեան համազգային հիմնահարցի անկիւնադարձն է եւ հոն է, որ պետք է նայինք եւ վերանայինք անոր, թէ մեր համազգային եւ իրարու վրայ դիզուած մէկ ւաելի հիմնահարցերը ինչ ձևով պետք է վեր առնենք նոր մտայնացումով եւ մտեցումներով: Ներ դուռը ուժ է՝ իմացական, տնտեսական, ֆիզիքական եւ նաեւ կարողականութեան իմաստով: Ուժը, որ կը համախմբէ միտքը, պահանջն ու պահանջուելիքը, կարողականութիւնը, որ միջազգային խաղաքարտերու եւ հաշիւներու արշաւին մէջ կարենանք հաստատ ու միակամ ըլլալ:

Կը շարունակեմ դիտել Մակարայ վանքին ներ դուռը, ան տակաւին ամուր կեցած է, անկախ անկէ, որ չորս պատերը փլատակ են: Այդ ներ դուռին եւ անցքին ընդմէջէն կը փորձեմ դիտել մեր ազգային պահանջատիրութիւնը: Տստակ է, որ դժուար առաքելութիւն է մեր ազգային-հաւաքական մեծ իրականութիւնը դնել այս ներ դրան ու անոր յարակից անցքին մէջ:

Աստուածաշունչի ճշմարտութիւնը յստակ է. «Վասնզի լայն է այն դուռը ու ընդարձակ այն ճամբան, որ դէպի կորուստ կը տանի»: Բայց հայը որոշած է ապրիլ եւ ոչ թէ կորուսիլ:

Ապրիլ իր ազգային արժեքով եւ Տեղասպանութեան պահանջատիրութեամբ: Այս արժեքին ու պահանջատիրութեան համար պետք է մտնել ներ դռնէ:

Մակարայ վանքին ամուր կանգնած ներ դուռը հայուն պահանջատիրութեան դուռն է: Զկայ ուրիշ դուռ մը, ուրկէ հայը պիտի կարենայ մուտք գործել եւ շարունակել ապրիլ:

Պահանջատիրութեան ներ դուռը անպայմանօրէն կեանքի դուռն է:

## ՄՐՏԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԸ

*«Անոնք միշտ կը յարաբնեւին աստ-  
բաւանքուն վարդապետութեան, միարս-  
նութեան, հաց կորկու եւ աղօթկու մէջ»:  
(Գործք Առաքելոց 2,4)*

Ճոագիմ Կաուզ՝ Աւետարանական Լուստերական եկեղեցւոյ հովիւ, Գերմանիոյ Դաշնակցային Գանրապետութեան նախագահ ընտրուեցաւ 18 Մարտ 2012-ին: Ան իր կեանքի կարեւոր մասը ապրեցաւ Արեւելեան Գերմանիոյ մէջ ծառայելով Քրիստոսի եւ եկեղեցիին: Ան իր հաւաքականութիւնը կազմաւորեց տուն-տուն շրջելով եւ քաջալերելով որ մարդիկ եկեղեցի յաճախեն եւ այս 1970-ական թուականներուն: Ան միշտ ժամանակ կու տար լսելու իր ժողովուրդին, անոնց մտահոգութիւններուն եւ տագնապներուն, որոնք կը խթանէին գինք, թէ ինչ տեսակի պատգամ պիտի տար եկեղեցւոյ պաշտամունքներուն ընթացքին: Ան իր ժողովուրդին վախերը եւ անորոշութիւնը լսելով կը փորձեր անոնց ցուցմունքներ տալ իր պատգամներուն միջոցով: Ան խօսնակը դարձաւ իր եկեղեցւոյ երիտասարդներուն, որոնք այդ օրերուն Արեւելեան Գերմանիոյ մէջ կը տագնապէին ազատութեան եւ անկախութեան մղձաւանջով: Ան միշտ պատգամեց ժողովրդավարութեան եւ անոր պատասխանատուութիւններուն մասին եւ խթանեց իր ժողովուրդը, որ երբեք չդադրի հետապնդել տեսիլք եւ երազ աւելի լաւ ապագայի համար: Ան այս համոզումները անողորմ պատգամեց, երբ անոնք տակաւին առկայ էին Արեւելեան Գերմանիոյ մէջ:

Դաշնակցային Գերմանիոյ ներկայի վարչապետ՝ Անկելա Մերգել քսաւ. «Պետք չէ մոռնալ որ եկեղեցին եւ անոր առաջնորդները, ինչպէս ճոագիմ Կաուզ, հանդիսացան այն ոյժը, որ ապահովեց 1989-ի խաղաղ յեղափոխութիւնը Գերմանիոյ մէջ»: Այս խաղաղ յեղափոխութիւնը յաջողեցաւ, քանի կային ղեկավարներ, որոնք «գիտէին թէ ինչպէս պիտի խօսին իրենց ժողովուրդին» եւ անպայմանօրէն, անոնք «որոնք հաղորդակցութեան մէջ էին իրենց հաւաքականութիւններուն հետ»: Եթէ ճոագիմ Կաուզ Գերմանիոյ նախագահ ընտրուեցաւ, որովհետեւ գիտցաւ ինչպէս հաղորդակցիլ ժողովուրդին սիրտին հետ, դառնալու անոնց «սրտերուն նախագահը», ինչպէս գերմանական «Տեր Ափիկըլ» թերթը ըսած է. «Անելի լաւ նախագահը»:



Ճոագիմ Կառուց «այն նախագահն է, որ պիտի կարենայ օրուակ քաղաքականությունն վեր մնալ եւ ձայն տալ ժողովուրդին տագնապներուն», կ'ըսէ Մելիսա Էտի «Ինթընէշնըլ Դերըլտ Թրիպլին»-ի 17-18 Մարտ 2011-ի յօդուածին մէջ. «Եթէ ճոագիմ կառչեցաւ եւ պատգամեց ժողովրդավարութեան եւ անոր պատասխանատուութեան համար, բայց նոյնպէս հաւատաց եւ հաստատեց արժանապատուութեան եւ բարոյական հեղինակութիւն», կ'եզրակացնէ ան: այս արժեքներն, որոնք դարձան երագ եւ տեսիլք՝ խաղաղ յեղափոխութեան ընդմէջէն կերտել նոր համակարգ մը, փոխակարգելով հինը:

Ամերիկացի աստուածաբան Ուոլթըր Պրուկման իր «Մարգարեական Տեսիլքը» գիրքին մէջ կը հաստատէ, թէ Յիսուս կրցաւ աշխարհը «քակել» իր խաչելութեամբ, եւ հաստատեց նոր ապագայի եւ կեանքի ոյժը, որ Աստուծոյ կողմէ տրուած շնորհքն է, որ ամբողջութեամբ արդիւնաւորուեցաւ Անոր յարութեամբ: Այս յարութեամբ է, որ նոր կեանք տրուեցաւ Յիսուս Զրիստոսի միջոցով: Բայց Պրուկման կը շարունակէ. «Գլխաւոր նպատակը կը կայանայ կազմելու համար հաւաքականութիւն մը եւ արթնութիւն մը, որ ոչ միայն կը քննադատէ ու կը քակէ» ներկայ իրավիճակը, այլ կը փոխակարգէ գայն նորով: Պրուկման կ'ըսէ. «Բայց քակելը նպատակ չէ, այլ քակելէ ետք անհրաժեշտ է հաւաքականութիւնը փոխակարգել, որտեղ հնարաւոր պիտի դառնայ նոր մարդկութեան սկզբնաւորութիւնը ապահովել»:

Այս սկզբնաւորութիւնը կը կազմէ հիմքը Զրիստոսի յարութեան ունին եւ անոր գործօնին, որ կը շնորհէ նոր կեանք, աւելի լաւ վարդապետական համար եւ անպայմանօրէն խաղաղ յեղափոխութեամբ ստեղծելու համար այլ հաւաքականութիւններ:

Զրիստոսի աշակերտները կազմեցին նոր հաւաքականութիւնը, իննս' եկեղեցին, որ փոխակարգեց տիրող իրավիճակը, ստեղծելով նոր արթնութիւն մը, որուն հիմքը Զրիստոսի հաղորդակցութիւնն է: Այս նոր հաւաքականութեան յատկանիշերը կը կազմեն «վարդապետութիւնը, միաբանութիւնը, հաց կտրելը եւ աղօթելը» (Գործք Առաջելոց 2, 42):

Այս հաւաքականութեան վարդապետութիւնը կը շեշտաւորուի մէկ կողմէ տրվելու, բայց միւս կողմէ տրվեցնելու հասկացողութեան վրայ: Եթէ մէկ կողմէ պիտի մեծնայ ինքը, անձը, բայց նաեւ պիտի մեծնէ դիմացինը: Այս Աստուծոյ սիրոյն խոշոր իրականութիւնն է, որ «այնպէս սիրեց աշխարհը» ամանց բացառութեան: Ան կ'ըսէ իր սերը մէկ կողմէ թափեց մարդուն վրայ, ամանց խտրութեան, բայց նաեւ այն ակնկալութեամբ, որ նոյն մարդը վերադարձնէ գայն Աստուծոյ՝ մարդկութեան եւ հաւաքականութեան մէջ հաղորդակցելով, հաց կտրելով եւ աղօթելով:

Աշխարհի այսօր, ի մասնաւորի արաբական շրջանը, կ'ապրի իրականութիւնը քննադատելու եւ քակելու ներկայ իրավիճակները, ոչ թէ խաղաղ, բայց դժբախտաբար արհնտտ եւ այրող փորձառութիւններու ընդմէջէն: Ի՞նչ տեսակի իրավիճակ մը կը փորձուի փոխարինել տիրող անհանդուրժելի կացութեան. մեծ եւ անորոշ հարցական մը, մտտիկ եւ հեռաւոր հորիզոնին վրայ:

Բայց կայ պատմութեան փորձը եւ անոր մէջէն Զրիստոսի աշակերտներուն տեսլականը. «Վարդապետութեան, հաղորդակցութեան, հաց կտրելու եւ աղօթքի» վրայ հիմնուած համակարգը: Այս իրականութիւնը փոխակարգեց տիրող կարգավիճակը, որ «Տէրը սքի օր փրկուածները կ'աւելցնէր» (Գործք Առաջելոց 2, 47): Աշակերտները ըրին իրենց բաժինը եւ Զրիստոս ամբողջացուց գայն: Ամբողջացնելու այս գործընթացքն է, որ տեսական է եւ պիտանի քակի հիմնուած է «սրտերու նախագահի»-ի մը վրայ, որ Զրիստոսն է, որ կը շնորհէ նորը եւ նորութիւնը, որ ոչ միայն լաւատեսութիւն կու տայ նոր համակարգերու բայց նաեւ յոյս այս աշխարհի համար եւ յաւիտենականութեան:

«Սրտերու նախագահը» քակեց աշխարհը եւ փոխակարգեց գայն այս ՅՈՒՅՈՒՄԻ համակարգով:



# ՏԵՂԵԿԱՏՈՒՌԹԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏԳԱՄԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Պատմության տարբեր ժամանակահատուածներուն մարդկային քաղաքակրթութիւնը միշտ ալ պայքարած է տարբեր մշակոյթներու ու հոլովոյթներու ընդմէջէն: Նոյն մարդկութիւնը, որ ուզած է իր պատգամը փոխանցել ժամանակի իմաստին եւ անոր ստեղծած պայմաններուն ընդմէջէն, միշտ ալ տեսած է, թէ պէտք է նկատի առնել եւ յարմարի մշակոյթին եւ անոր ստեղծած պայմաններուն: Այս կարեւոր երեւոյթը կարելի չէ շրջանցել, եթէ ուզեր, որ ըստ պատշաճի, պատգամը հասնի հասարակութեան:

Չափազանցած պիտի չըլլանք, եթէ քսենք, թէ ներկայ օրերու մեր կեանքերուն ու անոր բազմատեսակ պայքարներուն տուն տուող ուժը տեղեկատուութիւնն է եւ իր համաշխարհայնացած իրավիճակը Այս նոյն տեղեկատուութիւնն է, որ նաեւ իր ազդեցութիւնը կ'ունենայ իւրաքանչիւր մշակոյթի կենցաղին եւ ապրելակերպին վրայ: Գետաքերական է հետեւիլ Միացեալ Նահանգներու ներկայ օրերու միջին սերունդի տեղեկատուութեան մարզի մասնագետ Ֆիլ Զուրի հետազոտութիւններուն, որոնք ընդմէջէն ան յանդգնած է սահմանելու հետեւեալը. «Այսօրուայ մշակոյթը կը կերտուի տեղեկատուութեան ստեղծած ազդեցութեան եւ արժեքափերուն վրայ»:

Եւ նոյն այս տեղեկատուութեան աշխարհն է, որ ստեղծած է մշակոյթ մը, որ դուռ կը բանայ մէկ կողմէ պլազանութեան, բազմազանութեան եւ քննական ու այժմեական միջոցառումներու: Այս բոլորը պատճառ կը դառնան պատգամին ու անոր փոխանցումին, բայց անպայմանօրէն ընկալումի ոչ-դիւրին գործընթացին:

Ֆիլ Զուր կը շարունակէ՝ հաստատելով, որ այսօրուան կարեւորութիւնը պատգամին ինչպէս լսելի դարձնելու իրականութեան մէջ է: «21-րդ դարը փոխած է շատ արժեքափեր: Անցեալին կարելի էր դիւրութեամբ տեղեկութիւն հրամցնել, անհատը գայն պիտի ընդունէր, որովհետեւ այլ ընտրանք չուներ: Այսօր կացութիւնը տարբեր է: Կարեւոր է ստեղծել հազորդականութիւնը: Այսօր ոչ միայն պիտի լսեն պատգամը, այլ նաեւ հակարարձեն եւ պատասխանեն», կ'ըսէ Ֆիլ: «Այսօրուան աշխարհին մէջ անհատը դժմ յանդիման կը գտնուի տեղեկատուութեան շատ մը միջոցառումներու եւ ունի շատ մը ընտրանքներ տեղեկութիւն ստանալու: Պատգամը պէտք է հասցնել այն միջոցով, որով ունկնդիրը ոչ միայն պիտի ընկալէ, բայց նաեւ պիտի հակազդէ անոր», կ'եզրակացնէ Ֆիլ:

Ծիշոյ այս իրականութենէն մեկնելով, կարելի կը դառնայ այն, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ տեսակի պատգամ կարելի պիտի ըլլայ փոխանցել, որպէսզի նոյնինքն այդ պատգամը ընկալուի հաւաքականութեան կողմէ:

Մեր հայկական իրականութեան համար, մեծ պարտականութիւն է մեր մշակութային ժառանգը եւ արժէքը իր մտքողջական հասկացողութեամբ, որպէս պատգամ փոխանցել ունկնդրին՝ մեր ժողովուրդին, ի մասնաւորի նոր սերունդին: Պատգամը եւ անոր ինքնութիւնը անհրաժեշտ ըլլալով հանդերձ, ա՛յլ աւելի կարեւոր կը դառնայ նոյնինքն պատգամին ընկալումը: Ներկայ օրերու հետազոտութիւնները եւ ուսումնասիրութիւնները կը վկայեն, թէ պատգամին հաղորդականութիւնը՝ անոր ոճը, միջոցառումը եւ միտք բանին կարեւոր գրառակներն են նոյնինքն պատգամին ընկալումին:

Թէ ինչպէ՞ս պատգամը պիտի ընկալուի հասարակութեան մէջ եւ այս պարագային հայկական, կը մնայ իրագործելի մեծ իրականութիւն եւ մարտահրաւեր: Շատ մը պարագաներու փոխանցումը պատգամը եւ անոր ընկալած եւ ընկալելի իրականութիւնները, կրնան տարբերիլ իրարմէ եւ նաեւ կրնան գտնուիլ իրարմէ տարբեր եւ նոյնիսկ հակադիր վիճակներու մէջ: Փոխանցուած պատգամը իր ինքնուրոյնութեամբ, հարազատութեամբ եւ ճշգրտութեամբ, կրնայ յնկալուիլ հասարակութեան կողմէ ըստ ակնկալուածի, տարբեր պատճառներով եւ քննութեամբով:

Ներկայիս այս մեծ մարտահրաւերին դիմազարուումը որպէս հայկական իրականութիւն, կը պարտիքը պատգամին ընկալումը ու անոր գործընթացը բժախնդրութեամբ, մասնագիտական ու արհեստավարձ տունեալներու հիմամբ ու այդ ճամբով կատարողներուն: Պայտն ազգային աւանդը ու անոր անշուշտ մշակութային ժառանգը՝ իր ամբողջական հասկացողութեամբ, պէտք է փոխանցուի ներսուր օրերու տունեալներուն մէջէն եւ ընկալուելու անհրաժեշտութեամբ:

Եթէ պիտի շնորհաւորենք «Ազգակ»-ը եւ իր 85 տարուան երկար առաքելութիւնը, նաեւ անոր բոլոր նուիրեալները եւ երախտաւորները, պէտք է նաեւ կանգ առնենք այսօրուան տունեալներուն դիմաց եւ վեր առնենք տարուած աշխատանքը քննական տեսադաշտով:

«Ազգակ» իր առաքելութեան եւ այդ առաքելութեան ստեղծած պարտաւորութեան ճիշդ եւ արհեստավարձ գործընթացին մէջ է: «Ազգակ»-ը այսօր՝ պահելով հանդերձ իր ինքնութիւնը, կրցած է փոխանցել պատգամը, որ կ'ընկալուի համահայկական ու համազգային տեսլականով եւ արժեքափով: Եւ այս ոչ միայն լիբանանահայ, թայց նաեւ սփիւռքահայ եւ հայրենի շրջանակներու կողմէ անխտիր:

«Ազդակ» կրցած է հասնիլ ներկայ օրերու տեղեկատուութեան ստեղծած մշակոյթի ժառանգին եւ այդ ժառանգին մէջէն փոխանցել պատգամը, որ ո՛չ միայն կը հասնի այլ նաեւ կ'ընկալուի ընթերցողին կողմէ ու կը խթանէ գայն մասնակցելու եւ բաժին բերելու արծարծուած մտքին ու տեսակէտին:

Ներկայ ժամանակներու ճարտարարուեստի ստեղծած հեքիս հետ չենք կրնար քայլ չպահել ո՛չ ալ պիտի կարենանք դէմ դնել տեղեկատուութեան մարզի աշխարհի զարգացումներուն եւ անոնց յառաջացուցած նոր կենցաղին: Ստիպուած ենք ընդգրկել զարգացումը եւ անոր նորարար մշակոյթը իր տարբեր բնութագրումներով: Բայց անհրաժեշտ է այդ բոլորին մէջէն հասցնել պատգամը, որ պիտի ընկալուի հայուն կողմէ՝ կերտելու համար նոյնինքն հայուն միտքը եւ մշակոյթը ներկայ աշխարհի տուեալներով:

Եւ «Ազդակ» հո՛ն է: Ան տեղեկատուութեան աշխարհի ստեղծած մշակոյթը կրցած է հայացնել: Եւ պատգամին ընկալումը՝ համազգային երփներանգներով՝ ազգայնացնել:

Պետք է շարունակել:

2013

## «ԱԼ ԳՐԵԼՈՒ ՈՒԺ ՉՄՆԱՅ»

Նորնական կողմէ մեծ մօրս մայրը՝ երիցուհի Մարիամ Մելքունյան Գունտաքճեանի նամակն է Հասան Պելլիէն գրուած 7 Մայիս 1909-ին իր զաւակներուն. «Երանի ստիպուած չըլլայի այս պատահան անտելի դժբախտութիւններուն մասին գրելու ձեզի: Պիտի նախընտրէի ջաւս առանձին կրել ու ձեզ խնայել տառապանքէ, սակայն յարմար նկատեցի գրելը, որովհետեւ ինչ ալ ըլլար, մի կերպ պիտի լսէիք թէ ինչ պատահեցաւ»:

Քայց ինչպէս Մարիամ կրնար ստիպուած չըլլար գրելու այս անտելի դժբախտութիւնը, որ պատահեցաւ իրեն եւ հայ ժողովուրդին 1909-ին:

Մարիամ աւարտած էր Հասան Պելլիի ծիսական դպրոցը. հոն սորված Մեսրոպեան տառերը, որոնք անմատացած էին իր մտքին ու հոգիին մէջ, որմէ ետք իր բարձրագոյն ուսումը առած էր Այնթապի սոյնական երրաստեղծ վարժարանին մէջ: Ան իր ամբողջ կեանքը նուիրեց Աստուծոյ, եկեղեցիին եւ իր ժողովատիւն՝ խօսելով ու քաջալերելով զիրենց, եւ Զրիստոսի յոյսի արտգամը փոխանցելով մարդոց: Կնուսինը Վեր. Յակոբ Գունտաքճեանն էր, որ Հասան Պելլիի Հայ աւետարանական եկեղեցւոյ հովիւն էր, որուն հետ Մարիամ կազմած էր ընդամանոյմ ընտանեկան յարկ մը 13 զաւակներէ բաղկացած:

Եւ Մարիամ կը շարունակէ գրել աղետին մասին: «Աղետը տեղի ունեցաւ կայծակի նման: Արցունքով կը գրեմ ձեզի: Ձեր հայրը աւելի բախտաւոր էր քան մենք, որովհետեւ ան սպաննուեցաւ Ատանայի ճամբուն վրայ բոլորէն առաջ ու չտեսաւ մեր գիւղին վրայ կատարուած անակնկալ բայց ծրագրուած յարձակումը: Չտեսաւ իր գիւղին այրուիլը, չսեց սարսափահար աղերսանքը, ըստմտելի ու անզուրկ կրակոցը թշնամիին: Չտեսաւ իր հարազատներուն շարորոհիլը՝ մեկը միայն տեսնէ: Չտեսաւ զաւակներուն, քոյրերուն ու եղբայրներուն եւ ազգականներուն գնդակահարուիլը»:



Վեր. Յակոբ Գուևտաքճեան 12 Ապրիլ 1909-ին, Ատանա ճամբորդութեան ընթացքին, մասնակցելու համար Կիլիկիոյ Աւետարանական եկեղեցիներու տարեկան համագումարին, ինք եւ իր եկեղեցւոյ պատուիրակութիւնը՝ 23 անդամներ Օսմանիի մտակայ վայրի մը մէջ սպանուած էին: Մարիամին մխիթարութիւնը այն էր, որ իր ամուսինը չտեսաւ այս բոլորը՝ աւելի քան 25 ընտանիքի անդամներու նահատակութիւնը: Ու տակաւին, ան չտեսաւ իր աւելի քան երեսու տարիներու հովուած եկեղեցիին անյայտացումը եւ իր շատ սիրած գիւղին տուներու հրկիզումը, այգիներու ու պարտէզներու քանդուիլը: Եթէ Մարիամ մխիթարուած էր, որ իր ամուսինը չտեսաւ այս բոլորը, բայց ան պիտի ապրեր, որպէսզի մէկ-մէկ փորձեր ապրուած նահատակութիւնը եւ անոր արհաւիրքը տարիներու վրայ երկարած:

Իսկ արհաւիրքը:

«Ուրբաթ, 16 Ապրիլին խումբ մը վարձագ թուրքեր, քիւրտեր ու չեքոզներ յարձակեցան Յասան Պէյլիի վրայ: Մեր երիտասարդները իրենց սահմանափակ զինամթերքով քանի մը ժամ հերոսութեամբ դիմադրեցին ու մեզ պաշտպանեցին: Սակայն թշնամիին մարտիկ նման ներխուժումը ստիպեց մեզ շրջակայ բլուրներուն վրայ ապաստան գտնելու: Այդ բարձունքին վրայ համախմբուեցանք, իրարու փաթուցելով միասին աղօթքից և Աստուծմէ խնդրեցինք որ մեզ փրկէ: Չիրար ողջագուրելով, զիրար քաջալերեցինք եւ ուխտեցինք մինչեւ մահ հաւատարիմ մնալ մեր հաւատքին»:

Եւ Մարիամ հաւատարիմ մնաց իր հաւատքին, նոյնիսկ երբ ան տեսաւ իր հարազատ զաւակներուն նահատակութիւնը: Մարիամի զաւակներէն Օգոստինը ընկերներուն հետ գացած էր հռոմը՝ ողնայարի ցաւէ կազդուրուելու համար: Ան երբեք չվերադարձաւ տուն Անոր դիակը գտնուեցաւ ճիհան գետին մէջ: Ու կը շարունակուի Մարիամի հաւատարմութիւնը իր հաւատքին: Ռոպերթը՝ իր 14-ամեայ զաւակը դէպի Պախճէ ճամբորդութեան ընթացքին, խումբ մը ընկերներու հետ, զինեալ մարդիկ իրենց վրայ յարձակելով կը սպաննեն բոլորը եւ Ռոպերթը վիզէն դանակով վիրաւորուած, կը մնայ արիւնլուայ դիակներու մէջ՝ կիսամեռ: Ուշքի գալով՝ վզին վերքը իր գօտիով կապելով, կը փախչի ու կը պահուըտի Գուկիա կոչուած մտակայ գիւղի մը ջաղացքին մէջ: Եւ կը պատահի անսպասելի: Թուրքեր գտնելով զինք՝ դուրս կը բերեն ջաղացքէն: Պատահի Ռոպերթը կը պաղատի, որ խնայեն իր կեանքը: Բայց անօգուտ: Թուրքերը կը սպաննեն զինք՝ կրակելով գլխուն: Ռոպերթի դիակը կը մնայ անթաղ եւ միայն բաւական ժամանակ մը տքը է, որ խուզարկող գիւղացիներ կը գտնեն անոր ոսկորները եւ ցնցոտիները:

Մարիամ շակեց այս բոլորը: Եւ կը շարունակէ գրել. «Մեզ կիներս արտրեցին դէպի Պախճէ: Սպանուցին մեզ մեռցնել, եթէ իսլամութիւնը չընդունէինք: Բոլորս ալ բուպի ենք, չափազանց յոգնած: Կիսամեռ վիճակի մէջ ենք: Մեր ոտքերէն արիւն կը հոսի»:

Քայց արդեօք միայն Մարիամի ոտքերէն արիւն հոսեցաւ: Մարիամ նոյն այս արիւնը շակեց հետը մինչեւ 1915՝ Յեղասպանութեան անաւորութիւնը: Ան ապրեցաւ իր մէկ այլ զաւակին՝ Վեր. Տիգրան Գուևտաքճեանի նահատակութիւնը: Բեսապի հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ՝ 1908 թուականէն սկսեալ, մօր Մարիամի իսկ վկայութեամբ՝ «Եղեռնի դժնդակ այդ օրերուն ալ Վեր. Տիգրան գտաւ աննազօրին հաճելի ընթացք մը բռնելու պահանջը, ինքնամոռաց խտայել իր դժբախտ ժողովուրդին»:

Վեր. Տիգրան Գուևտաքճեան իր երեք զաւակները յանձնելով մօրը՝ Մարիամի, նկատի ունենալով որ կիւր մահացած էր 1913-ին՝ հիւանդութեան պատճառով, իր ժողովուրդին հետ կը բռնէ գաղթականութեան ճամբան: Ան կը փորձեր բոլորին նստիլ՝ օգնութեան ձեռք երկաբեւոյ ատանց խտրութեան: «Յոգնիլ չգիտցող հայորդին» էր Վեր. Տիգրան, որուն հոգին եթէ տոկաց, սակայն ֆիզիքական մարմինը չկրցաւ տանիլ այդ բոլորը: 1915 Սեպտեմբեր 1-ին ան կը վարակուէր թիֆուսի կիւանդութեամբ: Վեր. Տիգրան Գուևտաքճեանի վերջին վկայութիւնը՝ գրուած մօրը. «Դիմացս երեք լոյսեր կան (կ'ակնարկէր Յօր, Ռոզի եւ Աբ. Յոգի, ընդգծումը մեր կողմ), մէկն այլ գաղթականինը թող ըլլայ»: Եւ այդ «գաղթականին լոյսով» չիջեցաւ Վեր. Տիգրան Գուևտաքճեան, նոյնիսկ հայ գաղթականներուն հետ եւ անոնց համար: Դիակը մնաց անթաղ ու անյայտ: Քայց կարելի՞ է թաղել անոր անունը եւ յիշատակը, եւ անպայմանօրէն անոր վարկն ու գո՞րծը:



Անկախ այն իրավիճակէն, որ կացութիւնը աննպաստ էր, Վեր. Տիգրան երբեք չվարանեցաւ եկեղեցաշէն աշխատանքի լծուելու: 1909 թուականէն սկսեալ, ան ձեռնարկեց Բեսապի մէջ եկեղեցաշինութեան աշխատանքի: Եկեղեցիին կառոյցը բարձրացած էր եւ սլաւոտաստ վրան գոցուելու, երբ վրայ հասան 1915-ի Յեղասպանու-

թինը եւ տեղահանութիւնը: Եկեղեցին մնաց անաւարտ ու վրան քայ:

Մանկութեան ու պատանեկութեան տարիներուն, 1960-ական թուականներուն, երբ ամառները Քեսապ կը գտնուէինք արձան արծակուրդով, հայ Աւետարանական Ա. Երրորդութեան եկեղեցւոյ անաւարտ շէնքին մէջ յաճախ կը խաղայինք որպէս մանուկ-պատանիներ: Այդ օրերուն մեզի համար եկեղեցւոյ անաւարտ շէնքը պարզապէս խաղավայր էր՝ խոտերով ծածկուած: Մեր մեծնալու տարիքին հետ պիտի սորվէինք եւ անդրադառնայինք, որ Լոյսինքն այդ եկեղեցիին մէջ եթէ մէկ կողմէ կար արիւն, արցունք, մահ եւ նահատակութիւն, միւս կողմէ կար հաւատք ու պատմութիւն, որ շարունակական էր: Հաւատքը Վեր. Տիգրան Գունտաքճեանին եւ իր ժողովուրդին, որ գիտցաւ տոկալ ու գոյատեւել: Յետագային, եկեղեցին վերաշինուեցաւ (1970-ին) Վեր. Տիգրան Գունտաքճեանի ջրոջ՝ Եւնիկ Ծեպեճեանի ջանքերով: Այսօր եկեղեցին կանգուն է իր շէնքով եւ ժողովուրդով, որպէս կենդանի վկայութիւն Լոյսինքն հայուն շարունակուող հաւատքին ու պատմութեան:



Բայց Մարիամին նամակը կը շարունակուի. «Մարդու կեանքը, ո՞նի գարուն մըն է լոկ, որ կը յայտնուի ու կը կորսուի շուտով», բայց ոչ հաւատքը, որովհետեւ Մարիամ կը գիտակցի ու կը խթանէ իր գա-

ւակներուն, որ «մեզի համար մի՛ լաք, այս անբացատրելի ճգնաժամային օրերուն ջանացք կարօտեալներուն օգնել»:

Մարիամ մահացաւ 1939-ին, Հալէպի մէջ: Մինչեւ իր խոր ծերութիւնը ան ապրեցաւ Լոյսինքն այդ հաւատքին տեսլականով, միշտ փորձելով հասնիլ բոլորին՝ խրախուսելով զիրենք դիմագրաւելու կեանքի տարբեր դժուարութիւնները ու տակաւին գրելով եւ քարոզելով կրօնաբարոյական եւ հոգեւոր նիւթերու շուրջ: Իր կեանքին ընթացքին կորսնցուց ամուսինը եւ եօթը զաւակները (ու տակաւին ուսրագատները), այսուհանդերձ, ընկճուիլ չգիտցող Մարիամը բոլոր փորձառութիւններու մէջէն դուրս եկաւ յաղթական: Ան իր յաղթական երթով «ճեղքեց» ամեն արիւն, վիշտ, արցունք ու տառապանք ու տակաւին ապրուած նահատակութիւնը՝ մինչեւ որ հասաւ հոն, եւ ինչպէս իր նամակը եզրափակեց ըսելով. «ա՛լ գրելու ուժ չմնաց»:

Եթէ զնաց Մարիամին ուժը, բայց մնաց Լոյսինքն այդ ուժին յառաջացուած կեանքը եւ այդ կեանքին նկատմամբ հաւատքը: Հաւատքը՝ ապրելու եւ վերապրելու, որ Տեղասպանութեան արհաւիրքէն դուրս եկաւ յաղթական, որպէս կենդանի իրականութիւն իր ազգային եւ քրիստոնէական դիրքորոշումներով:

Մարիամին ուժը սպառեցաւ, որովհետեւ Մարիամ ո՛չ միայն ապրեցաւ այդ ուժը, այլ փոխանցեց զայն մեզի, որպէս կեանքի հաւատք ու ապրելու շարունակականութեան մէկ մեծ մարտահրաւեր:

Եւ այս հայուն պատմութիւնն է եւ այս պատմութեան ընթացքին անոր ստեղծած ուժը: Ուժը հայուն եւ անոր հաւատքին, որ կը նորոգուի եւ կը նորոգուի եւ կը շարունակէ իր յաղթական երթը:

Եթէ գրելու ուժ չմնաց, բայց մնաց ապրելու ուժը, որովհետեւ հայ մարիամները գիտակցեցան, որ տեղի պէտք չէ տան, թանկ տեսան իրենց ժողովուրդին վերապրելու տեսլականը՝ այսօր եւ վաղը: Մարիամին ուժը, բայց անպայմանօրէն հայուն ուժը: Եւ այս ուժին մէջն է հայուն պատմութեան եւ պահանջատիրութեան շարունակականութիւնը:

## «ԵՍ ԵԿԵՂԵՑԻ ՉԵՄ ԵՐԹԱՐ»

Երևանը հողանտացի 22 տարեկան երիտասարդ շարժավար մեկ է: Հողանտացիք ընդհանրապես մարդամուտ բնաւորութիւն ունին և մտիկ են օտարին ու այցելուներուն: Ընդհանրապէս կը խօսին անկ լերեն, այնպէս որ, դժուարութիւն չես ունենար իբրեւ այցելու անոնց հետ հաղորդակցելու: Երևանը կանչուած էր գիս տանելու Էկմոստ ԱՄ Չի շրջանի պանդոկէն դէպի Հաարլեմ, ուր պիտի շարունակէի ԱՄ տասը օրերուն վրայ երկարած աշխատանքային այցելութիւնս Գոլանտա՝ Մայիս 2013-ին: Երևանը գիտեր իմ աշխատանքային բնոյթս, եւ թէ գործ ունիմ Աստուածաշունչին հետ, նկատի ունենալով, որ իր աշխատած հանրային ինքնաշարժներու ընկերութիւնը ստանձնած էր մեր ընկերակցութեան միջազգային մէկ համագումարին մասնակիցներս փոխադրել պանդոկէն այլ տեղեր:

Երևանին հետ չուշացաւ մեր հաճելի գրոյցը: Դիւրին էր նաեւ իրեն հետ հաղորդակցիլը: Հողանտա գեղեցիկ երկիր է՝ տարածուն, աւելի տափարակ, քան լեռնային, կանաչ մարգագետիններով օժտուած, անբողջ երկրին տարածքին հոսող գետերն ու լիճերը յատուկ ջերմութիւն կու տան գեղեցիկ բնութեան: Երկիրը յատկանշական է երկարգործութեամբ եւ կաթնեղէնի արտադրութեամբ, այդ պատճառով ալ ազգայնակները, կովերն ու ոչխարները տարածուած են քիչ մը ամէն տեղ:

«Մենք մարդոցմէ աւելի կով ունինք», ըսելով Երևան սկսաւ իր գրոյցին, ժպտելով եւ ճամբու երկայնքին ցոյց տալով բոլոր արջաւուները:

«Գեղեցիկ են», ըսի Երևանին, եւ մեր խօսակցութիւնը շարունակեցիք խօսելով քիչ մը տնտեսութեան մասին, գործի եւ աշխատանքի կարելիութիւններուն մասին, բայց նաեւ չմոռնալով ֆութպոլը եւ Հողանտայի ազգային խումբին տիտանները: Իմ յիշած հողանտացի ֆութպոլի հերոսները Երևանին համար միայն անուն էին: ԱՄ ծնած էր անոնց ժամանակաշրջանէն ետք, այնպէս որ, ես աւելի բան գիտի Քրոյֆի եւ Նիսքընզի մասին քան ինք:

Եկեղեցական եւ հոգեւոր նկրթում վերաբերող հարցումս չուշացաւ. չեմ գիտեր ինչո՞ւ կասկածէ վեր նկատեցի իր քրիստոնեայ ըլլալը, գէթ անուանական: Այնպէս որ, հարցումս եղաւ քիչ մը շատ ուղղակի.

«Բողոքական ես, թե՛ կաթողիկէ»:

«Չեմ գիտեր», ըսաւ Երևան:

Թէն քիչ մը շուարեցայ, բայց շուտով անդրադարձայ, որ կրնար պատկանիլ այլ կրօնի:

«Ոչ ներս, բայց արդեօք իսլամ ես», հարց տուի:

«Ի՛նչ իսլամ եմ եւ ո՛չ ալ քրիստոնեայ», ըսաւ Երևան: «Անկեղծ քան, չեմ ալ գիտեր բողոքականութեան եւ կաթողիկէութեան տարբերութիւնները»:

Երևան այս նախադասութեամբ իր կենսքին իրականութիւնը քրիստոնեայ՝ առանց շուարելու կամ տատամսելու:

Պատարարութիւնս, բնականաբար, աւելի սրեցաւ եւ չուշացաւ հարցումս՝ քիչ մը աւելի պրպտելու համար Երևանի կենսքի կարծ ու մտք պատմութիւնը:

«Ղապա՞ ծնողք», հարց տուի:

«Պարծեմ պէտք է քրիստոնեայ ըլլային, բայց երբեք հետաքրքրուած չիմ կրօնով ու եկեղեցիով: Ես ալ այդպէս մեծցայ», ըսաւ Երևան: Ապա շարունակեց. «Ես երբեք աղօթատեղի չեմ գացած, բայց երբ սիրեմ աղօթատեղիները, անոնք մեծ են»:

«Նոյնիսկ Ծնունդի կամ 2առկուան տօներո՞ւն», հարց տուի:

«Ի՛նչ, ես եկեղեցի չեմ երթար», ըսաւ ան:

Երևանը լաւ ներկայացուցիչներէն մէկն է ներկայ օրերու, առաւելաբար արեւմտեան աշխարհի մէջ ընթացք առած ապակրօն մտաւորութեան մշակոյթին: Եթէ աղօթատեղիները կը սիրեն իբրեւ կառոյց, բայց ո՛ր մնաց հոգին, խորքը, պատգամը: Տակաւին կայ միայն իրականութիւնը, որ այդ մեծ կառոյցները այսօր վերածուած են նաշարաններու կամ այլ նպատակներու համար կ'օգտագործուին նոյնիսկ Հողանտայի եւ արեւմուտքի մէջ:

Բայց հայկական եկեղեցին՝ ո՛չ տակաւին:

Յիգրան Մղտեսեան Հողանտա հաստատուած է 33 տարիներ



առաջ: Ան պղլսահայ է եւ շրջանաւարտ է ծանօթ Կեդրոնական վարժարանէն, որուն հայեցի եւ քրիստոնէական ամուր դաստիարակութեամբ եթէ կերտած է իր կեանքն ու նկարագիրը, բայց նաեւ այն, որ կ'ուզէ օգտակար դառնալ գաղութին հոգեւոր, ազգային ու մշակութային վերելքին:

Տիգրանին համար ազգային պարտականութիւն է այս մէկը եւ ալ կ'ուզէ ամուր կերպով կառչիլ այս առաքելութեան: Ան ատենապետն է հայ եկեղեցւոյ Շնորհաւոր ժողովին: Ամսթրտամի մէջ գտնուող Աբ. Յոգի հայկական եկեղեցին հիմնուած է 1714-ին: Յայնրդ սկսած են Պելճիքա եւ Յոլանտա գաղթել Կիլիկիոյ թագաւորութեան կործանումէն ետք, բայց նաեւ կարելոր թիւով հայ վաճառականներ հաստատուած են Յոլանտա 17-րդ դարէն սկսեալ: Յայնորդանական կապերուն մէջ հաւանաբար իր իւրայատուկ տեղը ունի նաեւ այն, որ Աստուածաշունչի առաջին հայերէն տպագրութիւնը կատարուած է Ամսթրտամի մէջ, 1666-ին, Ոսկան վարդապետի կողմէ:

«Գաղութը կը հաշուէ մօտաւորապէս քսան հազար հոգի», կը բացատրէ Տիգրան: Կէսը եկած է մայր հայրենիքէն, իսկ մնացեալը՝ Թուրքիայէն, Իրաքէն, շատ փոքր թիւով Լիբանանէն եւ Սուրիայէն «Մեր դիւարութիւնը այն է, որ հայերը տարածուած են Յոլանտայի չորս կողմերը եւ տարբեր քաղաքներ», կ'ընդօժէ Տիգրան: «Այս իրականութիւնը կը դժուարացնէ մեր գործը, որովհետեւ պէտք է փորձել հասնիլ բոլոր հայերէն եւ ամէն տեղ»: Այս իմաստով, եկեղեցական սուրբ պատարագ կը մատուցուի Ամսթրտամի հայ եկեղեցւոյ մէջ, նաեւ Ալմելօ քաղաքին մէջ, ուր մօտաւորապէս հինգ հազար հայեր կ'ապրին:

Նոր սերունդի դաստիարակութիւնը միայն Կիրակի օրերը կը տրուի՝ կիրակներայ վարժարանին միջոցով, եկեղեցւոյ շէնքին մէջ: Յոլանտայի մէջ կը գործեն քանի մը հայկական միութիւններ, որոնք կը ջանան հայկական կեանքը իր մշակոյթով եւ աւանդով ամուր պահել:

Չուշացան նաեւ Տիգրանի մտահոգութիւնները: «Ներկայ օրերուն եկեղեցւոյ իրավիճակ եւ առաքելութիւնը շատ դժուար են: Եթէ վիրոճես քայլ պահել մերօրեայ մարտահրաւերներուն հետ, շատ դիւրին կը դառնայ փոքրանալն ու ապա անհետանալը: Այս իմաստով, եկեղեցին հոս՝ Եւրոպայի մէջ, իր տեղը պէտք է գտնէ: Նոր սերունդին հետաքրքրութիւնը եթէ մէկ կողմէ փոխուած է, բայց նաեւ կայ նուիրուածութեան եւ ժամանակ տրամադրելու դժգոհութիւնը: Ա՛լ ինչ խօսք նիւթական ու բարոյական մեծ գոհողութիւններու մասին»: Տիգրանը այսպիսով դիմացս դրաւ արեւմտեան աշխարհին

մէջ հայուն ապրելու եւ գոյատեւելու մեծ մարտահրաւերներուն ընդհանուր պատկերը:

Տիգրան նաեւ կը տեսնէ գաղութին կազմուածքն ու անոր տարբերութիւնները: «Մենք սփիւռքի մէջ վարժուած ենք ապրելու եւ պայքարելու, բայց մանաւանդ որպէս հայ: Յայտատանէն եկող մեր հայրենակիցները այս փորձառութիւնը չունին: Այս իրականութիւնը նաեւ իր դժուարութիւնները կը յառաջացնէ, տակաւին կայ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի հարցը», ըսաւ ան:

Մէկ կողմէ սկսալ կամաց-կամաց մտնել Տիգրանի ներաշխարհին մէջ, որ բազմազան ու բազմաբնոյթ է, իսկ միւս կողմէ սկսալ հասկնալ մեր ծանրաբեռնութիւնը: Այս ծանրաբեռնութիւնը ունի նաեւ իր պատմութիւնը: 18 տարեկանին Կեդրոնական վարժարանէն շրջանաւարտ դարձած Տիգրան ձգած է Պոլիսը եւ եկած է Յոլանտա: «Առաջին տասը տարիներուն կապ չհաստատեցի Պոլսոյ հետ, սակայն հիմա յաճախ կը հաղորդակցիմ ու կ'այցելէմ: Արմատաւոր հոն եմ, եւ Պոլիսն ալ կարիք ունի սփիւռքի քաջաւերանքին»:



Տիգրանին հետ իմ հանդիպումս լեցուն էր, բայց նաեւ յագեցնող, նույնիսկ երբ բազմաթիւ էին մտահոգութիւնները եւ մարտահրաւերները բազմաբնոյթ: Չորրորդ լեցուն էր տարբեր երեւոյթներու եղած անդրադարձով, բայց յագեցնող էին Տիգրանի նուիրուածութիւնը եւ իսկ առանդին ու արժեքին նկատմամբ իր անսակարկ պատրաստամտութիւնը եւ տարած գործը: Եթէ մէկ կողմէ կար յուսահատութիւնը՝ ոչ պայծառ իրականութիւններու ի տես, բայց միւս կողմէ կան



կուտակուած մտահոգութիւններ, որոնցմէ ելլ գտնելու տրամադրութիւնները առկայ են: Այս մէկը յազգեցող իրականութիւն է հայը միշտ արթուն ու գործօն պահելու իր ինքնութեան եւ հաւատքին գոյապայքարին մէջ եւ աշխարհով մէկ:

Եոհանը եկեղեցի չ'երթար եւ միայն հմայուած է աղօթատեղիներուն արտաքինով ու մեծութեամբ: Տիգրանը եկեղեցի կ'երթայ ու հմայուած է անոր խորքով ու պատգամով: Եթէ Եոհանը անտարբեր է այս ամենութեամբ, բայց Տիգրանը ծանրաբեռնուած է այս առաքելութեան յառաջխաղացքին համար:

Հայուն յատուկ այս ծանրաբեռնուածութիւնն է, որ կը կրէ սփիւռքահայութիւնը՝ տարբեր իրավիճակներու մէջ: Եթէ հայը մէկ կողմէ կ'ուզէ պահել պատմութիւնը, բայց նաեւ ջատագովն է այս պատմութիւնը շարունակականութեան նոյն ընթացքին մէջ դնելու: Ասիկա հայուն աւանդին ու պահանջատիրութեան շարունակականութիւնն է:

Տիգրան կը գիտակցի, որ ասիկա դիրքին ընթացք մը չ'է, բայց հակառակ ամեն ինչի, կ'ուզէ շարունակել այդ ծանրաբեռնուածութիւնը կրել:


Տիգրանին ընթացքը հայուն ընթացքն է, ոչ թէ չլինելու այլ լինելու, հակառակ ծանր բեռնակալ շարունակելու: Ասիկա Գոլանտայի յատուկ չ'է, այլ ամբողջ աշխարհի մէջ:

Եոհանը եկեղեցի չ'երթար: Ասիկա իր ընտրութիւնն է, թերեւս այլ իր սորվածին դրսեւորումն է: Բայց հայուն ընտրութիւնն ու սորվածը իր գոյութեան ամբողջ տեսողութեան ու պատմութեան ընթացքին եկեղեցի երթալն է:

## «ԻՆՉ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ»

Կար ժամանակ, երբ յաճախակիօրէն Հալեպ կ'այցելէի, գրեթէ անակալան դրութեամբ: Թէեւ ընտանիք, ընտանեկան կապեր եւ արմատներ կան հոն, բայց կան նաեւ բարեկամներ եւ հայկական լայն շրջանակ: Այցելութիւններու մէկուն ընթացքին հորեղբայրս՝ տոքթ. Ինայեր Եւպեճեան, իր արխիւներուն մէջէն հասնեց իրենց-մեր Այնթապի պապեանական տան փաստաթուղթերը եւ ինծի ցոյց տալով սկսաւ բացատրել. «Հայրդ եւ ես հոս ծնած ենք»:

Յատկանշական էր, որ նոյն տարին՝ 1996-ին, ինչպէս սովորուած էր իւրաքանչիւրին նոր տարուան առիթով միշտ հետաքրքրա-



Ինչպէ՞ր. ճեղքեցեալ Գոլանտայի ՏԻԻԵ

- 1996 -

Հնորեանտ ԼԲ Ծնունդ  
և  
Բարի Կարգալք

20-ՅԻԳԿ Ամեն Թուրքե և Լուրճ



դիրքը ունենալ Այնթապի մէջ: Ստեղծած էր այդ օրերուն համար բարձր ու պատկառելի երկու յարկանի տուն՝ մեծ բակով, որ հայկական շրջանին մէջ իր հաստատ դիրքը գրաւած է: Իր տան կողքին կան ծանօթ Պարամանուկեաններուն տունը: Անոնց ընտանեկան շատուիկները եւս հասան Գալէպ, իսկ այսօր՝ մինչեւ Գայաստան, Եւրոպա եւ Ամերիկաներ:

Գործընկեր այս տան մէջ ապրած է մանկութենէն դէպի պատահելութիւն տանող տարիները: Բայց հայրս շատ փոքրիկ՝ արդէն դուրս եկած է անկէ 1915-ի տեղահանութեան օրերուն: Այնթապի մէջ այդ տունը մնաց պապեանական, ծեով մը անհասանելի, մօտիկ-հեռու, զգացական-պահանջատիրական եւ արդարութիւն-անարդարութիւնը գրգռող իրականութիւն մը, որ կը շարունակէ այդպէս ըլլալ մինչեւ օրս:

Բայց շարունակեցի հետապնդել մեր պապեանական տան ողիսականները: Տակալին առիթ չունեցայ եւ ալ մաս կազմելու այն մեծաթիւ հայորդիներուն, որոնք ուխտագնացութեան, զբօսաշրջութեան կամ ալ փնտռողներու նպատակով այցելեցին ու տակալին կ'այցելեին արեւմտեան Գայաստան եւ Կիլիկիա: Բարեկամներէ կը տեղեկանայի, որ անոնք այցելած են ու վերադարձին կը պատմէին, թէ «զացիք եւ տեսանք մեր մեծ հայրերուն տունները»:

Մէկ կողմէ տեղեակ կ'ըլլայի, բայց նաեւ կը հետեւէ իրադարձութիւններուն, նոյնինքն Այնթապի քարաշէն, բայց հին ու պատմական ժառանգ ունեցող տուներու ճակատագիրին: Ժամանակ մը լսեցի, որ ծրագիրներ կան այդ շրջանի տունները պանդոկ-ճաշարանի վերածելու: Բայց անելի ուշ շուկները սկսան անելիով կեդրոնանալ զանոնք թանգարանի վերածելու վրայ, իսկ քանի մը ամիս առաջ՝ Ապրիլ 2013-ին, յստակացաւ, որ մեր պապեանական տունը արդէն վերածուած է մանուկներու խաղալիքներու թանգարանի:

Մինչեւ հոս պապեանական տան պատմութիւնն էր ու անոր հոլովոյթները, բայց ասկէ ետք կը սկսին յայտնուիլ նոր տուեալներ եւ տեղի ունենալ նոր իրադարձութիւններ:

Արմէն Արոյեանը լուսանկէլըսաբնակ հայորդի մըն է, որ երկար տարիներ ի վեր կը կատարէ ազգային պարտականութիւն-առաքելութիւն մը՝ խումբեր կազմելով եւ ուղեւորուելով արեւմտեան Գայաստան ու Կիլիկիա: Տարիներու ընթացքին ան նաեւ կրցած է տեղական կապեր ստեղծել տարբեր քաղաքներու մէջ, ներառեալ Այնթապի: Տեսնելով Այնթապի մէջ ճեպեճեաններուն պապեանական տան մանուկներու թանգարանի վերածուիլը, ան առաջարկած է Ալիծ ճեպեճեան-Աղպապեանին իրատարակութիւնները՝ հայ մանուկներու համար յատուկ կերպով պատրաստուած ազգագրական-



մանկութային-կենցաղային գիրքեր, տեղադրել թանգարանին մէջ: Ան տեղոյն պատասխանատուները համոզած է ըսելով. «Ալիծին հայրը այս տան մէջ ծնած է»: Արմէն կրցաւ տեղաւորել Ալիծին գիրքերը խաղալիքներու թանգարանին մէջ:

«Անոնք մեր Այնթապի տան կալուածաթուղթերն են»:

Թրչացական մամուլին մէջ այս առնչութեամբ անդրադարձը չուշացաւ, Ալիծին գիրքերուն եւ անոնց միջեւ կապին ու մէկտեղման վերաբերող:

Այֆեր Ունսալ Պոլիս ապրող թուրք լրագրողուի մըն է: Ծնած է Այնթապ եւ հօրմէն լսած է հայերուն մասին: Տարիներու ընթացքին անոր հետաքրքրութիւնը անեցած է հայ ժողովուրդի պատմութեան նկատմամբ եւ սորված է Տեղասպանութեան եւ անոր արհաւիրքին մասին: Այֆեր 19 Յունիս 2013-ին «Սապահ» թերթին մէջ անդրադարձած է թանգարանին եւ Ալիծին, անոր գիրքերուն՝ իր գրութիւնը վերնագրելով «Ինչ զուգահիշարթիւն»:

Թուշացաւ նաեւ իմ է Այֆերի միջեւ հանդիպումը:

«Գայրս լրագրող էր: Մեզ մեծուց եւ սորվեցուց այնպէս, որ սիւնից համերաշխութիւնը եւ խորականութիւն չընենք մարդոց միջին»: Այֆերն է պատմողը: «Գայրս կ'ըսէր, թէ Այնթապ շատ քան կորսնցուց, երբ հայերը ձգեցին ու գացին: Գայրէն ետք մէկ հաստ փոսպան ջմնաց քաղաքին մէջ», ըսաւ Այֆեր:

Մեր գրոյցը սկսաւ հետզհետէ «տաքնալ», որովհետեւ կարելի չէր լիստի Տեղասպանութեան մասին: «Թուրք նոր սերունդը իր պատմութիւնը չի գիտեր եւ չէ սորված: Զի գիտեր Տեղասպանութեան մասին»: Այֆեր կը պատկանի այն խմբակին, որ ստորագրած է ներդրման աղերսագիր-նամակին տակ՝ հայոց Տեղասպանու-



թան վերաբերող: «Ես Անատոլյուն կը սիրեմ իր բնիկ ժողովուրդին որով: Այդ պատճառով է նաեւ, որ կը գրեմ հայերուն մասին»:

Փորձեցի բացայայտել Այֆերի «Ի՛նչ զուգահիւսութիւն» յօդուածին միտք բանին:

«Տունը վերածուած է մանուկներու խաղալիքի թանգարանի Ալիծն ալ մանկապատանեկան գրող է, եւ իր հայրը այս տան մէջ ծնած է: Ասիկա շատ գեղեցիկ զուգահիւսութիւն է», կը բացատրէ Այֆեր: «Այնթապը հիթիթներու ժամանակաշրջանէն եղած է խաղալիք արտադրող քաղաք»:

Այֆեր սկսաւ բացատրութիւններ տալ թրքական մշակոյթին մէջ պատմասացութեան տարբեր երեւոյթներու մասին:

«Մասալները այն պատմասացներն էին, որոնք ոչ անպայմանորէն իրական պատմութիւններ կը պատմեն: Հիքայէն ճիշդն է ու իրականը: Ալիծին որդեգրած պատմասացութիւնը հիքայէն է՝ ճիշդն է: Սիրեցի Ալիծին արուեստը, քանի որ տեսայ իր ջանքը պատմելու արժանատիքուն եւ հայուն ինքնութեան մասին»:

Մեր խօսակցութեան մէջ տեղ մը կար նաեւ քաջքրուց մը: Բան մը, որ ինծի համար յստակ էր: Պատմութեան իրականութիւնները եւ անոր պատասխանատուութիւնները ընդունելու-ընդունելու խուսափողական երկընտրանքը զգալի էր: «Աթաթուրքը կերտեց նոր թուրքիան», ըսաւ Այֆեր: «Անջատեց մեր պատմութիւնը օսմանցիկներէն, եւ անելի ճիշդ պիտի ըլլար, եթէ ինք այն ժամանակ ընդունէր»:

Պատասխանութիւնը: Շատ անելի դիւրին պիտի ըլլար այն ժամանակ, ըսաւ ան: «Ճիշդ չէ, որ ես ու ներկայ սերունդը մեղադրուինք Պատասխանութեան յանցանքով», եզրափակեց Այֆեր:

Դանդախումս աւարտած էր Այֆերին հետ: Եթէ մէկ կողմէ ունեի ընդհակադասական զգացում՝ Այֆերի հետաքրքրութիւններուն եւ ջանքերուն համար, բայց միւս կողմէ նաեւ անոյալ էին նոյն հանդիպման հետզոյցները եւ զանոնք մէկիկ-մէկիկ քակելու անհրաժեշտութիւնը:

Պատասխանութիւնը հայուն եւ թուրքին (նաեւ միջազգային ընտանեկան) պատմութիւններուն մէկ իրական եւ ահաւոր եւ ողբերգական հետադրութիւններէն է: Հայուն, որ կորսնցուց մարդոժ, կալուած եւ ինչ, իսկ թուրքին, որ գործադրեց զայն: Եթէ ներկայիս հայուն համար իր նախնիներն էին, որ նահատակուեցան, թուրքին համար ալ նոյնն է: Իր նախնիներն էին, որ գործադրեցին: Նժարին երկու կողմէն՝ համահաւասար, հակադիր իրավիճակ-իրողութիւններն են այս երկուքին:

Այս իմաստով, Այֆեր, դուն եւ իւրաքանչիւրդ պատասխանատուութիւն մը ունիք ո՛չ միայն ներողութիւն խնդրելու ձեր սխալներուն համար, այլ նաեւ ընդունելու, սրբագրելու եւ հատուցելու ձեր պատմութեան համար:

Ինչ միջոց այդ ճշմարտութիւնը եւ անոր կանչը պիտի հետեւի իւրաքանչիւր անցուղարձի: Ալիծին գիրքերուն տեղադրումը զուգահիւսութիւն չէ, այլ պատմութեան ճշմարտութեան եւ արդար հատուցման մէկ փոքր նմուշն է: Ալիծին գիրքերը վերադարձան հոն, ուր սրբած է իր պատմութիւնը, հոն ուր կան նոյնինքն իր՝ Ալիծին անունները:

Ճիշդ եւ, Այֆեր, այս ակունքները իրական են, եւ Ալիծը այս իրական պատմութիւնն է, որ կը պատմէ ու կը գրէ: Ասիկա զուգահիւսութիւն մը չէ, այլ իրական պատմութիւն, որ կը վերադառնայ իր իսկական ու իրազատ տունը:

Յիշե՛ք վերջացաւ Այֆերի հետ խօսակցութիւնը, բայց կան տակալուն հորեղբորս խօսքերը, որոնք զօրաւոր կերպով լսելի են. «Ասոնք մեր Այնթապի պապենական տան կալուածաթուղթերն են: Հայրդ եւ ես նոս ծնած ենք»:

Իւրաքանչիւր հայ իր ականջին ու հոգիին մէջ ունի այս խօսքերը. «Ասոնք մեր տունները եւ կալուածներն են: Մեր մեծ հայրերը եւ մեծ մայրերը հոս ծնած են: Ասոնք մեր հողերն են»: Ասիկա արդէն հայուն պայտօրան օրակարգն է: Ճանաչումէն պահանջատիրութիւն:

Ուրեմն զուգահիւսութիւն չէ, այլ պատմութեան ու ներկայ օրերու ճշմարտութեան եւ արդարութեան տունդարձ:

# «ՀԱԼԵՊ ԿԸ ԾՆԻՆ, ՊԷՅՐՈՒԹ Կ՛ԱՊՐԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ ԿԸ ՄԵՌՆԻՆ»

Վերոյիշեալը հօրս եւ իր ընկերներուն բարեկամական գրոյցներու ընթացքին արտայայտուած խօսքերէն եւ միտքերէն է: Կիրակի յետմիջօրէններուն մեր տան մէջ, Պէյրութ, հայրս եւ իր բարեկամները կը գրուցէին մշակութային եւ ազգային շատ մը նիւթերու մասին:

Բոլորն ալ հոգեպէս եւ մտովին ծանրաբեռնուած կ'ըլլային ազգային մեր մտահոգութիւններով, որոնք իրենց գլխաւոր օրակարգը ունենալով կը գրուցէին եւ կը վիճաբանէին: Վերոյիշեալը իրենց նիւթերէն էր, եւ թէկուզ քիչ մը կարօտով, բայց անպայմանօրէն յուզում եւ տրտմութիւն խառնուած՝ անոնք հայուն ճնշուած եւ պարտադրուած ճակատագիրը կ'որոնէին:

Մանկութեանս եւ պատանեկութեանս տարիներուն ներկայ կ'ըլլայի հօրս եւ իր բարեկամներուն հաւաքներուն, մտիկ կ'ընէի անոնց գրոյցները, թէկուզ ամէն բան չհասկնալով, բայց մտքիս ու հոգիիս մէջ տեղ մը բոյն կը շինէին այդ բոլորը, երեւի որպէսզի անդրադառնամ լրացնելու խորքին, երբ մեծնայի ու սկսէի ատակ դառնալու այդ բոլորը լաւապէս ընկալելու:

Եւ այդպէս ալ եղաւ: Ժամանակի ընթացքին սկսայ սորվիլ եւ հասկնալ հայուն՝ իմ, պատմութիւնը: Ցեղասպանութիւնը եւ անոր արհաւիրքը: Զօրս եւ իր բարեկամներուն գրոյցին եւ կատակ-յուզումին բովանդակութիւնը: Թէ ինչո՞ւ համար «հայը Զալեպ կը ծնի, Պէյրութ կ'ապրի եւ Ամերիկա կը մեռնի»: Եւ թէ հօրս պատմութիւնն ալ մէկ փոքր օղակն էր այդ կատակ-յուզումին:

Զալեպ չէր ծնած. իր պատմութիւնը սկսած էր ատկէ առաջ: Շատ մատուկ տարիքին, հագիւ Նորածին, հայրս ծնողներուն հետ Այնթապէս եկած էր Զալեպ: Զասակ առած ու սորված էր Երազային Զալեպի մէջ, որմէ ետք անցած էր Պէյրութ՝ իր կեանքը շարունակելու: Զամալսարան, սասարեզ, ընտանիք եւ մշակութային-երաժշտական ճոխ կեանք: Բայց հայրս չհասաւ Ամերիկա մահանալու: Մնաց, մահացաւ եւ թաղուեցաւ Պէյրութի մէջ՝ իր կատակ-յուզումը (չ)ամբողջացնելու տեսլականով: Բայց այս տեսլականը խորքին մէջ իւրաքանչիւր հայու ողիսականն է: Ցեղասպանութիւնը ապրած, հայրենի հող ու տուն կորսնցուցած եւ սփիւռքի տարբեր գաղութներու մէջ իր տուն-տունները շինած (մէկը միասին ետեւէն, եւ թերեւս արագ-կամաց հերթակա-

նութեամբ): Սփիւռքեան հոս-հոն հողերուն մէջ վերջացնելով երկրային կեանքը:

Մյս էր հայուն ճակատագիրը: Ես պիտի հասկնայի կատակ-յուզումը հօրս եւ իւրաքանչիւր հայու, թէ ինչո՞ւ էր այն մտածումը. «Զալեպ կը ծնի, Պէյրութ կ'ապրի ու Ամերիկա կը մեռնի»:

Բայց եւ այնպէս կեանքը շարունակուեցաւ ու տակաւին:

Մէկ կողմէ անհատական, միւս կողմէ ընտանեկան ու տակաւին ազգային-միութենական եւ եկեղեցական, հոս թէ հոն, մէկ գաղութն միւսը, հայը շինեց ու շարունակեց ապրիլ-վերապրիլ, որովհետեւ հաստաց գերագոյն իրականութեան մը՝ ազգապահպանումին:

Զալեպ ծնաւ կամ այլուր, հայը առաւ այդ երկրին դրոշմը, կնիքը ու նկարագիրը շինեց ու շնչուց: Պէյրութ փոխադրուեցաւ կամ այլուր դարձնալ ջրաւ Նոյնը: Ու եթէ տակաւին Ամերիկա կամ ուրիշ տեղ ուղղուեցաւ, դարձեալ Նոյնն է, որ կը շարունակուի՝ ազգապահպանումի եւ հայապահպանումի տեսլականը: Եւ այս տեսլականը անզամ մը եւս ապրեցայ 18 Դոկտեմբեր 2012-ին, Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց ազգային վարժարանին մէջ:

75 հայ մանուկներ եւ պատանիներ: Մանկամտօր, մանկապարտէզ, Նախակրթարան դասարաններու, մինչեւ 6-րդ դասարան: Խումբ մը նուիրեալ հայ ուսուցիչներ եւ Չարմինե Պօղոսեանը՝ տնօրէնուհի: Նիւ Եորքի նման այս հսկայ քաղաքին մէջ, ուր կեանքը ու անոր յառաջացուցած հեւքը բեզ կրնայ մինչեւ իսկ շնչահեղձ ընել, յատկապէս հաւանաբար կը փորձուիս մտածելու եւ ըսելու. «Ինչո՞ւ համար



« այս փոքրիկ հայկական վարժարանը այս հսկայ քաղաքին մեջ»

Չարմինե եկած էր Յալեպեն: Իրեն համար հայակերտումը եւ ինքնութեան պահպանումը վեր է ամեն զոհողութենէ եւ սակարկութիւններէն: Յալեպի ազգային շունչով մեծցած ու դաստիարակուած ան կը շարունակէ նոյն ուժգնութեամբ եւ խանդավառութեամբ նոր սերունդները հայ մեծցնելու նպատակով: Եւ հայուն սփիւռքեան կեանքի երթն է այս: Չարմինե Նիւ Եորքի մէջ նաեւ կ'ապրի Յալեպի սերը եւ այսօր նաեւ ռմբակոծումը, ժողովուրդին վախը, իր ապրած փողոցներուն հրկիզումը:

Եթէ այքերուն մէջ կայ կարօտ, բայց նաեւ զսպուած արցունք, քսնի Յալեպը որպէս ծննդավայր՝ կարեւոր հիմք է իր կեանքին: «Ամուսինս եւ ես կը մտածէինք Յալեպ վերադառնալ հանգստեան կոչուն լին ետք»: Չարմինեի երազային Յալեպին իրականացող-չիրականացող երազն է ասիկա:

Երբ կը մտնեմ փոքր դպրոցին տարբեր դասարանները, կը փորձ ունիմ հարց տալ ես ինծի, թէ արդեօք Սրբոց Նահատակաց ազգային վարժարանի առաքելութիւնը Նիւ Եորքի մէջ կրնայ նմանիլ Աստուածաշունչի Դաւիթի եւ Գողիաթի անհաւասար ուժերու մենամարտին:

Յուրի Դուկասեանը կու գայ Պէյրութն եւ հայերէնի ու հայոց պատմութեան ուսուցիչն է: Երբ լսեցի հայ պատանիին հայերէն արտասանութիւնը, եւ թէ ինչպէս անոնք սորված էին հայ ժողովուրդի

անսովորութիւնն ու անոր կազմաւորումը, անդրադարձայ այն իրականութեան, որ Դաւիթը իր անհաւասար մենամարտին եւ ուժին ու կարողականութեան մէջ, նաեւ յաղթեց Գողիաթին:

Ինչո՞ք հայուն փորձառութիւնը այս չէ՞ արդեօք: Անհաւասար մենամարտ՝ պայքարի իր պատմութեան շատ մը հոլովոյթներուն մէջ: Ու այս անհաւասար ճակատներուն վրայ եթէ հայը պարտուեցաւ, բայց հարձնալ ուղիքի ելաւ, եթէ կործանեցաւ՝ նորէն շինեց, եւ եթէ մեռաւ՝ անիթը ստեղծեց, որ յաջորդները ապրին ու շարունակեն: Եւ այս բոլորը կրցաւ ընել հայը, քանի հաւատաց հայապահպանումի տեսլականին: Ինքնութեան կանչը իր սրտին ու հոգիին մէջ՝ հայուն անհաւասար մենամարտը կը շարունակուի: Նաեւ Նիւ Եորքի մէջ:

Չարմինե եւ իր փոքր գումարտակը՝ Յուրին, Անին, Մարոն եւ Բոնիֆինը՝ Յալեպեն, Պէյրութն, Երուսաղէմէն ու տակաւին... Նիւ Եորքէն՝ կը շարունակեն նուիրումով այս անհաւասար մենամարտը մինչ: Բայց հայուն գոյապայքարի մեծ մարտահրաւէրն է ասիկա:

Նոյնիսկ երբ Յալեպ (կամ այլուր) կը ծնի, Պէյրութ (թէ ուրիշ տեղ) կ'ապրի եւ Ամերիկա (ու տակաւին այլ վայրեր) կը մեռնի: Յայուն կատակութեամբ է այս իրականութիւնը: Թէ պետք է շարունակել ապրիլ իրական կեանքը Յալեպ, Պէյրութ, Ամերիկա, թէ այլ տեղ:



## «ՉԵՌՔԷ ԵՒԱԾ Է»

Երրորդը Կիպրոսի Լիկոսիա մայրաքաղաքի դրամատուներեն մի կուև պաշտօնեաներեն է: Ան միջին տարիքի սերունդին կը պատկառնի, անոր համար գործը, արժանապատուութիւնը եւ բարոյական արժեքափէրը կարելուր գրաւականներ են իր կեանքին ու ասպարէզին համար: Տարիներու ընթացքին կատարած դրամատաշին գործառնութիւններու ճամբով մեր միջեւ կերտուեցաւ պաշտօնեայ-յարձախորդ յարաբերութենէն աւելի բան մը՝ բարեկամութիւն եւ հաղորդակնութիւն: Նկատի ունենալով, որ Կիպրոսը միջերկրականեան երկիր մըն է, հոն կեանքի արժեքափէրն ու կենցաղային հոլովոյթնրը շատ աւելի միջինարեւելեան են, քան եւրոպական, անկախ այլ իրողութենէն, որ Կիպրոս եւրոպական Միութեան անդամ է:

Երրորդի հետ մեր բարեկամութիւնը դրսեւորուած է սուրճի գաւաթի շուրջ հանդիպումներով, որոնց ընթացքին ծանօթութիւնները առաւել եւս կ'ամրապնդուին, կարծիքներու փոխանակում կը կատարուին եւ տեսակետներ կը ներկայացուին:

Կիպրոսը վերջին քանի մը տարիներուն կ'ապրի տնտեսական նիւթական մեծ տագնապ մը: Մեծ է տուժածներուն թիւը, անգործներու եւ սնանկացածներու շրջը:

Երրորդս եւս երկրին մէջ ստեղծուած տնտեսական տագնապին իր «տուրքը» կը վճարէ: Ինչպէս տարբեր հաստատութիւններու մէջ աշխատողներուն պարագային, Երրորդի ամականը եւս նուազած է քան առ հարիւր համեմատութեամբ: Ասիկա բնականաբար պիտի ենթադրէ, որ Երրորդի կեանքին մէջ այլ նոր պատշաճեցումներ կատարուին: Ան կը գիտակցի այս իրականութեան, բայց եւ այնպէս կ'անորադառնայ նաեւ, որ տնտեսական ճգնաժամին ազդեցութիւնը նաեւ պիտի հասնի կեանքի ընկերային-կենցաղային բնագաւառին, որովհետեւ այս բոլորը շարկապարած են իրարու: Ան կը գիտակցի, որ կեանքի ամեն մէկ միաւորին ջլատումը կ'առաջնորդէ միասին եւ կ'ազդէ միասին վրայ:

Ստերմիկ հանդիպումի մը ընթացքին ուշի ուշով կ'ունկնդդէ Երրորդի ըսածները՝ գիտնալու, թէ իբրեւ տեղացի ան ինչպէ՞ս կը վերլուծէ կացութիւնները: Ինձի համար անհրաժեշտ էր տեղական քննադրումը՝ ընդհանուր իրավիճակին: «Մեր քաղաքացիական, վարչական, պետական եւ հաւաքական կեանքերը մտահոգիչ իրավիճակ մը կը պարզեն», ըսաւ ան: Քիչ մը աւելի խորանալով նիւթին մէջ, ոչ շատ լարատեսութեամբ, մտահոգ շեշտով աւելցուց. «Ձեռքէ ելած է»:

Բայց Երրորդի համար կար աւելի կարելուր նկատողութիւն մը՝

տագնապին եւ կացութեան նկատմամբ հաւաքական զգաստութեան անհրաժեշտութիւնը: Ան կը գիտակցի, թէ նեղութիւնը կրնայ մտրոգ հատունացնել, եթէ կայ սորվելու եւ զգաստանալու ցանկութիւնը: «Բայց ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի սորվին սխալներէն», հարց տուաւ ան:

Մեր քարեկամութեան քերուով ան գիտեր իմ աշխատանքս եւ նետաքրքրութիւններս. ուստի պզտիկ ժպիտ մը ուրուագծելով իր թիւքին վրայ ըսաւ. «Դուն Աստուածաշունչի մարդ ես, եւ Աստուածաշունչը յաճախ կը խօսի զգաստութեան մասին»:

Ճիշդ էր Երրորդս: Ոչ թէ որովհետեւ ես Աստուածաշունչի մարդ եմ, այլ որովհետեւ Աստուածաշունչին մէջ յաճախ կը խօսուի զգաստութեան մասին:

Թեւ բաժնեցի անոր ըսածը, սակայն ես ինձի հարց տուի. «Արդե՞նք տագնապս այսօր տարբեր է անկէ, որ կը չարչոկէ Երրորդը»: Արդե՞ք մեր հայկական տագնապները, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, անոնց պատճառով ստեղծուած կացութիւնները, անկախ խորքային տարբերութիւններէ, նաեւ կրնան կամրջուի՞լ Երրորդի մտահոգութեան տարբերակին: Թերեւս «ձեռքէ (չ)ելած է՞» կամ մեղմ ըսած՝ «ձեռքէ ելելու վրայ է՞»: Հապա՞ հայրու զգաստութիւնը, եւ ո՞վ կամ ոչին՞ր պատրաստ են սորվելու սխալ փորձառութիւններէ, նաեւ ինչպէ՞ս: Այս հարցումը կ'ուղղուի հաւասարապէս Հայաստանի եւ սփիւռքի պարագային՝ զիրար հալածող եւ մէկը-միւսին վրայ կուտակուող շատ մը հիմնահարցերով:

Բայց նաեւ կ'արժէ փակագիծ մը բանալ եւ վեր առնել Աստուածաշունչին բացատրած զգաստութեան հասկացողութիւնը:

Պրուկման՝ ժամանակակից աստուածաբան մը, անդրադառնալով քաղաքական, տնտեսական, մշակութային եւ ընկերային ենթահողերուն եւ անոնց իրավիճակներուն կը բացատրէ, թէ Զրիստոս կրցաւ աշխարհը «քակել» իր խաչելութեամբ եւ հաստատեց կեանքի եւ նոր սպազայի ուժը, որ Աստուծոյ կողմէ տրուած շնորհք է՝ ամբողջութեամբ արդիւնաւորուած Անոր յարութեամբ: Այս յարութեամբ է, որ նոր կեանք տրուեցաւ Յիսուս Զրիստոսի միջոցով: Զրիստոս քննադատեց տիրող կացութիւնը, բայց ըրաւ աւելին: Ան փոխեց կարգապիճակը իր խաչելութեամբ եւ նորը ստեղծեց իր յարութեամբ:

Այս աստուածաբանական տեսանկիւնէն մեկնելով Պրուկման կ'ընդարձակէ իր քաղաքական, ընկերային ու տնտեսական իրավիճակներու քննարկում-տեսութիւնները եւ կ'ըսէ. «Հիմնական նպատակն է կազմել հաւաքականութիւն մը եւ արթնութիւն մը, որ ոչ միայն կը քննադատէ ու կը քակէ ներկայ իրավիճակը, այլ կը փոխարինէ զայն նորով: Զակելը նպատակ չէ: Զակելէ ետք անհրաժեշտ է

հաւաքականութիւնը վերակարգել, վերակազմաւորել, որպէսզի կարելի ըլլայ նոր մարդկութեան սկիզբը ապահովել» («Մարգարեական Տեսիլք», 2001):

Եթէ պիտի սորվինք սխալներէն, այս կը նշանակէ, թէ պէտք է ազատութիւնը ունենանք քննադատելու: Այս գծով Օրուէ կ'ըսէ՝ «Ազատութիւնը մարդոց լսել չուզածը կարենալ ըսելն է»: Բայց անորաժէշտ է նաեւ զգաստանալը՝ ազատ քննադատութիւնը դրական ուժի վերածելը իբրեւ նոր ապագայի կենսքի ուժ: Այս ուժով կարելի է ստեղծել նորը՝ նոր մարդկութեան սկզբնաւորութեան ապահովումը:

Քննադատելը միայն «քակել»ու օգտագործելը աննպատակ է ապարդիւն է, եթէ չկայ փոխելու եւ վերակարգելու գայն՝ նորին հասկացողութեամբ: Այս տեսլականին մէջ է, որ պէտք է փնտռել եւ տեսնել զգաստութեան հասկացողութիւնը:

Երրորդս իր անկունին մէջ կը գիտացի, թէ անորաժէշտ է սորվել անցեալի սխալներէն, բայց ան նաեւ կ'ուզէ զգաստ մնալ, որպէսզի կարելի ըլլայ նորը ստեղծել: Դայուն համահայկական ամենէն մեծ մարտահրաւերներէն մէկը զգաստութիւնն է, հոն, ուր ձեռք ելած կամ ձեռք ելլելու վրայ է իրավիճակը ո՛չ միայն կը քննադատուի, այլ կը փոխուի եւ կը փոխարինուի նորով:

Նորը հայուն շարունակականութիւնը ապահովող գրաւականն է որուն վրայ պէտք է հիմնել վաղուան ուժը:

## «ՄՇԱԿՈՅԹ-Ը ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ Է»

«Ոս Կիրոսի ծայնասփիւռի կայանի հայկական ժամն է»:

Անկութեանս եւ պատանեկութեանս շրջանին ամէն Կիրակի կէտքս ետք ժամը ճիշդ երեքին կրկնուող նախադասութիւնն է վերոյիշեալը, որ կը լսուէր մեր տան ճաշասեղանին կից գտնուող շատ հին կահույքներուն մէջ նորութեան խորհրդանշիչ նման կանգնած մեր տն ու պզտիկ ծայնասփիւռին ընդմէջէն: Ծնողքիս մնայուն պատուէրն էր քնա չդպչիլ ծայնասփիւռին ալիքներու կլոր շարժիչներուն, որովհետեւ մեծ ճիգ պէտք էր ո՛չ միայն շարժիչը դարձնելը, այլ նաեւ Կիրոսի կայանին ճիշդ ալիքին տեղը գտնելը: Ասիկա ամէն Կիրակի կէտքս ետքերու կրկնուող մեր հանդիսութիւնն էր, որուն կը միատարր չդուշանանք եւ մտիկ ընենք»-ի հեւքը, որպէսզի կարենայինք յոյս մէկ ժամ տեսողութեամբ պատրաստուած վերոնշեալ նախադասութեամբ սկսող ռատիոժամը:

Մայր պատանիներուս համար ամենէն հետաքրքրականը հայերէն լսելն էր, եւ այս անգամ ոչ թէ փողոցը, դպրոցը, եկեղեցին կամ տնոմթը, այլ ծայնասփիւռէն: Դետաքրքրական էր, որ Կիրոսէն կու գար այս ծայնը, երբ Պէրոսը այդ օրերուն իր բոլոր յառաջընթացներով տակաւին չուներ ծայնասփիւռէն սփռուող հայերէն յայտագիր, եւ միայն աւելի ուշ սկսաւ Պէրոսի ծայնասփիւռի կայանէն սփռուիլ հայերէնով յայտագիր՝ օրական դրութեամբ:

Կիրակի կէտքները յաճախ, երբ տակաւին ճաշասեղանին շուրջ նստած կ'ըլլայինք, ծնողներս կը կրկնէին՝ ըսելով. «Տեսնեց այսօր ո՛չ յայտագիր ունի Սեպուհ Աբգարեանը»: Յայտագիրը կը սկսէր Աբգարեանին մեղմ ծայնով, յստակ առօրեականութեամբ ու հնչիւնով, ունէր երգի եւ լուրերու բաժինները, որոնց կը յաջորդէր «Ձեր պատուիրներու յայտագիր» բաժինը՝ հայկական, ժողովրդային եւ եղբայրային երգերու գեղեցիկ փունջով: Այս ռատիոժամին ընթացքին, սովորաբար կար ինծի համար անհասկնալի, անորոշ եւ քիչ մըն ալ ստիպող մասը՝ ծանուցումներուն բաժինը, որ կը ծանուցէր «Լազիգա» գարեջուրը՝ իրեն յատուկ երգով, թէ «Ի՛նչ համեղ է Լազիգան», եւ ստիկա կը պատահէր այն ժամանակ, երբ Էշրեֆիէի Մոնթէ Լապիան քարձուցքին վրայ գտնուող մեր տան մօտ նոյն գարեջրատան գործարանէն ելած գարշելի հոտը մեր փողոցն ու տունը կը լեցնէր, մեզ քնա ընկալեցինք այդ գարեջուրին հաճելի ըլլալը:

Սեպուհ Աբգարեանին ծայնը թէ՛ կ'ուրախացներ եւ թէ՛ կը հպարտացներ մեզ՝ մեր ականջին համար շատ հաճելի իր հայերէնով: Պէտք էր մեծնայինք, որպէսզի սորվէինք, ծանօթանայինք եւ առաւել

ևս ճանչնալիք զաղութներուն հովովոյնները. այս պարագային խօսքը կը վերաբերի կիպրահայ գաղութին եւ սփիւռքեան իրակա-  
նութեան մէջ անոր ունեցած մեծ ու անժամանցելի ազգային կրթա-  
դաստիարակչական ներդրումին՝ Մելգոնեան կրթական հաստա-  
տութեան ընդմէջէն: Սեպուի Արքարեանին անունը նոյնացած էր  
հաստատութեան հետ երկար տարիներու ընթացքին ուսուցչական,  
մշակութային եւ գեղարուեստական կեանքին մէջ անոր ունեցած  
ներդրումով:



Մելգոնեան հաստատութենէն ետք Սեպուի Արքարեանին անունը  
անուցուեցաւ ԳՈՅԱՐ երաժշտական-գեղարուեստական համոյթին  
հետ եւ այս առիթ ընծայեց աւելի ճանչնալու զինք: Տարիներով շա-  
րունակ ինծի համար (ան)ծանօթ Սեպուի Արքարեան ի վերջոյ դար-  
ձաւ իրական ո՛չ միայն իր ձայնով, այլ նաեւ իր ֆիզիքական ներկա-  
յութեամբ: Չուզադիպութեամբ թէ ոչ, չէմ գիտեր, Սեպուի Արքարեա-  
նին հետ հանդիպում մը ունեցայ Կիրակի օրով, դարձեալ կէսօր  
ետք, Կիպրոսի մէջ: Պատմութիւնը ինքզինք կը կրկնէր կարծօք, անց-  
եալէն ժամանգուած եւ իրականութեան վերածուած այս երկու կի-  
րակիներուն միջեւ անպայման կար կապ մը. յայտագիրը ունկնդրած  
պատասնեկան կիրակիներուն եւ 9 Դեկտեմբեր 2012-ին միջեւ գլորած  
ու սահած էին տարիներ, եւ մէջտեղ եկած էր Նոր կեանք մը, շատ ար-  
ժեշտօր, բայց նաեւ փորձառութեամբ եւ վկայութեամբ լեցուն:

Եթէ պիտի յիշեմ Սեպուի Արքարեանը, զինք անպայման կը յիշեմ  
մտնկութեան եւ պատասնեկութեան տարիներու իր յայտագիրնե-  
րուն ազդեցութեան տակ ապրած կեանքիս ընդմէջէն, բայց նաեւ իր  
պատրուակ գործով, զոր կը կատարէ ԳՈՅԱՐ համոյթին միջոցով: Այս  
փորձառութիւնը, որ լի է վկայութիւններով, պատմութիւններով,  
ուսն եւ անուշ յուշերով ու տպաւորութիւններով, լի է նաեւ ազգային  
ինքնութեամբ, մշակոյթի եւ հաւատքի դրոշմներով: Զանի մը ժամ-  
ուան ընթացքին շրջագայեցանք մեր ազգային տարբեր բնագաւառ-  
ներուն մէջ՝ լուսարձակի տակ աննելով շատ մը արժեքներ, միշտ վե-  
րահառնալով մշակոյթին, որպէս հիմք մեր կեանքին եւ անոր շարու-  
նակութեան:

Մեր ընտանիքը ծանօթ էր Սեպուի Արքարեանին, քանի որ անոր  
հայրը եղած էր հօրս ու հօրեղբօս հայրենի եւ մարմնակրթութեան  
ուսուցիչը. եւ ան յաճախ խօսած էր մեր ընտանիքին մասին: Թէեւ  
Մելգոնեան կրթական հաստատութեան փակումը ճնշած էր Սեպուի  
Արքարեանին վրան, բայց եւ այնպէս հաւատքի մարդ ըլլալով՝ ան  
հաստատած էր. «Եթէ դուռ մը զոցուեցաւ, բայց Աստուած ինծի պա-  
տուհան մը բացաւ: Մեծ պատուհանը եղաւ իմ մասնակցութիւնս ԳՈ-  
ՅԱՐ համոյթի առաքելութեան»:

Այդ մեծութիւնը կու գայ ԳՈՅԱՐ համոյթին կողմէ հայ ժողովուր-  
դին տրուած մշակութային եւ գեղարուեստական մեծ նպաստով: Սե-  
պուի Արքարեան կը գիտակցի իր ըրած գործին կարեւորութեան,  
եղախտապարտ՝ հաշատուրեան ընտանիքին, եւ Սեպուի ու Սարո  
Միրօբեան եղբայրներուն կազմակերպչական գործակցութեան: Ան  
նաեւ ունի գիտակցութիւնը, թէ մշակոյթը իւրաքանչիւր ժողովուրդի  
համար ինքնութիւն է, բայց նաեւ զգաստութիւն: Աջեքը վրաս սեւե-  
նից, կ'երեւի ամփոփուելու ու կեդրոնանալու համար, եւ իր ապրած  
կեանքէն քաղուածք մը կատարելով՝ հաստատեց. «Մշակոյթը զգաս-  
տութիւն է»:

Մեր Կիրակի կէսօրէ ետքի հանդիպումը շատ աւելի երկար տեւեց,  
քան Կիպրոսի հայկական ռատօժամի յայտագիրը: Վերջապէս, եր-  
կար տարիներ անցած էին, որպէսզի ծանօթ-անծանօթ բարեկամու-  
թիւնը եւ հանդիպումը կամրջուի. ինչ կար նաեւ մշակոյթի եւ անոր  
արժեքներուն նկատմամբ զգաստ մնալու գիտակցութիւնը, ինչ որ  
անկարելի էր չափել ու համեմատել ժամերու հասկացողութեան:

Երկու կիրակիներուն մէջ, ժամանակի հասկացողութեան կողքին,  
կար նաեւ երախտագիտութեան զգացումը. «Շնորհակալութիւն»,  
Սեպուի Արքարեան, որ մեր պատանի տարիքին սորվեցուցիր  
զգաստ ըլլալ հայկական մշակոյթին արժեքին եւ աւանդին նկատ-  
մամբ»:

Եւ եթէ այսօր մեծ զոհողութեամբ եւ վճռակամութեամբ տակաւին կ'ուզենք ամուր պահել մեր մշակոյթն ու անոր արժեքները, ապա պէտք է գիտակցինք, որ մշակոյթը եւ մեզ զգաստ կը պահէ, կը վերածէ արթուն պահակներու, վկաներ ըլլալու համար մեր ազգային ինքնութեան ու աւանդին եւ պահանջատիրութեան եւ հայապահ պանման:

Սեպուհ Աբգարեան ներս մտաւ մեծ պատուհանէն, քանի որ հաւատացած էր, որ մշակոյթը մարդը, ժողովուրդը, հաւաքականութիւնը կը զգաստացնէ: Կիպրոսի ծայնասփիւռի կայանին հայկական իւրաքանչիւր յայտագիրի ընդմէջէն մենք քիչ մը ատելի կապուեցանք հայ մշակոյթին, իսկ ԳՈՂԱՐ համոյթը այսօր աշխարհով մէկ իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէ հայը իր մշակոյթին եւ արժեքներու նկատմամբ միշտ զգաստ պահելու առաքելութեան:

Մշակոյթը զգաստութիւն է, բայց նաեւ առաքելութիւն՝ անցեալի ժառանգուած, եւ որ արժէ տանիլ վաղուան եւ ապագային:

## ԱԼԶԱՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒԽՆԵՐ. «ՉԵՄ ԳԻՏԵՐ ԻՆՉՊԷՍ Կ'ԸՆՆԵՆ»



«Գերզն ալ հայ մըն է, որ նոր հաստատուած է Սթրազպուրկ»:

Պայր Զերըլտ Նահապետեանը կու գայ Զանատայէն. ան հոգեւոր էր իրեն է Սթրազպուրկի Անկլիքան եկեղեցոյ: Երեքշաբթի, 25 Դեկտեմբեր 2012-ին՝ Սթ. Շննդեան օրուան պաշտամունքին, ան պատգամեց Զոհստոսի ծննդեան արժեքին մասին: «Զոհստոսի ծննդեան թուականը կրնայ յստակ չըլլալ, բայց եւ այնպէս կը տօնենք ան: Ստորի, քանի որ կայ արժեքը», ըսաւ ան: Բայց հետաքրքրական էր նաև, որ իր կատարած մէքերումին մէջ իբրեւ օրինակ յիշեց իր հոր կարգաձայն. «Յայրս ալ իր ծննդեան թուականը չէր գիտեր, բայց եւ այնպէս ամէն տարի կը տօնէիք իր տարեդարձը», ըսաւ ան: «Կ'ուզէիք տեսնել իօրս ապրած ու ապրելիք կեանքին արժեքը», եզրափակեց ան:

Ցատակ էր հայր Նահապետեանի հոր ծննդեան թուականին անյայտակութիւնը: Տեղասպանութենէն ճողորպած հայրը հոս ու հոն թափառել էրը հասած էր Զանատա՝ իրեն հետ բերելով միայն ինք իր անձը: Կեանքը կերտած էր հոն՝ Զանատա, առանց յիշելու իր ծննդեան թուականը, բայց լաւապէս յիշելով ու կառչելով այն վճռակամութեան, որ հայուն կեանքը պիտի շարունակուի: Իսկ Զերըլտ Նահապետեան լաւագոյն կենդանի օրինակը կը հանդիսանայ այդ շարունակականութեան, մանաւանդ որ անոր կեանքը նուիրուած էր Զոհստոսի եւ անոր եկեղեցոյ քարոզչութեան:

Պայր Նահապետեան եւ ես զրուցեցինք հայերէնով, բայց կար անկ' ատելին՝ ինքնութեան եւ պատկանելիութեան ջերմութիւնը, որ կարծես իրեն համար տարբեր բան մը կ'աւելցնէր այդ օրուան եկեղեցի-ժողովուրդ հաղորդակցութեան մէջ, մանաւանդ որ բոլոր հա-



ատացեալները ոչ հայեր էին: Գերըստ խանդավառ էր, որ կը գրուի ինչ հայերէնով, անոր խանդավառութեան վրայ բան մըն ալ անկացաւ, երբ Գերոզին ձեռքէն սեղմած՝ ջուլս եկաւ եւ ծանօթացնելով յայտնեց, որ ան ալ հայ էր:

Գերոզ երեք ամիս առաջ եկած է Գայաստանէ: Երիտասարդ ու կորովի՝ հայու եւ իր հայրենի տան ջերմութեան կարօտով, գրուցն ինծի եւ հայր Նահապետեանին հետ: Եկեղեցոյ ցուցատախտակին վրայ տեսած էր հայր Նահապետեանին անունը՝ հայ մը, եւ քաջալիր ուսած էր եկեղեցի մտնելու, ծանօթանալու եւ ինքզինք ծանօթացնելու: Կարօտն էր միայն, թէ՛ արեսն ու ինքնութեան կանչը եւ:

Եւ շարունակեցինք մեր գրոյցը: «Ի՞նչ գործով կը զբաղիս, ի՞նչ պիտի ընես հոս», եղաւ Նահապետեանին առաջին հարցումը՝ Գերոզին ուրողւած: «Յայտնի չէ», եղաւ պատասխանը: «Ի՞նչ է իրաւական կարգավիճակդ այս երկրին մէջ» հարցումին պատասխանը եւ «յայտնի չէ» էր: Բայց կայ աւելին. «Ի՞նչ կը ծրագրես ընել»: «Չեմ գիտեր», պատասխանեց Գերոզ: Ես բաւականացայ միայն մտիկ ընելով, իսկ հայր Նահապետեանի ղէմքին վրայ ուրուագծուած էր փոքր ժպտի մը, որուն տոնի յստակ կերպով կ'արտացոլային մտահոգութիւնն ու յուզումը: Գերոզին ներկայութեան ինծի Նայելով եւ Գայաստանէն արտագաղթող բոլոր հայերուն ակնարկելով ու անոնց վիճակը մատնանշելով՝ ըսաւ. «Չեմ գիտեր ինչպէ՛ս կ'ընեն»:

Կոնցս հետ գրուցելով՝ կը թափառէիք ու կը հիանայիք Սթրազբուրկի եւ Ալզասի շրջանի գեղեցկութեամբ, նաեւ կը սքանչանայիք Աբ. Տնունդի առիթով գեղեցկօրէն զարդարուած փողոցներուն եւ թիւնը՝ ժպտելով, ջերմութեամբ մօտեցաւ մեզի եւ ըսաւ. «Ես ալ հայ եմ»: Սիրանուշ բաւականացաւ ըսելով, որ եկած է Գալիպէն: «Բայց Գալիպէ արեւելահայերէն չէն խօսիր», եղաւ իմ արագ ակնարկութիւնս: Սիրանուշի պատմութիւնը չուշացաւ: Տողըք բանի մը տարիէ ի վեր հասած են Ալզասի այս ափերը: Ինք փորձած է ամեն ձեւով ելլել մը գտնել՝ դուրս գալու համար հայրենի տունէն: Գալիպէն եղած է առաջին հանգրուանը: Գալիպէն ետք «բախտը բացուած է», հասած է միացած է իր ըստանիքին: Սիրանուշ ապրած էր Գալիպէի եւ հայկական գաղութի ջերմութիւնն ու հաղորդականութիւնը, իսկ այսօր այդ բոլորը կը փնտռէր Սթրազբուրկի մէջ: Խօսեցանք, ապա բաժնուեցանք, իսկ քիչ անց Սիրանուշ վերադարձաւ եւ ըսաւ. «Յիմն խօսեցայ մօրս հետ, կը բարեւ ձեզի եւ կ'ուզէ, որ անպայման մեզի այցելէք»:

Թեւ չկրցանք Սիրանուշի խնդրանքին ընդառաջել, բայց ապրիլ ցանց եւ վայելեցինք պահը հայուն կարօտին ու անոր հաղորդակցու-

թեան ջերմութիւնը: Սիրանուշ կը փնտռէր զայն՝ կարօտը, կարօտ հայուն, հողին, տան, բարեկամութեան՝ իր տարբեր երեսներով եւ հայրենով: Ծանօթ անծանօթներ էինք, մեր կապին մէջէն պիտի առնուէր հայուն կեանքին հետ հայօրէն հաղորդակցելու իրօճուանքը՝ սիրով շատ կարճ պահուան մը համար, սակայն շատ արժեքաւոր ու պիտանի որսերորումով:

Մտակը 35 տարեկան ուժեղ եւ ժպտուն երիտասարդ մըն է, որ անոն տասը տարիէ ի վեր հաստատուած է Սթրազբուրկ: Տնողքն ու երջայրը Գայաստան կը գտնուին, իսկ ինք առանձինը կ'ապրի այս քաղաքին մէջ: Փորձած է համալսարանական ուսում մը կորզել՝ հաստատուած-չհաշտուած իր կեցութեան տասը տարիներուն ընթացքին, բայց ապարդիւն: Իսկ հիմա ան թարգմանական գործեր կը կատարէ՝ թիրապետելով ֆրանսերէնին՝ կը փորձէ հայերէնի թարգմանութիւններ ընելով օգտակար հանդիսանալ անելի բան ութ հազար հարկու, որոնք եկած են Գայաստանէն եւ հաստատուած Սթրազբուրկ: Ինչպիսի տարի մը առաջ Արտակ կրցած է ձեռք ձգել կեցութեան յատուկ արժօնագիր՝ իր քաղաքացիական իրավիճակը անելի «ապա-նով» դարձնելով:

Սիրանն ու Նազիկը հալէպահայեր են, որոնք անելի բան քառասուն տարիներէ ի վեր հաստատուած են Սթրազբուրկ: Գալիպէն արեւելահայ իրենք եւ մեկ-երկու այլ ըստանիքներ արտասահմանէն եկած են մնացեալ բոլոր հայերը կու գան հայրենիքէն: Տիրանն ու Նազիկը յայն սիրտն եւ ընդունելութիւն կը ցուցաբերեն բոլոր հայերուն նկատմամբ, որոնք կարիք ունին օգնութեան: Իրենք տունը ձեւով մը «բաց դուռ» է, ուր հայեր կրնան մտնել, եթէ կ'ուզեն եւ կը փնտռեն ինչ մը ապահովութիւն: Բայց այս բոլորէն վեր անոնք կը յայտնեն անս իրենց ցանն ու մտահոգութիւնը, թէ հայրենիքը կը պարպուի իր հարազատ գաւակներէ:

Ճարունակեցի լսել հայերէն՝ հոս թէ հոն, ալզասեան այս գեղեցիկ քաղաքին մէջ մեկ շաբթուան կեցութեանս ընթացքին: Կարծես յագեցած լլայի հանդիպումներէն ու անոր միջոցով հաստատուած հարազատութիւններէն ու հաղորդականութիւններէն՝ չկրցա՞նք, թէ՛ չուզեցի (ես ալ չեմ գիտեր) ժամանակ տալ կենալու եւ ըսելու հայերէն խօսողներուն, թէ «Բարե՛ւ, ես ալ հայ եմ»:

Կասկած վեր էր, թէ ուրախ էի, որ կը լսէի հայերէն, բայց հայր Նահապետեանին հարցում մը, որ կը չարջկեր միտքս ու հողիս. «Ինչ գիտեր ինչո՞ւ կ'ընեն»: Ինչո՞ւ պէտք է ձգել սեփական տուն, հող, հայրենիք, հարազատ, հայօրէն ու հայկականօրէն ապրելու անսնձաշնորհումներ եւ գալ հոս թէ հոն, նոյնիսկ երբ այդ բոլոր

վայրերը շատ գեղեցիկ են, սակայն հեռու են արմատեն, ինքնուրուխեն, հայկականությունն:

Բայց չէ՞ որ տարիներ շարունակ երագեցինք եւ փափաքեցանք հայրենիք ունենալ, այս տեսլականով ապրեցանք երկար տարիներ: Բայց ինչպէ՞ս բացատրել այն սուղ փորձառութիւնը, գոր ապրեցանք իբրեւ ժողովուրդ՝ կորսնցնելով թիւ ու հող, թէ՛ կալուած եւ թէ՛ մտաւորական եւ մշակութային արժէքներ. աւելի՛ն, «ծննդեան թուական»-ը նոյնիսկ: Եթէ տնտեսական ու ապրուստ ճարելու մղձաւանք է հայրենիքէն արտահոսքի մղողը, բայց արդեօք ո՞ր է այն ապահով վայրը, յատկապէս վերջին տարիներուն, ուր մարդ չի տագնապիր ի տնտեսական վիճակներուն բարուք լուծում մը գտնելու:

Եթէ մեր հայրենի ներկայ իրավիճակին ու անոր տուն տուող արտագաղթին պատճառներն ու անոց բարուք լուծումներուն գործընթացը դիւրին չեն, եւ եթէ պատասխանները քիչ մը կ'ուշանան, քայքայ կը մնայ հարցումը, որուն ետին կայ ցան ու յուզումը. «Չեմ գիտեր ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կ'ընեն»:

## «ԵՐԲ ԶԻ ՄՆՈՒՄ ԵԼՔ ՈՒ ՃԱՐ»

Վերոնշեալ տողը բանաստեղծութեան եւ անոր անչուած երգէտ անունած նախադասութիւն է թէեւ, բայց անապամասօրէն հայուն անպարտաւորութեան ու տակաւին ապրող իրական կեանքին շարունակուող շարժառիւթները: Սարդարապատի նուիրուած բանաստեղծութեան երկարանշիւր տող կ'արտայայտէ հայուն գոյապայքարը: Թէեւ այս տողերը անչուած են Սարդարապատի ճակատամարտին հետ՝ 22-28 Մայիս 1918, բայց հայուն համար միշտ ալ ամկայ եղած է իր գոյութեան համար տարած ու տարուելիք ելքի հնարքները ու անոր հետ իր գոյութեան ճարը գտնելու ծեօները: Բայց նախ պէտք է վերահասու Սարդարապատ՝ ելքի ու ճար իրականութեան:

Յեղասպանութեան դժոխքէն դուրս եկած անելի քան մեկուկէս միլիոն նահատակ, ինչպէս նաեւ հող եւ մշակութային արժէք ու կորուստ կորսնցուցած հայը իր լինել-չլինելու պայքարին դիմաց գտնուեցաւ: Եւ ի՞նչն էր ելքը այդ պայքարին եթէ ոչ հաւաքական միտքն ու վեցուածքը: Իսկ ո՞ր էր ճարը նոյնինքն այդ պայքարին եթէ ոչ հաւաքական գէնքին մէջ, որ ապահովեց եւ երաշխաւորեց յաղթանակ մը նոյնինքն ցեղասպան թուրքին դէմ, յաղթանակ մը, որ կերտուեցաւ 22-28 Մայիս ժամանակահատուածին, եւ որուն միջոցաւ գծուեցաւ նահանգները Յայաստանի անկախ առաջին հանրապետութեան: Մայիս 28-ով հայը կերտեց իր ինքնութեան ամուր կռուանը, որ դարձաւ երաշխաւորը պատմութեան շարունակականութեան, որ նաեւ պատր իրականութիւն է անկախացած-վերանկախացած Յայաստանի հանրապետութեամբ:

Բայց Սարդարապատէն առաջ-վերջ կայ պատմութեան փորձառութիւնը, որ երբեք կանգ չէ առած, ոչ ալ կանգ առաւ: Եւ առած է հայուն ելքի ու ճարի գոյապայքարը: Յայը իր պատմութեան ճգնաժամային խաչմերուկներուն միշտ ալ որոնած է ելքի ու ճարի հնարքները եւ յաջողած է հոն, ուր կրցած է մշակել հաւաքական տեսադաշտը եւ ռազմավարութիւնը իր տագնապներուն: Մեր պատմութեան մօտիկ անցեալին՝ 9 Մայիս 1992-ին, Արցախեան ազատագրութեան շարժումները եւ Շուշիի ազատագրութիւնը եկան նոյն բանը հաստատելու:

Եւ ի՞նչն էր եւ ինչպէ՞ս էր հայուն ելքի ու ճարի յաջողութիւնը: Հաւաքական միտքը, տեսադաշտը, կեցուածքը, եւ այս պարագային դարձեալ հաւաքական գէնքը: Յար եւ նման Սարդարապատի փորձառութեան:

Եթէ պիտի խօսինք լիբանանահայ գաղութի փորձառութեան մա-

սին, զոր ունեցաւ իբրանսնեան պատերազմին՝ 1975-1990-ի ժամանակաշրջանին, եւ այն մասին, թէ զարդօթը նաւարկեց ամեն դժուար պայմաններուն ստեղծած թո՛ի ու բոհին մէջէն կրնանք ըստ որ ատիկա ըրաւ քանի որ կրցաւ կիրարկել հաւաքական տեսադատը՝ իր կուսակցական, միութենական, ելեղեցական ու համայնքային այլազանութիւններուն եւ տարբերակներուն ճամբով՝ դարձնելով կրկնելով Սարդարապատի փորձառութիւնը:

Բայց այսօր կը շարունակուի տակաւին հայուն էլքի ու ճարի գոյապայքարը: Եթէ պայքարին բնագաւառները տարբեր են, բայց խորը եւ տարողութիւնը՝ նոյնը: Այս գործընթացին մէջ նոյնքան ասմէական եւ կարեւոր կը մնայ վերանայիլ հայուն պատմութեան փորձառութենէն դուրս եկած-եկող պարագաներուն իր մշակութազմավարութեան: Արդարեւ, այս ռազմավարութեան յաջողութեան միտք բանին՝ (ինչպէս իրաւացի էին պատմութեան տարրեւ ժամանակներու փորձառութիւնները) գաղտնիքը այն է, որ հայը մշակեց հաւաքական տեսադաշտ, խտացուց զգաստութեան գործոնները եւ համադրեց օգտագործելի բոլոր «զէնքերը»:

Եթէ պատմութեան փորձառութիւնը յաճախ կը կրկնուի, բայց կը փոխուին միայն նոյն այդ փորձառութեան ընկերա-քաղաքական եւ մշակութային տուեալները եւ գործոնները: Զայնու շարունակուող պատմութեան փորձառութիւնն նոյն այս պարունակին մէջ է: Կրկնուող պատմութիւն եւ անոր առնչուած փորձառութիւններու փոխառող տուեալները: Զայն այս կրկնուող պատմութեան եւ իր փոխուող տուեալներուն մէջէն կրցաւ հասնիլ յաջողութեան գրաւակաւին, երբ կրցաւ իրականացնել իր ազգային-համազգային ռազմավարութիւնը: Այս մէկը ըրաւ հիմնուելով հաւաքական տեսադաշտին ու անոր նկատմամբ զգաստ մնալու հրամայականին վրայ:

Յոս արժէ բանալ փակագիծ մը:

Հաւաքական տեսադաշտը եւ անոր առնչուած ու առնչուող զգաստութեան գործոնները ճամբայ կը հարթեն դրական ուժի իրականութեան: Այս ուժն է, որ կ'անջատէ անհատը եւ հաւաքակալութիւնը իր անցեալի ծախսողութիւններէն եւ դժկամութիւններէն: Անիկա կը զարգացնէ տեսիլը մը, որ նորութիւններ կը յառաջացնէ հաւաքական տեսադաշտին մէջ, կը համադրէ կարողականութիւնը, եւ կը ստեղծէ ներագգային գիտակցութիւն մը: Դրական ուժը կու տայ կարողականութիւնը գիտակցելու անձին ու հաւաքական արժէքներու՝ սիրելով զանոնք եւ պահելով անոնք շարունակականութիւնը: Դրական ուժը առիթը կու տայ մէկ կողմէ՝ ճանչնալու Ուրիշը, բայց նաեւ գիտակցիլ ինքնութեանը կանչին եւ կարողականութեանը՝ գտնելու, պահելու, բայց նաեւ պայքարելու էլքի ու ճարի բոլոր հնարքներուն համար:

Սարդարապատի ճակատամարտին հայը յարթեց, որովհետեւ կրցաւ ստեղծել հաւաքական տեսադաշտ մը, որ ամբարեց դրական ուժը (անկախ այդ օրերու տիրող դժուար իրականութիւններէն), իր պատմութեան տալով նոր սլացք ու ինքնութիւն: Զայսատանի առաջին հանրապետութիւն կերտելու եւ ունենալու իրականութիւն:

Հայուն պատմութեան փորձառութիւնն է այս, ուր հայը իր կէտանքի տարբեր փորձառութիւններուն մէջէն տեսաւ լոյսը եւ յոյսը, երբ հաւատաց ու կառչեցաւ հաւաքական տեսադաշտին եւ անոր ստեղծած դրական ուժին վրայ:

Ներկայ օրերուն հայուն մեծ պարտականութիւնն է կառչիլ ու գիտակցիլ պատմութեան փորձառութեան: Եթէ պիտի չմտնայ անցեալի պատմութեան մէջ (եւ անպայմանօրէն պէտք չէ, որ մտնայ), բայց ներկային պիտի քերենք նոյնիսկ այդ պատմութեան էլքի ու ճարի փոխակալները: Պետք է դատեր քաղել այն դէպքերէն, երբ հայը կրցաւ գիտակցիլ, թէ յաջողութեան գրաւականը հաւաքական տեսադաշտն է, իսկ անոր մղիչ զսպանակը դրական ուժն է:

Եթէ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ, եւ այդ՝ կը կրկնէ, կը կրկնուի նաեւ հայուն պայքարը՝ էլքի ու ճարի մարտահրաւերները: Եւ այս կրկնուող իրավիճակներուն մէջէն անհրաժեշտ է կրկնել հաւատն Սարդարապատի (եւ պատմութեան այլ եւ նման իրադարձութիւններուն) կրկնուող ռազմավարութիւնը: Ռազմավարութիւն մը, որուն էլքը հաւաքական տեսադաշտն է, իսկ ճարը դրական ուժը: Անիկա հայուն մայիսեան պատմութեան կերտուած աւանդն է:

Սարդարապատի երգին ու բանաստեղծութեան բառերը այսօր կրկնանք իրական են: Զայնու համար չէ մտացած էլք ու ճար, բացի նային 1918-ի աւանդ տանիլ պատմութեան նոր գրուող էջերուն մէջ քլ:

# ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԱՆՈՐ ՄՏԵՂԾԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*«Որ Ապրուծոյ գորութիւնովը պահպանուած է  
հաւաքով այն փրկութեանը համար, որ պար-  
բայութեամբ է վերջին ժամանակը յայտնուելու»*

(Ա. Պետրոս 1.5)

Մարդուն եւ հաւաքականութեան ապրած իրականութիւնը ժամանակի ընթացքին ստեղծած է իր պատմութիւնը եւ ամբողջ քաղաքակրթութիւններու ընթացքին: Մարդ անհատին մէջ միշտ ալ առկայ էր մղումը, որ պատմութեան միջոցով աշխարհին եւ կեանքին տուած է յատուկ նկարագիր: Մարդուն յուշերը կը կազմուին պատմութեանը եւ պատմասացութեամբ, եւ նոյն անհատը կը բացատրէ իր կեանքովը պատմութեան ստեղծած պատմութիւններով, որոնց միջոցով ան կու տայ նպատակ եւ նկարագիր իր անձին:

Կայ տակաւին անլին: Կեանքի պատահածները չեն պատահիր եւ բացատրուիր ինքնուրոյն կերպով: Պատահարները կը յարմարուին շրջապատին, կը ստանան դրոշմը նոյնիքն տեղական երեսակայութեան եւ կը վերածուին պատմութեան: Պատմութիւնները, որոնք իւրաքանչիւր անհատ եւ հաւաքականութիւն կը պատմէ ու կը ներկայացնէ, ցոյց կու տան թէ ինչպէս անոնք կը նային կեանքին եւ աշխարհին:

Ա. Պետրոսը նամակներ են: Պետրոս Առաքեալ պատմութիւն չի պատմեր, այլ կը ներկայացնէ աստուածաբանական պատմութիւն, որ մէկ կողմէ ունի պատմական հիմք, բայց նաեւ կը բացայայտէ Աստուծոյ ներկայացուցչութիւնը Աստուածաշունչին մէջէն, ուր Ան կը յարաբերի մարդուն եւ աշխարհին հետ, աստուածաբանական նպատակներով: Պետրոսի նամակները Աստուծոյ նպատակներուն պատմութիւնն է աշխարհի ստեղծագործութենէ սկսեալ, անցնելով մարդուն մեղքէն, ապա Աստուծոյ յաճախակի միջոցառումներով, վերագտնելու համար նոյն մարդը, հասնելով մինչեւ Յիսուսի գալուստը, եւ նպատակակետը՝ Զրիստոսի յայտնութիւնը:

Պետրոս Առաքեալ կը սկսի շեշտելով ժամանակի հասկացողութիւնը: Եթէ մէկ կողմէ անցեալէն, «որ պարտաստուած է վերջին ժամանակը յայտնուելու» (Ա. Պետրոս 1.5), բայց նաեւ կարճ ժամանակներու մասին «քիչ մը ատեն տրտմած էք» (Ա. Պետրոս 1.6): Ներկայ

ժամանակներ «եւ որը հիմա ալ չէք տեսներ» (Ա. Պետրոս 1.8): Բայց նաեւ նախօրոք գուշակել ապագան, «կը քննէին թէ ե՞րբ կամ ի՞նչպիսիք» (Ա. Պետրոս 1.11):

Կէտ Պետրոս Առաքեալ կը խօսի երեք ժամանակահատուածներու մասին՝ անցեալը, ապագան, եւ ներկան, ան կ'առնչէ այս երեք ժամանակները եւ կը կերտէ աստուածաբանական պատմութիւնը:

Անցեալին, ուր Աստուած տուաւ ժողովուրդին նոր ծնունդ՝ «որ Աստուծոյ գորութիւնովը պահպանուած էք» (Ա. Պետրոս 1.5): Պահպանուած մը, որ եթէ մէկ կողմէ կը խորհրդանշէ մարդ-Աստուած յարաբերութիւնը, բայց նաեւ մարդուն կեանքին կու տայ ապագայի ժառանգութիւնը:

Ապագան, ուր Աստուած պիտի յայտնէ Իր փրկութիւնը՝ Յիսուսի Զրիստոսի յաղթանակով, որուն միջոցով բոլոր հաւատացեալները պիտի ժառանգեն թագաւորութիւնը: «Ու կը քննէին թէ ե՞րբ եւ կամ ի՞նչպիսի ատեն կ'իմացնէր իրենց մէջ եղած Զրիստոսի հոգին, ուր որոնք կը վկայէր Զրիստոսին չարաբարուիլը ու անկէ յետոյ փառաւորուիլը» (Ա. Պետրոս 1.11):

Անցեալն ու ապագան զիրար կամրջողը ներկան է, ուր կան շատ ապրուած փորձութիւններ եւ փորձառութիւններ. «թերեւս հիմա քիչ մը ատեն տրտմած էք» (Ա. Պետրոս 1.6), բայց նաեւ Աստուծոյ շնորհած առաջնորդութիւնը եւ ապահովութիւնը, թէ կայ ապրուած հաւատքին նպատակակետը եւ իրազործումը՝ փրկութիւնը, «որպէսզի ձեր հաւատքին փորձառութիւնը գտնուի գովութիւնով ու պատիւով եւ փառքով Յիսուս Զրիստոսին յայտնուելու ատենը» (Ա. Պետրոս 1.7):

Զրիստոսեան իր ժամանակը կ'ապրի ստեղծելով իր պատմութիւնը, որ ունի անցեալէն ժառանգ, բայց նաեւ ապագայի տեսիլք: Ինչ զիրար կամրջող ներկան ունի իր մարտահրաւերները, որոնք կ'առնապնդուին փրկութեան յոյսով:

Պոս կ'արժէ փակագիծ մը բանալ:

Եթէ Աւետոյ Մատեւլան Հարաւային Ափրիկէի հանրապետութեան համար դարձաւ մէկ առաջնորդ-տիտան, բայց նաեւ համայն աշխարհին ձգեց քաղաքական-գաղափարախօսական մէկ մեծ աւանդ: Անոր յուզարկաւորութիւնը, Դելտեմբեր 15-ին, դարձաւ մեծ հրապարծութիւն-վկայութիւն, ուր տարբեր երկիրներու ղեկավարներ, անձնապէս ներկայ գտնուելով, վերահաստատեցին անոր արժանը:

Մատեւլան ուներ իր ժամանակին անցեալի պատմութիւնը, որ կըլ գրկուածութիւնն ու անարդարութիւնն էր, բայց եւ այնպէս յոյսի հասկացողութեամբ լցուն: Ան ապրեցաւ իր ապագայի ժամանակը,

## ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՆԻ ԷՈՒԹԵԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կրթական Ծոցի երկիրներու հայկական իրականութիւնը սկսած է դատարկ կազմակերպուած եւ մնայուն գաղութային կեանք: Գաղութային սկսած է ստանալ կազմակերպութեան պատկեր՝ եկեղեցի, սպորտ, մշակութային եւ հաւաքական կեանք:

Կիրակոս Գոյումճեան անելի քան քանի մը տասնամեակէ ի վեր կ'ապրի Քուէթի մէջ: Ան ծնած ու մեծցած է Զալէպ, ուր ստացած է Երկրային-քրիստոնէական դաստիարակութիւն, կերտած է հայկական նկարագիր եւ տիրապետած արաբերէին: Ան այսօր Քուէթի մէջ ունի լաւ ասպարեզ, յաջող գործարար է, բայց նաեւ կազմակերպած է իր կեանքի ազգային-հասարակական եւ իրապարակագրական քննադատները: Ան կ'ապրի հայութիւնն ու հայկականութիւնը, բայց նաեւ կը հաւատայ արաբական իրականութեան բացուելու անորոշեցումներէ: Այս նպատակով ալ կը ստեղծէ հայկական-արաբական բարեկամութիւն, միեւնոյն ատեն հայը, անոր սպասուած, իրականութիւնները ներկայացնելով արաբին:

Ան թէ ինչու՞ Կիրակոս Գոյումճեան դարձած է ծանօթ անուն մը արաբական իրապարակագրութեան մէջ, ուր իր յօդուածները, բաց նամակները յաճախ երեւցած են արաբական մամուլին մէջ, ինչպէս քուէթեան «Քապաս» եւ «Ութթան», լիբանանեան «Նահար» թերթերուն մէջ: Թարգմանաբար նոյն, նաեւ տարբեր յօդուածներ, իրատարուած են նաեւ հայկական մամուլին մէջ՝ Լիբանան եւ այլուր:

Կիրակոս Գոյումճեանի իրապարակագրութեան միտք բանիին ծանօթանալու համար պէտք է կարդալ արաբերէնով իրապարակուած իրապարակագրական-յօդուածներու հաւաքածոն հանդիսացող «Կայաններ եւ Դիրքորոշումներ» գիրքը, իրատարակուած թուէթ, 2012-ին:

Երբ կը սկսիս կարդալ գիրքը, կը սկսիս ապրիլ Կիրակոս Գոյումճեանին հետ իր տարբեր կայանները: Կայաններուն առաջինը Կիրակոս հայն է, անոր ազգային նկարագիրն ու անոր հպարտութիւնը: Այդ կայանին մէջէն կը տեսնես Կիրակոսին պահանջատերի դիրքորոշումները: Գրած է հայոց Ցեղասպանութեան մասին՝ տարբեր ոգեկոյումներուն առիթով, բաց նամակներ յղած է նախագահներու եւ երկրպալական Միութեան, երախտագիտութիւն յայտնած է այն երկիր-

ուր հաւատաց արդարութեան եւ հաւասարութեան տեսլականներուն եւ անոնց մղիչ ուժին: Իսկ իր ներկայ ժամանակը, ան ամբողջ 29 տարիներ անցուց բանտին մէջ, նոյն տեսլականին համար՝ միշտ անոր հասնելու ձգտումով: Եւ Մանտելլան հասարձիկ իտալիէն ան կերտեց ազատութիւնը եւ հաւասարութիւնը սեւին եւ սպիտակին միջեւ: Ինչպէս ինք կը վկայէ. «Եւ քալեցի երկար ճամբան որ կը տանէ դէպի ազատութիւնը»: Դոս կայ անոր անցեալի պատմութիւնը, որ քալեց բայց ձգտեցաւ ապագայի ազատութեան կարգախօսին: Իսկ ներկան, իր իսկ վկայութեամբ. «Փորձեցի ուղղութիւնս չփոխել՝ թէ՛ պէտ սխալներ ալ գործեցի»: Եթէ Մանտելլա հասաւ իր ազատութեան, այդ միայն իր անձին համար չէր, այլ ամբողջ երկրին ու հաւաքականութեան, եւ տակաւին աշխարհին տուաւ աւանդ մը՝ քաղաքակրթութիւն մը, հիմնուած արդարութեան եւ հաւասարութեան կարգախօսներուն վրայ:

Եթէ փակագիծը պիտի զոցենք, պիտի տանք մէկ հարցում: Մարտնահատը, մանաւանդ քրիստոնէան, ի՞նչպէս պիտի գործածէ իր ժամանակը եւ ի՞նչ տեսակի պատմութիւն պիտի ստեղծէ:

Պետրոս Առաքեալի նամակին միտք բանին պիտի տեսնել նոյնիսկ վերելի յիշուած հարցումին մէկ պատասխան: Նախ քրիստոնէան իր ապրած ժամանակին հետ կը ստեղծէ պատմութիւնը, ոչ միայն իր անձին տալու նպատակ, բայց նաեւ ինքնութիւն՝ հաւաքական իմաստով: Գաւաքական իմաստը աւանդի հասկացողութիւնն է, ուր մարդուն ապրած ու ապրելիք պատմութիւնը հիմնուած է Քրիստոսի ինքնութեան վրայ, մանաւանդ Անոր շնորհած փրկութեան վրայ:

Քրիստոնէան կ'ապրի իր ներկայի պատմութիւնը, անցեալի իրականութենէն մեկնելով, բայց ապագայի յոյսով: Այս յոյսով ան կը գտնէ Քրիստոսի շնորհած փրկութիւնը, որուն միջոցով ան կ'ապրի ազատութիւնը, նոյնիսկ երբ իր ներկան դժուար է:

ներուն, որոնք ճանչցած են Ցեղասպանութիւնը, ինչպէս Զանատա եւ Փրանսա: Ան կ'ապրի Արարատ լեռան սերը եւ իր եութեան դիրքորոշումը կ'արտայայտէ իր մտորումներուն ճամբով՝ վերահաստատելով պահանջատիրութեան հրամայականը:

Գոյումճեան կ'ապրի Նաեւ Զուլեյթի թրջական դեսպաններուն հետ Գայկական Գարցին անուրութեամբ եղած քաջքշուկները: Արաբական մամուլին մէջ լոյս տեսած այս նիւթով յօդուածները բնականաբար կ'անհանգստացնեն թուրք դեսպանը, որ կը հակազդէ յօդուածներուն, որոնց ես կը պատասխանէ Գոյումճեան՝ բացայայտելով իր մտքին ու հոգիին եութեան մէջ գտնուող հրատապ եւ վճռական դիրքորոշումները:

Գիրքին մէջ կը շարունակեն հետեւիլ Կիրակոս Գոյումճեանի կեանքին յաջորդական կայաններուն՝ հայ մշակոյթի հպարտութեան, քրիստոնէական ինքնութեան՝ Նարեկացիի ու «Մատեան Ողբերգութեան»ի ընդմէջէն, հայերէն տառերուն նկատմամբ ունեցած գուրգուրանքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին Զուլեյթ տուած այցելութիւններուն, որոնք կը հանդիսանան հպարտութեան առիթ:

Կիրակոս Գոյումճեան կը սիրէ արաբը, կը հաւատայ ու կ'ապրի հայ-արաբական յարաբերութիւնն ու պատմական բարեկամութիւնը: Թեւեւ ինք Գայկական Գարցին ջատագովն է, ան կառչած է Նաեւ արաբական իրաւունքին, կառչած է Գալէպին, միեւնոյն ատեն երախտապարտ է վերջին տարիներուն միացած իր գաղութին եւ Զուլեյթի պետականութեան, իր յարգանքը կ'արտայայտէ անոր իշխանապետին՝ ժապեր Ահմետ ժապեր Սապահի:

Կիրակոս Գոյումճեան կը հաւատայ, թէ «այն, ինչ որ սրտէն կ'ելլէ, կը հասնի սրտին»: Իր յօդուածներուն եւ գիրքին միտք բանին ալ ա'յո՛ւ է՝ ընթերցողին սիրտին հասնելու փորձ մը:



Կիրակոս կը փոխանցէ իր սրտին կայանները հատիկ-հատիկ: Ան դիտել կու տայ, որ Ցեղասպանութիւնը ապրուած իրականութիւնն ու փորձառութիւնն է, Գայաստանն ու հայրենի անկախութիւնը հայուն հպարտութիւնն են՝ իր մշակոյթով ու պատմութեամբ: Ան անդրադարձած է սփիւռքահայութեան երախտագիտութիւնը՝ արաբ ժողովուրդին նկատմամբ, լուսարձակի տակ անելով գոյութիւն ունեցող բարեկամութիւնը:

Գիրքը հրատարակուած է Զուլեյթի մէջ: Գոն տեղ գտած է Գայաստանի արտաքին գործոց նախկին նախարար Վարդան Օսկանեանի խօսքը, հալէպահայ ծանօթ մտաւորական-գրող Թորոս Թորանեանի արժեւորումը, որուն մէջ կը մատնանշէ, թէ գիրքը արաբերէն գրուած է, որովհետեւ հայն ու արաբը վարպետ են կամուրջ կառուցելու արուեստին մէջ:

Կիրակոս Գոյումճեանին աշխատանքը պետք է տեսնել այս կամուրջ կառուցելու իրականութեան մէջ: Ան յաջողած է այս մէկը ընել, որովհետեւ կրցած է իր սրտէն բխածը հասցնել ընթերցողին սրտին՝ հայուն ու արաբին, կրցած է կայանները ամուր պահել հայուն կեանքին մէջ եւ հայկական իրականութեան մէջ: Անոր եութեան դիրքորոշումները դարձեալ անխախտ են, որովհետեւ կը հաւատայ հայուն արժեքներու պահպանման եւ փոխանցման իրականութեան:

Արդարեւ, հայուն յաջողութեան գրաւականը նոյնիսկ այս կայաններուն եւ դիրքորոշումներուն շարունակականութեան մէջ է: Կիրակոս Գոյումճեան կը յաջողի ընթերցողը կամրջել այս շարունակականութեան միտք բանին եւ հրամայականին:

Վարձքը կատար, գրիչդ դալար, Կիրակոս Գոյումճեան:

## ՀԱԼԴԷՆ ԱՐԺԷՔՆԵՐ՝ ՅՈՎԱՄԷՓԻՆ ԵՐԱԶԸ

1976 Յալեպ: Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով շատ մը լիբանանահայեր ապաստան գտան Յալեպ, ևսե Սուրիոյ տարբեր քաղաքներ: Ներկայ օրերուն կրկնուող պատմութեան մէկ յետադարձ ակնարկ մը ընելով, մենք՝ լիբանանահայերս ալ որոշ թիւով Յալեպի հայկական վարժարանները սկսանք յաճախել, ինչպէս այսօր բաւական է թիւը սուրիահայերուն լիբանանահայ դպրոցներուն մէջ:

Իմ ալ պարագաս տարբեր չեղաւ: Նոր շրջանաւարտ եղած էի Յալեպի Անտարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն, տակաւին հազիւ ամիս մը անցած էր երկրորդ պաքստիւրայի դասարանէն, երբ ընդմիջուեցաւ ամէն ինչ, եւ ստիպուեցանք ընտանեօք ապաստան գտնել Յալեպ քաղաքին մէջ: Սկսայ յաճախել Յալեպի Լազար Նաճարեան եւ Գալուստ Կիլիպանեան վարժարանը: Լեզուական դասերուն ընտելացայ, բայց գիտական եւ թուրքական դասապահերը դարձան իսկական ճգնաժամեր: Ամէն ինչ արաբերէն ըլլալով՝ շատ դժուար եղաւ հետեւիլ նիւթերուն եւ տեսութիւններուն: Մինչ տեղ-տեղ կը փորձէի եզր մը գտնել սորված անգլերէն տարբերակիս եւ դասաւանդուած արաբերէնիս միջեւ, գրեթէ միշտ ուշացած կ'ըլլայի, որովհետեւ ուսուցիչը արդէն անցած կ'ըլլար այդ մասը, զոր ես փորձած էի հազիւ հասկնալ:

Դասապահերու ընկալումը եթէ մէկ կողմէ դժուար էր, բայց դասընկեր-դասընկերուհիներու բարեկամութիւնը եւ ջերմ վերաբերմունքը կը մոռցնէր ամէն դժուարութիւն եւ նեղութիւն: Այս բոլորին կողքին, մեծապէս վայելեցի հալեպահայերուն սրտի մօտիկութիւնը, որ հարազատ էր եւ շատ հարգողական:

Այդ դասընկերներու շարքին էր Յովսէփ Լալպանտեանը:

Միջահասակ, թուխ եւ խիտ մազերով, յանդուզն եւ համարձակ: Ազգային, հայրենասիրական շեշտուած ջիղ եւ նկարագիր ունեցող տղան էր, եւ



ինչպէս մենք բոլորս մեր երիտասարդական տարիքի սեմին էինք, ինքն ալ աշխուժ եւ տաքարին էր: Ուներ տեսակետ մեր ազգային կեանքը յուզող հարցերուն նկատմամբ, ներառեալ կուսակցական եւ գաղութային մտահոգութիւններ: Բայց Յովսէփ ուներ աւելին: Բացայայտ էր հայագիտութեան, գրականութեան եւ մատենագրութեան հանդէպ իր խորունկ սերը: Յովսէփին աշխարհն ու հետաքրքրութիւնն էին անոնք: Դպրոցի դասապահերէն ետք իրեն կը հանդիպէի նաեւ հօրեղբօրս տոքթ. Ռոպէր Ճպլեճեանին գրադարանը, ուր կար հալեպահայ մամուլի եւ գրական մատենագիտական հարուստ հաւաքածոյ: Յովսէփ շատ ժամանակ կ'անցընէր գրադարանին մէջ՝ կատարելով սերտօղութիւններ: Կը յիշեմ հալեպահայ ուսուցիչ եւ կրթական մշակ Յայկ Պարիկեանը, որ բարձր կը գնահատէր Յովսէփին հետաքրքրութիւնը եւ աշխատանքը: Ծորեղբօրս քանիցս ըսած է. «Լալպանտեանին տղան է եւ լաւ տղայ է»:

Սկզբայ երկար տոկալ Լազար Նաճարեան վարժարանին մէջ: Անկարելի էր արաբերէնով շարունակել դասընթացքները: Յարմար տեսանք Պէրուլթ վերադառնալ, եւ ինչպէս որ վարժուած էիք այդ օրերուն լիբանանեան պատերազմին հանգրուանային խաղաղութիւն-պայտերազմ իրավիճակներուն, շարունակել ուսումս ինն:

Յալեպի հետ կապս ու այցելութիւններս երբեք չխզուեցան: Ուղի-համառակը, աշխատանքային, եկեղեցական ու միութենական այլ պարտականութիւններով յաճախ Յալեպ կը գտնուէի: Բայց պետք է ըսեմ, որ դասընկերներուս հետ յարաբերութիւններս չշարունակուեցան եւ չստեղծուեցան մեկէն, ներառեալ Յովսէփին, մինչեւ Ապրիլ 2013: Յանկարծ ելեկտրոնային նամակով ստացայ կարճ երկտող մը: Յովսէփ Լալպանտեանն էր: Երկտողը երեւի կարճ էր, քանի որ Յովսէփ կ'ուզէր վստահ ըլլալ, թէ զինք պիտի յիշէի՝ 34 տարիներ ետք:

ժողովրդական սասցուածքը որքան իրական է: «Լեռները իրարու յեն հանդիպիր, բայց մարդիկ՝ անպայման»: 34 տարիներ ետք դարձեալ հանդիպիլ Յովսէփին հետ, թէկուզ համացանցի միջոցով: Յովսէփը կը հետեւի իմ գրութիւններուս եւ կ'ըսէ. «Ինչպէ՞ս ես: Ուրախ եմ, որ որակաւոր յօդուածներ կը գրես: Յաճախ կը կարողամ»: Յօդուածներուն մէջէն ու անոնց միջոցով Յովսէփը ուզած է կապերը վերահաստատել իր երբեմնի, թէկուզ կարճ ժամանակաշրջանի հարկ, դասընկերոջ հետ:

Չուշացաւ Յովսէփին պատմութիւնը: Լազար Նաճարեան վարժարանը արարել էրք մեկնած է երեսն եւ վկայուած է պետական համալսարանի բանասիրական բաժանմունքէն իբրեւ գրականագիտ: Իբրեւ հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ, ծառայած է 18 տարիներ հայկական տարբեր վարժարաններու մէջ, Յալեպ եւ Ադըբ-

աստորիա, նաեւ եղած է տնօրէն Զալէպի Մետրոպէան վարժարանին 1993-ին հաստատուած է Լոս Անճէլըս, ուր ժամանակ մը զբաղուած է դարձնել ուսուցչութեամբ: Ներկայիս լման ժամանակով կը զբաղի հրատարակչական-ստեղծագործական աշխատանքով:

Յովսէփին ընտրած մասնագիտութիւնը եւ այդ մասնագիտութեան նկատմամբ իր հաւատարմութիւնն ու խանդավառութիւնը երբեք չզարմացուցին զիս: Յստակ էր իր գծած կեանքի ճամբան, երբ տակաւին Զալէպ միասին նոյն վարժարանին մէջ էինք: Բայց այն, ինչ որ զիս քաջալերեց, իր նուիրումովս էր իր առաքելութեան նկատմամբ, եւ այդ նուիրումին արգասիքը՝ վերջին 13 տարիներուն հրատարակած իր 12 ատեն գիրքերը: Առաջին 6 հատորները «Լոյս» հանրագիտակներն են՝ 2062 էջ, եւ որոնք հրատարակուած են 11 ատեն, 16,800 տպաքանակով: 7-8-րդ գիրքերը՝ մէկ կողքի տակ, մագամ, 16,800 տպաքանակով: 9-րդը Յովհաննէս Շիրազ «Զայոց տակնեականը» անտիպ 62 տողերով: 10-րդը «Զայոց լեզու» ժողովածու, 377 էջ: 11-րդը «Ուղղագրութեան նիւթերու ժողովածու. ուղղագրական բառարան»: Իսկ 12-րդը՝ «Մետրոպ Մաշտոց մեծաքանեցը»՝ 680 էջ, Մետրոպ Մաշտոցի ծննդեան 1650-ամեակին նուիրուած, եւ որ ի մի բերած է հայոց լեզուին նուիրուած բազմաթիւ բանաստեղծութիւններ, արձակ եւ ստոյթներ:

Եթէ մէկ կողմէ կար հսկայական աշխատանք եւ յոգնութիւն, բայց կար նաեւ Յովսէփին յուսահատութիւնը եւ ապրած յուսախաբութիւնը: Յովսէփ չուշացաւ բաժնեկցելու այդ բոլորը ինծի հետ: «Զրայոց ջան, կը տառապիմ գիրքերս տարածելու եւ վաճառելու հարցերով: Շատ դժուար է, շա՛տ»:

Աստուածաշունչի Զին Կտակարանի հերոսներէն է Յովսէփը: Յովսէփը երագի եւ տեսիլքի մարդն էր, որ հաւատաց իր ժողովուրդին ազատութեան եւ ստրկութեան վիճակէն դուրս բերելու հրամայականին: Յովսէփին երագը իր ժողովուրդին բարօրութեան համար



իր Յովսէփի հաւատաց, թէ իր երագը կրնայ իրականանալ եւ աշխատեցաւ այդ ուղղութեամբ: Բայց ան ըրաւ անելին: Զաւատարիմ մնաց իրականացած երագը իրական կեանքի մէջ դնելու գործընթացին:

Հայուն ներկայ ժամանակահատուածին մէկ հսկայ հրամայականն է այս մէկը: Յովսէփին երագը: Զայոց պետք ունի այս երագը ու տեսիլքը տեսնողներուն, բայց նաեւ զանոնք իրականացած տեսնելու եւ դարձնելու հաւատարմութեան եւ յարատեւութեան: Երագը, որ ոչ միայն պետք է տեսնել հայը իր վաղուան օրուան մէջ, այլ նաեւ հայուն գոյապայքարները իրենց տարբեր բնոյթով եւ բնագաւառներով՝ իրականացած վիճակին հասցնելու տեսլականը:

Յովսէփի Նալպանտեան իր աշակերտական տարիներէն սկսեալ ունէր իր երագը: Ան իրականացուց այդ երագը իր ամբողջ կեանքը նուիրելով հայ ժողովուրդի գրական-մատենագիտական եւ քերականական բնագաւառներուն: Ան մինչեւ օրս կը փորձէ հաւատարիմ մնալ իր երագին՝ հաւատալով հայուն վաղուան օրուան տեսլականին, նոյնիսկ եթէ «շատ դժուար է, շա՛տ»: Եւ այս երագին իրականացման ճամբան երբեք դիւրին չէ:

Յովսէփին երագը նաեւ անպայմանօրէն՝ հայունը:

Զայոց ուրիշ ելք չունի, քացի միայն հաւատալ եւ հաւատարիմ մնալ Յովսէփի երագին եւ զայն իրականացած տեսնելու տեսլականին:

Յովսէփին ու յովսէփներուն երագը հայուն ամբողջական երագն է, որուն արժէ ո՛չ միայն հաւատալ եւ հաւատարիմ մնալ այլ նաեւ ապրիլ ու իրականացնել զայն:

Սինչ այդ, շնորհակալութիւն Յովսէփ Նալպանտեանին երագին ու կեանքին համար:



## ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐ. «ԴՈՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՄ»

1990: Խորհրդային Միության փլուզում և տարանջատում, համայնավար կարգ ու սարքի վերջաւորութիւն: Ստեղծում անկախ հանրապետութիւններու, որոնց մէջ է նաեւ մայր հայրենիքը՝ Հայաստանը: Անկախ պետականութիւնը հպարտութիւն էր ու տակաւին է բոլորիս համար:

Մեր կազմակերպութեան՝ Աստուածաշունչի Ընկերակցութեան համար, այս թուականին նաեւ բացուեցան աշխատանքային մեծ կարելիութիւններ եւ նոր հորիզոններ: Նախկին Խորհրդային Միութեան մաս կազմող երկիրները՝ ստեղծելով ազատ պետականութիւն, անոնց մէջ գործող եկեղեցիները դարձան աւելի ազատ ու ինքնիշխան: Անոնք հրաւիրեցին մեր կազմակերպութիւնը ստեղծելու համար Աստուածաշունչի ընկերութիւններ իւրաքանչիւր երկրի համար:

Բայց կային լեզուական, նաեւ կենցաղային, յարաբերական ու մշակութային տարբերութիւններ, զորս պետք էր նկատի առնելիս: Շատ քիչ պատահած էր, գրեթէ եզակի, որ անգլերէն խօսելին նախկին խորհրդային ու արեւելեան Եւրոպայի երկիրներուն մէջ: Իսկ մեր կեդրոնական գրասենեակին համար իւրաքանչիւր շրջանի տեղական լեզուին տիրապետող, ներառեալ՝ ռուսերէն, գտնելը անկարելի էր:

Հայաստանի պարագային լուծումը եւ կարգադրութիւնները եղան յարաբերաբար դիւրին եւ արագ: Արդարեւ, չուշացաւ մեր պատասխանատուներուն հաղորդակցութիւնը ինձի հետ՝ խնդրելով, որ ստանձնեմ Հայաստանի մէջ Աստուածաշունչի Ընկերակցութեան գրասենեակն ու գործի կազմակերպումը՝ գործակցաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: «Դուն հայրերն կը խօսիս եւ քեզի համար դժուար չէ հաղորդակցիլը եւ յարաբերիլը Հայաստանի մէջ», եղաւ իրենց հաստատ համոզումը:

Այսպիսով սկսան իմ աշխատանքներս, թերեւս նաեւ առաջելութիւնս Հայաստանի մէջ՝ յաճախակի այցելութիւններով, եւ երկարուցան հինգ տարիներու վրայ, մինչեւ 1996:

Հայրենիքն էր: Հողը, լեզուն եւ մշակոյթը: Ու տակաւին՝ ջուրը, ու տելիքը եւ յարաբերութիւնները: Հայկական էր ամեն ինչ, կ'ապրէի քուրդ ըլլալու գիտակցութիւնը եւ զգացումը, եւ որ բոլորը միասին կը կազմէին մէկ ամբողջութիւն: Նոյնիսկ երբ խօսուածը արեւելահայե-

լին է, եւ որոշ բաներ եւ արտայայտութիւններ այդքան ալ արագ կարող չէր ընկալելը, բայց տակաւին իմս էր՝ ինքնութիւնս: Բայց այս բոլորը, այդ օրերուն՝ 1991-ին ու անկէ ետք դիւրին պարունակի մէջ չիին:

Թեւ տակաւին անկախութիւնը նոր ծեղծ ձգուած էր, բայց վրայ հասած էր արցախեան պատերազմը, ու տակաւին կային շրջափակումը եւ անոր պատճառած տնտեսական ահաւոր նեղութիւնը: Չհաշուած 1988-ի երկրաշարժի ահաւոր աղէտը ու անոր հետեւանքները:

Երեւանի փողոցներէն քալելով կը զգայիր լքուած վիճակը քաղաքին: Ելեկտրականութիւնը՝ օրական հազիւ մէկ ժամ: Հացը՝ դժուար ճարելի: Առատ կանուխ ժամերէն սկսեալ արդէն փուռներուն առջեւ մարդիկ հերթի կը սպասեն, որպէսզի հացի իրենց բաժինը ծեղծ եզնէ: «Բնեզիւնը» կը վաճառուէր երկար կտրագերու մէջ կանգնած՝ փողոցներու անկիւնը: Չէին գործեր կայանները: Գիները երեւակայական էին, գէթ՝ տեղական պայմաններու համար, բայց նաեւ կը տարուբերէր մէկ տեղէն միւսը: Որքան բարձրանար զինք, պետք էր հասկնալ, թէ ալ աւելի զուտ ու մաքուր է, թէ ջուր կամ այլ նիւթ չէ խառնուած մէջը: Ճամբաներուն վիճակը բաւական դժուար էր՝ փոստով լեցուն, եւ նորոգուելու հեռանկարները քիչ մը պզտոր եւ հորիզոնէն անդին երեւցող-չերեւցող կարելիութիւն էին, վառելանիւթ գրեթէ չկար: Իսկ տաքնալու եւ տունները ջերմացնելու համար մարդիկ կը կտրէին ծառերը, եւ փողոցները կը տեսնէիր մարդիկ, որոնք ծառերու կոճղեր կտրած կը տանէին տուն:

Կը մնայի Մայր Աթոռի վանատունը, որ նաեւ կը կոչուէր «Հոթել Իսկէնտեր»: Իսկ Իսկէնտերը՝ մուսալեցոցի, Այնճարէն Հայաստան նկատ էր ներգաղթի ժամանակ՝ 1946-47 տարիներուն: Ինք եւ կիկը՝ Ծաղիկը, ստանձնած էին վանատան մտակարարութիւնը: Իսկէնտերին համար եւ հայրենակից էի, անկախ անկէ, որ այնճարցի չէի: Կը քաւէր, որ լիբանանցի եմ եւ Պէյրութէն կու գամ: Կար մայրիներու կարօտը, եւ այդ կարօտին ջերմութիւնը Իսկէնտերը կ'ապրէր ու կը կիսէր հայրենակիցին հետ: Ծաղիկը Հայաստան ծնած ու մեծցած էր: Դնքին վրայ մեղմ ժպիտ մը գծուած էր միշտ, բայց աչքերուն մէջ կար անկուրթիւն, որուն խորքը գերծ չէր վախի ու մտահոգութեան զգացումներէ: Պիտի իմանայի, թէ իրենց տղան Ղարաբաղի ճակատին վրայ էր, որպէս քաջամարտիկ: Ծաղիկը հպարտ էր, բայց նաեւ մայր էր. ուներ մտահոգութիւնը եւ իւրաքանչիւր եկող-գացողէ պիտի ուզէր իմանալ իր տղուն որպիսութեան մասին:

Վանատան մէջ ելեկտրականութիւնը քիչ մը աւելի լաւ էր, բայց մտք չուրը, Ինչ խօսք, դժուար իրականակալի: Ծաղիկը պզտիկ ամա-



սին մէջ քիչ մը ջուր պիտի տաքցնէր, որպէսզի առաւօտները լուացուինք: Դիր էր, եւ իրենք ամէն ինչ պիտի ընէին, որպէսզի ես հսկազատ զգայի:

Ներսէս արք. Պոզապալեանը Հայաստանի մէջ մեր Ընկերակցութեան նախագահն էր: Հայրենիքի ու եկեղեցիի սերը իր սրտին ու հոգիին մէջ՝ իր կեանքը տրամադրած էր Զրիստոսի եւ հայ ժողովուրդի ծառայութեան: Կը սիրէր Աստուածաշունչը եւ ջատագովն էր քրիստոնէական դաստիարակութեան: Հայաստան ներգաղթած էր Պէյրութն, յիսունական տարիներու վերջաւորութեան: Եթէ մեր յարաբերութեան եւ գործակցութեան վրայ կար Պէյրութի ուժակախօսութիւնը, բայց երկուքս ալ Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն շրջանաւարտ եղած էինք, ուստի մեր խօսակցութիւններուն նիւթն էր նաեւ անցեալէն պատահիկներ՝ յուշերը բերերով որպէս քաղցր օրերու իրականութիւն:

Վաչագան Յովհաննեսեանը բանաստեղծ էր եւ ստանձնած գրասենեակին տնօրէնութեան պարտականութիւնը: Սասունցի էր, եւ հայրենասիրութիւնը իրեն համար սրբութիւն էր: Չգացական մարդ էր, ու հայրենիքը իր ամբողջ եռուկէն էր, եւ այդ զգացումները յաճախ կ'արտայայտէր բանաստեղծութիւններուն մէջէն: Կ'ապրէր հայրենիքի տագնապը եւ դժուարութիւնները: «Ո՛ր օրերը անելի լաւ են Վաչագան, խորհրդային ժամանակաշրջանը, թէ՛ հիմա՝ անկախութիւնը»: Գիտէր, թէ կը փորձէի զինք: Զուներ արագ պատասխան Ղեմքին վրայ կը գծուէր պզտիկ եւ մանուկի անմեղ ժպիտ մը: Աչքի-

րը կը լեցուէին, չէմ գիտեր՝ ուրախութեան, թէ՛ տխրութեան արցունքներ էին, եւ կ'ըսէր համոզուած. «Կարեւորը հայրենիքը պահելն ու կերտելն է»:

Եսային ալ Այնճարէն էր եւ Հայաստան հաստատուած էր ներգաղթի օրերուն: Կ'ապրէր Էջմիածնի մէջ եւ ուներ հանգստաւտ տուն: Մայր Աթոռի պահակախումբին ընդհանուր պատասխանատուն էր: Եսային ալ ուներ իր պատմութիւնը: «Երբ՝ Նոր եկանք Հայաստան՝ ներգաղթի օրերուն, կեանքը շատ դժուար էր: Այն չէր, ինչ որ մեզի ըսած էին: Բայց շինեցինք մեր տուները եւ կեանքերը», կը բաժնեկցէր Եսային որպէս ապրած կեանքի անոյշ եւ դժուար օրեր: Եսային նաեւ կը բաժնեկցէր իր տունը եւ հիւրասիրութիւնը: Միասին հաց պէտք էր ուտէինք՝ իւրաքանչիւր այցելութեանս: Կը հաւաքուէինք թողորս՝ սրբազանը, Վաչագանը եւ պաշտօնեաները: Կարելի չէ մոռնալ Վաչագանին զգայացունց եւ երկարաշունչ բաժակաճառերը: Այդ բաժակաճառերուն եւ խորովածին շուրջ անելիով կը զարգանար բարեկամութիւնը, բայց կը կորսուէր խմուած բաժակներուն քանակը: Եւ չէին ուշանալ սրբազանի զգուշացումները: «Վաչագան, կապիւց կ'էմաց, հա»:

Բայց ապրեցայ հայրենիքը՝ մեկ-մեկ, նաեւ ամբողջութեամբ: Ամեն առաւօտ հասանելի-անհասանելի գեղեցիկ Արարատը, պուլպուլակներու մէջէն հոսող սառը ջուրը, Էջմիածնի հոգեպարար պատարագները եւ Լուսինէ Չաքարեանի ծայտով հնչած շարականները: Ապրեցայ նաեւ իւրաքանչիւր հայրորդիին հետ հայկական կեանքը հայրենի հողին վրայ: Չգացի, թէ ինչ կրնայ նշանակել ըստ հողիդ վրայ ըլլալու իրականութիւնը, եւ այդ հողէն ուժ առնելով ապրիլ հայկական կեանքը՝ հայրենի խօսելով:

Ապրեցայ այս բոլորին մէջ իմ ըլլալու գերակայութիւնը: Ներսէս սրբազան, Վաչագան, Եսայի եւ Իսկենտեր... բոլորն ալ մեկնեցան՝ այս աշխարհէն, բայց մեկնեցան ունենալով գոհունակութիւնը, թէ ապրեցան հայրենի հողին վրայ ու անոր գիտակցութեամբ: Ուրախ թէ տխուր, դժուար թէ դիւրին, անոնք ապրեցան իրենց ունենալու եւ զգալու ինքնագիտակցութիւնը: Անոնք ապրեցան գոհունակութիւնը եւ ուժը՝ հայրենի խօսելով, Հայաստանը ապրելով եւ հայ մշակութիւնն ու կեանքը իւրացնելով: Բայց ըրին անելին: Այս գոհունակութիւնը եւ ուժը բաժնեկցեցան ինձի հետ:

«Ղուն հայրենի կը խօսիս»: Այո՛ր, եւ հայրենի խօսեցայ ի՛մ հողիս վրայ, ինչ որ տարբեր է: Որովհետեւ հողէն առի գոհունակութիւնը եւ ուժը, նաեւ ինքնութիւնը, եւ Լոյսինքն այդ ինքնութեան տուած մշակութային շերտութիւնը:

Արդէն անցան քսաներեք տարիներ Հայաստանի անկախացումէն

ու իմ հայրենի պարտականությունես: Բայց կան տակաւին Վաչագանին արցունքոտ աչքերը, որոնք տակաւին ուժգնութեամբ ու նաեւ ջերմութեամբ կը նային ինձի: Կը զգամ, թէ Վաչագանը չի քաջալերեր զիս, ինչպէս որ ես իրեն ըրի: Ան հաստատ կը պատուիրէ: «Կարեւորը հայրենիքը պահելն է»:

«Դուն հայերէն կը խօսիս»:

Բայց հայուն համար այսօր կայ խօսելէն աւելի մեծ մարտահրաւերը՝ պահելը: Պահել հայուն հայրենիքը, հայ լեզուն եւ հայ մշակութիւնը: Եւ ասիկա միայն խօսքով եւ խօսելով չէ, այլ նաեւ ապրելով եւ ապրեցնելով:

## ՀԻՆ ԲԱՅՅ ՆՈՐՈԳՈՒՌ ՅԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*«Եւ իր ժամանակին իր խօսքին քարոզութեամբը յայտնեց, որ ինձի յանձնուցանեմք փրկչին Աստուծոյ հրամանովը»:*

*(Տիտոս 1.3)*

Ծառայ հասկացողութիւնը Պօղոս Առաքեալի համար համեստութեան եւ հպարտութեան մակդիր է: Համեստութիւն, որովհետեւ ան կը գիտակցի, թէ «Աստուծոյ ծառան է» (Տիտոս 1.1): Բայց նաեւ հպարտութիւնը, որովհետեւ ան ընտրուած է ըլլալու «Քրիստոսի առաքեալ» (Տիտոս 1.1): Իրեն համար, համեստութեան եւ հպարտութեան այս իրականութիւնները կու գան, քանի ան կը գիտակցի, թէ ինչ եւս մտած է այն յաջորդականութեան մէջ, որ «խոստացուած է զարեր առաջ» (Տիտոս 1.2): Իսկ խոստացողը՝ «անսուտն Աստուած» (Տիտոս 1.2), որ զինք դրած է այս յաջորդականութեան մէջ «Աստուծոյ հրամանով» (Տիտոս 1.3):

Պօղոս Առաքեալ կը գիտակցի, թէ ան մաս կը կազմէ դարեր առաջ սկսած յաջորդականութեան, ինչպէս Մովսէս, որ «Աստուծոյ ծառան էր» (Յեսայայ 1.2), ու տակաւին մարգարէները, որոնք նոյնպէս Աստուծոյ ծառաներն էին, որոնք Աստուած երեւցաւ եւ իր ծրագիրները յայտնեց: Պօղոս Առաքեալ կ'անդրադառնար այս ժառանգին, որ ինչ քայլ ոչ ինչացած յաջորդականութիւն մըն էր եւ իրական:

Քրիստոնեան եւ իր եկեղեցիի անդամակցութիւնը պէտք է հասկնայ նոյնիսկ այս յաջորդականութեան հասկացողութեամբ ու գիտակցութեամբ: Քրիստոնեայ եկեղեցիի անդամակցութիւնը պիտի տեսնել ու անդրադառնալ, թէ ան մաս կը կազմէ կազմակերպութեան մը, որ դարերու ժառանգ եւ առաքելութիւն ունի: Այս ժառանգը ծառայութեան գիտակցութիւն է Աստուծոյ համար, որ համեստութիւն է քայլ նաեւ հպարտութիւն, քանի ծառայութիւն մըն է, որ կը կամրջուի առաքելութեան հետ ու անոր համար:

Այս ծառայութեան մէջ կայ հեղինակութիւնը, ոչ թէ անհատին, այլ Աստուծոյ եւ անոր խօսքին: Քրիստոսի հեղինակութիւնը, որ չի ճակնար «թերես, կարծեմ, չեմ գիտեր» ու տակաւին թեական իրավիճակներ: Ան ճշմարտութեան գիտութիւն է, որ կասկածէ վեր է, վճռակամ, յստակ, քանի կը խօսի յաւիտենական կեանքի յոյսին համար,

ուր մարդ արարածին բաժին մը կը հանէ ոչ թէ մարդկային այլ Աստուծոյ կեանքէն:

Այս Աստուծոյ կեանքը ոյժ է երբ մարդը յուսախաբ է, հանգստութիւն երբ ան անհանդարտ է, ճշմարտութիւն երբ կասկածամիտ է, բարութիւն երբ կը մոլորի, եւ ուրախութիւն երբ տխուր է: Աստուծոյ կեանքը չի գար որպէս գիտական կամ մտաւորական մտայղացում այլ կեանքի նուրբ, որ ապրող է ապրուող իրականութիւն է ծառայութեան հասկացողութեամբ: Այս ծառայութիւնը սորվելու եւ սորվեցնելու տեսլականն է. Աստուածապաշտութեան կեանքը, ուր մարդը կրնայ ապրիլ իր ամօրեան իր բոլոր դժուարութիւններուն մէջ, եթէ մէկ կողմէ Աստուծոյ հետ, բայց նաեւ իր անձին ու շրջապատին հետ:

Քրիստոնեան կը մտնէ նոյնիմեջ այս յաւիտեական կեանքի յոյսի մէջ: Եթէ այս յաջորդականութիւնը հին է, բայց միշտ նորոգուող, նաեւ կը նորոգուի, քանի ունի ծառայութեան տեսլականը, որ չի հիննար նոյնիմեջ երբ ծառայութիւնը ունի տարիներու վրայ երկարած պատմական ժառանգ ու աւանդ:

Ու տակաւին, քրիստոնեան իւրաքանչիւր Նոր Տարուան սկիզբը եթէ անցնող մէկ տարին այլ կը դնէ պատմութեան արխիւ, բայց անպայմանօրէն կայ տակաւին յաջորդականութիւնը, որ արխիւէն անլի կեանք է. նոյնիմեջ երբ հին պատմական եւթահող ունի: Այս կեանքը եթէ հին է, բայց միշտ նորոգուող, քանի կայ ծառայութեան գիտակցութիւնը, Աստուծոյ յոյսի կեանքը սորվելու եւ սորվեցնելու ապրելու եւ ապրեցնել տալու համար առաքելութեան տեսլականը:

Քրիստոնեան Նոր Տարին կը դիմաւորէ այս պարունակով, թէ անոր կեանքը յանձնուած է ծառայութեան տեսլականով եւ Քրիստոսի յոյսին ու անոր առաքելութեան համար: Այս իրականութիւն մըն է, որ չի հիննար անցնող տարուան հետ, այլ կը նորոգուի յաջորդող Նոր Տարուան ընդմէջէն:

Քրիստոնեային Նոր Տարիին նորը պիտի տեսնել նոյնիմեջ այս ծառայութեան եւ առաքելութեան տեսլականով: Եթէ այս տեսլականը կու գայ հինէն, բայց կը նորոգուի, քանի առաքելութիւն մըն է, որ մաս կը կազմէ յաջորդականութեան մը՝ մէկ տարիէն միւսը, յոյսի կեանքը բաժնեկից ընելու ընդհանրութեան մէջ:

Շնորհաւոր Նոր Տարի: Դին բայց միշտ նորոգուող ծառայութեան եւ առաքելութեան կեանքի յաջորդականութեամբ:

## ՅՈՅԱԸ, ՈՐ ԿԸ ՎԵՐԱՇԻՆԷ

*«Պօղոս Յիսուս Քրիստոսի ստաբեայ մեր փրկիչ Ազգուած եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսին հրամանովը»:*

*(Ա. Տիմոթէոս 1.1)*

Պօղոս Առաքեայ Յիսուս Քրիստոսը կը կոչէ մեր «յոյսը»: Քրիստոնեական աստուածաբանութեան մէջ յոյսը Քրիստոսով կը կայանայ՝ վերաշինելու մարդը եւ աշխարհը. անհատին կեանքին մէջ նորը յնորից է, զոր Աստուած կու տայ եւ միակ աղբիւրն է կեանքի ուժին: Այս ոյժը կու գայ Քրիստոսի մահով եւ յարութեամբ, հաստատելով այն իրականութիւնը, թէ յոյսը երբեք մեր մէջէն չէ, այլ կը տրուի իւրաքանչիւրիս: Այստեղէն կը սկսի իրականութիւնը, թէ այս յոյսը նոյնիմեջ նորութեան սկիզբն է, որ կու գայ մեզի Քրիստոսէն: Այս յոյսը կարելի չէ սորվիլ, այլ պետք է փորձել եւ իւրացնել զայն:

Այս իմաստով, քրիստոնեական աստուածաբանութիւնը հիմնուած է մարդկային յառաջխաղացք ապահովելու համոզումին վրայ, որ Յիսուս Քրիստոս սկսաւ պատմութիւնը փոխելու առաքելութիւնը, իր առաքեալներէն սկսեալ, որոնք փոխեցին կեանքը իւրաքանչիւր անհատի, որուն հանդիպեցան: Ու տակաւին, ապրող Քրիստոս կենդանի իրականութիւն է իւրաքանչիւր մարդկային կեանքի մէջ: Վերստին ծնունդ կամ նոր ծնունդ հասկացողութիւնը պիտի ընդգրկուի, թէ մարդը կենդանի է, ապրող իրականութիւն՝ Քրիստոսով: Այս իրականութեան մէջ նաեւ պիտի տեսնել, թէ մարդկային կեանքը չի վերջանար Ֆիզիքական մահով: Եթէ Աստուած սեր է եւ մարդուն մէջ կ'ապրի, եւ թէ Աստուած մարդուն համար մեռաւ եւ յարութիւն առաւ, ուրեմն կեանքը տարիքի հասկացողութեամբ չի վերջանար եւ անկէ ետք ալ: Ֆիզիքական մահը կը դառնայ սկիզբ կեանքի, որ սահման չունի:

Այս իմաստով, Քրիստոսի յոյսը յաղթանակներու հասկացողութիւնն է, որովհետեւ առաջին՝ Քրիստոսի յոյսով մարդը գտաւ իր կեանքի զգաստութիւնը: Քրիստոնեական յոյսը մարդուն կու տայ յարմարելու ատակութիւնը: Ան կ'օգնէ, որպէսզի մարդը դիմագրաւէ վախը, ապրի համերաշխութեամբ, երբ նոյնիմեջ իր չորս կողմը անապահով է: Եթէ Քրիստոսի յոյսը կ'օգնէ մարդուն, որպէսզի տեսնէ իր վիշտն ու ցաւը, ան նաեւ կը քաջալերէ, որպէսզի նոյն անհատը հնարք որոնէ բուժելու այդ բոլորը: Յոյսը կ'օգնէ, որպէսզի կեանքի

կոտորուկները կարելի ըլլայ համադրել եւ վերադասաւորել համարաշարքէն, մէկ ամբողջութեան մէջ: Զրիստոսի յոյճ մեզ կը զգաստացնէ, թէ կայ հնարք եւ ելք որուն զժուարկութեն եւ մարտահրաւիրութիւն: Այս յոյճը, որ մարդուն ներսփոյնն է, նաեւ կը զգուշացնէ զինք, թէ մեր ներաշխարհէն անդին կայ օգնութիւն:

Երկրորդ, Զրիստոսի յոյճով մարդը տիրապետեց տիրող վիճակներուն: Յոյճը եւ մտահոգութիւնը ունին մէկ հասարակաց յայտարար, որունք իրար հետ շարկապայուելով կը ստեղծեն կեանքի մէջ յառաջանալու եւ ելք գտնելու հասկացողութիւնը: Այս իմաստով, մարդ պետք ունի թէ՛ մտահոգութեան եւ թէ՛ յոյսի: Գափաւոր մտահոգութիւնը կ'օգնէ, որպէսզի անհատը հեռու մնայ անհոգութենէ եւ անշարժութենէ: Միւս կողմէ յոյճը կ'օգնէ, որպէսզի անհատը չկաշկանգուի վախի եւ մտահոգութեան ծիրէն ներս, եւ կու տայ քաջութիւնը գործելու: Այս երկու իրականութիւններուն յստակութիւնը կը յառաջացնէ կեանքի փոփոխութիւն: Կարելի չէ, որ մարդ թէ՛ ուրախ եւ թէ՛ յուսալից ըլլայ եթէ ան կ'ապրի շրջանի մը մէջ ուր չորս կողմը որ ըստ օրէն կայ աճող աղբաստութիւն: Պէտք է հնարք մը որունն է գտնել անոր պատճառած փոփոխութիւնը: Ներկայ ժամանակները յատկանշական են յուսախաբութեամբ եւ յուսալքութեամբ: Ընդհանրապէս կայ այն տպաւորութիւնը, թէ յուսահատական օրերը յուսահատ մարդիկ կ'արտադրեն: Հակառակն ալ ճիշդ է. յուսահատ մարդիկ յուսահատական կացութիւններ կ'արտադրեն: Այն ինչ որ վճռական կը մնայ յուսահատական կացութիւնները վերածել լաւատեսութեան: Մարթին Լուտեր ըսած է. «Որքէն բան որ կ'ընենք աշխարհի վրայ, կ'ընենք զայն յոյսով: Եթէ բան մը պիտի ընենք եւ տեղ մը պիտի հասնուք, մենք պէտք ունինք յոյսի: Մարդը կը փրկուի յոյսով»: Յոյճը կը փոխէ անյոյս կացութիւնները:

Երրորդ, Զրիստոսի յոյճով մարդը յաղթեց մահուան: Զրիստոսի շնորհած յոյճը եթէ արմատացած է անցեալի մէջ, նաեւ ունի ապագայի ուժը: Զրիստոս փրկեց մարդը եւ զայն դրաւ իր ստեղծած թագաւորութեան մէջ, որ կը կեդրոնանայ աշխարհի մեղքերը վերացնելու իրականութեան մէջ, որ կը պահէ մարդը յաւիտենականութեան համար: Զրիստոնեական յոյճը ամբողջական յոյս է, որ կ'ընդգրկէ մարդկային կեանքի բոլոր կողմերը՝ անձնական եւ ընկերային: Այս իմաստով, յոյճը չի կենար եւ չամբողջանար մահուան իրականութեան հետ, այլ գերիբարան յոյս ըլլալով, կը խթանէ մարդը տեսնելու իրականութիւնը, անմիջական հորիզոնէն անդին, մարդկային կեանքի երկրային գոյութենէն դէպի յաւիտենականութիւն:

Զրիստոնեական յոյճը չի կենար Աւագ Ուրբաթի իրականութեան մէջ: Ան յոյս մը չէ, որ մտաւ գերեզման եւ հոն մնաց: Այս յոյճը հասաւ

յարութեան Կիրակիին, որ մարդը տեսաւ եւ գտաւ, թէ «համբերութիւնը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը յոյս է»: Յոյճը անօթով չի կար, վասնզի Աստուծոյ սերը մեր սրտերուն մէջ տարածուած է (Լուսր 3օգիին միջոցով որ մեզի տրուեցաւ) (Հռոմեացիս 5.4-5):

Այս է Զրիստոսի յոյսին հիմքը. Աստուծոյ իրականութիւնը, որ յաղթեց մահուան, եւ որուն (իմամ՝ Աստուծոյ) սիրոյն միջոցով մարդը կը յարուսակէ ճանչնալ եւ ճանչցուիլ Զրիստոսէ:

Բայց այս յոյճը վերաշինելու եւ նորին գործընթացը պետք է շարունակել դնել ապրող եւ ապրուող իրականութիւններու մէջ: Այս է ներկայ ժամանակներու քրիստոնեայ անհատին եւ եկեղեցիին մէկ իրականական մարտահրաւիր: Յարութեան յոյճը կ'արտադրէ այն ուժը, որ մարդը կ'առաջնորդէ Լուիսուսի եւ հոգածութեան: Այս իրական է նաեւ այսօր, երբ ներկայ աշխարհը կը տագնապի յուսահատութեան տարբեր հոլովոյթներէ: Բայց նաեւ քրիստոնեական յոյճը ստանձնի ապրելու նախաձեռնութիւն չէ: Ան հաւաքական աշխատանքի արգասիք է՝ եկեղեցի, ժողովուրդ եւ ազգ: Այս հաւաքական աշխատանքով է, որ քրիստոնեական յոյճը կ'ազատագրէ մարդը եւ հաւաքականութիւնը: Հաւաքական աշխատանքին մէջ, իւրաքանչիւր անհատ իր բաժինը ունի բերելու այս Լորի իրագործումին մէջ:

Վերջապէս, քրիստոնեան կանչուած է յուսալու: Ան պետք է շրջանցէ իր մտահոգութիւններն ու զժուարկութիւնները եւ սորվի Աստուծաշունչի ներկայացուցած յոյճը: Անիբաժնէ եւ դուրս գալ մարդկային սահմանափակումներէն եւ լծացումէ, որպէսզի կարելի ըլլայ տեսնել ապագայի հորիզոնի վրայ Լորի սկզբնաւորութիւնը: Շրջանցելով բոլոր արգելքները, ի բացառեալ Ան, որ շրջանցեց աշխարհը իր յարութեամբ: Զրիստոսի շնորհած յոյսն է այս մէկը, ուր անհատը կը վերաշինուի Լոր իրականութեամբ մը, հոս՝ այս աշխարհին մէջ: Լոյսինքն այս յոյճը կ'օգնէ մարդը, որպէսզի տեսնէ յաւիտենականութեան շնորհած փոխուած իրավիճակը մինչ կ'ապրի իր երկրային կեանքին մէջ:

Զրիստոս յարեաւ ի մեռելոց: Օրինեալ է յարութիւնը Զրիստոսի:

### Օգտագործուած Աղբիւրներ

Henry H. Mitchell. "Catching Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar 2012.

James L. Kidl. "Reflections on Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Jesse N.K. Mugambi & Michael R. Guy. *Contextual Theology Across Cultures*. Nairobi: Action Publishers, 2009.

Joan Delaplaine. "A Future Full of Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan.-March, 2012.

John Macquarrie. "Christian Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Julgan Moltmann. "Experience of God". London: SCM, 1980.

Larry L. Rasmussen. "Hope & the Environment". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Paul Zahl. "Preaching Hope as Retrospective". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Thomas Lamant. "We Are Both Creatures & Creators of Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Thomas Lamant. "Weave Both Creatures and Creators of Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

Walter Brueggemann. *The Prophetic Imagination*. Minneapolis: Fortress Press, 2001.

Walter J. Borghardt. "Threats to Hope". *The Living Pulpit*, NYTS, Jan-Mar, 2012.

William Lynch. *Image of Hope*. University of Notre Dame Press, 1968.

## ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏԷՆ ՍԿՍԱԾ ԿԵԱՆՔ՝ ՎԱՐՂԱՆԻՆ ԱՆՅԵԱԼԸ

Նետաքրքրական է մարդ անհատին կեանքը: Ունի սկիզբ, բայց նաև վերջ: Բայց այս երկու միառոտները զիրար կամրջողը ապրուած իրականութիւնն է, որ եթէ մէկ կողմէ կը լեցնէ, բայց նաեւ կ'արժեւորէ եւ իմաստ կու տայ իւրաքանչիւրին՝ ինքն իր պարունակին մէջ: Իւրաքանչիւրը կը լեցնէ իր պարունակը իր տեսադաշտէն, բայց նաև փորձաութենէն ու տիրող տրամադրութենէն: Այս ընթացքին անկայմանօրէն կը փորձուիս դառնալ տեսնել անցեալին նայիլ: Մերք անձկութեամբ, թերեւս նաև ցաւով եւ վիշտով, բայց կը բերես այդ թուրը դորձեալ՝ այսօրուան՝ փորձելով զայն տանիլ վաղուան՝ սպազային:

Վարդան Թաշճեանին համար այս անցեալի պարունակը լեցուն է:

Այսօր Վարդան խօսիլ կու տայ իր մասին, որպէս կիպրահայ վաստակ շահած գեղանկարիչի, եւ որուն գեղարուեստական աշխատանքները անցած են աշխարհագրական սահմաններն ու ցամաքավայր եւ տարածուած քիչ մը ամէն տեղ: Բայց եւ այնպէս Վարդան նաև եղած է մանկավարժ եւ դաստիարակ, երկար տարիներով երկրուած ուսուցչական ու տնօրէնութեան պաշտօնին եւ առաքելութեան՝ Լիբանանէն սկսած, բայց մասնաւորապէս Կիպրոսի Սելփոնեան եւ Նարեկ ազգային վարժարաններուն մէջ:

Վարդան Թաշճեան կը սիրէ բանալ անցեալի պարունակը, քանի որ կը հաւատայ, թէ կ'ապրի իր անցեալին հետ, բայց երբեք ներկան տխրեցնելով:

Իսկ Վարդանին անցեալը կը սկսի Պուրճ Զամուտէն:

Ծնած է Նոր Մարաշի հայաբնակ թաղամասը: Ընտանեկան պայմանները՝ համեստ, բարեկեցիկ եւ երեւի նիւթական քաշքշուող իրավիճակներով: Բայց ինչպէ՞ս պատկերացնել աւելի տարբերը, երբ հայրը՝ Դաւիթ, պատկանած է մանկութիւն չունեցող երեխաներու վաղանգին եւ Անդրանիկ Ծառուկեանին հետ ապրած է Զալէպի որսանոցային կեանքը՝ ինքն ալ ըմպելով հայ պատանիին ուրախ-սիրտ օրերու բաժակէն: Բայց կայ նաև աւելին: Դաւիթ անցած է մէկ որբանոցէն միւսը՝ Զալէպ, Պէրոսի եւ Երուսաղէմ, մինչեւ որ վտար է իր հարազատ ծնողը եւ միացած անոնց՝ վերակազմելու հայկական տոհմիկ երդիքը Պուրճ Զամուտի Նոր Մարաշի թաղամասին մէջ:

Վարդան ծնած ու ապրած է այդ երդիքին տակ: Զայր, մայր, մեծ

ծնողք եւ տակաւին երեք եղբայր եւ քոյր: Ութ հոգի՝ բոլորը մէկ յարկի տակ: Թեւեւ անցուկ եղած են կիւթական պայմանները, բայց տուրք եղած է շերտ՝ սիրոյ եւ ուրախութեան մթնոլորտով ողորդուն: Ասիկա հայկական իրական կեանքն է, զոր ապրած է հայը Տեղասպանութեան արհաւիրքէն ետք, հայը ստրկված է երջանկութեան եւ սիրով կեանքը կերտել «մահուան շուքի ցորի» փորձառութենէն ետք:

Վարդան նախակրթութիւնը ստացած է Զառասուն Մանուկ վարժարանին մէջ: Այստեղէն սկսած է մէկ-մէկ կազմուիլ անցեալէն դիպիւնտերկայ շարձապարտը իր կեանքը: Վարդանին համար Պուրճ Զամուտի իւրաքանչիւր օր, անկիւն եւ թաղամաս մէկական յիշատակ են:

«Սիւնեմա Արաքս»ը իր օրերուն հայ պատանիին ժամանցի լաւագոյն վայրն էր, բայց նաեւ նոյն այդ բեմահարթակին վրայ Վարդան սկսաւ թատերական կեանքի իր առաջին փորձերուն՝ յետագային իր մէջ անելի զարգացնելու համար նաեւ մշակութային այս մարզը: Պուրճ Զամուտի մեծ ու պզտիկ բաղնիքները: Զայկական սովորութիւններու համաձայն, շաբաթական դրութեամբ բաղնիք երթալու ել լողակալու կենցաղը: Վարդան կը զգար, թէ այդ կանաչ քարի ուժգնութեամբ մեծ օճառները ո՛չ միայն զինք ֆիզիքապէս պիտի մաքրէին այլ նաեւ պատրաստէին զինք հոգեպէս՝ վաղուան կեանքին: «Պէտք զետե՛ղ՝ Նահիբ երկայնքին, մեր չարաճճիութեան տեղն էր» կ'ըսէ Վարդան: «Գորտ կը բռնէինք գետին մէջէն», կը շարունակէ եւ կը յիշէ նաեւ, թէ ինչքան համեղ էր այդ գորտին միսը:

Վարդան կ'ապրէր նաեւ Պուրճ Զամուտի այդ օրերու հերոսներուն հետ, որոնք իրենց մասին խօսեցնել կու տային: Պոքսեր Արամը եւ Էսքեր Միսաքը, տակաւին ուրիշներ, որոնցմէ՝ «Եթէ քիչ մը կը վախնայինք», կ'ըսէ Վարդան, «բայց նաեւ կը խօսէինք անոնց սխրագործութիւններուն մասին: Մեր պատանեկան երեւակայութեան մէջ անոնք անհասանելի մարդիկ էին»:

Վարդան այսօր՝ նստած պաստառին ետին, կը գծագրէ: Կը գծէ ընդհանրապէս բնութիւնը եւ այդ բնութեան ընդմէջէն կը փորձ դուրս հանել սերը եւ երջանկութիւնը: «Ես կը գծեմ այն, որ կը զգամ եւ ոչ թէ կը տեսնեմ»: Վարդան այսօր կը զգայ սերը եւ երջանկութիւնը, քանի որ իր մանկութեան եւ պատանեկութեան օրերուն լեցուց այս արժեքները իր կեանքի պարունակին մէջ եւ շալկեց տարիներ շարունակ՝ հասնելով ներկայ օրերուն:

Վարդան իր շալկած սերը եւ երջանկութիւնը չպահեց իր անձին ու ետին համար, այլ կեանքի իր ճանապարհորդութեան ընթացքին բաժնեկցեցաւ այդ բոլորը իր ընտանիքին, ազգին ու շրջապատին հետ: Եթէ մէկ կողմէ բաժնեկցեցաւ իր գեղանկարչական ու ստեղծագործական աշխատանքներուն մէջէն, բայց նաեւ իր կրթական ա-

պարզեան միջոցով ու ընկերային լայն շրջանակի ճամբով: Վարդան իր արուեստին միջոցով նաեւ բաժնեկցեցաւ իր հոգին՝ բարեկամութեան եւ հաղորդականութեան, մարդկային արժանիքներով: Այս արժեքները ան նկատեց որպէս զխաւոր գրաւական մարդկային կեանքի յառաջխաղացքին:

Վարդան բնութեան մէջէն ուզեց դուրս բերել ստեղծագործական եւ արդիւնաւետութեան հաւատալու եւ հասնելու մարդուն խտելը: Մնա թէ ինչո՞ւ Վարդան յաճախ գծեց ծառը եւ ծառաստանը, քանի որ անոր մէջ տեսաւ պտուղը, տերեւը, շուքը, փայտը եւ այն բոլորը, որ արդիւնք կու տայ եւ կը նպաստէ հաւաքական կեանքին: Կ'արժէ, որ մարդը հաւատայ՝ ինչպէս ինք կ'ըսէ. «Դրական կեցուածքին եւ հոգիին»: Որովհետեւ դրական հոգին է, որ արդիւնք կու տայ:

Վարդան Թաշճեան այսօր հպարտ կիպահայ եւ կիպրացի քաղաքացի է, որ կը սիրէ ու կարգած է այս երկրին: Իր կեանքը եւ աշխատանքը կ'ուզէ ի սպաս դնել մէկ կողմէ հայ ժողովուրդին, բայց նաեւ Կիպրոսին: Վարդան կը նայի նաեւ ետեւ՝ անցեալի իր կեանքին, Պուրճ Զամուտին եւ անոր թաղամասերուն, ուր լեցուց իր կեանքի պարունակը սիրով ու երջանկութեամբ, եւ որուն համար երախտապարտ է եւ ուրախ:

Իւրաքանչիւր Պէյրութէն վերադարձիս՝ Վարդան կ'ուզէ լսել ինձմէ Պէյրութի եւ Պուրճ Զամուտի մասին: Խապրիկ մը ստանալու ցանկութեամբ՝ կ'ուզէ գիտնալ, թէ ինչ կը պատահի իր «մանկութեան օրերու Պուրճ Զամուտին մէջ»:



Վարդանին անցեալը իրաքանչիւր հայուն անցեալը չէ՞ արդեօք Գիւղաններէն եւ որբանոցներէն կերտուած կեանքեր, որոնց ընթացքին համետ պայմաններու եւ երդիքներու տակ կոփուեցան սիրոյ եւ երջանկութեան հոգիներ: Բայց չէ՞ որ այս հոգիները ապրեցողն եւ վերապրեցուցին հայը: Եւ Վարդան Թաճեան որոշեց իր կեանքի պարունակը լեցնել նոյն այդ սիրոյ եւ երջանկութեան հոգով, որուն միջոցով իր կեանքը դարձաւ արդիւնաւետ:

Երեքշաբթի, 12 Նոյեմբերին Նիկոսիոյ թատերական սրահին մէջ տեղի ունեցաւ Վարդան Թաճեանի քառասուն տարիներու Նկարչական-ստեղծագործական աշխատանքին նուիրուած յարգանքի երեկոյ, նաեւ իր գեղանկարչական պատաներու ցուցահանդէս: Վարդան իրեն յատուկ սրամտութեամբ եւ կատակով ինք իր նկարներուն նայելով եւ ցոյց տալով՝ կ'ըսէ. «Այս նկարներուն ետեւը կեցողը Պուրճ Գամուտի տղան է»:

Վարդանին անցեալը թէն սկսաւ Պուրճ Գամուտէն, բայց հին չմնաց: Անցաւ սահմաններէ, ստեղծագործեց եւ արտադրեց: Իսկ այսօր ետեւ նայելով՝ միշտ երախտապարտ եւ ուրախ կը շարունակուի կեանքը եւ ինչպէս որ ինք կը հաւատայ՝ «Կեանքը պարապ պատամ մըն է, լեցնելով գայն կը լեցնես կեանքդ»:

Վստահաբար արժէ կեանքը լեցնել սիրով եւ հաղորդականութեամբ, քանի որ այս արժանիքներն են, որ արդիւնք կու տան: Գայն պէտք է շարունակէ հաւատալ արդիւնաւետ կեանքին հասնելու տեսլականին:

Վարդանին անցեալը անպայմանօքն իրաքանչիւր հայունն է: Այս անցեալի ուժով հայը կ'ապրի այսօր եւ կը նայի վաղուան:

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՅՈՐԴԱՆԱՆԷՆ. ՄԵՌԵԱԼ ԾՈՎՆ ՈՒ ԱՊՐՈՂ ԵԿԵՂԵՅԻՆ

Յորդանանը ունի պատմութենէն ժառանգուած մշակութային բազմաթիւ արժէքներ, որոնք կու գան հարստացնելու երկրին քաղաքակրթութիւնը, ինչպէս նաեւ բնութիւնը, տեսարաններն ու տեսարանն վայրերը: Թէն այս տեսարաններուն մէջ կան անապատային բաժինները, բայց նաեւ կայ ատկէ դուրս եկող գեղեցկութիւնը, որ թեմեւ կրնայ նկատուիլ չոր եւ միապաղաղ, բայց խորքին մէջ ապրող վկայութիւն է: Այս վկայութիւններուն կարգին կան նաեւ աստուածաշնչական ենթահողէ եկած իրավիճակներ, որոնք իրաքանչիւր այցելու կը դնեն այդ իրականութիւններու դէմ յանդիման՝ մէկ կողմէ գօտեպնդելով հաւատքը, միւս կողմէ արժէքը:

Վստաքրքրական է Մեռեալ Ծովը դիտել իբրեւ Յորդանանի այդ պիղծիկ իրականութեան մէկ անբաժանելի մասիկը: Ծէ՞ որ մահն ու կեանքը՝ թելուզ հակասական հասկացողութիւններ, կու գան ամբողջացնելու մարդուն եւ անոր պատմութեան հոլովոյթները: Այս իրականութենէն մեկնած՝ կարելի է քացատրութիւն գտնել Ծովուն «մեռեալ» կոչուելուն, երբ անոր գեղեցկութիւնը վեր է ամեն կասկածի: Կայ նաեւ աւելին. անիկա կը կոչուի նաեւ «Աղի Ծով», իսկ արդ որովք բան չէ, եթէ ոչ՝ կեանքի նշան: Շատ է թիւը այն այցելուներուն, որոնք կու գան բուժուելու Մեռեալ Ծովուն մէջ, որ կեանքին հետ համատեղելու իրականութիւնը նաեւ կու գայ այն վիճակէն, որ կարելի չէ խեղդուիլ կամ ընկղմիլ անոր մէջ, նոյնիսկ եթէ մարդ կամովին ուզէ այդ մէկը ընել:

Բայց Մեռեալ Ծովուն մէջ կը հոսի նաեւ այլ կենդանի իրականութիւն մը՝ Յորդանան գետը: Յորդանան գետին առնչուած է աստուածաշնչեան եւ քրիստոնէական մշակոյթին մէկ մեծ ու կարեւոր իրականութիւնը՝ հոն մկրտուեցաւ Քրիստոս: Բազմաթիւ են ուխտաւորները՝ յատուկ նպատակով այցելուներ կամ զբօսաշրջիկներ, դեպի Յորդանան գետին երկու կողմերը. բայց նաեւ անոր հանդիպակաց տարածքին շրջակայքը կան քրիստոնէական տարբեր համայնքներու պատկանող եկեղեցիներ եւ եկեղեցական շէնքեր, որոնք կառուցուած են պետական արտօնութեամբ եւ իրամանագիրով՝ շրջանին քրիստոնէական մշակոյթի իրականութիւնը աւելի եւս ամրապնդելով:



Այդ եկեղեցիներուն շարքին է նաեւ հայկականը. հոս կը սկսի հայուն եւ իմ հպարտութիւնս:

Ի՞նչ հպարտութեան մասին է խօսքը:

Հպարտութիւն՝ քրիստոնէութիւնը պետականօրէն ճանչցած առաջին ժողովուրդը ըլլալու եւ քրիստոնէական մշակոյթին մէջ՝ համաշխարհային եւ ներազգային, մեծ ու գործօն անդրադարձ ունեցած ըլլալու, բայց նաեւ կայ այլ հպարտութիւն մը եւս:

Բայց շարունակելէ առջ պէտք է բանալ փակագիծ մը:

Չե՞ որ Յորդանանի մէջ կայ հայկական փոքր գաղութ մը՝ շուրջ 3000 անհատ հաշուող, ունի նախակրթարան, երկու եկեղեցի, եւ քահանայ մը մշակութային, բարեսիրական եւ մարզական կազմակերպութիւններ: Բայց չե՞ որ փոքր գաղութները դատապարտուած են մեռնելու, չե՞ որ մեր ազգային եւ համասփիւռքեան վերլուծումներուն մէջ կայ նաեւ փորձառութիւնը՝ վճռելու, թէ «պէ՛տք է յոգնիլ եւ մտածել» անոց կարգավիճակին մասին, մանաւանդ որ անոնք կրնան արագօրէն վերջանալ:

Փակագիծը փակելէ առջ արժէ հաստատել, որ հպարտութիւնը ինքնին այն իրականութեան մէջ է, թէ հայկական այս «փոքր» գաղութը գիտցած եւ կրցած է իր տեղը ունենալ քրիստոնէական եւ պատմամշակութային արժէք ներկայացնող Յորդանան գետի ընդարձակ երկայնքին՝ հանդիսանալով հայկական իրականութիւն մը տարբեր եկեղեցիներու կողքին: Սուրբ Կարապետ եկեղեցին կառուցուած է տղքթ. Կարօ Կարապետեանի յիշատակին համար կատարուած նուիրատուութեամբ:

Շարունակեցի դիտել հայկական եկեղեցին, որ կարգին եր փոքր հեռաւորութիւններու վրայ իրար կողքին կանգնած եկեղեցիներուն, անիկա կը հանդիսանայ ապրող իրականութիւն մը Մեռեալ ծովուն կողքին: Ծովուն շրջակայքին մէջ է, բայց ունի իր վկայութիւնը՝ մէկ կողմէ հայուն քրիստոնէական մշակոյթի ինքնութեան եւ ինքնագիտակցութեան, միւս կողմէ՝ հայուն պատմութեան: Վկայութիւն մը, որ հայը իր բազմաչափ պատմութեան եւ անոր «կոտտացող» վերջերուն մէջէն տակաւին ապրող իրականութիւն է, նաեւ այն մասին, որ հայը տակաւին կը գոյատեւէ սփիւռքի մէջ՝ շրջանցելով մեռած կամ մեռնելու ենթակայ ըլլալու փորձառութիւնները եւ ապրելով Նոյնիսկ Մեռեալ ծովու տարածքին:

Հակառակ փոքր ըլլալուն, Յորդանանի հայկական գաղութը ունի իր շարունակուող պատմութիւնը:

«Ամէն տեսակ ճիգ ի գործ կը դնենք, որպէսզի հայկական մեր մշակութային արժէքները ամուր պահենք», կ'ըսէ Ներսէս Ներսեսեան՝ գաղութի գործօն անդամներէն մին, որուն կեանքին հիմքը իր

աշխատանքային ասպարեզին կողքին հայկական իրականութիւնն է: Ինչ ու իր գործակիցները համախմբուած են եկեղեցի-միութիւն-ակումբ երրորդութեան շուրջ եւ կարծէք հեւքի մէջ են պահելու հայուն վկայութիւնն ու անոր ապրող իրավիճակը:



Ապրիլ 24-ին այդ շրջանին մէջ գտնուիլս թեւ պարզապէս զուգակցութիւն էր, սակայն այս իրականութիւնը աւելիով հաստատեց մէջ գաղութին ապրող վկայութիւն ըլլալու իրողութիւնը. արդարեւ, Նոյնքան եւ աւելի քաջալերական էր տեսնել երիտասարդներուն մասնակցութիւնը մշակութային եւ հայկական կեանքին՝ զայն առաջի եւ ամրապնդելու միտումով:

Տարածուած են աշխարհով մէկ, իրականութիւն մը, որ մեր կամով չէր: Պատմութեան ստեղծած սեւ ճակատագիրն է ասիկա, որ կարծէք «դամբանի մրուրով գրուած» ըլլայ: Այս փորձառութիւնը մեր պատմութիւնը թաթխեց արինով, իսկ արինէն ետք տիրեց կոտորակուած իրավիճակ:

Բայց կայ Նոյնինքն այս արիւնաքամ եւ կոտորակուած պատմութեան փորձին վկայութիւնը, որ հայուն ապրող իրականութիւնն է: Մեռեալ իրավիճակներու մէջէն՝ ապրող իրականութիւնը, թէ պատմութեան ամենէն դաժման օրերուն իսկ հայը գիտցաւ ապրիլ եւ այս

# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՅԻՆ ՕՏԱՐ, ԹԷ՝ ՅՐՈՒՄԸ

ապրելու իրականությունը զինք հասցուց այս օրուն:

Յորդանանի վկայությունը այս ապրող իրականության մեկ փոքր արտայայտությունն է: Այս վկայությունները պետք է քաջալերել հայր, որպեսզի մտածելու գործը դրական մթնոլորտով եւ հայեցակետով Ղրական հայեցակետով է, որ կարելի պիտի ըլլայ տարածուած եւ կրտորակուած ապրող իրականությունները համախմբել՝ ստեղծելու համար համահայկական դրական ուժը: Իսկապէս կ'արժէ հաւատալ դրական ուժին իրողականութեան եւ կարողականութեան:

Բայց միշտ կայ հարցում մը, նաեւ անոր հետ ինքզինք պարտադրող պարտականություն մը: Ո՞վ է ինչպէ՞ս պետք է աշխատի այս դրական ուժին ստեղծման ի խնդիր: Մինչ այդ, Յորդանանէն, ու տակաւին այլ տեղերէ, կան հայկական վկայություններ, մեռեալ իրավիճակներէ ապրող իրականություններ:

Անհրաժեշտ ու հրամայական է, որ այս հայուն ապրող իրականությունները տակնի վաղուան:

*«Պեզրոս Յիսուս Քրիստոսի առաքեալ օրարականներու, որ ցրուած էր Պոնպոսի, Գաղաղիայի, Կապադովիայի, Ասիայի ու Բիւթանիայի մէջ, որ ընդրուած Հօր Աստուծոյ կանխագիտութեանը համեմատ հոգիին սրբացնելով: Հնազանդութեան եւ Յիսուս Քրիստոսի արինին սրկուելուն հեպ շնորհք եւ խաղաղութիւն չոր վրայ բող շարման»:*

(Է Պեզրոս 1.1-2)

Արարական գարունը եւ անոր յառաջացուած տակնուկրայ կազմութիւնը միջին արեւելեան եւ Հիւսիսային Ափրիկէի երկիրներուն մէջ, նաեւ ստեղծեց ու տակաւին ահագանգային վիճակներ կը ստեղծէ քրիստոնեայ իրականութեան համար: Քրիստոնեայ եկեղեցիներ իրկիզուեցան, խափանարարութեան ենթարկուեցան, քակուեցան քրիստոնեայ կազմակերպութեան կեդրոնատեղիներ, քրիստոնեայ անհատներ ու եկեղեցական առաջնորդներ առեւանգուեցան ու սպանուեցան, ստեղծելով վախի ու անորոշութեան ալիք մը:

Քրիստոնեայ իրականութիւնը, եթէ մէկ կողմէ նկատուեցաւ ու տակաւին՝ անցողակի եւ օտար իրականութիւն մը շրջանի երկիրներուն մէջ, բայց նաեւ կը ստեղծէ մտահոգութիւն, որ պատճառ կը դառնայ մեծ թիւով քրիստոնեաներու որ տեղափոխուին աւելի ապահով շրջաններ կամ որոշեն հեռանալ միջին արեւելեան տարածաշրջանէն:

Եթէ ծայրայեղ իսլամական շարժումին ու տակաւին անծանօթ խմբավարումներու այս արարքները կը քննադատուին՝ գէթ արաբական տեղական ու կառավարական շրջանակներու կողմէ, բայց եւ այնպէս կը մնայ մտահոգութիւն, եւ անոր հետ շաղկապուած վախ ու հորիզոնին վրայ երեւոյղ-չերեւոյղ անորոշ վիճակ:

Բայց յուշացաւ նաեւ հաստատումները եւ անոր հետ քրիստոնեայ իրականութեան իրաւացիութիւնը այս տարածաշրջանին մէջ: Ե.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետը իր 6 Յունուար 2013-ի Ար. Մննդեան պատգամին մէջ դարձեալ շեշտեց. «Մենք (իմեա՛ն) քրիստոնեայ եկեղեցին, Յ.Ճ.) Միջին Արեւելքի մէջ ենք, քանի Քրիստոս ծնաւ Բեթլեհեմի մէջ, եւ թէ մեր հաւատքը սկսաւ այս տարա-

ծաշրջանին մէջ: Մենք անբաժան մասն ենք այս շրջանի պատմութեան և մշակոյթին: Անկախ որեւէ դժուարութիւններէ՝ քրիստոնէաներ պիտի մնան այս շրջաններուն մէջ»:

Վեհափառ հայրապետին հաստատումին մէջ կայ երկու գիրարամբողջացնող իրականութիւններ: Առաջին, պատմա-աշխարհագրական, թէ «Քրիստոս ծնաւ Բեթլեհեմի մէջ» և թէ «ամբողջական մասն ենք այս շրջանի պատմութեան և մշակոյթին»: Երկրորդ, աստուածաբանական. որ եթէ ունի սկիզբ, բայց չի սահմանափակուիր այդ նոյնինքն սկիզբին մէջ: «Մեր հաւատքը սկսաւ այս տարածաշրջանին մէջ»: Գաւառքը՝ քրիստոնէային աստուածաբանութիւնը, որ սկսաւ մէկ տեղէ, բայց նաեւ դարձաւ ընդհանրական:

Պետրոս Առաքեալի քրիստոնէայ եկեղեցիի սահմանումը պիտի հասկնալ այս տեսողաշտէն մեկնելով: Եթէ քրիստոնէայ եկեղեցին ունի աշխարհագրական-պատմական տունալ, ուր «ցրուած էք Պոստոսի, Քաղատիայի» մէջ, բայց նաեւ աստուածաբանական, որ «հոգիին սրբացնելովը» կը դառնայ ընդհանրական, քանի իր առաքելութիւնը համամարդկային է և համաշխարհային: Այս իմաստով, «օտարական»ի հասկացողութիւնը պէտք չէ թարգմանել որպէս եկեղեցիին պատկանած հողին, պատմութեան և մշակոյթին օտարոյ, այլ իր ընդհանրական պարունակէն մեկնելով, օտարը կը դառնայ ամբողջութեան համար, նաեւ բոլորին տիրական:

Ամերիկացի ժամանակակից ընկերաբան Ռոպերթ Ուոլթերու կյանքը հաստատէ. «Արուեստի, գրական, փիլիսոփայական թէ ընկերաքննադատական մեծ ստեղծագործութիւններ, նաեւ յաջող կրօնական պատգամներ, անպայմանօրէն հիմնուած եւ անջուրած են իրենց պատկանած անմիջական շրջանակին, եւ ասոր պատճառը կը կայանայ այն իրականութեան վրայ, որ անոնք իրենց գիտելիքները, ներշնչումները եւ տեսակետները կ'առնեն նոյնինքն այդ շրջանակէն եւ կ'առնուին անոնց հետ: Բայց միեւնոյն ժամանակ, այդ գործերը կը մնան անջատ իրենց ընկերային շրջանակէն, որպէսզի ստեղծագործութիւնները ունենան շատ աւելի ընդարձակ, համաշխարհային եւ անժամանակ ներկայացուցչութիւն»:

Ընչոյ այս հասկացողութեան մէջ է, որ պէտք է տեսնել Պետրոս Առաքեալի միտք բանին, թէ եկեղեցին տարածուած է ընկերամշակութային, քաղաքական ու պատմական մարզերու մէջ, բայց նաեւ օտար է իր առաքելութեան ընդարձակուած սահմաններու հասկացողութեան մէջ:

Եզեկիէլ մարգարէն ըսաւ իր ժողովուրդին. «Այս երկիրը բաժնեցէլ հարայելի ցեղերուն: Չանկալ ժառանգութեան համար վիճակով բաժնեցեղ թէ ձեզի եւ թէ ձեր մէջ բնակող ու ձեր մէջ զաւակներ ծնա-

ող օտարականներուն: Անոնք բնիկներու պէս պիտի ըլլան հարայելի որդիներուն մէջ: Անոնք ձեզի հետ ժառանգութիւն պիտի առնեն հարայելի ցեղերուն մէջ» (Եզեկիէլ 47.21-22):

Պոս նաեւ պէտք է տեսնել, թէ եկեղեցին՝ Երուսաղեմի մէջ իր ծնունդէն ետք, երկրի մէջ ըլլալու եւ պատկանելու հասկացողութիւնը իւրացուց, քանի եկեղեցին կ'ապրի պատմութեան եւ անոր մշակութային ժառանգութեան ըմբռնումով: Ուրեմն, եկեղեցին դուրսէն չէ, որ կը թափանցէ ընկերութեան մէջ եւ կը փորձէ նոր տուն շինել: Եկեղեցին դրսեցի չէ, որ կը փորձէ դառնալ տեղացի եւ բնիկ, եւ այս պատճառով պէտք է միշտ մնայ օտարի կարգավիճակի մէջ: Եկեղեցին, եւ քրիստոնէայ հաւաքականութիւնը տեղացի են՝ հողին ու մշակոյթին կապուած, բայց ստեղծած են իւրայատուկ նկարագիր եւ կենցաղ, որ կը յատկանշուի Քրիստոսով վերստին ծնունդի հասկացողութեան մէջ: Այս վերստին ծնունդի կենցաղը, եթէ ներազգային է, ու կը կրէ աշխարհագրական-ընկերային ու քաղաքական որոշ պիտակ, բայց նաեւ ընդհանրական է, անցնելով սահմանները եւ թափանցելով բոլոր մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու մէջ:

Եթէ քրիստոնէայ եկեղեցին կը հալածուի ու կը նահատակուի, այդ մէկը հողին ու մշակոյթին պատկանելիութեան համար է: Կարելի չէ եւ ճիշդ չէ ընդունիլ այն վարկածը, թէ ան օտար է եւ դրսեցի, նոյնինքն իր ապրած հողին ու շրջանին մէջ:

Աստուած իւրաքանչիւր քրիստոնէայ եկեղեցիի համար տուած է իր երկրային հայրենիքն ու հողը: Եկեղեցին իրաւունք ունի պահելու ու զարգացնելու Աստուծոյ տուած այս օրհնութիւնը: Բայց եկեղեցին ապրող իրականութիւն է, ու կը վկայէ իր կենցաղը՝ Քրիստոսով շնորհած վերստին ծնունդի կեանքը, որ Աստուծոյ կողմէ պարգեւ է, բայց նաեւ մշակոյթ: Եկեղեցիին վկայութիւնը եթէ մէկ կողմէ ներազգային է, բայց նաեւ համազգային:

Քրիստոնէայ եկեղեցին իր այս մշակոյթով կը դառնայ հաւասարապէս օտար եւ ցրուած:

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՅՑ ՆԱԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ

*«Եւ չնայիլ առապելներու ու ազգահամարներու, որոնք վերջ շունին, որոնք անկի վճենք ալ կը պարճառնն քան թէ Աստուծոյ հաճելի շինութիւն, որ կ'ըլլայ հաւաքորով»:*

*(Ա. Տիմոթէոս 1.4)*

Յին աշխարհին համար գլխաւոր հետաքրքրութիւն կը կազմէին բանահիւսութիւնն ու սերնդականութիւնը: Առաջինը եթէ մէկ կողմ կը զարգացներ միտքն ու մտածողութիւնը, բայց նաեւ անհատնում ժամանակ եւ ուժ խլելով անհատին ու հաւաքականութեան ուշադրութիւնը կը կորզէր: Թէ ինչպէս ընտանիքներ եւ քաղաքներ կը կազմաւորուէին, մեկնելով ասեղակական ու դիցարանական ժառանգութիւններէ: Ու տակաւին Յին, նաեւ Նոր Կտակարանին մէջ, յաճախ կը հանդիպինք սերնդականութեան եւ արմատներու սկզբնաւորութեան, որոնք հաւաքական կեանքի մէջ մեծ նախապատուութիւններ էին:

Պօղոս Առաքեալի համար բանահիւսութիւնը եւ սերնդականութիւնը անհրաժեշտ գրաւականներ չէին անհատին եւ հաւաքականութեան համար, ներառելով քրիստոնեական իրականութիւնը: Պօղոս Առաքեալ անպայմանօրէն դէմ չէր այս վարժութիւններուն եւ կենցաղին, բայց իրեն համար կար հիմնականը: Եւ հիմնականը Պօղոս Առաքեալի համար քրիստոնեական միտքին ու մտածողութեան առաջնահերթութիւններն էին: Առաջնահերթութիւններ, որոնցմով քրիստոնեական եկեղեցին պիտի կազմաւորուէր շեշտելով հիմնականը եւ եականը, որոնք պէտք է որ ներառուին հաւաքական կեանքի մէջ:

Այս մտահոգութիւններէն մեկնելով է, որ Պօղոս կը գրէ Եփեսոսի եկեղեցիին, եւ իր աշակերտ Տիմոթէոսին: Անոր նամակին միտք բանին կը կեդրոնանայ քրիստոնեայ անհատին մտածողութեան վրայ, բայց նաեւ վեր կ'առնէ նոյն այն մտածողութեան գործադրութիւնը հաւաքական կեանքին մէջ: Անհատականէն դէպի հաւաքականը, Պօղոս Առաքեալ կը դրոշմէ քրիստոնեայ միտքին կազմաւորումը եւ նոյն այդ կազմաւորումած միտքին դրոշմը եւ ներդրումը հաւաքակա-

նութեան մէջ: Կերքապէս «եկեղեցին աշխարհի մէջ է բայց ոչ աշխարհէն»:

Քրիստոնեայ անհատին մտածողութեան հիմքը հաւատքն է. «Չանկի շինութիւն, որ կ'ըլլայ հաւատքով» (Ա. Տիմոթէոս 1.4): Չհատնէք, ուր Աստուած յայտնուեցաւ, իմմա՛ մարդացաւ Յիսուս Քրիստոսի մկրտոցով, ուր իր «Միածին Որդին դրկեց» (Յովհաննես 3.16): Եւ դրկեց ոչ թէ երեսակայական ու անտեսանելի վայր մը, այլ աշխարհ: Քրիստոնեայ անհատին մտածողութեան հիմքը՝ հաւատքը, եւ անոր սկզբնաւորութիւնը դնելով անհատին այս աշխարհի մէջ:

Բայց այս հաւատքին մղիչ ոյժը սերն է. «Իսկ պատուիրանքին գլուխը սերն է» (Ա. Տիմոթէոս 1.5): Այս սերը հասանելի եւ իրական է քանի կը կազմաւորէ անհատը՝ անոր ինքնութիւնը եւ եութիւնը: Սերը, որպէս գոյական, չէ որ կը ստեղծէ իրական մարդը, այլ սիրելը, որպէս բայ: Քրիստոնեայ անհատին մտածողութեան հիմքը սիրելու գործառնութեան մէջ է: Հոն, ուր անհատը դուրս կու գայ կրաւորական եւ ժխտական կեցուածքներէ եւ կը մտենայ մարդկութեան դրական հայեցակետով: Սիրելու մտածողութիւնը կ'օգնէ անհատին, որ ընդունի Ուրիշը՝ այն որ տարբեր է նկարագրով, լեզուով, կենցաղով եւ համայնքային-քաղաքական-քաղաքացիական այլազանութեամբ:

Եւ այս հաւատքն ու անոր սիրելու ուժակնութիւնն է, որ կը ստեղծէ մաքուր «սուրբ սիրտը» (Ա. Տիմոթէոս 3.5): Յունարէն բնագրին մէջ, մաքուր-սուրբ (katharos) բառին ընկերակցուաբանական կործանութիւնը կը ներկայացուէր ցորենի օրինակով, որ մաքրուած էր իր բոլոր արտաքին կեղեւներէն, մէտեղ հանելով մէկ պահելով մաքուր միջուկը: Նաեւ կը գործածուէր բանակի զօրագունդներուն, որոնք մաքրուած էին բոլոր անօրէն եւ վախկոտ զինուորներէն եւ կազմուած միայն լաւ պատրաստուած եւ նուիրուած անհատներէ: Քրիստոնեական հաւատքին՝ սիրելուն եւ անոր գործնական արտապայտութիւնը եղող մաքուր-սուրբ սիրտին մտածողութիւնն է, որ Պօղոս Առաքեալ կը դնէ հաւաքական կեանքին մէջ, մասնակից դարձնելով մարդկային յարաբերութիւններուն եւ հաղորդակցութիւններուն, կերտելու համար մէկ մեծ առաքելութիւն:

Քրիստոնեայ անհատին այս միտքն ու մտածողութիւնն է, որ կ'երթայ հաւաքական կեանքի մէջ իր մասնակցութիւնը բերելու տեսլականով: Ան կը մտնէ հաւաքական կեանքին մէջ եւ կը մասնակցի բոլոր իրադարձութիւններուն, «բարի խղճմտանքով» եւ «անկեղծ հաւատքով» (Ա. Տիմոթէոս 1.5): Հոն, ուր քրիստոնեայ միտքը կը խօսի եւ կը գործէ նոյն ալիքներու վրայ, բայց նաեւ ամէն շանք ի գործ կը դնէ, որպէսզի հասնի, գտնէ եւ բաժնեկից դարձնէ ճշմարտութիւնը եւ

արդարությունը՝ տուեալներ, որոնք մարդկային եւ հաւաքական կեանքերը զգաստութեան կը հրաւիրեն, երբ մարդիկ «խոտորին ու փուն խօսքերու ետեւէ կ'երթան» (Ա. Տիմոթէոս 1.6), եւ նաեւ ինքնավստահութեան, երբ շատեր «չեն հասկնար ինչ կը խօսին ոչ ալ այն բաները որ կը պնդեն» (Ա. Տիմոթէոս 1.7):

Եթէ քրիստոնէական միտքը ու անոր մտածողութիւնը կը սկսին անհատեն, բայց կը մտնեն հաւաքականութեան մէջ, ուր բարի խղճմտանքով եւ անկեղծ հաւատքով կը գործէ մարդկային կեանքերուն իրական նշանակութիւնը յառնադրանքով ընտրանքով:

2014

«Եկեղեցին յոյս առաւ հայ ժողովուրդը»  
Արամ Ա. Վեհափառ Հայրապետ:



1980-ական տարիներուն էր, Պեյրուֆ: Համալսարանական ուսանողներ էինք: Արաբական Շոցի տարածաշրջանէն մեծ գործարարներու ներկայացուցիչներ կը հանդիպէին ուսանողներու հետ եւ կը բանալին համոզել մեզ մեկնելու այս երկիրները՝ աշխատանքային կարելիութիւններու համար: Եթէ մէկ-մէկ կը թուէին աշխատանքային տուեալները, պայմանները ու առաւելութիւնները, բայց կը յստակացնէին նաեւ, թէ տարածաշրջանին մէջ «կեանք չկայ», բայց կայ «աշխատանք», նաեւ «վարձատրութիւն»:

Հասկնալով հանդերձ անոնց անկեղծութիւնը, պէտք էր նաեւ փորձէիք հասկնալ, թէ ինչ կրնայ նշանակել «կեանք չկայ»: Ու տակաւին, որպէս երիտասարդներ ու կեանքին սեմէն նոր մտած տաքսիլն հայեր, բնականաբար պիտի ուզէիք կերտել մեր ապագան, բայց նաեւ ապրելով կեանքը: Եւ այս իրականութիւնները եթէ մեզ մէկ կողմէ կը քաջալերէին, բայց նաեւ տարակուսանքի մթնոլորտ կը ստեղծէին մեր երիտասարդական տրամադրութիւններուն մէջ:

Եւ չեմ գիտեր, թէ Լախախնամութիւնն էր, թէ՛ ոչ, եւ կամ պատահականութիւն պարզապէս: Իւրաքանչիւրիս կեանքը ունեցաւ իր ընթացքը՝ կամովին, թէ՛ այլ, ասիկա տարբեր հարց, սակայն յստակ է որ վերջին քսանհինգ տարիները (եւ մինչեւ այսօր) պիտի աշխատէ Արաքական Շոցի մէջ, ուր ապրած իւրաքանչիւր տարուան հետ պիտի փորձէի մէկ-մէկ «քանկէ» անցեալի ռուսանողական տարիներուն մեզի տրուած պատուէրը, թէ «կեանք չկայ», որպէսզի բացայայտէի, թէ ինչո՞ւ եւ ո՞ր «կեանք չկար»: Բայց արդեօք ի՞նչն էր, որ կեանքին կու տար արժէք եւ կը ճշդէր անոր ըլլալ-չըլլալը: Ու տակաւին, ի՞նչն էր աշխատանքի տարողութիւնը ու անոր կերտած արժէքը կեանքին մէջ, հապա վարձատրութիւնը:

Ու կեանքի փորձառութիւնը երեւի պիտի սորվեցներ, թէ «կեանքը» կերտող ու կերտողը իրականութիւն է: Եւ այս եթէ մէկ կողմ անհատական ու ընտանեկան, բայց նաեւ հաւաքական: Եւ այս կերտող ու կերտելու իրականութիւնը մարդուն կեանքին իմաստ տուող հասկացողութիւն է, եւ հաւաքական կեանքի մէջ մասնակից դառնալու գրաւական, որ կը լիցքաւորէ եւ նպատակ ու նշանակութիւն կու տայ իւրաքանչիւրիս: Այս նպատակակետը նշանակութիւն է, որ յոյս կը ներմուծէ մարդու ու հաւաքականութեան կեանքերուն մէջ եւ կը փորձէ նայիլ վաղուան աւելի լաւը կերտելու տեսլականով:

Եւ Արաքական Շոցի շրջանի երկիրներու մէջ «կեանք չկայ» իրականութիւնը սկսայ տեսնել այս պրիսմակէն եւ վերջին քառորդ դարուն ապրած իրականութեան փորձառութենէն: Սկսայ սորվիլ եւ սորվելով ալ ապրիլ այն իրականութիւնը, թէ կեանքը կ'ըլլայ ու կը կերտուի, եթէ կայ տրամադրութիւնը եւ վճռակամութիւնը, թէ նոյնինքն կեանքը կարելի է ապրիլ ու ըլլալ:

Բայց արդեօք ասիկա նաեւ հայուն փորձառութիւնը չէ՞ աշխարհով մէկ, յատկապէս Ցեղասպանութեան արհաւիրքէն ետք, երբ հայը կառչեցաւ կեանքը ապրելու եւ նոյն կեանքով ըլլալու իրականութեան: Հայը՝ իր անհատական ինքնութեամբ, եւ անպայմանօրէն հաւաքական: Այս նոյնքան իրական է, եւ ապրուած փորձառութեամբ Արաքական Շոցի տարածաշրջանին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետին պատգամը Ապու Տապիի նորակառոյց Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ օծման արարողութեան ընթացքին, Ուրբաթ, 12 Դեկտեմբերի 2014-ին, արդէն իսկ կը հիմնադրէ հայուն կեանքը ապրելու եւ ըլլալու միտք բանին: «Եկեղեցիէն յոյս առաւ հայ ժողովուրդը», որովհետեւ հայը իր կեանքը ապրեցաւ ու տակաւին՝ այս յոյսով: Եւ այս յոյսին մէջ ու անոր միջոցով «կեանք չկան» վերածեց «կեանք կայ»ի: Եւ թէ հայը կերտեց իր անհատական ու ընտանեկան կեանքը ու անոր բարորու-

թիւնը, բայց նաեւ տընեցաւ հաւաքական կեանքի իրականացման ինտելի, որովհետեւ այդ հաւաքական կեանքին մէջ տեսաւ իր ապրելու իրամայականը: Եւ այս մեծ գաղութներն սկսած մինչեւ ամենէն փոքրը՝ թուային թէ այլ հաշուառկներով:

Եւ Ապու Տապիի փոքրաթիւ հայկական գաղութին ապրելու այս յոյսը եւ իրականութեան վերածելու զայն՝ ապրուած ու ապրելու մտնելին ձգտող լաւագոյն փորձն է: Բայց կայ նաեւ աւելին: Ապու Տապիի փոքրաթիւ գաղութին ապրելու այս տեսչը հիմնաւորուած էր պատմութեան կերտած յաջող փորձին ու անոր վրայ: Թէ՛ գաղութ մը կարգաւորելու եւ միաւորելու համար անհրաժեշտ է կառուցել նախ եկեղեցին եւ անոր կողքին դպրոցը: Այդ օրը վեհափառ հայրապետին իշխեցումը մեզի կը մեկնի այս տուեալներէն: «Հայը իր տունը շինելէն առաջ եկեղեցին շինեց, որովհետեւ հաւատաց իր կենդանութեան եկեղեցւոյ միջոցով»:

Դոս արժէք բանալ փակագիծ մը, որովհետեւ Ապու Տապին ու Արաքական Շոցի տարածաշրջանը ունին նաեւ իրենց իւրայատկութիւնները:

Քրիստոնեական ներկայութիւնը եւ եկեղեցին՝ Արաքական Շոցի տարածաշրջանին մէջ, ունին իւրայատուկ պիտակ: Արդարեւ եկեղեցին ու անոր գործունեութիւնները ամփոփուած են որոշ հողաշերտի ու տարածքի մէջ, եւ պատշաճեցուած այս տուեալներէն մեկնելով: Այս իմաստով, այս ամփոփումն ու անոր պատշաճեցումը քաջալերած է եկեղեցիներ ընդհանրապէս համայնքներու եւ միասին գործակցելու: Այս իրական է նաեւ հայկական գաղութին համար, ուր եկեղեցին կ'անուանուի որպէս «Հայկական եկեղեցի» (ալքանիսա ալքանիսեհա): Եւ այս հայկականը ստեղծած է եղած է հաւաքական տուն եկեղեցիին միջոցով, ուր ամբողջ հայութիւնը կը մեկտեղուի անոր շուրջը: Ամբողջ հայութիւնը պիտի ընդգրկէ տարբեր հայկական համայնքային-եկեղեցական պատկանելիութիւններ, որոնք պահելով հանդերձ իրենց ինքնութիւնը, մեկտեղուած են հայկական եկեղեցիի շուրջ եւ անոր մէջ եւ միասին կ'ապրին ու կը գործեն: Եւ այս գաղութին ու անոր հաւաքական կեանքին առաջնահերթութիւններն մէկն է, ուր հայը կ'ապրի հաւաքական հասկացողութեամբ, նոյնինքն հաւաքական տան մէջ:

Բայց արդեօք այս չէ՞ հայուն ապրելու եւ գոյատեւելու մոյժ ուժը: Անտեղծել հաւաքական հասկացողութիւնը եւ զայն դնել հաւաքական տան ու երդիքի տակ: Ու տակաւին, եւ ինչպէս վեհափառ հայրապետը շեշտեց, որ այս տունը, իմա եկեղեցին, պատմութեան արհաւիրքներուն դիմաց մնաց զօրեղ, որովհետեւ հայը այս եկեղեցիով եւ անոր դաստիարակած եւ ներշնչած յոյսովն է, որ ապրեցաւ, վերապ-



րեցաւ եւ մնաց զօրեղ, իսկ կեանք չկան դարձաւ մարտահրաւիր՝ զայն վերածելով ընելու եւ ըլլալու կեանք մը, բայց մանաւանդ ապրելու:

Ապու Տապիի Սրբոց Նահատակաց Նորաշէն եկեղեցիով տեղական հայկական փոքր գումարտակը կառչեցաւ կեանքին մէջ ապրելու եւ ըլլալու տեսլականին: Անոնք այս եկեղեցիին ու անոր նորակառոյց շէնքին մէջէն տեսան յոյսը: Յոյսը, թէ հայը պիտի ապրի իր հաւատքով եւ ազգային ինքնութեամբ:

Աշխարհատարած հայուն ժառանգած կտակն ու պատուէրն է ասիկա: Եթէ կեանք չկայ, բայց կայ վճռակամութիւնը զայն ընելու եւ ապրելու: Որովհետեւ հայը որոշած է ապրիլ Ապու Տապի եւ ամէն տեղ, եւ ապրիլը յոյսով ու հաւատքով է: Եւ այս յոյսին ու հաւատքին կառչելով է, որ հայուն համար կեանքը (չ)կայ:

## «ՄԵԿ ՓԱՄՓՈՒՇՏ ՈՒՆԻՍ ՄԻԱՅՆ»

Ջիւան Աւետիսեանին հանդիպեցայ Կիպրոս, երբ հրաւիրուած էր Ղամազգային մշակութային միութեան կողմէ, որպէսզի ներկայացնէ իր բեմադրած եւ պատրաստած «Թեւանիկ» ժապաւենը: Երիտասարդ բեմադրիչը լուռ է ընդհանրապէս՝ արուեստագետի եւ արուեստի զգայնութեամբ եւ հոգեվիճակով, որ կը փորձէ մեր ազգային-հայրենասիրական հիմնահարցերը դիտել եւ ներկայացնել իր այդ ներաշխարհին մէջէն:

«Թեւանիկ»ը հեռու է այսպէս ըսած սպառողական շուկայի համար պատրաստուած թեզեր ներկայացնող եւ պաշտպանող ժապաւեններէ եւ տուեալներէ: Ոչ ալ ախաւոր եւ սարսափազդու տեսարաններով լեցուն է, որով պիտի փորձէր այդ տեսակի պատկերներուն մէջէն ներկայացնել ղարաբաղեան պատերազմին ահաւորութիւնը: «Թեւանիկ»ը լեցուն է մարդկային փոխյարաբերութիւններու եւ անոնց ներաշխարհի պոռթկում-ապրումներով՝ պատերազմի ճնշիչ ու կենաց-մահու պայմաններուն տակ: Եւ նոյնինքն այս ապրուած պոռթկում-ապրումները, որոնք իրական էին, բաւարար էին հանդիսատեսին հաղորդելու եւ անոր հետ բաժնեկցելու պատերազմին ահաւորութիւնը:

Արցախեան պատագրական պայքարի ընթացքին Ղարաբաղի տարածաշրջանի մէկ փոքր գիւղի մը ապրած իրական կեանքն է՝ պատերազմի արհաւիրքին մէջ: Եւ այդ իրական ապրուած կեանքը երիտասարդին, չափահասին եւ տարեցին է, որ ընդհանրական եւ ամբողջական էր, եւ Ջիւան Աւետիսեան այդ բոլորը կը փորձէր համադրել եւ ներառել երեք մանուկ-պատանիներու կեանքին մէջէն՝ Արամին, Աստղիկին եւ Թեւանիկին:

Եւ արժէ մէկ-մէկ քակել ապրուած իւրաքանչիւր ներաշխարհ՝ այդ փոքրիկ գիւղի բնակիչներուն: Տարեցին հայրենասիրութիւնը եւ հողին կապուածութիւնը, երիտասարդին վախը, որ չկարենալով դիմաւեալ այդ բոլորին, ձգելով՝ կը հեռանայ, իսկ միւս կողմէ հօրը վճռակամութիւնը: «Ինչպէ՞ս կրնամ այս տունը եւ մօրդ գերեզմանը ձգել եւ երթալ»: Հայ հօր անհանդուրժողութիւնը իր երիտասարդ զակին սիրոյն նկատմամբ, որ ամուսնացած էր ազերիի մը հետ: Ու կար նաեւ Աւոն, որ միշտ հաւատարիմ էր հրամանատարին: Եւ իւրաքանչիւր գիւղացի-քաջամարտիկ, որ չի կրնար հրահանգին ենթարկուիլ, երբ հրամանատարը ըսաւ, թէ պետք էր վերադարձնէ: «Հապա ի՞նչ պիտի ըլլայ մեր այս գիւղը եւ իր ընտանիքները, եթէ քաշուիք»:

«Մանուկը ամենէն շատ կը զգայ պատերազմին ցարը»: Ջիւանն է



խօսողը: «Եւ ասոր համար է, որ ժապաւենը ուզեցի ներկայացնել մանուկներու ապրած ներաշխարհին մէջէն»:

Ձիւան Աւետիսեանը ինք տարեկան էր, երբ սկսած էր դարաբաղեան պատերազմը: Ինք ալ մանուկ էր եւ ապրած էր այդ պատերազմին ցաւը ինչպէս մինչեւ օրս շատ մը մանուկներ, որոնք կ'ապրին պատերազմներու ցաւեր՝ հոսկէ հոն: «Ես պատմում եմ այն մասին ինչ տեսել եմ, զգացել եմ, ապրել եմ»:

Եւ Ձիւան կը պատմէ իր ապրածը ամենայն անկեղծութեամբ եւ հարազատութեամբ:

Արամը կ'ողբայ իր ազերի մօր կորստող սերը: Երբ մայրը իր փոքր եղբօր հետ ստիպուած է լքել գիւղը եւ անցնիլ միւս կողմ: Աստղիկ կը կիսէ եւ կը բաժնէ իր պատանեկան սերը: Սերը՝ Թեանիկին, մանաւանդ երբ չի մոռնար իրեն տալու խնձորը, երբ Թեանիկ հրամանատարին հետ կ'ուղղուի դէպի հովիտ: Բայց Աստղիկ նաեւ կ'ուզէ բաժնել սերը, եւ ամէն գնով կ'ուզէ հրամանատարին հասցնել անոր կնոջ նամակը: Հոն, ուր հրամանատարին կիկը վերջապէս կրնայ հասկնալ իր ամուսնոյն սերը իր երկրին, ազգին ու ինքնութեան, եւ թէ ինչու՞ իր ամուսինը պէտք էր ճակատ երթալ պաշտպանելու այս բոլորը, եւ թէ ինք կ'ուզէ միանալ եւ իր ցովը ըլլալ: Աստղիկ անպաման ուզեց այս նամակին մէջի սերը բաժնել հրամանատարին հետ, բայց չհասաւ:

Իսկ Թեանիկը երեւի ամբողջացում է այս բոլոր ապրուած փորձառութիւններուն եւ հոգեմիճակներուն:

«Մէկ փամփուշտ ունիս՝ կ'ամ կը սպաննես եւ կ'ամ կը սպանուիս»: Հրամանատարին վերջին խրատն էր Թեանիկին՝ ազերի արձակագէտի գնդակէն սպաննուելէն առաջ:

Եւ Թեանիկ պիտի ապրէր այդ մէկ փամփուշտով, մինակը առանց հրամանատարին: Եւ կարծեք այդ միակ իրավիճակը թա



ւալզոր կեանքն էր, երբ հետզհետէ պիտի մեծնար, եւ հասուննար Թեանիկը, բայց նաեւ իւրաքանչիւր պատանի այդ արհաւիրքին մէջէն:

Չուշացաւ Թեանիկին փորձութիւնը: Կար իր պատանեկան արթունքի շրջանի կիրքը եւ սերը, երբ տեսաւ ազերի կին արձակագէտը, որ կը լոզնար հովիտին մէջ: Եւ հոն զենքը մէկ կողմ դնելով՝ մտաւ նոյն այդ փորձութեան հմայքին մէջ: Բայց կար սթափումը՝ եթէ մէկ կողմէ ազերի կնկան, բայց նաեւ Թեանիկին, եւ վերադարձը զենքին՝ ինքնութեան: Եւ Թեանիկ կը գորրուի: Եւ իւրաքանչիւր գորրուելու հետ կարծեք Թեանիկ քիչ մը ւաւելի կը մեծնար, մինչեւ որ գտնէր ամուր եւ հաստատ ու ապահով կայք մը, ուր կրնար դիրքորոշուիլ: Եւ չ'ուշանար վճռական պահը, երբ խօսքը իսկութեան կը վերածուի, եւ մէկ ու միակ փամփուշտ ունի եւ պէտք է գիտնայ, թէ ինչպէ՞ս պիտի գործածէ զայն:

Թեանիկ կը կենայ հաստատ եւ վճռական՝ ազերի կին արձակագէտին դիմաց: Ան կը գիտակցի, թէ պէտք էր գործածել իր մէկ հատ փամփուշտը, որպէսզի ապրի: Ինք, բայց նաեւ գիւղն ու հայը:

Ու դարձեալ Անն է: Ան ալ ամուր կեցած է իր դիրքին ու խարիսխին վրայ եւ ստանձնած է հրամանատարի պարտաւորութիւնը: Հեռադիտակով կը դիտէ ու կը հետեւի Անն, բայց այն համոզումով, որ պիտի տեսնէ հայուն վերապրումը:

«Մէկ փամփուշտ ունիս միայն»:

Յուտակ է եւ պատմութեան տունէսներէն մեկնելով՝ բացայայտ է, թէ հայուն ապրիլը եղած է ցաւով: Եւ երեւի տակաւին կը շարունակուի այդպէս ըլլալ: Եւ այդ ցաւոտ կեանքին մէջ հայը ունեցած է ապրած է փորձութիւնը: Բայց նաեւ իրական է, թէ հայը այդ ցաւին մէջէն ու փորձութեան փորձառութենէն միշտ կ'առջացած է արժանապատիւ կեանքին:

Ձիւանն է դարձեալ եւ իր ժապաւենին մէջէն:

Ղարաբաղի քաջամարտիկը դուրս եկաւ իր խարիսխ-դիրքէն՝ ինչպէս արած, կը կրակէ թշնամիին դիրքին վրայ ու կը յառաջանայ յացազանցելով: «Մենք մեր արժանապատուութեամբ է, որ պիտի ապրինք»:

Հայը մէկ փամփուշտ ունի միայն: Եւ այդ փամփուշտը պիտի գործածէ, որպէսզի ապրի իր արժանապատուութեամբը: Եւ արժանապատուութիւնը իր զզգային ինքնութեան եւ իր արդար պահանջատիրութեան մէջն ու անոր միջոցով է: Եւ հայը իր մէկ փամփուշտը պիտի գործածէ, որպէսզի շարունակէ ապրիլ իր արժանապատուութեամբ:

## «ՎԷՐՔԸ ԽՈՐՈՒՆԿ Է»

«Դիտե՛ դուն այ տղաս ու օրին մեկը երբ մեծնաս, գուցե կը գրես տեսածներդ մասին»: Յօրենական մեծ մայրս՝ Եւսիկէ Գունտազճեան-Ճէպեճեան 1916-ին իր անդրանիկ զաւկին Ռոպերտին (հօրեղ-բայրս՝ յետագային բժշկապետ Ճէպեճեան), որ հագիւ եօթը տարեկան էր, ձեռքէն բռնելով կը տանի զինք Յայլէպի հոգետուոսի շրջանը՝ «Կ'ուզեմ որ քաջութիւնը ունենաս տեսելու, թէ ինչպէս հոգետուոսի բակին ու հարեան սրբանցքներուն մէջ գիշերով մահացած գաղթականներու դիակները սայլի մէջ բեռնելով կը տանին հասարակաց փոսը նետելու: Դիտե՛ դուն այ տղաս ու օրին մեկը երբ մեծնաս, գուցե կը գրես տեսածներդ մասին»:

Եւսիկէ Ճէպեճեանի քաջութիւնը իր զաւկին ցոյց տալու հայերու անշնչացած մարմինները եթէ մէկ կողմէ հայուն Տեղասպանութեան ահաւորութիւնը ցոյց տալ է, բայց նաեւ անոր վերապրելու հրամայականը:

Եւսիկէի քաջութիւնը կը շարունակուի:

Նկատի ունենալով, որ ամուսինը Օսմանեան բանակի մէջ բժիշկ գիտութեամբ էր, կրցած էր իր տան մէջ Յայլէպ պահել մեծ թիւով ազգակիցներ ու փախստական տարագիրներ, որոնք այլապէս եւթափայլ էին Տօր Չօր քշուելու: Եղած է ատեններ, որ վտանգը այլքն առած, ան պահած է անելի քան քսաներեք հայորդիներ իր տան մէջ Ու տակաւին՝ ան յաճախ կ'այցելէր գաղթականներ՝ Յայլէպի տարբեր շրջանները՝ հազուադէպ բաժնետէլով եւ սնունդի մատակարարման կարգադրութիւններ ընելով: Եւ որպէսզի ոստիկանութեան ուշադրութենէն խուսափի, ինքզինք կը ծածկէր սեւ լաջակով, որպէս մահմետական կին:

Եւսիկէի քաջութիւնը եթէ նկարագրային է բայց նաեւ արդիւնք է իր ապրած փորձառութեանը: 1909-ի եւ 1915 Տեղասպանութեան օրերուն կորսնցուցած է անելի քան քսանիինգ հարազատ իր ընտանիքէն՝ ներարեալ հայրը եւ երեք եղբայրները: Ու կրտսեր եղբորը՝ Ռոպերտին, քսամսելի ոճիրը: Բայց արդեօք ո՞ր մէկ ոճիրը քսամսելի չէր այդ արհաւիրքի օրերուն:

1909: Եւսիկէի կրտսեր եղբայրը՝ Ռոպերտ, 14 տարեկանին Յասան Պէլլիի մէջ պահելը ապահով չէր թուեր ըլլալ: Ռոպերտի մայրը գրպանը ինքը դա՛հեկան դնելով, կը պատուիրէ որ լեռները ապաստանած բազմութիւններուն միանալ գիւղէն դուրս: Ռոպերտը իր օրերը կ'անցնէ լեռներուն մէջ՝ պահուցելով տարբեր տեղեր Շրջան մը ետք լուրեր կը տարածուէր, որ հաստատուած է ապահով

վիտիւնը եւ լեռները ապաստանած խումբ մը հայեր՝ ներառեալ Ռոպերտը, վար կ'իջնեն եւ կը սկսին ուղղուիլ դէպի Պահճճ գիւղը:

Բայց ճամբան կը հանդիպին խումբ մը զինեալներու, որոնք իրենց վրայ յարձակելով կը սպաննեն խումբի անդամները: Ռոպերտը՝ վիրէն վիրաւորուած, արիւնլուայ կ'իյնալ դիակներուն մէջ՝ կիսամեռ: Չիներալներուն մէկուսմէն ետք, ուշքի գալով մը վիզի վերքը կապելով իր գօտիով, կը պահուըտի Գուլիա կոչուած մօտակալ գիւղի մը շաղաքցիին մէջ: Բայց թուրք զինեալները կը մտնեն նաեւ շաղաքը եւ դուրս կը հանեն վիրաւոր Ռոպերտը: Ռոպերտ կալանուած վիճակի մէջ՝ կը պարզափ գինեալներուն, որ խնայեն իր կեանքը: Կը խոստանայ մօրը կողմէ իրեն տրուած ինքզ ղահեկանը եւ այլ իրեր իրենց տալու: Ու տակաւին կ'աղայէ իրենց, որպէսզի զինք յանձնեն իր երեք եղբորը՝ տոցթ: Ֆիլիպի Յովնանեանին, որ ծանօթ բժիշկ է, եւ որ կրնար զիրենց առատապէս վարձատրել ու ձրիաբար խնամել: Ռոպերտի աղաչանքը կը մնայ անօգուտ: Չիներալներու խմբին մէջէն՝ Չոպան կոչուող իրեշը, գէնքը կը պարպէ Ռոպերտի գլխուն: Ռոպերթ գետին կը փռուի ու կը մեռնի անթաղ: Ժամանակ մը ետք, գիւղացիները կը գտնեն Ռոպերտի ոսկորները իր հագուստներուն կից:

Բայց պատմութիւնը տակաւին պիտի շարունակուի:

Ինչքան իրական է ժողովորդային ասացուածքը որ կ'ըսէ «Լեռներ իրար չեն հանդիպիր բայց մարդիկ այո» եւ պիտի սպասել հանդիպումը տոցթ: Ֆիլիպի Յովնանեանի եւ Չոպան իրեշին միջեւ:

Տոցթ: Ֆիլիպի Յովնանեան ուսանած էր Տարսուսի Գուլճին մէջ, որ մէ ետք անցած էր Սիրիոյ Փրոթեստընթ Գուլճ (Պելլուոթի այժմ Ամերիկեան Յամալսարան) Պէլլուոթ եւ մասնագիտացած որպէս բժիշկ: Ան իր մականունը Գունտազճեան փոխած է Յովնանեանի, նկատի ունենալով, որ ան իր մեծ հօր անունով արձանագրուած էր: Բայց նաեւ գունտազ կը նշանակէր գէնքի կոթ, ինչ որ կրնար զգայնութիւններու դուրս բանալ այդ օրերուն:

Տոցթ: Ֆիլիպիի հայրը՝ Վեր. Յակոբ Գունտազճեան, կ'ուզէր, որ իր որդին բժիշկ դառնար եւ գիւղին մէջ ծառայէր: «Ես կ'ուզեմ որ տղաս բժիշկ դառնայ եւ իր ժողովուրդին ծառայէ գիւղին մէջ, ուր բժիշկ չկայ»: Եթէ Ֆիլիպի որոշ ժամանակ մը ենթարկուեցաւ հօրը կամքին, բայց ստիպուած եղաւ մեկնիլ Այնթապ երբ հրաւեր ստացաւ կատարելագործելու իր մասնագիտութիւնը այդ օրերուն հոջակ առած Տոցթ: Ենթոցրտի հիւանդանոցին մէջ: Եւ Այնթապ երթալու որոշումը ինչպէս Ֆիլիպի կեանքը, մինչ հայրն ու իր ընտանիքէն քսանիինգ անդամներ սպաննուեցան Ատանայի կոտորածներուն ժամանակ եւ Յասան Պէլլի իրենց շրջանին քանդուներուն եւ կոտորածներուն որպէս հետեւանք:

Գերմանական «Ելթիլի» հիւանդանոցին մէջ, տոբթ: Ֆիլիփ ձեռք ձգեց լայն փորձառութիւն եւ մեծ հռչակ: Բոլորին կողմէ դարձաւ սիրուած եւ յարգուած բժիշկը: Անոր ծառայատէր բնաւորութիւնը եւ մարդկային-քրիստոնէական հոգին ակներեւ էր: Բժշկական մասնագիտութեան մէջ ան ձեռք ձգեց մեծ փորձառութիւններ եւ կրցաւ կատարել բարդ գործողութիւններ ներառեալ այն իւրայատուկ գործողութիւնը, որուն վերքը խորունկ էր:

Թուրք մը փամփուշտով զարնուած՝ դիմեց տոբթ. Ֆիլիփ Յովնանեանի Ելթիլիի հիւանդանոցին մէջ: Տոբթ. Ֆիլիփ յանձն առաւ հանել կապարը անոր մարմնին մէջէն: Վիրաբուժութեան ժամանակ տոբթ. Ֆիլիփ կ'ապրէր արտասովոր յուզում, ու տակաւին կը ջրտնէր եւ կը հեւար: Բուժքոյրերուն եւ իր չորս կողմի միւս բժիշկներուն համար քիչ մը տարօրինակ թուեցաւ տոբթ. Ֆիլիփի այս երեւոյթը: Վերջապէս, ան ծանօթ բժիշկ էր եւ չէին կրնար կասկածիլ իր կարողութիւններուն վրայ: Եւ չուշացաւ անոնց հարցումը Տոբթ. Ֆիլիփին, թէ ինչո՞ւ այդքան ազդուած ու տակնուվրայ է:

«Վերքը խորունկ է», եղաւ անոր պատասխանը:

Պահ մը անոնք կարծեցին, թէ տոբթ. Ֆիլիփ կը խօսի վերքի ու անոր ֆիզիքական հետքերուն խորունկութեանը մասին: Բայց չ'ուշացաւ տոբթ. Ֆիլիփի յստակացումը: «Վերքը խորունկ է ոչ թէ հիւանդին, այլ իմ մէջ»: Եւ ինքզինք վերագտնելով շարունակած է. «Այս ամբողջ եղբայրս սպաննեց: Ձաղագքի թաքստոցէն դուրս բերելով զնդակահարած է զինք, անտեսելով անոր պաղատանքը: Դիակն ալ թողած է անթաղ»:

Ռուպերտը սպաննողը՝ Չոպան, եւ Ռուպերտին եղբոր տոբթ. Ֆիլիփ Յովնանեանի հանդիպումը մի քանի տարիներ ետք:

Չոպանը հիւանդանոց մտաց եւ արժանացաւ տոբթ. Ֆիլիփի խնամքին: Չինք արձակելէ ետք, տոբթ. Ֆիլիփ կ'ըսէ. «Դէ՛հ հիմա



վա, եթէ դուք սպաննել գիտէք, մենք ալ գիտենք բուժել»: Տոբթ. Ֆիլիփ Յովնանեանի զսպանուած վրէժխնդրութիւնն էր:

Տոբթ. Ֆիլիփ Յովնանեան իր մարդկային ու քրիստոնէական կեցուածքներուն ու նկարագրին կողքին ունէր ազգային հասարակական լայն գործունէութիւն: Ան միշտ նեցուկ կանգնեցաւ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան զաղափարին եւ անոր համար կոտուղ քաջամարտիկներուն: Ան գիշերով կ'այցելէր հայ ֆետայիներուն եւ կը խնամէր բոլոր վիրաւորեալները, եւ ղեղ ու սնունդ կը հայթայթէր՝ անտեսելով ամէն վտանգ:

Տոբթ. Ֆիլիփ Յովնանեան, որ կրցած էր բուժել մեծ թիւով հիւանդներ ու վիրաւորներ, չի կրցաւ ինք իր մատեն ստացած աննշան վերքին դարման մը գտնել: Ան վարակուեցաւ արեան ծանր թունաւորումով եւ տառապեցաւ 40 աստիճանէ վեր ջերմութեամբ, եւ մահացաւ 1936 թուականին՝ հազիւ թեւակոխած 56 տարիքը:

Տոբթ. Ռուպերտ ճեպեճեան՝ հօրեղբայրս, եւ որ նաեւ անուանուած էր իր սպաննուած մօրեղբօր անունով, հաւատարիմ մնաց իր մօր եւ ինկէի թելադրանքին ու գրի առաւ այս բոլորը իր յուշերուն մէջ: Եթէ զրի առաւ, որպէս պատմութիւն, բայց նաեւ ժառանգ ու մարտահրաւիր: Ժառանգ իր ընտանիքին եւ մարտահրաւիր, թէ հայը պէտք է շարունակէ իր կեանքին պայքարը: Թէ հայուն վերքը խորունկ է ու տակաւին ըստ պատշաճի չ'է բուժուած:

Բայց նաեւ կայ պատուերը: Եւ պատուերին հետ իրականութիւնը, թէ այս խորունկ վերքը որքան որ իրական է, բայց չ'ընկճեց հայը: Այլ իր հետ Յեղասպանութեան իւրաքանչիւր կեանքի հանգրուանին՝ հոս թէ հոն, հայը կրցաւ գտնել իր բուժումի ապրող ու ապրելու հնարքները: Եւ այս հնարքներով, հայը կը կենայ այսօր որպէս վերապրող իրականութիւն եւ կը նայի հարիւր ամեակին ու իր արդար պահանջատիրութեամբը:

Տոբթ. Ֆիլիփ Յովնանեանի խորունկ վերքը իւրաքանչիւր հայուն է: Չայկական պետականութիւն ու սփիւռքահայ իրականութիւն եւ աշխարհով մէկտեղ: Այս խորունկ վերքը աւանդ է, որ հայը պէտք է շարունակէ տանիլ հարիւր ամեակ ու անդին, մինչեւ իր պահանջատիրութեանը հասնիլը:

## «ՏՂԱՔ, ՊԻՏԻ ՎԱԶԵՆՔ»

1960-ի վերջաւորութեան եւ 1970-ի սկիզբի տարիներն էին: Պէյրուօի Դայ Անտարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան, Էշրեֆիէ: 14 տարիներ ապրեցայ այս կրթական հաստատութեան մէջ, ինչ որ կը նշանակէ, թէ հոն անցուցի մանկապարտզի առաջին կարգէն մինչեւ երկրորդական դասարաններ, նաեւ շրջաւաարտ դարձայ հոնկէ:

Այս ժամանակամիջոցին ապրեցայ տարբեր դասընկերներու հետ, նաեւ ուսուցիչ-ուսուցչուհիներու, որոնք դրոշմեցին ազգային-քրիստոնէական ու ընկերային նկարագիր՝ կրթական ծրագիրին ընդմէջէն: Ապրեցանք մեր մանկութեան, պատանեկութեան եւ դէպի երիտասարդութեան տանող իւրաքանչիւր հանգրուանը, որմէ իւրաքանչիւրը իր բնոյթով եւ յարաբերութիւններով բան մը աւելցուց մեր կրթական կեանքին վրայ: Այս բոլորը, կարծեք, երեկ էր: Կարծեք այնքան արագ եւ շուտ անցան տարիները հասնելով այսօրուան, նաեւ ժամն է մէկ կողմէ հասունութեան, բայց նաեւ տերեւաթափի: Այս վերջինը կեանքի պարտադրանքներէն մէկն է, որ պէտք է նաեւ ընդունի:

Բայց պէտք է նաեւ վերադառնալ երեկուան՝ 1960-1970 տարիներուն, երբ տարբեր ձայներ, ուսուցումներ, յանդիմանութիւններ ու տակաւին, չարութիւններ եւ պատիժներ կ'ամբողջացնէին մեր կեանքերը: Այսպէս, «քար ամ քար» այս բոլորը կը կերտէին մեր նկարագիրը՝ հիմը դնելով հայեցի ու քրիստոնէական նկարագիրին, որպէս հայկական վարժարանի յարկին տակ համախմբուած աշակերտներ՝ պատրաստելու համար մեզ վաղուան, որ արդէն այսօրն է: Այդ տարիներուն չեմ գիտեր, թէ կրնայի՞նք տեսնել այսօրը: Բայց ուրախ եմ, որ ապրեցայ այդ բոլորը հայկական վարժարանին մէջ, որպէսզի տեսնեմ այսօրը իր ամբողջութեան մէջ: Այդ ամբողջութիւնը մէկ-մէկ պէտք է քակել, որպէսզի կարելի ըլլայ տեսնել նոյնիսն այդ ամբողջութեան հիմը դնող(ներ)ը: Ուլքե՛ր էին եւ ինչպե՛ս ըրին այս բոլորը:

Այդ մէկ-մէկ քակուած իրականութիւններուն մէջ էր նաեւ Կարդգես Եսիպաշեանը՝ մեր մարմնակրթանքի ուսուցիչը, որուն յաճախ կրկնուող նախադասութիւն-ցուցմունքը դարձած էր հիմքը մեր մարմնակրթութեան դասապահերուն. «Տղա՛ք, պիտի վազենք»:

Շրջանաւարտ եղած էր Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն, հետեւած էր մարմնակրթութեան դասընթացքներու մասնագիտութեան Լիզպոնի մէջ եւ վերադառնալով Պէյրուօ լծուած էր նուիրա-

կան առաքելութեան-ասպարեզին՝ ուսուցչական գործին: Այսպիսով սկսած էր իր կեանքի ասպարեզը՝ նոյնիսն իր ուսանած վարժարանին մէջ:

Հաւատացած ու նուիրուած էր իր ընտրած մասնագիտութեան, թայց նաեւ նոյն այդ մասնագիտութիւնը առիթ էր ուսուցչական եւ կրթական գործին նուիրուելու: Իրեն համար մարմնակրթանքը աշակերտին դաստիարակութեան մէկ ամբողջական ծրագիրին կարեւոր միաւորն էր: Կարելի չէր զայն նկատել երկրորդական կամ անցողակի, ճիշդ այդ պատճառով խիստ էր ու խստապահանջ: Մէկ կողմէ կու տար իր լաւագոյնը, թայց նաեւ կ'անկակալէր նոյնքանը: Այս իմաստով, մարզանքի դասապահերը մէկ կողմէ դարձան հետաքրքրական, բայց նաեւ յոգեւորացից եւ ոչ ժամանցի առիթներ: Կային պրն. Կարդգեսը եւ իր ցուցմունք-հրահանգները. «Տղա՛ք, պիտի վազենք»:

Կազելը իրեն համար դպրոցի շրջափակին մէջ չէր կատարուեր, այլ դպրոցէն դուրս: Գծած էր իր յստակ քարտեւը: Դուրս պէտք էր գայինը դպրոցին մեծ դռնէն եւ թեքուելով ձախ՝ նպարավաճառ կզարի քովի նեղ գառիվայրէն իջնելով, ապա աջ՝ Մոնթե Նապիանի աստիճաններուն քովէն դէպի վեր, դարձեալ աջ՝ գորաւոր գառիվայրէն ելլելով, հասնելու համար Սք. Յակոբ Եկեղեցի հանդիպած ճամբուն անկիւնը. ապա թեքուելով աջ՝ հասնելու համար դպրոց: Այս շրջապայութիւնը պէտք էր ընել երկու կամ երեք անգամ: Կազելուն հետ կար նաեւ հանդիսատեսներու հոծ բազմութիւնը: Դայր-Մայր, դուռ-դրացի, նպարավաճառ, կոշակակար՝ բոլորը ծանօթ. անոնք պիտի հետեւէին մեզի, բայց արդեօք մեր խնեթութեան, անպայմանօրէն հացը տալով, թէ. «Այս չոճուխները ինչո՞ւ փողոցները կը վազեն»:

Մեր այս վազելու գործընթացը չունէր եղանակի լաւ ու ամպոտ օրերու հասկացողութիւն: Պիտի վազելիք նաեւ անձրեւոտ օրերուն՝ կարելի չէր փախուստ տալ պատճառաբանելով եղանակը: Տակաւին, ինչ խօսք տուտ հիւանդ ձեւացնողներուն ճակատագիրին մա-



սին: «Գլուխս կը ցաւի» եւ կամ «տաքութիւն ունիմ»ներով կարելի չէր համոզել պրն. Վարդգէսը: Կրնար ձեռքը դնել մեր ճակտին՝ ստուգելու համար, թէ շերմութիւն ունի՞նք, թէ ոչ, եւ կամ մեր աչքերուն նայելով՝ ըսէր. «Բան մը չունիս»:

Վարդգէսը նաեւ հիմնադիր անդամ էր ԼԵՎԱՄ-ի խաղերուն եւ անոր յանձնախումբերուն. այս իմաստով մեզ կը պատրաստէր այդ միջոցարոցական մրցումներուն եւ խաղերուն: Կ'ապրէր այդ բոլորը իր ամբողջ էութեամբ: 100 մէթր վազք, դրօշաբշուա, մէկ քայլ ոստում, պասքեթպոլ, վոլիպոլ, ֆութպոլ եւ տակաւին: Այս բոլորը իրեն համար նուիրական կեանք էր, որ պէտք էր ջամբէր հայ տղ սերունդին, Քոչ էր: Գիտէր՝ ո՛ր եւ ինչպէ՛ս պէտք էր ցուցմունք տար, քայց նաեւ կը բարկանար ու կ'ընդվզէր սխալներուն համար: Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին կողքին նաեւ կը պաշտօնավարէր Սոֆիա Յակոբեան վարժարանին մէջ. ԼԵՎԱՄ-ի խաղերուն, եթէ պիտի ճակատենք Սոֆիա Յակոբեան վարժարանին դէմ, պրն. Վարդգէս միայն հետուն կը հետեւէր իր բոլոր տղոց: Վերջապէս բոլորս ալ իր տղաներն էինք՝ հայ աշակերտները, որոնց միջեւ խտրութիւն չկայ, բոլորս սիրելի էինք իրեն համար, կարելո՞ր էր, որ իւրաքանչիւրս լաւ մեծնայինք: Այդ համոզումէն մեկնած՝ խտրութիւն չէր դնէր իր կեցուածքով եւ հետուն կը հետեւէր իւրաքանչիւրիս:

Պրն. Վարդգէս Եսքիպաշեան իր կրթական ծառայութիւնը շարունակեց Զոհիսիմեանց վարժարանին մէջ: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Թեւ լեռները իրարու չեն հանդիպիր, քայց մարդիկ անպայման կը հանդիպին»: Տարիներ ետք պրն. Վարդգէսին հետ դարձեալ սկսայ հանդիպիլ, քայց այս անգամ զաւակներուն միջոցով՝ Զոհիսիմեանց վարժարանին մէջ: Տարիներու ընթացքին բոլորս ալ փոխուած էինք, նաեւ ինք, քայց իր ուժը, կորովը եւ նուիրումը նոյնն էին: Դաստատ իր կոչումին՝ կարծես միայն երէկ էր, որ սկսած էր իր ասպարեզին եւ կը շարունակէր սորվեցնել նոյն աշխուժութեամբ: Ատենը մէկ Զոհիսիմեանցի մէջ կը հետեւէի իր դասաւանդումներուն, քայց կ'երթայի անցեալի Էշրեֆիէի փողոցները, ուր կար իր ծայնը, որ մեզ կը մղէր. «Տղա՛ք, պիտի վազենք»: Ուժն էր, որ եթէ տարիքին հետ չտկարացաւ, քայց հիւանդութեամբ սկսաւ շիջիլ:

Կ'իմանայի, թէ պրն. Վարդգէս անհանգիստ էր: Վերջին անգամ զինք տեսայ Զոհիսիմեանց վարժարանին 90-ամեակի ճաշկերոյթին, Փետրուար 2013-ին: Ողջագուրուեցանք: Իմ «հին» ուսուցիչներու էր, եւ ալ իր նոյնքան «հին» աշակերտներէն: Դժուար էր իրեն համար խօսիլը: Բայց ամէն ջանք ըրաւ, որպէսզի ըսէ եւ հասկնէ. «Կը կարդամ յօդուածներդ եւ հպարտ եմ: Շարունակէ՛»:

Պրն. Վարդգէսին ուժը մտաւ իր վերջնական հանգիստին մէջ,

քայց մնաց պրն. Վարդգէսին ծայնը, որ մեր կեանքերուն տուաւ նոյնքան մղիչ ուժն ու պատգամը՝ «Տղա՛ք, պիտի վազենք»: Ան տուաւ ուժը վազելու, քայց նաեւ ապրելու, կեանքի մէջ վազելու խոտայի եւ արժէքի հասկացողութեամբ: Պրն. Վարդգէսը՝ քոչը, հաւատաց, որ աշակերտին կրթութիւնը իր ամբողջական դաստիարակութեան մէջ է: Այս առումով ան չխնայեց թէ՛ ուժ եւ թէ՛ նոյնքան ձայն, որպէսզի մեզ մղէ կեանքի մէջ միշտ վազելու:

Պրն. Վարդգէսը «հին» ուսուցիչ մըն էր, որ երբեք չհիսցաւ, որովհետեւ հաւատաց իր առաքելութեան եւ գործին կարեւորութեան, հաւատաց, որ հայ տղաքը պէտք է վազեն՝ հայօրէն, հայութեամբ եւ հայուն համար:

«Տղա՛ք, պիտի վազենք»: Անցեալէն յուշ, քայց այսօրուան եւ վաղուան համար ապրելու մղիչ ուժ:

## ԴԱՏԻԱՐԱԿԸ ՄԵՌԱՔ, ԲԱՅՅ ՈՉ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարդկային ծնունդը ընդհանրապես ուրախութեամբ ընկալուած է: Նոյնը չէ պարագան կեանքի աւարտին՝ մահուան: Եթէ առաջինը նոր աշխարհ գալու վիճակն է՝ կեանք մը սկսելու, երկրորդը՝ մնալ բարովի եւ վերջնական բաժանումի: Նոյն կեանքի երկու հակադիր կողմերու իրավիճակն է, որ պէտք է ընդունիլ ինչպէս որ է:

Կարելոյրը այն է, որ կայ ծնունդին եւ մահուան միջեւ ինկող է այդ երկուքը գիրար կապող ու ամբողջացնող մասը: Անկախ ապրուած կեանքի օրերէն եւ քանակէն, այդ ապրուած մասն է, որ տեղ մը նշանակութիւն կու տայ անհատին կեանքին, բայց նաեւ կը ձգէ դրոշմ եւ ժառանգ գալիք օրերուն կեանքը շարունակողներուն՝ անհատ թէ հաւաքակաւութիւն: Այս աւանդին հասկացողութիւնն է, որ ստեղծուած է դաստիարակութեամբ փոխանցուած է կեանքի տարբեր ժամանակահատուածներու, սերունդէ սերունդ, պատմութեան սլացքին ընդմիջէն: Բարեբախտաբար աւանդը ունի գայն ստեղծողները, բայց նաեւ պահողները՝ իմամ՝ դաստիարակները, որոնք ի գին ամէն զոհողութեան կը մտնեն այս առաքելութեան մէջ: Չոհողութիւն մը, որ եթէ մէկ կողմէ անհատին անձնական ժամէն, միտքէն ու եւութենէն կը խլէ, բայց նաեւ կեանքէն՝ ամբողջ կեանք մը նուիրելով աւանդին փոխանցման եւ սերունդներու դաստիարակութեան:

Հաւաքական կեանքին մէջ անոնք՝ դաստիարակները, որոշած են մէկ քայլ առաջ երթալ զիջելով իրենց անհատական ու անձնական կեանքը, եւութիւնը եւ այս բոլորը դնելով նժարին վրայ անոնք հաւաքական աւանդին համար նուիրուիլը միշտ աւելի ծանր կշռած են իրենց տարբեր արժեքափերէն:

Սոնա Նաշեանի կեանքը եղաւ խօսուն օրինակ մը այս դաստիարակութեան նուիրուած աւելի քան հինգ տասնամեակներու: Եւ զիջեցա՛ւ: Անպայման: Անձնական կեանք, ջիղ, առողջութիւն, տրամադրութիւն, միտք, սեր, նուիրում, կրթութիւն: Այս բոլորը երկար տարիներու ընթացքին, այսօր աշխարհով մէկ սփռուած բազմահարկիւր աշակերտները դարձնելով «Օրիորդ Նաշեան»ին ընտանիքը: Ան անմիջական ընտանիքը չկապեց, բայց Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը դարձաւ իր տունը, իսկ մենք բոլորս՝ իր աշակերտները, եղանք իր սրտին ու հոգիին հարազատները, իւրաքանչիւրիս դաստիարակութիւնը եւ կեանքի մէջ մտնելու եւ առաջնորդուելու տեսլականը եղաւ իր աշխարհը: Եղաւ

խիստ ու խստապահանջ, բայց այդ պիտակին տեսել կար ուրախութիւնը կերտելու եւ հասկնալու իր տրամադրութիւնը:

Դժուար էր այդ օրերու մեր պատանեկան մտածողութեան համար հասկնալ եւ կամրջել խիստն ու ուրախութիւնը: Բայց երեւի պիտի տրվէինք յետագային, թէ կեանքի մէջ ուրախութիւնը կը կերտուի կոր արժեքի հասկացողութեան նկատմամբ կայ անհրաժեշտ լոյսութիւն եւ խստապահանջութիւն, որպէսզի կեանքի մէջ արձանագրուի յատաչիտագաց եւ նուաճում՝ մարդկային կեանքերուն մէջ, բաց մը լեցնելու զոհուակութեամբ: Այս բացը լեցնելը աւանդին դաստիարակութիւնն է եւ հայկական վարժարանին մէջ օրիորդ Սոնա Նաշեանն ու իր նման դաստիարակները նուիրուած էին ատիկա կատարելու:



*Ձախէն աջ՝ Սոնա Նաշեան, Գրայր Ըւպէճեան, Գուրի Ապաճեան, տիկին Կիրակոսեան, Չուարթ Մանուկեան, Փոլ Կիրակոսեան, Լորա Գուլումճեան եւ տնօրէն Արամ Դուլդուրճեան:*

Սոնա Նաշեան երբեք չյոգնեցաւ իր ասպարեզին մէջ: Ան կառչած վնաց յոյսին՝ հաւատալով, թէ հայ ժողովուրդին գոյատեւումը նոր սերունդին շարունակականութեան մէջ է, իսկ շարունակականութիւնը հայուն աւանդին դաստիարակութեամբն է: Սոնա Նաշեանին համար հայուն աւանդը՝ իր ազգային ու քրիստոնեական պարունակով մարմնաւորուած էր: Ան կրցած էր այս երկուքը իրարու շաղկա-

պել: Այս իմաստով ան միշտ հաւատաց, թէ դաստիարակութիւնը կարելի չէ սակարկել, քանի հայուն շարունակականութեան երաշխատրման գերագոյն նպատակն է անիկա՝ նոր սերունդներուն միջոցով:

Սոնա Նաշեանի հետ ապրեցայ երեք հանգրուաններ: Նախ, որպէս աշակերտ, Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին մէջ, տասնչորս տարիներ անընդմէջ: Ապա պաշտօնակից՝ երկար ժամանակուն համար պաշտօնավարեցի Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին մէջ, եւ ինք նախակրթարանի պատասխանատուն եղաւ: Եւ, որպէս հոգաբարձու, երբ ինք իր կրթական ասպարեզին վերջին տարիներուն եղաւ տնօրէն Նոյն վարժարանին մէջ:

Այս երկար ժամանակահատուածին, տարբեր հանգրուաններ անցնելով տեսայ Սոնա Նաշեանի անսակարկ նուիրումը հայ դպրոցին, հայ աշակերտին եւ հայ ասանդիկ նկատմամբ: Նախակրթարանի բաժնի ընդհանուր պատասխանատուն եւ համակարգողն էր, միեւնոյն ժամանակ անգլերէն լեզուի ուսուցիչ: Մեր օրերուն ճորճ Չամիչի դասագիրքը կը գործածուէր: Ներկայ օրերու չափանիշներէն մեկնելով շատ պարզ եւ նախնական պիտի ըլլան Չամիչի դասագիրքերը: Բայց Սոնա Նաշեան անպայման կ'ամբողջացնէր պատասխանուր մասերը՝ իր հետաքրքրական մտայղացումներով եւ արուեստի ու գծագրական պատկերներով: Կը սիրէր գեղանկարչութիւնը եւ շատ ժամանակ կը տրամադրէր նախակրթարանի արտադասարանային եւ ատենամարզանքի պահերուն այլազան ձեւերով ճոխացնելով մեր ուսումնական առօրեան:

Նուիրում էր՝ մէկ կողմէ հայ աշակերտին ու դպրոցին նկատմամբ, բայց նաեւ հայուն յոյսին, ուր պէտք էր յուսալ եւ տեսնել, թէ հայուն վաղուան օրը պէտք է շարունակուի: Բայց արդեօք այս նուիրումը չէր, որուն շնորհիւ հայ ժողովուրդը Տեղապատկանութեան արհաւիրքէն դուրս գալով՝ հող, տուն եւ հարազատ կորսնցնելէ ետք, հիւզաւանները վերածեց անմիջական տան, դպրոցի ու եկեղեցւոյ՝ յոյսը ղնելով վաղուան օրուան: Այդ մղումով էր, որ հայը կերտեց սփիւռքահայ գաղութները իր շատ մը ամբողջներով՝ քիչ մը ամեն տեղ: Սոնա Նաշեանի նուիրումը Նոյն այս հիմքով շարունակուեցաւ իր կրթական երկար տարիներուն ընթացքին՝ յոյսը տեսնելով հայ նոր սերունդին վաղուան օրուան տիրապետելու իրականութեան մէջ: Այսօր ալ իր աշակերտները քիչ մը ամեն տեղ Սոնա Նաշեանի յոյսին իրականացումն են: Եւ արժէ, որ հայը իր գրաւը բարձր ղնէ այս յոյսին վրայ:

«Քոլորիս համար իր խիստ ինքնութենէն մեծ սեր եւ գեղեցիկ կերտելու բժախնդրութիւն փոխանցած է ինծի, եւ միշտ երախտագիտութեամբ կը պահեն յուշերուս մէջ: Շնորհակալութիւն օրիորդ Նաշ-

կան»: Եթէ այս մէկը իր աշակերտներէն մեկուն վկայութիւնն է հեռաւոր մէկ ափերէն, բայց նաեւ մէկ լաւ թարգմանն է այն իրականութեան, որ իւրաքանչիւր աշակերտ իր տեղին ու դիրքին մէջ, կենցիկի սլլ գոյապայքարներու ընթացքին իւրաքանչիւրը կ'ապրի օրիորդ Նաշեանի դրոշմած սերը եւ գեղեցիկը՝ կենցիկն ու ասանդիկ նկատմամբ:

Պատիարակը մեռաւ, բայց մնաց դաստիարակութիւնը: Դոս թէ ուն, քիչ մը ամեն տեղ, ուր Սոնա Նաշեանի աշակերտները կ'ապրին հայուն գիտակցութիւնը՝ սիրելով արժեքը եւ պահելով ասանդիկն ու անոր գեղեցկութիւնը: Այս դաստիարակութեան շնորհած յոյսն է, որ ի մեռնիր եւ իր շարունակականութիւնը կը գտնէ վաղուան օրուան մէջ: Այս յոյսին համար անպայման արժէ ապրիլ եւ նուիրել ամբողջ կենսք մը:

Սոնա Նաշեան հանգստեան կոչուելէն ետք շարունակեց կառչած մնալ յոյսին եւ անոր շնորհած դաստիարակութեան: Իր ժամերը տրամադրեց եկեղեցիին եւ հաւաքական աշխատանքին: Մեր իւրաքանչիւր հանդիպումին իր ուրախութիւնը կը յայտնէր իմ աշխատանքներուն եւ յօդուածներուն համար, նաեւ ինծի կը յանձնէր իր ձեռնային գեղարուեստական աշխատանքները: «Պզտիկ բացիկներ՝ իր կողմէ գծագրուած, ուր տեղադրուած էին Աստուածաշունչէն համարներ՝ դարձեալ իր ձեռագիրով: «Բաժնէ, ուր որ պէտք է», կ'ըսէր, «Աստուծոյ խօսքը յոյսին կողմէն է»:

Սոնա Նաշեան ապրեցաւ այս յոյսին համար եւ իր կրթական դաստիարակչական կենսքը նուիրում մըն էր հայ ժողովուրդը տանելու վաղուան օրուան: Շնորհակալութիւն Սոնա Նաշեանի նուիրական կենցիկին: Սոնա Նաշեան դաստիարակը մեռաւ, բայց դաստիարակութիւնը, որուն ան հաւատաց, եւ որուն համար գործեց, տակաւին կը շարունակուի:

Եւ հայուն վաղուան օրուան յոյսը դաստիարակութեան շարունակականութեան մէջ է:

# ԷՍԹՈՆՆԻԱՅԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ. «ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐ ՀՈՒՆՉ ՏՈՒՄԻ ՄԵԶԻ»

Արտեմ Դալիթեանցը ծնած է Պաքու, Ազրայեյճան: Ծնողները եկած են Դարաբաղէն եւ 1968-ին Յայաստան մեկնած է համալսարանական ուսումի համար եւ մասնագիտացած ռուսաց լեզուի եւ գրականութեան մէջ: 1975-ին հաստատուած է Եսթոնիոյ Թալին մայրաքաղաքը: Երկար տարիներ եղած է ռուսերէնի դասախօս Թալինի համալսարանին մէջ, իսկ ներկայիս հիմնած է իր անձնական ընտանեկան հրատարակչական ու թարգմանական աշխատանքներու գրասենեակը:

Թալինը միջնադարեան քաղաք է, որ 1154 թուականին գտնուած է արաբ հետագոտողի մը կողմէ: Թալինի կեդրոնական հին քաղաքը 1997-ին ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմէ ցանկագրուած է իբրեւ մշակութային ժառանգ: Եսթոնիա 1940 թուականին մտած է խորհրդային համակարգին մէջ, իսկ 1990 թուականին դուրս եկած ու ստեղծած է իր անկախ հանրապետութիւնը: Ան այսօր Եւրոպական Միութեան անդամ է եւ քաղաքակրթութեան մէջ ունի սկանտինաւեան երկիրներու եւ գերմանական մշակութային դրոշմ: Խաչատուր Աբովեան Եսթոնիոյ Թարթու քաղաքի համալսարանին մէջ ստացած է իր ուսումը: Իր անունով ալ յիշատակութեան գրութիւն մը կ'ալ համալսարանին մէջ:

Արտեմը միշտ ալ շատագովը եղած է հայկական կեանքը կազմակերպելու՝ Թալին հաստատուած առաջին տարիներէն իսկ: Մօտաւորապէս 1500 հայեր կ'ապրին Եսթոնիոյ մէջ: Անոնք մեծ մասամբ կու գան Յայաստանէն եւ նախկին խորհրդային Միութեան երկիրներէ: Արտեմը մեծ աշխատանք տարած է, որպէսզի կեանքի կոչէ «Յայկական Ազգային Միութիւնը», որ սկսած է 1977-ին եւ պաշտօնապէս արձանագրուած է 1978-ին: Արտեմ երկար ժամանակ վարած է այս կեդրոնին ատենապետութեան պատասխանատու պաշտօնը: «Ուզեցիք ունենալ հայկական կեդրոն մը, ուր քաղաքական հակումներ չըլլան», ըսաւ Արտեմ՝ շարունակելով. «Մեր նպատակը հայոց լեզուն եւ մշակոյթը պահելն է: Բայց նաեւ այդ օրերուն բոլորս ալ խորհրդային Միութենէն կու գայինք եւ քիչ թէ շատ նոյնանման ենթահողերով, ուստի կարիք չզգացիք կուսակցական հակումներու»:

Յայկական կեդրոնը հայութիւնը համախմբող կորիզ է: Յայկական դպրոցը շարաթական կը կազմակերպուէր Կիրակի օրերը: Դոն կը

տրվեցնեն հայոց լեզու եւ պատմութիւն, նաեւ կը կազմակերպուին մշակութային հաւաքներ եւ երեկոներ: Գաղութը ունի ամսական դրութեամբ հայերէնով մէկ ժամուան հաղորդում՝ պետական ձայնասփիւռի կայանէն:



Յայապահպանումը գլխաւոր հիմնահարց է հայ գաղութին համար, բայց մասնաւոր նոր սերունդին, որ ծնած է Եսթոնիա: Արտեմ ամուսնացած է տեղացիի մը հետ: Այս մէկը լսելով, չեմ ուշանար իմ հետաքրքրատերի հարցումս ուղղելու՝ քիչ մըն ալ չարածհիւութեամբ: «Ազգային գիտակցութիւնը այսքան բարձր է, ինչպէ՛ս ամուսնացար ոչ հայուհիի մը հետ»: Ուղղակի եւ կտրուկ հարցումիս տրուած պատասխանը եւս նոյն ձեւով էր. «Սիրեցի գիցք»: Արտեմ ունի չորս զանալ: Մանչ գաւակը՝ Դալիթը, կը խօսի հայերէն: Արտեմ հպարտ է իր որդիով. «Դալիթը՝ տղաս, Յայաստան այցելեց քանի մը տարի առաջ: Ներկայիս կը մտածէ հոն տեղափոխուիլ: Կը կարծէ, որ Յայաստանը լաւ երկիր է ապրելու»: Եթէ Յայաստանը լաւ երկիր է, բայց նաեւ ինքնութիւն է: Եւ այդ ինքնութեան կանչն է, որ տեղ մը, այս կամ այն ձեւով, կը մղէ եւ կ'անհնազտացնէ իւրաքանչիւրիս ազգային գիտակցութիւնը:

Յայկական այս փոքր «գումարտակը» Եսթոնիոյ մէջ նուաճեց մէկ այլ ինքնութիւն: 1987-ին հայերը ճանչցուեցան որպէս փոքրամասնութիւն-համայնք Եսթոնիոյ մէջ՝ դառնալով առաջինը այս իմաստով, այլ փոքր խմբաւորումներու մէջ: Բայց պետք էր աւելին, կար անհրա-



ծելությունը հոգեւոր ամրոցի մը՝ եկեղեցւոյ: Պետական արտօնութեամբ եւ դաստիարակութեամբ Եւթոնիոյ կառավարութիւնը հայկական գաղութին նուիրած է մէկ եկեղեցաշէնք՝ հայ գաղութի գործածութեան համար: 1994-ին հայկական եկեղեցին պաշտօնապէս կ'արձանագրուի պետութեան մօտ:

«Եկեղեցին նոր շունչ տուաւ մեզի», Արտեմն է ըսողը: «Երբ եկեղեցի ունիս, կը նշանակէ, թէ այլեւս անցողակի գաղութ չես, այլ երկրին մէկ մասը»: Բայց եկեղեցին նաեւ հպարտութիւն է: «Երբ եկեղեցի ունիս, պատճառ չկայ հայ չզգալու եւ չըլլալու»: Գայ ըլլալու եւ զգալու գիտակցութեան հետ նշմարելի է Արտեմի դէմքին վրայ գծուած մեղու ու գոհունակ ժպիտը, որուն մէջ ակնբերէ եր ազգային եւ հաւաքական կեանքին մատուցած իր «համեստ» (ինչպէս ինք կ'ըսէ), բայց նաեւ երկարատեւ ծառայութիւնը: Իր աչքերը ինծի սեւեռած, չեմ գիտեր ինչո՞ւ, ուզեց խօսիլ իր ծննդավայրին մասին: «Պաշու գեղեցիկ քաղաք է: Երբ պատանի էիք, ճիշդ է, որ կ'ապրէիք ընկերային կեանքին զգայնութիւնները որպէս հայ եւ ազերի, բայց չկրցանք երևակայել, թէ այս ընկերային զգայնութիւնները օր մը պիտի վերածուին քաղաքականի, աւելի՛ն՝ պատերազմի»:

Ռազմիկ Իվանեանը Գայաստանէն է եւ Թալին հաստատուած է 1971-ին, երբ տակաւին կը ծառայէր խորհրդային բանակին մէջ: Ան որպէս բանակային, նախ տեղափոխուած է Գերմանիա, ուրկէ՝ Եւթոնիա, ուր կը մնայ մինչեւ օրս: Ռազմիկ կեանքով լեցուն եւ աշխուժ հայրողի մըն է, որ ներկայիս ստանձնած է հայ կեդրոնին ատենապետութիւնը: «Գարտ հայ եմ», կ'ըսէ ան: «Եթէ ժամանակ չտամ, ան ու միւսը չընէ, ո՞վ պիտի ստանձնէ ազգային մեր կեանքերը կազմա-



կրպելու աշխատանքները»: Մեր գաղութներու կեանքերը իրացնողներն յառաջ կ'երթան, քանի կան ռազմիկներ, որոնք որոշած են փոփոխութեան ճամբան ընտրել՝ հայապահպանման մեր աշխատանքները յառաջ տանելու ի խնդիր:

Եկեղեցական պատարագ ամիսը միայն մէկ անգամ տեղի կ'ունենայ: Միայն մէկ հոգեւոր հովիւ ունին Պալթեան այս երեք երկիրները, իսկ հոգեւոր հովիւը պէտք է իր ժամանակը բաժնէ երեք գաղութներուն մէջ՝ ըստ պատշաճի եւ կարիքի: «Բոլոր հայերս եկեղեցւոյ շուրջ համախմբուած ենք, նոյնիսկ եթէ ամիսը անգամ մը պատարագ կ'ունենանք», կը բացատրէ Ռազմիկ:

Ռազմիկին հայկական հպարտութիւնը ընդարձակուած է: Եւթոնիոյ մշակոյթի նախարարը այցելած է ազգային կեդրոն: Նախարարը զարմացած է, երբ տեսած է գաղութը մը, որ ակնկալութիւն չունի պետութենէ: Ընդհակառակն, Ռազմիկ նախարարին փոխանցած է հայ գաղութին տրամադրութիւններն ու պատրաստակամութիւնը. «Ի՞նչ ձևով, պարոն նախարար, հայ գաղութը կրնայ օգտակար ըլլալ Եւթոնիոյ կառավարութեան»:

Ամբողջ աշխարհի մէջ տարածուած հայու հոգին է այս, որուն ճամբով հայը իր ապրած վայրին մէջ փորձած է միշտ բան մը աւելցնել եւ ներդրում ունենալ տեղական կեանքին մէջ:

Ռազմիկ նաեւ կ'անդրադառնայ քաղաքական արշաւներուն, քառակապէս թրջական լոպիին եւ հակահայ քարոզչութեան՝ Յեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին: Կը հետեւի իւրաքանչիւր անցողաբար ի կարելին կ'ընէ՝ հակազդելու սխալ ուղղութիւններու եւ ծանուցումներու: Եւ չուշացաւ Արտեմի պարզ, բայց շատ իրատեսական հաստատումը. «Մենք՝ հայերս, իրարու պէտք է օգնենք, եթէ սպրիկ կ'ուզենք»:

Արտեմ, Ռազմիկ եւ 1500 հայրողներ Թալինի մէջ կը գիտակցին նոր շունչի արժեքին: Նոր շունչը եկեղեցւոյ միջոցով փոխանցուած, անոնց կու տայ նոր սլացք հայապահպանման իրենց առաքելութեան մէջ:

Բայց այսօր հայը, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, պէտք ունի նոր շունչի: Նոր շունչը, որ մեր պատմութեան այս հանգրուանին նոր սլացք պիտի տայ, մինչ մենք կը թիվարեցնք մեր բազմաթիւ իմաստարարներուն մէջէն: Նոր սլացքը կ'արդիւնաւորուի, երբ հայը կը գիտակցի իրարու օգնելու հրամայականին, իրարու հետ ու իրարու համար ապրելու եւ կեանք կերտելու իտեպին:

Պաշու ծնած, Երեւան ուսանած է Թալին ապրող Արտեմին նոր շունչը իւրաքանչիւր հայունն է: Գայուն ապրած իւրաքանչիւր երկիր հայուն կու տայ իւրայատուկ պայման եւ պիտակ: Եւ այս պայման-

ներուն մէջ եւ պիտակին ներքեւ հայը կ'ապրի իր սփիւռքեան կեանքը: Բայց ինչո՞ւ այսպէս եղաւ մեր պատմութիւնը, եւ աշխարհով մէկ տարածուեցանք ու այդպէս ենք մինչեւ այսօր:

Այսօրուան հրամայականը ի՞նչ ընելու իրավիճակն է: Իւրաքանչիւր հայ իր ապրած երկրին ու գաղութին մէջ պետք ունի ձգտելու նոր շունչին, որպէսզի կերտէ նոր սլացք, որ հայուն ազգային վերապրումին հիմքն է, իսկ վերապրելու հիմնական նախապայմանն է իրարու հետ եւ իրարու համար գոյատեւել: Թալինի հայկական փորձաթիւ գաղութին նոր սլացքը լաւագոյն օրինակներէն է հայուն վերապրելու իրականութեան:

## ԻՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՐՏՍ

Արտեմ Դաւիթեանը ծնած է Պաքու: 1968-ին անցած է Երեւան՝ ուսանելու, եւ մասնագիտացած ռուսերէնի եւ ռուս գրականութեան մէջ: 1975-ին հաստատուած է Թալին՝ Եսթոնիոյ մայրաքաղաքը, եւ մինչեւ այսօր կ'ապրի հոն: Ան գործօն մասնակցութիւն ունեցած է ու տակաւին կ'ունենայ Եսթոնիոյ հայ համայնքի կազմաւորման եւ աշխուժացման աշխատանքներուն մէջ:

Արտեմի սրտին մէջ կայ անկատար մնացած մեծ աշխատանք-ծրագիր մը:

«Եօթը տարի առաջ այցելեցի Սուրիա: Անցայ Զալէպ, Դոսն եւ Տեր Չօր: Զանդիպում ունեցայ գաղութին առաջնորդներուն հետ եւ փորձեցի տեղեկութիւններ եւ արխիւ հաւաքել Աննա Զետտիկ Պիւլի մասին: Արդէն իսկ հաւաքած եմ անելի քան կրէք ժամուան նիւթ՝ վաւերագրական ժապաւեն մը պատրաստելու համար, նուիրուած այս մեծ հայասեր եւ մարդասեր անձին: Պետք ունիմ տնտեսական օժանդակութեան, որպէսզի աշխատանքը ամբողջանայ»:

Իսկ Աննա Զետտիկ Պիւլը:

Հայկական իրականութեան համար ընդհանրապէս եւ հալէպահայ պատմութեան մէջ մասնաւորապէս իր մեծ ու նուիրական գործունեութիւնը ունեցած է ան՝ Յեղասպանութեան տարիներուն եւ անկէ ետք: Ան ամբողջ քառասուն տարի իր կեանքը նուիրեց հայ ժողովուրդին՝ Յեղասպանութեան արհաւիրքին ժամանակ, բայց նաեւ անկէ ետք՝ վերապրումի աշխատանքներուն մէջ:

Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ, թէ ընդհանրապէս փոքր քաղաքներէն կը սկսի մեծ պատմութիւն մը: Եւ Աննա Զետտիկ Պիւլը ծնած է 1887-ին Եսթոնիոյ Զապասալու ծովեզերեայ քաղաքը: 1903



թուականին ան որոշեց իր կեանքը նուիրել արտարանչական գործին՝ ազդուելով եւ ներշնչուելով այդ օրերուն ծանօթ գերմանացի մեծ արտարանիչէ մը, որ Հաապաալու եկած էր հոգեւոր առաքելութեամբ:

Գերմանական աստուածաբանական ճեմարանին մէջ ուսանած ժամանակ ան կը լսէ հայերուն եւ անոնց կոտորածներուն մասին: 1909 թուականին Կիլիկիոյ եւ ի մասնաւորի Ատանայի ու Մարաշի աղետներուն տագնապալի լուրերը սկսան հասնիլ Եւրոպա: Պիլ որոշեց իր կեանքը նուիրել հայ ժողովուրդի կարիքներուն, սակայն պէտք էր սպասել մինչեւ 1911 թուական, որպէսզի հասներ Մարաշ եւ սկսէր իր հոգեւոր ու մարդասիրական գործունեութեան՝ հայկական որբանոցին մէջ:

Եւ «չուշացաւ» 1915 թուականի Եղեռնը, որ Աննա Հետուիկ Պիլի կեանքին համար դարձաւ անկիւնադարձային, եւ ինչպէս ինք կը գրէ իր յուշերուն մէջ. «Երբ 1915 թուականին՝ Չատկուան օրը, հայերուն բաժին ինկաւ այդ սարսափելի աղետը, իմ ականջիս մէջ անդադար կը հնչէին հետեւեալ բառերը. «Ո՛ր եւ քու եղբայրդ՝ Աբէլը. անոր արեան ձայնը գտնեն ինծի կը բողբէ»: Պիլ կը շարունակէ. «Այդ անոնց բոլորը իմ բոյրերս եւ եղբայրներս էին, որոնք հաւաքուած էին մեր Տիրոջ տունը, երբ նախապատրաստուած կոտորածը հասաւ Մարաշ քաղաքը: Կիներ, տղամարդիկ, ծերեր՝ հաշմանդամ, կոյր, հիւանդ, օրեր շարունակ կը քալէին քարքարոտ արահետներէ՝ այրող արեւուն տակ: Կը քալէին լուռ, առանց արցունքի»:

Եթէ դէպի մահ գացող այդ բոլոր հայորդիները կը քալին լուռ եւ առանց լացի, սակայն Պիլ չէր կրնար լուռ մնալ եւ չարտասուել: Եւ ան դարձեալ կը բացագանչէ եւ յուշերուն ընդմէջէն. «Ո՛վ է հաշուողը մեռողներու դիակներուն, որոնք ինկած են այդ մահուան ճամբուն ամբողջ երկայնքին: Ու տակաւին կորսուած այն բոլոր երեխաներուն, որոնք լացով կը փնտռէին իրենց մայրերը»:

Բայց Աննա Պիլ պիտի տեսներ անելին: «Կանուխ առաւօտեան գէնքի կրակոցներու ձայները գիս արթնցուցին: Հայ գերիները շղթաներով կապուած՝ մէկը միւսին տեսնել կը գնդակահարուէին մեր տան ներքե: Արդեօք այս դիակներու կոյտերը՝ արիւններու մէջ շարախուած, իմ եղբայրներս չէ՛ն»:

Եւ այս եղբայրներուն դիակներն ու անոնցմէ ողջ մնացած որբերը Աննա Պիլը մղեցին ա՛լ անելի իր կեանքը մխրճելու հայ ժողովուրդի վերապրիլը երաշխաւորելու հրամայականին մէջ: Եթէ Աննա Պիլ մեծ թիւով հայ երեխաներ կրցաւ փրկել թրքական եաթաղանէ եւ պատսպարել գիրենց որբանոցներու մէջ, բայց նաեւ ան դաստիարակեց զանոնք եւ կազմակերպեց Մարաշի հայկական որբանոցը:



Եթէ հայ որբերուն սորվեցուց գրել եւ կարդալ, բայց նաեւ Աստուածաշունչ, որովհետեւ անոնց մէջ կը տեսներ ընկճուածութիւն, բայց նաեւ վախ ու քարոզոյթ:

Աննա Պիլ հայերէն սորվեցաւ: Ան կրցաւ տեսնել, թէ այս որբացած հայ երեխաներուն վերապրելու հրամայականը իրենց մայրերի լեզուին պահպանման մէջ էր: Ան կրցաւ տեսնել մշակոյթին արժեքը եւ անոր կարեւոր դերը հայ ազգին ինքնապահպանման հովովոյթին մէջ: Ան որբանոցին մէջ արգիլեց թրքերէն խօսիլ, բայց նաեւ անելին: Ան ստիպեց թրքախօս աշխատողներուն, որպէսզի հայերէն սորվին: Համաշխարհային Ա. պատերազմի ավարտին հետ եւ Գերմանիոյ ու իր դաշնակիցներուն պատմութեամբ, գերմանացի ուսուցիչներուն կարտուսուած չէր այլեւս մնալ շրջանին մէջ:

Պիլ կրցաւ մնալ մինչեւ 1919 թուական՝ իբրեւ Եսթնլանդի: Սակայն ինքն այ ստիպուած եղաւ հեռանալ երկրէն՝ նկատի ունենալով իր պալթեան-գերմանական արմատները եւ իր ետին ձգելով իր քրոյր «գաւակները»: Պիլի համար ասիկա արքայի համագործ էր:

Բայց Աննա Պիլի միտքը, հոգին եւ մանաւանդ սիրտը չզաղորեցան փափախելէ հայուն կարօտով: Ան կը հետեւեր իւրաքանչիւր իրադարձութեան: Յստակ էր Աննայի համար, թէ ան հայերէն հեռու չէր կրնար մնալ: 1922 թուականին ֆրանսական նոր կազմակերպուած կրեւելեան Զրիստոնեական Առաքելութիւն հոգեւոր եւ մարդասիրական կազմակերպութեան հետ հասաւ Հայէպ: Հայէպ, ուր Ցեղասպանութենէ ետք ապաստան գտած էին հազարաւոր հայեր: Եւ Հայէպի մէջ ան ապրեցաւ իր կեանքին ամենն ղրուար տարիները:

«Արդէն քանի մը օր է ծմեւ է: Տուրտ եւ անծրեւտ: Գաղթականներու ճամբարներուն մէջ ամէն տեղ աղքատութիւն է: Կա՛ւ պատերը կը քանդուին եւ տնակներ ջուրով կը հեղեղուին: Ամէն տեղ կան

հիւանդներ, որոնք պառկած են ցուրտի և խոնարհության մէջ»: Բայց Աննա Պիլ հաւատացած էր վերապրելու հրամայականին: Ան չուտով կազմակերպեց հիւղաւաններու և ճամբարներու կից հիւանդանոցային սարքաւորումներ: Այս ծրագիրին զուգահեռ գործարան մը ստեղծելու գաղափարը յղացաւ:

Շուտով կարելի եղաւ ստեղծել գորգեր, ժանեակներ և այլ կենցաղային իրերու գործարան մը, ուր աւելի քան հինգ հարիւր հայու հիւներ աշխատանք գտան: Գործարանին արտադրանքները կը որկուլէին Եւրոպա:

Աննա Պիլ չմոռցաւ երեխաները և անոնց կրթութիւնը: Կրցաւ ապահովել կրթաթոշակներ, որոնց շնորհիւ աւելի քան 250 հայ երեխաներ Յալէպի դպրոցներուն մէջ ուսում ստացան: Պետական մակարդակի վրայ կապեր հաստատեց, որպէսզի կարելի ըլլայ հին հիւղաւանները նորոգել և նոր տնակներ կառուցել: Ան աշխատանք տարաւ, որպէսզի Յալէպի հայկական թաղամասին համար նաեւ ապահովուի ջուրի մատակարարում:

Աննա Պիլ ապրեցաւ հայուն վիշտը: «Այս հայերուն իւրաքանչիւրը ունի իր վիշտը, որ իրենց հետ բերած են իրենց կորսուած հայրենիքէն: Այդ վիշտին հետքերը տակաւին չեն ջնջուած և հին ցաւերուն վրայ նորերը աւելցած են»: Եւ հարց կու տայ Պիլ. «Ինչպէ՛ս կարելի է դիմակալել այս բոլորը»:

Աննա Պիլ հաւատաց, թէ հայը պետք է յաղթահարէ իր ցաւը, հաւաքակաւորութեան մէջ պետք է վերագտնէ իր արժեքը: Բայց մասնաւոր չէր ան հաւատաց, թէ հայը պետք է գտնէ կեանքին նկատմամբ սերը ու յաղթահարէ իր կեանքը խորտակած ատելութիւնը:

Աննա Պիլ Յալէպի մէջ շարունակեց իր նուիրական աշխատանքը մինչեւ 1940-ական թուականները, երբ սկսաւ ներգաղթը դէպի Կորիորդային Յայաստան: Շատեր մեկնեցան և ուրիշներ սկսան պատրաստուիլ մեկնելու: Աննա Պիլ ուզեց միակալ իրենց: Կ'ուզէր երթալ իր «զաւակներուն» հետ՝ դէպի հայրենիք: Վերջապէս և ինչպէս ինք ալ կը վկայէ. «Իմ հայկական սիրտը չէր կրնար հեռու մնալ իրենցմէ»: Բայց խորհրդային համակարգը չէր կրնար արժանել Աննա Յետուիկ Պիլի նման «գործիչ»ներ ընդունիլ: Յալէպ մնաց մինչեւ 1951 թուական: Եւ երբ Յալէպի ու հայկական գաղութը դարձան ինքնաբաւ և բարօք, Աննա Պիլ որոշեց վերադառնալ տուն: Չէր կրնար վերադառնալ իր ծննդավայրը՝ Եսթնիա, քանի որ անիկա ալ միացած էր համայնավար համակարգին: Անցաւ Գերմանիա և մնաց յատուկ պատսպարանի մը մէջ մինչեւ իր մահը՝ 1981-ին:

Եւ դարձեալ Արտեմ և Խօսողը: «Այսպիսի նուիրական կեանք մը մեր Մեծ Եղեռնին համար նուիրուած, կարելի չէ շահարկել: Կ'ուզեմ

մեր այս ցաւը Արեմուքոնքի ցոյց տալ՝ իրենց տեսողաշուն մեկնելով: Թէ ինչպէ՛ս Եւրոպացի Աննա Պիլ որոշեց իր կեանքը նուիրել հայ ժողովուրդին և իր տառապանքներուն»:

Ուզմիկ Իվանեան ատենապետն է հայկական ազգային միութեան: «Որոշած ենք յուշակոթող մը գետնդէլ Յապսալու քաղաքին կերտնական մէկ տեղը: Տեղը և կոթողը պատրաստ են: Կը սպասենք հայկական-եսթնական միջպետական կարգաւորումներուն»:

Բայց կայ տակաւին աւելին: Եսթնիոյ հայ գաղութը, առ ի երախտագիտութիւն հայ ժողովուրդին համար Աննա Պիլի երկար տարիներու նուիրական կեանքին, տասնհինգ հիւանդ երեխայ կը պատսպարէ Յապսալուի կազմութեան մէկ կեդրոնին մէջ իր յիշատակին:

Աննա Պիլ Գերմանիոյ պատսպարանի իր սենեակին մէջ կ'ապրէր իր անցեալի յուշերով, բայց նաեւ նամակագրութեամբ: Իր երեխաներն շատեր հասած էին լաւ ասպարեզներու և մասնագիտութեան: Կը նամակակցէր անոնց հետ, և իր զաւակները չէին կրնար մոռնալ Պիլ մայրիկը, որ իրենց վերապրիլ սորվեցուցած էր:

Աննա Պիլ չապրեցաւ, որպէսզի տեսնէր 1988-ի Յայաստանի արհաւոր երկրաշարժի աղէտը: Սակայն այն գերմանական պատսպարանը, որուն մէջ ապրեցաւ իր կեանքին մնացեալ տարիները և ուր նաեւ մահացաւ, փութաց օգնութեան հասնելու հայ աղտեալներուն և տուժած ընտանիքներուն: Այդ օգնութեան մէջ էր նաեւ Աննա Պետուիկ Պիլի վերարկուն, որպէսզի անտէր մնացած հայ սրտերը տաքնան նոյնիքն Պիլի հայկական սրտով:

Աննա Պիլի սկսած առաքելութիւնը այսօր տակաւին կը շարունակուի Յալէպ քաղաքին մէջ՝ Յայ Անետարանական Զրիստոսի եկեղեցիին առաքելութեամբ և տարբեր մարզերու մէջ: Իսկ Աննայի ծննդավայրին մէջ Արտեմը և Ռազմիկը կը շարունակեն երախտագարտ մնալ անոր նուիրական կեանքին ու յիշատակին:

Աննա Պիլ գերմանական պատսպարանի իր սենեակին մէջ միշտ պահեց սուրբ գրային համարը հայերէնով և պատին վրայ կախուած. «Մինչեւ մահ հաւատարիմ եղիր»: Աննա Պիլ հաւատարիմ մնաց իր հայկական սիրտին, որովհետեւ կրցաւ տեսնել նոյնիքն այդ սրտին վերապրումը՝ Տեղասպանութեան արհաւիրքէն ետք: Եւ հայուն վերապրումի գրաւականը հաւատալ և այս հայկական սրտին: Բայց անպայմանօրէն՝ անոր հայատրոփ շարունակականութեան:

# ԻՐԱՔԷՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ. ՖԱՅԵԳԻՆ ՅԱԲԸ ԵՒ ԿՈՉՈՒՄԸ

Մեր իրականության մեջ կան տարբեր պարունակով հայեր: Եթե մեկ կողմէ կան իսլամացած(ուած) հայեր, կան նաեւ քրտացածներն ու տակաւին արաբացածները: Եթէ տակաւին չհաշուենք այն բազմահազար հայերը, որոնք ժամանակի ընթացքին եւ տարբեր հանգրուաններէ անցնելով՝ ծուլուած են ինչ ու ինչ տարբեր երկիրներու ու գաղութներու մէջ: Հոն միայն պատմութեան արխիւները բանալով է որ կը գտնես անոնց արմատները, թէ անոնք ժառանգորդներն են ազգային ու հին աւանդ ունեցող ժողովուրդի մը:

Այս երեւոյթները մեր պատմութեան անցած սեւ փորձառութիւններուն հետեւանքներն են՝ հայութեան եւ հայրենիքի վրայ կատարուած յարձակումներ, տեղահանութիւններ, իսկ ամենէն ահաւորը՝ ցեղասպանութիւն, հայրենի հողէն արմատախիլ ըլլալ, կորսնցնել Արեւմտահայաստանն ու Կիլիկիան: Տրուեցանք քիչ մը ամէն տեղ թէեւ կրկին կազմաւորուեցանք եւ կազմակերպեցինք մեր սփիւռքեան կեանքը, բայց մնաց ու տակաւին դաժնակեան սուրի նման մեր վերեւ կախուած կը մնայ ծուլումի ու այլասերումի երեւոյթն ու վտանգը, իսկ ասոնց իբրեւ հետեւանք՝ լեզուն եւ արմատներուն կառչածութիւնը կորսնցնելու իրավիճակը:

Ֆայեգ ժըրժեսը ծնած է Պաղտատ, 1966-ին: Մօրը՝ Էվլինի ընտանիքը եղած է հայ, որ Մարտինէն տեղահանուած է Ցեղասպանութենէն ետք եւ հաստատուած Պաղտատ, Իրաք: Կարելիութեան սահմաններուն մէջ Էվլին փորձած է հայ մեծնալ, բայց իրեն վիճակուած է ամուսնանալ տեղացիի մը հետ եւ կազմել բազմանդամ ընտանիք մը՝ հինգ զաւակներէ բաղկացած: Ֆայեգ միակ մանչ զաւակն է չորս քոյրերու կողքին:

Ֆայեգ չէ ճանչցած իր հայրը: Երեք ամուսն էր, երբ իրաքի հայրը կորսնցուցած է եւ ճաշակած է որբ մեծնալու դառն իրականութիւնը: Բայց ասիկա թափ տուած է մօրը, որպէսզի Ֆայեգին դաստիարակութեան մէջ աւելի արմատանայ հայկական ինքնութիւնը Այսպիսով կը սկսի Ֆայեգի հայկական ինքնութեան ճանաչման եւ կազմաւորման գործընթացը:

1970-ական թուականներուն փոքր պատանի Ֆայեգ կը հասնի Այնճար եւ կ'ընդունուի հայ կաթողիկէ վարժարան իբրեւ գիշերօթիկի սան: «Այնճարը եղաւ հայկական ինքնութեանս կերտումին կարեւոր շրջանը: Հոն է, որ սրտիս ու հոգիիս մէջ լեցուեցաւ հայուն հպար-



տութիւնը», կ'ըսէ Ֆայեգ: Իսկ հպարտութիւնը: Ֆայեգի անգիր լրագծ առաջին փոքր բանաստեղծութենէն փոխանցուած է. «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ Վարդանին թողն եմ ես»: «Վարդանի թողը» ըլլալու գիտակցութեամբ եւ հայրենի տառերն ու լեզուն սորվելու իրողութեամբ, գէթ սկզբնական շրջանին, Այնճարը կարելոր դեր կ'ունենայ Ֆայեգի կեանքին մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին (1975-1976) Ֆայեգ ստիպուած կ'ըլլայ վերադառնալ Պաղտատ: Իրաքի մէջ փորձառութիւնը կ'ըլլայ «խառն»: Կ'անջատուի հայութենէն, սակայն ատիկա «դիտումնաւոր չէր», կը շեշտէ Ֆայեգ: «Կեանքի պայմանները շատ դժուար չէին. Իրաքի մէջ, որպէս հայկական գաղութ, շատ մեծ կարելիութիւններ չունինք», կը շարունակէ ան: Ֆայեգ այսօր տակաւին կրնայ հայերէն կարդալ, բայց բառամթերքը եւ անոնց նշանակութիւնը բաւական մոռցած է:

1995-ին Ֆայեգ կ'ամուսնանայ Նաուալին հետ եւ կը կազմեն ընտանեկան բոյն մը: Նաուալը հայկական Թիւֆեսքճեան ընտանիքէն է. անոր ծնողները Ցեղասպանութենէն ետք հաստատուած են Իրաքի հարաւային շրջանները: Նաուալ եւ իր ընտանիքը մաս կը կազմեն արաբացած հայերու խմբակին:

Ֆայեգի, նաեւ Նաուալի, ցաւը կը սկսի, երբ կ'ունենան իրենց անդրանիկ մանչ զաւակը: Ան կը ծնի անկար ու հիւանդ: Ֆայեգ, որ արդէն ճաշակած էր որբութեան եւ առանց հօր զուգուրանքի կեանքը, կը տագնապի իր զաւակին հիւանդագին վիճակին ի տես: Իր զա-

լակին առողջական այդ տազնապալի վիճակին հետ կը սկսի մեծնալ նաեւ Ֆայեզի ցաւը:

Սակայն Ֆայեզի ցաւը զինք չ'առաջնորդէր յուսահատութեան եւ յուսալքումի: Ան սորված էր, որ Վարդանի թոռն էր, եւ թէ ինք քայքայ հայն էր: Ու տակաւին. «Մայրս մեզի պատմած էր տեղահանութեան ընթացքին իր ծնողաց կրած զրկանքներուն մասին», կ'ըսէ Ֆայեզ Ռուսի կարելի չէր, որ «ես յուսահատի, երբ իմ մեծ ծնողքս կրցան ապրիլ այդ բոլոր կոտորածներն ետք»:

Ֆայեզ կը գիտակցի, թէ իր ցախ կեանքը պետք էր վերածել նուիրականութեան, ծառայութեան՝ հաւաքական աշխատանքի համար: Այս իմաստով ան կը սկսի անորդառնալ կոչումի մը, որ իր կեանքը պիտի դարձնէր նշանակալից եւ արժեքի գիտակցութեամբ լի:

Ֆայեզ իր կոչումի վերածուած կեանքը կը դնէ ի սպաս եկեղեցական ու քրիստոնեական-հոգեւոր ծառայութեան: Ան աստուածաբանական ուսում կը ստանայ եւ քառասուն տարեկանին կը ձեռնադրուի կղերական՝ ծառայելու համար Պաղտատի մէջ գտնուող Անկիոսի կղերական՝ ծառայելու համար Պաղտատի մէջ գտնուող Անկիոսի կղերական: Ան մինչեւ օրս իր ծառայութիւնը կը շարունակէ, նոյնպէս երբ կեանքը դժուար է Իրաքի մէջ, եւ ամէն օր մահուան վտանգին ու սպառնալիքներուն մէջ է:

Ֆայեզ լծուած է Իրաքեան հայրենիքին ծառայութեան: Եկեղեցու կողքին կը գործէ փոքրիկ հիւանդանոց մը, ուր բժշկական խնամք կը հայթայթէ անխտիր բոլոր ժողովուրդին: Եկեղեցին ունի մանկապարտէզ մը, որուն աշակերտները մեծաւ մասամբ տեղացիներ են, եւ ուր կը սորվին նաեւ քրիստոսի սիրոյն մասին: Ֆայեզ կը ծրագրէ մանկապարտէզի բաժանմունքը վերածել նախակրթարանի: Այս լծուած է քրիստոնեայ-խլամ երկխոսութեան, քանի որ կը հաստատուի կրօններու եւ ինքնութիւններու գոյակեցութեան, եւ որ Իրաքի մէջ կայունութիւն կարելի է հաստատել երբ կայ համերաշխութիւն: Նաուալը կանոնաւոր կերպով կը կազմակերպէ տիկնանց հաւաք՝ շաբաթական դրութեամբ, ուր քրիստոնեայ եւ իսլամ աւելի քան երեք հարիւր կիներ կը հանդիպին եւ կը սորվին իրարու հետ ապրիլ եւ գոյակցիլ՝ քրիստոնեական սիրոյ հասկացութեան մէջ:

Բայց թէ կայ Ֆայեզի կոչումին խանդավառութիւնը, նոյնքան ամկայ է նաեւ մտահոգութիւնը: «Քրիստոնեայ ներկայութիւնը կը նուազի», կ'ըսէ Ֆայեզ: «Չենք կրնար կասեցնել արտագաղթը»:

Իրաքի քաղաքական անապահով վիճակներուն մէջ, գրեթէ ամենօրեայ դրութեամբ, ականուած ինքնաշարժներու պայթումներ, որոնք մեծաթիւ զոհեր կը խլեն ու իսկական արհաւիրք կը ստեղծեն:

«Ի՛նչ կը զգաս երբ Իրաքի ներկայ այս վախ ու դողին մէջ կը շարունակես գործել», հարցուցի: Ֆայեզի դէմքին վրայ ուրուագծուե-

ցաւ փոքրիկ ժպիտ մը, որուն ետին կը տեսնէիր նոյնքան պատմութիւն եւ մտահոգութիւն: Կարելի եղաւ անոր դէմքին արտայայտութիւնը ըմբռնել, որովհետեւ իբրեւ լիբանանցի կամ նաեւ իմ լիբանանեան ապրած կեանքի փորձառութիւնը՝ իր որոշակի նմանութիւններով:

«Երկիրը ամբողջ վնասի մէջ է», ըսաւ Ֆայեզ: «Եւ վնասին ո՛ր կողմն ալ որ դառնաս, շահ է: Ապահովութիւն չունիք եւ սորվեցանք միտ կեանքներուն խաղաղութիւն տալ՝ կեանքեր կերտելով անապահովութիւններուն մէջ»:

Իսկ խաղաղութեան կեանքե՞րը: Ֆայեզն է դարձեալ. «Մարդուն խաղաղութիւնը իր հոգիին մէջն է եւ քրիստոսով է», եզրակացուց: Ու Ֆայեզ մինչեւ այսօր կը շարունակէ իր առաքելութիւնը՝ խաղաղութեան կեանքեր կերտել ոչ խաղաղ եւ անապահով Իրաքի մէջ:

Եթէ Ֆայեզի հետ հանդիպումս եղաւ քաջալերական, քայքայ խոստմալից: «Կարօտ ունիմ կրկին հայրեն լեզուին տիրապետելու», ըսաւ Ֆայեզ: «Վերստին պիտի սորվիմ ու յիշեմ: Գայկական ինքնութիւնը ինձի համար արժեք է»:

Ֆայեզ կը պատկանի փաղանցին այն նուիրեալներուն, որոնք իրենց ապրած ցաւոտ կեանքերը վերածած են կոչումի: Եւ եթէ կոչումը մէկ կողմէ հաւաքական աշխատանքի ու ծառայութեան համար է, թայք նաեւ ազգային ինքնութեան եւ անոր արժեքին ինքնագիտակցութեան: Ինքնագիտակցութիւն մը, որ կոտորակուած ու խառնուած լիլլալով հանդերձ, անպայման դուրս կը ժայթքի որպէս ամուր եւ մղիչ ուժ: Ա՛յս ուժով է, որ ցաւոտ կեանքերը կը վերածուին կոչումի:

Գայուն պատմութեան փորձն ու փորձառութիւնն է ասիկա՝ ցաւոտ պատմութիւնը վերածել կոչումի՝ նուիրական կեանքի: Այս կոչումին մէջ է հայուն պատմութեան եւ կեանքի շարունակականութեան գրաւականը:

# ԼԱԹՎԻԱՅԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ. ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ, ԵՐԿՈՒ ԽԱՉՔԱՐ ԵՒ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍ ՃԱՀԱՐԱՆ

*«Երկ այսօր մեր համայնքները չգորացնենք, վաղը մեր ունեցածներն ալ պիտի կորսնցնենք»:*

Խոսքով քննյ. Ստեփանեանը Եսթոնիոյ, Լաթվիոյ եւ Լիթուանիոյ հայկական գաղութներուն հոգեւոր հովիւն է: Ան Հայաստանէն կրնա գալ եւ եռանդով կը լծուի պալթեան այս երեք երկիրներու հոգեւոր եւ կազմակերպչական առաջնորդութեան աշխատանքներուն: Տէր հօր նստավայրը Ռիկա՝ Լաթվիոյ մայրաքաղաքն է:



Ամիսը երկու Կիրակի Ռիկայի մէջ կը պատարագէ, մէկ անգամ՝ Թալիսի (Եսթոնիա) եւ մէկ անգամ ալ Կիլիսիի մէջ (Լիթուանիա): Այս երեք երկիրները սահմանակից ըլլալով հանդերձ, կը գտնուին աշխարհագրական բաւական լայն տարածութեան մը վրայ, ինչ որ կը

տրիպէր քահանային երկար ճամբորդութիւններ կատարել իր առաջնութեան ի խնդիր:

Ռիկան գեղեցիկ քաղաք է: Անոր շէնքերը կառուցուած են եուրոպական տիպի ճարտարապետական ոճով, որ ընթացք առած է 19-20-րդ դարերուն եւ ստեղծած յատուկ կենցաղ եւ մտածողութիւն՝ արուեստի եւ փիլիսոփայութեան քննադատներուն մէջ: Կրուեստի այս ոճը ոչ միայն քնորոշ դիմագիծ մը կու տայ քաղաքին, այլ նաեւ տարբեր փայլք: Լաթվիան մաս կազմած է Խորհրդային Միութեան: 1990-ին առաջին երկնքներէն եր, որ անջատուեցաւ Խորհրդային Միութենէն եւ կերտեց անկախ հանրապետութիւն: Այսօր Լաթվիան անդամ է Եւրոպական Միութեան, ոչ միայն կենսամակարդակին շնորհիւ, այլ նաեւ ճարտարարարական յաջողութեամբ: Թէեւ ռուսերէնը եւ անոր գաղտնականութիւնը անկախ են տակաւին, բայց զգալի է նաեւ տեղացի ժողովուրդին կողմէ զգայնութիւնն ու վերապահութիւնը անոնց նկատմամբ:

Հայկական իրականութիւնը սկսած էր զարգանալ Խորհրդային Միութեան օրերուն, երբ գաղութը կը հաշուէր մտատուրապէս եօթը հարիւր հայ: Անոնք Հայաստանէն եկած էին ուսանելու նպատակով, կամ աշխատանք գտնելու: Ներկայիս գաղութը 2500 հոգի կը հաշուէ: Շրջանին մէջ տիրող տնտեսական տագնապը պատճառ դարձաւ նաեւ, որ մեծ թիւով հայեր հեռանան երկրէն:

Տէր Խոսրովին համար քրիստոնէական հաւատքը եւ ազգային արժեքները սրբութիւններ են, որոնց համար եւ անոնց պահպանման ի խնդիր կը տագնապի ան, մանաւանդ որ խառն ամուսնութիւններուն իրեն հետեւանք՝ հայ ազգի զաւակները հետզհետէ կը հեռանան հայկական շքեմ միջավայրէ:

Յայն յուսահատութիւն չի ճանչնար հայ հոգեւորականը: 2005 թուականին նշանակուած է այդ տարածաշրջանի հոգեւոր հովիւ: Ընդհանուր հոգեւոր տեսուչ, ան Ղարաբաղի մէջ ծառայած է, եւ ատիկա զինք անելի գօտեպնդած է հայուն արդար պայքարով եւ ազգային ինքնորոշման արժանիքներով:

Ռիկայի հայկական եկեղեցւոյ շինարարական աշխատանքները սկսած են 1997-ին եւ մնացած կիսատ: Համայնքի հոգեւոր առաջնորդութիւնը նոր ստանձնած հովիւը անմիջապէս կը ձեռնարկէ եկեղեցւոյ կառուցման եւ շինարարական աշխատանքներու ամբողջացման: 2009-ին շինարարութիւնը իր լրումին կը հասնի, եւ 2011-ին եկեղեցին կ'օծուի եւ կ'անուանակուի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ:

Յակաւին կայ անելի՛ն. տրիպայրը այսքանով չի բաւարարուիր եւ կը սկսի բանակցութիւններ վարել քաղաքապետարանին հետ, որպէսզի եկեղեցւոյ հանդիպակաց փողոցը նոյնպէս Սբ. Գրիգոր Լուսաւորիչ անուանուի:

«Եկեղեցու շինարարութեան կողքին անհրաժեշտ է հաւատք կերտել», կ'ըստ տերհայրը: Հաւատքի հասկացողութիւնը անոր համար ընդհանրական է: Ան կը հաւատայ քրիստոնէական արժանիքներուն, նաեւ ընկերային ու գաղութային կեանքին մէջ ազգային արժէքներուն ու գիտակցութեան:

«Անհրաժեշտ է հայուն մէջ վառ պահել անծնագոհութեան գիտակցութիւնը: Ամէն հայ պէտք է զգայ, որ հայկական գաղութը կը պահուի նուիրումովութեամբ եւ հայ կեանքին մէջ գործօն մասնակցութեամբ», կ'ըստ հոգեւոր հովիւը:

Հայկական գաղութին մէջ չկան կուսակցական կառույցներ, հետեւաբար հայ իրականութեան մէջ եկեղեցին դարձած է միակ կեդրոնատեղին, որ իր հովիւին հետ միասին կը հաւաքէ եւ իրարու կը միացնէ հայ գաղութին գաւակները: «Այս իմաստով գաղութը ինծի կը նայի ոչ միայն որպէս հոգեւոր հովիւ, այլեւ ազգային առաջնորդ, հետեւաբար պարտաւորութիւններս եւ պարտականութիւններս շատ են»:

Յէն փոքր ժպիտ մը որուագծուեցաւ տրիօր դէմքին վրայ, անոր ետին կայ ծանրաբեռնաճութիւն, եւ մերթ ընդ մերթ յուսահատութեան դրսեւորումներ. «Պէտք չէ մոռնալ, որ ես ալ մարդ եմ», շարունակեց ան:

Հայկական միօրեայ վարժարանը Կիրակի օրերը կը գործէ եկեղեցու գետնայարկ սրահին մէջ: Դասապահերը կը սկսին առաւօտեան ժամը տասնէ մինչեւ երեկոյեան ժամը վեց: Ուր տարեկանն մինչեւ վաթսուներեք տարիքի հայորդիներ կը մասնակցին հայերէն դասաւանդութիւններուն: Մտաւորապէս երեսուն հայեր կանոնաւոր կերպով կը հետեւին դասընթացներուն:

Տէր Խոսրով այսքանով բաւարարուած չէ: «Եթէ հայապահպանման մասին պիտի մտածենք, անհրաժեշտ է ունենալ ամենօրեայ



հայկական վարժարան: Հայոց լեզուի գործածութիւնը յատկապէս մեր սերունդի մօտ հետզհետէ կը նուազի: Նոյնիսկ երբ տուններուն մէջ հայերէն կը խօսուի մանուկներուն հետ, ընդհանրապէս տեղական լեզուով կամ ռուսերէնով կը պատասխանեն մեզի»: Ասիկա տրիօր ցաւերէն մէկն է, որուն համար կը տագնապի: «Եթէ մեր հասակը այսօր չգորացնենք, վաղը մեր ունեցածն ալ կը կորսուցնենք», կը հաստատէ ան:

Հայկական այսօրուան իրավիճակը իր իւրայատուկ տեղն ու որոշմը ունի Ռիկայի մէջ: Մէկ եկեղեցի մը՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ, որ հայուն հոգեւոր եւ ազգային պատուանդանն է, երկու խաչքար՝ մէկը եկեղեցու շրջափակին մէջ, իսկ միւսը՝ քաղաքի կեդրոնական մասին՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականացման 1700-ամեակին առիթով կառուցուած: Այս երկու խաչքարերը հայուն ապրող եւ ապրելու հրամայականներուն վկայութիւններն են: Բայց կայ նաեւ անշիկ: Երեսուցորս հայկական ճաշարան՝ «Արմենիա», «Աղթաւն» եւ ուրիշներ, որոնք կը գործեն մայրաքաղաքի տարբեր շրջաններուն մէջ եւ վստահաբար հպարտութիւն կը ներշնչեն հայուն մէջ:

Տէր Խոսրով աջալուծութեամբ կը հետեւի քաղաքական բոլոր իրադարձութիւններուն: «Թրքական գործօնը շատ զօրաւոր է Լաթվիոյ մէջ յատկապէս Տեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին», կ'ըստ ան: «Զմե գիտեր ինչպէ՞ս պէտք է կազմակերպուիլ այս բոլորին դիմաց»: Տէր Խոսրովին այս հարցադրումը, կ'ենթադրեմ, ոչ միայն իր, այլ նաեւ ինծի ու համայն հայութեան կը վերաբերի, որպէս մէկ մեծ մարտահրաւեր. «Ինչպէ՞ս պէտք է կազմակերպուիլ»:

Չեմ կրնար չմտածել, թէ որքա՞ն գունագեղ է հայկական սփիւռքը, որքա՞ն այլազան, եւ այս օրերուն նաեւ փոխուող իրականութիւն, երբ մայր հայրենիքէն արտասահման կ'անցնին մեծ թիւով հայեր:

Քայց գունագեղ, այլազան եւ փոխուող իրականութիւնները ունին մէկ հասարակ յայտարար, մեծ պարտականութիւն՝ հայապահպանում: Անհրաժեշտութիւն՝ հայը հայ պահելու, որովհետեւ ատիկա ոչ միայն այսօրուան, այլ նաեւ վաղուան գրաւականն է: Տէր Խոսրովի վրաստիճութենէ մեկնելով, հայկական իրականութիւնը կը կանգնի մեծ առաքելութեան դիմաց. արդարեւ, եթէ ապագան պիտի երաշխաւորենք, պէտք է սկսիք այսօրուան տունալները գուրգուրալէ:

Լիբանանեան շարժապատկերի արուեստի լաւ ներկայացուցիչներն Նատին Լապաքիի վերջին ժապաւենին խորագիրը ուսանելի պէտք է ըլլայ նաեւ հայուն համար այսօր: Լիբանանի քաղաքացիական պատերազմի մթնոլորտէն ետք ու անոր ստեղծած քաղաքական, ընկերային, կրօնական եւ մշակութային հանգուցային իրադարձութիւններէն ետք բեմադրիչը հարց կու տայ. «Եւ իմա դեպի



ո՞ր» (հայլա լա ուել), ասիկա վերածելով իր ժապաւենի անուան։  
 Թէէ շարժապատկերին խորագիրը լիբանանցիին ու անոր ապ-  
 րած իրականութեան մասին է, բայց մօտէն կ'առնչուի նաեւ հայուն  
 եւ անոր ապրած իրականութեան։ Դիտելով Ռիկայի հայկական իրա-  
 կանութիւնը եւ բոլոր մնացեալ իրականութիւնները սփիւռքի տա-  
 րածքին, անհրաժեշտ է, որ հարց տանք մենք մեզի. «Եւ հիմա դէպի  
 ո՞ր»:

Եթէ պահանջատիրութիւնն է մեծագոյն օրակարգը հայոց Ցեղա-  
 պանութեան 100-ամեակին, ուրեմն հայապահպանումը մեր ներհայ-  
 կական մեծագոյն հիմնահարցը պէտք է ըլլայ: Եւ հիմա դէպի ո՞ր  
 մեր պատմութեան այս մեծագոյն անկիւնադարձային առիթով ան-  
 պայման դէպի պահանջատիրութիւն ե՛ւ հայապահպանում: Այս եր-  
 կուքը իրարու հետ եւ իրարմով կամրջուած են, իրարմով կը գօրա-  
 նան ու մանաւանդ՝ կ'իրականանան:



Մինչ այդ Լաթվիայէն հայկական արծազանգները կը լեցնեն հա-  
 յու հոգին: Մէկ եկեղեցի, երկու խաչքար եւ երեսուցորս հայկական  
 ճաշարան: Հայուն շարունակականութեան գործօնին փոքր, բայց  
 կարեւոր կենդանի մէկ պատկերը, զոր պէտք է տանիք վաղուան:

## ՀԱՄԱՇԽԱՐԿԱՅԻՆ ԱՅՆՆԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅՈՒՄ, ԹԷ՛ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Պամաշխարհայնացումը, ըստ Ուլքիֆտեիայի, կը կատարուի տե-  
 սակետներու միջազգային-համաշխարհային ամբողջացումով, որ  
 արդիւնք է աշխարհի տարբեր տեսակետներու՝ արտադրողական,  
 վարափարախօսական եւ մշակութային արժէքներու փոխանակ-  
 ան: Պարզ բացատրութեամբ, համաշխարհայնացումը այն քայլն է,  
 որ կ'արագացնէ եւ կ'աւելցնէ համաշխարհային եւ միջպետական  
 ազգային եւ մշակութային արժէքներու փոխանակումներու գործըն-  
 թացը: Տեղեկատուութեան յառաջխաղացքը՝ ճանապարհորդու-  
 թեան արագացում, էլեկտրոնային հաղորդակցութեան գերզարգա-  
 ցում, ներառեալ համացանցը, զլիսաւոր տուեալներն են համաշխար-  
 հայնացման: Վերջինը կ'արտադրէ երկիրներու եւ հաւաքականու-  
 թիւներու միջեւ կախեալ ըլլալու վիճակները՝ տնտեսական եւ մշա-  
 կութային բնագաւառներուն մէջ:

Թէէ համաշխարհայնացումը սկսաւ թափ առնել 1990 թուական-  
 ներուն, սակայն պէտք է նայիլ պատմութեան, երբ երոպական ցա-  
 մաքամասնէն հետագօտողներ սկսան գտնել նոր աշխարհներ՝ միջին  
 դարերէն սկսեալ: 20-րդ դարուն սակայն համաշխարհայնացումը  
 սկսաւ ստանալ արագ եւ ուժգին թափ: Երկրորդ հազարամեակին՝  
 2000 թուականին, միջազգային տնտեսական-դրամատնային ֆոն-  
 տը կրցաւ որակել չորս տեսակի համաշխարհայնացման գործօններ՝  
 տնտեսական եւ վաճառականական, ֆինանսական ներդրումներու,  
 ժողովուրդներու տեղաշարժներ՝ տարբեր պատճառներով, տեղեկա-  
 տուութեան ընդհանրացում եւ սերմանում:

Ներկայ ժամանակներուն մեծ մարտահրաւեր մըն է կլիմայի փո-  
 փոխութիւնը՝ միջպետական ու միջազգային ջուրերու եւ օդի ապա-  
 կանումը եւ ովկիանոսներու տարածքներու յաւելեալ գործածու-  
 թիւնը: Այս բոլորը նաեւ գործօն տուեալներ են, որոնք կ'ազդեն հա-  
 մաշխարհայնացման արագընթաց զարգացման վրայ: Համաշխար-  
 հայնացման գործընթացը իր նկարագրային դրոշմը կը դնէ տնտե-  
 սական աշխատանքային գործարարներու վրայ՝ տնտեսական եւ  
 ընկերամշակութային նկարագրի կերտման, ինչպէս նաեւ ընու-  
 թեան եւ շրջապատի զարգացման:

Աստուածաբան Ալեքսանտր Շուայթցըր համաշխարհայնացած աշխարհը կը նկարագրէ, որպէս «սահմաններու չքացում», ինչ որ կ'ենթադրէ անհատին ու անոր անհատականութեան ապահովութեան եւ հեղինակութեան նուազում եւ անհետացում: Շուայթցըր կը շարունակէ՝ մատնանշելով, թէ համաշխարհայնացած աշխարհը եւ իր բոլոր գործօնները իրենց ազդեցութիւնը ունեցած են հաւաքականութիւններու կրօնական, տնտեսական եւ ընկերային կեանքերու վրայ աշխարհով մէկտեղ:

Ընկերաբան Ռիչըրտ Էրիքսըն կը հաւատայ, թէ ներկայ մարդկային աշխարհը շատ անելի լաւ եւ իրարու մէջ միաձուլուած է քան պատմութեան ընթացքին որեւէ ժամանակ: Այս իմաստով աշխարհը շատ անելի արագօրէն կը վերածուի եւ կ'ամփոփուի մէկ տեղի մէջ:

Համաշխարհայնացումը ընթացք մըն է, որ իր ազդեցութիւնը կ'ունենայ մարդկային կեանքին վրայ՝ քիչ մը ամէն տեղ: Էրիքսըն կը նկարագրէ այս իրավիճակը՝ համաշխարհայնացումը, դիտել տալով, որ բոլոր ընկերա-մշակութային գործօնները կ'օժանդակեն, որպէսզի տարածաշրջանային հեռաւորութիւնները նուազագոյնի հասնին կամ, այլ խօսքով՝ անկարելոր դառնան: Այս իրավիճակը ունի իր դրական եւ բացասական կողմերը:

Եթէ մարդիկ տարբեր շրջաններու եւ երկիրներու մէջ ապրելով հանդերձ պիտի կրնան վայելել տարբեր պատեհութիւններ եւ առիթներ, բայց եւ այնպէս նաեւ վտանգները եւ սպառնալիքները պիտի բաժնուին աշխարհին եւ իրարու մէջ: Որեւէ երկրի քաղաքական տնտեսական, կենսոլորտային ու այլ իրավիճակները իրենց ազդեցութիւնը պիտի ունենան ուրիշ տեղեր՝ անցնելով անմիջական սահմանները: Մնունդ, ապրելակերպ, երաժշտութիւն, ծանուցում, համաշխարհային գրականութիւն ու տակաւին բոլոր իրավիճակները կը զգտնեն ու կ'անցնին սահմանային բաժանումներու իրողականութիւններէն:

Եթէ համաշխարհայնացումը կը նկարագրուի առաւելաբար իբրև ճարտարաբանական եւ տնտեսական գործընթաց, բայց պէտք է նկատի առնել նաեւ այլ գործօններու ներգրաւուածութիւնը: Մարդկային իրաւանց հարցը, օրինակի համար, 20-րդ դարու երկրորդ կեսէն սկսեալ ընդհանրացաւ ամենէն զարգացած արեւմտեան քաղաքակրթութիւններու մէջ՝ հասնելով մինչեւ աղքատ եւ երրորդ աշխարհի հեռաւոր գիւղերու մէջ ապրող գիւղացիին:

Շուայթցըր կը շարունակէ իր վերլուծումը՝ շեշտելով համաշխարհայնացման ստեղծած փոփոխութեան եւ անոր որպէս արդիւնք՝ երկրութեան իրողականութիւնը: Ան կ'ըսէ, թէ ինքնութեան կորսուածութիւնը քաջալերեց մարդկութիւնը, որպէսզի փնտռէ իր անձը եւ իր

հաւաքականութիւնը: «Համաշխարհայինը ամբողջացած է տեղականով եւ անհատով», կ'ըսէ Շուայթցըր, եթէ մէկ կողմէ կայ անապահովութեան զգացումը եւ վտանգը, միւս կողմէ կայ տրամադրուածութիւնը հասնելու նպատակին՝ մարդկային կեանքի նշանակութեան եւ արժեքին: Տակաւին հեղինակութեան կորուստն ու չքացուց ճամբայ բացին ծայրայեղական շարժումներու՝ ըլլալ այդ կրօնական, ազգային եւ ցեղային իմաստով: Կրուաթիոյ եւ Սերպիոյ պատերազմները, սկովտիական անջատումի փորձերը՝ 1990 թուականներուն, Ֆրանսայի մէջ ներգաղթի օրէնքներու դէմ պայքարը, Աֆղանիստանի մէջ թալիպանական շարժումը, Հնդկաստանի մէջ հիւստու ազգայնամուլական շարժումները, իսլամաց(ած)ուած հայերու իրենց ինքնութեան վերադառնալու տենչը: Եւ տակաւին շատ մը ափրիկեան երկիրներու մէջ ականատես կ'ըլլանք զօրաւոր ցեղային զարթումներու իրենց քաղաքական իրավիճակներուն մէջ: Միացեալ Լատինականներու մէջ կան բազմաթիւ փոքրամասնութիւններ, որոնք կը պահանջեն իրենց մշակութային եւ քաղաքացիական իրաւունքները: Պակաւին կայ քաղաքական-քաղաքականացած իսլամութիւնը, որ նաեւ սկսած է զօրաւոր կերպով թափ առնել ներկայ աշխարհին մէջ՝ ներառեալ միջին արեւելքի:

Ներկայ օրերու այս քաղաքական-քաղաքացիական իրավիճակը, որ դժուար է սահմանել անցեալի աջի եւ ձախի հասկացողութիւններով, մեկնաբանուած է տարբեր տեսութիւններով շատ մը գիտնականներու եւ տեղեկատուութեան մարզի մէջ հետազօտողներու կողմէ: Էրիքսըն այս իմաստով կը փորձէ սահմանել քաղաքական ինքնութեան մտածողութիւնը, որ կը յայտնուի տարբեր երեւոյթներու մէջ: Եթէ մէկ կողմէ կան անջատողական-ազգայնական շարժումները, նաեւ կան փոքրամասնութիւններն ու անոնց իրաւազրկուած իրավիճակները: Այս քաղաքական մտածողութեան տարբերակները կարելի է ընդլայնել տակաւին: Մենատիրական ձգտումները՝ երկիրներու մէջ տիրելու եւ պահելու բնական հարստութիւնները, քորթած են կրօնական, միջազգային, բայց նաեւ շրջանային իրավիճակները:

Շատ մը ընկերաբաններ կը փորձեն տեսնել քաղաքական ինքնութիւնը, որպէս հակազդեցութիւն ներկայ օրերու համաշխարհայնացման յառաջացուցած ազատութեան եւ անհատականութեան միտումներու, ուրիշներ՝ որպէս տկարին պաշտպանութիւնը օտար թափանցումներէն, նաեւ նկատի կ'առնուին հոգեբանական գործօնները, ուր կը նկատուին վերադարձի փորձեր՝ պահելու համար ինքնութիւնը եւ արմատները այս հսկայ փոփոխութիւններու տարափին մէջ: Կան նաեւ մտածողներ, որոնք այս գործընթացին մէջ կը տեսնեն իսկական ծնունդը ընկերվարութեան:

Այս բոլոր վերլուծումները իրական կան ենթահող ունենալով հաս-  
դերձ բաւական դժուար է իրավիճակը բացատրել և ներկայացնել  
մէկ պարունակի մէջ: Յստակ սկսած է դառնալ այն, որ եթէ մէկ կող-  
մէ համաշխարհայնացումը կը ստեղծէ միացնող ուժը, միւս կողմ  
նոյն այս ուժը նաեւ քաղաքական ինքնութեան ճգտումները կը տա-  
րանջատէ: Նոյն իրավիճակին հակադիր երկու երեսներն են:

Ռոյալտո Ռոպրթսըն՝ ընկերաբան եւ համաշխարհայնացման տե-  
սաբան, կը հաստատէ, որ համաշխարհայնացումը կը ստեղծէ տե-  
ղակայնացման ենթահողը, եւ աշխարհագրական եւ սահմանազ-  
ուած երկիրներու մէջ մէջտեղ կու գան ազգային եւ անշատողական  
ինքնութիւններ, որոնք կը գիտակցին իրենց լեզուին, մշակոյթին,  
կրօնին-հաւատքին ու տակաւին ցեղային ինքնապահպանման եւ  
ապահովութեան կանոններուն: Ռոպրթսըն այս իրողական վիճակ-  
ները կը բնորոշէ իբրեւ քաղաքական ինքնութեան ապահովութիւն  
մը համաշխարհայնացած կարգավիճակին մէջ ստեղծած: Լեռնա-  
յին Դարաբաղը, ջրտական հարցը ու տակաւին Կիպրոսի թըջաբան  
բաժնի իրավիճակները, իւրաքանչիւրը ինքն իր պարունակին մէջ  
իրական վկայութիւնն է այս տեսութեան: Քաղաքական այս ինքնու-  
թիւնը՝ տեղական-համաշխարհայնացած հակադիր իրականութեան  
մէջ, կը յառաջացնէ մրցակցութեան իրավիճակը, որ կը դառնայ մոլի  
ուժը հաւաքական ինքնութեան հասկացողութեամբ, այս ոչ միայն  
տնտեսական եւ քաղաքական առումով, այլ նաեւ ճանաչումի եւ ինք-  
նճանաչումի եւ այլ գործօններու մէջ:

Ու տակաւին, այս մրցակցութենէն մեկնելով յառաջ կու գան տար-  
բերութիւններու իրավիճակները հաւաքական կենքին մէջ: Տարբե-  
րութիւններ, որոնք եթէ մէկ կողմէ կը բախին իրարու, բայց նաեւ կը  
մղեն ամրապնդելու ինքնութեան հասկացողութիւնը: Նոյն այս ինք-  
նութեան հասկացողութիւնը եւ կերտումը կը ստեղծէ նոյն խմբակին  
մէջ ըլլալու եւ ապրելու կենցաղը, որպէս իւրայատուկ եւ նոյնաման  
նկարագիր եւ ապրելակերպ: Այս նկարագիրը եւ ապրելակերպը եթէ  
մէկ կողմէ կ'ապրեցնէ անցեալի ցաւը եւ անարդարութիւնը, բայց  
նաեւ կ'օգնէ, որպէսզի անհատը կամբողջի իր պատմութեան հետ  
Անհատը եւ իր փորձառութիւնը կը կապուին իր հաւաքականութեան  
պատմութեան եւ փորձառութեան հետ ու ետը կը փոխակերպուի  
«մեր»ի եւ «մենք»ի:

Տնտեսագետ Պիլ Միշել կը հաստատէ, որ նոր ճարտարարուեստը  
եթէ խոստացաւ հարստութիւն, լաւորակ եւ ապահով կեանք, բայց  
չամբողջացաւ այդ բոլորը աշխարհի 7 միլիառ ժողովուրդի մեծա-  
մասնութեան համար, որոնք այսօր կը տառապին անբաւարարութե-  
նէ եւ չգոյութենէ: Ան կ'ըսէ. «Ճարտարարուեստը փոխանակ յառա-

յացնելու մարդկային կեանքը, փոխակերպէ մարդը անմարդկային  
տեսակներով: Բայց միեւնոյն ժամանակ նոյն այս ճարտարարուես-  
տը ստեղծեց եւ արտադրեց իրարու կապուած եւ իրարու շողկապ-  
ուած աշխարհ մը, որ նաեւ եղաւ մոլի ուժը համաշխարհայնաց-  
ման»:

Իրականութիւն է, թէ ներկայ օրերու երիտասարդին համար այս  
ճարտարարուեստը եղած է հաղորդակցութեան ընդունելի միջոց:  
Յեղեկատուութիւնը համացանցին վրայ ստեղծած է նոր հաւաքա-  
կանութիւններ, որոնք նոյն ձեւով կը հաղորդակցին իրարու հետ: Այս  
համաշխարհայնացած երիտասարդական մշակոյթը նաեւ մէկ լա-  
ւազոյն միջոցն է նոր սերունդին համար գտնելու-վերագտնելու իր  
ինքնութիւնը՝ ազգային եւ հոգեկան իմաստով: Ի զուր չէ, որ փիլիսո-  
փայութեան մասնագետ՝ Մարթին Պարպերո, ներկայ տեղեկատուու-  
թիւնը կը նկատէ այնտեղը, ուր ներկայ օրերու մշակոյթը կ'արմա-  
տանայ իր հոգեկան գիտակցութեամբ եւ ազգային հպարտու-  
թեամբ:

Յոս արժէ ընդգծել անձնական-ընտանեկան ապրուած փորձա-  
ռութիւն մը: Տղաս, որ 20 տարեկան երիտասարդական հանգրուանի  
սմմին հայ մըն է, ընկերային հաւաքոյթի մը ընթացքին ծանօթացած  
է Ֆրանսահայ տարեկից երիտասարդի մը, որ միայն գիտէ, թէ հայ է  
առանց հայերէն կարենալ խօսելու: Երիտասարդը ցաւ յայտնած է  
տղուս, թէ իր ծնողքը զինք հայ չէն մեծցուցած: Եթէ Ֆրանսահայ  
երիտասարդին համար հայերէն լեզուն եւ ինքնութիւնը անդրադարձ  
մըն էր իր կեանքի եւութեանը, բայց նոյնքան նաեւ տղուս համար վե-  
րահաստատում մըն էր այն անհրաժեշտութեան, որ ինքնութեան  
վրայ հիմնէ իր կեանքի առաջարկանքները:

Երիջըն ունի բացատրութիւնը այս երեւոյթին:

Քաղաքական-ազգային ինքնութեան հասկացողութիւնը յաճախ  
անչուած է «հին աւանդէ» վերապրած իրականութեան հետ՝ կրօ-  
նական, ցեղային եւ կամ տեղական կապուածութեան հասկացողու-  
թիւններու մէջէն: Երիջըն կ'ըսէ, թէ այս երեւոյթին դիմաց յաճախ  
ընկարկուած է՝ իրաւացիօրէն եւ ճշգրտապէս, թէ ինչքան որ քաղա-  
քական-ազգային ինքնութիւնը ունի աւանդական պիտակ, բայց նա-  
եւ կայ չերեցող մասը, որ այժմեականութեան հետ առնչուած է ու  
անոր արդիւնքն է: Այն բոլոր զօրաւոր զգացումները, որոնք առնչ-  
ուած են սովորութիւններու հետ՝ մշակոյթ, կրօն թէ այլ, զօրաշարժի  
կ'ենթարկուին երբ մարդիկ կ'անդրադառնան, թէ այդ բոլորը պաշա-  
րուով եւ կորսուելու վիճակի մէջ է:

Չունց ջուրին մէջ շանդարձանք ջուրին արժեքին: Երբ ջուրն  
իլուր է, կը զգայ անոր անհրաժեշտութիւնը: Երիջըն կ'եզրակացնէ,

թէ քաղաքական ինքնութիւնը հասարակաց զգացում է, եթէ մէկ կողմէ աւանդական բայց նաեւ այժմեական: Այս համաշխարհայնացած աշխարհին մէջ եթէ կայ զայն կորսնցնելու փորձառութիւնը, բայց նաեւ առկայ է գիտակցութիւնը զայն պահելու: Որովհետեւ մարդը կ'ուզէ գտնել-վերագտնել իր ապահովութիւնը: Եւ այստեղէն պէտք է փորձել հասկնալ, թէ ինչո՞ւ ցեղային ազգայնականութիւնը, փոքրամասնական շարժումները, քաղաքական կրօնները կու տան ապահովութիւն՝ ինքնագիտակցութեան եւ ինքնութեան արժեքին նկատմամբ, եւ ինչ որ կրնայ առկայ մնալ աշխարհի շատ մը շրջաններու մէջ մինչեւ որ աւելի լաւ շարժում մը յառաջ գայ:

Ինչպէ՞ս այս բոլոր տեսադաշտերը եւ տեսանկիւնները պէտք է վերանայիլ հայկական պրիսմակէն: Համաշխարհայնացման այս սակայ սպառնալիքին մէջ եւ դեմ յանդիման ու տեղեկատուութեան աշխարհի յառաջխաղացքի հեւքին մէջ, ուր երիտասարդական մշակոյթին հետ շատ դժուար կ'ըլլայ քայլ պահել հայ տղ սերունդին ազգային-մշակութային, լեզուական ու քրիստոնեական ինքնութիւնը պահելու հրամայականովը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետի ընդգծումը յստակ է եւ ուսանելի: «Համաշխարհայնացման հետ բանակցութիւնները թէ խոստումնալից են եւ միեւնոյն ժամանակ վտանգաւոր: Եթէ մէկ կողմէ կրնայ ձեւագեղծել եւ կերպարանափոխել՝ միեւնոյն ժամանակ հարստացնել: Եթէ համաշխարհայնացման իրավիճակին հետ մեր կապակցութիւնը եւ առնչութիւնը ընենք խորունկ ինքնագիտակցութեամբ, թէ մենք ով ենք որպէս հայեր, այս մէկը կրնայ հարստացնել մեր մշակոյթը եւ զայն վերածել աւելի ստեղծագործի եւ ուժականի: Ծիշոյ յարաբերութիւնը համաշխարհայնացումի հետ պիտի մղէ մեր մշակոյթը, որպէսզի վերանորոգէ ինքզինք: Եւ վերանորոգուած մշակոյթը եւ ինքնութիւնը պիտի քաջալերէ հայը, որպէսզի աւելի լաւ շաղկապուի ուրիշ մշակոյթներու հետ: Եւ մշակոյթ մը, որ չի վերանորոգեր ինքզինք, դատապարտուած է մահուան: Եւ նոյնքան նաեւ ժողովուրդ մը, որ հաւատարիմ չի մնար իր մշակոյթին, պիտի անհետանայ պատմութեան սլացքէն»:

Համաշխարհայնացումը իրավիճակ մըն է, որմէ կարելի չէ խուսափիլ, ո՞չ ալ կարելի է անտեսել զայն: Ներկայ աշխարհի դրուածքն է ասիկա, եւ հայը նոյնպէս կոչուած է քայլ պահելու ժամանակին հետ: Այս իմաստով արժէ համաշխարհայնացման նայիլ մէկ կողմէ զգուշաւորութեամբ, բայց նաեւ օգտունելու տրամադրութեամբ, որ կրնայ հայը հարստացնել: Տեղեկատուութեան ստեղծած ներկայ օրերու համաշխարհայնացած երիտասարդական մշակոյթը պէտք է օգտագործել՝ հայ երիտասարդին ազգային-քաղաքական ինքնութիւնը

մէկ կողմէ պահելու, բայց նաեւ շարունակելու եւ զարգացնելու գործընթացով:

Համաշխարհայնացման հասկացողութիւնը պէտք չէ ընկալել, որպէս հրեշային եւ քանդիչ երեւոյթ մը միայն, ուր ազգային արժեքներն ու մշակութային ինքնութիւնն կը վերանայ: Համաշխարհայնացումը իրականութիւն մըն է այսօրուան աշխարհին համար, որուն հետ ճիշդ յարաբերութիւն մը կրնայ վերանորոգել հայը եւ ի մասնաւորի երիտասարդը, նաեւ անոր ազգային-քաղաքական մշակութային ինքնութիւնը: Եւ վերանորոգուած ինքնութեամբ է, որ հայը պիտի կրնայ նայիլ վաղուան:

## ՀԱՅՈՒՆ ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒՄՆ ՀԵՒՔԸ

Բայց արդեօք միայն Կիրակի օրերն են հայուն հեւը:

Երեւի շաբթուան բոլոր օրերը, բայց այս հեւը ապրեցայ, երբ Կիրակի, 5 Յոկտեմբերին ամբողջ օր մը անցուցի Սբ. Սարգիս եկեղեցւոյ մէջ, Տալաս, Միացեալ Նահանգներ:

Եւ Կիրակի օրուան մը հեւքն եր, զոր հայկական փոքր գաղութը կ'ուզէ իրաքանչիւր վայրկեան լաւապէս ապրիլ, որպէսզի օգտակար արդիւնք ունենայ՝ ըլլայ անհատական, բայց մանաւանդ հաւաքական կեանքերուն համար: Ամերիկայի մէջ եւ երեւի քիչ մը ամէն տեղ, այս օրերուն խճողուած յայտագիրները եւ առօրեայ կեանքի պահանջները առիթ չեն տար, որ մարդ մտածէ ինքն իր մասին, բայց նաեւ իր մշակոյթին, լեզուին ու հաւատքին:

«Յայտութիւնը կ'ուզէմ պահել իմ հոգեւոր ծառայութեանս միջոցով»: Ղեւնդ քահանայ Աճառեանը հոգեւոր հովիւն է Սբ. Սարգիս Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ: Գազիւ երեսուն տարիքը բոլորած է, բայց արդէն մեծ նուիրումով լծուած է իր գաղութին հոգեւոր եւ ազգային ծառայութեան: Օհայօ ծնած է՝ իտալացի մօրմէ եւ հայ հօրմէ: Մօրը քաջալերանքը մեծ եղած է զինք հոգեւոր ծառայութեան մղելու իմաստով, բայց նաեւ կայ հայկականութիւնը: Իտալացի մայրը համոզումով կառչած է իր ամուսնոյն ազգային ինքնութեան եւ իր զաւակը մղած է այդ ուղղութեամբ, այնքան որ Ղեւնդ քահանան հպարտութեամբ կ'ըսէ. «Յայերէնը շատ գեղեցիկ լեզու է»: Բայց նաեւ. «Լեզուն կ'որոշէ մարդուն եւ հաւաքականութեան մշակոյթը եւ կենցաղը»:

Եւ այս համոզմունքով, ան կամաց-կամաց սորված է հայերէն, բայց նաեւ ամուսնանալով Յայաստանէն հայուհիի մը հետ, կրցած է կազմել հայկական տուն մը, ուր միայն հայերէն կը խօսին:

Տալասի հայ գաղութը կը հաշուէ չորս հարիւր յիսուն ընտանիք: Ջախջախիչ մեծամասնութիւնը եկած է միջին արեւելքէն, նաեւ Թուրքիայէն: Ազգային ինքնութեամբ փխրուն հաւաքականութիւն է, որ եկեղեցւոյ շուրջ համախմբուելով հեւքի մէջ է՝ հայութիւնը պահելու տեսլականով:

Իսկ հեւքը:

«Փորձեցինք շաբաթ օրերը մանուկները եկեղեցի բերել, որպէսզի հայերէն սորվեցնենք: Չյաջողեցանք, գործնական պատճառներով»։ Բայց այդ «յաջողիլը» չէ յուսահատեցուցած տերհայրը եւ ժողովուրդը: «Կիրակի օրերը որոշեցինք զիրենք եկեղեցի բերել. թե՛ հայերէն կը սորվեցնենք եւ թե՛ Աստուածաշունչի դաստիարակութիւն»:



Եկեղեցական Սբ. պատարագի ժամանակ աւելի քան երեսուն մանուկ-պատանիներ մտան եկեղեցի: Իրենց Կիրակի օրուան դասապահերը ամբողջացնելէ տեղ, բոլորն ալ կը մասնակցին եկեղեցական արարողութեան: Բայց ուշագրաւ եր այն, որ Ղեւնդ քահանան պատարագի ընթացքին հրաւիրեց պգտիկները համախմբուելու խորանին չորս կողմը եւ ծալլապատիկ նստեցնելով զիրենք սկսաւ խօսիլ եւ պատմութիւն պատմել: «Յիսուս ալ առակներով խօսեցաւ մարդոց հետ, որպէսզի հասկնան», ըսաւ տերհայրը՝ շեշտելով. «Պէտք է մանուկները եկեղեցի բերենք, որպէսզի ուրիշ տեղ չերթան»: Ու չուշացաւ տերիօր երիտասարդական խանդավառութեամբ դիպուկ կատակը. «Մենք շատ պաշտօնական ենք: Արժէ քիչ մը փոխել եւ փոխուիլ»:

Եւ Կիրակին շարունակուեցաւ Տալասի հայկական եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ մէջ եղողները մեծ անձկութեամբ լսեցին էլոյթս՝ «Քրիստոնեայ համայնքներու իրավիճակը ներկայ միջին արեւելքի տագնապներու ընթացքին» նիւթին մասին: Թճէ կը լսէին հետաքրքրութեամբ, բայց նաեւ կը տեսնէր կարօտը եւ մտահոգութիւնը իրենց այբերուն մէջ: Բայց չէ՞, որ կեանքեր ապրած են իրաքանչիւրը այս միջին արեւելքի երկիրներուն մէջ: Պէլոյթը, Գալուպը, Ղամակոյթը,

Պաղտատը, Պոլիսը ու տակալին: Երախտապարտ են իրենց ծնողա վայրերուն, ուր իրենց ստացած դաստիարակութիւնը այսօր իւրաքանչիւրը ի սպաս կը դնէ իրենց «նոր գաղութի» յառաջխաղացքին համար: Նոյն սփիւռքահայուն հեւքն է ու այս հեւքին ստեղծած տաղանապը, որ կը շարունակուի եւ երեւի աւելի արագ, բայց նաեւ այլոյժ:



Հաւաքական ճաշէն տք կային երգչախումբի եւ պարախումբի փորձերը՝ պատրաստուելու համար վերամուտի գեղարուեստական ու հայկական տոհմիկ երեկոյին: Հետեւեցայ երիտասարդներուն եւ պատանիներուն երգին ու պարին: Եթէ մէկ կողմէ կար ուրախութիւն, բայց նաեւ հպարտութիւն: Եւ այս հեւքոտ կեանքը աւելիով կ'ամրացնէր իրենց մէջ հայուն հպարտութիւնը:

Տէրհայրը հաւատացողն է, թէ ազգային ինքնութիւնը եւ քրիստոնէական հաւատքը հայուն նկարագիրին անբաժանելի մասնիկներն են: «Չես կրնար իրարմէ բաժնել», ըսաւ ան: Բայց նոյնպէս մտահոգ է հայուն «կոտորակուած» վիճակով: «Պէտք է մտածենք որպէս մէկ միաւոր երբ կը խօսինք գաղութին մասին»:

Եւ Տալասի մէջ ալ, սփիւռքեան մեր միա գաղութներու նման, իւրաքանչիւր անհատը կ'ուզէ կառնիլ իր «նմաններուն»՝ իր նախկին երկրին ինքնութեան եւ կենցաղներուն: Եւ այս ալ հայուն հեւքին մէկ անբաժան մասն է: Իւրաքանչիւր հայ իր ազգային ինքնութեան հետ կը փնտռէ իր «Պէյրութին հմայքները», «մեր Հալէպը», «Պաղտատի սրմաւենիները», «Պոլսոյ Պոսֆորը» եւ տակալին: Իւրաքանչիւր տուած է նկարագիր եւ ոճ, որ կերտած է նաեւ նկարագիր եւ մշակոյթ՝ դառնալով իւրաքանչիւր սփիւռքահայուն հոգեհատորը:

Տալասի մէջ մէկ կողմէ ապրեցայ հայուն Կիրակի օրուան հեւքը, բայց նաեւ սիրեցի գայն: Գունաւոր խճանկար մը, ուր իւրաքանչիւրը իր գոյնով եւ րոյրով մէկ գեղեցկութիւն մը կ'աւելցնէր հայուն համընդհանուր գոյապատկերին մէջ: Բայց այս հեւքը նաեւ ապրիլ է եւ սպրեցնող: Թէկուզ հեռու՝ այսպէս ըսած աշխարհի մէկ անկիւնը, բայց շարժուն վիճակ մըն է, որ կենդանութիւն կը շնորհէ: Եւ այս կենդանութիւնն է, որ հայը պիտի ապրեցնէ:

Տէր Ղեւոնդ իր երիտասարդական աւիշով եւ ուժով կը սիրէ այս սպրիլը եւ ապրեցնող վիճակը: «Առաքեալ կը նշանակէ առաջ երթալ թառուկ առաքելութեամբ: Պէտք է հայուն երթալ եւ զինք գտնել ու պահել»: Հայուն հեւքն է այս: Առաջ երթալ եւ հայը գտնել, բայց նաեւ պահել: Պահել իր ազգային ու քրիստոնէական ինքնութեամբ: Եթէ Տալասի մէջ հեւքի օրը Կիրակին է, բայց հայուն հեւքը ամէն օր է եւ ամէն տեղ: Եւ հայուն հեւքը նոյն հայը գտնելն ու պահելն է:

# ՀԵՐԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍՊՆԵԱԿԸ

«Այո, Հրա՛յր, ճի՛շդ է, որ կը մեծնաս»

Իւրաքանչիւր 8 Փետրուարին՝ տարեդարձիս օրը, Զերի Գուն տաքծեան իրեն յատուկ զուարթ տրամադրութեամբ չէր մոռնալ շնորհատուրել զիս, եւ ասիկա տարիներ շարունակ: Մեր միջեւ կար ազգականական կապ՝ հօրենական մեծ մօրս կողմէ, որ Գունտաքծեան էր: Զերիին համար հարազատը սրտի հատոր էր, որ կու տար իրեն յատուկ հարստութիւն, որով ան իր կեանքին մէջ ներդրում կը կատարեր մարդկային հաղորդակցութեան եւ յարաբերութեան ընդ մէջէն:

Զերիին շնորհատուրելու ոճն ու ընթացքը կը տարբերէր իւրաքանչիւր տարի: Եթէ կար բացիկը, բայց նաեւ հեռատիպն ու հեռաձայնը Իսկ նախորդ տարուան իր կողմէ ինծի եղած վերջին շնորհատուրութիւնները, չէմ գիտեր ինչ տրամաբանութեամբ եւ մտածելակերպով զիս կը ղեկին կեանքի մէկ իրական պատկերին դէմ յանդիման: «Այո, Զրա՛յր, ճի՛շդ է, որ կը մեծնաս»:

Մեծնալը ոչ միայն տարիքով է, այլ իւրաքանչիւր անհատի կեանքին մէջ մէկը միւսին տեսէն գլորուող իրականութիւններու շարանով, որուն կազմութեան ընթացքին տարիներուն թիւերը կը բարձրանան՝ առանց ետդարձի կարելիութեան:

Մեր ճեպեճեան-Գունտաքծեան գերդաստանին մէջ կայ տոհմապետի դրութիւնը, եւ իւրաքանչիւր զարմիկ ունէր իր դիրքին տիրանալու եւ հասնելու առիթը: Զերի Գունտաքծեան, որ մեր ընտանիքի երեք սերունդին վերջին ներկայացուցիչն էր, նստաւ այդ տոհմապետի աթոռին վրայ վերջին անգի քան տասը տարիներուն: Երեք սերունդին պատկանելու իրականութիւնը իրեն կու տար նաեւ հոգեկան գոհացում եւ ուրախութիւն, եւ միշտ չէր մոռնար իրեն յատուկ սրամտութեամբ եւ կատակով մեզի յիշեցնելու. «Խօսքս մտիկ պետք է ընէք, եւ եմ տոհմապետը»:

Զերիին իր կեանքին մէջ շատ գեղեցիկ կերպով կրցաւ կամրջել հայկական ու լիբանանեան (նաեւ արաբական) արժեքները, որոնք իր քովանդակ կեանքին համար եղան գիտակցութիւն: Ան այս գիտակցութիւնը դրաւ իր մասնագիտական եւ ասպարեզային կեանքին մէջ եւ դարձաւ անոր/անոնց ջատագովը: Ան «վազեց» իր ոսպնեակին հետ՝ հոս ու հոն, թէ՛ հայկական ու արաբական, եւ թէ միջազգային աշխարհներ: Եւ ան վազեց ծիու մը ուժով ու արագութեամբ, այն-

քան, որ անոր տրուեցաւ «The horse» (ծին) մակդիրը: Ան միջազգային դիրքի ու համբաւի հասաւ համաշխարհային լրատուական-տեղեկատուական ցանցին մէջ՝ զրաւելով մեծ վարկ իր մատուցած անսակարկ ու արհեստավարժ ծառայութեան համար, բայց նաեւ հատու հայկական մամուլին, լիբանանեանին ու արաբականին՝ միշտ տալով շատ անելին: Զերի նկարեց իւրաքանչիւր դրուագ, անհատ, սոցիալ անպայմանօրէն արժէք: Ան իր ոսպնեակին մէջ կրցաւ ղեկ մտրք, բայց նաեւ հոգի, եւ մտքին ու հոգիին ընդմէջէն նկարեց հայկական ու լիբանանեան-արաբական ապրող իրավիճակները, որոնք դարձան հարազատ վկայութիւնը այս երկու իրականութիւններու ապրող եւ տրոփող սրտերուն ու անոնց արդար պահանջատիրութեան:

Ամերիկան Զերի Գունտաքծեանին համար եղաւ միայն նստավայր իր սիրտը չկրցաւ ղեկել Նիւ Եորքի շէնշող եւ հմայք սփռուկանքին մէջ: Պէլուրթը մնաց իր սրտին նստավայրը, եւ չվարանեցաւ իր հարազատներուն ըսել. «Ես Պէլուրթ պիտի թաղուիմ»:

Զերիին համար ամէնէն մեծ հպարտութեան առիթը եղաւ նկարել հայկական եռագոյն դրօշակին առաջին անգամ ծածանիլը Միացեալ



կնդրուատեղիին մէջ Նիւ Եորք՝ խոստովանելով, որ «այս մէկը տարբեր է»: Զերիին իր նկարին մէջ ո՛չ միայն վարդեց եռագոյնը, այլ նաեւ նոյն այդ դրօշին հպարտութիւնը: Զպարտութիւն մը, որուն հետ եւ որուն համար, Զերիին շարունակեց ապրիլ մինչեւ իր յոգնած սիրտը դադարեցաւ «ծիու» մը նման «վազել»:

Կարելի չէր Նիւ Եորք այցելել առանց Զերիին տեսնելու: Թայց իմ վերջին այցելութիւնս՝ Մայիսին, եղաւ ծեուձ մը անկատար, որովհետեւ Զերիին չկար, բայց նաեւ որովհետեւ ան չհասաւ «Պէլուրթ թաղուելու» իր փափաքին:

Զերի Գունտաքծեանի ան-

վերջ բաժանումով փակուեցաւ մեր գերդաստանին այսպէս ըստ երեց սերունդին, այլ խօսքով՝ «վերջին մոհիկանին» պատմութիւնը Պատմութիւն մը, որ լեցուն էր արժէքներու հասկացողութեամբ, բայց նաեւ նոյն այդ արժէքներուն համար վազող ու տրոփող սիրտով:

Այո՛ Յերի, ճիշդ է, որ ես ալ կը մեծնամ, բայց կը մեծնամ ջանալով գիտակցիլ ու ապրիլ այն արժէքին համար, որ դուն միշտ տարրեր գտար: Դուն հայկական ոսպնեակիդ մէջէն հանեցիր պատկերներ, որոնք մեզ մեծցուցին նոյն այս տարբերին գիտակցութեամբ, բայց նաեւ հպարտութեամբ:

Դերի Գունտաքճեանի հայկական ոսպնեակը՝ ապրող ու ապրեցող հայկական պատկերներով լի: Պատկերներ, որոնք տակաւին կը վազեն ու պետք է շարունակեն վազել:

## ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ.

### «ՔԵՍԱՊ ԷԼ ԺԵՄԻԼ»

(ԳԵՂԵՑԻԿ ՔԵՍԱՊԸ)

Յօրեղբայրս՝ տոբջ. Բոպեր ճեպեճեան, կառչած մնաց սուրիական հայրենքին, նոյնիսկ երբ իր հարազատները (ներառեալ իր զավակները) ձգեցին երկիրը ու գաղթեցին: Եթէ մէկ կողմէ հաւատաց հայկալ բաղաճին, որպէս սփիւռքահայ կարեւոր կռուանի, բայց նաեւ ուներ համակ սեր եւ կապուածութիւն Քեսապին, յատկապէս Էքիզօլուիին: Այս սերը իրեն համար շատ յստակ եւ շեշտուած էր այնքան, որ ան նաեւ որոշեց թաղուիլ Քեսապի մէջ, եւ այդպէս ալ եղաւ:

Գիտական-բժշկական մասնագիտութեան առջնութիւն, հօրեղբայրս նաեւ ուներ գեղանկարչական (ու տակաւին այլ) արժանիքներ: Ան աշակերտած էր հայազգի մեծանուն գեղանկարիչ Արմիսի՝ վեր. Արմենակ Միսիրեանի, որուն վարժութիւններուն ու ցուցմունքներուն հետ զարգացուցած էր այս արուեստը: 15 Յոկտեմբեր 1984-ին, պետական հովանաւորութեամբ, ան կազմակերպեց գեղանկարչական իր գործերուն ցուցահանդէսը Յալէպի թանգարանին մէջ, ուր ցուցադրուեցան իր բոլոր գործերը՝ նուիրուած Քեսապին: Գմոռցաւ

իր աւերները արաբերէնով տպելու եւ իր ցուցահանդէսը «Քեսապ էլ ժամիկ» (գեղեցիկ Քեսապ) կոչելու: Ենթակայ էի ցուցահանդէսին յարցումին, Յալէպի մէջ, բայց «Գեղեցիկ Քեսապի» մէջ կար աւելին, կար նաեւ իմ պատմութիւնս:

Յօրեղբօրս անկարանը



Էքիզօլուիս



Եղիզուլու գիւղէն քիչ մըն ալ անդին՝ Մեղրածորի բարձունքին վրայ կանգնած, պարզ ու գեղջկական տուն մըն է: Մանկութեանս եւ պատանեկութեանս տարիներուն ամբաս մեր արձակուրդները, նաև քիչ մըն ալ երկար, հոն կ'անցնէինք: Սովորութիւն էր, որ վերածուած էր ամէն ամառ կրկնուող իրավիճակի: Տունը ներկայ օրերու հանգստաւտ ոչ մէկ պայման ուներ, հօրեղբայրս ատիկա կը բացատրէ «գեղջկական» իրականութեամբ, ըսելով, թէ մթնոլորտին հետ պէտք էր պատշաճիլ, տակաւին, կար բնութեան ստեղծած արուեստին հետ ապրելու անհրաժեշտութիւնը: Զօրեղբայրս ժամանակը կ'անցընէր գծելով ու գծագրելով, իսկ ես քիչ մը խաղալով, բայց նա եւ ձանձրացնելով, նկատի ունենալով, որ տունը հեռու էր գիւղէն եւ չորս կողմերը (գէթ այն ժամանակ) ժխոր չկար:

Եղիզուլուի մուտքին կայ ակը, որուն ջուրը ոչ միայն կը զովայնէր, այլ նաեւ կը յագեցնէր: Պիտի խմիկնք ակին ջուրէն, երբ նոր կը հասնէիք գիւղ: Կարծեք գիւղ մտնելու առաջին նախապայմանն էր Ակին ջուրին հաւաքուած մասին մէջ միշտ կար ծմերով՝ մէկ կամ քանի մը հատ: Պաղ ջուրը լաւագոյն ձեւն էր ծմերուկը պաղեցնելու: Մենք պիտի խմէիք, բայց նաեւ հերթը պէտք էր տալ իշուկներուն: Գիւղը իր ամբողջական համերաշխ մթնոլորտին մէջ է, ուր իւրաքանչիւրը իր տեղը ուներ եւ միասին կը կազմէին գեղեցիկ ու խաղաղ մեծ հայկական համայնապատկեր մը:

Գիւղին մուտքին՝ ձախ կողմը, կար պրն. Մարտիրոսը, որ վարժապետ-մտաւորական էր եւ միեւնոյն ժամանակ ուներ պոստիկ խանութ մը: Պրն. Մարտիրոսին հետ հայրս եւ հօրեղբայրս պիտի գրուցէին ազգային նիւթերու, հայրենի մտահոգութիւններու եւ անպայմանօրէն հայապահպանումի մասին: Ազգային զօրաւոր նկարագրի տեղ անձն էր, որուն համար լեզուն եւ ինքնութիւնը ամէն բանէ վեր էին: Կը խօսէր արեւմտահայերէն, բայց անպայմանօրէն կար Զեսապի բարբառը, զոր երբեմն-երբեմն պիտի գործածէր եւ յիշեցնէր մեզի, թէ անհրաժեշտ էր զայն պահելը:


Եղիզուլու գիւղէն մինչեւ հօրեղբորս տունը՝ Մեղրածոր, ճամբան քարքարոտ էր: Չէին կուարապատած ու հասկնալի չէր, թէ ինչո՞ւ երեւի այդ ալ գեղջկական ըլլալու մասն էր: Կար իօրս մտահոգութիւնը. «Այս ճամբան ինքնաշարժին քսին համար լաւ չէ»: Կարգ մը տեղեր նոյնիսկ պէտք էր ինքնաշարժէն իջնել, որպէսզի նուազեցնէինք ծանրութիւնը՝ կանխելով մեծ փոսերուն մէջ աղէտ պատճառելու հաւանականութիւնը:

Պէտք էր միշտ բարեւէի Մանճա Լեյոյին, ու պիտի չուշանար իր խօսքը. «Տոցթորին էլքօր որդին է»: Լեյօ կը նշանակէր քոյր, իսկ Մանճան կրճատումն էր Մանճիկեանին: Մանկութեանս ու պատանեկութեանս օրերուն կը գծուէին իմ հոգիս մէջ մարդկային յարաբերութիւններու մէջ քոյր-մայր հաղորդականութեան հասկացողութիւնն ու գիտակցութիւնը: Իրականութիւններ, որոնք արժեքներ միայն լեցուցին մեր կեանքի պարունակին մէջ:

Մանճա Լեյոյին տունը հօրեղբորս տունէն քիչ մը առաջ էր՝ աջիւ: Դներ երկու կողմ: Անոնք անշարժ կեցած էին, կը կարծէի, թէ անոնք այլեւր սեւցած՝ ինծի կը նայէին: Եւ չէր ուշանար իօրս քաշքշուքը հարմիր չհանգիս, կրնայ վրադ յարձակիլ: Մանկապատանեկան հոգիի ու երեւակայութեանս մէջ Մանճա Լեյոյին կովերը քիչ մը վայն պատճառող իրականութիւններ էին: Պէտք էր մեծնայիք, որ գիտակցէիք, թէ որքան անմեղ կրնար ըլլալ կովուն նայուածքը:

Պէտք էր տան բարձունքին վրայէն պիտի դիտէի նախ ծորը: Այսպէս ըսած՝ ունի վայրի ու բնական գեղեցկութիւն մը, որ շատ խորատուկ է: Խիտ անտառներով եւ հեռուն երեւցող նեղ արահիտներ, որոնք կը տանէին դէպի վար ու խորը՝ Մեղրածորը: Գիւղին տղաքը՝ խոզ որսալու... Կը մտածէի, թէ արդեօք կը վերադառնայի՞ն, թէ՛ կրնային կորսուիլ: Ինծի համար Մեղրածորը կորսուող ու կորսուելու իրականութիւն էր կարծես, եւ չէի համարձակած երբեք հոն իջնել: Բայց դիտելով՝ կը վայելէի Պասիթի ծովեզերքը: Արեւուն ճառագայթներուն հետ ծովը կը ստանար փայլուն եւ շէնշող պատկեր: Ին կը լսէի իօրս բացատրութիւնը. «Լերան ետեւը Մուսա լեռն է»: Այս նախադասութեան պիտի յաջորդէին հերոսամարտի պատմութիւնը եւ հայուն հպարտութիւնը:

Վահան Թութիկեանը եւ իր ընտանիքը յառաջին կ'այցելէին Ի օ Ր է Ղ օ Ր Ս : Թատկանշական էին իրենց կարմրուկ դէմքերը, որ մէկ կողմէ առողջութեանս նշան էր, բայց նաեւ հայկական արիւն էր, որ դուրս կը մայթէր որպէս արորդ իրականութիւն:



Պեպի Ըեսապ

Մեղրածորեն էքիզօլուփ, շրջակայ գիւղերը եւ Քեսապ: Բնութիւնը, անտառները, անասունները, ջուրը, խնձորները՝ «Կոլտըն»ն ու «Չոբալըխճեան», բայց անպայմանօրէն իւրաքանչիւր հայ անհատը եւ քնտանիքը:

«Չոց ես» ու պատասխանը՝ «աղիոր եմ»: Եւ որոնց հետ մէկ-մէկ ասարեցայ մանկութենէ մինչեւ պատանեկութիւն տանող «աղիոր» օրերը: Եկեղեցիները եւ ազգային կառոյցները, նահատակներու արեամբ կանգուն մնացած եւ վերապրող իրականութիւնները, որոնք լեցուցին պատանեկան հոգիիս մէջ գերակայութիւնը, թէ ինչ կրնայ նշանակել վերապրիլը: Եւ վերապրիլը, որպէս հայ եւ որպէս մարդ ազգային ու մարդկային ինքնագիտակցութեամբ եւ արժէքներով:

Այսօր միայն հեռուէն կրնամ դիտել Քեսապը: Բռնագրաւումը ու տակաւին խափանարարական այլ արարքները հեռացուցին Քեսապը մեր ֆիզիքական տեսողաշտէն: Բայց արդեօք կրցա՞ն (ու տակաւին կրնա՞ն) հեռացնել զայն մեր հոգեկան ու իմացական հորիզոնէն:

Երեւի դարձեալ պետք է յիշեցնել, թէ Քեսապի ու շրջանի գիւղերուն մէջ կայ հայուն նահատակի նուիրուած արիւնը: Ու այդ արիւնը կենդանի է եւ հայուն տուած է տրոփող սիրտ մը ու վիթխարի հոգի մը, որ մինչեւ այսօր տակաւին վեօրեն կը կանգնի որպէս վերապրող իրականութիւն: Եւ այս վերապրիլը կարելի չէ բռնագրաւել, ոչ ալ խափանել: Այլ այս վերապրիլը պիտի շարունակէ մնալ հայուն կեանքին համար ամուր կրուան:

Եթէ այսօր Մեղրածորին ալ կը նայիմ միայն հեռուէն, բայց շատ յստակ կը տեսնեմ անոր վայրի ու բնական գեղեցկութիւնը, որուն խորերէն Քեսապի մեր հայ տղաքը դարձեալ դուրս կու գան որպէս ապրող իրականու-



Մուսա լեռը՝ Ռաս Պասիթէն

թիւն՝ առանց կորսուելու: Անոնք գիտեն իրենց տան ճամբան եւ կ'ուզեն ամուր կառչիլ անոր: Իսկ մեզի համար, հեռու թէ մօտ, «Քեսապ էլ ժեմիլ» կը մնայ միշտ գեղեցիկ, բայց նաեւ ազգային հպարտութեան աղբիւր եւ հիմք:

«Քեսապ էլ ժեմիլ»ը՝ մանկութենէ դէպի պատանեկութիւն եւ մինչեւ այսօր: Մեր կեանքերուն գեղեցիկ արժէքը աւելցնող վերապրող իրականութիւն:

# ՄԻՔԱՅԷԼ ԳԱԼԱՇՆԻՔՈՎԻ ՄՂՁԱԲԱՆՁԸ

*«Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն որ բոլոր  
խաբիր վաստիկի և իր անչը կորսնցնէ»:*


*(Մարկոս 8, 16)*

Միքայել Գալաշնիքով աշխարհով վաստակ շահած այն զինուորականն էր, որ կրցաւ հնարել AK-47 տիպի իրացանը, որ յետագային՝ յատկապէս 1947-ին, անուանուեցաւ իր անունով՝ «Գալաշնիքով»: Ան սովետական շրջանին պարզեաւարուած էր Լենինի եւ «Ընկերվար Յերոս Բանուոր»ի շքանշաններով:

Միքայել Գալաշնիքով մահացաւ 23 Դեկտեմբեր 2013-ին, 94 տարեկանին: Ան իր կեանքի վերջին տարիները ապրեցաւ խղճահարու թեմամբ եւ հոգեկան մղձաւանջով: Աստուածաշունչի ճշմարտութիւնը, թէ «Ի՞նչ օգուտ է մարդուն, որ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ» դարձաւ զինք հալածող ուրուականը: Իսկ մղձաւանջը: Թէ ի՞նչպէս այն հնարքը, որ ինք ըրաւ եւ զինք համաշխարհային դեմքի վերածեց, աշխարհով մէկ քանդիչ միջոցառում դարձած է: որ յեղափոխականներ, անեւանգոյներ, խափանարարներ գործածած են զայն, պատճառ դառնալով շատ հոգիներու մահուան, քանդումներու եւ անբերումներու: Բայց չէ՞ որ ինք այս զենքը հնարած էր իր երկրին եւ հայրենիքին հողատարածքները պաշտպանելու եւ ապահովելու միտումով: Եւ այս զենքէն անելի քան հարիւր միլիոն ծախուած է:

Մայիսի 2012-ին, Միքայել Գալաշնիքով պաշտօնական նամակ մը կը գրէ, ուղղուած ռուս Ուղղափառ Եկեղեցիի պատրիարք Գիրիլիոս որուն մէջ կը յայտնէ իր հոգեկան ցաւը: Յաւը, որ իր ստեղծագործական միտքն ու հնարքը պատճառ դարձած էին շատ մը անմեղներու մահուան: Ան նաեւ խոստովանած էր, որ միայն 91 տարեկանին, առաջին անգամ ըլլալով եկեղեցի մտած է եւ մկրտուած:

Միքայել Գալաշնիքով նամակին մէջ կ'ըսէ. «Յոգեկան ցաւս անբացատրելի է: Յաճախ կը մտաբերեմ լոյս հարցերը եւ պատասխան չունիմ: Եթէ իմ հնարած զենքս պատճառ դարձած է շատ մը անմեղներու մահուան, կրնա՞յ ըլլալ որ ես, իբր քրիստոնեայ եւ ուղղափառ հաւատացեալ, պատասխանատու ըլլամ այդ բոլորին: Որքան ապրիմ, այս հարցումը պիտի չարքրել միտքս ու հոգիս: Յարց կու տամ,



թէ ինչո՞ւ Աստուած կ'արտօսէ, որ մարդ սատանայական արարքներու, ազահուրթեան եւ յարձակողականի ծագի»:

Յստակ չէ թէ՞ Միքայել Գալաշնիքով կրցաւ իր հոգեկան հանգիստը գտնել մահուցէն առաջ: Սակայն յստակ իրականութիւն է, թէ ան այն անձն էր, որ շահեցաւ աշխարհը իր ստեղծագործութիւնով, հասկալի եւ կորսնցուց անձը: Որո՞նք համար կը տագնապէր: Ու այն մեծ թիւով կորսուած անձերը աշխարհով մէկ: Որո՞նք եւ որո՞նք մղձաւանջը ապրեցաւ իր կեանքի վերջին տարիներուն: Իր շահած աշխարհի վաստակը չկրցաւ ամրել իր մղձաւանջը:

Բայց աշխարհի ներկայ իրավիճակները կը շարունակեն ընկալել Միքայել Գալաշնիքովի նման հնարողներ, որոնք եթէ լոյնիսկ կարծեցին թէ վստէ խտելներու համար կատարեցին իրենց գիւտերը, սակայն եւ այնպէս այդ բոլորը յետագային շրջեցան ու դարձան քանդող, սպաննող ու անբող գործօններ: Երեւի պատմութիւնը պիտի յարունակէ ցանկագրել նամակները այն բոլոր միտքերուն, որոնք պիտի ապրին մղձաւանջը իրենց կատարներուն գործած եւ ստեղծած արդիւնքներուն, որոնք մահ ու անբող կը շարունակեն սփռել, լոյնիսկ իբր աշխարհը վաստկած են այդ հնարքով:

Բայց կը մնայ կարեւոր եւ շարունակելի ընտրանքը կեանքին մէջ:

Աշխարհը, թե՛ անձը շահելու հրամայականը:

Այս ընտրանքը միշտ ալ առկայ եղած է մարդկային պատմութեան մէջ: Մարդը միշտ ալ դժմ յանդիման գտնուած է աշխարհին եւ անձին շահելու այլընտրանքին առջեւ: Փորձութիւնը միշտ եղած է անձին հոգիին զիջիլը, աշխարհին դիմաց:

Եթէ աշխարհը արտաքինն է, անձը՝ ներքինը: Ներքինը զիջելով մարդ կը զոհէ արտաքինին շարունակականութեան ենթահողը, որ նոյն անձը՝ հոգին կը տանի դէպի յաւիտենականութիւն: Որովհետեւ արտաքինը ժամանակաւոր է, գեթ մարդկային կեանքին համար, եւ ուր մարդը կարողութիւն չունի պահելու զայն, նոյնիսկ երբ կը վաստակէ: Նաեւ իրաւացի է, որ անձին հարստութիւնը «զուր ոսկիով ծախու չառնուիր ու անարժէքին համար արծաթ չի կշռուիր» (Յորայ 28, 16):

Մարդը կը շահի իր անձը, երբ կ'որոշէ ստանալ Աստուծոյ թագաւորութեան հպատակութիւնը: Եթէ Աստուծոյ թագաւորութեան հպատակութիւնը կը շնորհէ անձին ու հոգիին հարստութիւնը, բայց ոչ մէկ ձեռով չի խոստանար անոր՝ հոգիին, ապահովութիւնը այս աշխարհին մէջ: Ա՛յս իրականութիւնը յա՛ ձեռով մեկնաբանած է Ղուկաս 6.22-23 «Երանելիներուն» մէջ: Զրիստոսի եւ քրիստոնէութեան միտք բանին Իր թագաւորութեան ուրախութեան մէջ էր: Եթէ այս ուրախութիւնը ապագայի հեռանկարով էր, բայց ներկան կրնայ ընդգրկել զրկանքը եւ ցաւը:

Եւ անպայմանօրէն պայքարը ընդդէմ «սատանայական արարքներուն, ազահուութեան եւ յարձակումներու»: Զրիստոս շատ յստակ կերպով կամրոջեց այս ներկան եւ ապագան: Ներկայ աշխարհը միակ տեղը չէ, ուր մարդը կ'ապրի նաեւ ապագայի տեսլականով: Բայց ինչեւիցէ, ճիշդ չէ նաեւ անտեսել ներկան: Առաքելութիւն մը կայ նաեւ ներկայի աշխարհին մէջ, ինչքան որ այդ մէկը պիտի ենթադրէր յուսուութիւն եւ նեղութիւն: Անձին շահը, նոյնինքն ներկայ աշխարհի մէջ, եթէ պիտի ընդգրկէ նեղութիւնը եւ դժուարութիւնը, քանի որ նաեւ կը նպատակադրէ ապագայի ուրախութիւնը, եւ այս Զրիստոսի նոր կեանքի հասկացողութիւնն է, որ կու գայ նաչին շնորհքէ, ուր մարդը իր անձը եւ հոգին կը շահի, նոյնիսկ երբ կը չարչարուի: Չարչարանքը կրնայ տանիլ, քանի կը տեսնէ ապագայի հեռանկարին վրայ կեցող ուրախութիւնը:

Միջայէլ Գալաշնիքով եւ իր նմանները, իրենց մղձախանջները կրնան վերածել հանգստութեան, երբ կրնան ընտրել նախ իրենց անձերուն՝ հոգիներուն, քան աշխարհը շահելու տեսլականները: Անձը՝ հոգին շահելով, կը կերտես կեանքեր՝ արժէքներ, ուր աշխարհը կը շահիս իր ներկայով, բայց նաեւ ապագայի տեսլականով:

«Եւ ի՞նչու կորորդ աչքին մէջի շիւղը կը փնտնու ու բու աչքիդ մէջի գերանին չես նայիր»:

(Մաարթոս 7.3)

Ապրտը կու գայ Լաթաքիայէ: Ան աւելի քան քսան տարիէ Լիկուսի, Կիպրոս կ'ապրի: Արիեստով սափրիչ, իր գործը կը կատարէ ամենայն բժախնդրութեամբ, բայց նաեւ ջերմութեամբ: Վերջապէս, ունի արաբական (միջին արեւելեան) հաղորդականութիւն, որ հասցատութիւն եւ բարեկամութիւն կը ստեղծէ:

Ազ կարելու վերջին փորձն Ազըտին հետ երկար տեւեց: Ան վերանորոգեցաւ դասախօսական-բացատրողական «արարողութեան» մը, որ աւելի քան երկու ժամ տեւեց: Այդ օր, Պէյրութի մէջ տեղի ունեցած էր անձնասպանական պայթում-գործողութիւն մը, որ խլած էր շատ մը մարդկային զոհեր: Ազըտ, իր խանութին մէջ, հեռատեսիլին միջոցաւ կը հետեւէր անցուղարձերուն, երբ եւ ներս մտայ:

Անձանօթ մը չեմ Ազըտին համար: Ան գիտէ որ Լիբանանցի եմ՝ հայ եւ քրիստոնէայ: Չգալի էր Ազըտի դէմքին վրայ արտայայտուող ամօթխածութիւնը, նկատի ունենալով որ ան իսլամական կրօնին կը պատկանի: Ազըտ սկսաւ իր «դասախօսութիւնը», բացատրելով որ իսլամութեան համար այս ժիւղատական (իմամ՝ ծայրայեղական-անձնասպանական) գործողութիւնները ընդունելի չեն, եւ թէ անհրաժեշտ է չափաւոր մահմետականութեան կառչել եւ ընդունիլ, եւ այդ է ճիշդը: «Պէտք է ճիշդը եւ ճշմարիտը սորվեցնենք, ոչ թէ այս եղածը», եզրակացուց Ազըտ:



Ալարտին բացատրութիւնը համոզիչ և ընդունելի ըլլալով հանդերձ, այսօր տագնապը (իմսմա՝ ծայրայեղական և ժիհատական) դարձած է ընդհանրական և համընդհանուր:

Եթէ անհատին կեանքը ունի ֆիզիքական հոգածութիւնը, բայց նաեւ հոգեկանը և հոգեւորը: Մարդ եակը ունի իր ներաշխարհը, որ պետք է պարենատրոսի արժեքի մը հասկացողութեամբ և իրականութեամբ: Արժեքը կրնայ ըլլալ տարբեր բովանդակութեամբ ու շեշտով, բայց և այնպէս անխուսափելի և անտեսելի ու անշատելի զայն մարդկային կեանքէն ու նկարագրի ամբողջացումէն:

Այս իմաստով, սուրիական տագնապը լեցուն է բարդութիւններով: Եթէ պատերազմը սաստկացած ու ընդհանրացած է, կայ նաեւ այն իրականութիւնը, որ կռուող և պատերազմող կողմերուն մէջ շատ է, ծայրայեղական և նմանօրինակ ժիհատական տարբեր խմբաւորումներու մասնակցութիւնը:

Արեւմտեան և Եւրոպական պետութիւններ այսօր սկսած են մտահոգուիլ, բայց նաեւ ահազանգային վիճակներու մատնուիլ, նկատի ունենալով իրենց քաղաքացիներու մեծ թիւով մասնակցութիւնը սուրիական տագնապին, որպէս անդամներ ծայրայեղական շարժումներու:

Տոմինիք Պոնկ կ'ապրի Թուլուզ, Ֆրանսա: Ան կը պատկանի այն սերունդին, որ յենած է ապակոս մշակոյթին՝ անհաւատութեան: Իր անմիջական ընտանեկան դաստիարակութիւնը եղած է այդ մթնոլորտին մէջ. կրօնքը տեղ չէ գտած իր տան մէջ: Բայց Տոմինիքը զարմանքը մեծ եղած է, երբ իր երեսուն տարեկան գաւազն՝ Նիքոլաս, շատ արագ կերպով դադրած է ծխելէ և սկսած է յաճախակիօրէն աղօթել: Տոմինիքը տեղական ոստիկանութեան իմացուցած է այս արագ փոփոխութիւնը: Ոստիկանութիւնը չէ կրցած, որեւէ ոճրային արարքի մը վրայ հիմնուելով, որեւէ իրական միջոցառումի դիմել:

Բայց երեւի պատմութիւնը պիտի շարունակուի: 2013 տարուան սկիզբը, Նիքոլաս կ'անհետանայ: Միայն Դելտեմբեր 22-ին Տոմինիքը հեռախօսային նամակ մը կը ստանայ, որմէ կ'իմանայ թէ իր գաւազն «Ասիատական» է Դոմս քաղաքին մէջ, երբ պայթուցիկ նիւթերով լեցուն ինքնաշարժի մը մէջ անձնասպանական գործողութիւն մը մղած է: Տոմինիքի վիշտը բարկութեան վերածուած է: Ան ֆրանսական պետութիւնը կը մեղադրէ, որ պետք եղած ուշադրութիւնը չտուաւ իր խնդրանքին և մտահոգութեան: Տոմինիքը ըսած է. «Մեծ միտք է: Պետք է կառավարութիւնը միջոցներ ստեղծել, ուր կարելի ըլլայ կանխարգիլել այս տեսակի ծայրայեղական մտածողութիւնը, յատուկ հոգեբուժական և մասնագիտական ձեւերով»: Տոմինիք չի գիտեր, թէ ո՞վ է այն անձը, որ իր գաւազնին «ուսուցանած է» այս

մտածողութիւնը և համոզած, որ ինք պէտք է Սուրիա երթայ պատերազմելու համար: Տոմինիք կ'ըսէ. «Լաւ տղայ մըն էր Նիքոլաս: Անտարական գիտութիւն ուսանած էր, բայց անգործ էր: Անպայման մարդիկ կրցած էին զինք չարաշահել»:

Նիքոլաս նամակ մը յղած է իր մօր, բացատրելով թէ ինչ էին պատճառները, որոնք զինք մղած էին այս քայլին: Բայց երեւի այդ նամակը չէ հասած իր մօր՝ Տոմինիքին: Յուլիս 2013-ին, Նիքոլաս կը յայտնուի Եւրո-Թեուպի վրայ, համացանցային տեսաերիզի միջոցով, երբ մէկ ձեռքին կայ իրացանը և միւսին Գուրանը, ան կը քցալներ Ֆրանսայի նախագահը և այլ անձեր, որ իսլամական կրօնքը ընդունին:

Տոմինիք կը յուսայ, թէ կարելի պիտի ըլլայ գտնել իր գաւազնին դիակը Ֆրանսա բերել: Մինչ այդ, նմանօրինակ պարագաներու մէջ եղող Եւրոպացի այլ մայրերու հետ, ան կազմած է յանձնախումբ-կորիզ մը, որ կը իրաւիտ պետութիւնները որպէսզի տարբեր միջոցներ մէջտեղ բերեն պայքարելու համար ծայրայեղականութեան և անոր ուսուցումըներուն դէմ՝ իրենց գաւազներուն համար:

Մինչեւ Նիքոլասի նամակին բացայայտումը, երբ կարելի պիտի ըլլայ գիտալ իմնական պատճառները իր արարքին, կայ հարցում մը, զոր Տոմինիքը և իր նմանները պէտք է նկատի առնեն. «Ո՞վ է մեղադրողը, և զո՞վ պէտք է մեղադրել»:

Երբ Տոմինիք իր պետութիւնը մեղադրեց, արդեօք կրցաւ տեսնել իր բաժինը այս բոլոր իրադարձութիւններուն մէջ: Իսկ պետութիւնը (իմսմա՝ մեղադրողը), կրցա՞ւ հանդուրժողութիւն և միաբանութիւն դաստիարակելու տեսլականով յստակ հիմքեր ստեղծել իր հաւաքականութիւններուն մէջ: Ու տակաւին ինչ խօսք, երբ մեղադրող պետութիւնը կը մեղադրէ այլ պետութիւններ, որոնք այս տեսակի շարժումներ կը իրաւորեն:

Աստուածաշունչի ճշմարտութիւնը յստակ է այս կացութեան պարագային: Արժէ որ Տոմինիքը (մեղադրողը) և պետութիւնը (մեղադրուողը) տեսնեն նախ «իրենց աչքի մէջի գերանը»: Այս կը սկսի տունէն՝ անձէն, հասնելու համար կառոյց և պետականութիւն: Եւ տակաւին. եթէ հաւաքականութիւն և պետութիւն նմանօրինակ ուսուցումները պիտի մեղադրեն, ո՞ր կը մասն իրենք և իրենց դաստիարակութիւնները՝ իրենց շրջապատին և նոր սերունդին համար: Ու տակաւին, առանց մտահան ընելու այն իրականութիւնը, թէ Արեւմուտքը՝ մանաւանդ Եւրոպան, պատմութեան առանցքին միշտ պակուր յենարան եղած էր քրիստոնեական հաւատքին և ուսուցումին: Իսկ այսօր՝

«Ո՞վ է մեղադրողը, և զո՞վ». նոյն դրամին երկու երեսերն են՝ զի-

րար ամբողջացնող: Տոմինիք իր պետությունը մեղադրեց, եւ պետու-  
թիւնը յանցանք չկրցաւ գտնել: Երկու իրավիճակներ, ուր պետք է  
պատրաստ ըլլան «իրենց աչքի մէջ գերանը» վերլուծելու եւ մաք-  
րագործելու:

Որովհետեւ առկայ է նաեւ Լաթաքիացի Ապըտին երկու ժամուայ  
«դասախօսութեան» միտք բանին. «Պետք է ճիշդը եւ ճշմարիտը սոր-  
վեցնել»: Այս «սորվեցնելը» կարելի կ'ըլլայ եթէ կարենանք տեսնել,  
որ մեր աչքերուն մէջ կան «գերաններ», որոնք ներքին մեծ վէրք  
ստեղծած են, իմա՝ պարապուրթին, զոր պետք է լեցնել արժէքի  
հասկացողութեամբ:

Մինչ այդ, գիտնալով եւ անդրադառնալով հանդերձ, թէ ցաւը մեծ  
է, Տոմինիք եւ իր նմանները պետք է հարց տան. «Չո՞վ պետք է մե-  
ղադրել»:

## ՊԷՅՐՈՒԹԷՆ ՎԱՐՇԱՒԱ. «ԵՍ Կ'ՈՒԶԵՄ ՑԱԲԸ ԴՈՒՐՄ ՀԱՆՏԷԼ»

«Ես 51 տոկոս հայ եմ, իսկ 49 տոկոս իրանական»

Գ ա լ ա ս ա -  
րակշռութիւնը  
արժեք մըն է, որ  
անհատի կեան-  
քին ու հաւա-  
քական յարա-  
բերութիւններ-  
ուն աշխա-  
տանքային լաւ  
հիմք կու տայ:  
Դաւասարակշ-  
ռութիւնը լաւ  
հիմք կու տայ  
ոչ միայն կեան-  
քի տեսադաշ-  
տերու եւ հայ-  
ե ա ց ք ն եր ու լ ,



բայց նաեւ ինքնութեան եւ մշակութային գործօններուն: Այս մէկը  
անելով կ'արտացոլայ մեր սփիւռքահայ իրականութեան մէջ, երբ  
մէկ կողմէն կապուած ենք հայկական ինքնութեան, իսկ միւս կողմն  
այն հիւրընկալ երկրին (երկիրներուն), ուր պարտադրաբար ապաս-  
տան գտանք: Բարեբախտաբար այս պարտադրանքը տաժանելի  
յղարծաւ, այլ արժէքի գիտակցութիւն՝ երբ բոլոր հայերը սիրեցին  
իրեն ապաստան գտած երկիրները:

Այս հաւասարակշռուած կեանքի միւնչեւ օրս ապրող մէկ լաւ իրա-  
կանութիւնը վայելեցի Վարշաւայի մէջ՝ Փետրուար 2014-ին, Ճոնի  
Գոյումճեանին հետ:

Ճոնի ծնած է Պուրճ Յամուտ: «Պուրճ Յամուտը ինծի համար ամ-  
բողջ կեանք մըն է: Թիբո քեմփը, Սանճաքը, Միսը...», կ'ըսէ Ճոնին,  
որուն մէջ կը զգամ այդ ամբողջ կեանքին արմատաւորումը, երբ  
մէկ-մէկ սկսաւ քակել իր կեանքի մեն մի միւտորը: Ութ տարեկանին  
գացած է Վենետիկ եւ սորված Միսիթարեաններուն մօտ: Վերադար-  
նած է Պէյրութ եւ իր ուսումը շարունակած է Սբ. Գրիգոր Լուսաւորիչ

ճեմարանին մէջ, ապա ժամուրդ դպրոցին մէջ: Ուսումը կատարելով գործելու համար մեկնած է Ֆրանսա եւ մասնագիտացած է շարժար ուեստի մէջ որպէս բեմադրիչ: Եղած է դասընկերը Ռոման Փոլանսքիի, որ իր վաստակը ունի ներկայ օրերու ֆիլմաշխարհին մէջ որպէս բեմադրիչ: 1964-ին անցած է Լեհաստան՝ իր մասնագիտութիւնը ի գործ դնելու, բայց կեանքի պայմանները տարբեր դուրս եկած են ճոնիին համար:

«Շարժարուեստը աշխարհս է», կ'ըսէ ճոնի: «Պատանեկութեան օրերուն սինեմա «Արաքս»ի մէջ ցուցադրուած ժապաւեններուն գործածուած պատճենները կը թափէին: Ես գտնուեցի կը հաւաքէի եւ մեր շէնքին տակիքը ճերմակ սաւան մը կը դնէի, ետեւը պզտիկ լոյսով կը ցուցադրէի գտնուեց թաղի մանուկներուն»: Ասիկա ճոնիին Պուրո Յամուտի իր ապրած մակութեան եւ պատանեկութեան օրերու մէջ քաղցր յիշատակներն էր, որ զինք քաջալերած եւ իր կեանքին համար մղիչ ուժ եղած է նոյն այդ մասնագիտութեան հետեւելու համար:

Լեհաստանի մէջ կարելի չէ եղած իր մասնագիտութեամբ իր կեանքը կերտելու: «Չեմ գիտեր ինչու Լեհաստան եկայ», ըսաւ ճոնիին: «Կեանքի մէջ ընտրութիւններ կ'ընես, յետոյ կը հետեւիս անոնց»: Ճոնին հետեւած է իր ընտրութեան եւ այսօր յիսուն տարի ի վեր ան կ'ապրի Լեհաստան: Ընտանիք կազմած է՝ ամուսնանալով տեղացիի մը հետ եւ իր միակ գաւազը անուանած է Արտաւազը:

Ճոնիին աջբերուն մէջ զոչում կամ յուսախարութիւն չկար իր ընտրութեան եւ որոշումին համար: Ան ապրած է ու տակաւին կ'ապրի իր կեանքը նուիրուածութեամբ եւ հաւասարակշռութեամբ՝ երախտապարտ ըլլալով իր հայկական եւ լիբանանեան ինքնութիւններուն:

«Լիբանանը ինծի տուաւ ինքնութիւն», կ'ըսէ ճոնի: «Շնորհակալութիւն եւ յարգանք ունիմ Լիբանանի հանդէպ»: Իսկ շնորհակալութեան եւ յարգանքի գործնական ապացոյցը, ան մինչեւ օրս կը մնայ լիբանանեան անձնագիրով, անկախ այն երեւոյթէն, թէ տարիներ ի վեր կ'ապրի Լեհաստան եւ ամուսնացած է տեղացիի հետ: «Ես 61 տոկոս հայ եմ եւ 49 տոկոս լիբանանցի»: Լեհաստան այսօր Եւրոպական Միութեան անդամ երկիր է, որուն անձնագիրը արժէք ունի համաշխարհային համակարգին մէջ, բայց ճոնիին կեանքի արժեքները ուրիշ են:

Ճոնի Գոյումճեան ամեն շանք ի գործ դրած է, որպէսզի լիբանանեան դեսպանատունը իր կեդրոնը ունենայ Վարշաւայի մէջ, 1993 թուականին: Ան անդամ է Լեհաստան-Լիբանան խորհրդարանական միջպետական յարաբերութիւններու յանձնախումբին եւ այդ կապերը ամրապնդելու համար պաշտօնական այցելութեամբ Լիբանան

իցած է պատուիրակութեան մը հետ, երկու տարի առաջ: Ճոնի այնպատակով տարած է նաեւ, որպէսզի Լեհաստանի խորհրդարանը 2005-ին Ցեղասպանութիւնը ճանչնայ:

Փայց ճոնի տակաւին ունի ցաւ մը, գոր կ'ուզէ դուրս հանել:

«Յայտ ծնած է Ատրեաման (արեւմտեան Յայաստան) եւ մահացած է Պուրո Յամուտ», սկսաւ պատմել ճոնիին: «Յայտս մեծանուն ընտանիքի գաւազ եղած է, որ նիւթապէս հարուստ ըլլալով մեծ դիրք ունեցած է քաղաքին մէջ: Բայց հայտս չէր պատմեր մեզի Ցեղասպանութեան մասին: Մէջը ցաւ մը ունէր, որ պահեց մինչեւ իր մահը»: Ճոնին ինծի կը նայէր երբ կը խօսէր, բայց յստակ էր, թէ ան արդէն գացած էր հեռու՝ Ատրեաման. վերջապէս եզրակացուց. «Ես կ'ուզեմ դուրս այդ ցաւը դուրս հանել»:

Ճոնին քանիցս այցելած էր Ատրեաման: Ուրջ դրած էր պապեանկան հողին վրայ, լսած է հօրը եւ իր ընտանիքին պատմութեան, հոգակին, ինչպէս նաեւ գերդաստանի՝ Գոյումճեան ընտանիքին, լսելով հմայքին ու դիրքին մասին: Ճոնի զգացած էր հերոսական կերպարը մեծ մօրը, որ որպէս ֆետայի կռուած էր թուրքերուն դէմ: Վերջապէս, ճոնին ապրած է հոսած արիւնը, բայց նաեւ ապրող արիւնը, որ մինչեւ օրս իր կեանքին տուած է ապրելու տեսլական եւ հիմք:

Այս ապրող տեսլականն ու հիմքը ճոնին մղած են դառնալու իր մասնագիտութեան՝ շարժարուեստին: Ան պատրաստած է բեմագրութիւն մը երկու ժամ տեւողութեամբ՝ մեկնելով իր Ատրեաման տուած այցելութիւններէն եւ այնտեղէն պոկած ցաւէն: «Սկիզբը որովայնի կոչել «Կարմիր խաչքար», ըսաւ ճոնիին: «Յիմա կ'ուզեմ անուանել «Յերոսներու յուղարկարութեան երգը»:

Ճոնիին դէմքին վրայ գծուեցաւ պզտիկ ժպիտ մը, որուն ետին յուզում կար ու նաեւ յոգնածութիւն. «Կ'ուզեմ ժապաւենին մէջէն ցաւը դուրս հանել, բայց նաեւ ցաւին ապրած հերոսութիւնը», ըսաւ ան:

Ռէն ինստուն եւ ինը տարիներ անցած են, բայց տակաւին հայրը աշխարհով մէկ կը քալէ նոյն այս ցաւին ծանրաբեռնուածութեամբ եւ իրաքանչիւր առիթի կը փորձէ իր պարունակին մէջէն ցաւը դուրս հանել եւ այդ ցաւին մէջ ու անոր միջոցով կը դնէ իր պահանջատիրութիւնն ու արդար հատուցումը:

Ճոնի Գոյումճեանը այն հաւատարտ հայն է, որ կ'ուզէ ցաւը դուրս հանել:

«Կարմիր խաչքար», թէ՛ «Յերոսներու յուղարկարութեան երգը», ճոնի Գոյումճեան պետք է յաջողի դուրս հանել ցաւը:

# ՌՈՂԵՐԹ ԱՄԻՐԻՍԱՆԵԱՆԻ ԱՊՐԵԼՈՒ ՌԻՃԸ

«Մայնսթրո, քսանհինգ տարիներ առաջ  
հանդիպած ենք հորեղբորս փան մեջ» Հայկա»

7 Յուլիս 2014, Պեյրուի միջազգային օդակայան: Կը պատրաստուի մեկնելու Երեւան, երբ օդակայանին մէջ հանդիպեցայ Ռուպերտ Ամիրխանեանին: Թեւեւ մէկ օր առաջ՝ Յուլիս 6-ի Պեյրուի մէջ տուաւ իր ելոյթին չէի կրցած ներկայ գտնուիլ, բայց մեծ ուրախութիւն էր հանդիպիլ անոր նոյնինքն օդակայանին մէջ: Նկատի ունենալով, որ երկուքս պիտի մեկնէինք Երեւան եւ նոյն թռիչքով՝ առաջնորդեցի զինք սպասման բաժին, ու առիթ ունեցանք զրուցելու:

«Հալէպ քուէ-  
ճի բացօթեայ  
բակին մէջ  
տուած ձեր ելոյ-  
թը շատ լաւ կը  
իշխէմ, անելի քան  
քսանհինգ տա-  
րիներ առաջ».  
ըսի մայեսթրո-  
յին՝ անելցնելով.  
«Եւ որմէ ետք  
հ օ Ր Ե Ր օ Ր ս  
տողթ. Ռուպեր  
ճ Է պ Ե ճ Ե ան ի  
ք ն ակ ար ան ի ն  
մէջ մեր հաւաքը»:



«Ես ի՞նչ քաղցր յիշատակներ է, որ արթնցուցիր»: Մայեսթրոյին դէմքին վրայ անուշ օրերու վերադարձը ուրուագծուեցաւ, եւ սկսաւ մեր զրոյցը: Թեւեւ սկսանք խօսիլ երգի եւ երաժշտութեան մասին, բայց նաեւ մշակոյթի ու անոր հասկացողութեան եւ ազգային մշակոյթի ըմբռնումին մասին: Բայց եւ այնպէս կարելի չէր նաեւ չանդրադառնալ հայրենիքին, որուն նկատմամբ մեծ սեր ու նուիրում ունի Ռուպերտ Ամիրխանեան: «Գեղեցիկ երկիր մը ունինք՝ բնութիւնը, ջուրը, լեռները: Ներշնչում են, եւ կապուած են շատ զօրաւոր կերպով»:

Ան կը հաւատայ մշակոյթի հասկացողութեան եւ անոր իւրաքանչիւր բաղադրամասին: Եթէ կայ երգը, պարը, բայց Ամիրխանեան կը հաւատայ ամբողջական մշակոյթի հասկացողութեան. անոր համար մեր կենցաղը, ապրելակերպը, արուեստը, երգը, երաժշտութիւնը ու փոսկալուսութիւնը կը կազմեն մէկ մեծ ամբողջութիւն: Ու տակաւին նա ամուր կառնած այս արժեքին եւ կ'աշխատի իր ամբողջ էութեամբ յիշուցնել զայն:

«Մշակոյթ հասկացողութեան կորուստը մեզի համար մեծագոյն կորուստ է: Ծիշող այս հասկացողութեամբ հարց տուի մեր պետականութեան, թէ ո՞ր եւ ինչպէ՞ս է մեր ազգային մշակոյթի ինքնութիւնը եւ ուղղութիւնը»:

Ռուպերտ Ամիրխանեան կը հաւատայ կենսեցին ու անոր մէջ մարդուն հաղորդականութեան եւ հաղորդակցութեան արժեքին: Պեյրուի օդակայանի մէջ մեր երկու ժամուան հանդիպում-զրոյցը կարծեք երկար տարիներու բարեկամութիւն մըն էր: Անոր համար բարեկամութիւնը հոգեւոր արժեք է՝ եսին եւ մենքին հասկացողութիւն է, ուր ան կը կիսէ ուրիշին հետ՝ մենքի մէջ ըլլալու հասկացողութեամբ:

Բայց կայ նաեւ խոստովանութիւն-երախտագիտութիւն: «Երբ դպրոցական պատանի աշակերտներ էինք Պեյրու, Հայաստանէն ժամանած իւրաքանչիւր արուեստագետ, անոնց համերգներն ու յօրինումները, մեր ազգային ինքնութիւնները լիցքաւորեցին: Այս իմաստով ձեր յօրինումները եւ ստեղծագործութիւնները մեր պատանեկան կենսեքրուն՝ այդ օրերէն սկսեալ, հայրենասիրական մեծ թափ տուին»:

Ռուպերտ Ամիրխանեան կ'ապրի Ուշի գիւղին մէջ, որ մօտաւորապէս Երեւանէն Երեսուն վայրկեան հեռու է: «Ամէն առաւօտ կ'արթնում եւ կը սկսիմ ստեղծագործել: Շատ աշխատանք կայ ամբողջացնելու: Իսկ գիւղական կենսեքը աշխատելու եւ ստեղծագործելու յայտնի եռանդ կու տայ»: Եւ չուշանար սրամիտ ու դիպուկ կատակը. «Ներսի գիւղի արջառներն ալ անելի լաւ կաթ կ'արտադրեն՝ ամէն օր լսելով իմ երաժշտութիւնս»:

Կը սիրէ բանաստեղծութիւնը: «Անհրաժեշտ է, որ բանաստեղծին եւ բանաստեղծութեան հոգին դուրս հանես, որպէսզի կարելի ըլլայ երաժշտական յօրինում կատարել: Եւ այդ հոգիի իմ երգը լսելով՝ կ'աշխատիմ, որ լսողը իր կենցաղին հարազատ մնայ եւ դառնայ ապրելու ուժ ունեցող մարդ»:

Թոյլեցի ժամը հասած էր: Օդանաւին մէջ չէր կրնար առանց աշխատանքի կենալ: Զեռքի պայուսակէն հանեց փոքր համակարգիչը եւ սկսաւ աշխատիլ իր յօրինումներուն վրայ: Կը դիտի մայեսթրոն, միևնույն ան կ'աշխատէր թռիչքի ժամանակ, բայց նաեւ կը մտածի նոյն-



կիսըն հոգիին մասին, զոր երեւի կը փորձեր դուրս հանել և նոր հոգիին ետին կեցող իր երաժշտութիւնը, որ պիտի տար ապրելու ուժ:

Եղած էր աւելի քան ութ տարիներ, որ մայր հայրենիք չէի այցելած: Կամովին չէր, պարզապէս աշխատանքային զբաղուածութեան եւ ճամբորդական տարբեր գործուղիներու պատճառով: Բայց ուրախ էի, որ կրցայ երկու շաբաթներու ընթացքին Յայաստան եւ Անտալիայի Ղարաբաղի Յանրապետութիւն այցելութիւնը իրագործելու: Շատ բան փոխուած էր իմ վերջին այցելութենէս ետք: Ես ալ կը նստիչի ու կը դիտէի չորս կողմս տարբեր տեսարաններ և երեւի կեանքին շնորհած տարբեր փորձառութիւններով և հասունութեամբ թունաւեան եւ Արովեան պողոտաներուն վրայ անպայման բարեկամի մը կրնաս հանդիպիլ, բայց մանաւանդ այս օրերուն երբ բաւական մեծ թիւով հայէպահայ ծանօթներ ալ Յայաստան են: Յայտնել չորս կողմը ու տակաւին քրիստոնեայ:

Մեր միջին արեւելեան տարածաշրջանի վերջին իրադարձութիւններուն լոյսին տակ մանաւանդ այս իրականութիւնները պայահովութիւններ են: Յանրապետութեան իրապարակի կեդրոնը իւրաքանչիւր երեկոյեան երաժշտական ջութերու այսպէս ըսած «մենահամերգները» գրաւիչ են, բայց նաեւ ինչքան կանաչ և երեսնը: Այդ լուրջները յաջորդեցին իրարու՝ սփիւռքի նախարար Յրանուշ Յակոբեանին նախարարութեան աշխատանքային անձնակազմին մշակոյթի նախարար Յասմիկ Դոզոսեանին, Գարեգին Բ. Ամենայն հայոց վեհափառ հայրապետին, եւ միջեկեղեցական յարաբերութիւններու բաժնի պատասխանատուին հետ:

Ազգային թանգարան, Յայ աւետարանական եկեղեցի եւ Անտալիանակաւի կեդրոն, Յայ կաթողիկէ եկեղեցի, «Սիվիլիթաս», «Ազգ» շաբաթաթերթ, «Սփիւռք» գիտաուսումնասիրական կեդրոն, Ամերիկեան համալսարան, Յեղասպանութեան թանգարան, «Տար 12» եւ «Երկիր Մետիա» պատկերասփիւռի կայաններ, «Յայերն այսօր» Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տուն, Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կեդրոնատեղի, «Ոսկէ ծիրան» ֆիլմի փառատուն ու տակաւին:

Պետք էր այցելի Արցախ, որպէսզի կարենայի վայելել և ըմբռնել գեղեցիկ լեռներն ու բնութիւնը եւ հասկնալ, թէ ինչու Ղարաբաղի Յանրապետութիւնը լեռնային կոչուած է: Պետական, քաղաքացիական ու ընկերային կառոյցներու ստտիճանական զարգացումով Ղարաբաղի Յանրապետութիւնը կամաց-կամաց միջազգային ընդհանրեան կը պարտադրէ իր ամբողջական եւ իրական ճանաչումը:

Բայց անիրաժեշտ էր զգալ եւ կիսել ժողովուրդի տրամադրութիւնը, եւ լաւ ձեւերն մէկը հանրային ինքնաշարժներու վարորդներուն հետ գոյցն է: Կայ շատ արագ կերպով հաստատուած հաղորդակցութիւն, ուր արդէն կեանքի փորձառութիւնը եւ պատմութիւնը կը կիսուի, եւ կը դառնաս բարեկամը Սուրիկին, Ռազմիկին, Գեորգին, Կարոյին եւ ուրիշներու:

Մասնագիտութիւնները՝ լրագրող, ճարտարապետ, բանասեր ու տակաւին այլ: Եթէ գործ չկայ, բայց կայ գործ ստեղծելու եւ առանց անխալու աշխատանքի նետուելու եւ աշխատելու տրամադրութիւնը: «Պիտի ապրինք»-ը եղած է կարգախօս, եւ կ'ուզեն ամեն ինչով օրապարհիկը ճարել: «Յինչ տարի կ'պիտոս ապրեցայ», Սուրիկն է խօսողը: «Իիմա վերադարձայ Երեւան եւ կ'ուզեմ հայրենիքս մէջ աշխատիլ եւ ապրիլ: Տունս հոս է»: Սուրիկը իր վարորդի աշխատանքին մէջ կը տեսնէ ու կը գտնէ իր ապրելու ուժը:

Դժուարութիւններ նաեւ առկայ են մայր հայրենիքին մէջ: Բայց ո՞րն է ո՞ր երկրի մէջ այդպէս չէ: Եւ այս դժուարութիւնները-մարտահրաւրելները Յայաստանի մեծ ու համընդհանուր համայնապատկերին մէջ մասն են: Եւ հայրենի իրականութիւնը պէտք է դիտել այս մեծ ու համընդհանուր համայնապատկերի պրիսմակէն՝ զայն պահելու եւ զօրակցելու տրամադրութեամբ:

Լաւապէս դիտեցի այս համայնապատկերը հայրենի հողին վրան, բայց վերադարձայ այդ պահէն երկու շաբաթ առաջ մայրաքոյիս հետ իմ հանդիպումիս, երբ ան դուրս կը հաներ հոգին եւ նոյն այդ հոգիին տուն տուող ապրելու ուժը: Յայրենի հողին վրայ ես ապրեցայ վերապրեցայ ապրող այս ուժը, որ մեր ազգային-մշակութային պատմութեան տուած է զօրաւոր սլացք եւ հասցուցած է մեզ մինչեւ այս օր:

Այսօր այս է, հապա՞ վաղը:

Մայրաքոյն է դարձեալ: «Այս ապրելու ուժով մենք կրնանք շարունակել մեր պատմութիւնը: Եւ այս պատմութիւնը մեզի համար սրբազան է, որովհետեւ մեր հայրենիքի երջանկութեան պատմութիւնն է»: Ապրելու ուժը եւ հայրենիքի երջանկութեան պատմութիւնը: Իրարմով և գիրար ամբողջացնող երկու անբաժանելի իրականութիւններ:

Որպէրք Ամիրխանեանի ապրելու ուժը, նաեւ իւրաքանչիւր հայու: Եւ հայրենիքի հոգիով է, որ հայը իր ապրելու ուժը պիտի կերտէ: Ինչո՞ք այս ուժը նաեւ պիտի ներարկէ կարողութիւն՝ շարունակելու համար հայրենիքի երջանկութեան պատմութիւնը:

# ՎԱՋԷԻՆ ԸՆՏՐԱՆՔԸ

Վաջէ Զամասեանը կու գայ Զալէպէն: Անոր հանդիպեցայ Աթէր Յունաստան, Գոկտեմբերի 2014-ին: Եկած էր Զայ Աւետարանական եկեղեցւոյ երիտասարդաց հանդիպում-պաշտամունքին՝ ինչ ալ մասնակից դառնալու յունահայ իր տարեկիցներուն եւ հաղորդակցելու անոնց հետ:

Վաջէն դուրս եկած է Զալէպէն: Եւ ինչ ձեւով հասած է Աթէր, որ իր բախտը պիտի փորձէ՝ թակելով երոպական այլ դեսպանատուներու դռները ապաստանելի իրաւունք ձեռք ձգելու համար: Ինչ հարազատ եւ ո՛չ ալ ընտանեկան պարագաներ ունէր Յունաստան մէջ: Իր պահեստի քիչ մը դրամը դրած էր կեցութիւնը ապահովելու համար Աթէնքի մէջ, որպէսզի կարենայ ելք մը գտնել Զալէպի ու իր երկրին դժուար կացութենէն:

Նայեցայ Վաջէին ու անոր երիտասարդ հայու աչքերուն մէջ սկսած տեսնել ապրելու իր տեսչը, որ շատ հարազատ զգացում էր: Երիտասարդ էր եւ կ'ուզէր իր կեանքը ապրիլ, ինչպէս իր տարիքի ռեւէ մէջ երիտասարդ: Զանդարտ էր եւ զգալի էր իր մէջ արժանապատուութեան գիտակցութիւնը: Զկար խեղճի զգացումը, որ պիտի շարժու գուրջ մեր եւ իրեն հանդիպողներուն: Յստակ էր իրեն համար, թէ իր կեանքի սեմին ու իր երկրի դժուար պայմաններուն մէջ ընտրանք ընելու պարտաւորութեան դէմ յանդիման էր, այս պարագային՝ երկիր մը ապաստան գտնելու եւ իր կեանքը շարունակելու:

Եւ Վաջէին նայելով, կրցայ նաեւ տեսնել իմ ապրելու տեսչս՝ լիբանանեան պատերազմի այդ բոլոր արհաւիրքին օրերուն: Բայց չէ՛ որ ես ալ ժամանակին Վաջէին նման ապրած էի պատերազմին ու անոր պատճառած վախին, անորոշութեան տագնապը, բայց նաեւ մահուան ճիրաններէն դուրս գալու ամէնօրեայ տատանումները: Այս յուրը ինծի համար երէկ էին, արդէ անցաւ մտաւորապէս երեսու տարի, որ ես ալ անցայ Վաջէին ներաշխարհի փոթորկալից վիճակներէն:

Ես ալ ուզեցի դուրս գալ Լիբանանէն եւ ապրիլ կեանքը, ինչպէս իմ տարիքիս շատ մը երիտասարդներ, որոնք ապրեցան հոս-հոն անկողնակապտուտ պայմաններու մէջ: Բայց ես ապրեցայ անորոշութեան անյստակութիւնը, վախը, յուզումը, անարգանքը, աւելի՛ն պատերազմի պատճառով հարազատներու եւ բարեկամներու նահատակութիւնը: Արձակագէտի փամփուշտը, որմէ միայն քիչ մը վրիպելով մեր կեանքերը ինչայելու առանձնաշնորհումները կը վայելէինք: Ումբերու տեղատարափը ու անոր պատճառած հոգեկան ընկճումը

հոգիներ, եւ քանիցս մեղմ ու բարձրածայն պոթովումները, «ա՛յ չեմ ուզեր Պէրլուք մնալ»:

Ինչպէս մտայ: Զաւանթար այդպէս պետք էր ըլլար: Զյաջողեցայ դուրս գալ Պէրլուքէն, եւ կամ առիթը ու բախտը չներկայացան ինծի:

Ինչ պատերազմի այդ երկար տարիները մէկ-մէկ պիտի զլորէին, եւ մնայ մեր կեանքերը պիտի պատշաճեցնէինք՝ կերտելով պատերազմական ապրելակերպի մշակոյթ՝ եւ կենցաղ, որ եղաւ նաեւ դաստիարակութիւն եւ իր նկարագրային դրոշմը ունեցաւ մեր կեանքերուն վրայ, նաեւ մինչեւ հիմա: Արդարեւ, շատ անգամ կը փորձուիս իաշտարարար ընելու, թէ «պետք է՛ր մնայինք Լիբանան, թէ՛ պետք էր դուրս գայինք»: Եւ հաշուեյարդարը դուն քու անձիդ հետ է միայն, քանի որ ռեւէ մէկը պարտական չէ մեր արարած կեանքին, այսպէս ասած՝ «զովկուած օրերուն» հաշիւը փակելու:

Եւ հիմա Աթէնքի մէջ կը նայիմ Վաջէին: Ան դուրս եկած է Զալէպէն: Զյաջողեցաւ իր ընտրանքին մէջ, հաւանաբար իր պոթովումը՝ «ա՛յ չեմ ուզեր Զալէպ մնալ» կրցած էր տնօրինել իր կեանքը, եւ մղել ինք գտնելու ելք մը՝ դուրս գալու արհաւիրքէն:

Երեւի Յունաստան այս օրերուն դիւրին դարձած է մուտք գործել, եւ զարթոյններ Սուրիայէն եւ Իրաքէն՝ Թուրքիոյ վրայով եւ ծովու ճամբով կը հասնին հոս, ներառեալ հայեր: Եւ պատմութիւնն ու արեւմտաստեղծութիւնը, բազմաթիւ քայլերը հասնելու Յունաստան՝ լաւ օրացանկներ են մարդուն ստեղծարարական հնարքներու ծնունդին, մտնուանդ տագնապալի վիճակներու մէջ, հոն կայ նաեւ ճամբորդատար նաւը յունական ջուրերուն մէջ ընկղմիլ-չընկղմելու մտայնացում փորձող, պապ ջուրերէն դուրս գալով՝ ապաստանելի իրաւունք ստանալու միջոցառումները:

Սթէ Յունաստանի մէջ կը ստանան որոշ ժամանակ մը մնալու յաւանք կարգավիճակ, բայց նաեւ կը սկսին փնտռել երոպական դեսպանատուներ՝ ապաստանելի դիմումագիրներ ներկայացնելու համար:

Մեղուտն տերիօր եւ վերապատուելիին ամէնօրեայ մտահոգութիւններուն առանցքը կը կազմէ Յունաստանի սուրիահայ գաղթականներու եւ ապաստանեալներու այս կացութիւնը: Եթէ մէկ կողմէ յոյներն եւ սպառնաւ են, բայց նաեւ շատ առիթներով անկարող ըլլալու կացութիւնը աւելիով կը չարքուկ գիրեցը: Եւ ասոր վրայ պետք է նաեւ աւելցնել յունական եւ տեղական տնտեսական տագնապը, ինչ որ աւելիով կը դժուարացնէ բոլոր կարիքաւորներուն օգնութեան հնոց երկարելու պարագան:

Եւ շարունակեցի նայիլ Վաջէին: Կը զգայի Վաջէին հետ, եւ իր զգացումները հարձգատ էին ինծի: Երկուքս ալ ապրած ենք (ու տա-

կալին) պատերազմական կեանքի փորձառութիւնը: Թէեւ սուրիական պատերազմին ու տազնապին խորքը տարբեր է լիբանանեան մեր փորձառութենէն (պատերազմող կողմերու եւ տարողութեան ու գաղափարապաշտական եւ ծայրայեղականութեան իրականութենէն մեկնելով), սակայն այս տուեալները աւելի մտահոգիչ երեւոյթներ ստեղծած են Սուրիոյ պարագային, բայց պատերազմի ցաւը, որ երկուքիս սրտերուն վրայ ճնշած է, նոյնն է:

Բաժնուեցայ Վաչէն՝ լռելեան կիսելով մեր այս ցաւը, անկէ ետք Վաչէն չտեսայ, միայն գիտցայ, թէ Վաչէին ընտրանքը եղած է Շուրա ապաստանեալի իրաւունք խնդրել: Եւ կը փորձէ այդ մէկը իրագործել: Բայց Վաչէին եւ լռելեան ցաւիս մէջ կայ մէկ հասարակ յայտարար՝ իր (ոչ) հաւասարէ իրավիճակով:

Լիբանանեան պատերազմի ժամանակ մենք ունէինք հայրենիք, բայց ոչ անկախացած կարգավիճակով: Այսօրուանը պետականութիւն է, անկախացած, որ կը ներշնչէ ապահովութիւն: Եւ ապահովութիւնը եթէ մէկ կողմէ անցագիրի շնորհումն է բոլոր հայերուն, բայց նաեւ ինքնութեան եւ յենելու կոտան: Սեփական հողի՝ քուկո ըլլալու հասկացողութիւն եւ գիտակցութիւն է, եւ հայուն համար անտրոջգալու ապահովութիւն ներշնչող իրականութիւն:

Վաչէին, բայց նաեւ հայուն ընտրանքը: «Ապահովը տուն է»: Բայց ո՞ր եւ ինչպէ՞ս է ապահովը: Դապա՞ տունը:

# ՏԻԳՐԱՆԻՆ ԻՏԷԱԸ

«Հայրենասէր մըն էր պատուելին»

Պայ ժողովուրդի պատմութեան ամբողջ առանցքին, աշխարհական առաջնորդներու կողմին՝ ունեցած ենք նաեւ եկեղեցականներ, որոնք կարելոր է մտ ներդրում ունեցած են մեր ազգային, հայրենասիրական ու քաղաքական կեանքի ոլորտներուն մէջ: Դայ ժողովուրդի պատմութեան տարբեր հանգրուաններուն մէջ, ներառելով նաեւ Տեղասպանութեան արհաւիրքի օրերը, եկեղեցականներն ու հոգևոր առաջնորդները նաեւ մասցած են պատնէշի վրայ եւ իրենց ժողովուրդին հետ «զայսն են մինչեւ վերջ»:

Վերականներու եւ հոգեւոր առաջնորդներու այս փաղանգին մէջ եւ յատկապէս Տեղասպանութեան պատմութեան ժամանակահատուածին ընթացքին, իր կարելոր դերակատարութիւնը ունեցաւ վերապատուելի Տիգրան Գունտաքճեան:

Թէեւ 9 Սեպտեմբերի 1915-ին անոր նահատակութիւնը լրագրական շրջագայութեան ուշադրութեանը չարժանացաւ, սակայն անոր նահուան գուժը, այն օրերուն անթել հեռագիրի նման տարածուեցաւ ամեն կողմ՝ Եգիպտոսէն մինչեւ Պաղատա, Փոր Սայիտէն մինչեւ Տէր թրի անապատները ցրուած սիրեցեալ իր հօտին:

Պօս մօրերըայրը, որուն անունը ամուր կերպով առնչուած է Թեոսոպի եւ շրջանի հայութեան պատմութեան, որպէս զաղուփ տուրն ղեկավար, նոյնիսկ ժողովուրդի այն հատուածը, որ տարակարծիք եղած է պատուելիին գաղափարներուն եւ իր աշխատանքային ոճին՝ անվարան կը վկայէին, թէ «հայրենասէր մըն էր պատուելին»: Այն հայրենասիրութիւնը Տիգրան Գունտաքճեան ժառանգած էր իր ընտանիքէն եւ անոր դաստիարակութենէն եւ հետեւաբար ան իր



համակ կեանքը նուիրեց նոյնինքն այդ խոտային:

Անկախ այն իրականութենէն, թէ Տիգրան ծնած էր հաւատացեալ եւ եկեղեցիին ծառայող ընտանիքի մը մէջ՝ հայրը վեր. Յակոբ Գուստաքեանն է մայրը երիցուհի Մարիամ, սակայն անոր ճամբան դիրքին չեղաւ հասնելու համար հոգեւոր կոչումին եւ իր կեանքը տրուեց մաղորդելու իր ժողովուրդի ծառայութեանը համար: Կեանքի ճամբան գտնելու անոր փորձառութիւնը եղաւ փորձութիւններով լեցուն եւ բառելով հայր-որդի տարակարծութիւնները, կեանքի մէջ խոտային կերտելու տեսլականին ի խնդիր:

Տիգրանի հայրը, վեր. Յակոբ Գուստաքեանն եկած էր Ամասիոս լեռներու վրայ գտնուող Գասան Պէլլիէն: Ան իր աստուածաբանական ուսումը կատարելագործելու նպատակով կը մեկնի Մարաշ, իսկ կնոջ Մարիամին հետ, ուր 5 Սեպտեմբեր 1878-ին, կը ծնի Տիգրանը:

Եւ Տիգրանի կեանքի ճամբու փորձառութիւնները կը սկսին մտնել նույն հասակէն, երբ ան Մարաշի մէջ կը վարակուի ծաղիկի համաճարակով: Ծնողքը գրեթէ յուսահատած էին եւ կ'ապահիւնէին Աստուծոյ բուժումին: Եւ սեպտեմբերի Տիգրանի կեանքը կը խնայուի իր գին անոր դէմքին վրայ մնացած հետքերուն, որոնք ցկեանս իրեն պիտի ընկերանային:

Վեր. Յակոբը նոյն տարին կը վերադառնայ իր ծննդավայրը Գասան Պէլլի: Որոշ շրջան մը ան կը մեկնի Նաեւ Պէլլան, դարձեալ հովուական ծառայութեամբ: Տիգրան դպրոց կը յաճախէ Գասան Պէլլի եւ Պէլլանի մէջ, որմէ ետք ան կը դրկուի Այնթապ, ուր կը յաճախէ Կոնրոնական Զոլեճի նախակրթարանը: 1895-ի համիտեան ջարդերուն ընթացքին, Տիգրանի մէջ կ'արթնայ հայրենասիրութիւնը եւ կը կերտուի անոր հայրենասերի նկարագիրը, որ կը մղէ զինք պատասխանատու ընտրելու գէլքը եւ մասնակցելու ինքնապաշտպանութեան շարժումներուն:

Իսումը մը դասընկերներ, իրենց հայրենի ուսուցիչին ընկերակցութեամբ՝ խոյս կու տան քոլեճէն՝ միանալու համար հայկական Ֆեռատյական ինքնապաշտպանութեան խմբակներուն: Խոյս տուող հաւ պատանիներուն մէկ մասը բռնած էին Քիլիսի ճամբան եւ հոն սպաննուած: Տիգրանն է անոր երկու բարեկամները կ'առնեն Գասան Պէլլիի ճամբան եւ հոն կը հանդիպին աւագակներու, որոնք կը կողմնակցեն զիրենք բայց կը խնայեն իրենց կեանքերը:

Տիգրան որոշ ժամանակ մը մնաց դպրոցէն հեռու՝ Գասան Պէլլիի մէջ, փորձելով կեանքը լեցնել տարբեր գաղղումներով: Զորք մտահոգութիւնը եւ նեղութիւնը միշտ առկայ էր այդ ժամանակաշրջանին: Ան կը մտածէր, թէ տղան ձգած էր դպրոց եւ ուսում, եւ հետեւարար կորսնցուցած կեանքին մէջ իտեայի մը հասնելու գիտակցութիւնը:

Ինչը եւ այնպէս հորը վճռակամութիւնն ու հետեւողականութիւնը՝ իր գաւկիսն, անպակաս չէր մնար: «Իմ փափաքս է, որ ջարդոցի դառնութիւնը եւ հոգեւոր առաքելութիւն ստանձնես», եղած էր հորը խիզախ արձագանքը: Տիգրանի հայրը յաճախ արձագանքէր իր յայրենիքը: «Կ'ուզե՞մ դարձեալ դպրոց երթալ»: Տիգրան միշտ ալ մնաց իր որոշումին վրայ եւ հաստատած, թէ հետադրուած չէր հոգեւոր ծառայութեամբ:

Սակայն հետզհետէ Տիգրան համոզուած էր, որ կեանքի մէջ անհոգեւոր էր ձգտիլ խոտային մը: Երբ վեր. Յակոբ դարձեալ մեկնեցաւ Պէլլան՝ հովուական ծառայութեամբ, իր հետ տարաւ Տիգրանը, ուր ան ուսուցիչի պաշտօն վերցուց տեղւոյն հայկական վարժարանին մէջ:

Եւ Պէլլանի մէջ սկսաւ Տիգրանի կեանքի ճամբուն յստակացումը: Ան սկսաւ օրական դրութեամբ Աստուածաշունչ կարդալ եւ միշտ հոգ պատրաստ նեցուկը ըլլալ ու մասնակից դառնալ հոգեւոր եւ եկեղեցական ծառայութիւններուն: Գայր ու որդի սկսած էին զիրար համոզել եւ զիրար վայելել:

Պէլլանէն ետք Տիգրան՝ որպէս ուսուցիչ, կը մեկնի Զեսապ: Այդ պատշտօնէն ետք, ան կ'որոշէ դարձեալ Այնթապի քոլեճ վերադառնալ՝ երեւի «Անառակ Որդիին» վերադարձին նման:

Իսկ զոգո՞ւմը: Տիգրան այս անգամ ինքզինք կը գերազանցէ իր կողմնակցութեամբ եւ աշխատասիրութեամբ: Այնթապի քոլեճէնէն ետք կ'անցնի աստուածաբանական ճեմարան, որուն կրթական երկը տարիները ամբողջացնելէ ետք 1905-ին, կը վերադառնայ Զեսապ՝ ստանձնելով եկեղեցւոյ հոգեւոր հովիւի ծառայութիւնը:

1907 թուականին, վեր. Տիգրան կը կազմէ ընտանիք՝ ամուսնանալով Մարաշի աղջկանց վարժարանի նախկին ուսուցչուհիներէն Նարեկ Գըրբզեանի հետ: Բայց արդեօք քանի՞ տարիներու վրայ պիտի երկարէր ընտանեկան այս բոյնը:

1909 թուականին, Զեսապի շուկային մէջ տեղի ունեցած միջադէպ մը պատճառով վեր. Տիգրան կ'ամբաստանուի եւ կը կանչուի ժողովրդի ժողովրդի ոստիկանատունը, ուր արգելափակուած կը մնայ երեք ամիս: Ազատ արձակուելէն ետք, կը հասնին Ատանայի ջարդերու դիմախոս լուրերը:

Տիգրանի հայրը՝ վեր. Յակոբը, քսաներկու հովուապետերու հետ կը նահատակուի դէպի Ատանա իրենց ուղեւորութեան ճամբուն վրայ, երբ անոնք կ'ուղղուին մասնակցելու Կիլիսիոյ Աետարանական եկեղեցւոյ միութեան համաժողովին: Ասոր պիտի յաջորդէին իր երկու կրտսեր եղբայրներուն ու տակաւին այլ հարազատներուն նահատակութիւնը: Այս բոլորը եկան համոզելու Տիգրանը, թէ իր ողջ

մնացած ըլլալը կը պարտեր իր բանտարկուած ըլլալուն:

Այս բոլոր դժբախտութիւնները կրնան ընկճել մարդ արարած բայց Տիգրանին համար անկիւա եղաւ նոր արթնութիւն մը՝ անկողն ծառայելու իր ժողովուրդին: Զօրացած այս կամքով, Տիգրան վերադարձաւ Զեսապ, ուր իրեն կը սպասէր քանդուած եկեղեցի մը եւ սգակիր ժողովուրդ:

Զեսապի մէջ Տիգրան արտակարգ աշխուժութիւն ցուցաբերեց: Ան նպատակ դարձուց կառուցել խոշոր եւ ամրակուռ եկեղեցի մը ուր միանգամայն կրնային ապաստանիլ հազարաւոր մարդիկ՝ նոյն այլ դժբախտ դէպքեր կրկնուելին: Տիգրան կրցաւ Զեսապի մէջ խառնողականութիւն ստեղծել, առանց համայնքային եւ կուսակցական խտրականութեան: Ան բոլորը համախմբեց Զայ Աւետարանական Սբ. Երրորդութեան եկեղեցոյ շէնքին շինարարութեան ծրագիրին շուրջ:

Վեր. Տիգրան նիւթական օժանդակութիւններ կրցաւ ապահովել աշխարհի տարբեր երկիրներէ: Եկեղեցին եւ վեր. Տիգրանը եղան հայութիւնը միացնող օղակները:

Բայց դժբախտութիւնը ուրուականի մը նման միշտ ալ երեւի անտի հայածեր Տիգրան Գուևտաքճեանին: 1913-ին, իր կողակիցին երրորդ գաւկիս ծննդաբերութեան ընթացքին, կիսը կ'անհանգստանալէ եւ երեք ամիս ետք կը մահանայ:

Ժիշդ է, որ Տիգրանին կեանքին մէջ դարձեալ մուրը կոխած էր բայց ընկճուիլ չգիտցող այս հայրոջին դարձեալ փարեցաւ իր առաքելութեան: Չէ՞ որ երկար ճամբայ կտրած էր գտնելու համար այս իտեալը եւ առաքելութիւնը: Անկարելի էր գայն կորսնցնել: Ան իր երեք մանուկ գաւակները յանձնեց իր մօր եւ շարունակեց իր ծառայութիւնը իր ժողովուրդին եւ Զեսապի գաղութին համար: Եկեղեցոյ նորակառոյց շէնքը գրեթէ ամբողջացած էր եւ մնացած էր միայն տանկիքի մասը ծածկելը, երբ այս անգամ վրայ հասան 1915-ի հայոց տեղահանութիւնները եւ անոր յաջորդած Ցեղասպանութիւնը: Ինչպիսի որ այս արհաւիրքը քանդեց հայկական ամեն անկիւս, նաեւ քանդեց Տիգրանին թափած ջանքերը ու նպատակը:

Իր ժողովուրդին ծառայելու Տիգրանի անհատնում ուժակալութիւնը դարձեալ փաստեց իր գօրութիւնը: Տարագրութեան առաջին կարաւաններուն հետ քարոզուեցաւ նաեւ վեր. Տիգրան: Ան միշտ իր ժողովուրդին հետ էր, կը փորձէր ամենուն հասնիլ: Կարաւանի երթուղիին վերջին կէտն էր Զոմս քաղաքը: Զամայի քաղաքներէն մեկուն մէջ հաստատուած գաղթակայանի մը մէջ հաւաքուած էին ամեն կողմէ եկած տարագիր հայեր:

Տիգրան դարձաւ բոլորին պատուելին. ան գործ, դրամ, կարելի

չէր, հաց եւ ջուր հասցուց բոլորին եւ ամենէն կարեւորը՝ յոյս ներշնչեց բոլոր հայերուն սրտերուն: Իր հարազատներէն ստացած նոյնական օժանդակութիւնները բաժնեց բոլոր կարօտեալներուն: Ինչպիսի դեռ օրը լոյս է, կատարելու եմ գիս Ուղարկողին կամքը: Գիտե՞մ մարդ չի կրնար աշխատիլ»: Այս ըսելով, կը բազմապատկէր իր ջանքերը, տարագիր հայ ժողովուրդին ցաւերը կիսելով եւ անոնց անուղեղով:

Իրեւի Տիգրան նախագգաց, թէ գիշերը պիտի գայ: 1 Սեպտեմբեր 1915-ին, շատերու կողքին, վեր. Տիգրան եւս վարակուեցաւ թիֆուս եւ անկողին ինկաւ: Եթէ անոր կեանքին բոլոր փորձառութիւնները յաջան իր ուժը խլել իրմէ, անողոց հիւանդութիւնը կրցաւ: Տիգրան չէր կրնար շարժիլ այլեւ:

Անշարժանալով հանդերձ Տիգրան չկորսնցուց իր իտեալը: Այն իտեալը, որ գտած էր անցնելով իր կեանքի տարբեր փորձառութիւններէ: «Ասպարեզիս մէջ ցարդ հինգէն մէկ քարոզիչ էի», ըսաւ ան, անկեցնելով. «Երբ ապաքինիմ, հինգէն հինգ քարոզիչ պիտի ըլլամ»:

Տիգրան չապաքինեցաւ, որպէսզի «հինգէն հինգ քարոզիչ ըլլար»: Ինչպէս ան մինչեւ իր վերջին շունչը սիրեց իր իտեալը: Իտեալը հասարակ եւ իր տարագիր ժողովուրդին ծառայութիւնը: «Դիմացս կեց յոյսեր կան (կ'ակնարկէր Զօրը, Որդիին եւ Սուրբ Զոգիին - Զ. Ը.), մէկն ալ գաղթականիւն թող ըլլայ», ըսաւ ան:

Երեսուներեք տարեկանին վեր. Տիգրան Գուևտաքճեան մահացաւ իր տարագիր հայ ժողովուրդին հետ: Իր գերեզմանը մնաց անկայտ, ինչպէս բոլոր տարագիրները, բայց մնաց իր իտեալ, եւ այդ իտեալէն ժայթքած իր շատ սիրած Լոյսը: Լոյսը, որուն մէջէն ան տեսաւ, թէ իր ժողովուրդը ու անոր քրիստոնէական հաւատքը ապրեցան, նոյնիսկ երբ ինք ու իր տարագիր ժողովուրդը մեռան:

«Կարեւասէր մըն էր պատուելին»:

Որովհետեւ հաւատաց եւ հաւատարիմ մնաց իր հայկական իտեալին: Տիգրանի իտեալը հայուն իտեալն էր, որ սակարկութեան չեն սարկուեցաւ, ի գին նահատակութեան:

# ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆՆՈՒԹԵԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

*«Հին մարդը իր գործերովը չէր վրայէն հանելը  
եւ հազէր այն նորը գիպութիւնով նորոգում իր  
սրտիդողին պարկերին պէս»:*

*(Կողոսացիս 3, 9-10)*

Եթէ հին հագուստը կարելի է դիւրութեամբ հանել եւ նորը հագնել, բայց իՆչպէս արդեօք կարելի է նոյնը ընել մեր կեանքերուն մէջ: Այս մէկը կարելի է, երբ կրկանը իւրացնել մեր կեանքերուն նոր: Իսկ նոյնիքն այս նորին շնորհած գիտութիւնը կը դառնայ մեր կեանքերուն նորութիւնը ստեղծողին պատկերին պէս, որ է Յիսուս Քրիստոս:

Քրիստոնեական աստուածաբանութեան կորիզը՝ մարդկային անհատականութեան մէջ, փոփոխութեան հասկացողութիւնն է: Եթէ այս փոփոխութիւնը ըլլայ, քրիստոնեական հասկացողութեան նւնոր պրիսմակէն, կը նշանակէ, թէ սխալ բան մը կայ: Փոփոխութիւնը եւ անոր հետ յառաջ եկած նորը ու նորութիւնը շարունակուող եւ տեսապէս աճող ու զարգացող գործընթաց մըն է անհատական եւ հաւաքական մեր կեանքերուն մէջ:

Եւ նորը՝ ստեղծողին պատկերին պէս: Որովհետեւ քրիստոնեական աստուածաբանութեան միտք բանին կը կայանայ Աստուծոյ յայտնութեամբ՝ Ինք իր անծովը աշխարհ գալը: Եւ այս յայտնութեան մղիչ ուժը նոյնիքն Աստուծոյ սերն է, որովհետեւ «այնպէս սիրեց աշխարհը» (Յովհաննու 3, 16), ուր Ան կը իրակիր մեզ բուրբս, հաշտուն լու իր հետ «որպէսզի ամէն ով որ իրեն հաւատայ չկորսուի»: Եւ այս հաշտութեան արդիւնքը փրկութիւն է, ուր հաշտուողը «յախտնական կեանք պիտի ունենայ» (Յովհաննու 3, 16):

Եւ փրկութեան այս հասկացողութիւնը պէտք է թարգմանել մարդ անհատին Քրիստոսով նոր անծ մը ըլլալու իրականութեան հետ որուն բովանդակութիւնը Աստուծոյ սերն է: Աստուծոյ սերը, որ մարդացաւ, կը դառնայ մարդուն նոր նկարագիրը, ուր անհատը Աստուծոյ ստեղծագործութեան մէջ կը դառնայ նաեւ ստեղծագործող անդամ, եւ ուր նորութիւնը կը սկսի ստեղծել իր ապրած հաւաքականութիւններուն մէջ: Եւ այս նորութեան կեանքը քրիստոնեական արգասիքն է:

Աստուած-Քրիստոս մարդ է հաւաքականութիւն յարաբերութիւնը պիտի հասկնալ այս նորին ու նորութեան հասկացողութեան

մկնելով: Աստուած ստեղծեց մարդը: Մարդը կը ստեղծէ հաւաքականութիւնը: Որովհետեւ քրիստոնեական հասկացողութեան մէջ, հաւաքականութիւնը կազմուած է մարդոցմով, ինչպէս որ եկեղեցին կազմուած է հաւատացեալներու՝ անհատներու միութեամբ: Եւ Աստուծոյ փրկութիւնը՝ նորը, մարդուն համար է, որպէսզի ան այս նորութիւնը ներմուծէ հաւաքականութեան մէջ, ուր կը ստեղծէ եւ կը ստեղծուի քրիստոնեական հիմքը: Եւ այս Քրիստոսի միջոցառումն է: Աստուած եւ մարդ, նաեւ հաւաքականութիւն, հաշտ յարաբերութիւն ունենալ է Աստուծոյ եւ իրար հետ: Եւ այս հաշտ յարաբերութիւնը, քրիստոնեական աստուածաբանութեան մէջ, կու գայ Քրիստոսի շնորհած փրկութեան:

Քրիստոսի յայտնութիւնը, փրկութիւնը եւ նորը, չունի ժամանակագրական ու պատմական սահմանափակ տուեալ: Իրականութիւնն այն չէ, որ եղած է միայն անցեալին մէջ: Ան անցած է ներկային ու տակաւին կը շարունակուի ապագայի տեսլականով: Քրիստոսի նորը կ'զգոյն ու կ'անցնի ամէն ժամանակ, պատմութիւն, լեզու, մշակոյթ եւ ինքնութիւն: Եւ եթէ եկեղեցի հասկացողութիւնը պիտի հասկնալ, որպէս ընդհանրական, որովհետեւ Քրիստոսի նորը ընդհանրական է եւ թողոր ժամանակներու համար:

Այսէ կարելի է կամրջել, թէ ինչպէս նորը պիտի ստեղծէ նորութիւնը: Որովհետեւ Քրիստոսի շնորհած նորը պիտի խթանէ անհատը, որպէսզի նորութիւնը իրագործէ նախ իր կեանքին մէջ, որովհետեւ ան կը պատկանի Աստուծոյ ստեղծագործութեան, ուր «Յոյնն ու հրեան, ծառայ կամ ազատ» (Կողոսացիս 3, 11) տարբերութիւն չկայ: Եւ անհատը հպարտ պիտի զգայ, թէ կը պատկանի Ստեղծագործողին ընտանիքին, եւ թէ իր կեանքի ընթացքը տարբեր պիտի/պէտք է որ ըլլայ:

Իսկ տարբերը:

Նորութիւնը շինելն է. կեանք մը, ուր կայ «գութք, ողորմութիւնը եւ քաղցրութիւնը, խնայարկութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը» (Կողոսացիս 3, 12): Աստուած երբ ստեղծեց աշխարհը, նաեւ մարդը, ստեղծեց նոյնիքն այս չափանիշներուն վրայ եւ մեկնելով անէ: «Անա շատ բարի էր» (Շննորդ 1, 31): Որովհետեւ Աստուած ստեղծեց աշխարհը իր պատկերովը եւ իր պատկերը բարին է: Եւ ստեղծագործութիւնը նորութեան արտադրութիւնն էր, որ հիմնուած էր նորին՝ Բարին վրայ: Եւ մարդը՝ Աստուծոյ բարի նկարագիրը իւրացնելով, իր ետին պիտի ձգէ այն ամէնը որ բարի չէ, նոր չէ, եւ պիտի աշխատի նորութիւնը, որպէս տեսլական ներմուծել իր չորսդին: Եւ այս քրիստոնեական իրականութեան մեծ մարտահրաւերն է:

Այս նորութիւնը աշխատանքային գործընթաց չէ, հապա ապրող

նոր նկարագիր, որ քրիստոնեան պարտի փոխանցել զայն:

Վերջապես Քրիստոսի նորը անշարժ եւ լճացած իրականութիւն մը չէ, այլ աճող եւ մեծցող իրականութիւն, որովհետեւ Աստուծոյ կողմէ մարդուն եւ աշխարհին տրուած շնորհքն է: Եւ այս շնորհքն է որ կ'արտադրէ նորութիւնը, իմնա՝ քրիստոնեական իրականութիւնը, որ լեցուած է Քրիստոսի սիրով զոր չի եւ պէտք չէ զլանայ անդադար նորը ու նորութիւնը արտադրելու: Այս նորը ու նորութիւնը պէտք է ապրիլ եւ ապրեցնել պատմութեան բոլոր ժամանակներուն մէջ: Եւ քրիստոնեայ իրականութեան համաշխարհային քաղաքակրթութեանը բերած իր մեծ նպաստը կը կայանայ այս նորին՝ նորութիւն արտադրելու իրականութեանը եւ մասնակցութեանը մէջ:

Քրիստոսի Նորը եւ Քրիստոնեութեան նորութիւնը: Անհատական եւ հաւաքական կեանքերը աճեցնող ապրող իրականութիւնը:

# 2015

## ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

### «ՄԱՐԴԸ ԻՆՉ Է, ՈՐ ԶԱՆԻԿԱ ԿԸ ՅԻՇՆԵՍ»

Մարդը միշտ ալ հիմնական եւ կեդրոնական տեղ ունեցած է Աստուծոյ թագաւորութեան մէջ:

Բայց նախ Աստուծոյ թագաւորութիւնը:

Աստուծոյ թագաւորութիւնը սկսաւ ստեղծագործութեան պատմութեան հետ. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (Շննդոց 1.1): Եւ ստեղծագործութեան պատմութեան մէջ կային հասկրուանային գործընթացները: Առաջին օրը Ան լոյսը ըրաւ: Երկրորդ օրը «ջուրերը զատեց»: Ապա յաջորդաբար «ջուրերը մէկտեղեց եւ ցամաքը երեւցաւ» եւ տակաւին կանաչ խոտ, լուսաւորներ, թռչուններ եւ շնչաւոր կենդանի եւ վերջապէս «մեր պատկերին ու նմանութեանը պէս մարդ»: Եւ այս բոլոր ստեղծագործութիւններուն սկզբարկելով «Աստուած տեսաւ որ բարի են» (Շննդոց 1.1-31):

Եւ հոս յատկանշական է «բարի» բառին ու անոր, որպէս ածականի, քերականական գործածութիւնը: Որովհետեւ ածականը կը ստեղծէ պիտակ, կու տայ ստեղծուած իրականութեանը, այս պարագային ստեղծագործութեանը ինքնութիւն եւ դիմագիծ: Եւ Աստուծոյ ստեղծագործութիւնը, որ բարին է եւ կու գայ յատկանշելու թագաւորութեան էութիւնը եւ հիմքը: Բայց այս բարի թագաւորութեան մէջ սխալ բան մը պատահեցաւ: Եւ սխալը մարդն էր, որ պակաս գոտուեցաւ: Եւ այդ պակասին՝ մեղքին մէջ, ան զլորեցաւ եւ դուրս մնաց Աստուծոյ թագաւորութենէ:

Բայց Աստուած երբեք չի դադրեցաւ մարդը յիշելէ, բայց նաեւ գայն փնտռելէ ու գտնելէ: Եւ եկաւ կոչը. «Տերոջը ճամբան պատրաստեցէ, ու անոր շաւիղները շտկեցէ» (Մարկոս 1.3): Եւ կոչը Յովհաննէս Մկրտիչէն էր, որ կը քարոզէր. «Ես ձեզ ջրով մկրտեցի, բայց անկիւս ձեզ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ» (Մարկոս 1.8): Եւ Սուրբ Հոգիով մկրտութիւնը պիտի ենթադրէր դառնալ քաղաքացի Աստուծոյ թագաւորութեանը: Եւ այս քաղաքացիութիւնը հիմնուած է Քրիստոսի եւ Անոր սիրոյն, շնորհքին ու զօրութեան վրայ: Անոր սերն է, որ մեզի դարձեալ առիթը շնորհեց զոչալու եւ ներումի: Եւ այս Քրիստոսի սիրոյն շնորհքն է, որ մեզ կը վերադարձնէ Աստուծոյ թագաւորութեան եւ անոր պատկանելիութեան: Եւ դարձեալ Քրիստոսի զօրութեամբն է, որ մարդը կ'ապրի այս աշխարհի մէջ՝ նոր կենսքի պի-



տակով, որ նաեւ նոյն այս կեանքը կը տանի զինք դէպի յաւիտենականութիւն:

Սուրբ Յոզիով մկրտութիւնը եւ անոր շնորհած նոր կեանքի իրականութիւնը կարելի չէ եւ պետք չէ հասկնալ որպէս անհասանելի հոգեւոր կեանքի մը իրականութիւնը: Այլ պետք է գետնէլ զայն որպէս հոգեւոր կեանքի սկիզբ մը, որ կը գործէ եւ իրական է այս աշխարհի մէջ եւ որ կը տանի մեզ դէպի յաւիտենականութիւն: Ու տակաւին այս նոյնինքն հոգեւոր կեանքը երբեք ամբողջութեամբ պիտի չիրականանայ այս երկրային կեանքի մէջ: Երեւի պիտի կարենանք քաջ որոշ արդիւնքներ եւ տեսնել որոշ իրագործումներ՝ ապրելով քաջ երկրային իրականութեան մէջ: Բայց եւ այնպէս նոյն այս հոգեւոր կեանքը ունի իր շարունակականութիւնը, որ ֆիզիքական կեանքի վերջ կը շարունակուի յաւիտենականութեանը հասկացողութեան մէջ:

Եւ այս հայեցակէտէն ու անոր հասկացողութեանը մէջէն է, որ պետք է կարդալ, հասկնալ եւ ընկալել Յայտնութիւն Յովհաննոս որպէս ապագայի իրականանալիք աստուածաբանական մեկնութիւն: Աստուծոյ թագաւորութեան ստեղծած եւ սկսած հոգեւոր կեանքը, յաւիտենականութեանը կ'ուղղուի ստանալով նոր երկիր մը՝ նոր երկրիքի եւ նոր երկրի տակ: Հոն, ուր Աստուած իրենց հետ պիտի ըլլայ, եւ թէ աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ: Եւ պիտի վերջանան մահը, սուգը, աղաղակը եւ ցաւը:

Բայց կայ գերագոյնը: Եւ այդ ալ յաղթանակն է: Եւ յաղթանակ արդիւնք է մղուած եւ մղուող պատերազմին: Պատերազմ մը, որ սկսած է եւ որ կը սկսի երկրային կեանքին մէջ: Պատերազմը՝ հոգեւոր կեանքի իւրաքանչիւր քաղաքացիին, որ կը մղէ զինք երկրային կեանքին մէջ, դեմ դնելու ամէն տեսակի պիղծերուն ու մարդասպաններուն, ստախոսներուն ու տակաւին: Հոգեւոր կեանքի իրական վիճակն է այս պատերազմը երկրային աշխարհին մէջ, եւ որ պիտի պսակուի յաղթանակով՝ յաւիտենական կեանքի իրականութեան մէջ, ուր Ան «նոր Աստուած պիտի ըլլայ, ան որդի պիտի ըլլայ» (Յայտնութիւն Յովհաննոս 21.4): Եւ այս յաղթանակն է բարիին՝ Աստուծոյ թագաւորութեան եւ պարտութիւնը չարին՝ մեղքին: Եւ որ պիտի ենթարկուի երկրորդ մահուանը (Յայտնութիւն Յովհաննոս 21.8):

Եւ այս Աստուծոյ թագաւորութեան շնորհած ապահովութիւնն է որ կը սկսի երկրային կեանքին մէջ շարունակուելու համար յաւիտենականութեան իրականութեամբ: Ապահովութիւն մը, որ ոչ մի ապահովագրական ընկերութիւն կրցած է ու տակաւին կրնայ ընձայել: Եւ այս ապահովութիւնը մարդուն համար է: Այն մարդը, որ «ինչ է, որ արժանի է յիշելու»: Եւ ուր այս նոյն մարդը Աստուծոյ թագաւորութեան մէջ «վառքով ու պատուով պսակուեցաւ» (Մաղմուս 6.5):

Աստուծոյ թագաւորութիւնը: Աստուծոյ ստեղծագործութենէն մինչեւ Աստուծոյ յայտնութիւնը: Իր առաջին եւ երկրորդ գալուստովը: Մարդը յիշելու թագաւորութիւնն է:

Եւ մարդը պետք է որոշէ բայց նաեւ ընտրէ, թէ կ'ուզէ՞ դառնալ Աստուծոյ թագաւորութեան քաղաքացին:

## «ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԴԱԺԱՆ Է»

Ապրիլ 28, 2015: Քաթարէն աշխատանքային այցելութեամբ կը մեկնիմ Թոքիո: Առաջին անգամն է, որ ճափոն պիտի այցելեմ: Քննականաբար կը հետեւիք ճափոնի ճարտարարուեստական յստախաղացքին և գիտեք, որ այդ երկիրը իր արտադրութիւններով որոնք է և աշխարհի շուկան, բայց նաեւ կարգացած են պատմութեան ընթացքին անոր սխրագործութիւններուն մասին: Անոր անցեալի նուաճողական եւ որոշ համեմատութեամբ նաեւ բռնատիրական արտադրութեանը լեցուցած են պատմութեան էջերը: Բայց նաեւ փոքր տարիքէն միշտ ալ մեծ պատահի կրայ դիտած են պատերազմական ժապատներուն մէջի ճափոնական սխրագործութիւնները Այսպիսով ներկայի ու անցեալի անոր նուաճողական իրավիճակները, տարբեր բովանդակութիւններով, ճափոնի նկատմամբ որոշ տրամադրութիւն ստեղծած են մտապատկերիս մէջ:

Քաթարէն մինչեւ Թոքիո թռիչքը պիտի տեսնեմ մտատրոպապէ տասը ժամ: Երկար թռիչքներու ընթացքին ընդհանրապէս պետք է ձեռով մը զբաղիլ, գէթ չզգալու համար, թէ կը գտնուիս օդը՝ դատարկութեան մէջ, եւ թէ տարբեր տրամադրութիւններ եւ հոգեվիճակներ կը ծագին ճամբորդողին ներաշխարհին մէջ:

Այդ երկար թռիչքին ընթացքին, չեն գիտեր զուգարդիպութեամբ թէ բախտով, յիսունն անէլի ժապատներու շարքէն ընտրեցի հատ մը որուն նիւթը կը վերաբերեր Դամաշխարհային Բ. պատերազմին ընթացքի ճափոնական մեկուսացման բանտի մը մէջ ամերիկացի բանտարկեալներու կեանքին:

Ժապատէն կը նկարագրեր ամերիկացի ողիմպիականի մարզիկ եւ պիտեան Լուիս Չամբերիկիին կեանքը: Ան համաշխարհային մրցանակներ եւ մրցանիշեր հաստատելէ ետք կը զինուորագրուի ամերիկեան բանակին մէջ եւ Դամաշխարհային Բ. պատերազմին գերի կը բռնուի ճափոնցիներուն կողմէ:

Ժապատէն մէկ կողմէ կը նկարագրէ ամերիկացի գերեվարուած զինուորներու տաժանակիր կեանքը, իսկ միւս կողմէ կը կերտուաւայ Լուիսի պարագային եւ ճափոնցի բանտապահին հետ, որ բռնակալ մըն էր, անոր յարաբերութեան վրայ:

Ժապատէն լեցուն էր Լուիսի կրած զրկանքներով ու անոր նկատմամբ եղած վիրաւորանքներով, Լուիսի ներաշխարհի վերիվարումները, կը ներկայացուի բանտապահին դաժան ու բիրտ վերաբերումը Լուիսի նկատմամբ՝ ճգմելու համար անոր ապրելու ձգտումն ու կամքը (քանի որ բանտապահը գիտեր, թէ Լուիս պիտեան էր): Կան

նաեւ Լուիսի վիրաւորուած ու վրիժառուի նայուածքները եւ մտորումները բանտապետին նկատմամբ. «Օր մը քեզ պիտի սպաննեմ»: Ժապատէն լրիւ դիտեցի, եւ ինչպէս որոշ ժապատներ, այս ալ իր սպիտակութիւնը ունեցաւ ներաշխարհիս վրայ, ու մէջս սկսաւ ծագիլ մտորուք մը. «Ես արդեօք ո՞ր կ'էրթամ»:

«Մեզի համար շատ կարեւոր է հաւաքական կեանք հասկացողութիւնը»: Ծիւնն է խօսողը՝ ճափոնի մեր ընկերութեան գործադիր տնօրէնը: «Մեր պատմութիւնը լեցուն է արիւնով ու դաժանութեամբ, եւ այլեւ չենք ուզեր այդ մէկը կրկնել: Կ'ուզեմք տղ կեանք մը կերտիլ, որպէս երկիր եւ հաւաքականութիւն»:

Ճափոնի մէջ քանի մը օրերու այցելութեանս ընթացքին վայելեցի այս տղ կեանքը: Ծափոնցիք կրցած էին տեսնել, թէ իրենց պատմութիւնը դաժան եղած էր եւ սխալներով լեցուն: Ուստի, որպէս երկիր եւ հաւաքականութիւն, տեղագրին կերպով լծուած են այդ դաժանը ու սխալը սրբագրելու: Մէկ կողմէ կ'ապրիս ճափոնի յառաջխաղացքը, ըսայ նաեւ մարդկային կենցաղը, մարդոց նկատմամբ ճափոնցիներուն ունեցած յարգանքը ու տրուած արժեքին կարեւորութիւնը: Անոր դաժանը եւ սխալը սրբագրելով ստեղծած են տղ դաստիարակութիւն, որուն վրայ հիմնած են իրենց հաւաքական կեանքերը եւ այս՝ տղ գրաւականով: Անոնց հաւաքական այս կեանքերն են, որ այսօր յառաջխաղացքի մէջ են:

«Զայլական գաղութը կը հաշուէ մտատրոպապէ հարիր հայ»: Դոկտ. Կրանտ Պօղոսեան է խօսողը՝ Դայաստանի դեսպանը ճափոնի մէջ: «Չունիք գաղութի դրուածք, այնպէս որ դեսպանատունը նաեւ դարձած է հայութիւնը քով-քովի բերող հաւաքավայր»: Դոկտ. Պօղոսեան քսանհիկ շարիներէ ի վեր կ'ապրի Թոքիո: Եկած է որպէս համալսարանի դասախօս եւ ամպիոնի վարիչ եւ կը տիրապետէ ճափոններէ լեզուին: Ներկայիս Դայաստանի դեսպան նշանակուած է Յեղասպանութեան հարիւրամեակի առթիւ իրատարակած է գրողներ ճափոններէ լեզուով՝ տեղացի ժողովուրդին ներկայացնելու համար հայուն արհաւիրքը: «Ճափոնցի ժողովուրդը ապրած է եւ գիտէ ցաւը, այնպէս որ կրնայ հասկնալ հայուն ենթարկուած Յեղասպանութեան ահաւորութիւնը», շարունակեց դոկտ. Պօղոսեան:

Այդ Յեղասպանութեան ահաւորութիւնը եւ անոր հետեւանքները կը տեսն մինչեւ այսօր: Սփիւռքը եւ հայուն կոտորակուած ու աշխարհով մէկ տարածուած իրավիճակն է: Ռազմիկ Պալեանը Իրանէն անցած է Անգլիա եւ ներկայիս կ'ապրի Թոքիո: «Կը փորձեմք ամեն ձեւով հայ մնալ», Ռազմիկն է խօսողը: «Տունը հայերն կը խօսինք, որպէսզի զաւակներս վարժուին եւ սորվին: Ուրիշ գաղութներու նման կազմակերպուած չենք, որպէսզի կարենայիք 100-ամեակին



ատիթով պատշաճ կերպով նախաձեռնություններ կատարել», ըստ ան: Բայց Ռազմիկ ուներ հպարտության մը, զոր քառնեց ինձի հետ «Տղաս, որ տեղական դպրոց կը յաճախէ, իր դասպահեցու մէկուն որպէս նիւթ ներկայացուց հայոց Յեղասպանութիւնը», եզրափակեց Ռազմիկ:

Հայը ամեն տեղ իր ցաւը կը դրսեւորէ որպէս յիշեցում, բայց նաև պահանջատիրութիւն:

Ապրիլ 30-ին Ճափոնի վարչապետ Շինճօ Ապէ Միացեալ Նահանգներու ծերակոյտին առջեւ արտասանած իր խօսքին մէջ ըստ «Մեր պատմութիւնը դաժան է: Կարելի չէ ժամանակին ընթացքը փոխել եւ վերադառնալ բռնութեան օրերուն ու չընել ինչ որ եղած է: Ես իմ յարգանքս եւ ցաւակցութիւններս կը յայտնեմ ամերիկացի ժողովուրդին եւ անոր բոլոր նահատակներուն, որոնք ինկան Համախարհային Բ. պատերազմին ընթացքին»: Ու տակաւին, վարչապետը համեստութիւնը ունեցաւ խօսելու պատմութեան ընթացքին իր երկրին «սխալներուն» մասին՝ տարածաշրջանի երկիրներուն նկատմամբ: «Մեր արարքները միայն դժբախտութիւն բերին ասիական երկիրներու ժողովուրդներուն»:

Եւ անպայմանօրէն կը սկսիս հարց տալ: Ե՞րբ պիտի գայ այն օրը, որ թուրքիան ալ յանդգնութիւնը եւ համեստութիւնը պիտի ունենայ յար եւ նման ճափոնի, ընդունելու, թէ իրենց պատմութիւնն ալ դաժան է, եւ թէ իրենց ալ միայն դժբախտութիւն բերին տարածաշրջանի երկիրներուն եւ ժողովուրդներուն: Եւ դժբախտութիւնը մարդկային նահատակներն են, հողային կլանումը ու աւելին:

Բայց կը վերադառնամ օդանաւին մէջ դիտած ժապաւենիս: Համախարհային պատերազմը կ'աւարտի, Ճափոն կը յանձնուի, ու գերիները ազատ կ'արձակուին: Այս պայմաններուն մէջ Լուիս պետք էր ընտրութիւն կատարէր: Լուիս չսպասնեց ճափոնցի բռնապետը,

այլ որոշեց իր վրէժը լուծել նոր կեանքեր կերտելով: Ան իր կեանքը նախքէն հոգեւոր եւ մարդասիրական առաքելութեան՝ նոր կեանքեր եւ հաւաքականութիւններ ստեղծելով:

Եւ հայուն պատմութեան փորձն ալ այդպէս էր: Ցեղասպանութեան ետք նորը շինելով է, որ հայը վերապրեցաւ եւ ոչ թէ սպաննելով, այլ նորն է, որ հայուն կու տայ ուժը եւ վճռակամութիւնը շարունակելու իր աւանդը քիչ մը ամեն տեղ եւ միևնէն թոքո: Այդ նորին ուժով է, որ Ռազմիկին գաւակը ու բոլոր հայ մանուկները պիտի շարունակեն ներկայացնել Ցեղասպանութեան ահաւորութիւնը՝ յիշելով եւ պահանջելով:

Իսկ այսօր: Հայը պիտի շարունակէ իր երթը հարիւրամեակէն անդին, պիտի շարունակէ նոր կեանքեր կերտել ամեն տեղ, որովհետեւ նոր կեանքեր կերտելով է, որ հայը պիտի կրնայ զօրաւոր կերպով յիշել, յիշեցնել, պահանջել ու տակաւին պահանջատիր ըլլալ, թէ թուրքիոյ պատմութիւնը դաժան է, պետք է սրբագրուի, բայց նաև նորը հատուցուի:

# ԱՄՏՕ ԱՐՏՈՅԻՆ ԿՈՒՆԵՐԸ

«Պեղք չէ միայն խաղաք, այլ նաև պայքարի»

1973 թուականն էր: Լիբանանի քաղաքացիական պատերազմի առաջ: Հայրս որոշեց, որ այլևս բաւարար էր Էշրեֆիէի Մոնթէ Նապ հան թաղամասի մէջ մեր բնակութիւնը: Մեր թաղը յատկանշական էր տուներուն քով-քովի եւ մէջ-մէջի իրարու միացած իրականութեամբ, ուր ընտանիքներ՝ թեպէտ գատ տնակներու մէջ էինք, բայց միասին ապրելու սովորութիւն ունէինք: Այսպիսով, փոխադրուիս ցանք ժողովուրդի շրջանը, որ այդ օրերուն ծածկուած էր նարինջի պարտեզներով: Մեր շէնքը, կարելի է ըսել, որ առաջիններէն էր ընդհանուր թաղամասին մէջ: Մոնթէ Նապիանի խճողուած կեանքէն ետք ժողովուրդի մեր տունը շատ աւելի մենակեաց էր, նորութիւն մը որուն պէտք էր ընտելանայինք:

Բայց չուշացան նոր շէնքերու կառուցումները, եւ մեր մենակեաց կեանքը սկսաւ կամաց-կամաց փոխուիլ. այդ նոր շինարարութիւններէն մէկը Արտաւազը Մարութեանի կառուցած շէնքն էր, մեր տան ուղիղ դիմացը:

Ես այդպիսով պիտի գիտնայի, որ Արտաւազը Մարութեանը եւ հայրս եղած են մտերիմ բարեկամներ՝ Հալեպէն, իրենց երիտասարդական տարիներէն սկսեալ: Այդ նոր շէնքի շինարարական աշխատանքներուն հետ սկսաւ նաեւ իօրս բարեկամին հետ իմ նոր ծանօթութիւնս, որ զարգացաւ ու ջերմացաւ պատանեկան կեանքիս, ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւններուն մէջ աւելցնելով օղակ մը ես՝ Ամնօ Արտուն:

Արդեօք այդ օրերը տարբէ՞ր էին, աւելի դիւրի՞ն, օրհնաբե՞ր: Ամէն կէսօր Ամնօ Արտուն մեզի պիտի միանար ճաշի: Հայրս իր աշխատանքները եւ Ամնօ Արտուն շէնքի շինարարական գործերը կարգաւորելէ ետք, իսկ ես ալ դպրոցէն վերադառնալով՝ ճաշի պահը կը վերածուէր հաւաքոյթի: Պատմութիւններ, անցեալի յուշեր,



իծնող, բայց մանաւանդ՝ բարեկամութիւնը ամրապնդող ժամեր, որոնք երբեք ձանձրացուցիչ չէին, քանի պատմութիւնները շատ էին: Իսկ Ամնօ Արտուն զուարթ մարդն էր եւ շատ լաւ պատմող, իսկ պատմածներուն վրայ համեմատելու իր սովորութեամբ կը զուարթացնէր մթնոլորտը:

Հայրս կը սիրէր բարեկամները եւ բարեկամութիւնը, հաւատացած էր այս մարդկային արժեքին կարելորդութեան: Ինծի հետ իր երկրային կեանքը շատ երկար չեղաւ, բայց այդ իր խտացեալ կեանքի մասնակաշրջանին ան բաժնեց ինծի հետ իր բարեկամները, որոնք մէկիկ-մէկիկ իրենց դրոշմն ու արժեքները փոխանցեցին ինծի, որպէս կեանքիս շարունակականութեան կոտան: Եւ Ամնօ Արտուն անոնցմէ մէկն էր:

Սուրիոյ եւ արաբական աշխարհի մէջ 1930-ական թուականներէն սկսեալ Արտաւազը եղած էր մեծ անուն վաստակած Ֆութպօլ խաղացող, այնքան մեծ, որ կոչուած էր նաեւ Ֆութպօլի թագաւոր: Սուրիոյ ժողովուրդը, հայ թէ արաբ, իրեն երկրպագողներն էին: Խաղցած ու մաս կազմած էր շատ մը մարզական ակումբներու, նկատի ունե-



ՍՈՒՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԱԸ 1942, ՍԵՊՏԵՄԲԵՐ 28-ԻՆ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏԻՆ ԿՐԱՅ, ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԱԸ 2-1 ԱՊՐԻԻԼԵՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼ ԱՌԱՅ:  
Ձախէն՝ Արտ. Մարութեան, 6-րդ՝ Մանուէլ Գաթրօնեան (ՀՄԸՍ), 8-րդ՝ Վազգէն Տէր Ղուկասեան (ՀՄԸՍ), ձախէն՝ Աբրահամ Բեշիշեան (Վասպ.), 5-րդ՝ Համազասպ Արզումեան (ԳՄԸՍ)

նայով, որ այդ օրերուն չկային ֆետերասիոնի դրուժին եւ համա կարգ, որ պարտադրանք կատարէր մարզիկներու: Ան նաեւ հասած էր Սուրբոյ հաւաքականի խմբապետի պատասխանատու առաջնորդութեան:

«Ժողովուրդին հերոսն էր եւ բոլորը կը սպասէին իր կոչերուն», հայրս էր: «Բայց մանաւանդ երբ իրենց խումբը անելի մէջ ըլլար, ամբողջ դաշտը կը թրթռար. «Եա՛ր Արտօ, պատնա կոլ» (Արտօ՛, կոլ կ'ուզենք):

Ամօ Արտոն ինծի համար ալ սկսաւ դառնալ հերոս. չէի տեսած իր խաղերը, ոչ ալ իր նշանակած կոչերը: Բայց իրաքանչիւր կէտի մեր հաւաքական ճաշին հետ կ'ապրէի այդ մրցումներուն ուժը, որ կու գար այն ժամանակէն, երբ դաշտերը կը լեցուէին բացազանցութիւններով. «Եա՛ր Արտօ՛, պատնա կոլ»:

Արտաւազը կը հետեւէր իմ հետաքրքրութիւններուս: Կը տեսնէր պատանեկան խանդավառութիւնս: Ապրած էր իր հազարաւոր երկրպագուներուն ուժը եւ գիտէր, թէ ինչպէ՛ս պետք է այդ զգացումները կամրոջել եւ հասնիլ մարդոց սրտերուն ու հոգիին: Փաստօրէն ան կրցած էր հասնիլ ու ընել ճիշդ այդպէս եւ ինծի հետ ալ կրցաւ ընել նոյնը:

Օր մը մեր հաւաքական ճաշին ընթացքին Ամօ Արտոն ըրաւ իր անակնկալը: Իրեն հետ բերաւ իր նկարներու մեծ հաւաքածօն, որ գեղեցիկ կերպով գետեղուած էր ալպոմի մը մէջ: Չայն դրաւ առջեւս որպէս ապրած ու ապրուած կեանք եւ սկսաւ ներկայացնել իր ֆուտպոլային ասպարեզին աւանդը:

Զպարտութիւն չէր երբեք իր փնտռածը, ոչ ալ անցեալի այդ անկրողարձ օրերու հմայքէն բան մը վերագտնելու միտում ունէր: Ուրախ էր իր ներկայով եւ անցեալին կը նայեր որպէս անուշ յուշ, որ զինք հասցուցած էր իր այսօրուսն: Այդ օրը մեր տան երդիքին տակ իր անցեալի նկարներուն մէջէն Ամօ Արտոն փորձեց պատանեկան հոգիին մէջ դնել ամուր, ապրուած ու փորձուած արժեք մը՝ պայքարը:

«1936-ին «Եունիօն սփորթիվ Զալէպ»-ի հետ մրցեցանք Ռումանիոյ եւ Պալքանեան տարածքի Բախոյեան Ս.Է.Ֆ.Էր.ի հետ», Ամօ Արտոն է պատմողը: «Անոնք շրջապայութեան ելած էին շրջանի երկիրները եւ յաղթանակներ տարած՝ Թուրքիոյ եւ Եգիպտոսի Բախոյեաններուն դէմ: Զալէպի ժողովուրդը անձկութեամբ բայց նաեւ մտահոգութեամբ կը սպասէր մեր առձանգաւորմին Ռումանիոյ խումբին դէմ:

Ամօ Արտոն կամաց-կամաց զիս տարաւ դէպի անցեալս, որ իմ ապրած, այն ժամանակները, երբ պիտի մրցէր ռումանացիներուն դէմ, եւ իր պատկերաւոր ոճով ան փորձեց ինծի ներկայացնել իր հա



ԻԼԻՒՆ ՍՊՈՐՏԻՎ-Ի ԿԱՄՊՈՒՅՏ՝ ԱՐՏԱՄԱՐԶ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ, 1940  
Ցաղթական մրցումն էսը, ռումաբարձ. ձեռքին բաժակը,  
նուր Եգիպտոսի խորհրդարանի նախագահ՝  
Միշել Լուֆֆալլահի կողմէ:

պարտուր համակիրներուն իրմէ ունեցած անկակալութիւնը՝ կոյն ու յոյթանակը:

«Առաջին տասը վայրկեանին նշանակեցի կոլ մը: Եւ այդ կոլէն ինկազարած՝ տեսայ, թէ ժողովուրդը արդէն դաշտ խուժած է եւ զիս տեսած է իր ուսերուն վրայ: Խաղը ընդմիջուեցաւ տասը վայրկեանս: Խաղը շարունակուեցաւ, եւ յաղթեցինք 3-0 արդիւնքով», պատմեց Ամօ Արտոն:

Ան շարունակեց նկարներու էջերը դարձնել. իրաքանչիւրին վրայ նայր կեանք մը, որուն մասին պետք էր պատմել: «Եգիպտոսի ախոյեան «Անի»-ին դէմ մրցումը եղաւ շատ ճակատագրական», շարունակեց Ամօ Արտոն:

Մրցումը տեղի ունեցաւ Գահիրէի մէջ: Առաջին տասնետօթը վայրկեաններուն ստացանք չորս կոլ: Ետքը մենք նշանակեցինք մէկ կոլ, եւ իրենք դարձեալ մէկ հատ եւ կիսախաղի արդիւնքը եղաւ 5-1՝ ի նպաստ եգիպտացիներուն:

«Զլուսահատեցանք», շարունակեց պատմութիւնը: «Երկրորդ կիսախաղին չորս կոլ նշանակեցի տ անձամբ եւ մրցումը վերջացաւ 6-1 ի նպաստ «Անի»-ի», ըսաւ Ամօ Արտոն: Եւ երեւի եգիպտացի ժողովուրդին խանդավառութիւնը սուրիացիներու խաղաոճէն շատ տեղի էր, քան իրենց խումբէն: «Մրցումէն ետք զիս իրենց ուսերուն վրայ տարին մինչեւ պանդոկ»:

Իւրաքանչիւր նկարի հետ Ամմո Արտոն կը վերակենդանացնէ պատմութիւն մը, իսկ եւ հարցումներ սկսայ ուղղել անոր: Այս դրան կեանք եւ ապրուած փորձառութիւն, բայց նաեւ նուաճում: Ամմո Արտոն զոգեց այսօր, բայց աչքերը մնացին սեւեռած անոյ վրայ: Յաւանաբար կը փորձէր վերաքաղ մը ընել վերջապահ առաջ: Վերջապէս փառքի օրեր էին, եւ իւրաքանչիւր մարդ պիտի ուզէր անգամ մը եւս ապրիլ այդ բոլորը: Բայց Ամմո Արտոնի համար կար նաեւ մէկ այլ իրականութիւն մը, զոր առջեւ դրաւ իբրեւ պատուեր: Գլուխը վեր հանեց այսօրմէն եւ ինծի նայեցաւ: Պզտիկ ծայր մը գծուեցաւ դէմքին վրայ ու ըսաւ. «Պէտք չէ միայն խաղալ, այլ նաեւ պայքարիլ»:

Ենքի շինարարութիւնը վերջացաւ: Ամմո Արտոն ծախեց իւրաքանչիւր յարկաբաժինը եւ մեկնեցաւ: Լիբանանի քաղաքացիական պատերազմը սկսաւ, մարդկային յարաբերութիւններն ու բարեկամական կապերը ընդհատուեցան եւ նախկինին նման չմնացին: Օրիւններ օրերը գացի՞ն: Երկարակեաց եւ համով-հոտով ճաշկերոյթները վերացան, եւ հայրս ալ անակնկալ կերպով մեկնեցաւ այս աշխարհէն: 1977 տարուան օրերէն մէկն էր, երբ լիբանանեան քաղաքացիական կռիւներուն, այսպէս ըսած, քիչ մը հանդարտութեան հանգրուաններէն մէկը: Անակնկալ կերպով հանդիպեցայ Ամմո Արտոնին, Պէյրութ քաղաքի կեդրոնական մասին մէջ, երբ տակաւին փլատակ չէր եղած: Նայեցաւ ինծի: Նշմարեցի, թէ աչքերուն մէջ կար յուզում, որուն յաջորդեց խեղդուած արցունք: Բայց հերոսները ինչ լար, չէ՞: Գրկեց զիս ու ըսաւ. «Չօրդ տեղն եմ, եթէ բանի մը պէտք ունենաս, քովս եկուր»:

Ատկէ ետք չտեսայ Ամմո Արտոն: Լիբանանի պատերազմն ալ անելի սաստկացաւ: Պէյրութ քաղաքը բաժնուեցաւ, ինչ որ անելիով դժուարացուց հաղորդակցութիւնը: Մէկ-մէկ կը լսէի, թէ քիչ մը անհանգիստ է: Մինչեւ որ լսեցի, եւ այդ ալ ուշ, թէ Ամմո Արտոն ալ մեկնած է այս աշխարհէն, 1984-ին:

Չեմ գիտեր, թէ ի՞նչ եղաւ այդ իր նկարներու հաւաքածոյին: Իրոք ինծի մնաց այս քանի մը նկարները, որոնցմէ անդին շատ բան կայ Պայքարի հասկացողութիւնն է առիկա եւ անոր արժեքը:

Նոյնիսկ եթէ նկարները կորսուեցան կամ այլ բան եղաւ անոյ ճակատագիրը, բայց մնաց տակաւին մէջս Ամմո Արտոնի կոյտրուն յիշատակը: Եւ իւրաքանչիւր կոյին հետ՝ հայուն վերապրումը:

Տեղասպանութեան ենթարկուած հայը ինչքան արագ ոտքի կրցած է կենալ եւ ստեղծել ոչ թէ միայն անհատական ու հաւաքական կեանք, բայց մանաւանդ մեկական արժեք, այդ ալ տարբեր մարտերով: Ասիկա՝ ամմո Արտոն եւ իր նման շատերը:

որոնք դարձան մեր հերոսները, որոնք մեր հոգիներուն մէջ դրին հաւանաբար հպարտութիւնը: Եւ իւրաքանչիւր կողմ՝ քիչ մը անելիով կորստացուց հայուն այս հպարտութիւնը:

Բայց այս հայուն հպարտութիւնը չէկաւ առանց աշխատանքի, այլ անպայման կար պայքարը: Եւ եթէ հայը այս արժեքը եւ հպարտութիւնը պիտի շարունակէ կերտել, կը նշանակէ, թէ «պէտք չէ միայն ապրիլ՝ իմմա խաղալ, այլ նաեւ պայքարիլ»: Եւ հայուն շարունակականութիւնը նոյնիսկ այս պայքարին մէջ է, որ յուսահատութիւն պէտք չէ ճանչնայ:

Ամմո Արտոնի կոյտը: Բայց անպայմանօրէն իւրաքանչիւր հայուն, իսկ իւրաքանչիւր կողմէ է, բայց նաեւ հպարտութիւն:

# ԱՅՆԱՅԻՆ ԱՆԵԾՔԸ

Այշային հանդիպեցայ Ահլոսիա, Կիպրոս: Եկած էր մաս կազմելու քրիստոնեական տեղեկատուութեան կազմակերպութեան մէկ համագումար-ժողովին: Ան քաղաքացիութեամբ թրքահայատակ էր ազգութեամբ թուրք եւ Պոլսոյ բնակիչներէն: Այշան երիտասարդ աղջիկ մըն է, որ ապրելու եւ գործելու տենչ ունի, բայց նաեւ կեանքի ու համոզմունքներու նկատմամբ կեցուածք:

Ինծի հետ հանդիպել եւ գրուցել, մանաւանդ գիտնալէ ետք, որ հայ եմ, Այշան սկսաւ իր կեցուածքները մէկ-մէկ բացայայտել: «Երկու կ'ատեն եւ չես փափաքիր թուրքի մը հետ խօսիլ», եղաւ Այշային առաջին արագ ակնարկը, աչքերը վար եւ քիչ մը ծայրէն հպանցող նայուածք մը նետելով վրաս:

«Այդպէս չէ, բայց մեր միջեւ առկայ է մեծ թնճուկ մը, որ պէտք է հանգուցալուծել», եղաւ իմ պատասխանս:

Այշան նկատեց, որ հետս կարելի է խօսակցութիւնը շարունակել երեւի սպասեց դիրքորոշումիս, թէ արդեօք պիտի ուզէի հետը խօսիլ: Վերջապէս ես հայ եմ եւ ինքը թուրք:

Եւ չուաքցաւ երիտասարդ Այշային կեանքի պատմութիւնը: Զառաւաքար նաեւ ես պէտք էր կրահէի, թէ ան կ'ուզէ իր պատմութիւնը ներկայացնել ինծի, որպէսզի ես ալ գիտնամ:

«Ճամբ եմ Պոլիս եւ ընտանիքիս բոլոր անդամներն ալ իսլամական կրօնքին եւ դաւանանքին կը պատկանին», եղաւ Այշայի առաջին ակնարկութիւնը:

Այշան այսօր երեսուն տարեկան է. ան քսան տարեկան հասակին դարձած է քրիստոնեայ, եւ այսօր կը գործէ Պոլսոյ մէջ քրիստոնեական տեղեկատուութեան մէկ կազմակերպութեան հետ: «Ճտորց եւ ընտանիքս տակաւին իսլամ են», ըսաւ ան:

Այշային ընտանիքը տակաւին կը յարաբերի անոր հետ, անկասկածաբար այն իրականութենէն, որ ան քրիստոնեական հաւատամքը ընդունած է իր կեանքին իբրեւ հիմք: Եւ Այշային համար քրիստոնեայ ըլլալը միայն հաւատքի մարմնացում չէ եղած, այլ՝ կեանքին բացուելու ինչպէս նաեւ Ուրիշը տեսնելու եւ հասկնալու միջոց:

«Չայրս ազգայնամուլ թուրք է», ըսաւ Այշան, «եւ մենք մեր կրօնութիւնը ստացանք դաստիարակուելով ազգայնամուլ ու ծայրահեղ ուսուցմունքով», անեցուց ան: Զրիստոնեայ ըլլալէ ետք, Այշան սկսած է բացուիլ աշխարհին, տեսնել ուրիշը, եւ իսպնակ ու ընդունիլ զայն: «Եւ այդ ուրիշին մէջն է նաեւ հայը, որուն ընդմէջէն իմացայ ու սուղեցայ հայոց Յեղասպանութեան մասին, ծանօթանալով այդ սիւն-

ար դէպքերուն, որ իմ ժողովուրդս գործած է ձեզի դէմ», ըսաւ Այշան: Այշային համար Յեղասպանութիւնը եւ իր երկրի արիւնտու ու տարափազդու պատմութիւնը ուրուականի մը նման զինք հալածած է ու ցայսօր կը շարունակէ հալածել: «Չեմ ուզեր իմ ինքնութիւնս առնել այս երկրին ու ժողովուրդին հետ», եղաւ Այշայի գորատու ու խիզախ կեցուածքը: ան աչքերը անէլի հաստատ եւ ինքնավստահ կերպով սենեօնց վրաս ու շարունակեց. «Իմ հայրս չի գիտեր իր ընտանիքին պատմութիւնը: Իսկ պատմութիւնը չի գիտնալը պատասխանական երեւոյթ չէ, այլ կանխամտածուած ծրագիր՝ ջնջելու համար անցեալի հետ կապուած ամէն փաստ ու յիշատակ»:

Այշային ընտանիքը Գոնիայէն է. հոն ապրած են յոյներ: «Կրնա՞յ ըզլալ, որ ես յունական արմատներ ունիմ», շուրթած հարցուց ինծի ինքնութեան փնտնողիքի մէջ եղող երիտասարդուիկին:

Այշան կը փնտռէր պատկանելիութիւն՝ հեռանալու եւ անջատուելու համար իր ներկայի ինքնութենէն, որմէ ամէն ձեւով կը փորձէր խախտուտ տալ: Անոր դէմքին վրայ գծուեցաւ պզտիկ ժպիտ մը, կարծես յոյսի ժպիտ մըն էր, որուն կ'ուզէր ամէն զնով հասնիլ: «Մարդիկ կ'ըսեն ինծի, որ դէմքիս գիծերն ու արտայայտութիւնները յունական են», անեցուց ան:

Իմանալէ ետք, թէ քանիցս գտնուած եմ Թուրքիա եւ յատկապէս Պոլիս, Այշա ըսաւ. «Մեր երկրին վրայ անեծք կայ: Այս անեծքը ամէն իր կ'ապրիմ, եւ ատոր համար չեմ ուզէր առնելիլ իմ ժողովուրդիս հետ»: Ու դարձեալ ինծի նայելով հարց տուաւ. «Չե՞ն գգացած այս անեծքը երբ յաճախ գտնուած ես Պոլիս»:

Այշային «անեծքը», իմ եւ հայուն համար Յեղասպանութեան ցաւն է եւ Յեղասպանութեան ցաւը՝ իմ «անեծքը», հայուն ապրած եւ տակաւին շարունակուող կեանքն է, որ վերածուած է ինքնութեան: Այս ինքնութիւնն էր, որ պէտք է բաժնէի Այշային հետ:

«Իմ ընտանիքս քսանիինգ նահատակ տուած է հայոց դէմ գործուած տարբեր ճեղասպանութիւններուն ընթացքին. սկսելով Ատաւառի քարոզերէն 1909-ին եւ մինչեւ Մեծ Եղեռնը», ըսի Այշային: «Եւ այս իւրաքանչիւր հայուն անեծքն է, որովհետեւ իւրաքանչիւր հայ ընտանիքի մէջ կայ թափած արիւն»:

Սկսած էի տեսնել, թէ Այշան զգայուն նկարագիր իւրացուցած անն մըն է: Եւ եթէ ան ուներ հաստատ եւ խիզախ կեցուածքներ, բայց նոյնքան մեղմ սիրտ ու հոգի մը: Այշային աչքերուն մէջ սկսան կուտակուիլ արցունքներ: Անեծքին արցունքները:

Չեմ գիտեր սակայն, թէ ինչո՞ւ մխրճուեցայ նիւթին մէջ եւ պատմութեան սեւ փորձառութիւնները մէկ-մէկ կիսեցի անոր հետ: Եւ իմ ընտանիքիս պատմութիւններուն անորադառնալով վեր առի հարա-

զատներես՝ հորս, մորեղբորս, տոջթ. Ֆիլիփ Յովնանեանի բարոյ  
կեցուածքը, երբ բուժած էր իր փոքր եղբոր սպաննող թուրք զինու  
որականը, որ Յամաշխարհային Ա. պատերազմի ընթացքին ծանո  
րէն վիրաւորուած էր եւ բերուած հիւանդանոց, ու դրուած սեռ  
խնամքին տակ: Ան բուժած էր թուրքը եւ ոչ թէ սպաննած զայն եւ  
այդ նոյն թուրք զինուորականը ջախջախած էր իր պատանի եղբ  
զուկից:

«Այս պատմութիւնը հոլիվուտեան ֆիլմ է»: Ես կը խօսեի Այշայի  
հետ՝ դէմքիս վրայ պզտիկ ժպիտով մը, բայց այդ ժպիտը խառնու  
էր տխրութեամբ: Որովհետեւ ասիկա իմ հարազատ պատմութիւն  
է, որ իմ մէջս կերտած է ցաւը:

«Այս է հայուն կեցուածքը: Յայը չի սիրեր սպանել, կ'ուզէ բու  
ժել», եղաւ իմ եզրակացութիւնս:

Բայց բուժելը ունի նաեւ իր պարտաւորութիւնները: «Յայոց Յե  
ղասպանութենէն վերապրողներու երրորդ սերունդին կը պատկ  
նիմ, իսկ զաւակներս չորրորդ: Մենք չ'ապրեցանք Յեղասպանու  
թիւնը, բայց մեր բոլոր եւութեան մէջ կը կրենք ցաւը՝ քու ըսած ան  
բիղ ցաւը», ըսի Այշային:

Կը զգայի, որ պետք է շարունակեմ. «Գիտեմ, որ դուն Յեղասպ  
նութիւնը չի գործեցիր: Բայց ինչպէս ես իմ ժողովուրդիս կրած ցաւը  
կ'ապրիմ, դուն ալ պիտի ապրիս քուկիսներուդ գործած ոճիրին հի  
տեանքը, եւ պիտի աշխատիս բուժել իմս՝ հայուն ցաւը»: Պարտա  
կանութի՞ն, թէ մարտահրաւեր երիտասարդ Այշային:

Չզգացի, որ ծանրաբեռնուած էի: Եւ նոյնքան ծանրաբեռնած էի Այ  
շային մեղմ ու զգայուն, միաժամանակ փխրուն հոգին, որ եւ  
փնտռէր եք մը՝ անեծքի իր կեանքէն դուրս գալու համար:

Կը գտնուէիք ընկերային հաւաքոյթի մը մէջ: Մեզի հետ էին նա  
եւ բաւական այլ բարեկամներ: Մեր խօսակցութեան տուիւք ընդմի  
ջում մը:

Յաւաքոյթի աւարտն էր արդէն եւ պետք էր մեկնելիք: Այշան  
դարձեալ մօտեցաւ. անոր աչքերուն մէջ կար այդ նոյն արցունքը  
Անեծքին արցունքները, բայց Այշան իր հաստատ կեցուածքին մէջ էր  
դարձեալ:

«Կ'ուզեմ ներողութիւն խնդրել քեզի տառապեցնող այդ ցաւին  
համար, որ մենք պատճառած ենք», ըսաւ ան:

Այշային եւ իմ միջեւ այդ օրը կար մէկ օղակ, որ կը միացներ մեզ  
այդ ալ անեծքն էր: Անեծքը՝ Յեղասպանութեան եւ անոր ահաւորու  
թեան: Իմ եւ իւրաքանչիւր հայուն ցաւը, որ մինչեւ այսօր կը շարու  
նակենք տանի: Այշա եւ իւրաքանչիւր թուրք, գիտակցին թէ ոչ, ըն  
դունին թէ դրժեն հայոց Յեղասպանութիւնը. անոնք իրենց կեանքե

նի եւ երկրին վրայ կը զգան ու կ'ապրին այդ անեծքը, որ ուրու  
աւոր մը նման կը հալածէ զիրենց:

Իմ գիտեր մինչեւ ե՞րբ Այշան եւ իր նմանները պիտի կարենան  
բնակ իրենց ինքնութենէն, եւ կամ պիտի ապրին այդ ինքնութենէ  
ուրտ: «Երբեք պէս սակայն անեծքը տակաւին ամկայ է: Այշային եւ  
իւրաքանչիւր թուրքին անեծքը, ինչպէս նաեւ հայունը, որ պետք է  
քանի որ հատուցուի:



# ԱՆԱՊԱՏԻ ԽՈՐԱՆԸ

«Կրճամ աչքս զոց վերարդարդն մէն մի արհաւիրք»

Յեղասպանութեան արհաւիրքի մասին է ակնարկութիւնը: Յոն՝ պատմութեան այդ դժգոհ մէկ ժամանակահատուածին, երբ հայը չարդուցեալ ու տակաւին տեղահան եղաւ իր արմատներէն: Հայը կորսնցուց անհամար մարդկային հոգի՝ հող, կալուած եւ հայրենի տուն: Բայց նաեւ կորսնցուց մտաւորական ու մշակոյթի եւ գեղարուեստական մտքի հսկանները: Անոնք որ տակաւին երկար պիտի կարենային ստեղծագործել եւ շատ աւելիով հարստացնել հայկական աւանդ եթէ...

Եւ Յեղասպանութեան այս արհաւիրքին մէջ, Տէր Չօրը «Հրաբորբը, կիզիչ ու խանձող արեւին տակ, անսահման տարածութեամբ փշրուած անապատը» եղաւ մէկ կողմ գերեզման, բայց նաեւ վերապրում: Տեղահանուած հայուն տոկոս հաւատքը, որ չմահացաւ երբ նոյնիսկ անոր (հայուն) ֆիզիքական ոչնչացաւ: Իսկ ան(անոնք), որոնք ապրեցան այդ նոյն հայուն հաւատքն էր որ տուաւ շունչ դուրս գալու համար այդ արհաւիրքէն: Իր պէսզի հայուն կեանքը եւ անոր մշակութային աւանդը շարունակուի ապրիլ ու ապրեցնելը:

Արմենակ Միսիրեան նոյն այս հայուն հաւատքին արգասիքն է, որ վերապրեցաւ: Ատիաման ծնած ու փոքր տարիքէն արդէն հորին որբ մնացած եւ որ ապրեցաւ նաեւ հայուն Տեղասպանութեան արհաւիրքը: Եւ ինչպէս ինք կը վկայէ, «Կրճամ աչքս զոց վերարտարդն մէն մի արհաւիրքը»: Եւ այդ արհաւիրքէն հրաշքով փրկուած Արմենակ եւ իր ընտանիքը կը հաստատուին Իրաքի Մուսուլ քաղաքը, որ մէ ետք կը փոխադրուին Հալէպ: Հալէպի մէջ կը սկսի զարգանալ եւ նկարչական տաղանդը, ինչ որ կը քաջալերէ զինք մեկնելու Փարիս ուր իր նկարչական արուեստի ճամբով կը մասնագիտանալ Լուի ժիլիէն եւ Կրան Շոմիէտ արուեստի ազատ կաճաններուն մէջ: Եւ կամաց-կամաց կը սկսի թափ առնել Արմենակի նկարչական տաղանդը, ինչ որ շուտով պիտի հասներ միջազգային համբաւի՝ ստեղծելով իր սեփական ոճը եւ ուր կը սկսի գործածել եւ նաեւ ճակցով իր ԱՐՄԻԱ գեղարուեստական անունով:



Տեղասպանութեան ոճը եւ ուր կը սկսի գործածել եւ նաեւ ճակցով իր ԱՐՄԻԱ գեղարուեստական անունով:

Բայց Տէր Չօրը ուրուականի մը նման հալածեց Արմենակը: Ապրած ու տեսած էր հայուն մահը Տէր Չօրի մէջ: Բայց նաեւ ան վերապրող հայն էր նոյնիսկ Տէր Չօրին ու անոր մէջէն: Եւ Տէր Չօրը Արմենակը վերածած էր, ինչպէս ինք կ'ըսէ «խորան»ի եւ որուն վրայ ան կերտած էր իր ամբողջ կեանքը: Եւ այդ Տէր Չօրի «Անապատի խորան»ին վրայ ան կերտած էր իր հայու հաւատքի կեանքը՝ իր ման կեանքը նուիրելով մէկ կողմէ գեղանկարչական մշակոյթին, բայց նաեւ գրական, երաժշտական ու տակաւին հոգեւոր առաջնորդութեանը: Արմենակ Միսիրեան դարձաւ Հայ Աւետարանական եկեղեցիի ձեռնադրեալ հովիւ-կղերական եւ ծառայեց իր ժողովուրդին երեսուսայի եւ այլ երկիրներու մէջ:

Եւ այս իմաստով Արմենակի կեանքը եւ գործունեութիւնը եղաւ անորոշական:

Բայց չի դադրեցաւ Արմենակի Տէր Չօրեան հոգեներաշխարհը եւ անոր ապրումները: Բայց ինչպէս չապրիլ այդ բոլորը: Երբ տեսած եւ թէ ինչպէս Տէր Չօրը դարձած էր «տարապակիծ հայուն ահաւոր գերեզմանոցը»: Երբ նոյն հայը հոն քշուած էր որպէս «բարբարոս ժողովրդի դիւային ծրագրին միակ պարծանքը»: Արմենակ «անհուն կրկնով խոցուած» դիտած էր զաղթականութեան «վրաններու թուրի կտոր պատարները», որոնք «գետնաթաւալ կուտակուած կնի ամէն կողմ»: Եւ այդ վրաններուն մէջէն Արմենակ ապրած էր հասն «չխաչախուած սէրը, հրկիզուած յոյսը ու նահատակուած հաւատքը», որոնք «մոխրակոյտի վերածուած» էին:

Բայց Արմենակի ապրած այս Տեղասպանութեան արհաւիրքը նաեւ ստեղծած է իր մէջը հայուն յոյսը: «Թուրքին հրեշտակի շունչը մահած էր բոլոր կանթեղները, խորաք վերածուած էր մոխրակոյտի եւ փշրուած էր սուրբ խաչը», բայց հայուն զօրաւոր հաւատքը դարձեալ վերապրեցուց նոյնիսկ հայուն խորանը, «որ կը մնար հաղորդուած էր անկնէրուն մէջ ժամերգութիւնը ու իր արեան մէջ պատարագը»: Եւ Արմենակ այս բոլորին մէջէն կրցաւ տեսնել «վառ ու պայծառ Լուսնաբոյի Աստղը», որ «աւելի քան երբեք կը շողար»:

Եւ այդ շողացող աստղին տակ հայ քահանան Աւետարանը ձեռք կը պատարագէր ու կը խրախուսէր իր ժողովուրդը երգելով, «Տէր Ողորմեա, Տէր Ողորմեա, անօգնական ազգիս հայոց»: Եթէ Արմենակ «արտասուքով շաղապարած» կ'երգէր այս մեղեդին, բայց անոն կը զգար, թէ ինչպէս այս «մեղեդին կ'ողողէր անապատի խորանը ու կը շարժէր փշրուած ոսկորները»:

Եթէ Արմենակ ապրեցաւ այս հայուն խորանը, բայց նոյն այս խորանը:



րանին հաւատքը եղաւ իր կեանքին մղիչ ուժը: Եւ այս ուժին միջոցաւ  
ը ան անդադար ստեղծագործեց: Արմենակի յետ-Յեղասպանութեան  
կեանքն ալ գերծ չէր փորձառութիւններէ: 1952 թուականին ան  
կորսնցուց իր կողակիցը եւ միակ մնաց իր երեք որբ զաւակներու  
հետ: Սակայն Տէր Չօրի գեհեկն զմնացած հայ մարդը տեղի չէր  
տար յուսայլումի: Եթէ Արմենակ կուտակած էր այս ուժը, որովհետեւ  
իր հոգիին մէջ գծուած էր մէկ կեղանի պաստառ իր տեսած ու ապրած  
Տէր Չօրեան արհաւիրքէն: Եւ այս պաստառը «Անապատի հորան» է,  
եւ որ ինչպէս Արմենակ նկարագրած է, իր բանաստեղծութեանը մէջ  
«որպէս անջինջ, աներեր ու յաղթապանծ պատկեր»:

1956 թուականին Արմենակ Միսիրեան պաշտօնական այցելութեամբ  
մը ոտքը դրաւ մայր հայրենիք: Ան խանդավառ էր տեսնելով «վերապրող  
հայը եւ հայրենիքը»: Իր շատ մը պաստառներէն կոտորեց Չայրենիքին  
եւ որ մինչեւ այսօր տակաւին պահուած էր ցուցադրուած են: Այցելութենէն  
ետք ան չէր թողատրեր որեւէ մէկը աննպաստ արտայայտութիւններ  
ունենալ Չայրենիքի մասին: Չայրենիքը գատողին միշտ կը յիշեցնէր.  
«Միթէ դուք մոռցա՞ք Տէր Չօրը»:

1965 թուականին, Եղեռնի յիսնամեակին, Արմիս իր սրտի մէջ  
«Անապատի հորանը» զուրս հանեց որպէս գեղանկարչական  
հսկայ արունետի գործեր: Ան պատրաստեց քառասուն պաստառներ  
ապրած Տէր Չօրեան արհաւիրքէն: Դժուարութիւն չունեցաւ զանոնք  
իրականացնելու: Ապրած էր այդ բոլորը, բայց նաեւ ուներ ուժը զանոնք  
արտադրելու: Իսկ ո՞ւժը: Ան առած էր այն «հորնաւն»-էն, որ իր  
սրտին ու հոգիին մէջ արմատացած էր իր ապրած «Անապատի» ստեղծ  
հաւիրքի այդ օրերէն: Արմիս քառասուն պաստառներու նկարաշար  
կոչեց «Տեղասպանութիւն»:

Եւ այսօր՝ 2015ին, Տեղասպանութեան հարիւր ամեակին նկարաշարի  
տակաւին գորաւոր կերպով կը խօսի:

Մեր Արմենակ Միսիրեան մահացաւ 1977ին, Ֆրանսայի մէջ: Ինք  
սրտին մէջ միշտ մնաց «Անապատի հորանը»: Այն «հորան»-ը, որ  
իրեն տուաւ կեանք եւ ա՛լ աւելի կեանք: Եւ այս այն «հորան» է, որ  
Արմենակ նկարագրեց իր գրութեանը վերջին նախադասութեանը մէջ  
որպէս «յաւիտենական»: Եթէ «անագորոյն ժամանակի վազը ու  
հեւը մոռացութեան վիհը նետեց պաստառներու մէջ ինք ու արեւին  
ճաճանցները վառ խլեցին վառ երագներս, որոնք արշաւորած էի  
հոգիս պաստառներու վրայ, սակայն միակ պաստառը որ կայ ու կը  
մնայ յաւիտենապէս հոգիս սրբարանին մէջ ատրուելու Անապատի  
հորան է»: Այս յաւիտենական խորանը եթէ մէկ կողմէ կը յիշեցնէ  
հայուն արհաւիրքը բայց նաեւ անոր անտեղը: Ու տակաւին այս  
աւանդին պահպանումը եւ պահանջատիրութիւնը:

Եւ այս «Անապատի հորան» է եւ անոր կերտած հաւատքը, որ  
հայուն տուաւ ուժը ապրելու եւ ստեղծագործելու: Զարիւր ամեակ ու  
անգիտի անդին:

«Անապատի հորան»ը: Արմիսը՝ Արմենակ Միսիրեանը ապրեցնող  
բայց անպայմանօրէն ողջ հայութիւնը:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒԲՄԸ

*«Եւ կըտ կրքամ ու չեզի քնդ պարարապիւն, նո  
րէն պիտի գամ եւ չեզ բովս ստնն»:*

*(Յովիաննոս 14.1)*

Աստուծոյ խոստումը Աստուածաշունչի հին եւ նոր կտակարաններուն մէջ կը յիշուի տարբեր բնութագրումներու մէջէն: Բայց մտաւորական կը բացատրուի եւ կ'ընկալուի մեկնելով անհատին ու հաւաքականութեան ընկերալեզուաբանական ու տակաւին քաղաքական ըմբռնումներէն եւ մտածողութեամբ:

Հին Կտակարանի Աստուծոյ խոստումը (Երկրին) խնդրայարոյց նիւթ է, եւ որ կը բացատրուի տարբեր խումբերու եւ գաղութներու կողմէ եւ կ'ընկալուի մեկնելով միջին արեւելեան, Իսրայէլ-Պաղեստինեան (բայց նաեւ արաբական) հակամարտութիւններու իրեն արդիւնք: Աստուածաշունչի ու Աստուծոյ խոստացածը մեկնարանուած է ու տակաւին, ստեղծելով մթնոլորտը այսպէս ըսած իրաական հիմքի մը, որ խթանած է սեփականաշնորհելու եւ սեփականացնելու խոստացած երկիրը: Եւ այս Իսրայէլի ժողովուրդին համար երբ անոնք դուրս եկան Եգիպտոսի ստրկութենէ եւ ստացան հող, որ խոստացուած էր իրենց եւ միւնչեալ այսօր:

Նախմ Աթիք կը փորձէ յստակացնել խոստումի այս բացատրութիւնը ու անոր ընկալումը, եւ մեկնելով ներկայ օրերու Իսրայէլի կրօնա-քաղաքական մեկնաբանութիւններէն՝ հողին իրաական տիրութեան համար: «Հին Կտակարանը շատ յստակ կ'ընէ, թէ հողը կը պատկանի Աստուծոյ», կ'ըսէ ան: «Տերոջն է երկիրն ու անոր լիութիւնը: Աշխարհն ու անոր բնակիչները» (Սաղմոս 24.1): Եւ այս իմաստով, Աթիք կը յստակացնէ Աստուծոյ խոստումին սխալ մեկնաբանութիւնը: «Իրական է, թէ Աստուած գոյութիւն ունէր առանց հողի եւ անկէ դուրս: Եւ թէ անոնք պէտք էր որ սորվէին, թէ Աստուած նաեւ կը հոգայ ուրիշ ժողովուրդներ իրենցմէ դուրս»: Եւ այս իմաստով տարագրութիւնը հրեայ ժողովուրդին համար եղաւ միջոց «որպէսզի անոնք աւելի լաւ հասկանան զԱստուած» կ'ըսէ Աթիք:

Եւ խոստացեալ երկիր հասկացողութիւնը պիտի տեսնել ոչ անպայմանօրէն հողին տիրանալու իրականութիւնը: Այլ միջոց մը հասկանալու Աստուծոյ խոստումը, թէ ան պիտի շնորհէր ապահովութիւն՝ դուրս բերելով զիրենց իրենց ստրկացած վիճակէն: «Ձեզ անոնց ծառայութենէն պիտի ազատեմ» (Ելից 6.6): Եւ թէ Աստուած

պիտի թափէր իր օրհնութիւնները: «Ձուր պիտի թափէր ծառային» ու «հողին պիտի թափէր իր սերունդներուն» եւ «որդիներուն վրայ օրհնութիւն» ուր «ջուրի վտակներու քով եղող ուռիները պիտի բուսնին» (Եսայեայ 44.3-4):

Աստուծոյ խոստումը, այս իմաստով, հրեայ ժողովուրդին համար կը դառնայ ոչ թէ խոստում մը հողին եւ ազգութեան, այլ խոստումը Աստուծոյ հոգիին օրհնութեանը: Օրհնութիւն մը, որ պիտի թափուէր կէտ իրենց (հրեայ ժողովուրդին) վրայ բայց նաեւ բոլորին համար: Եւ այս օրհնութիւններով մարդիկ պիտի ազատագրուին եւ դառնան յոյս աշխարհին, եւ որ պիտի լուսաւորեն նաեւ բոլորը ծաղկեցնելով ուսիները:

Նոր Կտակարանին մէջ կը շարունակուի այս խոստումը, որ նաեւ կ'իրականանայ եւ կ'ամբողջանայ: Եւ Անառակ Որդիին առակը մէկ լուսազոյն ապացոյցն է այս գործընթացին:

Եթէ Անառակ Որդիին առակին մէջ հերոսը կրնանք համարել որդիս՝ անառակը, եւ կամ եղբայրը, բայց շատ աւելին՝ հայրը: Հայրը, որ կը թափէր իր օրհնութիւնները: Հոն ուր կրնար իր տղուն մերժել եւ զրկել իր հարստութենէն բայց «բաժնեց անոնց իր ունեցածը» (Ղուկաս 15.12): Ու տակաւին երբ որդին վերադաձաւ, հայրը կրնար մերժել զինք բայց «տեսաւ զանկաւ ու զուրթ շարժեցաւ եւ վազելով անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանկաւ» (Ղուկաս 15.20):

Եւ հորը օրհնութիւնը կը շարունակուի: Երբ հայրը իր տուն վերադարձած տղուն համար խնձոյց սարքեց, եղբայրը «բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել» (Ղուկաս 15.28): Բայց հայրն էր դարձեալ, որ յայացաւ: իր օրհնութիւնը թափել իր երկրորդ տղուն վրայ երբ «դուրս գալով կ'աղաչէր անոր» (Ղուկաս 15.28):

Անառակ Որդիին պատմութեան այս երկու եղբայրներու կեանքերը կը ներկայանան որպէս կալանքի իրականութեամբը: Ճոն Տոնաիս, երկու որդիներու յարաբերութիւնը իրենց հօր հետ կը նմանցնէ ստրկութեան վիճակի մը, ստրկութիւն մը, որ վերանորոգուած է բարոյական ձախողութենէ մը ետք կամ ստրկութիւն մը, որ մշակուած է գիտացնելու համար խիստ հայր մը: Յաճախ պարտաճանաչ եւ անառակ զուկին միջեւ կայ չարաշուք եւ թշնամական կամ մը: Այս կամայ իրար քով բերողը հայրն է, որ կը ներկայանայ ոչ որպէս խիստ, այլ հայր մը, որ կ'անցնի բոլոր սահմանները, որպէսզի իր զաւակներուն շնորհէ ազատութիւն: Եւ ազատութիւնը իրենց ստրկութենէն՝ մեղքի ու տակաւին:

Եւ այս իմաստով Հին ու Նոր Կտակարաններու մէջէն, Աստուծոյ խոստումը կապուած է կամրջուած է իրար հետ: Ուրիշը Պրովկան

կը ներկայացնէ այս կապուածութեան իւրայատկութիւնը որպէս խոստում եւ ամբողջացում: Եւ որ իր լրացումին կը հասնի Զրիստոսի փրկութեան պատմութեան ամբողջացումով: Պրովկման կը հաւատայ, թէ Զին Կտակարանը յոյսի գիրք է, եւ թէ այդ յոյսը կը կայանայ Մեսիային գալուստին մէջ, որ պիտի ամբողջացնէ Եհովային խոստումները: Պրովկման այս յոյսը կը կոչէ Մեսիանական յոյս: Եւ այս իրականութեան մէջէն է, որ պետք է տեսնել եւ վեր առնել, թէ Աստուծոյ՝ Եհովային խոստումը, որ կը սկսի Զին Կտակարանէն, ուր մեզ բոլորս այն երկիրը պիտի տանի, որ կ'ամբողջանայ Զրիստոսի՝ Ասիային, մեզ բոլորս իր քով առնելու իրականութեամբ:

Եւ այս Աստուծոյ խոստումն է, որ հաստատ է: Եւ որ Զին Կտակարանէն կու գայ մեզի որպէս օրհնութիւն եւ կ'ամբողջանայ եւ կ'իրականանայ Նոր Կտակարանի շնորհած փրկութեամբ:

Աստուծոյ խոստումը. «Ձեզ քով առնեմ»: Այսօր եւ յաւիտեան Փրկուած եւ ազատ ստրկութեան կեանքի ամէն տեսակի կալանքներէ:

## ԿԱՆԱԶԵԱՆ, ԱԹ-ԱԹ-ԻՒՐ-Բ ԵՒ «ՀՈԹ-ԵՒ ՊԱՐՈՆ»

Պալէպ քաղաքին հետ ունիմ շատ մը ապրուած յուշեր, բայց նաեւ կեանք, որովհետեւ ծնողքս եղած են ընկի Զալէպահայեր: Բայց նաեւ հորեղբայրս տոցթ. Ռոպեր ճեպեճեան, որ իր լրիւ կեանքը ապրեցաւ եւ մնաց Զալէպ քաղաքին մէջ: Անոր բնակարանը՝ Նեռարեալ հիւանդանոցը (որ տակաւին կը գործէ) դարձած էր մեզի համար ինչպէս հորեղբայրս կ'ըսէր «Պապենական Տուն»: Եւ Պապենական Տունը մեզի համար՝ գաւակները եւ եղբօր ընտանիքը, դարձաւ մեր ընտանեկան հաւաքներու կանոնաւոր եւ տարեկան հերթականութեամբ մեր բանի մը անգամ միացման օղակ:

Պալէպի Պապենական Տունը եղաւ աւելին: Ան միայն մեր հանդիպումի տունը չէր, բայց նաեւ անոր հետ կ'առնչուէին հորեղբօրս եւ մեր ընտանիքի բոլոր հարազատներուն եւ բարեկամներուն հետ միասին ըլլալու եւ հանդիպելու միջոցը: Պապենական Տան հետ նաեւ ապրեցանք մեր կեանքերը իրար հետ եւ հարազատներու, բայց նաեւ կերտելով շատ մը բարեկամներ ու բարեկամութիւններ: Եւ այդ բարեկամներուն մէջ էր նաեւ Մազլումեան ընտանիքը, որոնք տէրն էին տնօրէն են եւ մինչեւ այսօր Զալէպի «Զոթել Պարոն»ին:

Կորեղբայրս եւ Մազլումեանները դրացիներ եղած են Զալէպ, Պոստան Զլէպի թաղամասին մէջ: Այս իմաստով հորեղբօրս մտերիմ բարեկամն էր Պարոն պանդոկին սեփականատէր Արմէն Մազլում-





եանի որդին Գրիգորը եւ որուն հետ եղած են մանկութեան օրերու թաղի խաղընկերները: Ես հանդիպած էի Գրիգոր Մազլումեանին պատանեկութեանս ժամանակ, երբ հաճախ Հալեպ կը գտնուէի՝ հօրեքօրոս տունը:

Բայց այն ինչ որ յատկանշական է «Յոթել Պարոն»ն է: Այսպէս ըսած Հալեպ քաղաքի աւանդներէն մէկն է, որուն մէջ եթէ մէկ կողմէ կայ պատմութիւն, բայց նաեւ ապրուած կեանք եւ իրագործումներ: Պանդոկին քարաշէն շէնքը եւ լայն պողոտայի հանդիպակած մասին վրայ արդէն իսկ կը պարունակէ ահագին պատմութիւն եւ մշակոյթ: Պանդոկին իրապատկութիւնը ներկայ օրերու հիւրանոցային ասպարեզի բարձր փանհչերու հետ մրցիլը չէր:

«Յոթել Պարոն»ի իւրայատկութիւնը անոր մշակութային ինքնութեան ու կենցաղին մէջ է, որ դարձած էր մէկ կողմէ առասպել, բայց նաեւ Հալեպ քաղաքի ցուցանիշային երեւոյթ: Մուտքի աստիճաններէն սկսելով եւ անցնելով հիւրասենեակի բաժնէն եւ անոր կարասիները՝ բոլորը պահուած իր պատմական ինքնութեամբ, ինծի կ'ապրեցնէին նոյնիսկ անոր մշակութային ատենը: Եթէ Հալեպը ճակոյցուած է իր բերդով, ներսի շուկայով ու ճոնչոտի մատով, բայց նաեւ «Յոթել Պարոն»ը ունէր իր բաժինը: Եւ իւրաքանչիւր Հալեպ այցելութեանս, կարելի չէր չ'ըմփոռնես «Յոթել Պարոն»ը՝ Հալեպ քաղաքի ինքնութիւններէն մէկը:

1911 թուականին հիմնուած «Յոթել Պարոն»ը Արմէն Մազլումեանի կողմէ, ապրած ու ապրեցուցած է շատ մը միջազգային դեմքեր եւ գործիչներ, ներառելով նաեւ հայկականը: Եւ անոնց մէջ է նաեւ Բարսեղ Կանաչեանը ու անոր համբաւ շահած «Օրօր»ը:

Բարսեղ Կանաչեան 1920-1921 տարիներուն Հալեպ կը գտնուէր եւ յաճախ կ'այցելէր Մազլումեան ընտանիքին, որ այդ օրերուն կ'ապրէր «Յոթել Պարոն»ի շէնքի մէկ յարկաբաժնի մէջ: Կանաչեան շատ կը սիրէր նուագել Մազլումեաններու տան դաշնամուրին վրայ՝ կատարելով նաեւ յօրինումներ: Գրիգոր Մազլումեան փոքր պատանի էր այդ տարիներուն, իսկ կրտսեր քոյրը՝ Արտան, դեռ նորածին

մօր գրկին մէջ: Տիկին Երանիկ Մազլումեան (Գրիգորի եւ Արտայի մայրը) կ'օրօրէր Արտան մայրական խնայողատանքով: Բարսեղ Կանաչեանի համար տեսարանը եղած է զգայուն եւ զգացական: Եւ նկատի առնելով իր երաժիշտի ու յօրինողի ներաշխարհը, ան նոյնիսկ դաշնամուրի ետեւ անցնելով կը սկսի յօրինել, որ պիտի դառնար իր հանրածանօթ «Օրօր»ը:

Բայց այն ինչ որ դարձած է հետաքրքրական, որ մինչ Կանաչեան իր ներաշխարհին մէջ կ'ապրէր «Օրօր»ի յօրինումովը, դուրսը՝ փողոցէն, կը լսուէր տողանցող փողերային խումբի քայլերգը: Եւ Կանաչեան նաեւ ծայն կու տայ փողերային խումբի քայլերգներուն եւ անոնց երաժշտական չափերուն, որոնք ուժգին եւ զօրաւոր էին: Եթէ մէկ կողմէ կը հետեւի այդ չափերուն, բայց նաեւ կ'արձանագրէ գատնը: Այսպէս քայլերգը եւ «Օրօր»ը կը յաջորդէն իրարու կիսին ի փոխ՝ մին զօրաւոր եւ միւսը մեղմ: Բայց արդիօց հնարաւոր է: Կանաչեան իր ներաշխարհին մէջ կը շարունակէ ապրիլ «Օրօր»ին մթնոլորտին եւ մեղեդիին մէջ: Երբ փողերային խումբի երաժշտութիւնը եւ անոր ծայնը կը հեռանան, կը մնայ միայն մեղմ ու քնքուշ «Օրօր»ը նոյնիսկ ստեղծագործուած «Յոթել Պարոն»ի մէջ:

Չօրաւար Մուսթաֆա Զեմալը, որ յետագային դարձաւ Աթաթիւրը, ապրած է «Յոթել Պարոն»ին մէջ եւ ատելի քան ութ ամիս 1918 տարիներուն: Պաղեստինի ճակատի վրայ թրջական բանակները ծանր պարտութիւն կրելով, Մուսթաֆա Զեմալ եւ իր բանակը դուրս եկան Հալեպէն եւ «Յոթել Պարոն»էն: Իրենց հետ տարին իրենց զինուորական սարքերը, բայց նաեւ Հալեպէն կորցած շատ թանկագին մտադ:

Եթէ Աթաթիւրը մոռցած էր քուստեր գինուորականի իր ապրած կեանքը եւ անոր ձգած հետքերը ու տակաւին իւրաքանցուած մեծանունները, սակայն երեւի չէր մոռցած «Յոթել Պարոն»ը: 1920 թուականներուն, երբ Հալեպի երկաթուղիի ընկերութեան ֆրանսացի տնօրէնը պաշտօնի եւ գործի բերումով գացած էր Թուրքիա, ան հանդիպած էր Աթաթիւրին: Աթաթիւրը իմանալով, թէ ֆրանսացի տնօրէնը կուգայ Հալեպէն, առաջին հարցումը կ'ըլլայ անոր: «Դեռ կը գոյատեւե՞ «Յոթել Պարոն»ը: Ու տակաւին. «հապա Մազլումեան ընտանիքը ինչպէ՞ս են»:

Տոքթ. Ռոպէր Ճեպճեան, որ մանուկ տարիքին ապրած է Աթաթիւրին արհաւիրքը, չի մոռնար իր պատասխան-ակնարկը ընելու ու իր յուշերուն մէջ. «Այդ Պր. Նախագահ, կը գոյատեւէ պատմական պանդոկը. ուրիշ շատ շատերու նման, չէ-քանդուած: Կը վերապրին Մազլումեանները ու հայ ժողովուրդն ալ, որ դեռ կը բազմանայ»:

Արմէն Մազլումեան՝ Գրիգորի որդին, որ տակաւին կ'ապրի Հա-

լեպ եւ ներկայիս տերն ու տնօրէնն է պանդոկին, մեկնելով երկրի մէջ տեղի ունեցած ահռելի իրադարձութիւններուն ըսած է (պանդոկին մասին). «Բայց այս բոլորը անցեալի մէջ է: Անկեղծ ըստ, հիշատակոցդ ալ երբեք առաջուանը չ'ըլլար: Լաւագոյն տարիները ետն տեսցին»:

Հասկնալի է Արմենի ցաւը: Պատերազմական այս վիճակին մէջ շատ դժուար է տեսնել հորիզոնին վրայ երեւցող-չերեւցող յոյսը եւ այս նոյնիքն յոյսին ներշնչող եւ ներշնչեցնող լաւը ու լաւատեսութիւնը: Բայց հայը իր պատմութեան ամբողջ գնացքին մէջ հաւատաց, կարչեցաւ եւ ապրեցաւ այս յոյսով եւ որուն միջոցաւ տեսաւ հորիզոնին վրայ երեւցող լաւագոյն տարիները, որ կու գար անցնելն եւ կ'ապրէր ներկային մէջ ու տակաւին գալիք օրերու հաշտուկայ յոյսով է, որ հայը վերապրեցաւ ու բազմացաւ:

Կանաչեանը ստեղծագործեց իր նշանաւոր «Օրոր»ը «Հոթել Պարոն»ին մէջ: Աթաթիւրը չի մոռցաւ «Հոթել Պարոն»ը: Ու տակաւին երկար է շարքը անոնց՝ նեռարեալ իրադարձութիւններուն, որոնք «Հոթել Պարոն»ին մէջ ու անոր մէջէն ստեղծեցին հայկական աստիճանոր տուաւ մշակոյթ եւ եղաւ ապրելու եւ բազմանալու հիմք: Հայր այս անանդին հաւատաց ու տակաւին պիտի ու պետք է շարունակել հաւատալ: Դժուար է այր: Բայց հայուն պատմութեան փորձն է այս եւ որ միշտ դժուար եղած է:

Կանաչեան, Աթաթիւրը եւ «Հոթել Պարոն»: Հայուն անանդին վերապրելու եւ բազմանալու մէկ իրական փաստը:

«Հոթել Պարոն»: Հոն ուր Կանաչեան հայը ստեղծագործեց եւ Աթաթիւրը՝ թուրքը, չի մոռցաւ:

Իսկ մենք այսօր: Մեզի կը մնայ ամուր կենալ այս հաւատքին ու անանդին շարունակականութեանը մէջ: Արժէ լաւագոյն տարիները տանիլ դէպի հորիզոն՝ թելուզ հեռու եւ ոչ խաղաղ մթնոլորտի մէջ եւ ոչ թէ չ'ըլլալու համար, հապա առաջուանը ընել միջ ուժ՝ անկիլա վարդուան օրը ստեղծելու տեսլականով:

Եւ արժէ որ հայը հաւատայ այս ուժին: Որովհետեւ այս ուժին մէջ ու անոր միջոցաւ է, որ Հայէպը եւ հայը ամբողջ պիտի վերապրին եւ «Հոթել Պարոն»ը ու հայուն բոլոր Էութիւնները պիտի բազմանան:

## ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ՝ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋԷՆ

*«Անապարն ու չոր երկիրը պիտի ուրախանան եւ անբնակ երկիրը պիտի ցնծայ ու շուշանի պէս պիտի ծաղկի»:  
(Եսայիայ 35.1)*

Աստուածաշունչի յանձնառութեան գործընթացին մէջ հիմնական թել ունի Աստուածաշունչի ընթերցման գործօնը: Ու տակաւին, նոյնիքն ընթերցուած հատուածին հասկացողութիւնը, եւ անհատին ու հասկացականութեան հասկացած հատուածին ըմբռնումը եւ կիրարկումը՝ ընթերցողին անհատական եւ հաւաքական կենսեքին մէջ: Եւ այս ինչուսով, անհատի մը մայրենի լեզուն, եւ այդ լեզուին ընկերամշակութային մտածողութիւնը եւ խորքային բացատրութիւն-հասկացողութիւնը շատ կարեւոր գործօններ են ընթերցուած հատուածին հասկացողութեան եւ ըմբռնում-կիրարկումին մէջ: Ու տակաւին, անհատին ու հաւաքականութեան ընկերա-քաղաքական ու մշակութային եւ կրօնական ու ապրած պատմութեան փորձառութիւնը կարեւոր տուեալներ են նոյն հատուածին մեկնաբանութեան ու բացատրութեան համար:

Եթէ հայը պիտի կարգայ Աստուածաշունչը իր մայրենիով՝ հայերէնով, այս պիտի նշանակէ, թէ հայերէն լեզուին բառապաշարային բացատրութիւնը եւ մեկնաբանութիւնը շատ կարեւոր հիմք պիտի ընտանայ հայուն Աստուածաշունչի հատուածին ընթերցման ու հասկացողութեան համար: Տակաւին ինչ խօսք, որ հայուն պատմա-քաղաքական ու ընկերային տուեալները եւ ի մասնաւորի Տեղասպանութեան արհաւիրքը, իրենց ազդեցողութիւնները ունին հատուածին հասկացողութեան, մեկնաբանութեան եւ կիրարկումին մէջ:

Եւ այս Աստուածաշունչի բոլոր հատուածներուն համար, ներառելով մարգարէութեան գիրքերը:

Աստուածաշունչի մարգարէութեան գիրքերը սկսած են գրուիլ թ.Ա. 874 թուականներէն սկսեալ: Մարգարէ հասկացողութիւնը կը սիրուէր անոնց, որոնք լիցքաւորուած էին Աստուծմէ եւ Սուրբ Հոգիին ստանշնորդութեամբ պատասխանատուութիւնը ստանձնած, փոխանցելու ժողովուրդին Աստուծոյ պատգամը: Այս կրնար զգուշացնել հաւաքականութիւնները իրենց սխալ ապրելակերպէն ու գոր-

ծած մեղքերէն, իրագրել դարձնել զանոց դատաստանի եւ նաև հետեւանքներու եթէ չհնազանդին եւ չզղջան: Բայց նաեւ մարգարի- ները կը խօսէին ապագայի տեսլականով, հոն, ուր յոյսը եւ օրհու- յանքները կան բոլոր ակ (անոնք), որոնք համերաշխօրէն կ'ապրին Աստուծոյ հետ: Մարգարտութեան գիրքերու մէջ վեր անուած և հիւ- բողը եւ մտահոգութիւնները այլազան են եւ բազմաբնոյթ:

Բայց նաեւ անհրաժեշտ է, որ Աստուածաշունչի մարգարտութեան գիրքերը պետք է կարդալ ոչ թէ որպէս անցեալի մէջ եղած պատու- հար, եւ կամ ալ այսպէս ըսած «Իսրայելի» համար ու անոր մարգա- րներուն երեակայութիւնը, այլ այս բոլորը գետնոյ որպէս մէկ ան- բողութիւն ներկայ աշխարհի իրադարձութիւններուն եւ անոր դրուածքին համար առչուող պատգամ: Պատգամ մը որ կու գալ Աստուածաշունչէն:

Մարգարտութեան գիրքերու և հիւբերու շարքին է նաեւ եւ համեմա- տաբար զգալի երեւոյթով ուժի հասկացողութիւնը եւ անոր կիրա- կումը: Գարոյ Տեմբսի այս իմաստով մարգարտութեան գիրքերուն մէջ նկարագրուած ուժի հասկացողութիւնը կը ներկայացնէ որպէս ի- խող՝ իմա քանդող, եւ ազատագրող՝ իմա կեանք տուող, ուժերու մի- ջեւ: Եթէ այս երկու ուժերը իրար հետ բախումի մէջ են պատմութեան առանցքին, բայց նաեւ մէկ ուժէն միւս իրականութիւնները կամու- ուած են իրարու, ինչ որ մարդկային կեանքին համար կը ստեղծի «Յետնաբանական Տեսիլք»:

Այս տեսիլքը մարդուն ու հաւաքականութեան կեանքերուն հա- մար կը դառնայ ցուցանիշ, որ կը խօսի նայած իւրաքանչիւրի կեան- քին մէջ որդեգրուած ուղղութեան անոր հետեւանքները եւ այս «մա- նուան, դատաստանի, ղծոխքի եւ դրախտի» իրողականութիւններով եւ բողորին համար: Բայց կայ աւելին: Այս յետնաբանական տեսիլքն է, որ կը խթանէ մարդուն՝ ստեղծելու համար ազատագրող ուժը, ուր ան՝ իրաւագրկուածը, կը տքնի կեանքի իրաւունքին եւ շնորհքին ազատագրուած եւ իր նոր կեանքի իրավիճակով:

Ուղղըր Պրուկման այս ուժերուն եւ անոց բախումներուն մէջ կը տեսնէ չորս հիմնական ապրուած եւ ապրող փորձառութիւններ: Առաջին՝ յուշը, ուր ներկայի ապրող ճնշուած հաւաքականութիւնը կը մտնէ իր անցեալի ապրած յուշերուն մէջ: Երկրորդ՝ ցաւը, ուր ներկայ ապրող ճնշուած հաւաքականութիւնը կը շարունակէ շալկել կու- տակուած, բայց ապրած իր անցեալի ցաւերը: Երրորդ՝ յոյս, ուր դարձեալ նոյն ճնշուած այս ապրող հաւաքականութիւնը գիտ- ամուր պահել իր յանձնառութիւնները եւ տանիլ գայն վաղուան օրին, իրականացնելու միտումով: Չորրորդ՝ պատգամը, որ դարձ- եալ կը փոխանցուի ճնշուած նոյն սերունդներուն միջեւ, որուն արժ-

քը յաւապէս կը գիտակցուի իրենց՝ ճնշուած սերունդներուն կողմէ, որ նաեւ կ'ապրի զայն:

Պրուկմանի համար, իրաւագրկուած ու քանդող ուժի տիրապե- տութեան տակ եղած հաւաքականութիւնը կը յիշէ եւ կ'ապրի այս ցաւը, բայց նաեւ կը պահանջէ ու կը տքնի նոր կեանքի հասնելու յո- յւր ուր պիտի կարենայ ապրիլ իր իւրացուցած պատգամին ջերմու- թեամբ:

Մարգարտութեան գիրքերու երեակայութեան միտք բանին այս ուժերուն բախումն է, բայց նաեւ նորին տեսիլքը: Այս հետեւողակա- նութեամբ, Մարգարտութիւն Ամովսեայ, Միքիա, Երեմիայ, Ողբք երեմեայ, Ամբակումայ, Սոփոնեայ եւ Եզեկիելի՝ բոլորն ալ իրենց կերտուական մտահոգութիւնը դարձուցած են անարդարութիւնը, ուր տիրապետողը իր ուժը կը բանեցնէ եւ կը ճնշէ զրկուածին վրայ: Ամովսեայ կը խօսի օրուան անարդարութեան վրայով. «Քանզի անոց Գաղաաղը երկաթէ կամասայլերով ձեծեցին» (Ամովսեայ 1.3): «Քանզի Գաղաաղի յոյ կիները ճեղքեցին» (Ամովսեայ 1.13): Բայց կայ նաեւ ապրելու յոյսը. «Չիս փնտռեցիք, որպէսզի ապրիք» (Երեմիայ 5.4):

Միքիայ կը խօսի հարստահարութեան մասին. «Վայ անոց, որ անտէրութիւն կը խորհին ու իրենց անկողիներուն մէջ չարութիւն կը մտածեն եւ առաւօտեան լոյսին ատենը զանոց կը գործադրեն, բանզի իրենց ձեռքերուն մէջ ուժ կայ: Անոց ազարակներու կը ցան- կան ու զանոց կը յափշտակեն, տուներու՝ զանոց կ'առնեն: Մար- ցուն՝ իր տունը, մարդուն ու իր ժառանգութեանը զրկանք կ'ընեն» (Միքիայ 2.1-2):

Բայց կայ Երեմեայ մարգարէին դատը. «Անոր համար ձեզի հետ քանակին պիտի վիճիմ, կ'ըսէ Տերը ու ձեր որդիներուն որդիներուն հետ պիտի վիճիմ» (Երեմեայ 2.9): Իսկ դատին պատճառը. «Անոր երկիրը աւերակ ըրին, Անոր քաղաքները այրեցան, անբնակ եղան» (Երեմեայ 2.15):

Իսկ Չաքարեայ մարգարէին մէջ կը տեսնենք Աստուծոյ խօսքին ուժը, որ կը դառնայ յոյս, որ նաեւ կը վերաշինէ տաճարը՝ իմա պատ- աստը, եւ կ'ապահովէ շարունակականութիւնը. «Իմ տունս անոր մէջ պիտի շինուի իմ քաղաքներս նորէն բարիքներով պիտի յորդին եւ Տե- րը նորէն Սիոնը պիտի մխիթարէ» (Չաքարեայ 1.16-17):

Բայց այս յոյսը եւ պատգամը մէկ խմբակի մը համար չէ միայն: Ինչպէս մարգարէն կու գայ անոր համամարդկային պիտակ. «Ով կրկնէր, ինծի մտիկ ըրէք, ով ժողովուրդներ; հեռուէն ականջ տուէք, որպէսզի մինչեւ երկրին ծայրը իմ փրկութիւնս ըլլայ» (Եսայեայ 49.1, 6):

Հայ ժողովուրդի Յեղասպանութան հարիւրամեակի համահայկական կարգախօսք եղաւ «Յիշել եւ Պահանջել»: Հայը կը յիշէ իր ապրած ցաւը, կը յիշէ որ թուրքին ձեռքին մէջ ուժ կար, որ յափշտակէց հայը, յոյ կիները ճեղքեց ու հայուն՝ ինք իր պապենական տանը ժառանգութեանը գրկանք ըրաւ, ու քաղաքները այրեցան, անքան եղան: Բայց յոյն հայը այսօր նաեւ կը պահանջէ. կը պահանջէ իր դատը, երբ տակաւին թուրքին որդիներուն հետ կը վիճի: Եւ հայը կը պահանջէ այն յոյսով, որ իր դատը իշխելու եւ քանդելու համար չ'Այդպէս չէ եղած եւ պիտի չ'ըլլայ: Հայուն դատը ազատագրելու համար է: Ազատագրութեան պատգամը, որպէսզի հայուն քաղաքները դաժեպ բարիքներով յորդին:

Եւ դարձեալ Մարգարէին երեւակայութիւնը: Աստուած զայրացաւ Երզնկի վրայ, երբ ան Յուդայի ժողովուրդը անարգեց եւ գրանց անոնց ինչքերը: Բայց կար Աստուծոյ ազատագրող ուժին վստահութիւնը եւ ապահովութիւնը, որ փրկութիւն պիտի ըլլայ եւ սրբութիւն պիտի ըլլայ: Բայց նաեւ «Ցակոքին տունը իրենց կալուածներուն պիտի տիրեն» (Աբդիա 1.17):

Եթէ հայը մինչեւ այսօր կ'ապրի, որովհետեւ հաւատաց ու փնտռեց ապրիլը ու տակաւին: Հայուն կեանքը, ապրելու յենարար ու փնտռածը այս ազատագրող ուժն է որ կը շինէ, եւ ոչ թէ կը քանդէ:

Հայը պիտի շարունակէ «Յիշել եւ Պահանջել»: Յիշելուն հետ, հայը պիտի ապրի իր փրկութիւնը, իմամ՝ իր նոր ու շարունակող կեանքը: Բայց կայ նաեւ հայուն վեճին սրբութիւնը, որ սակարկելի չ'է եւ ոչ ալ պատմաբաններու յանդէպ քննարկումներու նիւթ: Հայը իր փրկութեամբ եւ սրբութեամբ պիտի շարունակէ պահանջել, որովհետեւ հայուն պահանջածը իրաւական է եւ օրինական, որ հայը իր կալուածներուն տիրէ:

Եւ այս բոլորը մարգարէին երեւակայութեամբ ստեղծուած ուժին կառչած մնալով է: Եւ որ հայը պետք է շարունակէ կառչած մնալ անոր: Եւ որ երբեք երեւակայական չ'է այլ իրական, ապրող ու նոր կեանք շինող ուժ է:

## ՀԱՅՈՒՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Բժշկութիւնը եւ գիտական մասնագիտութիւնը մեր ընտանիքին մէջ եղած եւ պատմական ժառանգութիւն-յաջորդակցութիւն, որուն սակայն ես չ'հետեւեցայ: Չեմ գիտեր ընտրութեան, թէ՛ նախա-տրութեան հարց էր, բայց կեանքիս ուղին այլ մասնագիտութեամբ ընտացաւ: Բայց պատանի տարիքէս միշտ ալ մօտիկ եղած եմ գիտաբժշկական մթնոլորտներուն: Մէկ կողմէ որս դեղագործական մասնագիտութիւնը, իսկ միւս կողմէ կար հօրեղբօս սասարեզը: Ակտի ունենալով, որ հօրեղբայրս Հայէպի մէջ ուներ իր կակաբու-հարս-հիւանդանոցը, որ մինչեւ այսօր կը գործէ, պատանեկան տարիներուս հետաքրքրութիւն ունեցած էի հանդիսատես ըլլալու անոր տարբեր գործունէութիւններուն: Եւ հօրեղբայրս չ'էր զլսար քիս մասնակից դարձնելու իր բժշկական տեսութիւններուն՝ համբե-րութեամբ նաեւ բացատրելով իր ըրածները եւ ախտաճանաչումնե-րը եւ քանի մը անգամ ալ փորձեց քաջալերել զիս. «Չե՛ս ուզեր հե-տեւիլ բժշկական համալսարանական մասնագիտութեան»:

Կը սիրէի դիտել հիւանդանոցի դարմանատան բաժնի հիւանդնե-րուն հետ հօրեղբօս յարաբերութիւնը: Իրեն համար բժշկութիւնը փրկական մասնագիտութիւն էր, բայց զայն ներառած էր իր ազգա-ինդատիարակչական կեանքին ու համոզմունքներուն մեծ խճան-կարիին մէջ: Եթէ հիւանդ-այցելուն հայ ու ազգային կեանքին մէջ իր հետաքրքրութիւնն ու մասնակցութիւնը ունեցող անհատ էր, այդ պարագային կ'ըլլային անպայմանօրէն հայկական ինքնութեան եւ իմաստահարցերու վերլուծումները՝ բժշկական մտահոգութիւններուն արկնքեր: Պիտի խօսէր հայրենիքի ու սփիւռքեան մարտահրաւերնե-րուն մասին, բայց նաեւ անպայման պիտի անդրադառնար Հայէպին մայր գաղութ ըլլալու իրականութեան: Բժշկութիւնը անկասկած իրեն համար նաեւ դաստիարակութիւն էր, որ պետք էր սորվեցնել, թայց նաեւ յարգել:

Օր մըն ալ երիտասարդ հայ արիեստաւոր մը ներկայացաւ դար-մանատուն վերստուգումի համար: Ան ներկայացուց իր դեղատոմսը՝ հօրեղբօս յիշողութիւնը թարմացնելու համար: Ակտի ունենալով հայ երիտասարդին ինքնաշարժներու նորոգութեան արիեստը եւ այդ արիեստին պարտադրող սեւ ու սեւցնող աշխատանքը, դեղա-տոմսը գրեթէ անճանաչելի դարձած էր: Եւ չուշացաւ հօրեղբօս զգաստութիւնը. «Այս մէկը ցոյց կու տայ հայ բժիշկին նկատմամբ ինչ յարգանքը»:

Հայ երիտասարդին հետ ես եւս խպնած էի, անելի ճիշդ ուզած էի



մտնել իր նուաստացած, բայց նոյնքան նաեւ «յանցագործի» ներսը խարհին մէջ՝ փորձելով երեւի պզտիկ թափ մը տալ իր ընկճումների թեան: Կամաց-կամաց գլուխը բարձրացուց եւ մեղմ ձայնով մոռուցում էր իր ներքինի խնորհանքը, ըսաւ. «Բայց, տղա՛ս, գիտե՛ք մեր աշխատանքին քննոյթը, դիտումնաւոր չէր»:

Իւրաքանչիւր գործողութենէ առաջ հորեղբայրս կը դիմեր եւ բժշկական հանրագիտարաններու մեծ հաւաքածոներուն՝ յանգում ուսումնասիրութիւններու համար: Այդ տարիներուն չկային հասնել կարգչային ներկայ օրերու բոլոր դիւրութիւնները: Մէկ-մէկ հասնել փոր գիրքերը պէտք էր դուրս հանուէին, էջերը թերթատուէին, ապա ընթերցուէր որոնուածը: Պատանեկան տարիքիս ու այդ տրամաբանութեան մէջ քիչ մը տարօրինակ էր այս երեւոյթը: Բայց չէ՞ որ երեղբայրս ուսանած եւ փորձառու բժիշկ էր, ուրեմն պիտի կրկնէր «Միշտ նոր բան մը կայ սորվելիք»: Հաւանաբար կամաց-կամաց պիտի ընկալէի, որ կեանքի եւ անոր յառաջխաղացքին հիմնական գրուակներն է սորվիլը:

Շատ էր թիւը այն հիւանդ այցելուներուն, որոնք հիւանդանոց եւ գային Սուրբոյ տարբեր գիւղերէն, իսկ գիւղացիս մեծ յարգանք ունէր բժիշկին նկատմամբ: Անոնք իրենց հետ կը բերէին գամբիւր մը հակաէր կամ տակառով մածուն եւ տակալին՝ թարմ միս: Մշակոյթ էր, որ պահուած էր, որպէս աւանդութիւն եւ մարդկային փոխյարաբերութիւններուն մէջ արժեքի գիտակցութիւն:

Այդ օրերէն օր մը գիւղացի մը ներկայացաւ հիւանդանոց իր մեծ աչքին բարդութեան համար: Իր շարք մը հարցումներուն կարգին հորեղբայրս հարցուց. «Ո՞ր շրջանէն կու գաս»:

«Սելիմիէ», պատասխանեց գիւղացիս:



Հորեղբայրս վայրկեան մը կանգ առաւ ու աչքերը սեւեռած հիւանդին՝ երկար նայեցաւ անոր, առանց արտայայտուելու: Խեղճ մարդը, եր կեանք էր իր աչքին վերաբերող հարցի մը համար, կարծեմ նոյնքան սկսաւ մտահոգուիլ հորեղբորս բարացած նայուածքէն: Հաւանաբար մտածեց, թէ այլ հիւանդութիւնն էր ունէր: Ես ալ շուարած էի եւ չէի կրնար հասկնալ, թէ ի՞նչ է պատահածը:

Հորեղբայրս պահ մը ետք լռութիւնը խզեց եւ գիւղացիին աչքի շնորթիւնները մանրամասնօրէն ամբողջացուց: Սելիմիէի գիւղացիս խնորեց. որ այցեգիւր վճարէ:

«Վճարուած է», եղաւ հորեղբորս շատ արագ եւ կարճ պատասխանը:

Գիւղացիս քիչ մը անելի շփոթեցաւ, իսկ ես զարմացած կը նայէի հորեղբորս:

Վրոչ 1915 թուականին՝ հայոց Յեղասպանութեան ատեն, օգնութեան հասարակ տեղահանուած հայ ժողովուրդին, ապաստան տուիլը անուղիմ շատերու: Ձեր հոգածութեան շնորհիւ փրկուեցան շատ մը հայեր, ներառեալ հորաքերոջս եւ հորեղբորս ընտանիքները՝ իրենց գրասկներով», պատասխանեց հորեղբայրս:

Սելիմիէի գիւղացիս չէր ծած Յեղասպանութեան արհաւիրքի օրերուն: Չ՛մէ ալ գիտեր, թէ ան լսած էր այդ բոլորին մասին, նաեւ հայ ժողովուրդին նկատմամբ իր գիւղին ցուցաբերած գուրգուրանքին մասին: Չզացուած էր հորեղբորս շարժոյթէն, բայց նաեւ բաւական բան իմացաւ հայուն ողբերգութիւններուն մասին: Ես ալ, անկասկած անկէ, որ գիտէի Յեղասպանութեան մասին, բայց նոյնքան զգացուած էի գիւղացիին նման, նաեւ կը փորձէի այդ վայրկեանին դուրս հանել մարդկայինը մարդուն մէջէն, նոյնիսկ այն բոլոր ապուրծ փորձառութիւններէն մեկնելով:

Սելիմիէի մասին առաջին անգամն էր, որ կը լսէի: Սուրբոյ Համալսարանի արեւելեան մասին մէջ անապատային շրջան մըն է: Անոց 1916 թուականին թուրքին անմարդկային արարքներուն կրցած էին ոչ ոք ըսել եւ եղբայրական ու հոգածու գուրգուրանք եւ վերաբերմունք ցոյց տալ ըրիստոնէայ հայուն: Ես պիտի իմանայի, բայց նաեւ սովորի, որ սելիմիէի գիւղացիս հիւրընկալած է իմ տարագիր հասարակներս, որոնք չվարանեցան վկայելու, թէ «մեզ դիմաւորեցին արտակարգ համակրանքով, կերակրեցին ու հոգացին, օժանդակեցին տեղաւորուելու. որպէս պահապան հրեշտակներ՝ եղբայրական փրկագուրջ վերաբերմունքով վարուեցան մեզի հետ, մեր ողջ կեանքի մասին: Մեր կեանքը կը պարտիքը անոնց»: Եթէ թուրք կեանքերու վերջ տուաւ, սելիմիէի արաբը պահպանեց գանոցը:

Հորեղբորս համար բժշկութիւնը անքակտելի միաւորն է հայուն եւ

համընդհանուր հայկականության արժեքի գիտակցության փոփոխական ու մասնագիտական կեանքին ընթացքին երբեք պարունակելի չվերցրուց ունե հիանալի, որ կու գար Սելիմիի գիւղէն: Ասիկա իր «չնչին» երախտագիտական հատուցում-շարժոյթն էր Սելիմիի ժողովուրդի վերաբերմունքին համար՝ հայ ժողովուրդին եւ իր հարազատներուն նկատմամբ: Ու տակաւին ինքնավստահ կերպով կը վկայէր. «Միթէ պատահա՞ծ է երբեւիցէ, որ հայ ժողովուրդը մոռնայ իր բարեկամները»:

Զեմ գիտեր, թէ Սելիմի գիւղը եւ անոր քնակչութիւնը ներկայ օրերու սուրիական այս թոհուրոհին մէջ ի՞նչ կացութեան մէջ են, բայց շատ յստակ է, որ սելիմիեցի արաբ գիւղացին եղաւ հայուն բարեկամը: Ան կրցաւ կերտել բարեկամութիւնը, քանի որ հաւատաց ապրելու գրաւակահին, փոխանակ սպաննելու:

Արդարեւ, համամարդկային կեանքին մէջ կայ բարեկամութիւնը եւ անոր նկարագիրը կերտող խորքային արժեքը, որ կը կայանայ կեանքերը պահպանելու եւ զայն իմաստաւորելու հիմքերու վրան: Եթէ սելիմիեցի արաբը եղաւ հայուն բարեկամը, որովհետեւ իր գրաւը դրաւ ապրեցնելու սկզբունքին վրայ: Եւ կեանքի մէջ ապրելով եւ ապրեցնելով է, որ արժեքներ կրնաս ստեղծել:

Եղեռնի հարիւրամեակին առթիւ հայը դարձեալ երախտագիտութեամբ կը յիշէ իր բարեկամները, որոնք ապրած ու ապրեցուցած են տակաւին կ'ապրին ու կ'ապրեցնեն համամարդկային արժեքները: Եւ արժեքները չեն կերտուիր սպաննելով:

## «ԱՆՈՒՄՆԱԿՈՒՄՈՒ ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆԸ»

«Կանգի Ասորւած այնպէս սիրեց աշխարհը մինչև իր Միածին Որդին գրաւ»:

(Յովհաննու, 3.16)

Ուրտուաւ Լէ Կուին՝ ամերիկացի գրող մըն է, որ ներկայիս կ'ապրի Օրիկըն (ԱՄՆ): Անոր կարծ պատմութեամբը՝ «Ան որ Կուսցաւ Օմելասէն» (The One Who Walk Away From Omelas), երեակայական, առասպելական եւ կարելի է նաեւ որակել երեքաթային, հռչակ շահած գրական գործ մըն է: Զոն կը նկարագրուի ոչ իրական քաղաք մը՝ Օմելաս, ուր կեանքը խաղաղ է եւ կենցաղը գեղեցիկ: Օմելասի քնակչութիւնը ունի հարազատ նկարագիր եւ ուրախ տրամադրութիւն: Անոնք կը վայելեն իրենց քաղաքի ընծայած բարօրութիւնները եւ յառաջխաղացք արձանագրած կենսամակարդակը:

Լէ Կուին մշակած է գեղարուեստական գրականութիւն եւ ունի պատմելու պատկերաւոր ոճ, յատկապէս երբ ան կը նկարագրէ քաղաքին ազգային փառատունի մը տոնակատարութիւնը. «Տարեց կին մը՝ կարծ, գիրուկ եւ ժպտաղէմ, որ իր չորսդին կը պտըտի ու ծաղիկներ կը բաժնէ: Մինչ տղամարդիկ իր տուած ծաղիկները կը գետնէն իրենց փայլուն մագերուն մէջ: Ու տակաւին պատանի մը՝ ինն կամ տասն տարեկան, մինակ կը հետեւի ամբոխին ու կը նուագէ իր շինած փայտէ սրինգին վրայ»: Լէ Կուինի երեակայութիւնը, եւ այս բոլորին պրական գեղեցիկ ոճով նկարագրութիւնը, ընթերցողը կը տանի նոյնինքն այդ երեակայական ու առասպելային քաղաքի ուրախութիւն բուրոզ հմայքին ու մթնոլորտին մէջ:

Քայց Լէ Կուին չի զլանար նկարագրելու քաղաքին, թէկուզ միտական, մէկ այլ երեւոյթը՝ բան մը եւս աւելցնելով իր գրական



ստեղծագործական տաղանդին վրայ:

Եւ կը շարունակէ պատմութիւնը: Պզտիկ տղէկ մը կ'ապրի Օմլաս քաղաքի մէկ բարձր շէնքի գետնայարկի սենեակի մը մէջ, զոց ու անշատուած, առանց պատուհանի: Ան երեւութապէս կ'երեւի հագին վեց տարեկան, բայց եւ այնպէս կը բոլորէ տասը: Այս, որովհետեւ տղէկը «տձգլոս Է կամ շատ հաւանաբար հիւանդ ծնած եւ վախի ու անկանոն սնունդի ու մեկուսացման ներկայի այդ վիճակին մէջ այնպէս դարձած» կը նկարագրէ Կուիս:

Բայց կայ աւելին: Մէկ-մէկ գետնայարկի սենեակին դուռը կը բացուի եւ մարդիկ կը նային ներս՝ տեսնելու փոքր տղան: «Չաճիս գիւ դուրս հանեցեք այս սենեակէն. կը խոստանամ բարի ըլլալ» կ'աղոթէ մտնուողը: Բայց մարդիկ ակնաշարուր չեն ըլլար տղէկին խնորհութիւն: Եւ մանչուկը կու լայ եւ կը շարունակէ մնալ մինակ ու ապրի մեկուսացած կեանքը՝ քիչ կերակուրով եւ գրեթէ սոված:

Եւ չուշանար պատմութեան վճռական մասը եւ ինչպէս որ կ'Կուիս կը նկարագրէ. «Օմելասի բնակիչները գիտեն, թէ այս սնունդը հոն սենեակին մէջ է: Կան ոմանք, որոնք կ'այցելեն եւ կը տեսնեն զինք, ուրիշներ միայն գիտեն թէ ան սենեակին մէջ է: Բայց բոլորը տեղեակ են մանչուկին գոյութենէն ու անոր իրավիճակէն: Շատեր կրնան վերելու թէ ինչու ան հոն է, բայց բոլորը գիտեն թէ իրենց ուրախութիւնը ու կեանքի յառաջխաղաղացը կախեալ է մանչուկին ուրբերգական կեանքէն:

Է Կուիս կ'եզրափակէ. «Այս է Օմելաս քաղաքի ընկերային համակարգը: Մէկ տղէկ մը պիտի չարչարուի, որպէսզի ուրիշները ուրախ ըլլալ(ն): Եթէ մանչուկը ազատ ձգուի, Օմելաս քաղաքը պիտի քանդուի: Եթէ շատեր կ'անդրադառնան փոքր տղոն ողբերգական վիճակին՝ ու տակաւին ծնողք, որոնք ամուր կը փարսի իրենց գաւակներուն (երեւի վախճալով, թէ իրենց զաւակը կրնայ ենթարկուիլ նոյն մանուկին ճակատագրին), բայց բոլորը ետ կը դառնան իրենց ուրախութեան: Նոյնիսկ անոնք, որոնք կը տեսնեն մանուկը ու անոր վիճակը, բայց եւ այնպէս կը շարունակեն իրենց կեանքը եւ «կը հեռանան Օմելասէն» ու անոր իրականութենէն:

Եւ հոս առակ-առասպելը կը վերջանայ: Բայց կը մնայ ընթերցողին մեկնաբանութիւնը:

Ներկայ աշխարհին ընդհանուր վիճակները՝ շատ մը երեւոյթներով, նման են Օմելասի տարբերակին: Այսօրուան աշխարհը մրցակցութեան մէջ է՝ ինքն իր ու իրար մէջ, իւրաքանչիւրը հասնելու համար իր ուրախութեանը, հաշուառկելով ուրիշին հաշտոյն եւ նոյնիսկ անոր կրած գրկանքովը: Մարդիկ, հաւաքականութիւններ, երկիրներ ու պետութիւններ, իրենց յառաջխաղաղացը, եւ այդ յառաջխաղաղացը

յին ստեղծած ուրախութիւնը կը հիմնեն իրենց համար եւ իրենց ինչպիսի հաշուառկումներով՝ ուրիշին շահարկումովը եւ ի գին անոր տիրութեան: Բաղաքական նպաստաւոր օրակարգերը, տնտեսական առաւելութիւններ, ընկերային տեղափոխումներ, կրօնական ուրախութիւն եւ անհանդուրժողութիւն իր եւ իրենց համար հաշուառկելով ուրիշին գրկուածութեամբ:

Ու տակաւին ան ու անոնք՝ ուրախը եւ ուրախները, կու գան ու կ'այցելեն գրկուածը ու մինակը: Անոնք գիտեն, թէ այդ գրկուածները կ'ապրին ահաւոր վիճակներու մէջ: Ուրիշներ կը լսեն գրկուածներուն աղերսանքները, թէ «մեզի դուրս հանեցեք այս վիճակներէն»: Ինչպէս անոնք «կը հեռանան Օմելասներէն» ու ետին կը ձգեն անոնց սպրած բոլոր իրականութիւնները: Եւ կը մնան գրկուածները, որոնք կը շարունակեն ապրիլ մինակ ու առանձին եւ իրենց նոյնիսկ զրկանքի ճակատագրուած կեանքերով:

Պատմութիւնը ինքզինք կրկնած է եւ երեւի պիտի շարունակէ նոյն կարգ մը հաւաքականութիւններու ուրախութիւնը հաշուառկութեամբ է ուրիշներու տիրութեամբ: Եւ այդ ուրիշները երեւի պիտի շարունակեն ապրիլ իրենց կեանքերը՝ ենթարկուելով միշտ հաշուառկութեան (իմ մա՛ շահագործումներու), հոս թէ հոն:

Բայց կայ ուրախութեան ուրիշ տարբերակ մը, եւ բոլորովին տարբեր հաշուառկումով՝ Քրիստոսի շնորհած ու ստեղծած նոր կեանքի ուրախութիւնը: Ուրախութիւն մը, որ հաշուառկուած չէ ուրիշին գրկուածութեամբ եւ տիրութեամբը: Ոչ ալ ուրիշին ապրած ու տակաւին ապրող անարդար իրավիճակով: Քրիստոսի ստեղծած ուրախութեան հաշուառկը կու գայ նոյնիսկ Քրիստոսի շնորհքէն, իր անսահման սէրէն՝ բոլորին ու բոլոր աշխարհին համար: Այնքան մը, որ ան աշխարհի եկաւ, որպէսզի Ինքն իր անձին հաշուառկով ստեղծէ մարդուն ուրախութիւնը: Քրիստոս Ինք գրկուեցաւ եւ անխորտակեցաւ, եւ ոչ ուրիշը, որպէսզի մարդը ուրախութիւն գտնէ ու հաստատուի կեանքին մէջ: Քրիստոսի գրկանքը ստեղծեց համակարգ մը, որ ինչ է ուրիշը դրաւ մէկ ամբողջութեան մը մէջ առանց խտրութեան ու կամայականութեան, այս կողմի թէ այն: Եւ այս ուրախութիւն է, որ իրական է, որ մարդուն կու տայ ուժ եւ յոյս՝ ապրելու ներկայ աշխարհը իր բոլոր տագնապներովը, բայց նաեւ յաւիտենականութեան ապահովութիւնով:

Հաշուառկուած ուրախութիւնը: Քրիստոսի: Չոն, ուր Ան գրկուեցաւ, որպէսզի ստեղծէ ոչ թէ երեւակայական, այլ իրական, ապրող եւ ուրախ «Օմելաս»ը:

## ՀԵՐՈՍՆԵՐՈՒՄ ԿԱՆՉՈՒՄ ՍԵՖԵՐՊԵՐԼԻՔ

Պեյրուօ քաղաքը քաղաքացիական պատերազմին առաջ՝ 1975 ին, ուներ իրապատուկ ջերմութիւն մը, որ անոր կու տար իրապատուկ դրոշմ ու կենցաղ, որ կու գար համալրելու անոր մշակութային դիմագիծը: Այս առանցքին Պեյրուօի Պուրճի հրապարակը մէկ կայուն տր փայլքն էր այս ապրող ջերմութեան: Հոն տարբեր մարդիկ ու երէտյոթներ քով-քովի կու գային: Թէեւ իրարանցում է, սակայն ետուկեանք, որ յաւելեալ փայլք կու տայ Պեյրուօի մշակութային իրապատուկ դիմագիծին:

Պուրճի հրապարակի ու անոր կեդրոնի շարժապատկերի սրահները կը կազմէին մէկ անբաժան մասնիկը Պեյրուօի այս ապրող մշակոյթին: Ոչ մէկ ձեւով կարելի է բաղդատել շարժապատկերի սրահներ՝ «Ամփիր»ը, «Ռոքսի»ն, «Տիւնետա»ն, «Ռատիո Սիթի»ն, ներկայ օրերու գերարդիական եւ հանգստաւետ սրահներուն հետ: Աթոռներէն սկսած մինչեւ լուսատրուումը ու ժապաւենի ցուցադրութեան ատեն զովացուցիչ ծախողները. «Կազոզ, ես՝ շապապ»: Եւ թիչ ետք խմուած ու պարապ շիշերուն զլորումը սրահին մէկ ծայրին մինչեւ միւսը՝ դիտուած ժապաւեններուն կու տային յաւելեալ փայլք մը:

1960-ական թուականներուն վերջաւորութեան էր: «Սինեմա Ռոքսի»ին մէջ սկսաւ սփռուիլ լիբանանեան պատրաստութեամբ «Սեֆերպերլիք» ժապաւենը: Այդ օրերուն համար իրապատուկ եւ գրեթէ եզակի իրականութիւն էր: Եթէ



մէկ կողմէ կար Ֆեյրուզի նման համբաւ վաստակած երգչուհին, քայքայեալ անոր կ'ընկերակցէին Լիբանանի շարժապատկերի եւ պատկերասփիւռի ծանօթ գրեթէ բոլոր դերասան-դերասանուհիները: Եւ այդ փառանգին վրայ պիտի գար աւելնալու լիբանանահայ ծանօթ քեմադրիչ եւ դերասան Պերճ Ֆազլեանը:

«Սեֆերպերլիք» ժապաւենի ցուցադրութիւնը ստացաւ գերազանց ժողովրդականութիւն: Երկար շաբաթներու վրայ ցուցադրութեան ու դարձաւ այդ օրերու ժողովրդիկ հետաքրքրութիւնը շարժող շարժապատկեր: Եթէ մէկ կողմէ լիբանանեան շարժապատկերի արուեստի եզակի եւ քաջարի նախաձեռնութիւն էր այդ օրերու տարրութեամբ, քայքային նաեւ անոր նիւթը եւ պատմութիւնը: Օսմանեան տիրապետութեան ժամանակ Լիբանանի ապրած դժուար եւ հանր ու ճշմարտամային օրերը, անոնց ընդմէջէն լիբանանցիին քաջարի դիմադրողականութիւնը: «Սեֆերպերլիք» ժապաւենը մեր հայ պատմականներուն սրտին ու հոգիին մէջ նաեւ դրաւ զօրաւոր կայծ մը: «Սեֆերպերլիք» կար թրջական բռնատիրական գործունեւ եւ այդ հայկական մեր պատմական տաքարին հոգիներուն համար եղաւ նոյն ժամանակ գրգռող կացութիւն: Տակաւին կար աւելին, որովհետեւ մեր պատմական տրամաբանութեամբ չէինք կրնար հասկնալ, թէ ինչպէ՛ս Պերճ Ֆազլեան հայը կրնայ ստանձնել թուրք սպայ Ռաֆաթ պէյի կերպարը: Եւ այդ ալ լաւ կադրակութեամբ: Բայց պիտի սորվէինք, թէ շարժապատկերի արուեստը տարբեր բան է իրական կեանքէն:

Բայց նախ «Սեֆերպերլիք»ի բնութագրումը:

«Սեֆերպերլիք»ը օսմանեան կառավարութեան ստեղծած հրահանգած պարտադիր զօրակոչն էր՝ տղամարդոց համար, երբ կայսրութիւնը քսանե-



րորդ դարուն սկիզբը ներգրաուած էր Պալքանեան՝ 1912-1913 եւ Զամաշխարհային Ա. պատերազմին մէջ՝ 1914-1918 տարիներուն: Եւ Օսմանեան կայսրութեան համար «Սեֆերպերլիք»ը դարձաւ պատկերազմի տարիներուն համար գործածուած նշանաբան. իսկ ան, որ կը համարձակէր դրժել «Սեֆերպերլիք»ի նշանաբանը եւ անոր հրահանգը, կ'ենթարկուէր հետապահուումի եւ կալանքի, նոյնիսկ արտորկայ իմաստով «Սեֆերպերլիք»ը ստացաւ եւ գործածուեցաւ նաև տարբեր բնութագրումներով:

Սալէե Մուրշետ՝ արաբ պատմաբան-օսմանագետ, «Սեֆերպերլիք»ի բացատրութիւնը կը ներկայացնէ ոչ թէ իր բառացի իմաստով այլ անոր քաղաքականացումը միտք բանին ու կիրարկումով: Ան «Սեֆերպերլիք»ը որակած է որպէս հաւաքական տեղահանում, այստոր, յատկապէս արաբական աշխարհին մէջ: Եւ այս իմաստով նա եւ պետք է հասկնալ եւ բացատրել ապրուած փորձառութիւնները մէջէն վկայութիւնները, թէ ինչպէ՛ս հաւաքականութիւններ թոյլ տեղահանուած են ու անհետ կորած:



Զորեղօրսս՝ տղոթ. Ռուպեր Ճպէճեանի յուշագրութիւններուն մէջ ալ կան «Սեֆերպերլիք»ի ապրուած փորձառութիւնները: «2 Օգոստոս 1914: Զասան Պէլլի՛ համաձգեատով մարդիկ կը տողակէտէ մայրուղիի վրայ, լեբան լանջին: Տնեցիները կը փափսան խորհրդարանի բառ մը, որ երբեք չկրցայ մոռնալ որը կեանքիս ընթացքին՝ «Սեֆերպերլիք»:

Եւ դարձեալ պատանեկան հոգիին մէջ դրոշմուած այդ օրերու վրաս ժապաւենիս պատկերներէն: Լիբանանցի ժողովուրդին ապրուած ողբերգութիւնը: Օսմանեան բանակին պարտադրած շրջափակումը արգիլելով ցորենի մատակարարումը: Ժողովուրդին անօթութիւնը:

ու տեղահանութիւնը: Աշխատանքային ճամբարները: Ու փախչող իբանանցի երիտասարդներու սպանութիւնը: «Սեֆերպերլիք»ը կը ներկայացուէր իր իսկական ապրուած բնութագրումով: Բայց կար նաեւ այդ վիճակին մէջ ժողովուրդին ապրելու վճռակամութիւնը: Երիտասարդ-երիտասարդուհիին սերը, զիրար գօտեպնդելու եւ հոսարու աջակցիւն ու տակաւին հողին կապուածութիւնը: Եւ այս քորով զգացումներուն մէջէն դուրս կը ժայթքէին դիմադրութիւնը, թուրքին դէմ կռիւն ու պայքարը: Ժապաւենը մէկ իրադարձութիւնը միւսին շարկապելով, շատ պարզ ու սահուն ընկալացնով կը տանէր մեզ միակ պատմութեան տարբեր հոլովոյթները: Մենք՝ հանդիսատեսներու, կը դիտէինք ո՛չ միայն ժապաւենը, այլ ապրուած իրական պատմութիւնը եւ կեանքը, որոնք ընդմէջէն աւելի կը սիրէինք Լիբանանը ու ամուր կը կառչէինք իրաւունքին եւ ազատութեան:

Ու դարձեալ հօրեղօրսս յուշերուն մէջէն: «1918: Զօրավար Անուպի բանակը գրաւած էր Զալէպը: Թուրքն ու գերմանացին ստարուած էին: Ցանկարձ կայծակնային լուրը տարածուեցաւ քաղաքին մէջ: Իրենց լեռներէն իջած եւ Զալէպ հասած էին Արամ պէյ Կապեանը եւ Թոփալ Յակոբին զխաւորած քաջարի մարտիկներու խումբը՝ մօտ երեսուն հոգի: Գացի դիտելու հայ զինուորները: Զորս ստորուան նուաստացուցիչ երեւոյթներէ ետք, հոգեպարար անգուշակեան տեսարան մըն էր: Իւրաքանչիւր քաջարի զինեալը: Կ'ուռեցնէին ընկճուած հայու կուրծքը: Տեղացիներ, որոնք հայը տեսած էին իրենց տարագիր, կու գային ապշահար դիտելու դիցազնական այս երեւոյթը: Զայ լուսանկարիչներ շտապեցին գանոնք նկարել: Այդ պահուներէն շատեր կորած են այժմ: Բայց անկորնչելի միակ այս պատկերը պիտի մնար արձանագրուած մանկունակ հոգւոյս մէջ»:

Եւ «Սեֆերպերլիք» ժապաւենին մէջ կար նաեւ հիմնական պատմութիւն մը, որ պիտի մնար նաեւ արձանագրուած պատանեկան հոգւոյս մէջ: Լիբանանցի քաջ մարտիկները, հերոսական պայքարէ ետք, ստիպուած էին ծովու ճամբով լքել երկիրը որոշ ժամանակի մը հատուկ: Ապտոն նաւուն մէջէն քարձարձայն կը կանչէ զինք հեռուն դիտելու նշանածը. «Մատանին ամուր պահէ քու մատիդ վրայ: Դուն ետք հոս: Եւ կ'երթամ հիմա, բայց շուտով պիտի վերադառնամ: Այս ետք հողն է, եւ մենք հոս պիտի ապրինք մեր ազատութեան մէջ»:


1915 տարին եղաւ լեցուն: Տեղասպանութեան հարիւրամեակի պատկերները մեր հոգիներուն մէջ արձանագրեցին անկորնչելի պատկերներ: Պատկերներ, որոնք թէ՛ երկ պարուած իրական պատկեր էին, բայց այսօր դարձեալ վերապրեցան: Կեանքեր, որոնք ստարած էին (ու տակաւին շարունակուող) մէկ կողմ՝ նահատակութեամբ, բայց նաեւ հերոսներու քաջարի դիմադրողականու-

թեամբ: Եւ այդ բոլոր հերոսները, Նահատակ թէ քաջամարտիկ, տե սանելի թէ ոչ, պատկերով եւ կամ այլ, այսօր տակաւին հեռուստա բարձրածայն կը կանչեն մեզ, կը բաժնեն իրենց սերը մեզի հետ եւ հողին. «Այս մեր հողն է, եւ մենք հոս պիտի ապրինք»:

Եթէ այս տարի մեր Նահատակները եւ հերոսները կը յիշենք, եւ եւ յառաջիկային պիտի շարունակենք յիշել, եթէ պահանջեցինք, պիտի շարունակենք պահանջել, որովհետեւ յիշել ու պահանջել ժամ կետի սահմանափակում չունին, որովհետեւ յիշել ու պահանջել հայ յուն «Սեֆերպերիք»ն են, ոչ թէ բռնի տեղահանութեան, այլ ինքնութեան զօրակոչի, հայուն կեանքին, իրաւունքին եւ հողին:

Չերոսներուն կանչը, հայուն «Սեֆերպերիք»ը, հարիւրամեակի տակաւին, Նոր եւ Նորոգուող մարտահրաւեր:

## ՄԱՇԵՅՈՒՄԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԴԵՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆԵԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ



Պետաքրքրութեամբ կարդացի Ամերիկայի մէջ լոյս տեսնող «Արմուրն Ուիքլի»ի մէջ վերջերս անգլերէնով «Կը փնտռեմ» խորագիրով հրատարակուած յօդուած-թղթակցութիւն մը: Յօդուածին միտք բանին վեր առնել է այդ հսկայական ջանքերը, զորս անհատներ եւ կողմակերպութիւններ յառաջ տարին հայոց Ցեղասպանութենէն ետք կորսուած հայկական ընտանիքներ գտնելու եւ միաւորելու: Այս աշխատանքը միայն Ցեղասպանութենէն անմիջապէս ետքի ժամանակաշրջանին համար չէր: Այլ երկար տարիներու վրայ շարունակուեցաւ: Կը յիշեմ պատանեկան տարիներուս, երբ կը հանդիպէի հայկական թերթերու մէջ նմանօրինակ «Կը փնտռեմ» յայտարարութիւններու: Եթէ բաւական անձեր գտան իրենց հարազատները շատ տարիներ ետք եւ առանց յուսահատելու, սակայն մեծ մնաց թիւը անոնց, որոնք մնացին կորսուած Նահատակ:

Եթէ հայը այսօր երախտագիտութեամբ կը յիշէ այդ բոլոր փնտռելու ջանքերը եւ աշխատանքները, բայց այսօր անցած է այդ ժամանակաշրջանը: Բայց երբեք զանոնք մոռնալով: Այլ, ինչպէս 100-ամեակի նշանաբանը յստակ է, հայը այսօր կը յիշէ այն բոլորը, որ

կորսնցուց: Մարդը, միտքը եւ հոգը: Բայց յիշելով նաեւ կը պահանջ այդ բոլորը, որովհետեւ այն, ինչ որ կորսնցուց հայը, իր արժանի պատուութիւնն է:

Արժանապատուութիւնը իւրաքանչիւր նահատակ հայու, եւ սակայն՝ հայկական ստեղծագործ միտքին (գիր, գրականութիւն, մշակոյթ, արուեստ եւ ւեպիկն): Եւ վերջապէս, արժանապատուութիւնն հողին, որ պիտի պարգեւեր բարեբեր կեանք՝ ի մի խմբելով հայութիւնը ամբողջ, ուր այսօր աշխարհով մէկ տարածուած է սփիւռքի իրականութիւններուն մէջ: Եւ այս բոլորը կը յիշէ հայը: Յիշելու այս իրողութիւնը Պոյաճեան եւ Գրիգորեան կը վերագրեն հայուն անբաժնելի պատմական փորձառութեան. «Ապրելով Յեղասպանութեան արհաւիրքը եւ ցաւը, հայուն վերապրումը դարձաւ գերբնական ուժ: Վերապրողներ Յեղասպանութեան ցաւը եւ անոր հոգեբանական բարդոյթները փոխանցեցին յաջորդ սերունդներուն»՝ իբրեւ ապրելու յոյս եւ ներշնչում»: Եւ այս ապրելու յոյսը եւ ներշնչումը, իմա՝ արժանապատուութիւնը, գոր այսօր տակաւին հայը կը կրէ իր մէջ եւ կը յիշէ: Կը յիշէ յոյսով, ներշնչումով եւ վաղուան տեսլականով:

Եւ այդ տեսլականին մէջէն նաեւ կը պահանջէ գայն: Կը պահանջէ հայուն միտքը՝ իր մշակութային ժառանգն ու հողը: Ատալեան կը վերլուծէ. «Երբ հայկական հողը դատարկուեցաւ իր ժողովուրդին անոր մշակութային բոլոր լծակները՝ դպրոց, վանք, արուեստի կոթող եւ պատմական վայրեր՝ կործանեցան օսմանեան կառավարութեան կողմէ: Հայը կրցաւ պահել միայն այն, որ կու գար իր հաւատարմ կան յուշերէն: Եւ յուշերուն մէջ կար իր լեզուն, բանաստեղծութիւնը երգը եւ դրբերգական ճակատագիրը՝ իբրեւ հայուն եւ իրեն մնացած մշակոյթ»:

Եւ հայը այս արժանապատուութեան հասկացողութիւնն է, որ այսօր կը պահանջէ: Եւ որ իրեն փոխանցուեցաւ իր յուշերուն ընդմէջէն եւ որ հայը կը պահէ գանձը՝ յուշերը, մինչեւ այսօր եւ առանց հողի կոտանիս:

Այս տրամաբանութեամբ Հայ Դատը, իմա՝ պահանջատիրութիւնը, կարելի չէ դիտել միայն իր քաղաքական ուսպնեակէն: Պագուեան կը հաստատէ, որ «Հայոց Յեղասպանութիւնը եւ անոր ժխտումը թրջական կառավարութեան կողմէ, կը կերտէ հայուն հաւատարմ կան ինքնութիւնը: Ազգային, համազգային, կրօնական, գաղափարախօսական, քաղաքական, ընկերա-տնտեսական եւ սերնդական տարբերութիւններով հանդերձ, Յեղասպանութեան այս ինքնութիւնը կը դառնայ հասարակ յայտարարը՝ միացնելով բոլորը»: Մինչ Յովհաննիսեան Յեղասպանութիւնը կը նկատէ «հայուն ինքնութեան հաւատարմութեան պահպանումը»: Եւ այս իմաստով, եթէ հայուն

ինքնութիւնը քաղաքական է, բայց նաեւ նոյնքան ազգային, մշակութային, կրօնական եւ ընկերային: Վերջապէս, իր կեանքը ապրելու արժանապատուութիւնն է, որուն համար հայը կը կենայ իբրեւ պահանջատէր:

Իսկ կայ նոյն կացութեան միւս տարբերակը, եւ այդ ալ՝ թրջական ժխտողական կեցուածքն է: Եւ անոր վարած «մաշեցումի» ռազմավարութիւնը: Էլի Ուայզըլ հայոց Յեղասպանութիւնը ժխտելը պարզել իբրեւ «կրկնակի սպանութիւն»: Առաջինը՝ Ֆիզիքականը ուր երկրորդը՝ յիշատակը: Ռիչըրտ Ֆայը՝ թրջական ժխտողական կեցուածքը հայոց Յեղասպանութեան նկատմամբ, կը կոչէ բարատեղ եւ պատմութեան առանցքին մէջ եզակի իրավիճակ մը, ուր պետական եւ կանխամտածուած ամեն ջանք ի գործ կը դրուի վերացնելու հայոց Յեղասպանութեան ճշմարտացիութիւնը համաշխարհային զգաստութենէն: Այլ խօսքով՝ մաշեցումի եւ մաշեցնելու ռազմավարութիւն մըն է, ուր հարիւր երկար տարիներ, թրջական պետականութիւնը հեռակայ կարգով, օգտագործելով իր բոլոր համաշխարհային լծակները եւ օղակները, կը հետապնդէ: Այս իրավիճակէն միջկելով է, որ Հայ Դատը հայուն համար կը դառնայ ինքնութիւն: Եւ կանցի քաղաքական սահմաններէն անդին: Հայուն այս ինքնութիւնը, որ մինչեւ այսօր ան պահած է յուշերուն ընդմէջէն: Առանց իր արմատին, որուն համար հայը կը պայքարի վերատիրանալու հրատապանով:

Իսկ պատմութեան այս փորձին մէջ կայ այլ վկայութիւն: Եւ եթէ այսօր արագ ակնարկ մը նետենք Հայաստանէն մինչեւ սփիւռքեան մէկ մի անկիւն, ուր հայը յիշեց եւ պահանջեց, եւ ի մասնաւորի ցեղասպանութենէ վերապրած չորրորդ երիտասարդ սերունդի գիտակցութեամբ եւ մասնակցութեամբ, ապա հարց պէտք է տալ, թէ արդե՞րք տեղ կը հասնի՝ մաշեցումի այս ռազմավարութիւնը:

Եւ առկայ է այսօրուան իրավիճակը: Եւ այդ՝ թրջական մաշեցումի քաղաքականութիւնը (իմա՝ Փերիկլէքը) ընդդէմ հայկական արժանապատուութեան պահանջատիրութեան (իմա՝ Չուխցերիի): Եւ այս պայքար է: Ռջ թէ գեւեղի ու գեւեղով՝ այլ իրաւունքի եւ իրաւունքով: Եւ հայուն համար՝ վերատիրանալու իր արժանապատուութեան: Եւ այս պայքարին ու հակամարտող կողմերուն եւ կեցուածքներուն մէջ կան եւ պիտի ըլլան առանցքներու զարգացումներու վերիվայրումներ: Թեր ու ղէմ այս պայքարին մէջ կան ու պիտի ըլլան նուաճումներ ու տեղափոխւեր:

Փերիկլէք ընդդէմ Չուխցերիոյ գործող մարդու իրաւունքներու եւ բողոքական դատարանին եւ անոր որոշումներուն հովովոյթը պէտք է դիտել նաեւ այս պրիսմակէն: Եթէ կան այդ որոշումին մէջ յօդուած-

ներ, որոնք յաջողութիւն էին հայուն, եւ տակաւին ոչ այդքան նպաստաւոր կարգ մը այլ տարբերակներ, բայց այս բոլորը պետք է դիտել այս պայքարին համընդհանուր իրականութեան մէջէն: Եւ պետք է պատրաստ ու զգաստ ըլլալ այդ բոլոր տարբերութիւններուն դիմաց Ախորժելի թէ ոչ:

Թուրքը իր պետականութեամբ պիտի շարունակէ իր մաշեցումը՝ ռազմավարութիւնը՝ մաշեցնելով հայուն յուշերը: Ու անոր հետ հայուն իրաւունքները: Ապրած ու իրաւունքով կերտած յուշերը: Եւ հայը միւս կողմէ պիտի շարունակէ իր արժանապատուութեան պահանջատիրութիւնը:

Փերիկլէսը ընդդէմ Չուիցերիա գործը մէկ օղակն է թրքական մաշեցումի ռազմավարութեան՝ ընդդէմ հայկական արժանապատուութեան պահանջատիրութեան: Բայց հայուն համար կայ մէկ յստակ իրականութիւն: Հայը վճռած է շարունակել իր պահանջատիրութիւնը: Կեանքին, միտքին եւ հողին:

Եթէ այսօր կը յիշենք նահատակները, որովհետեւ անոնք համոզուեցան, թէ հայուն արժանապատիւ կեանքով է, որ հայը պիտի շարունակէ ապրիլ: Իսկ վերապրողները այդ ցաւը իրենց մէջ սեղմեցին իբրեւ ապրող արժանապատուութիւն գալիք սերունդին: Եւ մնայ գալիք սերունդը եւ տակաւին եկողները, այս արժանապատիւ կեանքը վերածած ենք պահանջատիրութեան:

Այս արժանապատիւ կեանքն է, որ պիտի ու պետք է շարունակ սովոր մաշեցումի բոլոր ռազմավարութիւններուն դէմ:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԼԵԶՈՒԲԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՊԱՏԳԱՄԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԻՆ ՄԷՋ

*«Երբ ինք անոնց հնգ սնդան նստաւ, հաց առաւ, օրհնեց ու կրքելով դուստ անոնց: Այն ատեն անոնց աչքերը բացուեցան ու զինք ճանչցան»:*

*(Ղուկաս 24:30-31)*

Մշակոյթը առարկայական եւ գիտական բնագավառներու ընդմէջէն վերլուծելի իրականութիւն մը չէ: Ու տակաւին, մշակութային փոփոխումները եւ սերտողութիւնները չունին մէկ մօտեցում եւ այն բոլոր նկիւթներուն եւ հարցերուն նկատմամբ, որոնք կ'առնչուին մշակութիւն հետ: Մշակոյթը ընկերային գիտութիւն մըն է, որուն հիմքը հասարականութիւնն է եւ անոր ապրող իրականութիւնը: Եւ այս ապրող իրականութիւնն է, որ մարդոց կեանքերը կը տնօրինէ մեկնելով այն միջավայրէն, ուր անոնք կ'ապրին եւ կը գործեն: Եւ այս վերջինը կը դառնայ իւրայատուկ, նոյնիքն այդ հասարականութեանը:

Ասորդիկ եւ հաւաքականութիւններ, իրենց ապրած փորձառութիւններուն ընդմէջէն կրնան ունենալ տարբեր ընթացքներ իրենց կեանքերուն մէջ, ուր իւրաքանչիւրը կը դառնայ իւրայատուկ նոյնիքն այդ ապրած եւ ապրող միջավայրին մէջ, եւ ուր ամէն մէկը կը գտնուի իր իրաւունքներուն եւ կը տարբերի այլ հաւաքականութիւններու շրջէն: Եւ աշխարհի հաւաքականութիւններու մէջ այս իւրաքանչիւրին իւրայատուկ կեցուածքն է, որ կ'օժանդակէ նոյնիքն հաւաքականութիւններուն կերտած հասկացողութիւններուն, բայց նաեւ ստեղծելուն, որ հիմնադրուած է նաեւ անոնց պատմական ժառանգին եւ փորձառութեանը վրայ, եւ որու միջոցաւ հաւաքականութիւններ կ'արտայայտեն իրենց կեցուածքը եւ համոզմունքները հասկացարկային համակարգի մէջ տիրող երեւոյթներու եւ իրավիճակներու նկատմամբ եւ անոնց մէջէն:

Ու տակաւին: Մշակոյթը վեր կ'առնէ կեանքի տարբեր երեւոյթները, ուր իւրաքանչիւր հաւաքականութիւն կը նայի այս երեւոյթներուն իրենց իր համոզմունքներէն, ինչ որ կը ստեղծէ իւրաքանչիւրին



համար իւրայատուկ մշակութային կենցաղ է արժեք: Եւ այս արժեքներն են, որ նոյն հաւաքակազմութեան կու տան իր կեանքի տարբեր հոլովոյթներուն մէջ մշակելու կարծիքներ, կեցուածքներ, լեզու, քաղաքական գափանիչ եւ հաւաքական կառոյց, ուր այս բոլորը կ'առ տայայտուիին համապարփակ մշակոյթի հասկացողութեան ընդունելն, ըլլալ այդ գրականութիւն, ճարտարապետութիւն, հաւատք եւ այլ միջոցառումներ: Եւ այս պարունակին մէջէն է, որ պետք է տեսնել, թէ ինչպէս իւրաքանչիւր հաւաքակազմութեան մէջ ապրող մարդ կը դառնայ մշակութային եակ՝ լիցքաւորուած մշակութային արժեքներով, եւ որ կ'օգնէ իւրաքանչիւրին՝ կերտելու կեցուածք աշխարհի տարբեր իրադարձութիւններուն նկատմամբ եւ ստեղծելու հասկացողութիւն կեանքի տարբեր բնագավայրերու համար:

Եւ այս տուեալներէն մեկնելով, որեւէ պատգամի մը հասկացողութիւն-մեկնաբանութիւնը կը կայանայ ոչ միայն պատմական տուեալներու վրայ, այլ նաեւ ներկայ ժամանակներու նոյն հաւաքակազմութեան մշակութային գործօններուն: Եւ հոս յառաջ կը բերուի պատգամին (որ կու գայ հատուածի միջոցաւ) ընթերցելի լեզուն, որու միջոցաւ անհատին հասկնալու եւ մեկնաբանելու կարողականութիւնը Ռոզվիտեւէ լեզուի միջոցաւ անհատը պիտի հասկնայ աշխարհի Լեզուն կը հանդիսանայ այն գլխաւոր միջոցը, ուր միտքը (իր տարբեր ենթահողերով) պիտի արտայայտուի: Լեզուն կը կազմէ գլխաւոր հիմքը ընթերցելի եւ կամ ընթերցուած հատուածին:

Բայց կայ նաեւ աւելին:

Լեզուն կու տայ կարելիութիւնը՝ մէկ կողմէ ստեղծելու ընթերցելի հատուածը, բայց նաեւ նոյն հատուածը տարանջատելու եւ իմաստաւորելու: Բաւերը ոչ թէ միայն իմաստ եւ նշանակութիւն կ'ունենան, նաեւ կարելիութիւնը այդ իմաստը ընկալելու եւ կիրարկելու կեանքին մէջ: Եւ իւրաքանչիւր իմաստ տարբեր ձեւով կը գործադրուի նայած միջավայրին եւ անոր մշակոյթին:

Եւ այս մշակութային եւ ընկերալեզուաբանական գործօնները նոյնքան կիրարկելի են քրիստոնէական եւ աստուածաբանական հայեցակէտէ: Աստուածաբանութիւնը կարելի չէ ներարել առանց միջավայրի ու անոր բովանդակութեանը: Աստուածաբանութիւնը կը հասկնայ միջավայրը եւ անոր բովանդակութիւնը եւ վեր կ'առնէ այն բոլոր մարտահրաւերները գորս կը չարչրկեն նոյնինքն այդ հաւաքակազմութեանը եւ իր ապրած վիճակին մէջ: Եւ գործածուած լեզուն ունի նաեւ իր կարեւոր դերը:

Քրիստոսի պատգամը նոյնն է բոլոր լեզուներու մէջ, բայց ինչպէս է նաեւ որ տարբեր լեզուներ, տարբեր ձեւով կ'ընկալեն գայն եւ հոս, է որ կարեւոր կը դառնայ մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը:

Ռոզվիտեւէ մայրենի լեզուն լաւագոյն միջոցն է անտարանկութեան: Քրիստոնէական աստուածաբանութիւնը հիմնուած է մարդուն փոխառող իրականութեան վրայ: Եւ այս փոփոխութիւնը կու գայ Քրիստոսով: Եւ Աստուածաշունչը կը խօսի նոյնինքն այս փոփոխութեան՝ Քրիստոսով նոր կեանքի իրականութեանը վրայ: Եւ լաւագոյն միջոցառումներէն մէկը այս փոփոխութեան պատգամը փոխանցելու կու գայ լեզուի միջոցաւ՝ իւրաքանչիւր հաւաքակազմութեան մայրենիով: Մովսէսի եւ Կայ (2009) կը կոչեն այս «Վերաշինելու Աստուածաբանութիւնը»: Անոնք կ'ըսեն. «Քրիստոնէական աստուածաբանութիւնը հիմնուած է մարդը փոխելու եւ անոր կեանքին փոփոխութեանը գործընթացին մէջ: Բայց պետք չէ նոյն մարդը եւ հաւաքակազմութիւնը արմատախիլ ընել իր ընտրած մշակութային, լեզուական եւ կրօնական ժառանգէ: Ընդհակարակը, պետք է զորացնել գայն: Մարդիկ եւ հաւաքակազմութիւններ պիտեք է ապրին իրենց իւրայատուկ կենցաղը, այնպէս ինչպէս իրենց կը հասկնան ու կ'ապրին»:

Եւ քրիստոնէական նոր կեանքը՝ մարդը վերաշինելու գործընթացին եւ անոր պատգամը, կու գայ մեզի Աստուածաշունչին կողմէ:

Եթէ Աստուածաշունչի պատգամը պիտի կարդալ, բայց նաեւ հասկնալ: Ու այս հասկացածը պիտի ընկալել եւ ապա կիրարկել գայն ապրող կեանքերու մէջ: Եթէ կարդալը ու հասկնալը կախեալ է լեզուի ու անոր խորքային (ներառեալ ընկերային գործածութեան) բացատրութիւնէն բայց նոյնքան նաեւ մշակութային (նաեւ պատմա-քաղաքական՝ անցեալի ու ներկայի) տուեալները իրենց դրոշմը ունին հասկցած հատուածը ընկալելու եւ կիրարկելու մէջ:

Եւ վերջապէս պետք չէ մտահան ընել, թէ քրիստոնէական աստուածաբանութիւնը, ուր մարդը կը վերաշինուի նոր պիտակով՝ ընթացք կու տայ ուրիշը հասկնալու եւ ընդունելու իրականութեանը: Եւ ուրիշը ունի իր լեզուական ու տակաւին պատմա-քաղաքական ու մշակութային իւրայատկութիւնները: Եւ իւրաքանչիւր ուրիշը պիտի հասկնայ Աստուածաշունչի պատգամը մեկնելով իր վիճակէ: Եւ իր վիճակին մէջ իւրաքանչիւրը Քրիստոսով նոր կեանքը պիտի շինէ եւ վերաշինէ:

Եւ այս Քրիստոսով վերաշինուած կեանքի միջոցաւ, ուր անհատը կու գայ ճանչնալու Չինք, կը սկսի նաեւ նոյն մարդուն երկրային կեանքը ճանչնալու գործընթացը: Եւ ճանչնալու այս գործընթացին մէջ կայ ուրիշ(ներ)ը: Իրենց լեզուովը եւ մշակութիւնը ու տակաւին իրենց ապրած վիճակովը: Եւ որ արժէ ընդունիլ եւ յարգել գայն:

Եւ ընդունիլը եւ յարգելը նոր կեանքին շնորհներն են բոլորիս համար:

## ՈՒՆԵՑԱԾԻ ԱՄՈՒՐ ԲՈՆԵ

Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովանաւորած Ջանից երիտաւարդաց Ընկերակցութիւնը եղած է բազմաթիւ երիտասարդներու հոգեւոր եւ ազգային ինքնութիւններու կազմաւորման կտուան:

Շաբաթական դրութեամբ կազմակերպուող յայտագիրներուն առկայ՝ ամիթ կ'ունենայինց ամբան շրջանին մասնակցելու համազումարներու, որոնք տակաւին կը շարունակուին Պէյրութի եւ Քիւսասպի ԶԶԱԿ կեդրոններուն մէջ: Կար ժամանակ, երբ համազումարները կ'ըլային միացեալ. Սուրիայէն, Լիբանանէն եւ տարածաշրջանային այլ երկիրներէ երիտասարդներ ջով-ջովի գալով՝ մէկ շաբաթուան ընթացքին կը լիցքաւորուէինց հոգեւոր, ազգային ու ընկերային դաստանդութիւններով: Այդ երիտասարդական «աղմուկին» ու տակաւին «անհանդարտ» տրամադրութիւններուն մէջ իրարու կը ծանօթանայինց աւելի եւս: Հայերէնից տարբեր երկիրներէ եկած այդ համազումարները կը կայսատիւն, որ արժէքներ սերմանուլու մեր հոգիներուն եւ միտքներուն մէջ:

Տարի մըն ալ իբրեւ համազումարի քնաբան ընտրուած էր «Ունեցածդ ամուր բռնէ»: Պիտի փորձէից սորվիլ, բայց նաեւ տեսնել, թէ մարդկային կեանքը ֆիզիքականէն եւ շօշափելիէն շատ աւելի անդին կ'անցնի, որովհետեւ կան հոգեւոր, մտաւոր եւ ազգային արժէքներ, որոնք մարդուն կու տան ապրելու ինքնութիւն, եւ որոնք պիտի է իւրացուին եւ կիրարկուին մեր կեանքներուն մէջ: Բայց նաեւ անուրձեշտ էր այդ ինքնութիւնները իբրեւ մեր ունեցածները, ամուր բռնէլ, որպէս յենարան, որ իւրաքանչիւրիս պիտի տար ապրելու ուղիութիւն եւ կեանքի ոճ:

Երիտասարդական տարիներուս այս բոլորը հունտեր էին, որոնք կը սերմանուէին մեր մէջ, բայց ոչ անպայմանօրէն այդ ժամանակ անդրադառնալու անոնց արժէքին եւ ծիլեր արծակելու տրամադրութեամբ:

Կեանքի փորձառութիւնը, ապրուած փոխարաբերութիւնները եւ անոնց բովանդակութիւնները տարիներու ընթացքին մէկիկ-մէկիկ պիտի բացայայտէին այդ բոլոր հունտերը, որպէս իրական եւ անբող վկայութիւն: Վկայութիւն մը, որ պիտի դառնար մեր անհատական, բայց նաեւ հաւաքական կեանքերու նկարագիրը՝ իմա մեր ունեցածը, որ մեզի համար ինքնութիւն էր եւ արժէք:

Իմ փորձառութիւններուս մէջ կայ ասպարեզային կեանքիս ճամբորդական օրերու ժամանակահատուածը իր տարբեր դրուակներով:

Յունուար 2015: Զուէյթէն կ'անցնիմ Տուպայ: Նկատի ունենալով, որ Զուէյթ կեցութեան կարգավիճակ ունիմ, մտահոգուած չեմ Տուպայի մուտքի արտօնագիրով: Կրնամ ստանալ տեղւոյն վրայ՝ օդակայանէն, բայց այս անգամ կացութիւնը քիչ մը տարբեր էր: Պաշտօնեան գանձեց արտօնագիրին արժէքը եւ անցագիրը անելով, տարաւ զայն օդակայանի ապահովական գրասենեակ՝ յաւելեալ ստուգումի համար: Քիչ անց ցոյց տալով ջովընտի սենեակը՝ խնորքէ ինձմ սպասել այնտեղ:

Միտքարական էր այն, որ միեւնոյն սենեակին մէջ կային նաեւ մեծ թիւով այլ անձեր, իսկ արաբերէնով եղած խօսակցութիւններէն դժուար չէրաւ կրահել, թէ բոլորս լիբանանցիներ եւ սուրիացիներ էինց:

Մտած էի սենեակին մէջ, բայց մտքով ու հոգիով հոն չէի, գացած էի բաւական հեռուները՝ մտածելով, թէ ասպարեզիս բերումով աւելի քան 25 տարիներու ընթացքին կատարած բազմաթիւ ճամբորդութիւններուս ընթացքին ասիկա բանիւրորդ անգամ էր, որ անցագիրս կ'առնուէր ինձմ յաւելեալ ստուգումի համար: Պէյրութ ծնած եմ եւ սիրած եմ զայն ու տակաւին մինչեւ այսօր եւ այդ ալ շա՛տ: Լիբանան ինձի տուաւ բազմաթիւ արժէքներ, որոնք իմս են, նաեւ հաւաքականօրէն՝ մեր մայրենիներու այս երկրին: Բայց ինչո՞ւ մեր երկիրը պիտի դառնար տարածաշրջանի ընկերա-քաղաքական քաջընթացներու խաղաքարտ: Անիկա այնքան քաջընթացաւ ու տակաւին, որ թուլցաւ եւ կորսուեցաւ իր/մեր ունեցածը այն աստիճան, որ իր (լիբանանի) ինքնութիւնը ու մեր (իմ) անցագիրները պիտի ուղարկուէին ապահովական գրասենեակ՝ մեր (չ)ունեցածը ստուգելու համար:

Մտային ուղեւորութենէս իրականութեան վերադառնալով՝ սկսած էի մտիկ ընել սենեակին մէջի խօսակցութիւնները: Երեկ բոլորին համար նոր փորձառութիւն էր կատարուածը: «Բայց չէ՞ որ բոլորս ալ արաբներ ենք, ինչո՞ւ այս միջոցառումները»: Չափահաս մըն էր խօսողը: «Շատ վարկաբեկիչ է», ուրիշ երիտասարդ մըն է արտայայտուողը:

Բայց ինձի համար այս բոլորը հին փորձառութիւններ էին, զորս շատ անգամ ապրած էի: Բայց նախապէս աւելի դիւրին կ'ընկալէի այս բոլորը, հիմա արդէն կը դժուարանայ: Հաւանաբար տարի՞քն է ու անոր հետ ձեռք բերուած փորձառութիւնները: Մէջս կայ ոտնակրիտուած արժանապատուութիւն, բայց նաեւ զսպուած բարկութիւն, որ ծնունդ կու տայ հարցադրումի մը. «Որպէս լիբանանցի, ինչո՞ւ մեր արժէքը, մեր ունեցածը ամուր չկրցաց բռնել»: Եւ երեկ մինչեւ այսօր շարունակուող իրականութիւն է ասիկա:

## ՊԱՊԵՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ. «ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ»

Մեկ ժամ ետք ապահովական գրասենեակի պաշտօնեան՝ ձեռքին մեծաթիւ անցագիրներ, դուրս եկաւ եւ սկսաւ անունները կանչել: Անցագիրին տեսակէն կրցայ տեսնել, թէ իմինիս կը նայէր եւ հայկական անուն ըլլալով, կը փորձէր անունս գէթ հնչել: Կանխեցի զինք եւ վերցնելով անցագիրս մօտեցայ միւս պաշտօնեային, որպէսզի կնքէր մուտքի արտօնագիրը: Պաշտօնեան նայեցաւ անցագիրի տարբեր էջերուն, թէ քանի՛ անգամ Տուպայ մտած եմ եւ զարմանքով հարց տուաւ. «Ինչո՞ւ անցագիրդ ներս տարին, երբ այսքան յաճախ եկած ես մեր երկիրը»:

Բաւականացայ միայն երիտասարդ տղուն աչքերուն նայելով տրամադրութիւն չունեի խօսակցութեան սկսելու: «Չեմ գիտեր», եղաւ արագ ու կարճ պատասխանս: Բայց իրականութեան մէջ զի տէի: Մեր ունեցածն է, որ ամուր չենք կրցած բռնել:

Յունուար 29, Երեւան, Ծիծեռնակաբերդ: Նախագահ Սերժ Սարգիսեանի կողմէ կարողացուած Ցեղասպանութեան հռչակագիրը իր պետական եւ քաղաքական ռազմավարութեամբ ու համահայկական միացեալ դիրքորոշումով եկաւ ոգեւորելու զիս Յունուարին առջեւ ունեցած Տուպայի փորձառութենէս ետք: Այս հռչակագիրի մէջ եւ անոր ընդմէջէն վերապրեցայ իմ ունեցածս, բայց մանաւանդ ապրեցայ դարձեալ «ունեցածս ամուր բռնելու» գիտակցութիւնը: Մեկ կողմէ հայրենի պետականութիւնը եւ անոր հետ սփիւռքեան ու համահայկական մեկ ու միացեալ դիրքորոշումը, ուր հայը ներկայացաւ որպէս ապրող ինքնութիւն եւ նկարագիր, միւս կողմէ այն իրականութիւնը, թէ հայը ինչպէ՛ս բացայայտ դարձուց իր արժեքը համահայկական ամբողջական գիտակցութեամբ՝ հաստատելով, որ պիտի յիշենք, բայց նաեւ պահանջենք: Ա՛յս է հայուն արժեքը, որ պետք է ամուր բռնենք:

Յունուար 2015. Տուպայէն մինչեւ Երեւան: Երկու տարբեր փորձառութիւններ, բայց մեկ հասարակ յայտարար եւ մարտահրաւիր «Ունեցածդ ամուր բռնել»:

Ծիծեռնակաբերդէն հնչած հռչակագիրը փաստեց, որ հայը «ունեցածը ամուր բռնած է» եւ պիտի շարունակէ այդպէս, որովհետեւ մեր ունեցածը ամուր բռնելով պիտի հպարտանանք եւ զօրանանք: Իսկ հայուն հպարտութիւնը եւ զօրութիւնը ազգային ուժ է, որ մեր ունեցածն է, եւ մեր ունեցածը ամուր բռնելով է, որ պիտի շարունակենք ապրիլ:

Ապրիլը՝ յիշելով, պահանջելով, բայց նաեւ ապրեցնելով:



Մեր ընտանիքի պատմութիւնը սիրած եմ, բայց նաեւ ժամանակ տրամադրած՝ փորձելով կառուցել այսպէս քսած ընտանեկան ծառը: Եւ այս ոչ միայն անուններով, բայց նաեւ նկարներով: Եւ այս նկարները ինծի համար դարձած են հարստութիւն, ապա նաեւ աւանդ եւ փառասփ՝ ապրելու իմ (ու ընտանիքիս) կեանքը նոյն տեսլականով:

Բայց այս նկարները կը խօսին: Անոնք պատմութիւն են, բայց նաեւ աւելին: Նկարին մէջ իւրաքանչիւր հարազատ ապրած է իր կեանքը Պատմական Հայաստանի մէջ, կերտած է տուն եւ ընտանեկան թոյն, բերած է իր նպաստը հաւաքական ու ազգային կեանքին, բայց նաեւ խմած նահատակութեան դառն բաժակէն՝ սպաննուելով եւ կամ անցնելով Ցեղասպանութեան արհաւիրքէն՝ հայ ժողովուրդի ամբողջութեան հետ: Իմ ընտանիքիս այդ արհաւիրքին մէջ պիտի ըլլար աւելի քան քսանհինգ նահատակ՝ սկսելով 1909 թուականի Ատանայի ջարդերէն ու ողբերգութենէն, հասնելով մինչեւ 1915 Յե-

դասպանությունը: Այս ընտանեկան ծառի մեջ են նաեւ իմ նահատակ հարազատներուս նկարները: Ամեն անգամ, որ կը բանամ ու կը նստիմ այդ նկարներուն՝ իրենց աչքերէն այս յատուկ պատգամ կը կարդամ. «Եթէ պիտի յիշես մեզ բայց նաեւ պիտի պահանջես»:

Կ'արժէ մէկ-մէկ բանալ մեր ընտանիքի պատմութեան էջերը: Զօրեական մեծ հայրս եղած է Այնթապի ծնունդ, իսկ մեծ մայրս հասան Պելլիի:

Մեծ հօրս հայրը՝ Յովհաննես աղա ճեպեճեան, եղած է Այնթապի երէնելիներէն: Տասնինը տարեկանին ընդունած է Զայ Անետարանական եկեղեցւոյ դասանը: Ամուսնացած է Մեննուշ (Մանուշակ) Գարամանուկեանի հետ եւ կազմած բազմանդամ ընտանիք՝ իր զուգակներուն ջամբելով ուսում եւ զարգացում: Ան եղած է պիստակալ յաջող վաճառական. այս ընթացքին կրցած է ձեռք բերել վայրի պիստակի թուփերու տարածուն անտառներ եւ զանոնք պատրաստելով ստանալ պիստակի ծառեր: Երիտասարդ տարիքին ձեռնարկած է հաստութաբեր աշխատանքներու, սեփականատերը եղած է կանուածներու: Այդ կալուածներուն մէջ էր Այնթապի իր քարաշէն քանկարանը՝ մեծ բակով եւ աւազանով: Եւ այդ բնակարանը դարձած էր մեր ընտանիքին, ինչպէս ուզած էին կոչել Պապենական Տունը:

Բայց այդ տունը միայն քար չէր: Ան՝ իր մթնոլորտով, ստեղծած էր հայկական ու քրիստոնեական հոգի, որով կարելի եղած էր ջանքով դաստիարակութիւն եւ մշակոյթ: Տունը դարձած էր հիմք, որուն վրայ կերտուած էր գերդաստանիս հայկական նկարագիրը եւ տարիներու ընթացքին փոխանցուած սերունդնէ սերունդ: Մինչեւ այսօր Այնթապի մեր Պապենական Տունը կանգուն է եւ վերածուած է երէխաներու համար յատուկ խաղալիքներու թանգարանի:

Զօրեղբայրս եւ հայրս ծնած են Այնթապ՝ Պապենական Տան մէջ 1915-ի ամբան, հայերը Այնթապէն տեղահան ընելու խօսակցութիւնները սկսած էին տարածուիլ, թեւ թուրքը կը փորձէր հաւաստիացնել, թէ «պարզ տեղափոխութիւն մըն էր ըլլալիքը եւ թէ շուտով պիտի վերադառնան»: Արդէն իսկ լուտերը կը հասնէին տարբեր քաղաքներու մէջ հայերու կրած տառապանքներուն մասին, ինչ որ առանկա մեծ մտավախութիւն կը ստեղծէր Այնթապի հայութեան մօտ. ան թուրքին նկատմամբ իր հաւատքը ամբողջովին սկսած էր կորսուել: Զայեր յստակ կը տեսնէին, թէ իրենց տեղափոխութենէն ետք իրենց ունեցուածքը թալանի պիտի ենթարկուէր: Այլ ինչ խօսք իրենց կենացներուն մասին: Եւ սկսաւ խուճապը: Զայեր կը փորձէին ծախել այն ինչ, որ կը խորհէին թէ կրնային: Գեղեցիկ պնակեղէններ, գորգեր, կարասի, ժամացոյցներ ու տակալիս: Զագար արժեքին՝ թուրքը տասը կ'առաջարկէր եւ այդ ալ քմծիծաղով: Իսկ հայուն համար կա-



Մէկը՝ հազարաւոր յարմարաւտ քնակարաններէ, զորս հայեր բռնի ետին թողած Թուրքիա, ստիպուած դուրս եկան որպէս հարստահարուած անտունիներ: (Նկար՝ Արմէն Արոյեան, 1997) Եղբքին ճակատ բակին նայող-վերե ձախին՝ հիւրասենեակ 5 պատուհաններով: Այլին նստասենեակ, ստորեւ՝ խոհանոց եւ մառաններ-բակն ուներ աւազան:

ինորը քիչ մը դրամն էր, անորոշ այդ ճամբորդութիւնը սկսելէն ստաց:

Եւ եկաւ ժամը Այնթապի հայութեան բռնագաղթին ու տեղահանութեանը:

Այլատի ունենալով, որ մեծ հայրս սպայ էր Օսմանեան բանակին մէջ, իր ընտանիքին տեղահանումը անելի մեղմացուած էր եւ իրահանուած էր որ ան ընտանեօք Զայլէպ փոխարդուի: Զօրեղբայրս՝ տորթ. Ռուպեր ճեպեճեան այդ մեղմացուած տեղահանումը այսպէս կը նկարագրէ իր յուշերուն մէջ. «Տխուր առաւօտ մը: Այսպէս, գրաստներու կարաւանով ճամբար ելանք: Փոքր եղբայրս եւ ես քարիւղի սնտուկներու մէջ ծուարած, աւանակի մը կողմերը բեռնուած էինք»: Բայց կար նաեւ անորոշութիւնը եւ վախը: «Զեմ գիտեր, թէ ինչպէ՛ս հասանք Աղա-Գոյուն երկաթուղային կայարան՝ Զայլէպի ճամբան, Ճարապուսին յաջորդող գիւղը: Գիշեր էր սակայն: Այստեղ կարաւանը ցրուեցաւ չոր հողատարածքի վրայ: Օթեան չկար, կը պատրաստուէինք բացօթեայ գիշերել: Տխուր ամբոխ մը՝ անպաշտպան. երկիւղած դէմքեր, որոնք երէկ տակալին հանգիստ քնակիները

էին պապենական իրենց տուներուն մէջ»:

Անպայմանօրէն կը սկսիս հարց տալ: Ինչո՞ւ այս անմեղ ժողովուրդը արմատախիլ պետք էր ըլլար իր պապենական տուներէն: Այն տուններն, զորս շինած էր իր վատականած արդար աշխատանքով Տեղահանումը կը շարունակուի: Տուգումը եւ ողբերգութիւնը չեն ուշանար: Եւ հորեղբայրս է դարձեալ իր յուշերուն մէջէն: «Անգ ծնողացս հետ Յալէպ հասանք շոգեկառքով: Չեմ գիտեր ի՞նչ պատահեցաւ կարաւանի մէջի մնացեալ ընտանիքներուն, որոնք հետ հասած էինք Աղա-Գոյուն: Անելի ուշ իմացանք, թէ հորեղբոր եւ հորաքրոջ ընտանիքները ջշուած էին հարաւ, Յամայէն անդին: Իսկ Նոյեմի հորաքրոջս ընտանիքը, անմահ իր հինգ զաւակներով, հեռաւոր Խաւսէ, Տէր Չօրի ճամբուն վրայ, աւաղ: Այդ ընտանիքէն ոչ մէկը պիտի տեսնէիք կրկին»:

Յալէպի մէջ սկսաւ գերդաստանիս նոր կեանքը, այս անգամ սփիւռքեան իրականութեանը մէջ: Այս իրականութեանը մէջ անհրաժեշտ էր ստեղծել նոր տունը, որպէս շարունակականութիւն Պապենականին, որ արմատախիլ եղած էր:

Տարիներու ընթացքին սկսայ ըմբռնել ու հասկնալ, թէ ինչո՞ւ համար հորեղբայրս այնքան կը շեշտէր Պապենական Տուն հասկացողութիւնը: Յալէպի իր բնակարանը անուանած էր Պապենական, ինչ որ վերանուանումն էր Այնթապի ընտանեկան յարկին: Այդ Պապենական Տան ոգին եւ ջերմութիւնը կը փորձէր ստեղծել Յալէպի մէջ՝ մեր ընտանեկան իւրաքանչիւր հանդիպման, յետ Յեղասպանութեան վերապրող երրորդ եւ չորրորդ սերունդներուն մօտ: Որպէս Յեղասպանութեան երրորդ եւ տակաւին չորրորդ վերապրող հայ սերունդներ տարիներու ընթացքին պիտի ընկալէինք Պապենականի հաղորդականութիւնը եւ կամաց-կամաց պիտի իւրացնէինք զայն որպէս ազգային ու ընտանեկան դաստիարակութեան: Դաստիարակութիւն մը, որ սկսած էր Այնթապէն եւ հասած Յալէպ: Ու տակաւին Պերթոս եւրոպա եւ ամերիկաներ: Եթէ թուրքը կրցաւ տեղահան ընել հայր բայց արդիօք կրցաւ վերացնել Նոյնիքն այս դաստիարակութիւնը:

Հարգատեններու նկարներուն մէջ կը կարդամ նաեւ պահանջաւորութեան պատգամ: Մէկիկ-մէկիկ կը նայիմ իւրաքանչիւր նկարի Այնտղէն եւ նաեւ բոլոր անոնք, որոնք նահատակուեցան, բայց նաեւ անոնք, որոնք անցան Յեղասպանութեան եւ տարագրութեան արհաւիրքէն: Կանգ կ'առնեմ Նոյեմի մեծ հորաքրոջս ու անոր ընտանիքին նկարին դիմաց: Նոյեմիէն մեզի մնացած է մէկ երկար նամակ՝ դրկուած անապատի այդ ճամբայէն: Հայատառ թրքերէնով եւ մատիտով գրուած: Ան իր ծնողքին կ'իմացնէ, թէ ամուսինը տարագրութեան ճամբան թիֆուս վարակուելով մահացած է եւ կը խնդրէ նի-

թական օգնութիւն: Նոյեմին կ'ուզէր ապրիլ, բայց: Իր ընտանիքն այլ չկրցաւ օգնութեան փութալ իրեն: Նոյեմին, իր ամուսինը եւ հինգ զաւակները իրենց աչքերը փակեցին տարագրութեան մէջ՝ հեռու Պապենական Տունէն: Անոր կարտով:

Եթէ ընտանիքէս ինծի մնաց նկար մը, բայց այս նկարը անշարժ թուրքի կտոր մը չէ պարզապէս: Ան կը խօսի, եթէ ոչ լեզուով, ապա գէթ իւրաքանչիւրին աչքերուն մէջէն ցոլացող պատգամով: Եւ պատգամը կարօտն է: Կարօտը իւրաքանչիւր հայրորդիին, որ անմեղօրէն նահատակուեցաւ: Բայց նաեւ կարօտը տան՝ Պապենականին: Այն տան, որով հայը շինեց ընտանիք, կերտեց սերունդ, բայց նաեւ պատմութիւն եւ մշակոյթ: Այս պատմութիւնը այսօր կենդանի է եւ աշխուժ: Այս աշխուժ պատմութեան կարօտն է որ մենք պիտի տանիք դեպի ապագայ: Պիտի տանիք զայն՝ մէկ կողմէ յիշելով բայց նաեւ պահանջելով: Պապենական Տունը:

Նոյեմին եւ բոլոր մեր նահատակները մեզ կը փոխանցեն պատգամ մը, թէ անոնք կարօտցած են Պապենական Տունը: Բայց նաեւ ակելին: Անոնք կը յորդորեն մեզ, թէ Պապենական Տան կարօտը պետք է յիշենք, բայց նաեւ պահանջենք: Եւ այս հայուն ազգային դաստիարակութիւնն է:

Կարօտը միշտ վառ պահէ:

Կարօտը, ուր Պապենական Տունը պիտի յիշենք եւ պահանջենք:

# ՊԱՏԳԱՄԻՆ ԸՆԿԱՎՈՒՄԸ ՆԱԵՒ ՄԱՄՈՒՆՈՎ

Անհատը եւ հաւաքականութիւնները կը կերտուին դաստիարակութեամբ: Իսկ դաստիարակութեան միտք բանին պատգամն է, եւ անոր ընկալումը նոյնիքն անհատին եւ հաւաքականութեան կողմէն: Ինչպէ՛ս պատգամը կը կարողացուի, կը հասկցուի, կ'ընկալուի եւ կը կիրարկուի, կը դառնան հիմնական գործոնները այս գործընթացին մէջ:

Եւ այս գործընթացը բարդ է՝ նկատի ունենալով, որ կան շատ մը ազդակներ, որոնք իրենց ազդեցութիւնը ունին պատգամին ընկալումին մէջ: Կայ լեզուական ու բառամթերքի խորքային հասկացողութիւնները, եւ անոր ընկերալեզուաբանական բացատրութիւնները: Բայց կայ նաեւ իւրաքանչիւր ապրող իրականութեանը պատմական ու քաղաքական փորձը եւ փորձառութիւնները, որոնք կարելի չիմք եւ պատգամին ընկալումին համար: Անհատներ եւ ժողովուրդներ կը տարբերին իրարմէ՝ մեկնելով նոյնիքն իրենց ապրած ու ապրող իրավիճակներէն եւ պատմա-քաղաքական իրողականութիւններէն:

Մեր հայկական իրականութեանը մէջ, պատգամը մեր ազգային-քրիստոնեական նկարագիրն է, որ կու գայ մեզի մեր մշակութային համապարփակ դաստիարակութեան միջոցաւ: Եւ դաստիարակութեան ընկալումը սերունդներու մէջէն, միշտ ալ եղած է մէկ մեծ մարտահրաւեր մը, ապահովելու համար ժողովուրդներու եւ անոնց մշակոյթներուն շարունակականութիւնը:

Եւ հայ ժողովուրդին համար, ազգային, մշակութային ու քրիստոնեական դաստիարակութիւնը դարձաւ հիմնակէտ՝ իր վերապրումի իրամայականին համար, եւ ի մասնաւորի Տեղասպանութեան արհաւիրքէն ետք: Եթէ հայը կազմակերպէ սփիւռքը բայց անոր հիմքը նկատեց լեզուի, ազգային ինքնութեան եւ քրիստոնեական հաւատքի պահպանումը: Եւ ասոնք եղան հայուն կեանքը վերաշինելու առաջնահերթութիւնները՝ եկեղեցի, դպրոց, մամուլ ու տակալի Գայուն ապրելու եւ վերապրելու գրաւականները:

Ահա թէ ինչո՞ւ հայը եկեղեցիի ու դպրոցի կողքին միշտ ալ հետաժուտ եղաւ մամուլի յառաջադրացքին: Եւ այդ միևնչեւ այսօր:

Ներկայ օրերու Ամերիկայի միջին սերունդի տեղեկատուութեան մարզի մասնագետ, Ֆիլ Քուք, կը յանդգնի սահմանելու հետեւեալը. «Այսօրուայ մշակոյթը կը կերտուի տեղեկատուութեան ստեղծած ազդեցութեանը եւ արժեքափերուն վրայ»: Եւ մամուլը՝ տպագիր թէ

փոխանցումային, որպէս մէկ կարելի միջոցառում տեղեկատուութեան լայնատարած ու անսահման աշխարհին մէջ: Կու գայ իր կարելիոր դերը ստանձնելու այս մարզին մէջ: Եթէ անցեալին տեղեկատուութեան միջոցառումները սահմանափակ էին, եւ այսօր շատ ակտիւ ու բազմազան, սակայն միշտ ալ անկայ մնացած է տակալին դաստիարակութիւնը եւ զայն իրականացնելու համար պատգամին փոխանցումը եւ անոր ընկալումը: Եւ այսօրուայ իրավիճակը ոչ թէ միայն հանգուցային է, այլ նաեւ բարդ՝ նկատի ունենալով որ մեր կրթական, առեւտրական, կրօնական, ընկերային եւ նոյնիսկ քուսակական կեանքերը կը չափուին եւ կ'ազդուին տեղեկատուութեան աշխարհի միջոցառումներէն:

Եւ հայկական տեղեկատուութեան մէն մի միջոցառումը, ներառեալ մամուլը՝ իր տպագիր ու փոխանցումային երեւոյթներով, այսօր ակտիւ մեծ առաքելութիւն:

Բայց նախ պէտք է շնորհաւորել «Չարթօնք» օրաթերթը իր եօթաւաստն եւ ութ երկար տարիներու նուիրական աշխատանքին եւ ծառայութեանը՝ հայկական պատգամին փոխանցումի եւ ընկալումին միջոցառումները պահելուն եւ ստեղծելուն համար: Մեծ գոհողութիւններով կը երկար ճամբայ կտրած «Չարթօնք» օրաթերթը մնաց միշտ պարտականութեան գիտակցութեանը բարձր պատուանդակին վրայ եւ այս շնորհաւորելի է եւ արելին: Շնորհակալութիւն իւրաքանչիւր խմբագիրի ու աշխատանքային կազմի նուիրելուներուն՝ անցեալէն մինչեւ այսօր, որոնք իրենց կեանքերը նուիրեցին այս կուսումին համար ու անոր մէջ:

Բայց կայ այսօրը եւ տակալին վաղուան օրը: Եւ այսօրն ու «գուշակի» վաղը, գոյ է մշակոյթներու բազմատեսակ արժեքափերով, որոնք մէկը միւսին տեսէ կը չարչրկէ մարդուն եւ հաւաքականութեան միտքերը ու սրտերը՝ ընկալելու համար անոնց ինքնութիւնը: Եթէ մէկ կողմէ կայ վարդաբուխները, բայց նաեւ արժեքափերու չորած թէ այլակերպուած փոժանդակութիւնները, ուր ոչ միշտ յստակ պատասխաններ կը փոխանցեն հաւաքականութիւններու, եւ ուր մշակոյթը կը դառնայ շատ արելի անյստակ քան այն ինչ էր ժամանակին: Եւ ինչպէս կարգ մը մասնագետներ կ'ուզեն ըսել այսօր «մշակոյթը դարձած է շատ արելի կոշտ, անտաշ եւ անյստակ»:

Եթէ այսօրուան աշխարհը համաշխարհայնացումի իրավիճակն է, բայց նաեւ իր դիմաց իր գլուխը կը ցցէ տեղեկայնացումը: Հոն, ուր աշխարհագրական եւ սահմանագծուած երկիրներու մէջ մէտոնդ կու գան ազգային եւ անջատողական ինքնութիւններ, որոնք կը գիտակցին իրենց լեզուին, մշակոյթին, հաւատքին ու տակալին ցեղային ինքնապահպանման եւ ապահովութեան կանոններուն: Զարգացա-

կան ինքնութիւն մըն է, ուր մարդիկ կը փնտռեն երբ համաշխարհային և ազգային աշխարհին մէջ կը սկսին նաեւ կորսնցնել իրենց ունեցածը:

Եւ հոս արժէ մէկ-մէկ տարանջատել այսօրուայ իրականութիւնները՝ թեկուզ հակասական, մեկնելով ներկայ օրերու տուեալներէն, և վաղուան օրուայ հեռանկարներուն մէջէն նայիլ այն բոլոր փնտռութիւններուն, որոնք մէջ է նաեւ հայուն ազգային ու քաղաքական ինքնութիւններուն ամրապնդումը: Եւ անհրաժեշտ է, որ հայուն այս ինքնութեան ընկալումը վերածենք դաստիարակչական գործընթացքի, հոն ուր հայը պիտի վերահաստատուէ, երեւի նաեւ վերագտնէ իր ազգային եւ քաղաքական դիմագիծը:

Եւ «Չարթօնք» օրաթերթը, բայց նաեւ իւրաքանչիւր հայկական տեղեկատուութեան ցանց ու միջոցառում, պէտք է նայի ներկայիս և վաղուան օրուան այս առաքելութեան հեռանկարով: Պիտի մարդիկ, որ «Չարթօնք» օրաթերթը, իր անցեալի հարուստ ժառանգով, վաս պահէ այսօրուայ եւ ապագայի այս տեսլականը շարունակելու իր երթը: Եւ տեսլականներու այս երթը: Հայուն ազգային եւ քաղաքական ինքնութեան շարունակականութիւնն է: Բայց նաեւ անոր ամրապնդումը:

Շնորհաւոր եօթանասուն եւ ութ ամեակ: Եւ բարի երթ դեպի նոր եօթանասուն եւ ութ ամեակներ:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԿՐԿՆԷ

*«Ցեղասպանութեան պատմութիւնը սկսած է ժողովուրդով մը, որ դարձած է անոր առաջին զոհը»:*

Տոնալտ Պլոքսիամ կու գայ Սկովտիայէն: Ան եւրոպական պատմութեան դասախօս է Ետիսպուրկի համալսարանին մէջ: Առաւելաբար մասնագիտացած է ցեղասպանութեան պատմութեան մէջ ու տակաւին անոր իրաւական ու ճանաչման իրողականութեան գծով համաշխարհային համակարգերէ ներս: Իր ուսումնասիրութիւններուն եւ աշխատասիրութիւններուն մէջ նաեւ ներառած է հայկական Ցեղասպանութիւնը:

Տոնալտին հանդիպեցայ Երեւան, Վարիլ 2015-ին: Ան դասախօսներէն մէկն էր «Շնորհման Ցեղասպանութեան Հանցագործութեան» համաշխարհային գիտաժողովին: Եւ թէ իր նկիւնը «Մարդկութեան հանդէպ ոճրագործութիւններու կանխարգիլման միջոցներու զարգացումը միջազգային իրաւունքներու մէջ» էր, բայց եւ այնպէս նոյնքան նաեւ քննական ու պատմագրական տուեալներով վեր կ'առնէր ցեղասպանութեան եւ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւններու կրկնուող երեւոյթները եւ անոնց կապուածութիւնը պատմութեան հիւղովոյթներուն մէջէն:

Տոնալտ կրցաւ վեր առնել հայկական Ցեղասպանութիւնը որպէս «մարդկութեան հանդէպ ոճիրի» եւ աւելին: Ան պատմական տուեալներէ մեկնելով կամրջեց այսօրուայ տեղի ունեցած շատ մը ոճրագործութիւնները եւ ցեղասպանութիւնները տարածաշրջանէն ներս եւ ուր հայկականը նկատեց անոնց ենթահողը: «Ցեղասպանութիւնները իրար հետ կապուած եւ արընչուած են», ըսաւ Տո-



նայտ, «եւ որ միջեւ այսօր կրկնուող եւ շարունակուող իրականութիւններ են: Եւ հայկական Տեղասպանութիւնը, որ քսաներորդ դարու առաջինն էր, եւ որ միջեւ այսօր կը մնայ անպատիժ, սուս սուս եւ կրկնուող եւ շարունակուող այլ ցեղասպանութիւններու»:

Գեորգ Ճալոյեանը Սուրիահայ է: Ան քսանչորս երկար տարիներ ապրած է Դասաքէ, որմէ ետք Դալէլա եւ այժմ Պէյրութ: Եթէ Գեորգ համետտ հայն է, բայց նաեւ ունի պարզ ու յստակ օրագրութիւններ իր ապրած պատանեկան եւ երիտասարդական օրերէն: Եւ այդ օրագրութիւններուն մէջ կայ մէկ յատկանշական տեղեկագրութիւն մը Սուրիոյ Դասաքէ քաղաքի հարաւ-արեւելեան կողմը՝ Իրաքեան սահմանին մօտիկ, նաթահորերու պեղումներու կեդրոն՝ Խաֆսա շրջանը (արաբերէն կը նշանակէ փոս): Գեորգը կը գրէ. «Երբ կը իջնուին տխրահոգակ անունները Արեւմտահայաստանէն դէպի հարաւ Ռաս-ուլ-Ալլեն միւնչեւ անիծեալ Տեր Չօրը, ուշադրութիւնս գրասեմ է որ Մարքաստա, Շետտաւէ, Սուվարի շարքին պէտք է յիշուի նաեւ Խաֆսա շրջանը»: Եւ Գեորգին համար Խաֆսան զբօսաշրջիկութեան վայր չէ այլ նահատակութեան:

«Այս վայրը, խիստ ամայի եւ մեկուսացած, ստորերկրեայ ընդամենը քարայր-փոս մըն է: Ջրայրին բերանը պզտիկ սենեակի մը տարածութեամբ եւ իջուածքը ուղղածիզ, բերանէն դէպի վար, երկու մէթրէն աւելի, ներքեւը լաբիրինթոսի պէս բազում ճիւղաւորումներ կը տարածուին ծուռ ու մուռ ուղղութիւններով: Միակ մուտքի ճամբան, գիտցողին համար, նեղիկ ձոր-արահետ մըն է», կ'ըսէ Գեորգը: «Եթէ անզգուշութեամբ քիչ մը խորրերը ընթանաս՝ մութ, խոնաւ եւ ժայռերու ճեղքուածքներուն մէջէն, կրնաս կորսուիլ եւ չես կրնար դուրս ելլել»:

Բայց Գեորգ փորձած էր իր ընկերներուն հետ մտնել այս լաբիրինթոսին մէջ: «Երկար սանդուխ մը

վրձածելով, մի քանի ընկերներով իջանք այս քարայր-փոսին մէջ, հոգեբնակ լապտերներ եւ վառած մոմեր»: Եւ Գեորգ կրցած էր կտակաւ թէ շատ շուտով պիտի կորսուէին այս քարայրին մէջ: «Յառաջանք երեսուն-երեսունհինգ մէթրի չափ եւ վախցանք... եւ ետ դուրս կանք»: Գեորգին այս արկածախնդրութիւնը եթէ զգայ էր թէ ինչպէս կայ տարուեցաւ այս քարայրին մէջ, բայց նաեւ փորձ մըն էր գտնելու հնօրեայ: «Թերեւս հանդիպելիք մարդկային ոսկորներու եւ հեծերնիս բերիւնք»: Եւ «ոսկորները» ուրիշից չէին եթէ ոչ հայունը՝ Գեորգին ինքնութիւնը:

Գեորգ կը շարունակէ իր օրագրութիւնը եւ գրի առած է ականատեսներու օրին ապրած անապատաբնակ վկաներուն տեղեկութիւնները: «Յազարաւոր հայ տարագրեալներ բռնի քշուած ու բերուած եւ հուարուած են այս վայրին մէջ, նետելով զիրենց եւ լեցնելով ու իրար փոխ թխնելով այս փոս-քարայրին մէջ»: Բայց երեւի չէին բաւեր այդ քար զրկանքները: «Չորցած մացաններ, յարդի շիւղեր, տրցակ-տրցակ այրելով, քարայրի բերանէն նետած են վար»: Եւ ըրած են այս, որպէսզի իրար վրայ թիմուած տարագրեալները «հեռանալին ինչի լաբիրինթոսին խորրերը, ստոյգ մահուան ճիրաններուն մէջ անկարողուելով»: Եւ եթէ «բախտով» ոմանք կրցած էին դուրս գալ այդ լաբիրինթոսէն՝ «վերէն փամփուշտի կապարներ արծակելով պատնեմ են բռնորը»:

Գեորգ Ճալոյեանին համար Խաֆսան դարձած է իր պատանեկութեան օրերէն մնացած իրայատուկ շրջան: Որովհետեւ հոն Խաֆսան այդ փոսին մէջ հազարաւորներ տանջահար մահացան:

Եթէ Գեորգ միւնչեւ այսօր տակաւին կը յիշէ Խաֆսան, բայց նաեւ 1983-ի Ապրիլի 24-ին, երբ Գամիշլիէն, Ռաս-ուլ-Ալլեն, Դասաքէէն քար մը հարկիւր հոգի, հոգեւոր հովիւներու առաջնորդութեամբ, Ար. Աստարագ եւ Դոգեհանգասեան արքայութիւն տեղի ունեցաւ բռնի հայ զոհուածներուն այդ փոս-քարայրին մէջ: «Կեանքիս մէջ անմոռանալի եւ եզակի էր այդ օրը»: Որովհետեւ հոն՝ անյուշ Խաֆսային մէջ, Գեորգը եւ «մենք հայերս շատ աւելի լաւ կ'ըմբռնեք եւ կը զգանք որդակիզումի գոհերուն ցան ու տանջանքը, քանի որ նախապէս ապրած ենք ազգովին»: Իսկ նախադէպը պատմութիւնն է, որ կը կրկնուի:

Իսկ այսօրը: Գեորգն է դարձեալ. «Այժմ, այս օրերուն, այս շրջանը ինկած է հաւատարմողական զինեալ խմբաւորումներու տիրապետութեան տակ, ցնոր տնօրինութիւն»: Եւ այս տիրապետութեան տակ ականատես ենք, թէ պատմութիւնը ինչպէս ինչպէս կը կրկնուի: Եւ թէ պատմութեան հովովոյթները ինչպէս կապուած են մէկը միւրին: Եւ Տեղասպանութիւնը եւ՛ ռմբակոծութիւնը կը շարունակուի:





Եւ նոյն այս շրջանին(ներուն) մէջ: Եւ նոյնինքն այսօրուայ Սուրիական եւ Իրաքեան թոհուբոհին մէջ: Եւ դարձեալ Տոնալտ Պլոքսհամի է: «Ոճիբը նոյնն է, գործադրողները միայն տարբեր»: Եւ Տոնալտի հայեցակէտով ցեղասպանութիւնը, որ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւն է, կարելի չէ զայն սերտել առանց քննական հետադարձ ակնարկ-կապ մը ստեղծելու անցեալի պատահածին եւ բերել զայն ներկային ու տակաւին վաղուայ օրուան: Եւ այս, ցեղասպանութեան եւ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւնն է, ուր պատմութեան մէջ կը կրկնուի, բայց նաեւ կը կապուի ու կը կամրջուի մէկը միւսին հետ: Եւ որովհետեւ առկայ է նաեւ կապը եւ կապուածութիւնը: Թէ անցեալի նահատակը ապրեցաւ վերապրողին հետ ու տակաւին ներկայ եւ զայից օրերու ապրողը կը շալկէ այդ բոլորին ցաւը:

Եթէ պատմութիւնն է, որ ինքզինք կը կրկնէ եւ մարդկութեան հանդէպ ոճրագործութիւնը, կապուած թէ անկապ իր հոլովոյթներով, կը շարունակուի բայց առկայ է նաեւ քաղաքակրթութիւնը եւ անոր ստեղծած մշակոյթը, որ կը յիշէ եւ կը յիշեցնէ:

Թէ մարդկային կեանքը սրբութիւն է, եւ որ պարտին յարգել զայն: Բայց մինչ այդ կայ տակաւին հաճախի ցաւը: Ու շատ մը այլ ցաւեր հոս թէ հոն, որոնք կը կրկնուին ու կը շարունակեն ցաւցնել:

Եւ մինչեւ ե՞րբ է, որ պատմութիւնը պիտի շարունակէ կրկնել ինչ զինք:

## ՄԻՄՈՆԻՆ ՈՐԲԻՆ ԿԱՐՕՏԸ

*«Հայրս՝ Երուանդ Յակոբեանը, քառասուն որբերն մէկն էր»*

Սիմոն Յակոբեանը ծնած է Եթովպիա: Գայրը՝ Երուանդ, մէկն էր հայոց Յեղասպանութենէն ճողոպրած այն քառասուն որբերէն, որոնց թագաւոր Գայլէ Սելասիէ 1924-ին Երուսաղէմէն բերաւ Եթովպիա: Գայլէ Սելասիէի նպատակն էր փողերախումբ մը կազմել այս որբերէն, որոնք չորս տարի պիտի սուսագին Եթովպիոյ մէջ, որով տեղ դարձեալ պիտի վերադառնային, բայց վերադառնալ ո՞ր, չէ՞ որ որբեր էին:

Բայց քառասուն որբերու փողերախումբը գերագանցեց ինքզինք իր երաժշտական կատարողութեամբ եւ ի մասնաւորի՝ թագաւոր Սելասիէի պաշտօնակոչութեան արարողութեան:

Այդպիսով, այս քառասուն որբերը մնացին Եթովպիա, մաս կազմեցին Եթովպիահայ գաղութին եւ անոր զարգացման: Գոն կազմելով ընտանիք՝ կեանքը շարունակուեցաւ Յեղասպանութենէն տեղ, ինչպէս էր պարագան մնացեալ բոլոր ողջ մնացած հայերուն՝ սփիւռքի տարբեր գաղութներու մէջ:

«Գայրս դարձաւ արիեստաւոր եւ ինքնաշարժի մեքանիքի վարպետ», ըսաւ Սիմոն: «Իսկ հօրեղբայրս, որ դարձեալ քառասուն որբերէն մէկն էր, դարձած էր տիրական անուն ոսկերչութեան արիեստի մէջ»:

Երուանդ ամուսնացած է Եթովպիացի-իտալացի կնոջ մը հետ եւ ունեցած է չորս զաւակներ՝ երկու մանչ եւ երկու աղջիկ: Սիմոնը անոնցմէ մէկն է: «Մայրս փոքր տարիքիս մահացաւ. այնպէս որ, երբեք չեմ յիշեր զինք», Սիմոնն է պատմողը:





երուանդ, որ ճաշակած էր Ցեղասպանութեան արհաւիրքը, դարձեալ ապրած է ցարերը իր կողակիցը կանուխ մահացած է, եւ ինք առանձին մնացած է չորս զաւակներուն հետ: Պատմութիւնը ինքզինը կը կրկնէ: Դարձեալ՝ որը «Յայրս մեծ դժուարութեամբ մեզ մեծցուց», ըսաւ Սիմոն, «բայց ան երբեք չէր խօսեր մեզ դասալուծութեան մասին»:

Երուանդ սեղմած էր Ցեղասպանութեան ցաւը իր սրտին ու հոգիին մէջ, հաւանաբար որ պէսզի Սիմոնը մեծնայ անելի խաղաղ, բայց Սիմոն պատասխանատու հայն է, որ, ինչպէս բոլորը, չէր կրնար անգիտակալ Ցեղասպանութեան յիշողութիւնը եւ անոր պահանջա-

տիրութիւնը: Սիմոնը կրցած էր գտնել իր կեանքի խաղաղութիւնը, քանի որ ամբողջ կեանքով կառնած էր հայ եկեղեցւոյ:

«Աստուած իմ կեանքիս մէջ շատ օրհնութիւններ տուած է», կը վկայէ Սիմոն: «Եւ ես այսօր ուրախութեամբ Աստուծոյ տան կը կրկնեմ եւ անոր կը մատակարարեմ»:

Սիմոնիսի համար Աստուծոյ տունը Ար. Գեորգ եկեղեցին է. ան Առիւն Ապետայի հայկական եկեղեցւոյ «պահապան հրեշտակն» է կարծես:

«Այս եկեղեցին գաղութը հաւաքեց եւ հայ պահեց»: Սիմոնիսի ղեկին վրայ ուրուագծուեցաւ պզտիկ ժպիտ, բայց նաեւ խիզախ ու հպարտ նայուածք: Եւ կարծես, որպէս կտակ-պատգամ, դրաւ իմ առջեւ որպէս ապրող իրականութիւն:

Ես ապրեցայ այդ ապրող իրականութիւնը:

Կիրակի, 7 Յունիսին արարեցայ «Սուրբ Սուրբ»ին հետ հայուն պատարագը: Չկայ հոգետր հովիւ եւ առաջնորդ սրբազան: Կան միայն աշխարհական սարկուազ եւ դպիր, որոնք պատարագը ոչ ամբողջական, բայց լսելի դարձուցին եւ ապրեցուցին հայուն հոգետր ներաշխարհին հարստութիւնները:

Ութսունհինգ հոգիներէ բաղկացած հայկական գաղութը տակա-

լին կ'ապրի Առիւն Ապետայի մէջ: Ամեն Կիրակի կայ պատարագ, նաեւ շարական եւ հոգեպարար երգեցողութիւն: Եկեղեցւոյ շրջափակը ծաղկատան է, որուն գեղեցիկ երանգները եթէ մէկ կողմէ կու տան փայլք, բայց նաեւ կը հանդիսանան վկայութիւն, թէ հայը իր եկեղեցիով եւ պատարագով տակալին կ'ապրի, Նոյնիսկ նստաբացած թիւով:

Ռապէլ Բարսեղեան տասնվեց տարեկան է, իսկ եղբայրը՝ Յովան, ութ տարեկան: Անոնց վայրը եթովպիացի է:

Թեւ հայերէն չեն խօսիր, բայց ամեն Կիրակի հայկական եկեղեցի կը լսեմք, կը գիտակցին իրենց ինքնութեան եւ ատոր պատասխանատուութեան: Պատարագի ընթացքին կը խնկարկէ Ռապէլը, քանի փոքր տարիքէն մեծցած է հայկական եկեղեցւոյ մէջ եւ անոր հոգիով սնած: «Յայուն Ցեղասպանութիւնը պէտք է պատմել օտարներուն», Ռապէլն է խօսողը: «Նոյնիսկ եթէ ասիկա հարիւր տարի առաջ եղած է, բայց այսօր պէտք է շարունակել պատմել»: Ռապէլը կ'ապրի հայուն Ցեղասպանութիւնը, քանի ամեն Կիրակի եկեղեցւոյ շրջափակին մէջ կը տեսնէ յուշակոթող-խաչքարը՝ Նուիրուած Ցեղասպանութեան զոհերուն, եւ այդ կոթողը Ռապէլին կու տայ յիշելու եւ պահանջելու գիտակցութիւնը:

«Գաղութը հայախօս է», Մետրոպ Սարգիսեան է: «Եւ մենք շատ բան կը պարտինք հայկական Գեորգով վարժարանին, որ հիմնուած է 1912 թուականին»: Հայկական վարժարանը այսօր փակ է, բայց պետութիւնը փոխարինած է զայն ուրիշ կրթական հաստատութեամբ մը, Նոյն անունով, որուն մէջ, սակայն, հայկական բաժին չկայ:

Մետրոպ ուսանած է տեղական հայկական վարժարանին մէջ, որով ետք Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան մէջ շարուն-



նակած է կրթութիւնը, ապա Յայաստան մասնագիտանալով որպէս ատամնաբուժ: Ամուսնացած է Յայաստանէն հայուհիի մը հետ և կազմած հայկական ծնախ: «Յայկական դպրոց ջնջալուն համար, հայերէնի դասաւանդութիւնը տունը ըրինք մեր զաւակներուն համար: Եթէ Մելգոնեան կրթական հաստատութիւնը բաց ըլլար, ես զաւակներս Կիպրոս պիտի դրկէի ուսանելու»: Մտորոպը ոչ միայն ջատագովն է ազգային արանդին, այլ նաեւ կը գիտակցի յաւելեալ զոհողութիւններու անհրաժեշտութեան՝ հայկական ինքնութիւնը պահելու համար:

Եւ դարձեալ վերաջաղը, անոր հետ մեր ազգային հիմնահարցերուն ախտաճանաչումները: Տակաւին քանի՞ մետրոպոլիտներու պետք էր հանդիպելի, որոնք պիտի խօսէին հայկական վարժարանի անփոխարինելի դաստիարակութեան անհրաժեշտութեան մասին:

«Յալէպի կազութեան այլեւս կարելի չէր տոկալ: Ստիպուած էիս դուրս գալ»: Եւ դուրսը հաջատուր Զարկեանին համար եղած էր թթովպիան: Թեւ կրցած էր ձեռք ձգել մուտքի արտօնագիր, բայց կը մնար առկախ կարգավիճակի մէջ: Խաջատուրի դէմքին վրայ եւ անոր աչքերուն մէջ կրցայ տեսնել կարօտի եւ յուզումի խառն նայուածքներ: Եւ չուշացաւ արագ մտահոգութիւնս՝ Յալէպէն Ատիս Ապէպա», իսկ յետո՞յ):

Բայց Սիմոնը տակաւին ուներ ըսելիք: «Եկեղեցւոյ մէջ միշտ լաւ եւ ապահով կը զգամ: Յայը իր հաւատքը ամուր պահեց, Նոյնիսկ երբ թուրքը շարդեց զինք: Յայուն այս հաւատքը ապահովութիւն կու տայ»:

Բայց Սիմոնը այս իր ապահովութիւնը ժառանգած է: Իսկ ժառանգը:

Սիմոն գրպանէն հանեց դրամապանակը եւ անոր մէջէն երկու փոքրիկ դիմանկար՝ մին հո-



րը եւ միւսը մօրը: Ինքսուսիինկ ամուսնայ ծերունին նախ նայեցաւ նկարներուն, ապա ցոյց տուաւ ինծի: Այդ նայուածքներուն մէջ սկսայ տեսնել Սիմոնին խորունկ կարօտը, կարօտը մօրը, զոր չէր ճանչցած, կարօտը հօրը, որ իր «որբի ցաւը» եզմած էր սրտին մէջ եւ այդպէս մեծցուցած էր զինք: Սիմոնին մեծնալուն հետ մեծցած, աճած եւ խորունկ արմատներ նետած էր իր մէջ «որբին»՝ իր հօրը կարօտը:

Եւ այդ կարօտով է, որ Սիմոնը շինած էր իր կեանքը: Երեւի պարզ, փոքրիկ եւ աննշան կեանք, բայց երբեք աննպատակ, որովհետեւ որբին կարօտը եւ անոր կորսուած հարազատներուն, տան հողին կարօտը վերածուած էր ապրելու ուժի: Եւ այս ուժը արտադրած էր կեանքի արժեքը, որուն գիտակցութեամբ Սիմոն շինած էր իր «Յայաստանը», Նոյնիսկ երբ Յայաստան երկիրը տակաւին չէ տեսած: Սիմոնին Յայաստանը, իր ամբողջական հասկացողութեամբ, մէկտնդուած էր Ար. Գեորգ եկեղեցւոյ մէջ, եւ որ իրեն համար եղած էր ապրելու ուժ, բայց նաեւ ապահովութիւն: Եւ այս ուժով եւ ապահովութեամբ Սիմոն եթէ կը յիշէ իր հօր՝ որբին կարօտը, բայց նաեւ կը պահանջէ: Այդ մաղթանքն է, որ ան ընրաւ մեր բաժնուելէն առաջ: «Օր մը պապանական հողին վրայ կը հանդիպինք»:

Սիմոնին կարօտը իւրաքանչիւր հայուն է, այս կարօտին մէջ ու անոր միջոցով հայը կը ստանայ իր ուժը եւ ապահովութիւնը: Այս ուժով եւ ապահովութեամբ է, որ հայը պիտի յիշէ եւ պահանջէ: Որբին կարօտը՝ Սիմոնին, բայց նաեւ իւրաքանչիւր հայունը:



## ՍՈՒՐԵՇԻՆ ԵԼՔԻ ՃԱՄԲԱՆ

Սուրեշը կու գայ Յնկաստանես: Ան քսաներկու տարեկան երիտասարդ մըն է: Հագիւ կրցած է յաճախել դպրոց, ստանալ քիչ մը ուսում եւ սորվիլ իր մայրենի լեզուն՝ գրել եւ կարդալ: Սուրեշը, բոլորին նման, ինքն ալ ունի կեանքի մէջ բաղձալի եւ իրագործելի երազներ: Անցեալ Փետրուարին ամուսնացած է եւ սկսած է կազմել տուն եւ ընտանիք: Բայց կեանքի պայքարը եւ անոր համար մղուող ամեն ջանք՝ ապահովելու համար ապրուստ, ստիպած են իրեն ձգել իր գիւղն ու ընտանիքը եւ հասնիլ Տուպայ: Եթէ Սուրեշին ըսած են, թէ պիտի երթայ կաթ ու մեղր բխող երկիրը, եւ ուր ան պիտի ապահովեր իր եւ ընտանիքին ապագան, բայց չէին իմացուցած, թէ ինչե՞ր պիտի սպասէի իրեն այդ սփիւռքեան կեանքին մէջ իր պայքարը կերտելու իրականութիւնները:



Սուրեշը մէկն է այն աւելի քան երեք միլիոն բանուորներէն, որոնք կու գան ապիական եւ ափրիկեան ցամաքամասերէն՝ աշխատելու եւ զարգացնելու համար Տուպայը եւ Արաբական Միացեալ Եմիրութիւնները: Եթէ բանուորները կը կազմեն չերեցող հիմքը այս երկրի ճարտարարուեստին ու անոր զարգացման, բայց նոյնքան նաեւ անոնք բաժնեկից չեն նոյն այս ճարտարարուեստին հասութեանն եկամուտներուն:

Սուրեշը կ'ապրի պզտիկ սենեակի, իմա՛ խցիկի մը մէջ, իրեն նման հինգ այլ բանուորներու հետ: Այս խցիկները մեծ տարածաշրջանի մը մէջ ջով-ջովի իրարու կպած շինութիւններ են՝ քաղաքէն անջատուած, եւ որոնք կը կոչուին բանուորական ճամբարներ: Եւ շատ է թիւը այս ճամբարներուն՝ երկրին ամբողջ տարածքին: Ճամբարը ունի իր պահակները. ողջունելով գիրենք՝ ներս մտաւ այս մէկ ճամբարին մեծ դռնէն: Երկար շարքի վրայ ջով-ջովի շինուած սենեակներուն շատ արագ եւ հպանցիկ նայուածք մը նետելէ ետք, Սուրեշը եւ իր սենեակիցները հիւրընկալեցին զիս իրենց անկիւնը:




Այս պզտիկ անկիւնին մէջ կ'ապրին այս վեց երիտասարդները, ինչու իրենց ընտանիքներէն եւ հարազատներէն: Լուացարան, բաղնիք թէ խոհանոց, բոլորն ալ սենեակէն դուրս են: Եւ միայն մէկ կանկիութիւն կայ այդ հարիւրաւոր բանուորներուն համար: Եթէ կը վիճին, թէ կը վիճաբանին, բայց նոյնքան նաեւ կը բաժնեն իրենց ցաւերը եւ ապրուած փորձառութիւնները, եւ այս բոլորը այդ փոքր անկիւնին մէջ: Պարտաւոր են արթննալու առաւօտ կանուխ, որպէսզի ճամբարէն ուղղուին իրենց աշխատանքային վայրերը եւ գիշերը վերադառնան նոյն տեղը: Եւ ասիկա կրկնուող իրականութիւն մըն է չարքուսան վեց օրերուն վրայ երկարող, վերաճելով անոնց կեանքերը նոյնանման եւ նոյնատեսակ ապրուած օրերու, առանց փոփոխութեան եւ կամ այլ հմայքի:

Սուրեշին եւ իր բարեկամներուն աշխատավարձը հազիւ կը հասնի 250 ամերիկեան տոլարի: Եւ այս ամսական դրութեամբ եւ շատ մը անգամներ ուշացումով ու տակաւին քաշշուքներով: Ու ասոնց վրայ տակաւին չհաշուած այլ զրկանքներ: Եւ եթէ այս (չ)վաստկած եկամուտով պիտի ապրին Տուպայի մէջ, բայց նաեւ անոր մէկ մասը պիտի դրկեն տուն, իրենց ընտանիքներուն, բարւոց ապագայ մը կերտելու իրենց տեսլականով:

Սուրեշը ինծի հետ բաժնեց իր միակ ունեցածը՝ իր անկողինը: Եւ անոր վրայ նստած՝ սկսայ դիտել այս տղաքը: Գործէն նոր վերադարձած էին եւ կը պատրաստէին իրենց ընթրիքը: Իսկ ընթրիքը օրական

դրութեամբ բրինձն է: Եւ ամիսը մէկ անգամ միայն միս ճաշակելու հնարատրութիւնը: Կերակուրը կը պատրաստէին միասին, մեծ բահակով ու կը գետեղէին զայն փոքր տոպրակներու մէջ՝ իւրաքանչիւրին համար երկու տոպրակ: Եւ ասիկա իրենց յաջորդ օրուան նախաճաշի եւ պապ ճաշի պատրաստութիւնն էր:



Կը նայէի իւրաքանչիւր բանուորի աչքերուն: Հոն կար կարօտ ու յուզում: Եթէ կարօտը տան եւ ընտանիքին էր, բայց նաեւ նոյնքան յուզումը իրենց ապրած այդ կեանքի պայմաններուն համար: Եթէ ապրեցայ այդ պայմանները իրենց հետ, բայց նաեւ կրցայ տեսնել իրենց հանդարտութիւնը եւ գոհունակութիւնը այդ բոլորին մէջէն Աչքերս գետին սեւեռած էի, երբ տեսայ միջատները, որոնց սկսան միանալ մեր խումբին: Սուրբէ զգաց, թէ անհանգստացած եմ՝ Պզտիկ ժպիտ մը գծուեցաւ դէմքին վրայ եւ իր հանդարտ ու գոհունակ վիճակին մէջէն ըսաւ. «Մեր բարեկամներն են եւ մեզի հետ կ'ապրին»:

Եւ իւրաքանչիւրը սկսաւ բանալ իր կեանքին տոպրակը: Այդ տոպրակներուն մէջ անոնք դրած էին իրենց երկրին ու տան մէջ ապրուած կեանքերը, որոնց մէջ կան շատ փորձառութիւններ, լեցուն դժբախտութիւններով եւ զրկանքներով: Բայց ստիպուած էին շարժել այդ բոլորը, որովհետեւ մտած էին իրենց կեանքի պայքարին մէջ եւ պէտք էր, որ մաքառէին այդ բոլորին դէմ: Այս բոլորը անոնք իրենց հետ բերած էին մինչեւ Տուպայ՝ զէթ այն համոզմունքով, որ պիտի կարենային թեթեւցնել այդ բեռը: Բայց այդ բեռը թեթեւցնելու գործընթացը իրենց սորվեցուցած էր նոր փորձառութիւններ:

«Մենք հոս մինակ ենք», Սուրբէն է խօսողը: «Այս ճամբարէն դուրս մէկը չկայ, որ մեզի հոգ տանի: Եւ քանի որ տունէն հեռու ենք եւ մէկը չունինք այս քաղաքին մէջ, իրարու հետ եւ իրարմով կ'ապրինք»: Ուսկայի մէջ չկայ բանուորներու համադաշնակցութիւն, որ պարտի տր կանգնիլ բանուորներու իրաւունքներուն: Եւ անոնք իրենց սփիւռքեան աշխատանքային կեանքի պայմաններուն պէտք էր տուկայի միակ: Եթէ կը տեսնէի բանուորներուն միանկութիւնը, բայց այդ օր, այդ պզտիկ սեւեռակին մէջ, իրենց մինակ աշխարհին մէջ տեսայ նաեւ իրենց միանկութիւնէն դուրս գալու իրենց էլքի ճամբան:

Եւ էլքի ճամբան իրենց միասնակաւութիւնն էր: Անոնք հեռու են իրենց հարազատներէն եւ տուներէն: Սփիւռքեան իրենց դժուար այս պայմաններուն մէջ եթէ անզօր եւ գրեթէ անօգնական են, բայց պտած են իրենց էլքի ճամբան, որուն մէջէն կը քալեն եւ կը քալեն իրարու հետ եւ իրարմով, նոյնիսկ երբ այդ ճամբան շատ նեղ է: Այդ պզտիկ խուցերուն մէջ անոնք իրենց սփիւռքեան կեանքերը կ'ապրին իրարու հետ եւ զիրար քաջալերելով:

Նորէն նայեցայ Սուրբէին: Աչքերուն մէջէն դարձեալ փորձեցի վեր հասնել անոր կարօտը եւ յուզումը: Եթէ այդ կարօտը եւ յուզումը ան ուզմած էր, բայց նաեւ իր մէջ կրցած էր ստեղծել ներքին ուժ մը, որ իրեն համար եղած էր իր էլքի ճամբան, եւ որ իրեն տուած էր գոհունակ եւ հանդարտ դէմք մը: Այդ հոգիով ան կը քալէր իր բարեկամներուն հետ՝ իր ապրուստի պայքարին համար: Տունէն եւ հարազատներէն հեռու:

Սուրբէին եւ իր ընկերներուն նայելով տեսայ իմ՝ հայուն իրավիճակը եւ սփիւռքեան հայկական իրականութիւնները: Մենք այ կ'ապրինք սփիւռքեան գաղութներու մէջ եւ հեռու հողէն եւ տունէն: Կ'ապրինք հողին եւ տան կարօտով յիշելով եւ պահանջելով: Եւ չեմ գիտեր ո՞նչ ճամբարէն դուրս ո՞վ է հայուն իրաւունքներուն պահապանը:

Բայց կայ տակաւին հայուն կեանքը եւ ճամբարէն ներս:

Եթէ պիտի տեսնեց, թէ մինակ ենք եւ մեր կեանքի պարունակին մէջ չալկած ենք շատ ծանրութիւն, բայց նաեւ պիտի անդադառանք, թէ անհրաժեշտ է որոնել մեր էլքի ճամբան: Եւ էլքի ճամբան իրարու հետ եւ միասին ըլլալու գիտակցութեան մէջ է: Թէ հայը կրնայ տարբերիլ մէկը միւսէն, եւ կամ կրնայ վիճիլ ու դեռ տարակարծիք ըլլալ: Բայց այդ բոլորէն վեր, հայը պիտի կարենայ ստեղծել ներքին այդ ուժը՝ նոյնիսկ իր ճամբարէն ներս, եւ այդ ուժով պէտք է զօր իր էլքի ճամբան նեղ ըլլալ թէ պզտիկ, դժուար թէ խնդրայարոյց: Եւ հայը պարտի քալել այդ էլքի ճամբայէն՝ միասին եւ իրարու հետ:

Սուրբէին էլքի ճամբան: Բայց նաեւ իմը եւ իւրաքանչիւր հայունը:

# ՏՈՒՆԴԱՐՉԻ ԵՐԿԱՐ ՃԱՄԲԱՆ

Ջորենական մեծ հայրս՝ տղթ. Աւետիս ՃԵՎԵՏԵԱՆ՝ Այնթապի ծնունդ, մահացած է իմ ծնունդէն առաջ: Այս իմաստով առիթը չեմ ունեցած հանդիպելու եւ ճանչնալու զինք: Բայց շատ բան տեղեկացած եմ իր մասին մեծ մօրմէն ու տակաւին հորմէն եւ ընտանիքէն: Եւ նկատի ունենալով, որ իր բժշկական ասպարէզին հետ նաեւ ունեցած էր հասարակական, ազգային, եկեղեցական ու գրական, եւ հարապարակագրական բազմաթիւ աշխատանք, ծանօթացած էի իրեն այդ միջոցաւ ալ: Կարողացած եմ իր գրութիւններէն եւ կրցած եմ հասկնալ իր հետաքրքրութիւնները: Բայց այն ինչ որ ուշագրաւ էր իր ետին ձգած աշխատանքներուն մէջ իր յուշագրութիւններն են գրուած 1914-1919 թուականներուն, հայատառ թրքերէտով:

Աւետիս ՃԵՎԵՏԵԱՆ անարտած էր Սուրիական Բողոքական Գոյեթի (այժմ Պէյրութի Ամերիկեան Համալսարան) բժշկական ճիւղը 1903 թուականին: Առաջին Աշխարհամարտին ծառայած էր Օսմանեան բանակին մէջ, որպէս սպայ-բժիշկապետ: Պատերազմի ընթացքին ան դրկուած էր տարբեր ճակատներ Օսմանեան բանակին հետ: Իր օրագրութիւնները՝ գրուած Օսմանեան բանակի մէջ իր զինուորական ծառայութեան ժամանակ, 1986 թուականին թարգմանուած էր հայերէնի եւ հրատարակուած Պէյրութ:

Յուշագրութիւններ շատ են եւ մանաւանդ հայկական Ցեղասպանութեան հետ առնչուած: Մակայն այն ինչ որ կրնայ խրայատուկ ըլլալ այս պարագային, որ այս յուշագրութիւնը կու գայ Օսմանեան բանակի մէջ ծառայած հայ սպայի մը կողմէ, որ երբեք դասալիք չեղաւ նոյնիսկ երբ «անախորժութիւններ եղան հայ ըլլալու պատճառով» (Յուլի 16-29, 1917, Փերկերի):

Օրագրութիւնը սկսած էր 3 Նոյեմբերի 1914-ին եւ վերջին յուշը եղած է Դեկտեմբերի 1919-ին: Եւ յուշերը այլազան են: Եթէ մէկ կողմի կայ գեղեցիկ նկարագրութիւնը Արեւմտահայաստանի տարբեր թաղաքներուն մասին, բայց նաեւ յուզում, ցաւ, կարօտ, վախ ու ողբերգութիւն: Եւ այս հոգեկան ներաշխարհի վրայ կու գայ աւելնալու պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը եւ զինուորականի ու բժշկական առաջելութեան նկատմամբ իր ուխտը:

Եւ միայն զինադադարէն ետք է եւ ինչպէս ինք կ'ըսէ. «Այսօր զինացրուեցայ եւ գիշերը չկրցայ քնանալ» (Նոյեմբեր 10-15, 1918, վախ), ուր կը սկսի Աւետիս ՃԵՎԵՏԵԱՆԻ «տունդարձի երկար ճամբան»:

Բայց մինչեւ այդ կայ Աւետիս ՃԵՎԵՏԵԱՆԻ հայուն ապրած երկար, սուտապալի ու միևնաչ կեանքը: Իր ընտանիքէն հեռու՝ Նոյնքան լեցուած իրենց կարօտով եւ իր ժողովուրդին ապրած ողբերգութեան ցաւով, ան պիտի հասներ տուն:

Աւետիս ՃԵՎԵՏԵԱՆ կը սիրէ ընտիւրիւնը եւ անոր գեղեցկութիւնը: Չաթայւոյ. «Ինչ հաճելի մարդագեղութիւններ ու ամեն տեղ դալար, կանաչ սարեր: Դուռնելին (Պոլսուրդ արեւմուտք) դրախտ մըն է եղեր» (Նոյեմբեր 5, 1914, Սիլիվրի): Եւ կը հիանայ Արարատ լեռանը: «Մասիսն ու Արարատը եզակի հմայիչ տեսարան մը կը գոյացնեն: Շատ հաճելի զգացումներու տուն կու տան ինձ մօտ: Անսման, շքեղ ու զօրտեսափառ լեռ մըն է Արարատը»:

Բայց այդ գեղեցիկ տարածաշրջաններուն մէջ ապրած է նաեւ պատերազմին տգեղութիւնը: Եւ այդ տգեղութիւնը նկարագրած է մանրամասնութեամբ: «Շատ ցաւալի տեսարաններ մարդու զանկեկով, թելերու եւ սրունքներու ոսկորներով լեցուն ամեն կողմ: Շրափնկի փամփուռի կտորներ, վրանի մացորդներ, կօշիկի կտորներ ամեն տեղ» (Դեկտեմբեր 1, 1914, Նազգաշ):

Չանազ Գալիի պատերազմը կը նկարագրէ իր ամբողջութեամբը՝ սկսելով Ապրիլ 18, 1915-էն: «Կէտքով ետք ժամը չորսին, սիւս եւ թշնամի օդանաւ մը, որ գիշատիչ թռչունի նման մեր վրայ կը սաւառնի: Յանկարծ ամեն կողմէ կրակ բացուեցան իմ վրայ, սակայն վրցան դաչիլ, օդանաւը անդադար կը պտուցուէր»:



Բայց առկայ էր նաև այդ պատերազմի մէջ իր տոկալու հաւատքը: «Այս առաւօտ հարդրողեցաւ, թէ Ազգաշի բժշկական առաջին կայանին նշանակուած եմ: Յիւանդանոցներէն ելելով պետք է հաստատուիմ ռուսք եւ թորփիլներ տեղացող այս վայրը: Աստուծոյ կ'ապաւինիմ հոս զիս պաշտպանելու համար» (Օգոստոս 26, 1916, Ազգաշ):

Եւ չուշանար բժշկական իր առաքելութիւնները եւ այդ առաքելութեան մէջ ապրուած «գունատր» օրերը: «Մեր բանակայիններուն մօտ շատ բարձր թիւով մալարիայի տեսը կայ: Գործս շատ է» (Օգոստոս 9-10, 1916, Գալէ): «11,000 վիրաւոր եկած էր եւ անոց վերինը դարմանելու ատեն չկայ. զբաղած ենք միայն նաւ բարձրացնելով ու դարկելու համար: Տեսնենք ի՞նչ պիտի պատահի» (Օգոստոս 11-13, 1916, Ազգաշ): «Այս գիշեր անքուն մնացի մինչեւ առաւօտ: այդքան որ շատ է գործը: Այս տողերը կը գրեմ հսկայ հիւանդատար նաւու մը մէջ 2000 վիրաւորներով լեցուն: Պատերազմը կրկին անգամ թռկեցաւ ահաւոր սաստկութեամբ» (Օգոստոս 14-15, 1916, Ազգաշ):

Եւ կարծեք չէր բաւեր պատերազմի արհաւիրքը եւ Աւետիս ճեպեռեան պիտի ապրեր նաեւ հայունը: Եւ մէկ-մէկ պիտի նկարագրէ ապրուած վիշտը մինչեւ որ ինչպէս ինք կ'ըսէ քանիցս «սիրտ չունեցաւ օրագիրս շարունակելու»:

«12,000 գաղթականներ անցան Մարաշի ջովէն. անգութ, անհամար տեսարաններ ու նկարագրութիւններ. այդ պատճառով օր սիրտ չունեցայ օրագիրս շարունակելու» (Յունիս 11-20, 1916, Մարաշ): Ու կը հանդիպի հայու բեկորներու: «Խապուզէ հայկական գիւղը ամբողջովին պարալուսւած՝ մնացած էին հինգ ընտանիքներ միայն որոնց այցելեցի: Երկրորդ հանգրուանը եղաւ Կիւլշէրտ անունով ուրիշ հայ գիւղ մը: Այս կողմերը հարիւրաւոր նման հայ գիւղեր կան բոլորը դատարկ, քնակչութիւնը տեղահան: Կիւլշէրտէն ելելով հասանք Բալուէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեան վրայ հօշմաթ հայկական գիւղը, ուր սկսանք հաստատուիլ: Երեք հարիւր տուն գիւղի մէջ մնացած էին չորս կամ հինգ ընտանիքներ: Զիւրտ տարագիրներս փլած էին բոլոր տունները» (Սեպտեմբեր 21-30, 1916, հօշմաթ):

Եւ Աւետիս պիտի դիմանար նաեւ տեսնելով հայու ոսկորներ «Այստեղ հասանք երեք օր առաջ: Տիգրանակերտի հովիտը տարածուն է: Ծամբան ականատես եղայ սիրտ ճմլող տեսարաններու ամէն տեղ հայերու ոսկորներ» (Մարտ 31-Ապրիլ 5, 1917, Տիգրանակերտ):

Աւետիս հեռուէն կ'ապրի նաեւ իր հարազատներուն տառապանքը: «Երեկ վեր. Տիգրան Գունտագճեանի (իր աներծակը-Յ.Ճ.) վախճանումը լսելով շատ տխրեցայ» (Փետրուար 20-24, 1916, Պերզոս)

իլ տակաւին. «Երեւնի քրոջս Սեպիա լեռ՝ սուրիական անապատ լլշուած, եւ Գեորգ ու Կարապետ տղաներուն մահացած ըլլալը տեղեկանալով շատ տխրեցայ» (Ապրիլ 4-6, 1916, Գըրլզ-քիլիսա):

Բայց կայ նաեւ Աւետիսին մարդկային ներաշխարհը եւ այդ ներաշխարհին ապրուած վերիվայրումները: «Երեւնի 11-ին 40 տարեկան եղայ, վշտալի տարեդարձ: Այլ տեսնենք, 41-ը կը բոլորեմ արդեօք. Ո՛ր եւ ինչպէ՛ս» (Երեւնի 11-13, 1916, հօշմաթ): Բայց սասն եւ ընտաիցի կարօտը միշտ այն յոյսով լեցուցած է զինք: «Չաւակներու՝ Ռոպէրին եւ Վահէին նկարները ստանալով շատ ուրախացայ» (Մարտ 14-18, 1917, հօշմաթ):

Աւետիս ճեպեռեանը հայն էր, որ գիտակից էր իր պաշտօնին եւ անոր նուիրուածութեանը: Պատերազմի ժամանակ երբ ռուսք զարուած ուտեստեղէնի նաւը սկսաւ հրկիզուիլ, ոչ մէկ թուրք զինուոր կը համարձակէր զայն մարել: Եւ Աւետիսն է դարձեալ: «Եղած բարձրութենէս վեր կանգնելով զհետուրներուն բացականցեցի, «Օ՛ս, սալաններս, վաթանին ծառայելու օրը այս է. օ՛ս, հրդեհը մարելու, օ՛ս»: Ընկճուած զինուորները սիրտ աննելով վար խոյացան այդ ցից զատիթափէն եւ սկսան կրակը մարել» (Սեպտեմբեր 2-3, 1916, Ազգաշ):

Եւ անպայմանօրէն կը սկսիս հարց տալ, թէ ինչպէ՛ս կրնայ թուրքը հայը մեղադրել, որ ան դաւաճանած է եղեր պետութեան՝ «վաթանին», առաջին աշխարհամարտի ընթացքին: Բայց Աւետիս լաւ անկցած էր թուրքը: Ան չի վարանեցաւ իր յուշերուն մէջ յիշել, թէ «վայրագ ժողովուրդ է» (Յուլիս 25-30, 1916, Փերվերլի): Եւ ան յաճախ ապրեցաւ թուրքին «անախորժութիւններուն՝ հայ ըլլալուն պատճառով» (Յուլիս 16-29, 1916, Փերվերլի):

Աւետիս ապրեցաւ այս բոլորը քանի ուներ հայուն տան կարօտը: Եւ չուզէր այդ կարօտը անկատար ծագել: «Տունի մասին կը խորհիմ յարատեւ: Երկու օրէն ճամբայ կ'ելլեմ» (Երեւնի 10-15, 1918, Վան):

Եւ կը սկսի Աւետիսի տունդարձի երկար ճամբան: Եւ այդ երկար ճամբան պիտի ընդգրկէր քառասուն օր ոտքով ճամբորդութիւն: Եւ յոկնութիւնը պիտի չի խանգարէր, որ ան նկարագրէր Վանը. «Լիճը, վարագայ է Սիփան լեռներով, շատ հաճելի տեսարան մը կը հայթայթէ» (Երեւնի 15-20, 1918, Վան): Եւ նաեւ նոյնիսկ ոտքով ճամբորդելու արկածախնդրութիւնը: «Վեց օր ոտքով կը ճամբորդեմք. այսօր չափազանց յոգնած եմ: Յարմար սնունդ չկայ: Այսօր մեր չորս սայլերը ձիւնի մէջ խրեցան: Այլ գայլեր, վիճակներով: Կեանքիս ամենէն ամստոնակալի օրերը կ'անցնեմ: Սակայն տուն վերադառնալու զգացումը փորձանքներս մոռցնել կու տան» (Երեւնի 28-30, 1918, Աղճաճ): Եւ դարձեալ հայկական գիւղերը. «Պայագիտ հազար

տուն հայ կայ եղեր, բայց բոլորը փախուստ տուր են» (Դեկտեմբեր 4-9, 1918, Պայագիտ): Եւ կ'անցնի Գարա-Զիլիսայեն եւ նաեւ ճեկեանէն: «Շրջանի բոլոր գիղերը հայկական են, բայց դատարկ» (Դեկտեմբեր 19-21, 1918, Ճեկեան):

Աւետիս Ճեպեճեան վերջապէս կը հասնի Տրապիզոն: Որով եղջ ծովու ճամբով Պոլիս եւ ի վերջոյ երկաթուղիով Զալէպ: Զալէպի մէջ ան հանգիստ չառնէր: Աւետիս իր բովանդակ կեանքը անցուց Յեղասպանութենէն ճողոպարած իր ժողովուրդին վերապրումի առաքելութեան համար գործելով: Բժշկական, հասարակական, ազգային, եկեղեցական թէ հրապարակագրային աշխուժ գործունեութիւն մը ունեցաւ՝ դառնալով հաւեպահայ գաղութի կազմակերպողներէն մին:

Աւետիս Ճեպեճեան չի յուսահատեցաւ, թէ օր մը պիտի հասնէր տուն: Ան դասալիք ալ չէղաւ: Եւ տունդարծի երկար ճամբան քունով ան հասաւ:

Եւ այս հայուն սրբազան առաքելութիւնն է: Տունդարծի երկար ճամբուն մէջ չի յուսահատիլ: Որովհետեւ հայը պիտի հասնի իր ՅՐԷԼԵ:

## ՕՐՕՐԸ, ՈՐ ՉՄԱՀԱՅԱԻ

Հալէպի հոգետունը ինծի համար սուկ անուն էր, բայց երբեք այդպէս չէր ծնողքս եւ հօրեղբորս՝ տոբթ: Ռոպեր Ճեպեճեանին եւ մասնաւոր մեծ ծնողներուս համար:

Քիչոքն ալ հալէպահայեր, որոնք անուր կերպով կառնած էին իրենց արմատներուն, ինչպէս նաեւ մեծցած ու դրոշմուած էին իրենց անտրավայրին նկարագիրով: Անոնք շատ չէին խօսեր հոգետան մասին, սակայն անոնց ներաշխարհին մէջ կային խոր եւ բազում զգացումներ այդ կառոյցին կապուած: Անոնք տեսած էին ու ապրած կրնային դառն փորձառութիւնները, հոգետան մէջ ու անոր ընդմէջէն: Կրնայի զգալ ցաւը, վիշտն ու արցունքը: Հոգետունը զբօսավայր չէր, այլ Յեղասպանութենէն ճողոպարած հայուն համար հանդիսացած էր «լիբրըին կայան», ուր բիւրաւոր հայ գաղթականներ սոված, հիւժած ու հիւանդ վիճակի մէջ էին. անոնք կ'ապրէին եւ կը պատրաստուէին իրենց հոգին աւանդել անոր ցուրտ փողոցներուն մէջ:

Հօրեղբորս Զալէպի տան գեղանկարչական գործերու հաւաքածոներուն մէջ կար նաեւ հոգետան մէկ նկարը: Տարիներ շարունակ Զալէպ կատարած յաճախակի այցելութիւններու ընթացքին ինչի համար հոգետունը այդ նկարն էր ու քիչ մըն ալ աւելին: Կրնայի տեսնել ու թափանցել հայուն սեւ ներաշխարհը այդ նոյն հոգետան փողոցներուն մէջ: Եւ այդ սեւին նկանատես եղած էին մեծ ծնողքս եւ հօրեղբայրս, որոնք տեսած էին, թէ ինչպէ՛ս հոգետան փողոցներէն հայերու դիակները սայլի մէջ կը լցնէին ու կը «թաղէին» հասարակաց փոսի մէջ:

Եւ հօրեղբայրս հոգետան նկարը դրած էր մէկ կողմէ հայուն վիշտին արտայայտութեան համար, յայնչ անպայմանօրէն մտածելով





անոր վերապրումին տեսլականին մասին: Եւ այս վերապրումը ունի իւրայատուկ պատմութիւնը մը:

Կարապետ աղա Պապուզեան՝ Չեխոսլովակիայի գաւազ, 1918-ին կ'ապրէր Զալեայի մէջ: Անոր բնակարանը կը գտնուէր Զամիտիի շրջանին մէջ, եւ դրացի էր Յովհաննէս աղա Գաւտեմեանին: Կարապետ աղա ամէն երեկոյ տուն վերադարձին կ'անցներ հոգետան ետեւի կողմէն խրամին աջ կողմը երկարող նեղ փողոցով: Ան ամէն երեկոյ կը տեսներ հայորդիներ, որոնք հիւանդ, դժբախտ եւ յաճախ մահամերձ վիճակի մէջ համարեա նուազած կ'ըլլային մայթերուն վրայ:

Սակայն այդ գիշերը Կարապետ աղային համար տարբեր եղաւ արդարեւ, երբ ան դարձեալ կ'անցներ նոյն փողոցներէն, գետին պահած տժգոյն եւ տկար մարդ մը խօսքը իրեն ուղղելով՝ որոյդ ջուն ձայնով եւ հեւալով ըսաւ. «Դուն հայ ե՛ս»:

Կարապետ Պապուզեան կանգ առաւ: Երեւի պահ մը մտածեց, թէ բարի սամարացիի պատմութիւնը իրական դարձաւ նաեւ իրեն համար. նաեւ մտածեց, թէ բարի սամարացիի պատմութեան մէջի «Ի կերպարը պէտք էր ըլլար ինք այդ պահուն՝ ղեւտացի՞ն, քահանայ՞ թե՛ սամարացի: Կարապետին ընտրանքը եղաւ սամարացիին կեանքի պարի մարմնաւորումը: Ան մօտեցաւ տկար մարդուն եւ օգնեց անոր որ ոտքի ելլէ: Բայց այդպիսով չբաւարարուեցաւ: Կարապետ զան տարաւ իր տունը, տաք ճաշ հրամցուց եւ բաղնիքը ջերմացնելով մարդուն լոզանքի ամիթ տուաւ: Անոր ցնցոտիները հանեց եւ նոր զգեստներ հագցուց: Այս բոլորը կատարուեցան լռութեան մէջ, առանց տակաւին ծանօթութեան կամ խօսակցութեան: Տկար ու յոգնած մարդը միայն կը հետեւէր Կարապետին ցուցմունքներուն: Նոյն ան այլընտրանք չուներ, ապա ինչպէ՞ս կրնար այդ բոլոր հոգատարութիւններուն ոչ ըսել:

Երեւի պէտք էր հանգստանար, որպէսզի այս սպառած օտարականը քաջալերուէր ու սկսէր խօսիլ Կարապետին հետ: Իսկ խօսակցութիւնը: Ո՛չ իր մասին էր, եւ ո՛չ ալ իր կրած տառապանքին ու դժբախտութիւններուն: Օտարականը հայ էր, ինչպէս բոլորը, եւ ինքն ալ նոյն ճակատագիրին ենթարկուած էր: Կարիքը չզգաց հասելու համայն հայութեան կրած տառապանքին մասին, ան նա խընտրեց վերապրելու մասին խօսիլ:

«Կրնայի՞ք ինծի ջուրթակ մը ճարել», եղաւ իր առաջին հարցումը Կարապետ աղային ուղղուած:

Կարապետ շուարած էր եւ հաւանաբար սկսաւ կասկածիլ, թէ այս հիւանդ ու հիւժած «օտարական»ը նաեւ հոգեկան ու մտային խախտումներ սկսած էր ունենալ: Բայց Կարապետ ի մտի պէտք էր ունենար քանաստեղծին ճշմարիտ խօսքը. «Եւ մահամերձս ալ կ'ուզէր

կուրան, նախ կեանքը եւ վերջը լացող մը իր վրան»:

Կարապետ աղա փութաց էր դրացիին՝ Յովհաննէս Գաւտեմեանին մօտ, բերաւ անոր ջուրթակը ու յանձնեց օտարականին: Օտարականին ձեռքին մէջ ջուրթակը յստ վարժ գործիք մը թուաց: Ան շատ արագ կերպով կրցաւ լարերը շտկել եւ սկսաւ նուազել հայկական միւղեղիներ, որոնք իրարու խորոզեցին: Կարապետ եւ Յովհաննէս՝ երկուքն ալ զարմացած, հարց տուին օտարականին:

– Ի՞նչ է անուդ, բարեկամ:

– Բարսեղ:

– Մական՞ւնդ:

– Կանաչեան: Ես Կոմիտաս վարդապետին հինգ աշակերտներէն մէկն եմ:

Կարապետ եւ Յովհաննէս օտարականը տարին ազգային առաջնորդարան: Եւ այդ օրերուն, երբ հայ ժողովուրդը կ'ապրէր իր ամէնէն դժման, դժուար ու ողբերգական օրերը, առաջնորդարանը կրցաւ կազմակերպել յատուկ համերգ մը Սրբոց Զառանակից Սանկանց եկեղեցոյ մանկապարտէզի սրահին մէջ: Զամերգները կրկնուեցան: Ներկաները, որոնք յուզուած էին, արցունքները իրենց այրէրուն, մէկ կողմէ կ'ապրէին հայուն կարօտը, իսկ միւս կողմէ վերապրելու զգացումը: Եւ այդ վերապրումի կենդանի օրինակը՝ Բարսեղ Կանաչեանի չմահացած տաղանդն էր:

Զամերգներուն հասոյթը յատկացուեցաւ տաղանդաւոր երաժիշտին, որ Զամաշխարհային Ա. պատերազմէն ետք մեկնեցաւ Փարիզ՝ իր երաժշտական ուսումը կատարելագործելու նպատակով:

Բարսեղ Կանաչեանի տաղանդն ու երաժշտական կենսքին մէջ արձանագրած նուաճումները դարձան ակնբեր: Զայկական ու միջազգային երաժշտական արուեստին մէջ տիրական անուն մը դառնալու կողքին, անոր «Օրօր»ը դիւթեց եւ տակաւին յուզող արուեստի զործ մըն է, որ ցայսօր կ'ունկնդրուի մեծ անձկութեամբ:



«Քուն եղիր բալաս աչերդ խուփ արա»:

«Օրոր»ը, որ մահուան ճիրաններն դուրս գալով եղաւ ապրող իրականութիւն:

Բարսեղ Կանաչեան «Օրոր»ին ընդմէջէն կրցաւ տեսնել հայ մանուկին քնանալը, անոր քնանալուն ընդմէջէն ամողջ մեծնալու հոգի վոյթը, իսկ հայ մանուկին հասակ նետելուն ընդմէջէն Կանաչեան տեսաւ հայուն յարթանակը՝ մահուան դէմ: Հոգետունը՝ «մահուան շուքի ձոր»ը, դարձաւ ապրելու մարտահրաւեր:

1955-ին այդ դէպքէն երեսուներօթը տարիներ ետք, Բարսեղ Կանաչեան Հալէպի մէջ դարձեալ կը հանդիպի իր բարի սամարացիին՝ Կարապետ աղա Պապուզեանին. անոնք կ'ողջագուրուին: Պահ յուզիչ է, սակայն կը հաստատէ, որ հայը չմեռաւ, իսկ հոգետունը դարձաւ հայուն վերապրելու կոռուանը եւ յատկապէս հայը հայուն հետ ու իրարմով վերապրելու առիթ ստեղծող կեդրոնը:

Հալէպի հօրեղբօրս տան հոգետան պատկերը: Պատկեր մը, որուն ընդմէջէն հայը յարթեց մահուան, ուր «Օրոր»ը չմահացաւ:

«Օրոր»ը, որ չմահացաւ: Իսկ հայը շարունակեց ստեղծագործել ու ապրիլ:

2016

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՂՈՅ»

Պուլտոս Այրես, Արժանթին: Մայիս 2016: Իջեանած պանդոկիս հաշարանին մէջ մէկ կողմէ կը նախաճաշեմ միւս կողմէ համակարգիին ետեւ նստած կը փորձեմ քայլ պահել իրենց հերթը սպասող շատ մը գործերուս հետ: Այդ կացութեանս մէջ չանդրադարձայ, որ տարեց մարդ մը մօտեցաւ ինծի եւ սպաներէն հետս զրուցեց: Թէեւ չհասկցայ իր ըսածը, ուզեցի իր ժպտուն, բարեկամական ու հաղորդական դէմքին ընթացք տալ: Չարցուցի եթէ անզներն գիտր: Փորձեց իր միտքը եւ ըսելիքը պարզել: «Այսօր Ուրբաթ է. շաբաթավերջը կը սկսի, աշխատանքը ընդհանրապէս կը սկսի դանդաղիլ»: Եթէ դէմքն վրայ կար ժպիտ մը, բայց նաեւ ան շահեցաւ իմ բարեկամութեանս: Վերջապէս, կը փորձեր քաջալերել զիս, որպէսզի քիչ մը նուազկենեմ իմ աշխատանքային հեւքս եւ երեւի շաբաթավե՞րջը վայելեմ:

Արժանթինի մէջ կայ այս բարեկամական մթնոլորտը: Ընկերային կրանքին մէջ կայ մարդկային հաղորդականութիւնը, ուր դժուար

չ'ըլլար բարեկամութիւն եւ յարաբերութիւն մշակելը: Ուստի յատկանշական ու երեւի նաեւ գեղեցիկ տվորութիւններէն մէկն է, երբ մարդիկ կ'ողջագուրուին իրարու հետ իրաքանչիւր անգամ երբ հանդիպին, նոյնիսկ երբ անծանօթներ են եւ նոր կը ծանօթանան:

Եւ այս նոյն լինում մթնոլորտին մէջ էր, որ սկսայ մէկ-մէկ քակել հայկական իրականութիւնը Պուլ-



նու Այրեսի մեջ: Այդ մեկուն ծանօթանալու լաւ միջոցներն մին «Հայկական Փողոց»ն է: Հոն է, որ հայկական իրականութիւններ մէկ-մէկ իրարու մօտ եւ գիրար հրմշտկելով ստեղծած են պզտիկ Հայաստան մը: Թէեւ սկիզբը հոն հիմնուած են եկեղեցին եւ առաջնորդարանը, բայց շուտով անոնց կողքին սկսած է հայկական կեանքը ծաղկիլ խրաքանչիւր կրթական, մշակութային եւ ակումբային ու տակաւին հայրենակցական միութիւններու ստեղծումով: «Հայկական եկեղեցին մեզ մէկտեղեց», կ'ըսէ հորիսէ Գագանճեան՝ խմբագիրը «Արմենիա» շաբաթաթերթին, որ ունի եօթը հարիւր բաժանորդ:




Հայկական կեանքը փխրուն է, բայց եւ այնպէս ազգային ինքնութիւնը եւ գիտակցութիւնը ակներեւ են: «Հայկական հաստատութիւնները կարեւոր դեր կը կատարեն հայուն ինքնութեան պահպանումին մէջ», կը վկայէ Գիսակ արք. Մուրատեան՝ Արժանթինի առաջնորդը:

Բայց Պուէնոս Այրեսի մէջ միայն «Հայկական Փողոց»ը չէ, որ հայկականութիւնը կը ներկայացնէ: Զարդին մէջ կան բազմաթիւ վայրեր, ուր առկայ է հայկական դրոշմը՝ խաչքար, յուշարձան, պարտուկ

իրապարակ եւայլն: Հայրենի պետականութիւնը ունի նաեւ իր դիւանագիտական ներկայացուցչութիւնը երկրին մէջ: «Դեսպանատունը ձեր եւ բոլոր հայերուն տունն է», ըսաւ Ալեքսան Յարութիւնեան մեր հանդիպումին ընթացքին: Պարզ է, որ սփիւռքի տարածքին հայը պէտք ունի հայրենի տան այս շերմութեան:

Արժանթին երկիր մըն է, որ ո՛չ միայն հիւրընկալած է հայերը, այլ նաեւ սիրած է գանոնը: Արդարեւ, տեղացիներուն հետ զրուցելով դժուար չէ նկատել, որ բաւական բան գիտեն հայուն մասին եւ յարգանք ու հիացում կը տածեն անոր նկատմամբ:

Պուէնոս Այրեսի գիրքի միջազգային ցուցահանդէսին հայկական տաղաւարը փայլող ներկայութիւն էր: Նոյն ցուցահանդէսին ներկայ եղանք չորս նոր հրատարակութիւններու շնորհահանդէսին, ուր հայ գրողներ սպասներէն լեզուով ներկայացուցին հայկական պատմութիւնը եւ մշակոյթը, ինչ որ շատ բան կ'ըսէր գաղութին ազգային ինքնութեան եւ անոր գիտակցութեան մասին:



Բայց եւ այնպէս կայ անխուսափելին՝ լեզուի պահպանութեան անաւոր նահանջը: Անի Մուշեան-Սարգիսեանը ազգային առաջնորդարանի ամենօրեայ վարժարանի տնօրէնն է: «Հայերէն կը հասկանան, բայց չեն խօսիր»: Հայերէն դասանիւթեր դասաւանդող ուսու-

ցիչներու կարիքը շատ մեծ է»: Արժանքինի մէջ այսօր կը գործեն եւ թը հայկական վարժարաններ, որոնք ունին անելի քան երկու հազար աշակերտներ: Դարձեալ մեր պատմութիւնը եւ Տեղասպանութիւնն է, որ կը չարչրկէ գիւ, որովհետեւ այդ պատճառով է, որ այսքան տարածուած ենք աշխարհով մէկ: Ուստի պէտք է միշտ պայքարիք մեր արժեքներու պահպանումին համար:

Արժանքին եղած է ներգաղթողներու երկիր՝ յատկապէս Պուլտու Այրեւը: Շատ են ազգութիւնները, որոնք եկած են աշխարհի տարբեր ցամաքամասերէն, մասնաւորաբար Եւրոպայէն: Գինգ գործակիցներուս հետ նստած կը զրուցէի: Գինգն ալ արմատներով Իտալիայէն է: Գարց տուի, թէ իրենց մեծ ծնողները Ե՞րբ հասած են Արժանքին: Բոլորին պատասխանը եղաւ, «Մտաւորապէս հարիւր տարիներ առաջ»: Չուշացաւ հիմնական հարցումս. «Ո՞րքան իտալացի կը զգաք եւ ո՞րքան իտալերէն կը խօսիք»: Բոլորին պատասխանը եղաւ, թէ ոչ մէկ առնչութիւն եւ կապուածութիւն ունին իտալական ինքնութեան եւ լեզուին հետ: «Բոլորս ալ արժանքինցի կը զգանք»:

Իսկ պատճառները. ոմանք կամովին փորձած եւ մոռցած են անցելի հետքերը, սակայն նաեւ կան կամք անկախ պատճառներ հոսանքին հետ քայլ պահելու եւ անոր դէմ թիս վարելու դժուար իրականութիւնը:

Ասիկա ինքնաբերաբար առիթ կու տայ մեր միջեւ բարդատական մը ընելու: Բայց հայը այդպէս չէ եղած: Մենք ալ հարիւր տարիներ առաջ եկած եւ հաստատուած ենք լատինական այս երկիրը, բայց կայ տակաւին ինքնութեան զօրաւոր տրոփիւնը: Եթէ ոչ այդքան լեզուին, բայց մշակոյթին եւ անոր արժեքին առումով կայ մնա-

լուն ճիգը՝ այդ արժեքներուն վրայ հիմնելու հայկական կեանքը եւ ասիկա մինչեւ այսօր տակաւին կը շարունակուի: Էլեւս Աշճեանը տնօրէն է «Մարի Մանուկեան» դպրոցին: Ան այս երեւոյթը ներկայացուց շատ անելի քննական եւ առարկայական մօտեցումով: «Գայեթիկը որպէս երկրորդ լեզու պէտք է սորվեցնել հայ նոր սերունդին, որովհետեւ հայերէնը իրենց համար մայրենի լեզու չէ»:

Ուստի պէտք է համոզուի՞լ եւ ընդունի՞լ երկու չարեաց փոքրագրուի՞լ այդպիսով գէթ զարկ տալով մայրենիին, որպէս երկրորդ լեզու:

Կիրակի երեկոյեան տեղական Աւետարանական եկեղեցիին մէջ պաշտամունքին մաս կը կազմեն: Կը քարոզեմ անգլերէնով, որ կը թարգմանուի տեղոյն վրայ սպաներէնի: Խօսեցայ հայութեան եւ մի-



լին արեւելեան տարածաշրջանին մէջ քրիստոնեայ ներկայութեան մասին: Եկեղեցիին մեծ սրահը լեցուն էր հոծ բազմութեամբ մը: Դաշտամունքէն ետք մօտեցաւ չափահաս անձ մը եւ փորձեց հասկնել, թէ հայ է եւ մականունը ժամկոչեան է: Գայեթիկն չէր խօսեր, բայց սրտին մէջ ուներ հպարտութիւն մը, զոր կ'ուզեր բաժնեկցիլ ինձի հետ: Եւ թարգմանողի մը օգնութեամբ ան ըսաւ. «Տղաս Գայաստան վնաց եւ հիմա հոն կ'ապրի»: Եւ այս հայուն հպարտութիւնն է՝ ինք-

նութեան, մշակոյթին եւ հայրենիքին վերաբերող, երբ Նոյնիսկ լեզուն կը նահանջէ եւ ստիպուած է մայրենին սորվիլ, որպէս երկրորդ լեզու:

Բայց, այո՛, ասիկա հայուն հպարտութիւնն է: Եթէ իտալացին կորսնցուցած է իր ազգային հպարտութիւնը, բայց հայը տակաւին կը պահէ զայն: Եթէ հայը հարիւր տարիներ սեղմեց ու ամփոփեց իր այս հպարտութիւնը «Չայկական Փողոց»ին մէջ, բայց միշտ կանգնած մնաց յոյսին: Այն յոյսին, որ «Չայկական Փողոց»ին մէջէն պիտի տեսնէ, բայց նաեւ հասնի Նոր Երկինք ու Նոր Երկիր Աստուածաշունչի հասկացողութեան (Յայտնութիւն Յովհաննու 21:1): Այս Նոր Երկինք ու Նոր Երկիր տեսլականին համար ու անոր հետ հայը հարիւր տարիներ է ի վեր եւ մինչեւ այսօր տակաւին կը շարունակէ տքնիլ, որպէսզի յաղթէ եւ իր «ամէն բաները ժառանգէ» (Յայտնութիւն Յովհաննու 21:7):

Եւ այս ժառանգը հայուն հպարտութիւնն է, որ մինչեւ այսօր տակաւին կը պահէ իր ջերմութիւնը, որպէս ապրող արժեք՝ մէկ կողմից հայրենի ու Չայաստանի պետականութեամբ, բայց նաեւ աւելիով Այս աւելին ալ «Չայկական Փողոց»ներն են Պուլնոս Այրեսի մէջ, թէ՛ այլուր, որովհետեւ այդ փողոցին մէջէն հայը միշտ յիշեց իր Նոր Երկիրը՝ Պատմական Չայաստանը: Յիշեցին անդին ան չզարդեցող զայն պահանջել: Եւ այս ալ յոյսին արգասիքն է. արդարեւ հարիւր տարիներ ետք հայը Նոյն այս յոյսին կանգնելով կը շարունակէ յիշել, բայց նաեւ պահանջել: Այս յոյսը հայուն կը շնորհէ իր ազգային ինքնութեան եւ պահանջատիրութեան նկատմամբ հպարտութիւնը, որ երբեք չի մոռցուիր, այլ կը պահպանուի ընդմիշտ:

«Չայկական Փողոց» Պուլնոս Այրեսի մէջ թէ՛ այլուր: Փողոց մը, որ հայուն կու տայ եւ պիտի շարունակէ տալ ապրելու կեանքը իր այս ինքնութեան եւ պահանջատիրութեան հպարտութեամբ: Եւ այս հպարտութեամբ է, որ հայը իր «Չայկական Փողոցը» պիտի հասցնէ հայկական Նոր Երկիր:



## «ՈՒՐԻՇ ԸՄՄԲՈՎ ԳՎՅԻՆ»

*«Ու երազի մէջ հրաման առնելով, որ նորէն Հերովդէսին չզառնան, ուրիշ ճամբով զացին իրենց կրկիբը»  
(Մատթեոս 2.12)*

Քրիստոսի ծնունդը Աստուածաշունչի մէջ ամենէն շատ ընթերցուած եւ գիտցուած պատմութիւններէն մէկն է: Բեթլեհեմի մտուրը, Դերովդէսը, հովիւներն ու հրեշտակին անոնց երեւնալը ու տակաւին արեւելքէն աստղը տեսած մոզերը եւ անոնց ճամբորդութիւնը: Ծնունդի պատմութիւնը՝ ներառելով նաեւ Աստուածաշունչի հատուածներուն ընթերցանութիւնը, անոնց բացատրութիւնը ու ընկալուիլը, կը մնան հիմնական:

Իսկ ընկալումը կախեալ է կարողացող անձին գործածած լեզուն ու տակաւին դաստիարակութիւնը եւ հաւաքականութեան ընկերակազմական ու պատմա-մշակութային տուեալներէն: Զոյ մշակոյթը կը ներկայացնէ, որպէս «ապրող սովորութիւն եւ վարժութիւն, ուր հաւաքականութիւններ կ'արտայայտեն իրենց համոզմունքները, որոնք առնչուած են իրենց ապրելակերպին հետ»:

Անհրաժեշտ է Աստուածաշունչի պատմութիւնները դնել ներկայ օրերու ապրուած իրականութեան մէջ: Պլուսք այսպէս կը կարեւորէ հատուածի մը բացատրութիւնը եւ ընկալումը. «Ոչ միայն անցեալին պատահած պատմական իրողականութեանը մէջ բայց նոյնքան նաեւ ներկայ օրերու ապրուած մշակութային տուեալներուն եւ գործունէրուն մէջ»:

Այս իմաստով արժէ վեր առնել Աստուածաշունչի Ծնունդի պատմութիւնը եւ անոր մէջէն մոզերուն ճամբորդութիւնը մեր ներկայ իրականութեան մէջ. «Վասնզի մենք արեւելքի մէջ անոր աստղը տեսանք ու եկանք անոր երկրպագութիւն ընելու» (Մատթեոս 2.2): Եւ յուշացաւ Դերովդէսի խոռովութիւնը. «Երբ Դերովդէս թագաւորը լսեց, խոռվեցաւ» (Մատթեոս 2.3): Ու տակաւին ամէն տեսակի հնարքները եւ խաբանատարական արարքները. «Դերովդէս ծածկաբար մոզերը վրանչեց ու ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ատենը» (Մատթեոս 2.7): Որովհետեւ նոյնքան իրական է նաեւ մեր կեանքերուն մէջ (յ)երեւցող բոլոր փորձութիւնները, որոնք կրնան ըլլալ հմայիչ: Բայց կար մոզերուն համոզմունքը եւ այդ համոզմունքին վճռականութիւնը, որուն արդիւնքը եղաւ ուրախութիւն. «Աստղը, որ արեւելքի մէջ տեսնէր էին, անոնց առջեւէն զնաց, կեցաւ մասուկին եղած տեղին

վրայ: Եւ երբ տեսան աստղը, շատ ուրախացան» (Մատթոս 2:9-10):

Եթէ մոզերը իրենց երկրպագութիւնը ըրին մանուկին, չուզեցին նորէն «Յերովդէսին դառնան» եւ որոշեցին «ուրիշ ճամբով երթալ իրենց երկիրը» (Մատթոս 2:12): Մոզերը վճռակամ էին: Ծամբայ ելած էին հետեւելով աստղին: Անոնք հասան հո՛ն, ուր աստղը վերստէ պիտի առաջնորդէ: Եւ աստղը Քրիստոսի շնորհած նոր կեանքի հասկացողութիւնն է: Այն նորը, որ կերտեց Քրիստոս. «Երբ որ ծնունդով եւ ապրած երկրային կեանքի ընթացքին ըննադատեց ինքը, իր մահուամբը խաչին վրայ քանդեց այն, որ ըննադատեց: Եւ որ Քրիստոսի յարութեամբը, հինի փոխարէն շինեց նորը» (Պրովկանս) Մոզերուն աստղին հետեւիլը պէտք է ներկայացնել այս նոր կեանքի հասնելու եւ գայն իւրացնելու հասկացողութեան մէջ:

Բայց աստղին հասնելու ճամբորդութեան մէջ կային խոչընդոտներ, մարտահրաւերներ ու տակաւին: Մոզերը դիմազրուացին այլ բոլորը ու հասան աստղին: Եւ աստղին՝ Մանուկին, իրենց հաւատարմագիրները յանձնելէ ետք անոնք վերադարձան տուն այլ ճամբով մը՝ փոխելով իրենց ուղղութիւնը: Որովհետեւ նորին գիտակցութեան մէջ կարելի չէ հինը ապրիլ: Ու տակաւին հինի սխալները պէտք է վերանայիլ՝ զանոնք չկրկնելու համար: Եւ այս բոլորին համար պէտք է այլ ուղղութիւն՝ ուրիշ ճամբայ:

Մոզերուն ճամբորդութիւնը իւրաքանչիւրիս կեանքի ուղեորութիւնն է, որպէս անհատ, ընտանիք եւ հաւաքականութիւն՝ կերտելու համար նորը: Եւ նորի գիտակցութեան մէջ անխուսափելի են արգելքները: Անհրաժեշտ է շրջանցել զանոնք: Որովհետեւ քրիստոնեական աստուածաբանական հիմքէն մեկնելով մեծ իրամայակամն է ստեղծել «փոխարինող հաւաքականութիւն մը, ուր կայ փոխարինող գիտակցութիւն, ուր հինը ամբողջութեամբ պիտի փոխարինուի նորով: Եւ ուր նորին մէջ կարելիութիւն պիտի ըլլայ ստեղծել նոր սկիզբ» (Պրովկանս): Եւ հին ճամբով կարելի չէ հինը փոխարինել նորով:

Եւ փոխարինող հաւաքականութիւնը կարելի է երբ կայ փոխարինուած անհատը: Որովհետեւ:

Աստուածաշունչի կերտած աստուածաբանութեան գերագոյն նպատակն է պատմութեան մէջ փոփոխութիւն յառաջացնել (Մուկամայի եւ Կայ): Այս իմաստով Աստուածաշունչի շնորհած նոր սկիզբը պէտք է տեսնել պատմութեան մէջ փոփոխութիւն յառաջացնելու մեկնակէտէն: Փոփոխութիւնը կը սկսի անհատէն եւ կ'անցնի հաւաքականութեան: Պլամբը կը նկատէ, թէ իւրաքանչիւր մարդ արարած ունի իր ինքնութիւնը եւ որեւէ փոփոխութիւն այդ ինքնութեան մէջ կը շինուի եւ ոչ թէ կ'արտադրուի: Այս իմաստով, որեւէ փոփոխութիւն

հաւաքականութեան մը կեանքին մէջ արդիւնք է իւրաքանչիւր մարդու հավազդեցութիւններուն, ուր նոր կեցուածքներ կ'որոշեցնուին անհատին կեանքին մէջ, որպէս արդիւնք այդ փոփոխութեան:

2015 տարին մտաւ պատմութեան եւ մեր իւրաքանչիւրին կեանքներուն արխիւին մէջ: Եթէ 2015 տարուայ մեր կեանքերուն մէջ իրականացուցինք շատ բաներ, կայ անհրաժեշտութիւնը շարունակելու կերտելու նորը: Իսկ նորին համար պէտք է նոր սկիզբ: Եւ նոր սկիզբին համար պէտք է նոր կեանքեր: Նոր, նորոգուած ու նորոգող վիճակներ, որոնք պիտի փոխեն հաւաքականութեան իրավիճակները եւ նոր սլացք պիտի տան պատմութեան յառաջխաղացքին:

Այս զգալի կերպով իրական է հայուն համար երբ 2015-ին Ցեղասպանութեան հարիւրամեակը եւ բոլոր միջոցառումները լեցուցն մեր կեանքերը: Եթէ ունեցանք յաջողութիւններ, բայց նաեւ մարտահրաւերներ ու երեւի արգելքներ: Բայց տակաւին երթը երկար է: Ու շատ բան կայ տակաւին ընելու եւ իրագործելու: Եւ շատ բաները յաջողցնելու համար պէտք է նոր սկիզբ:

101 ամեակ: Եւ հոն ալ կան ու պիտի ըլլան արգելքներ, որոնք անհրաժեշտ է շրջանցել: Եւ այս բոլորը պարտին փոխարինել նորին փոտակցութեան մէջ՝ նոր թափ տալու մեր անհատական, հաւաքական ու ազգային կեանքերուն: Եւ այս նորին գիտակցութեան մէջ եւ անոր համար պէտք է նայիլ աստղին ու նոյն աստղին լոյսով ընտրել ուրիշ ճամբայ: Ծամբայ, որ կը նորոգէ եւ կը վերանորոգէ մեզ իւրաքանչիւրս, որպէս անհատ: Ծամբայ, որ մեզ բոլորս, որպէս նոր ու փոխուած անհատներէ բաղկացած հաւաքականութիւն, կը տանի երկիր:

Եթէ երկիրը մեր այս աշխարհի մէջ ապրած կեանքն է, բայց նաեւ այն, որ կը տանի մեզ դէպի ապագան ու տակաւին յաւիտեականութիւն: Մոզերը հետեւեցան աստղին: Ու այդ աստղին լոյսով կերտեցին նոր ճամբայ:

Ծամբայ մը, որ փոխեց կեանքերը, որ տարաւ զիրենց դէպի երկիր: Ու եթէ պիտի տանիք հայուն կեանքը երկիր՝ հորիզոնին վրայ վարդան օրուան տեսլականով, անհրաժեշտ է հաւատալ, կերտել, բայց նաեւ քալել նոր եւ միշտ նորոգուող ու նորոգող ուրիշ ճամբով, որուն լոյսը կու գայ աստղէն:

Եւ այս 2016-ին համար ու տակաւին անդին:

## 2016 ԾԱՌ-ԱՅՈՒԹ-ԵՆՆ ՏԱՐԻ՝ ԾԱՌ-ԱՅՈՒԹ-ԻՆԸ ԶՐԻՍՏՈՆՆԵԱԿԱՆ ԱՍՏՈՒԲԾԱԲԱՆՈՒԹ-ԵՆՆ ԴՐԻՍՄԱԿԷՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը 2016 տարին հռչակեց Ծառայութեան Տարի: Ան ծառայութիւնը նկատելով «մարդկային կեանքին ամենէն բարձր արժէքներէն», ինչպէս նաեւ «խորունկ նշանակութիւն» ունեցող իրականութիւն: Ծառայութեան խորութիւնը՝ գեթ քրիստոնեական աստուածաբանութեան պրիսմակէն մեկնելով, կը բացատրուի այն իրականութեամբ, որ մարդ եակին կու տայ ինքնութիւն եւ անոր հետ ապրելու հիմք. այս խորունկ է տեսական եւ գործնական իրավիճակներու մէջէն:

Քրիստոնեական աստուածաբանութեան հիմքը ծառայութիւնն է՝ մեկնելով իր ընդհանրական հասկացողութենէն: Այս կը ներառէ նաեւ քրիստոնեական եութեան յատկանիշ-տեսութիւնը, որ հիմնուած է նոյնիքն Քրիստոսի սիրոյն վրայ, որովհետեւ այս սերը ստեղծեց գերագոյն նպատակ մը. «Մարդուն մէջ աստուածային պատկերը վերականգնել» (Արամ Ա. վեհափառ):

Ուստի այս նպատակը իրականացնելու համար կար նաեւ անոր շարժուն գործընթացը՝ Աստուծոյ մարդեղութիւնը Քրիստոսի միջոցով: Երբ Աստուծոյ այս սերը մղեց Չիկը, որ մարդանայ եւ աշխարհ գայ. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին դրկեց» (Յովհաննու 3.16): Աստուծոյ մարդեղութիւնը ունէր մէկ հիմնական եւ գործնական անաջելութիւն. «Իր փրկութեան ճամբով մարդը դէպի Աստուած առաջնորդել» (Արամ Ա. վեհափառ): «Որպէսզի ով որ Անոր հաւատայ չկորսուի հապա յախտեալ կան կեանք ունենայ» (Յովհաննու 3.16):

Ասկէ մեկնած պէտք է վեր առնել փրկութեան ճամբան եւ Աստուծոյ առաջնորդութեան գործընթացները, որոնք իրականացան ու տակաւին կը շարունակուին քրիստոնեական հիմքով ծառայութեան հասկացողութիւնը: Յատկանշականութեան հասկացողութիւնը կը ներառէ իւրաքանչիւր անհատի երկրային ծառայութեան կեանքը եւ կը շարունակուի երկնային կեանքի հասկացողութեանը մէջ:

Ծառայութիւնը խորունկ նշանակութիւն ունի, որովհետեւ ինքնանպատակ եւ աննպատակ չէ, այլ ծառայութիւն մըն է, որ հիմնուորած է մարդը ու մարդուն միջոցով հաւաքականութիւնը փոխելու իրականութեամբ: Հոս առկայ է ճշմարտացիութիւնը, թէ, ըստ Մուկամպի եւ Կայի, քրիստոնեական աստուածաբանութեան գլխաւոր

նկատակը մարդկային պատմութիւնը փոխելն է: Քրիստոս ինքնապէս փոփոխութեան գործընթացը՝ իր աշակերտները փոխելով, նաեւ իւրաքանչիւր անձ, որուն հանդիպեցաւ (Մուկամպէ եւ Կայ): Ուրեմն այս իրականութեան մէջ է նաեւ այն, որ քրիստոնեայ եկեղեցիին գլխաւոր պարտականութիւնն է փոխել պատմութիւնը՝ փոխելով նախ մարդը:

Քրիստոնեական աստուածաբանութեան հիմքը ծառայութիւնն է, բայց ծառայութիւն մը, որ կը փոխէ եւ կը փոխարինէ հինը նորով, որ նաեւ կը ձգտի Աստուծոյ պատկերին նմանի: Աստուծոյ պատկերը բարի է. «Սկիզբէն Աստուած երկիւնք ու երկիրը ստեղծեց... մեր պատկերին ու նմանութեանը պէս մարդ ընենք... Աստուած տեսաւ, որ բարի մն» (Մենդոց 1.1, 26, 31): Աստուած, որ ստեղծագործն է եւ իր ստեղծածը իր պատկերին պէս է՝ բարին է: Այս իմաստով մարդը՝ Աստուծոյ պատկերը, իր մէջ կը դառնայ նոյնպէս ստեղծագործող: Եւ մարդը Աստուծոյ այս պատկերով ինքն ալ կը ստեղծէ բարին, նորը՝ նորոգող եւ նորոգուող իրականութիւնները, ծառայութեան կեանքին մէջէն:

Այս փոփոխութեան գործընթացը պտեղ չէ դիտել եւ վեր առնել փրկան կրօնական-հոգեւոր դիտանկիւնէն: Ատիկա փոփոխութիւն մըն է, որ կը ներառէ հաւաքական կեանքը իր ամբողջական իրավիճակին մէջ: Ճնշւած կը բացատրէ. «Քրիստոնեական աստուածաբանութիւնը պէտք է հասկնայ հաւաքականութիւնը իր ամբողջական տարագումին մէջ եւ վեր առնէ անոր բոլոր հիմնահարցերը»:

Մուկամպէ եւ Կայ կը հաւաստիացնեն, որ քրիստոնեական աստուածաբանութեան յառաջացուցած փոփոխութիւնը պտեղ չէ անջատ հաւաքականութիւնը իր մշակութային եւ ազգային ժառանգել, այլ պտեղ է զօրացնէ անելով: Եւ հոսկ պտեղ է տանել քրիստոնեային եւ եկեղեցիին մասնակցութիւնը աշխարհի մէջ: Մասնակցութիւն մը, որ իւրայատուկ է, որովհետեւ «Քրիստոնեան եւ քրիստոնեայ եկեղեցին կը մտնեն աշխարհի մէջ, բայց աշխարհին պէս չեն ըլլար» (Կեր. Յովհաննէս Ա՛ղարոնեան): Իւրայատուկութիւնը կը կայանայ հոն, ուր իր մասնակցութիւնը աշխարհին մէջ կը ստեղծէ ծառայութեան կեանք մը, որ կը փոխէ եւ կը նորոգէ բարիին գիտակցութեամբ եւ Անոր պատկերին նմանութեամբ:

Այս իրականութեան մէջէն է նաեւ, որ անելիով պտեղ է կարելորել վեհափառ հայրապետին Ծառայութեան տարուան կոչը մեր հայկական իրականութեան մէջ եւ անոր համար: Ծառայութիւնը եթէ մէկ կողմէ պիտի դիտենք որպէս փոխող ու փոխուող ու նորոգող ու նորոգող գործընթաց մեր ազգային եւ մշակութային կեանքերուն մէջ, բայց նոյնքան նաեւ մեր հայկական արժէքները ամրապնդող եւ տեսականացնող:



Ծառայութիւնը «բարոյական պարտաւորութիւն է, հրամայական անհրաժեշտութիւն եւ անսակարկելի արարք» (Արամ Ա. վեհափառ) Անհրաժեշտ է, որ այդ դառնայ դաստիարակութիւն եւ զգաստութեան հրաւիրող իրականութիւն: Դաստիարակութիւն մը, որ կրկալ կոփել մեր կեանքերը զգաստութեամբ: Դրուկման այսպէս կը բացատրէ. «Եթէ այս Աստուծոյ աշխարհն է, եւ սերը անոր մղիչ ուժը, ուրեմն մեր իւրաքանչիւրին պարտականութիւնը ապահով կեանքով ապրիլ չէ, այլ ձերբազատիլ վախեն եւ մխրճուիլ կեանքի մէջ եւ գործնական ու շօշափելի արարքներ գործադրել»:

Մեր աշխատանքները եւ գործանութիւնները պէտք է ստեղծեն ծառայութեան կեանք մը՝ բարիին պատկերով, որ կը փոխէ անհատը, հաւաքականութիւնը եւ անոր պատմութիւնը:

Ծառայութեան Տարի: Փոխող ու փոխուող եւ տակաւին նոր գուռ ու նորագոյ իրականութիւն: Եւ, որպէս հայ քրիստոնեայ, արժէ կառչիլ անոր:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶՈՎ ԴԱՀՈՒՄԾ

*«Ասանգի դոք մեռաք ու չեք կեանքը պահում  
է Աստուծոյ թով Քրիստոսին հետ»:*

*(Կողոսացիս 3.3)*

Մեռած եւ մեծցած ու տակաւին արաբական աշխարհի մէջ ապրելով եւ գործելով, ստացած եմ տարածաշրջանի ընկերա-մշակութային եւ պատմա-քաղաքական իրավիճակներու ազդեցութիւնը եւ դրոշմը: Եւ այս անխուսափելի իրականութիւն է, որեւէ անհատի համար, որ կ'ապրի իր միջավայրին եւ անոր տուեալներուն հետ:

Արաբական աշխարհի պատմա-քաղաքական երեւոյթներուն եւ հոլովոյթներուն ու ընկերային շրջանակի դաստիարակութեան մէջ կարեւոր հետքը եւ դրոշմը ունեցած է Արաբ-Իսրայէլեան հակամարտութիւնը, որ առկայ է մինչեւ այսօր: Այս իմաստով Աստուածաշունչի 3ին Կտակարանի ընկալումը յատկապէս միջին արեւելեան տարածաշրջանի մէջ եղած է խնդրալարոյց: Թէ հրեայ ժողովուրդը Աստուծոյ ընտրեալն է ու տակաւին Եհովան, որպէս հրեաներու Աստուածը ու մինչեւ խոստացեալ երկիրը: 3արցրէ են, որոնք ստեղծած են այնպիսի դիրքորոշում մը, որ կարծես առանձնացուցած են 3ին Կտակարանը Աստուածաշունչի ամբողջական գիրքի հասկացողութենէ:

Բայց ժամանակին ու աստուածաբանական եւ աստուածաշնչական սերտողութիւններու եւ ուսուցումներու մէջէն պիտի տեսնէի, թէ իրականութիւնը տարբեր է: Այս իրականութիւնը պիտի օգնէր ընկալելու, բայց նաեւ դիտարկելու Աստուածաշունչը, որպէս մէկ ամբողջական գիրք: Այս մէկ ամբողջութեան մէջէն պէտք է, որ կարենայի տեսնել, թէ 3ին Կտակարանը կը պատրաստէ նորը: Ու 3ին Կտակարանի Եհովան ուրիշը չէ եթէ ոչ նորին Աստուածը: Եւ պիտի հասներ մինչեւ հրեայ ժողովուրդը եւ ոչ անպայմանօրէն կամբջելու զայն ներկայ օրերու Իսրայէլի հետ:

Իսկ խոստացեալ երկիրը՝ Արդէն ուրիշ պարունակ է:

Այս ներածականի մէջէն պէտք է նաեւ մեկնարկել Աստուածաշունչի պատգամներու ընկալումը՝ կամբջելով 3ին Կտակարանը, որպէս պատրաստութիւն եւ հիմք (իմմա՝ խոստում) իրագործուած տեսնելու համար նորին մէջ: Որպէս օրինակ արժէ մեկ-մէկ կամբջել ժողովուրդին Սաղմոսին հետ, եւ հասնելով Դուկասի Աւետարանին միկնել Կողոսացիներուն նամակները:

Պրովանան՝ Ամերիկայի ժամանակակից աստուածաբաններին, Հին Կտակարանը կը նկատէ որպէս յոյսի գիրք: Յոյսը, որ կը մարմնաւորուի Զրիստոսի մէջ, որ պիտի ամբողջացնէ Եհովային խոստումը: Հոն, ուր յուսախաբութիւնը կը վերածուի գոհացումի, որ անհատը կը դնէ անոր գոհացումին հասնելու հետազօտական կեանքի ճամբորդութեան մը մէջէն: Պրովանան այս տրամաբանութեամբ կու գտնուի կամբոյժ Իսրայէլացի ժողովուրդին ելքը Եգիպտոսէն եւ անոնց քառասուն տարիներու ճամբորդութիւնը, որպէս հետազօտութեան յուսահատութեան մէջէն գտնելու եւ հասնելու համար գոհացումին:

Այս գոհացումի իրականութիւնը կ'իրականանայ Զրիստոսով, որ Եհովային խոստումը՝ յոյսը, կ'իրագործէ երբ Ան խաչին վրայ կը մահանայ, բայց Իր յարութեամբ նորը կը շինէ մարդուն եւ աշխարհին համար: Զրիստոսի չարչարանքը եւ մահը կը դառնան մարդուն համար գերագոյն ելք, ուր մարդը, թէեւ կը տագնապի կեանքին մէջ, բայց կը տեսնէ Զրիստոսի շնորհած նորին յոյսը: Այս նորին յոյսը պարզէ է, որ կը տրուի մարդուն:

Սողոմոն Իմաստուն տեսաւ, թէ աշխարհը ունայնութիւն ունայնութեանց է եւ թէ ամէն բան ունայնութիւն է (Ժողովուրդի 1.2): Ասողոմոսը հաստատեց Սողոմոնին միտքը՝ զգաստութեան իրաւորելով մարդիկ. «մարդը պատուոյ մէջ չի մնար, անասուններուն նման, որոնք կը կորսուին» (Սաղմոս 49.12): Բայց չուշանար նաեւ նոյնիսկ Սողոմոնի տեսած յոյսը. «Ուստի տեսայ, թէ իմաստութիւնը անմտութեանն օգտակար է. ինչպէս լոյսը խաւարէն օգտակար է» (Ժողովուրդի 2.13):

Եւ կայ հարցումը: Ո՞ր է ինչպէ՞ս պիտի տեսնեք եւ գտնեք այս իմաստութիւնը: Պատասխանը կու գայ Նոր Կտակարանին մէջէն:

Զրիստոսի անմիտ հարուստին առակը դիպուկ է: Հարուստը վստահեցաւ իր բերքերը ժողվելու ու իր ամբարները քակելու եւ անլի մեծը շինելու (Ղուկաս 12.18): Եւ չուշանար Զրիստոսի զգուշացումը. «Անմիտ, այս զիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի» (Ղուկաս 12.20): Բայց կայ Զրիստոսի փոխարինող խոստումը. «Աստուծով հարստանալու եւ ոչ թէ ինք իր անծովը» (Ղուկաս 12.21):

Մարդը ինք իր անծովը, հարստութեամբը, իմացականութեամբը իմաստութեամբը ու տակաւին: Եթէ անիրաժեշտ են այս քոյր մարդկային կարողականութիւնները եւ պէտք բայց պէտք է աստուածայինը, որ մարդը պիտի հասցնէ գոհացումի: Եւ այս կարելի է երբ մարդուն կեանքը պահուած ըլլայ Աստուծոյ ջով:

Հին յոյները ունէին մշակութային-դիցաբանական հասկացողութիւն մը: Երբ մարդը մահանար, անոնք կը խօսէին մահացողին մասին որպէս պահուած աշխարհի մէջ: Պօղոս Առաքեալ այս մշակութային հայեցակէտին մէջէն կը փորձէ դուրս հանել, բայց նաեւ կարծիք

չկ' Զրիստոսով մարդուն հին կեանքին մահանալը: Թէ Զրիստոսի խաչելութիւնը եւ յարութիւնը մարդուն կը շնորհեն նոր կեանք մը. «Հին մարդը իր գործերով ձեր վրայէն հանեցէք» (Կողոսացիս 3.9): Եւ մարդը նոր դառնալով կը պահուըտի Աստուծոյ ջով Զրիստոսի հետ: Եւ այս պահուըտուը մարդուն կու տայ ինքնութիւն եւ նկարագիր եւ անոր կեանքի դիմագիծը ու նկարագիրը կ'ըլլայ Զրիստոս: Եւ ան՝ մարդը, կ'ապրի այս աշխարհի մէջ Զրիստոսով, ուր Զրիստոս կը դառնայ նոյն այս մարդուն նկարագիրը: Եւ այս նկարագրով է, որ մարդը կ'երթայ իր յաւիտենականութեանը:

Սողոմոն ընկրմած էր ունայնութեան եւ յուսահատութեան մէջ, ինչ որ մարդը անասունի նման կը կորսուի: Բայց կայ իմաստութեան յոյսը: Եւ այս իմաստութեան յոյսի խոստումը կ'իրականանայ նոր մարդ կը հարստանայ Զրիստոսով: Հոն երբ մարդը կը պահուըտի Աստուծոյ ջով եւ Զրիստոսի հետ կը շարունակէ իր կեանքը:

Եւ Աստուածաշունչի Հին Կտակարանի յոյսը՝ խոստումը, կը դառնայ իրական Նոր Կտակարանի մէջ, ուր մարդ յուսահատութենէն կը հասնի գոհացումի, քանի պահուըտած կ'ըլլայ Աստուծոյ ջով Զրիստոսի հետ:

## «ԱՐՉԱԳԱՆԳ»-Ի ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԿ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՌԱՋԵԼՈՒԹԻՒՆԸ

2005 տարուան Օգոստոս ամսուն էր երբ աշխատանքային նստաշրջան վայրս փոխարուեցաւ Լիկոսիս, Կիպրոս: Եւ նկատի ունենալով որ ընտանիքս ու ես միշտ ալ հետամուտ եղած ենք մեր կեանքերուն տալ ազգային, եկեղեցական եւ ընկերային հետաքրքրութիւն եւ մասնակցութիւն, շատ չուշացաւ գաղութին մէջ ծանօթութիւն եւ կարգապահ հաստատելը այս ուղղութիւններով:

Տուն, դպրոց ու աշխատանքային մթնոլորտներու ընտենալէ ետք կիպրահայ եկեղեցական, կրթական ու միութենական կեանքերուն մէջ ընդգրկուիլը եկաւ լիցքաւորելու մեր ընկերային ու հասարակական օրերը: Եւ հոս իր տեղը գտաւ մամուլը՝ տպագիր ու թուային: Գած: Եթէ կար «Արծազանգ»ը եւ «Ազատ Ձայն»ը, բայց նաեւ «Կիպրահայեր»ը ու վերջին շրջաններուն «Ազատ Սօսք»ը, որպէս առաջին մամուլ: Եւ որովհետեւ հրապարակագրական գործը ինծի համար միշտ ալ եղած է կարեւոր, սկսայ արժեւորել մամուլին ու անոր առաքելութեան կարեւորութիւնը կիպրահայ կեանքին մէջ:

Բայց նախ արժէ բանալ փակագիծ մը:

Կը հաւատամ ժողովուրդի ու հաւաքականութեան մը համապարփակ մշակոյթ հասկացողութեան, որպէս հիմք եւ գրաւական ժողովուրդին ու հաւաքականութեան գոյապայքարին համար: Եթէ ժողովուրդի ու հաւաքականութեան կեանքերուն մէջ կայ պատմութիւն եւ անոր փորձը, բայց նաեւ յուշը եւ այդ յուշին վերապրումը եւ ի պահանջեալ պարագային իրաւական պահանջատիրութիւնը: Եւ կարելի չէ չ'ընտարել համապարփակ մշակոյթի հասկացողութեան մէջ կրօնական-քրիստոնէական դաստիարակութիւնը, գրականութիւնը, երգը, պրոլետարը, որպէս կարեւոր փաղաքրիչ մասնիկները, որ միասին պիտի տան հաւաքականութեան իր ապրելու կենցաղը: Եւ այս կենցաղը ժողովուրդին ու հաւաքականութեան պիտի տան իր խրոյսատուկ ինքնութիւնը, որ համապարփակ ու ամբողջական է իր դրուածքով եւ որ կը դառնայ մշակոյթ:

Եւ ժողովուրդներ ու հաւաքականութիւններ կը տգնին պահելու եւ զարգացնելու իրենց այս համապարփակ մշակոյթը: Եւ մշակոյթը համապարփակ է, որովհետեւ իր մէջ ունի պատմա-քաղաքական, կրօնական եւ ընկերային կենցաղ: Անհատը եւ հաւաքականութիւնը կը ժառանգեն գաւառը եւ կ'ապրին այս իրավիճակին մէջէն ու կը տգնին պահել ու զարգացնել նոյնը պատմութեան հովովոյթներուն մէջէն:

Եթէ այս համապարփակ մշակոյթը եւ ինքնութիւնը պահելու համար անհրաժեշտ են, ընտանիքը բայց նաեւ եկեղեցին, դպրոցը, կուսակցական, միութենական ու բարեսիրական կազմակերպութիւնները ու տակաւին մամուլը: Զայն եւ մասնաւորաբար սփիւռքահայը Յիղասպանութենէն եւ տեղահանութենէն ետք իր գոյապայքարը եւ մէկ կողմէ եղաւ իր ֆիզիքական ապահովութիւնը նոյնքան նաեւ եղաւ իր համապարփակ մշակոյթը պահելու հսկայ առաքելութիւնը սփիւռքի մէջ:

Եւ հայկական սփիւռքը արժէ տեսնել եւ արժեւորել վերապրելու այս հրամայականին մէջէն: Եւ վերապրիլը եթէ ֆիզիքական էր, բայց նաեւ հոգեմտաւոր: Եւ հայը իր հողէն ու հայրենիքէն արմատախիլ եղած՝ կառչեցաւ երկրորդ հայրենիք(ներ) ստեղծելու տեսլականին աշխարհով մէկտեղ: Եւ այս երկրորդ հայրենիք(ներ) ստեղծելու պիտի որ հրամայականը եղաւ պահել համապարփակ մշակոյթը եւ համապարփակ միջոցառումներով: Եւ այս իրականութեան մէջէն է, որ պիտի տեսնել, թէ ինչո՞ւ համար հայուն կեանք(եր)ը պահելու համար նոյնքան կարեւոր է մէկ կողմէ ընտանիքը եւ անոր դաստիարակութիւնը, բայց նաեւ եկեղեցի-դպրոց-ակումբ-բարեսիրական ու մշակութային միութիւններ ու նաեւ մամուլ: Այս բոլոր միջոցառումները հասնելու համար մէկին՝ ամբողջական եւ համապարփակ մշակոյթին պահպանումին ի խնդիր:

Այս հասկացողութեամբ համապարփակ մշակոյթը հայուն համար դարձած է գաղափարախօսութիւն:

Չայն Ցեղասպանութենէն ետք որոշեց ապրիլ: Եւ այս ընտրանքը կը պահանջէր հայէն, որ ան մշակէր դիրք՝ գաղափարախօսութիւն: Եւ հայը իր ապրելու ընտրանքի գաղափարախօսութիւնը եթէ մշակեց, բայց անոր մէջ նեռարեց «ազգային հաւատարմութիւն, պատկանելիութիւն եւ վստահութիւն, մշակութային վերապրում, լեզուական հաւատարմութիւն եւ պատմական շարունակականութիւն» (Ռոկո. Արտա Ճեպեճեան, 2007): Զարմ (1998) այս երեւոյթին ու գաղափարախօսութեան տուն տուող միջն ուժը կը վերագրէ օտար պիտիւր վրայ լեզուական փոքրամասնութիւններու զօրակր կամփին, հաւատքին եւ ազգային ու մշակութային հաւատարմութեան եւ արժեւորելուն:

Չայն իր ապրելու գաղափարախօսութեան մէջ դրաւ իր ամբողջ կամքը եւ հաւատքը: Ահա, թէ ինչո՞ւ հայ մամուլը, եկեղեցիին, դպրոցին եւ ազգային այլ հաստատութիւններուն կողքին, դարձաւ անհրաժեշտ հայուն կեանքին համար:

Այս բոլորը հայուն համապարփակ մշակոյթը պիտի պահէին ու դիմէին գայն շարունակականութեան օղակին մէջ:

Եւ կիպրահայ իրականութեան մէջ ալ «Արծազանգ»ի երեսուն եւ հինգ տարիներու առաքելութիւնը պիտի դիտել այս տեսողանքներէ: Հայուն՝ կիպրահայուն, համապարփակ մշակոյթը պահելու անհրաժեշտութիւնը:

«Արծազանգ»ի երեսուն եւ հինգ տարիներու կեանքը՝ թելուզ տակաւին երիտասարդ, ցոյց կուտայ, թէ ան հայուն կեանքէն յուսանալի տած չէ: Տակաւին կառչած է հայուն ինքնութիւնը եւ մշակոյթը պահելու եւ պաշտպանելու վեհ առաքելութեան: Եթէ «Արծազանգ» մտայազնծումն էր խումբ մը երիտասարդ նուիրեալներու, որպէս երիտասարդական մամուլ, եւ կը շարունակուի մինչեւ այսօր երիտասարդ հոգիով եւ ներշնչումով: Եւ այս երիտասարդ հոգին եւ ներշնչումը անհրաժեշտ է, որ միշտ երիտասարդ պահուի, որովհետեւ հայուն կեանքին համար կան անհատական ու հաւաքական առաքելութիւններ, որոնք չեն կրնար «ծերանալ»: Առաջնահերթութիւններ, որոնք հայուն կեանքը պիտի լիցքաւորեն:

Իսկ լիցքաւորումը՝ «Մշակութային եւ լեզուական ապահովութիւն, մայրենի լեզուի առաջնահերթութիւն, մայրենի լեզուի հարստութեամբ հպարտացում, կենցաղի եւ ապրելակերպի տօնամբում, գաղութային մտահոգութիւններու ամպիոն, ընկերա-տնտեսական հարցերու վերլուծում եւ լուծում, Մայր Հայրենիքի հետ հարողակցութիւն, պատմութիւնը յիշելու եւ պահանջելու միջոց, ընկերա-բարոյական եւ կրօնական արժեքներու փոխանցման արգիւտ» (Դոկտ. Արտա Ճեպճեան, 2007):

Եթէ այս առաջնահերթութիւնները կը լիցքաւորեն հայուն համապարփակ մշակոյթը, բայց նաեւ իւրաքանչիւր ազգային օղակ, որ կը միտի նոյնը հասցնելու եւ դնելու զայն շարունակականութեանը գործընթացքին մէջ: Եւ այս իմաստով «Արծազանգ» իր կարելոր բաժինը բերաւ երեսուն եւ հինգ տարիներու իր երիտասարդ կեանքին միջէն հայուն՝ կիպրահայուն, իր համապարփակ մշակոյթին գիտակցութեանը եւ իւրացումին համար:

Բայց կայ ներկայ օրերու հրամայականները:

«Արծազանգ»ը կիպրահայ իրականութեան մեծ խճանկարին մէջ մէկ օղակ է: Երեւի կարելոր բայց կան տակաւին մնացեալ եւ իւրաքանչիւր միւս օղակները: Եւ այդ օղակներուն մէջ կայ իւրաքանչիւր հայը եւ կիպրահայը: Եւ անոր՝ իւրաքանչիւրին գիտակցութիւնը, թէ հայը պիտի ապրի իր համապարփակ մշակոյթի միջոցաւ եւ անոր համար:

Եւ «Արծազանգ»ի երեսուն եւ հինգ տարիներու ամենակ նաեւ ան կիւնադարձ է: Յիշելու, պահելու բայց նաեւ պահանջելու, թէ հայը կ'ապրի այս մշակոյթի հասկացողութեամբ եւ անոր մէջէն: Եւ թէ իւ-

րաքանչիւր հայ պարտի յիշել, պահել եւ պահանջել այս մշակոյթը եւ անոր իւրաքանչիւր կոռուանք:

«Արծազանգ»ը այդ կոռուանքներն մէկն է, որ պետք է պահել: Պահելու համար հայուն մշակոյթը:

Եթէ շնորհակալութիւն «Արծազանգ»ը կերտողներուն եւ պահողներուն եւ մինչեւ օրս, բայց նաեւ բարի երթ յաջորդող ամեակներու համար:

«Արծազանգ»ի երեսուն եւ հինգ տարիներու առաքելութիւնը: Առաքելութիւնը կ'իմաստաւորուի երբ կայ Արժեքի գիտակցութիւնը: Եւ «Արծազանգ» կը գտնուի այս Արժեքի գիտակցութեանը մէջ:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՒՄՆ

«Եօթանասուն եւ մէկ տարիներ առաջ երկինքէն տեղաց մահը եւ աշխարհի փոխուեցաւ»: Միացեալ Նահանգներու Նախագահ Պարուզ Օպամայի մէկ ականարկը Ճափոնի մէջ Գորոշիմա քաղաքի յուշանշան թողին առջեւ Մայիս 2016-ին: Հոն, երբ 1945-ին հիւլէական ռումբ արձակումը պատճառեց հազարաւոր զոհեր ու քանդեց քաղաքը:

«Եթէ ներկայ ճարտարարուեստի յառաջխաղացքին զուգահեռ չգարգանայ մարդկային հեղինակութիւնը, ապա ան կրնայ աղետալի վիճակներու հասցնել աշխարհը», շարունակեց Նախագահը եւ այս դիտանկիւնէն մեկնելով ան ընդգծեց ճարտարարուեստի յառաջխաղացքին կողքին բարոյական յեղափոխութեան մը զարկ տալու կարեւորութիւնը:

Գլխաւոր հարցումը սակայն կը մնայ հետեւեալը. «Ինչպիսի՞ բարոյական յեղափոխութեան մը կ'ականարկէ պրն. Նախագահը»:

Եթէ ԱՄՆ-երու Նախագահին ճափոն այցելութիւնը լեցուն էր անկալութիւններով, թէ ան ներում պիտի հայցէ Եօթանասուն եւ մէկ տարի առաջ պատահած դէպքին համար, ապա այդ մէկը չիրականացաւ: Նախագահը բաւարարուեցաւ ըսելով. «Պետք է քաջութիւն ունենանք դուրս գալու վախի տրամաբանութենէն եւ ստեղծելու վախ՛ չէ զուրկ աշխարհի համակարգ մը»:

«Ժամանակն է Նախաձեռնելու եւ անհրաժեշտ է ճիշդ որոշումներ տալու մեր կեանքերուն յառաջխաղացքին համար», ըսաւ Գերմանացի գործակիցս Հորսթ Շտրենպարանտ: Պերլինի մէջ Յունիս 2016-ի երբ Գերմանիոյ մեր գրասենեակի գործակիցներու շնորհակալութիւն կը յայտնէի Պոլստեսթակի պատմական որոշումին համար: Բայց շնորհակալական այդ խօսքին դիմաց կար անոնց վճռականութիւնը Նախաձեռնելու եւ ճիշդ որոշումներ տալու անհրաժեշտութիւնը:

Պոլստեսթակի պատմական այդ մեծ շէնքին դիմաց կանգ առաւ կը մտածէի եւ յանկարծ սկսայ մտաբերել այն շատ մը հայկական եւ այլ տեղեկատուական ցանցերու վերլուծումները որոշումին անոյութեամբ: Թէ ինչո՞ւ պետք էր, որ Գերմանիան հարիւր եւ մէկ տարի սպասէր այս որոշումը տալու համար: Ու տակաւին վերլուծումներուն մէջ չէր պակսեր հաշիւի գործոնը: Վերջապէս, հայուն սեւ այլիքուն համար չէր, որ տրուած էր այս որոշումը, որովհետեւ Գերմանիան Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին, իբրեւ Թուրքիոյ դաշնակից երկիր, նաեւ մեղակից է հայոց Ցեղասպանութեան եւ պետք է հատուցէ: Վերլուծումներու շարքը երկար է:



«Եթէ մենք՝ ամերիկացի հրեաներս, միայն կեդրոնանանք մեր ողբերգութեան վրայ եւ ջատագովը ըլլանք խօսելու այլ ցեղասպանութիւններու մասին, ինչպէս Զամպուտիոյ, թուօցիներու, եգիպտիներու եւ ուրիշներու, ապա մենք անգիտացած կ'ըլլանք մեր առաքելութեան մէջ կարեւոր բարոյական պարտականութիւն մը, թէ մենք կոչուած ենք վերաշինելու աշխարհը», ըսաւ ամերիկացի-հրեայ եւ Ֆիլադելֆիոյ Նահանգապետ Ճիմ Զեյնի, որ կը խօսէր հրեական Ողջակողմի յիշատակին կառուցուելից հանրային հսկայ պարտեզի մը հիմնարկէին առթիւ Մայիսի 2016-ին: Բայց Նահանգապետը երեւի յիշեցնելու տրամադրութեամբ շեշտեց. «Նման յուշակոթողներ պետք է ծառայեն իբրեւ ապրող վկայութիւններ, թէ այլեւս երբեք պետք չէ արտօսել, որ հրեայ ժողովուրդը սպանալիքի ենթարկուի եւ կամ սպաննուի»:

Եթէ տեղին եւ յոյժ կարեւոր մարտահրաւեր մըն է Նահանգապետին յորդորը՝ ուղղուած մարդկային քաղաքակրթութեան, սակայն կայ բաց մը: Զաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ հայոց Ցեղասպանութիւնը: Բայց արդեօք հայոց Ցեղասպանութիւնը պիտի դասնե՞ք Նահանգապետին մատնանշած ուրիշներու շարքին: Ցեղասպանութիւն մը, որ եթէ իր ճիշդ ժամանակին ճանչուեր, կրնար



կանխել շատ մը նման դժբախտություններ, որոնք գործարդուներն են ցարդ կը կրկնուին: Իսկ չարտօսելու պարագային, անիկա ոչ թէ միայն մէկ ժողովուրդի մը պէտք է վերաբերի այլ համայն մարդկութեան:

Պունտսթափէն հեռանալով ուղղուեցայ տեսնելու Պերլիսի մէջ հրեական Ողջակիզումի յատուկ յուշակոթողը եւ թանգարանը: Յուշակոթողը, այսպէս ըսած, արդիական ոճով ճարտարապետական մտայղացում մըն է, որ կը ներկայացնէ գերեզմանանման տապանաբարեր: Պէտք էր փորձել ընկալել ճարտարապետական այս մտայղացումի միտք բանին, թէ հրեական Ողջակիզումը սարսափելի էր ոչ սահմոկեցուցիչ, բայց գէթ հրեայ նահատակները կը հանգչին որովհետեւ Գերմանիան եւ աշխարհը ճանչցած էր զանոնք: Բայց ո՞րը եւ ինչպէ՞ս են հայոց տապանաբարերը, ե՞րբ է, որ մեր նահատակները պիտի հանգչին: Յապա մենք՝ վերապրողներս, արդեօր պիտի կարենա՞նք հանգչիլ:

Գեղեցիկ է Պերլիս քաղաքը: Կը վայելէմ այս քաղաքին գեղեցկութիւնը՝ անոր ընդմէջէն տեսնելով Պունտսթափի պատմական որոշումին գեղեցկութիւնը: Սակայն երեւի ներաշխարհիս մէջ պէտք է կամրջել եւ անոր հետ հաշտեցնել նախագահին բարոյական յեղափոխութիւնը եւ նահանգապետին աշխարհը վերաշինելու մարտահրաւեր-առաքելութիւնը:

Բարոյական յեղափոխութեան յառաջացումը կ'ենթադրէ ունենալ

որոշ հիմքեր, այդ հիմքերուն տուն տուող արժէքներ, որոնք իրենց նորոգիս կ'ենթադրեն անցեալի անդրադարձ եւ արժեւորում, ինչպէս նաեւ անցեալին գործուած սխալներու համար զղջում:

Իսկ աշխարհը վերաշինելու համար կարեւոր է հասկնալ, թէ աշխարհի հաւաքականութիւնները այլազան են եւ, թէ անհրաժեշտ է ընդունիլ ուրիշը, որ տարբեր է: Պէտք է տեսնել եւ յարգել այդ տարբերութիւնները:

Եւ Պերլիս քաղաքի գեղեցկութեան մէջէն սկսայ կամաց-կամաց տեսնել Պունտսթափի որոշումին գեղեցկութիւնը: Այդ օրը Պերլիսի մէջ մէկի դրի քաղաքական հաշուանկները, որպէսզի կարենայի տեսնել եւ ըմբռնել այդ որոշումին գեղեցկութիւնը:

Պունտսթափի որոշումը լաւ քայլ մըն էր՝ ստեղծելու բարոյական յեղափոխութիւնը: Ինքն իր պատմութեան եւ անցեալին նայելով եւ վերանայելով, փորձ մըն է սրբագրելու սխալը: Այդ սխալը ընդունելով ճամբայ հարթելու եւ սկսելու աշխարհը վերաշինելու գործընթացը, որպէսզի սխալը չկրկնուի եւ աշխարհ կարենայ պահել իր բարոյական չափանիշները:

Այս բոլորին զուգահեռ սակայն առկայ է գործակիցիս պատասխանը. «Ժամանակն է նախաձեռնելու եւ որոշումներ տալու անհրաժեշտութեան»: Բարոյական յեղափոխութիւնը՝ խօսքէն անդին գործի վերածելու համար, կարեւոր է նախաձեռնելու եւ որոշումներ տալու անհրաժեշտութիւնը: Այս մէկը կ'իրականանայ նորը շինելով եւ նախ հինը նոր հիմքերով վերաշինելով:

Պունտսթափի որոշումը գեղեցիկ սկիզբ մըն է: Սկիզբ՝ բարոյական յեղափոխութեան, որ ընթացք կրնայ տալ աշխարհը վերաշինելու քայլին: Աշխարհ մը, ուր ուրիշը եւ ուրիշները կրնան նաեւ գոյութիւն ունենալ եւ ապրիլ իրենց արժէքներով, իրաւունքներով եւ արժանապատուութեամբ:

Այս կը ներառէ նաեւ հայուն արժանապատուութիւնը: Հայ ժողովուրդի նահատակները պէտք է հանգչին եւ հայուն ցաւը, եթէ կարելի չըլլայ վերացնել, նուազագոյնը պէտք է հատուցել:

Բարոյական յեղափոխութիւնը ցաւը հասկնալու, բաժնելու եւ դարմանելու յեղափոխութիւնն է:

## ԿՏԱԿԸ

### «Միայն լաւագոյնը ընդունելի է ինձի համար» Գալուստ Կիւլպենկեան

«Գալուստ Կիւլպենկեանի անունը եւ գործը շատ մեծ նշանակութիւն ունին Փորթուզալի մէջ: Ամէն մարդ գիտէ զինք»: Փորթուզալի մէջ գործակիցս է Թիմոթէն, որուն հետ երկար տարիներու բարեկամութիւն եւ գործակցութիւն ունիմ: Եթէ որոշ չափով լսած է հայերու մասին, նաեւ մեկնելով մեր բարեկամութենէ, բայց Թիմոթէյիս համար Կիւլպենկեանը լաւագոյն հայու մը պատմութիւնն է:



Յունուար 2016-ին Լիզպոնի գեղեցիկ փողոցները կը շրջագայի ինք հասնելու համար կեդրոնական մաս եւ մեծ տարածութեան վրայ հիմնուած Կիւլպենկեան հիմնարկ:

Փորթուզալը ունի հետաքրքրական եւ այլատեսակ պատմութիւն: Եթէ երկար տարիներ եղած է մէկ կողմէ գաղութատիրական կայսրութիւն, միւս կողմէ ունեցած է ծովագնացներ եւ հետազոտողներ, որոնք միշտ ալ տքնած են աշխարհի մէջ նոր հորիզոններ գտնելու: Զասներորդ դարուն երկիրը մտած է տիրապետութեան տակ մեծաւ տիրական, այլ խօսքով բռնատիրական կառավարութեան մը, որ երկիրը առաջնորդած է աղքատութեան եւ դարձած յետամաք: 25 նոյրիլ 1974-ին է, որ խաղաղ ու կանաչ յեղափոխութեամբ մը՝ Մեխակ

ներու Յեղափոխութիւնով, կրցաւ Անթոնիօ Սալզգարի հիմնած կուսակցութիւն-կառավարութիւնը տապալել եւ հիմը դնել անելի ժողովրդավար պետութեան մը:

Թիմոթէն կանգ առաւ Անիս պանդոկին առջեւ եւ զայն ցոյց տալով ցաւ. «Գալուստ Կիւլպենկեանը Փորթուզալի մէջ իր ամբողջ կիսքը անցուց այս պանդոկին մէջ»: Ան կը խօսեր անելի քան տասնից եւ երեք տարիներու մասին՝ 1942-էն մինչեւ մահը 1955-ին:

Ակիւտար ծնած Գալուստ Կիւլպենկեան սիրեց Լիզպոնը եւ հաւանաբար Լիզպոնը սիրելուն մէջ կար անցեալէն՝ իր արմատն յուշեր եւ պատկանելիութեան զգացում, ինչ որ կ'արտացոլար անոր յուշագրութիւններուն մէջ. «Լիզպոնի Թակուս գետը կը յիշեցնէր իր ննկավայր Վոսփորը»: Եւ այդ յուշերն ու պատկանելիութիւնը զինք ինքնիստ ստեղծելու իր երազը՝ կտակը, Նոյնիքն Թակուսի գետին պիտրուն: Եթէ կտակը տուն տուաւ համամարդկային բնոյթով հիմնարկի մը, բայց Նոյնքան նաեւ հայկական հիմքով օժտուած կառոյցի մը, եւ հոն Կիւլպենկեան պիտի ապրեր, ապրեցնէր եւ բազմացնէր իր ինքնութիւնը:



Պատատութեան մեծ շէնքին, թանգարանին, պարտզի մուտքին կանգնած ուզեցի տեսնել Սարոյեանի անուանած «Այս իւրայատուկ ինք մարդ»ը եւ անոր կեանքին մէջէն տուն տուած մեծ գործը: Գալուստ Կիւլպենկեան սիրած է արուեստը եւ բնութիւնը: Նախընտրած է ըլլալ առանձին եւ հեռու լուսարձակներէ: Բայց եղած է ինքնակա-

տաի եւ նոյնը ներշնչած է ուրիշներուն: Այդ ինքնազատահովութիւնը կը կեանքին մէջ ունեցած է որպէս տեսլական: «Միայն լաւագոյնը ընդունելի է ինծի համար»: Բայց Գալուստ Կիւլպէնկեանի համար «ինծի»ն եղած է իր անծնական կեանքէն շատ ւաւելի լայն եւ ընդարձակ դուրս գալով իր ետէն՝ բացուելու համար աշխարհին ու քաղաքակրթութեան: Վերջապէս ան եղած է համաշխարհային քաղաքացի նկատուի ունենալով այն իրականութիւնը, որ եղած է գործարար շատ մը երկիրներու մէջ սկսելով քարիւղի ընկերութիւններու իր գործարարներն եւ հասնելու համար «Պարոն հինգ առ հարիւր» մակդիրին: Այդ բացուելու իր տրամադրութեան մէջ միշտ իւրայատուկ մտացած է իր հայկականութիւնը, ինչ որ իր կեանքին եւ գործունեութեան համար ստեղծած է կայունութիւն եւ տուած իւրայատուկ ինքնութիւն:

Իսկ այս իւրայատուկութեան ապացոյցը: Դապա՞ հպարտութիւնը Աւետիս Ահարոնեան իրեն շնորհած է Դապաստանի Ա. Դանրապետութեան անցագիրը: Գալուստ Կիւլպէնկեան ճամբորդած է հայկական անցագիրով անկախ այդ իրականութենէն, որ ան ունէր նաեւ երոպական քաղաքացիութիւն:

Իր ժողովուրդին ապրած Յեղասպանութեան ողբերգութիւնը կարելի չէր աննկատ ձգել: Ան հաւատաց հայ ժողովուրդին վերապրելու հրամայականին նաեւ արաբական աշխարհին, ուր Յեղասպանութենէն ճողոպրածները հասած ու ստեղծած են հայ գաղութներ իբրև հայութեան գոյատեման փաստ: Ան հիմնեց կրթաթոշակներ եւ ընծայեց բժշկական խնամք: Իր օգևութիւնը հասաւ մինչեւ Այնճարի Ինկապատը բերաւ Այնճարի հողատարածքին զնման, որովհետեւ տեղահանուած հայուն նոր պատասպարան տեսաւ այս շրջանի մէջ:

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկի հայկական բաժանմունկով մէկ այլ խօսուն եւ գործօն շարունակութիւնն է այս կտակ-խտակի: Դոն, ուր հայեցի դաստիարակութիւնը եւ ազգային ու մշակութային ինքնութեան պահպանումը հիմնական կոռուներ են հայապահպանման: Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի աշխուժ եւ գործօն առաջնորդութեամբ, հայկական բաժանմունքը այսօր նոր շունչ եւ տրամադրութիւն կը ներշնչէ հայաստանեան եւ սփիւռքեան մեր կեանքերուն:

Դանդիպումները եւ տարբեր յայտագիրները, արուեստի թանգարանի հարուստ հաւաքածոն, Կիւլպէնկեանի անունաւ նուազախոսութիւն ելոյթը, պարտեզ-գրքասփայլը ու տակաւին: Այս բոլորին մէջ մտքիս մէջ կար մէկ հարցում. «Ո՞ր է մեծութիւնը այս հայ մարդուն: Եթէ ոչ իր ապրած կեանքին ու գործունեութեան, բայց անպայմանաբար իր կտակին մէջ:

Կտակը՝ իր ասպարեզին նիւթական գործարքներու հսկայակալ

կլամուտներուն եւ հարստութեան վերաբերող: Կտակը՝ իր համամարդկային ու համահայկական արժեքներու գիտակցութեան եւ անոնց գոյատևաբարի գործընթացին եթէ կայ կտակը յոյսաւորող նիւթական ուժը, բայց նաեւ անոր հոգին:

Գալուստ Կիւլպէնկեանի մեծութիւնը կը կայանայ նաև, ուր ան նիւթակալն է հոգին կրցաւ մտաւորել եւ տանիլ իր ղեկի ապագան: Ինչ ան մնաց ինքնազատի իր համոզումին մէջ, թէ հայը պետք է շարունակէ ապրիլ եւ թէ հայուն ապրիլը ինքնամոկի է ինքն իր մէջ չէ: Ուրիշին բացակայուող քաղաքականութիւնը անհրաժեշտ է, բայց միշտ պահելով հիմքը՝ հայկականութիւնը: Բան մը, որուն ամուր կառչած մնաց Գալուստ Կիւլպէնկեան:

Բայց յուշագրութիւններուն մէջ եւ իր իսկ արտայայտութեամբ կան (յ)իրականացած նպատակներ. «Երկու նպատակներ չկրցայ իրականացնել կեանքիս մէջ: Գիտական մարդը եւ երագող մը պարտեզի մը մէջ, գոր եւ մշակած եմ»: Եթէ ան չկրցաւ իրականացնել այս երկու նպատակները իր ողջ կեանքին ընթացքին, բայց ան հիմնեց կտակը՝ հիմնարկը: Դոն, ուր հայը պիտի կարենայ երագել եւ երագին մէջէն մշակել հայուն պարտեզը՝ կեանքը:

Իսկ հայուն կեանքին մասին երագելու համար պետք է զգացում եւ հպարտութիւն, բայց նոյնքան նաեւ գիտական միտք, որ համամարդկային իրականութեան մէջէն պիտի ստեղծէ համահայկական նշանակող: Այն ենթահողը, որ հայուն պիտի տայ ապրելու ապահովութիւնը:

Գալուստ Կիւլպէնկեանի կտակը իւրաքանչիւր հայուն կտակն է, նաեւ առաքելութիւնը՝ համամարդկայինին մէջէն համահայկական կեանքեր ապահովելու կոռուանները:





## «ՀԱՅ ՏՈՒՆ»

«Հայրս կ'ըսէր, որ եթէ օգարի հեջ  
ամուսնանամ, զիս կը սպաննէ»:

Սոնիա Գրիբիսեան

Սանթիակո, Չիլի: Նոյեմբեր 2016: Թեւ Չիլիս ֆութպոլի աշխարհին մէջ ստեղծած է իրեն յատուկ առասպել մը՝ յար եւ նման Լատին Ամերիկայի իր դրացի երկիրներուն, բայց նաեւ ունի աշխարհագրական ու բնութեան իր տուեալներուն իւրայատկութիւնները: Չիլիի ուղղահայեաց եւ բարակ-երկար տարածքը ուշադրութիւն կը գրաս: Ունի բնութեան ստեղծած եւ շնորհած գեղեցկութիւնը: Եթէ Սանթիակո մայրաքաղաքին ամբողջ տարածքը խնդողած է ծառերով եւ շրջապատուած է լեռներով, սակայն երկրին արեւմտեան ուկիստիսի շրջանը կը գլխու կ'անցնի ամեն գեղեցկութիւն: Երկիրը զարգացած է եւ կամաց-կամաց սկսած է յառաջխաղացք արձանագրել ընկերային եւ տնտեսական բնագաւառներուն մէջ՝ անկախ իր մտքի անցեալի քաղաքական կեանքի որոշ վերիվայրումներէ:



Սոնիա Գրիբիսեանը ծնած է Չիլի: Գայրը Կալիպոլիէն եւ մայրը Պուրսայէն, եւ Յեղասպանութիւնը ետք, անցնելով մեկ գաղթածախէն միւսը կայք հաստատած են Չիլի: Սոնիայի հօր պարած Յեղասպանութեան արիւնքը անոր մէջ կերտած էր պարելու եւ կեանքը շարունակելու զօրաւոր հիմք: Ասկէ ալ կը բխի իր պատգամը, թերեւս զգուշացումը իր դստեր Սոնիային. «Եթէ օտարի հետ ամուսնանաս, կը սպաննեմ քեզ»:

Սոնիան հնազանդած էր իր հօր պատգամին: «Սպասեցի, եւ բախտս Ալպեր Էքմեքեանն էր»: Ալպերը, որ Պէյրութի մէջ իր օրերուն վաստակ շահած հեծելաքշաւի ախոյեան մարզիկ եղած էր: Ան 1960-ական տարիներուն հաստատուած է Չիլի՝ հայկական իր վնասը շարունակելու տեսլականով:

Նազար եւ Նատիա Պալոյեանները կը համարուին Չիլիի հայկական գաղութի երիցագոյն անդամներէն, երեւի ամենէն երեցները: Նազարին ծնողը հարբերդէն եկած է, իսկ Նատիան Պոլիսէն գաղթած: Նատիային մէջ տակաւին կայ Վոսփորեան ջերմութիւնը եւ աշուժութիւնը: «Յաջորդ այցելութեանը քեզի պոլսական ճաշ պիտի կատարաստեն», ըսաւ ինծի:

Նազարին հայրը ու իր նման համախոհեր 1950 թուականին Անտիպալոյի մէջ գնած ու հիմնած են «Հայ Տուն»ը: Գոն, ուր հայեր պիտի համախմբուին: Բաւական մեծ տարածք՝ պարտեզ ու սրահներ ընդգրկող այս կեդրոնը կը գործածուի մօտաւորապէս երեք հազար հոգի հաշուող փոքրաթիւ հայ գաղութի հայկական կեանքին շարունակականութեան համար: Երբեմն-երբեմն կը մասնուցուի սուրբ պատարագ այցելու հայ կղերականի մը կողմէ: Նաեւ կը կազմակերպուի հաւաքոյթ, կը կատարուին նաղեր ու շաքար օրերը հանուն դասընթացը: Պարտեզին մէջ գետնը-



ուած է խաչքար եւ Յեղասպանութեան նուիրուած յուշակոթող՝ Լազի հայն է, որ որոշած է ապրիլ:

Լազարին յուշերը: «Յօրս համար ուրիշ լաւ բան չկար, քան ուրիշ հայ մը»: Եւ այդ «ուրիշ հայը» հայ պահելու համար ոչ մէկ ճիգ չեն յած է կազմակերպելու համար այս հայկական գաղութը:

Շաբաթ, 12 Նոյեմբեր 2016: «Յայ Տուն»ին մէջ նստելով կը վարեն միայն այս պատիկ Յայաստանը: Թէեւ շատ հեռու է մեծ Յայաստանէն, բայց հայու կարօտը կը մօտեցնէ սրտերը, զգացումները, յիշատակները, պայքարը, սփիւռքեան մարտահրաւերները: Թէեւ հայկական այս փոքր գումարտակը կը մարտնչի ինքն ալ իր գոյապայքարով համար եւ իր ապրած իրավիճակին մէջ, բայց կայ գիտակցութիւն: Թէեւ լեզուն կը նահանջէ, բայց տակաւին վառ կը մնայ զգացումը եւ «Յայ Տուն»ին մէջ, շրջապատուած հայկական այս փոքր խմբակով՝ ապրիմ այս զգացումները:



Լազելի Լազարը ծնած է Չիլի: Մեծ ծնողքը Չիլի եկած են Յեղասպանութենէ ետք: Սիրած է երաժշտութիւն եւ հետեւած է ձայնամարդութեան: Կենսիկ պայմանները եղած են տարբեր եւ ան նետուած է լրատուական ասպարեզ, բայց միշտ պահելով իր առաջին սերունդ երաժշտութիւնը:

«Յայկականութիւնը զգացում է ինծի համար եւ ոչ թէ միայն տրամաբանութիւն», Լազելին է խօսողը: «Եւ որքան որ մեծանա-

միս այդքան աւելի կը զօրանայ այս հայկական զգացումը»: Լազելին կը ցաւի, որ հայերէն չէ սորված իր մանկութեան եւ պատանեկութեան տարիներուն: Բայց իր մէջ զօրաւոր է Յեղասպանութեան ցարկը: «Յեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներուն, երբ կ'երկի երգչախումբին հետ, սկսայ լալ: Գիտակցեցայ, թէ ցաւը որքան նորունկ չափով առկայ է իմ արեանս մէջ», քսաւ Լազելին:

Վիզել Բալայեանը Յայաստանէն է: Երիտասարդ հայորդի, որ ուսանած է Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան մէջ: Թափառած է հայկական մէկ գաղութէն միւսը՝ հասնելու համար Սանթաբարբա: Եւ չեմ գիտեր, թէ Սանթաբարբա վերջին հանգրուանն է երիտասարդ Վիզելին համար: Ան իր ստացած հայեցի ամուր դաստիարակութիւնը ի սպաս կը դնէ Չիլիի հայկական գաղութին: Ամէն շաբաթ օրերը կայ հայերէն դասընթացք եւ Վիզելը կը սորվեցնէ մայրենին:

Վրճինիա Էքմէքճեանը փոխառենապետն է հայկական գաղութի վարչութեան: Ան կը գիտակցի, թէ «Յայ Տուն»ը բոլոր հայերը միասնաբար: Ներկայ «Յայ Տուն»ը ծախած են: Բանակցութիւնները իրենց գերբնական փուլին մէջ են՝ նոր հողատարածքի մը գնման համար, ունի լաւ վայրի մը մէջ եւ տարբեր յարմարութիւններով: Հոն պիտի կառուցեն եկեղեցի եւ կեդրոն, բայց զադուրքը ներկայ տունը տակաւին կը գործածէ մինչեւ նոր կեդրոնի վերջնական դասաւորումները: Վրճինիան կը խօսի Յեղասպանութեանը մասին. «Յեղասպանութեան մասին կը խօսիմ արդարութեան եւ ճշմարտացիութեան համար եւ չեմ ուզեր, որ մարդիկ մեզի մեղքանան»: Վրճինիան խօսեցաւ նահատակներու սրբադաման մասին ալ. «Սրբադասումը հայկական նոր ուժ ներմուծեց մեր կեանքերուն»:

Այդ խմբակին մէջ է նաեւ չիլիցի Հիւկօ Տիագոն, որ երաժիշտ երիտասարդ մըն է, կը նուազէ օպուրայ երաժշտական նուագարանը: Ան իր ուսումնասիրութիւններուն մէջէն բացայայտած է, թէ օպուրան սեփական է հայկական տուտուկէն: Եւ իր մէջ սկսած է արթննալ մէկ կողմի հետաքրքրութիւն, բայց նաեւ սեր՝ հայութեան եւ հայկական մշակութի հանդէպ: Հիւկօ կը սորվի հայերէն խօսիլ ու գրել:

Ուզեցի հետեւիլ հայերէն դասընթացքին, թէ ինչպէ՛ս Շաքելն է Էմիլիան՝ չափահասներ, հատիկ-հատիկ հայերէն տառերը կը սորվին ու կը գրեն: Յայուն գոյապայքարի ճանապարհն է, որ պետք է ընդհատուի:

Պետք էր, որ մեկնէի: Ուրախ էին տեսնելով, որ հայ մը եկած է եւ իրենց կ'այցելէ: Իրենց աչքերուն եւ խօսքերուն մէջ կար այդ արտասովորութիւնը: Եթէ մէկ կողմէ քաջալերուած էին, բայց նաեւ կ'անդադարանային, որ իրենց ալ մէկ մասնիկն են հայկական մեծ ընտա-

կիցին՝ Հայաստանին եւ սփիւռքին: Եւ զգացի, որ կ'ապրին այդ անժեքին պահը, թէկուզ կարճ հանդիպումով, բայց իրական:

Դարձեալ Նազարն է խօսողը, որուն առողջական վիճակը թե՛ շատ քաջալերական չէ, բայց ան ուրախ մարդն է՝ զուարթ հոգիով ժպիտը դեմքին ըսաւ ինծի. «Երեւի շուտով կը մեկնիմ: Բայց չեմ գիտեր, ո՞ւր պիտի երթամ»: Նազարին ձեռքը ամուր սեղմեցի եւ իր այդ ուրախ անքերուն նայելով ըսի իրեն. «Մեկնելէդ առաջ պետք է, որ եկեղեցին եւ «Հայ Տուն»ը շինես: Դորդ աւանդն է, որ պետք է շարունակես»:

Չեմ գիտեր ե՞րբ նորէն պիտի տեսնեմ Նազարը եւ Սանթիակոյ հայկական փոքր գումարտակը: Երեւի օրերը ցոյց կու տան: Բայց կայ «Հայ Տուն»ը, որուն ջերմութիւնը ապրեցայ ու պիտի շարունակեմ ապրիլ հեռուէն, որովհետեւ անկկա ապրող իրականութիւն է Հայուն աւանդն է, հայուն հպարտութիւնը, այն հայուն, որ որոշած է ապրիլ:

«Հայ Տուն»(եր)ը: Չիլի եւ քիչ մը ամէն տեղ: Փոքր տուն(եր), որոնք միասին քով-քովի գալով կը կազմեն հզօր եւ մեծ Հայաստանը: Եւ այս «Հայ տուն»(եր)ը՝ Մեծ Հայաստանը, հայօրէն ապրելու եւ իրեն հայ գոյատեւելու գրաւական կը հանդիսանան: Ուստի անպայման պետք է զուրգուրալ անոնց ու պահպանել:

## «ԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ 170 ԱՄԵԱԿ՝ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ՝

Կրթական հաստատութիւններու ամավերջի հանդեսները իրականացնող տարեշրջանին մէկտեղումն է, բայց նաեւ արգասիքը մէկ տարուայ վրայ երկարած նուիրական աշխատանքի մը, որուն համար արժանի է շնորհաւորել՝ եթէ մէկ կողմէ շրջանաւարտ աշակերտները բայց նաեւ տնօրէն, ուսուցչական կազմ, հոգաբարձութիւն եւ ծնողք:

Բայց այն ինչ, որ քիչ մը աւելի յատկանշական կը դարձնէ այսօրուայ հայ Աւետարանական Գոլժեի ամավերջի հանդեսը, որ տեղի կ'ունենայ Յուլիս 1-ին: Եւ յատկանշական կը կայանայ ինն, որ 170 տարիներ առաջ՝ Յուլիս 1, 1846-ին, Պոլսոյ մէջ հիմքը դրուեցաւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին, որուն մէկ տեսիլքը եւ հասարակութեան դաշտն է այս կրթական օժանդ:

1923-ին՝ Տեղասպանութենէ ճողաբարձ եւ տարագիր հայ ժողովուրդին համար, եթէ պետք էր ֆիզիքական ապահովութիւնը բայց անպայմանօրէն նաեւ իմացական ու հոգեւոր ապահովութիւնը: Եւ այս տեսլականով էր, որ հայկական հիւղաւաններէն ծնունդ առաւ այս կրթական հաստատութիւնը՝ ձգտելու համար հայ ժողովուրդին վերապրելու հրամայականին:

Այս իրականութեան մէջ է, որ պետք է տեսնել Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիին առաքելութեան միտք բանին: Ան Հայաստանեայց է, որովհետեւ իր ծնունդի հիմքը ուրիշ բան չէր կրնար ըլլալ: Եւ իր ծնունդի տեսլականը այդ կը բացատրէ. «Պետք չունինք մասնաւոր նոր յարանուանութիւն մը որոշելու կամ որեւէ օտար դրութիւն կէտ առ կէտ որդեգրելու»:

Եւ այս իմաստով Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին Աւետարանական է՝ հիմնուելով ուղղակի Նոր Կտակարանի ժամանակակից սկզբունքներուն եւ բարբերուն հետեւողութեամբը: Եւ Հայաստանեայց իբր տեղական եկեղեցի մը, որ ըլլալով հանդերձ տիեզերական եկեղեցիի հարազատ մէկ մասնիկը, կոչուած է ծառայել աշխարհագրական որոշ տարածութեան մը ժողովուրդին եւ անոր միջոցաւ աշխարհին:

\* Կրտասանուած Հայ Աւետարանական Բողժեի ամավերջի հանդեսին, Յուլիս 1-ին:

«Աւետարանականութիւնը այս իմաստով պիտի բացատրել: Ան հատական եւ եկեղեցական կեանքին մէջ Աւետարանի հեղինակութիւնը գերադասել նուիրապետական ամեն տեսակի հեղինակութիւն»: Եւ եթէ Յայ Աւետարանական Եկեղեցին պիտի նկատել բարեկարգեալ եկեղեցի մը, որ բարեկարգում առաջնորդէ մեր հայրական կեանքին մէջ, ապա այս բարեկարգումի հիմքը դրուեցաւ Աստուածաշունչի դաստիարակութեան վրայ:

Քրիստոնեական դաստիարակութիւնը եկեղեցիի մը հիմքը եւ առաքելութիւնն է: Յայ Աւետարանական Եկեղեցիին համար քրիստոնեական դաստիարակութեան հիմքը կրցաւ տեսնել Աստուածաշունչի կրթութեան մէջէն: Դաստիարակութիւն մը, որ համապարփակ էր եւ որ ներգրաւեց անհատին անձնական, ընտանեկան եւ հարաքական կեանքերը իր ամբողջութեան մէջ: Եւ այս իմաստով Յայ Աւետարանական Եկեղեցին իր հիմնադրութեան առաջին իսկ օրէն ձեռնարկեց Աստուածաշունչի աշխարհաբարի թարգմանութեանն: Բայ մը, որ եթէ Աստուածաշունչը մտաչելի դարձուց ժողովուրդին, բայց նաեւ կարելոր նպաստը բերաւ կանոնաւորելու հայերէն աշխարհաբարը եւ գրական լեզուի դարձնելու գայն:

Աւետարանական շարժման անէնէն կարելոր նպաստը կրնայ նկատուիլ կրթական նոր դրութեան մը ներմուծումը: Կրթական դրութիւն մը, որ խորքին մէջ քրիստոնեական դաստիարակութիւն է: Ան տարանական տեսակետով քրիստոնեական դաստիարակութիւնը ոչ միայն ընդհանուր դաստիարակութեան անբաժան մեկ մասն է, այլ նաեւ ամբողջութիւնը: Քրիստոնեական եւ ընդհանրական դաստիարակութիւնը իրարմէ չեն կրնար անջատուիլ: Յայ Աւետարանական դաստիարակութիւնը առաջին իսկ օրէն երկու դրութիւնները անբաժան պահած է՝ համայնքային եւ եկեղեցական վարժարաններու հովանաւորութեանը տակ:

Յայ Աւետարանական վարժարանները եկեղեցապատկան են եւ մասնաւոր Աւետարանական կրթական դրութիւնը բարոյագիտականօրէն եւ հոգեւորապէս հիմնուած է դաստիարակչական տեսութեան մը կամ փիլիսոփայութեան մը վրայ, որ առօրեայ դպրոցը կը նկատէ եկեղեցիին քրիստոնեական դաստիարակութեան անբաժան մեկ մասը, ինչպէս կիրակօրեայ դպրոցը, Պատանեացը, Չանկիթ ամանային Սուրբ Գրոց վարժարանները ու տակաւին:

Եւ Յայ Աւետարանական Եկեղեցին աշխարհով մէկ տեղ գտնուող կրթական գործին՝ հիմնելով վարժարաններ մինչեւ երկրորդական եւ այս Պատմական Յայաստանէն մինչեւ օրս Ափիւղի տարբեր օճախներուն մէջ եւ նաեւ ներկայիս Մայր Յայրենիքին մէջ: Եւ տակաւին համալսարանական դաստիարակութիւն՝ Պէրլուրի Յայ

կազմեան Յամալսարանով եւ Աստուածաբանական Ծննդարանով, որովհետեւ հաւատաց, թէ կրթական ցանցի միջոցաւ կարելի է չամբել այս համապարփակ դաստիարակութիւնը:

Եւ մտահան պետք չէ ընել, թէ քրիստոնեական այս դաստիարակութիւնը, որուն շեշտը Աստուածաշունչն է, կը զարգացնէ ազատական մտածողութիւն՝ քննական միտք մշակելով: Ահա, թէ ինչու, իր հիմնադրութեան սկիզբէն, Յայ Աւետարանական Եկեղեցին հայ ժողովուրդի կեանքին մէջ շատագոյն եղաւ իջական սեռի դաստիարակութեանը, ինչ որ նոր իրավիճակ էր հայկական կեանքին համար: Եւ այս արդիւնք է նոյն այս ազատական մտածողութեան զարգացումն:

Քրիստոնեական այս դաստիարակութիւնը նաեւ հիմնուած է խոյնոտանքի եւ սիրոյ սկզբունքներու վրայ: Եւ խոյնոտանքը ու սերը ինքն են քրիստոնեական ծառայութեան կեանքի մը առաքելութեան՝ diakonia, սպասարկութիւն: Սպասարկութիւն մը, որ անսպասակ չէ, այլ այն, որ կը փոխէ: Եւ այս սպասարկութեան կեանքը տարբեր ձեւերով ներմուծուած է հասարակական կեանքին մէջ: Հաստատանայ Աւետարանական Եկեղեցին ջանք չի ինչայեց, որպէս չի իր այս ծառայութեան առաքելութիւնը հայ ժողովուրդին մէջ նաեւ շեշտուի՝ հիմնելով բժշկական հիւանդանոցներ, ուր մինչեւ օրս կը վրիժէ Ազունիի Բուժարանը գործակցաբար Յայ Առաքելական Եկեղեցիին ու տակաւին ապաստարաններ անկարներու, ինչպիսին է Պորձ Յամուտի Ծերանոցը եւ այլ հաստատութիւններ:

Յայ Աւետարանական Եկեղեցին Ափիւղի տարբեր երկիրներուն մէջ եւ նաեւ Մայր Յայրենիք ու Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւն՝ եղած է ու տակաւին դաստիարակող եկեղեցի մը հայ ժողովուրդի իրականութեան մէջ՝ իր պաշտամունքով, քարոզութեամբ, ժողովրդավարական կազմակերպութեամբ, կենցաղավարութեամբ եւ ծառայութեամբ տարբեր քնագավարները ներս: Եւ այս դաստիարակութիւնը եթէ մեկ կողմէ կը զարգացնէ ազգային ինքնութիւնը եւ անոր հանդէպ ինքնագիտակցութիւնը, բայց նաեւ շատագոյն է գոյակեցութեան եւ ընդունելու-հանդրժելու ուրիշը, որ տարբեր է:

Եւ այս իմաստով պիտի նաեւ տեսնել, թէ ինչպէս հայ Աւետարանական Եկեղեցիի առաջնորդները եւ զաւակները իրենց ազգային ինքնութեան հասկացողութիւնը հասցուցին պատմութեան տարբեր ասանցներուն մէջէն եւ մինչեւ իրենց մասնակցութեամբ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գոյապայքարին մէջ: Այնպէս ինչպիսի հերոսամարտի ղեկավար Առուր փաշա Լեւոնեան եւ Աւետիս Էֆենտի Գալմեջարեան, Մուսա Տաղի հերոսամարտի ղեկավար Վեր Յիզրան Անդրեանեան, Թալէթօ փաշայի ահաբեկիչ Սողոմոն Թե-

լիրեան, Չէթունի հերոսամարտի ֆետայի Արամ պէյ Չոլագեան, ու տակաւին ուրիշներ, որոնք զիտցան ի զին նահատակութեան իրենց ազգային ինքնութեան եւ անոր գոյապայքարին մէջ հաստատ մնալ:

Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին միշտ ալ հետամուտ եղաւ միջ-եկեղեցական յարաւերութիւններու եւ եքիմենիք շարժումներու՝ դառնալով հիմնադիր անդամներէն Միջին Արեւելքի Եկեղեցիներու հորհուրդին եւ Համաշխարհային Եկեղեցիներու հորհուրդին: Որովհետեւ գոյակեցութիւնը եւ ուրիշը ընդունիլը միշտ ալ կարելորդ եղան իրեն համար:

Աստուածաշունչը եւ անոր դաստիարակութիւնը կը հիմնէ եւ կը կազմաւորէ անհատին ինքնութիւնը եւ այս ինքնութիւններն են, որ կը կազմեն հաւաքականութիւններ եւ հաւաքական կեանքեր: Եւ այս անհատական եւ հաւաքական կեանքերուն մէջէն է, որ պիտի տեսնուի նոր կեանք հասկացողութիւնը: Այսինքն ապաշխարիութեամբ մէջ տեղ եկած այս նոր կեանքը, որ համապարփակ է:

Ապաշխարիութիւնը՝ նոր կեանքը, այս ընելու եւ կամ այն չ'ընելու կեանք չէ: Հապա կեանք մըն է, որ ունի ուղղահայաց եւ հորիզոնական տարբերակներ: Ուղղահայացը՝ դէպի Աստուած, ուր մենք կը դառնանք Իր պատկերին պէս, երբ կ'ընդունինք եւ կը ստանանք Աստուծոյ սէրը եւ շնորհքը: Եւ հորիզոնականը, որ կ'ապրինք Աստուծոյ մէ ստացած սէրը եւ շնորհքը՝ հաւաքական կեանքերու մէջ: Քայքայ կ'ապրինք ոչ թէ աննպատակ կեանք մը, այլ նպատակասլաց: Երբ Աստուծոյ պատկերը մեր մէջ է եւ Աստուած, որ Ստեղծագործ է, մենք ալ կը դառնանք ստեղծագործողներ: Ստեղծելով նոր կեանքեր, որուն ինքնութիւնը բարին է: Եւ Աստուծոյ ստեղծած այս նոր կեանքին՝ բարիին մէջ, կը հաւասարակշռուի զօրութիւնը, զգաստութիւնը, գոյակեցութիւնը, համերաշխութիւնը, հանդուրժողականութիւնը, ազգային ու համամարդկային ինքնութիւնները եւ արժեքները:

Եւ դուք, սիրելի շրջանաւարտներ, այս արժեքներով դաստիարակ ունեցաք այս կրթական վարժարանին մէջ: Եւ այսօր երբ դուքս պիտի ելլէք այս դպրոցէն՝ մտնելու համար կեանքի տարբեր բնագավարներուն մէջ, դուք պարտիք դառնալ մէյ-մէկ ստեղծագործողներ:

Ստեղծեցէք բարին, այսինքն զօրութիւնը, որ կը շինէ եւ ոչ թէ կը զանախ:

Չգաստութիւնը, որ կրանք ամուր կենալ արդարութեան եւ պահանջատիրութեան իրականութիւններուն համար:

Գոյակեցութիւնը, համերաշխութիւնը, հանդուրժողականութիւնը, որ կրնաք տեսնել եւ ընդունիլ ուրիշը, որ տարբեր է:

Ու տակաւին ազգային ինքնութիւնը, որ ձեր կեանքերուն հպարտութիւնն է եւ համամարդկային արժեքներու հանդէպ գիտակցու-

թիւնը, որ ձեզ պիտի ընէ շրջահայեաց՝ բացուելով աշխարհին: Գայը պետք է շարունակէ ապրիլ այս բարին արժեքներով: Իսկ այսօր աշխարհ ի՛նչքան պետք ունի այս նոր կեանքերուն:

Բարի երթ՝ ձեզի՝ շրջանաւարտներ, եւ մեզի բոլորիս այս բարին արժեքներով կեանքեր ապրելու եւ ստեղծագործելու առաքելութիւններուն մէջ:

### **Օգտագործուած աղբիւրներ**

Դոկտ. Երուանդ Զասունի, «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին», Պէրլուք, 1986:

Վեր. Յովհաննէս Ահարոնեան, «Հայ Աւետարանական Եկեղեցին Մասնապարհներու Խաչմերուկին», Կմբագիր Դոկտ. Զասունի, Պէրլուք, 1988:

Վեր. Պարզեա Տարագճեան, «Ամփոխարինելի Ժառանգութիւն», Լիւ Ճըրզի, 2012:

## ՀԱՅՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նիկոսիա, Կիպրոս: Աշխատանքային գրասենեակիս կից ակնոցի վաճառականութեամբ զբաղող դրացիս է: Միջին տարիքի յոյն կնիք ունեցող տիկին մը: Ապրած է Կիպրոսի տազնապղ վաթսուհարյուր թուականներէն սկսեալ, բայց նաեւ 1974-ի թրջական ներխուժումէ ետք իր տունէն տեղահանուած է եւ իր իսկ երկրին մէջ գաղթական դարձած է: Եթէ գիտէ, որ ես հայ եմ, բայց նաեւ լսած եւ կարդացած է մեր պատմութիւնը: Եւ Տեղասպանութեան ահաւորութիւնը եւ ապրուած վախը: Եւ կը զգայ վախը, քանի ինք ալ ապրած է այդ նոյնը:

Եւ չուշացաւ իր մէջի եւ մինչեւ այսօր սեղմած վախը դուրս հանելու: «Չեմ գիտեր ինչպէ՛ս պիտի ապրի՞նք թուրքին հետ: Զապա կը գան եւ մեզ ջարդեն»:

Եթէ մէկ կողմէ կան հաշտութեան փորձեր՝ կղզիին վերամիացնելու առնչութեամբ, բայց մտահոգութիւնը եւ վախը նոյնքան անփոփոխ են: Եւ դրացիս չի զլացաւ իր վախը բաժնեկցելու ինծի հետ: Վերջապէս ապրուած փորձառութիւն էր, որ ստեղծած էր այդ վախը: Եւ այդ նոյն վախը չէր ուզեր վերապրիլ:

Բայց վախը խաբուսիկ երեւոյթ մը չէ: Մարդկային զգացում մըն է՝ զոր կարելի չէ անտեսել: Եւ ոչ ալ պետք է զայն առնչել այսպէս ըսած աննական արժանապատուութեան. «Ամօթ է եւ պէտք չէ վախնալ», տրամադրութեամբ: Վախը իրական է: Ապրուելիք իրականութիւն մըն է մարդկային կեանքին եւ պատմութեան տարբեր հոլովոյթներուն մէջէն: Վախը կը ստեղծէ կեանքը ընդհատելու եւ կամ ընդհատուելու դեմ-դիմաց կանգնած իրականութիւնը, որ դիպրին փոճակ մը չէ մարդ արարածին համար, ուր պարտի ընկալել կեանքը վերջացնելու իրականութեամբ:

Եւ հայուն պատմութիւնն ալ զերք չէ այս վախին ու անոր ստեղծած ահաւոր իրավիճակներու ապրած ու ապրուած կեանքի պատմութիւններէն: Եթէ մէկ կողմէ կայ Տեղասպանութեան պատմութիւնը եւ ցեղասպանուած հայուն վախը, տակաւին նոյնքան նահապարողինը: Ներառելով նաեւ անոնց հոգեկան ներաշխարհի ապրած վախին ահաւորութիւնը: Եւ նոյն այս վախի զգացումն է, որ իր տարբեր հոլովոյթներով եւ պարունակութեամբ կը շարունակէ տակաւին հալածել հայուն կեանքը: Եթէ մէկ կողմէ վախին ֆիզիքական զգացումն է, բայց նաեւ հոգեկան-իմացական ու տակաւին ինքնութեան կանչին: Ինքնութիւնը եւ անոր մշակութային գիտակցութիւնը պահելու վախը:

Ապրիլ 2016: Քանի մը շաբաթներէ ի վեր աշխատանքներուս բեռնով կը շրջագայիմ կրթական Շոցի տաճարաշրջանին մէջ: Դարաբաղեան ճակատին վրայ պատերազմին րոնկումը խանգարող աշխատանքային լոկոր տրամադրութիւն եւ կեդրոնացումս: Զայն դարձեալ կ'ապրի վախին ու անոր ստեղծած արհաւիրքի մթնոլորտին մէջ: Կան նահատակներ: Մեր հայ տղաքն են, որոնք ոչ միայն կորուցիւն գիտեն այլ նաեւ նահատակուի:

Եւ քանի այցելած եմ Դարաբաղը եւ տեսած ու վայելած անոր գեղեցկութիւնը, կարելի չէ արհեստագործական վիճակի վերածել զայն: Դարաբաղի բնութիւնը արհեստագործական չէ: Ան կառնած է ապրելու:

Պահրէյնի եկեղեցիներէն մէկուն պաշտամունքին ներկայ եմ: Գոյնազարկան քարոզին բնաբանը Աստուածաշունչին մէկ շատ ծանօթ հատուած մըն է. «Սիրտ քու ընկերդ քու անձիդ պէս եւ սիրտ թշնամիդ»: Աստուածաշունչի պատգամին զօրութիւնը կը կայանայ ինչ, ուր երբ իւրաքանչիւր անգամ կարդաս եւ լսես, կը խօսի քեզի՝ մեկնելով քու ներկայի ապրած իրավիճակիդ մէջէն: Ընկերա-հոգեբանական եւ ներաշխարհի իրավիճակները իրենց որոշիչ ազդեցութիւնը ունին պատգամին ընկալումին հետ: Զատուածին փոխանցած պատգամը կը նկատես մեկնելով քու ապրած ժամանակիդ փորձառութեան ընդմէջէն:

Եթէ Աստուածաշունչի իմ շատ լսած եւ կարդացած հատուածներէն մէկն էր, բայց այդ օրը Պահրէյնի մէջ նոյն այս համարը եկաւ անբիւր փոթորկելու իմ արդէն իսկ տազնապղ հոգիս: Սիրտ թշնամիդ: Ան, որ վախի մթնոլորտ ստեղծեց հայուն պատմութեան մէջ եւ տակաւին կը շարունակէ: Մինչեւ այսօր: Դարաբաղի մէջ: Ու դաժնապէս Ապրիլ ամսուն մէջ:

Բայց անհրաժեշտ էր, որ վերլուծէի: Աստուածաշունչի սիրոյ եւ



սիրելու հասկացութիւնը պետք չէ վեր առնել բառացիօրէն: Կայ խոր քային եւ ընկերային մեկնաբանութիւնը եւ բացատրութիւնը, բայց նաեւ ընկալումը, որ հաստատածին եթէ մէկ կողմէ կու տայ աստուածաբանական հիմք, բայց նաեւ ազգային եւ մշակութային կեանքի արժէքափ:

Քրիստոսի խօսած սերը սոսկ ենթակայական արժէքափերէն չառաւելի կը կեդրոնանայ տարբեր մակարդակի՝ արժէքի չափանիշերով կեանքեր ստեղծելու հեռանկարին վրայ, որ քրիստոնէան պատու կերտել: Արժէքափեր, որոնք հեռու են աշխարհի սակարկելի չափանիշերէն եւ կը կառչին Քրիստոսի շնորհած արժէքին գիտակցութեան, որուն տարբեր մակարդակը կը կայանայ հոն, որ կեանքիւ կը կերտու եւ ոչ թէ կը քանդու: Եւ «բարեկամը ու թշամին սիրելը» պէտք է ըմբռնել այս տեսակի կեանքեր ապրելու պրիսմակէն, որ կը տղմու արժէքափեր ստեղծել մարդկային պատմութեան հոլովոյթներուն համար, ուր տարբերը իր դրական ներգործութիւնը ունի եւ ոչ ժխտական:

Չայը իր վախի եւ սարսափի այդ ահաւոր փորձառութիւնը կրցաւ վերածել այս տարբեր արժէքափի կեանքեր կերտելու իրականութեանը մէջ: Չայը կրցաւ իր գրաւը դնել հոն, ուր իր ապրած վախի կեանքի փորձառութիւնը վերածեց ոչ թէ ատելութեան եւ քանդութեան պատմութեան այլ սիրելու եւ կառուցելու:

Չայուն պատմութիւնը այսօր նորէն կը կրկնուի: Այս անգամ Ռաբբաթի մէջ: Կախի ու սարսափի եւ անոր հետ նահատակութեան մթնոլորտն է դարձեալ: Չայը կը կռուի, ոչ թէ որովհետեւ կ'ուզէ անել եւ քանդել, այլ որովհետեւ կ'ուզէ շարունակել սիրել եւ շինել: Արդի իր ազգային-քրիստոնէական կեանքը, զոր շինած էր Տեղապատմութենէն ետք եւ շատ մը զրկանքներով եւ միևչեւ այսօր: Չայուն պատմութեամբ Նոյն այդ իր շինած կեանքը պահելու իրականութեան մէջ եւ որ սակարկելի չէ եւ որ տարբեր մակարդակ ունի:

Երիտասարդ հայուհիին նկարը մէկ իրական արտայայտութիւն է հայուն մակարդակով ապրելու կեանքին ճգնումին: Եթէ իր՝ հայուն այքերն են, ուր կայ յուզում, մտահոգութիւն եւ վախ, բայց նաեւ հաստատ համոզում: Թէ մեր բանակին հետ հայը եւ Արցախը զօրանալ են: Եւ այս զօրութիւնը ուժն է հայուն, որ քանդելու համար չէ եղանակի պահելու, կերտելու ու շարունակելու համար այս տարբեր եւ իմաստալից կեանքը: Ողջ հայութեան համար:

Ռաբբաթի Չանրապետութեան արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը այս ուղղութեամբ խիստ բովանդակալից է. «Այս պատերազմը հողատարածքի համար չէ, այլ ազգային ինքնութեան»:

Եթէ Եկեղեցի դրացիս կը վախնայ, բայց նաեւ ես եւ իւրաքանչիւր մարդ արարած: Բայց այդ վախը պիտի վերածու ապրող կեանքի: Կեանք մը որ տարբեր է: Եւ որուն տարբերութեան չափանիշերը արժէքի հասկացողութեան եւ գիտակցութեան մէջն է: Եւ այս գիտակցութիւնը պիտի պահենք Նոյնիսկ երբ ստիպուած ըլլանք պատերազմելու:

Եւ այս հայուն պատերազմն է:

Կախին ընդմէջէն ապրող եւ ապրեցնող եւ արժէքի չափանիշերով կեանքեր ստեղծելու պատերազմը:

## ՀԻՆՔ ՄԻԱԲՈՐ, ՀԻՆՔ ՅԱՄԱՔԱՄԱՍ

Ֆրանսայի հարազդ գտնուող Փրովանսի շրջանը զգլխած է ամեն գեղեցկութեան չափանիշ: Երեւի աշխարհի ամբողջ գեղեցկութիւնը թափած է այս շրջանին մէջ: Եթէ մէկ գիւղէն ու քաղաքէն միւսը ունի իրեն յատուկ գրաչուփունը, բայց նաեւ կայ պատմութիւն: Եւ այդ պատմութեան մէջ կայ մշակոյթը եւ ապրուած օրը եւ փորձառութիւնը:

Արլ քաղաքը՝ Ռոն գետին երկայնքին, Ֆրանսայի հարաւային բաժնի գեղեցիկ քաղաքներէն մէկն է: Համաշխարհային գեղանկարիչ Վան Կոկը ներշնչուած է այս քաղաքէն եւ ապրած ու ստեղծագործած: Արլ եղած է հռովմեական քաղաք եւ դարձած անոր շրջանային մայրաքաղաքներէն մէկը: Քաղաքը ունի պատմական շատ մը հնութիւններ հռովմեական ժամանակներէն, ուր յատկանշական է անոր ամփիթատրոնը, որ ներկայիս կը գործածուի գեղարուեստական եւ մշակութային այլ համերգներու եւ ձեռնարկներու համար:

Օգոստոս 2016: Արլ: Հին հռովմեական շրջանի հնութիւններին անցնելով սկսայ մուտք գործել այսպէս կոչուած «Ամառնային Պարտեզին» մէջ: Ոչ շատ մեծ, բայց գեղեցիկ ու կանաչ էր եւ հոն կար յուշակոթող մը նուիրուած Վան Կոկի: Բայց չէի կրնար պատկերացնել թէ այս «Ամառնային Պարտեզին» մէջ նաեւ պիտի հանդիպէի հայկական իրականութեանը: Բայց ինչու՞ եւ ինչպե՞ս զարմանալ, չէ՞ որ իրրեւ հայ ժողովուրդը տարածուած ենք աշխարհով մէկ՝ ինչու ոչ նաեւ Արլի մէջ:

Պարտեզին անկիւնը կար քարէ կոթող մը: Նուիրուած հայոց Ռոնասպանութեան եւ ինչպէս հայերէն եւ Ֆրանսերէն գիրերը կը թուցատրիին «Ցեղասպանուած հայ ժողովուրդի յիշատակին, որոնք զոհ գացին Օսմանեան Երիտասարդ Թըքական կառավարութեան»: Բայց կոթողը ունէր գեղարուեստական մէկ փոքր արտայայտութիւն: Եթէ այսպէս ըսած ոչ դասական գեղարուեստական մտայղացում մըն էր, բայց ունէր բաւական խորքային արտայայտութիւն: Իսկ արտայայտութիւնը Երից Ռուլան Պելակամպային է, որ ծնած է 1956ին, Արլի մէջ: Ան Ֆրանսացի նկարիչ եւ գիրքերու հեղինակ արուեստագետ է, որ մինչեւ այսօր կը գործէ Ֆրանսական շատ մը հիմնարկներու մէջ:

Երից իր ասպարէզ արուեստի արտայայտութիւն-նկարը նկարազարդած է կոթողին տակ քանի մը նախադասութեամբ:

Ռայց նախ նկարը:

Պայութիւնն ու հայկականութիւնը խորհրդանշող պատուը՝ Նուրի որուն ֆրանսերէն հունակնիչը կրէնատ է, որ ֆրանսերէնով նաեւ թումբ կը նշանակէ: Եւ Երիցին երեւակայութեամբ այս հայկական տարը՝ թումբը, պայթեցաւ Օսմանեան Թուրքոյի մէջ եւ փշուռեցաւ հինգ միաւորներու, որոնք կարմիր էին, սկստի ունենալով թափած արիւնը: Սակայն այդ արիւնին մէջէն զուրս եկաւ նաեւ կենսը, որ տարածուեցաւ ու սփռուեցաւ աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ:

Սակայն նկատի ունենալով հայրութեան ապրելու կամքն ու վճռակամութիւնը կը նշմարեմ, որ Երիցին եւ իր պատկերին մէջ կ'երեւայ օպսիտիան հայկական քարը, որուն մէջ մեկտեղուած է հայուն արձունքը: Նոյն այս արձունքն է, որ ամբացուեցած է հայը, անոր համար դառնալով ամուր կրուն:

Բայց հայկական այս քարը ունի մշակութային մեկնաբանութիւն: Ան ոչ միայն հանգստացնող քար է այլեւ նորոգող եւ կագորոգող: Եւ Երից չէր սխալած հայուն արձունքները օպսիտիային մէջ ամփոփելու իմաստով: Եթէ մէկ կողմէ հայուն արձունքները ամբացուեցած է օպսիտիանը, բայց նաեւ նոյն հայը անոր մէջ գտած է իր հանգիստը: Այս հանգիստը հայուն համար բուժիչ դերակատարութիւն ունեցած է եւ անոր շնորհած է վերապրելու եւ վերանորոգուելու իրականութիւնը:

Երից չի զլանար այս ողբերգութիւնը ներկայացնելու իրրեւ համարողկային ցաւ: Եւ ան կը յատկանշէ այդ համամարդկային ցաւը յուշակոթողին երկլեզու իրականութեանը մէջ, ուր հայերէնը եւ





Ֆրանսերենը միասին կ'արտայայտեն այս ցարը:

«Ամառնային Պարտեզ»-ն դուրս գալու ընթացքին խորհրդածոյի եւ ընկալեցի Էրիքին պարզ բայց միաժամանակ խորունկ մեկնաբանութիւնը: Թէ տարածուած ենք աշխարհի հինգ ցամաքամասերու վրայ է լատկապէս այս օրերուն:

Իսկ եթէ ես կ'ապրիմ մէկ ցամաքամասի մէջ սակայն մնացեալ չորս ցամաքամասերուն մէջ ես կան հայեր, որոնց մարտահրաւիրները այսօր ամէն ժամանակէ աւելի նոյնն են նոյնիսկ եթէ անոնց գտնուած վայրերը տարբեր են: Լեզուի, մշակոյթի եւ ինքնութեան պահպանում, ու տակաւին յիշելու եւ պահանջելու մեծ հրամայական: Հայուն դիմագրուած համահայկական այս մարտահրաւիրութիւնը մէջ, ժամանակը եկած է համոզուելու, թէ գաղութ հասկացողութիւնը հայուն սփիւռքեան իրականութեան մէջէն կ'անցնի իւրաքանչիւրին՝ աշխարհագրական տուեալ սահմաններէն անդին: Պէտք չի բարարուիլ ներգաղութային մտահոգութիւններով միայն: Պէտք է տեսնել, թէ հինգ ցամաքամասերու վրայ տարածուած հայուն կեանքը՝ հինգ միաւորները, պէտք է պարփակեն հինգ ցամաքամասերու աշխարհագրական սահմանները:

Բայց առկայ է նաեւ հայուն ներկայ օրերու միտքը: Եւ այդ մտքին տուն տուող մտահոգութիւնն ու ծրագրային տեսողաշտի հիմքը՝ Պիտի կարենա՞նք տեսնել, թէ հայուն մտքին հիմքը պէտք է մեկնաբանուենայ անոր հինգ ցամաքամասերը եւ թէ հայուն գոյատեւելու գրաւականը անոր հինգ միաւորները իրար հետ համախմբելուն մէջ է:

Հայուն այս միտքը ամրացուած է իր ազգային քարին՝ օպսիտիանի մէջ: Հայը իր կեանքի ամուր ենթահողն ու կուռանը գտած է ու պիտի շարունակէ օպսիտիային մէջ: Եւ օպսիտիան հայուն հայրն է: Այն հայրենիքը, որ հայը կերտեց ցառով եւ արցունքով: Բայց այս ցառն ու արցունքը վերածուեցան ամուր, իրական, ապրող ու ապրեցնող հայրենի պետականութեան, եւ անոր կողքին նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան:

Եւ որը՝ կ'ընեսող, պայթեցաւ, փշուռեցաւ ու տարածուեցաւ աշխարհի հինգ ցամաքամասերու վրայ, ուր հայը ստեղծեց հինգ միաւոր, որ այսօր ապրող իրականութիւնն է:

Բայց այս հինգ ապրող միաւորները առանձին չեն: Հայը ունի իր օպսիտիանը՝ հայուն հայրենիքը, որ արդէն կերտած է քսան եւ հինգ տարիներու անկախացած պետականութիւն: Այս իրականութիւնը ինքնին կարելոր գրաւական է նկատի ունենալով, որ հայուն ինքնութիւնը ապրեցաւ ու տակաւին կ'ապրի ու պիտի շարունակէ ապրող գայի հորիզոնին նայիլ նոր տեսիլքով: Եւ հետեւելով Սարոյեանի յա-

նածեւումին, պատմութեան ընթացքին հայը փշուռեցաւ սակայն ան միշտ կերտեց նոր Հայաստան:

Եւ կ'արժէ, որ հայը ապրի այս տեսիլքով եթէ հինգ ցամաքամասերու վրայ երկարած հինգ միաւորները պիտի կամրջէ հայուն օպսիտիանին հայրենի պետականութեանը մէջ:

Եթէ անցնող քսան եւ հինգ այս տարիներուն ընթացքին ունեցանք թուաշիւտացք, տակաւին առկայ են շարք մը մարտահրաւիրներ: Այս մէկը իրական կեանքի անխուսափելի տուեալներն է: Եթէ կան քննադատութիւններ եւ պիտի շարունակեն ըլլալ, բայց նաեւ պէտք է աշխատիլ, որպէսզի հայրենի պետականութեանը սրսկեցը դրական ուժ, որովհետեւ ան է, որ կառուցողական է: Եւ հայը պարտի շարունակել իր կեանքը եւ կառուցել իր հայրենիքը՝ հիմնուելով Սարոյեանի սկզբունքներուն հիման վրայ:

Սարոյեան յանդգնեցաւ փնտռել աշխարհի վրայ այն ուժը, որ պիտի կարենար քանդել հայ ժողովուրդը: Ան անվարան կրցաւ յայտարարել, թէ չկայ ուժը մը, որ կրնայ քանդել հայը, որովհետեւ պատմութեան բոլոր առանձններուն մէջ հայուն ուժը միշտ եղած է դրական: Այս դրական ուժն է, որ ապրեցուցած է հայը եւ նոյն այս ուժով ան դէմ դրած է քանդիչ բոլոր ուժերուն՝ առանց քանդուելու: Եւ այս դրական ուժն է, որուն սրսկումը անհրաժեշտ է շարունակել համահայկական մեր կեանքին մէջ:

Այսօր ունինք մէկ կարելոր դրամազուլիս: Քսան եւ հինգ տարիներու վրայ երկարած հայկական հինգ միաւորները հինգ ցամաքամասերու մէջ եւ հայրենի պետականութիւնն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը շատ աւելի լաւ կրցան ու կրնան զիրար հասկնալ: Եւ այս պէտք է պահել, ամրացնել ու շարունակել: Այս դրամազուլիսով շատ աւելի լաւ կրնանք սրսկել այս դրական ներուժը:

Այլ քաղաքին յուշակոթողը, ուր Էրիք կրցած է տեսնել հայուն ապրող իրականութիւնը:

Պինգ միաւոր, հինգ ցամաքամաս:

Եթէ նուրը պայթեցաւ, փշուռեցաւ ու տարածուեցաւ: Բայց չի մեռաւ: Եւ չմեռելու այս սկզբունքը պիտի շարունակենք տանիլ վաղուան օրուան:

Բայց այս սկզբունքը կ'ապրի երբ կայ ներուժը, որ դրականն է՝ կառուցող եւ ոչ թէ քանդիչ:

## ՉԵԼԵՊԻՆ ԽՈՍՏՈՒՄԸ



Սաթենիկ Գրիգորեան ծնած է Բաղէշ (Պիթլիս) 1894-ին: Փոքր տարիքէն ամուսնացած է բաղէշցի Վաղարշակ Պապայեանին հետ: Պապայեան-Գրիգորեան ընտանիքները 20-րդ դարու սկիզբը կը փոխադրուին Միացեալ Նահանգներ: Սաթենիկ հագիւ տասնչորս տարեկան էր երբ կ'ունենայ իր առաջին մանչ գաւալը՝ Սուրենը, իսկ երկու տարի ետք՝ Արաքսին: 1908 թուականին Վաղարշակ եւ Սաթենիկ իրենց երկու փոքր երեխաներով կը վերադառնան Բաղէշ:

Իսկ Բաղէշ վերադարձը՝ երեւի հողին կարօտն էր: Պատմական Սասնայ Ձորին գիրկը՝ գեղեցիկ Վանայ լիճին հարաւ արեւմուտք տարածուած Տարոս ու Բիւրակեան լեռներուն եւ Տիգրիս գետին միջեւ: Աւելին, ան իր հարթ ու տաշուած թխագոյն բարերով եւ զգլխէ ու կ'անցնի ամեն գեղեցկութիւն: Հաւանաբար այս նոյն գեղեցկութիւնն էր գրաւողը, բայց նաեւ կայ հողին կարօտը ու անոր կանչը, որոնք մղեցին Ուիլիլմ Սարոյեանը եւս երթալու Բաղէշ՝ ինչ տեսելու իր ծնողաց ինքնութեան, արմատներուն, եւ կանչին:

Վաղարշակ Բաղէշի մէջ կը հիմնէ գորգի գործարան մը, բայց վրայ կը հասնի Համաշխարհային Ա. պատերազմը 1914-ին եւ Պապայեան ընտանիքը չի կրնար դուրս գալ Թուրքիայէն: Անոնք եւս կը ճաշակեն իրենց արեան ճակատագիրը թուրք հայերուն նման՝ քայքայով մահուան շուքի ձորին մէջէն: Բայց եւ այնպէս անոնք պիտի ունենային վահան մը՝ ապահով լաստ մը, որ պիտի փորձէր հասցնել գրեթէ խաղաղ ջուրերը:

Այդ լաստը բծիշկ Մուսթաֆա Չելեպին էր: Հայկէպ ծնած եւ նոյն քողացին մէջ արմատ նետած ծանօթ ընտանիք-գերդաստանի գաւալ, որ իր բժշկական ուսումը ստացած էր Պոլսոյ եւ Ֆրանսայի մէջ ու դարձած ծանօթ ակնաբու: Հինակոչուած է Օսմանեան կայսերական բանակին մէջ 1914-ին, որպէս սպայ եւ նշանակուած Պիթլիսի զինուորական հիւանդանոցի պետ: Պիթլիսի մէջ է, որ ծանօթացած է Վաղարշակին, Սաթենիկին ու անոնց ընտանիքին եւ բարեկամացած անոնց հետ:

Թեւ Մուսթաֆա Չելեպիի կեանքը առնչուած է Վաղարշակին եւ Սաթենիկին հետ, բայց ան նաեւ ուղղակի կապ ունի այն քառասուն հայ պատանի-երիտասարդ աղջիկներուն հետ, որոնց կեանքերուն վտանան ու պահապանը եղաւ Տեղասպանութեան տարիներուն: Այս հայ աղջիկները գիշերօթիկի սանուիկներ էին Բաղէշի ամերիկեան «Սուրբ Գոլիսը» վարժարանին մէջ: Անոնք կու գային շրջանի տարբեր գիւղերէն եւ Մշոյ դաշտէն սակայն անոնց կեանքը մթազնեցաւ 1915-ի ամբաս:

Վաղարշակ Պապայեան զգաց հայերուն գլխուն կողմը սուրացող արիւնտու փոթորիկին մօտալուտ ըլլալը: Վարդգէս Ահարոնեանն է՝ Անտիս Ահարոնեանի գաւալը, որ նաեւ կամաւոր քաջամարտիկ էր դարձաւոր Անդրանիկին բանակին մէջ: Իր յուշերուն մէջ գրած է Վաղարշակի խօսակցութիւնը Չելեպիի հետ: «Տըթթոր, ես գիտեմ մեր հայերուս գլխուն գալիքը: Եթէ որ մը թուրքերը գիս սպաննեն, կը ինկոտմ, որ եթէ կրնաս փրկես կինս եւ գաւակներս»:

Բաղէշի հայութիւնը ջարդուեցաւ եւ Վաղարշակ եղաւ այդ կոտորածի առաջին զոհերէն մէկը: Թուրքերը Վաղարշակը տարին ոստիկանատուն: Վարդգէս Ահարոնեան կը գրէ Սաթենիկի եւ Վաղարշակի հնգամեայ գաւկին, այդ օրերուն մանուկ բայց չմոռցուող յուշերուն ընդմէջէն. «Տըթթորը գիտէր, որ հայրս թոյն բաժնած էր, որ թուրքերու ձեռքը չիկանք, այլ թոյնով մեռնենք մենք մեզ: Տըթթորը ստիկա գիւտնալով խստիւ պատուիրեց մեզի, որ չըլլայ, որ թոյն խմենք ու խոստացաւ ամեն ձեւով հոգ տանիլ մեզի»:

Վաղարշակ ոստիկանատան մէջ թոյնը խմած եւ մեռած էր: Իսկ սուրբ. Չելեպին պիտի յարգէր իր բարեկամին տուած խոստումը՝ փրկելու Սաթենիկը եւ անոր երկու գաւակները: Բայց կար նաեւ Չելեպիին մարդկային խղճին խոստումը՝ փրկելու նաեւ ամերիկեան դպրոցի հայ պարմանուիկները: Եթէ Չելեպին Սաթենիկը եւ իր երկու գաւակները պատասպարեց իր մօտ, բայց շարունակեց տքնիլ փրկելու համար քառասուն հայ աղջիկները:

Մուսթաֆա Չելեպին կրցաւ համոզել թուրք սպաները, թէ որեւէ սպան չունի աղջիկները սպաննելի: «Բանալը կարիք ունի հիւան-



դպպահներու, ճաշ եփողներու ու տակաւին շատ մը այլ գործեր (յսպէս աղջիկներու», ըսաւ ան: Չելեպին կրցաւ համոզել թուրք սպաները, որ հայ աղջիկները աշխատին Պիթլիսի հիւանդանոցին մէջ:

Եւ այս անգամ պատմողը Արտեմիսն է՝ քառասուն հայ աղջիկներէն մին: «Հիւանդանոցը ճաշ տանող փոքր աղջիկներէն մէկը ես էի: Մեզի հիւանդանոց տանող-բերողը Հասսան անունով թուրք մըն էր, իսկ հիւանդանոցի վերակացուն Մամազ Չաւուշ անունով թուրք մըն էր, որ լաւ հայերէն կը խօսեր: Երբ հայերէն կը խօսէիք իրարու հետ, Մամազ Չաւուշը կը սաստեր մեզ, որ թրքերէն խօսիք ու կ'ըսեր. «Ա՛յ հայերը վերջացան, Աստուած չօգնեց անոնց»:

Մուսթաֆա Չելեպին ջանք չխնայեց հայ աղջիկներուն կեանքերը ապահովելու համար: Նոյնիսկ առիթ չտուաւ, որ հիւանդ ու վիրաւոր զինուորները, որոնք հիւանդանոց կը բերուէին որեւէ ձեւով ցանկութիւն ունենային անոնց նկատմամբ: Ան կրցաւ պահել հայ աղջիկները մինչեւ այն օրը երբ հրահանգ տրուեցաւ, որ բոլորը քաղաքէն հեռացուէին: Իսկ Արտեմիս գիտցաւ ինչ պիտի ըլլայ. «Այդ կը նշանակէր, որ մեզ պիտի տարագրէին ու սպաննէին»:

Բայց չհասան այդ մէկը կատարելու: Ռուսական բանակն ու հայ մարտիկները հասած էին Բաղէշ: Օր մըն ալ Հասանը՝ հիւանդանոցին թուրք վարորդը, շնչասպառ կը մտնէ հիւանդանոց եւ մեծ աղերս սանցով կ'ըսէ. «Հայ ֆետայիները քաղաքը լցուցեր են: Եթէ գիտ բռնեն, կը սպաննեն: Կ'աղայցնէմ ազատեցէք գիտ»:

Հայ կամաւորները կը մտնեն հիւանդանոց, ուր ներկայ էր նաեւ

տոքը. Չելեպին իր օսմանեան բանակայինի համազգեստով: Հայ կամաւորները կը յարծակին անոր վրայ, սակայն այս անգամ Չելեպին փրկող-պահողները կ'ըլլան հայ աղջիկները, որոնք կը նետուին տոքթորին եւ հայ մարտիկներուն միջեւ եւ լալով ու աղաչանքով կը բացազանչեն. «Ի՛ սէր Աստուծոյ, խնայեցէք այս մարդը: Ան է մեզ ազատողը, մեզ փրկողը»:



Գերի բռնուողներուն մէջ կ'ըլլայ նաեւ Մամազ Չաւուշը՝ հիւանդանոցին վերակացուն: Արտեմիսն է՝ ինքնավստահ եւ չարախիտը կերպով. «Նա սըլսըն (ինչպէ՛ս ես) Մամազ Չաւուշ»:

«Ձեր Աստուածը շատ զօրաւոր է», կը պատասխանէ Մամազ Չաւուշը հայերէնով:

Հայ կամաւորները Չելեպին կը յանձնեն ռուսական բանակին, որ զինք թուրք սպաներու հետ գերի կը տանին Ռուսիա:

Բայց կար Չելեպին խոստումը՝ տրուած իր Վաղարշակ բարեկամին, թէ պիտի պահեր անոր ընտանիքը: Գերի տարուելէն առաջ ան կը դասաւորէ, որ Սաթենիկ եւ իր երկու զաւակները ապահով հասնին անոր ընտանեկան բնակարանը Հալեպ: Եւ քառասուն ազատագրուած հայ աղջիկները կը սկսին նոր կեանքի: Անոնցմէ ոմանք կ'ամուսնանան հայ մարտիկներուն հետ, որոնք զիրենց ազատեցին, իսկ միւսները կը միանան իրենց հարազատներուն՝ Ամերիկա թէ այլուր:

Չելեպին երկու տարուան գերութենէ ետք ազատ արձակուելով կը վերադառնայ Հալեպ: Ան Սաթենիկին կը ներկայացնէ երեք տաս-

շարկ՝ վերադառնալ ընտանիքին, որոնք Ամերիկա էին, կամ հաստատուիլ Լորաստեղծ անկախ Հայաստան, կամ եթե կը փափաքի իր կեանքի ընկերը դառնալ: Սաթենիկ սիրայօծար կ'ընդունի ամուսնուալ Չելեպիի հետ:

Չելեպի կը շարունակե հաւատարիմ մնալ Վաղարշակին տուած իր խոստումին: Սուրենը եւ Արաքսին՝ Սաթենիկին երկու զաւակները, կը մեծան հայ եւ քրիստոնեայ: Չելեպի յանձնառու կ'ըլլայ երկու պատիկները հայկական վարժարան դրկելու երբ վերջից Լոր կ'հիմնուի գաղութին մէջ Յեղասպանութենէն եւ տարագրութենէն ետք: Իսկ Սաթենիկ միշտ ալ կը մնայ Չելեպի ընտանիքին շատ յարուած հայ հարսը՝ Մատամը:

Տոքթ. Մուսթաֆա Չելեպի հօրեղծօրս՝ տոքթ. Ռոպեր ճեպէճեանին մտերիմ գործակից-բարեկամն էր: Չելեպիին եւ անոր վեհանքն ու մարդկային նկարագիրին մասին յաճախ լսած եմ մեր ընտանական զրոյցներուն ընթացքին: Տոքթ. Ռոպեր ճեպէճեանի յուշերէն «Հայ գիտնորները գիտնալով, որ արաք բժիշկը ազատարարը եղած էր հայ աղջիկներուն զանոնք որպէս հիւանդապահ պահելով իր հիւանդանոցին մէջ, կը փութային իմաց տալ զօրավար Անդրանիկին: Չօրավարը անյապաղ կու գար անձամբ եւ ի սրտէ շնորհակալութիւն յայտնելու եւ արաք բժիշկին կը յանձնէր պատուոյ գիր»:

Մուսթաֆան եւ Սաթենիկը ունեցան հինգ զաւակներ: Մուսթաֆան մահացաւ 1959-ին իսկ Սաթենիկ 1963-ին: Սաթենիկ թաղուցաւ հայոց գերեզմանատունը՝ Պէրլուք:

«Ձեր Աստուածը շատ զօրաւոր է»:

Այս զօրութիւնը կեանքեր կերտելու զօրութիւն է. կեանքեր, որոնք կ'ապրին եւ կ'ապրեցնեն ու տակաւին կը վկայեն իրենց շարունակականութեամբ: Սաթենիկին, քառասուն հայ աղջիկներուն ու տակաւին շատերու կեանքերը խօսուն օրինակ են:

Կը մնայ յարգանքի ու երախտագիտական բաժինը Չելեպիին ու բոլոր անոնց նկատմամբ, որոնք պահեցին խոստումը, խոստումի մարդկային բարեկամութեան ու անոր շարունակականութեան բայց մանաւանդ խոստումը խիղճին ու անոր գիտակցութեան, թէ մարդկային կեանքերը ապրեցնելը արժէք է, որուն վրայ կը կերտուի պատմութիւն եւ քաղաքակրթութիւն:

Սաթենիկը, քառասուն հայ աղջիկները եւ արաք Չելեպին:

Տարբեր կեանքեր, որոնք միացան իրարու զօրութեամբ, զօրութիւն մը, որ կեանքեր պահեց բայց նաեւ կերտեց:

Չելեպիին խոստումը կեանքերը կերտելու խոստումն է: Արժ կառչիլ ու հաւատալ անոր:

## ՄԱՀՄԱՆԱՄԵՐԸ ՀԱՅՐ



«Այստեղէն կը սկսի Հայաստանը»: Դուկ. Սուրեն Դանիէլեանն է՝ երեսնաւոր հաջատուր Արզվեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի վարիչ տնօրէն:

Պուսահայ մանկավարժ եւ «Լոր Դպրոց»ի հիմնադիր Յովհաննէս Կիկելեանի ծննդեան 150-ամեակին նուիրուած երկօրեայ գիտաժողովին ենք: Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցաւ Երեսնի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ: Երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան անակի մէջ:

Եթէ շրջանի բնութեան գեղեցկութիւնը կը զգիւէ ու կ'անցնի ամէն ուշադրութիւն եւ հիացմունք, բայց կայ նաեւ հոգեկան ազդակը: Ռ'ըն է հոգեկան այդ ազդակը: Որ՝ ոչ միշտ ապահով այս սահմանամերձ յղանակ մէջ, հայը կը շարունակե ապրիլ բայց նաեւ գարգանալ:

Աշակերտները, տնօրէնը եւ ուսուցչական կազմը Յովհաննէս Կիկելեան վարժարանին մէջ մեզ դիմաւորեցին: Իսկ դիմաւորեցին:

Հայկական պար, երգ, հաց ու աղ, եւ երիտասարդ աշակերտ ստիկներու զինուորական տարազով՝ միշտ պատրաստի գիտակցութիւնը: Անդրադարձայ, որ հայկական երգն ու պարը որքա՛ն գրգռուոր են: Եթէ սրահներու կամ գեղարուեստական յայտագիրներու ընթացքին կ'ունկնդրես հայկական երգը եւ կը հաղորդուիս արուեստով, ապա բոլորովին տարբեր կ'ըլլայ պատկերը երբ սահմաններն շրջանին մէջ, առօրեայ իր մտահոգութիւններուն եւ զուգը կոխերուն եւ անապահովութիւններուն ընդմէջէն, կ'ապրիս այդ երգի լուրն տուած հոգեկան ուժը:



Եւ այդ երգերուն եւ պարերուն ընդմէջէն կը զգաս հայրենի հողին ինքնութիւնը եւ անոր տուած արժանապատուութիւնը քեզի իբրիս հայ: Այդ հողը, որ պէտք է պահուի: Եւ երբ հայ տղաքն ու աղջիկները կ'երգէին ու կը պարէին տեսայ, թէ որքա՛ն հաստատ էր իրենց շրջներէն ելած իւրաքանչիւր բառը: Բայց նաեւ որքա՛ն կանգուն էին անոնք իրենց պարերու իւրաքանչիւր շարժումին ընդմէջէն, որովհետեւ անոնք կ'երգէին ու կը պարէին հողի մը վրայ, որ պահուած է ու տակաւին կը պահպանուի նահատակութեամբ, եւ որուն մէջ խարսխուած է ապրելու ուժը: Այդ օր՝ Մայիս 27-ին, անոնք այդ ուժի բաժնէկեցեցան մեզի հետ:



«Կայան աւանը ինծի համար յաւերժութիւն է»: Լենա Վարդանան է՝ Յովհաննէս Հիւղեան վարժարանի տնօրէնը: «Առանց այս պարիս չեմ կրնար ապրիլ»: Լենային համար իր ամբողջ եութիւնը պարող կեանքի մը մէջ է: Հայ կնոջ ամուր կերպար՝ տոկուն նկարագիրով եւ ազգային անշեղ ինքնութեամբ, որ հայ նոր սերունդին կրթութիւն կը ջամբէ: Ան յուսահատիլ չճանչցող հայ մանկավարժն է, ու տակաւին՝ մեծ մայր, որ Կայան աւանին մէջ ինքզինք միշտ յարթական կը զգայ: «Չենք վախնար այնքան ատեն, որ կ'ունկնք ապրիլ, որպէսզի թուրքը վախնայ մեզմէ»: Եւ Լենային համար յարթանակի լաւագոյն միջոցը ապրելուն մէջ է:

Այս ապրող կեանքն է, որ տեսայ Կայան աւանին մէջ: Սահմանաւերջ գիւղը:

Դպրոցին մանուկները մեր գիտաժողովի երկրորդ օրուան աշխատանքներէն առաջ կատարեցին ներկայացում մը: Իսկ ներկայացումը՝ «Լոյս, սէր եւ կեանք»: Անոնք երգեցին եւ վկայեցին կեանք մը, որուն հիմքերը լոյսն ու սէրն են: Եւ այս արժանիքներով կեանք մըն է, որ անոնք վճռած են ապրիլ բայց նաեւ վճռած են յարթել:

Դասախօսութիւններէն ետք քիչ մը քալելով հասայ խրամատը՝ հոն, ուր սահման էր եւ կարելի չէր անելի առջեւ երթալ: Եւ այդ խրամատին մօտ կային ապրող վկայութիւններ: Հոն էր նահատակ քաշամարտիկ Գեորգիս յուշարձանը: Ու տակաւին հոն էր նաեւ կիսափլատակ տնակը, որուն մէջ կանգուն կեցած էին Սուսաննան եւ իր գաւակները: Բոլորն ալ տակաւին կ'ապրին Կայան աւանին մէջ:



Եթե ջկան քնակութեան յարմարաւետ ու բարւոց պայմաննէր, բայց կայ ապրելու հոգին: Այն հոգին, որ խառնուած է այդ խրամատին մէջ: Եւ եթէ հայու այս հոգին խրամատին կու տայ ուժ պահելու եւ պահպանելու համար զայն, բայց նաեւ անկէ կ'անտէ կեանքը ապրելու տեսլականը: Երեւի ա՛յս այլ հայուն իւրայատկութիւններն է եւ ինչպէս որ օտար լրագրող մը անցեալ ապրիլի Ղարաբաղի պարտերագմը եւ անոր ընդհանուր մթնոլորտը նկարագրելով ըսած էր «Տարօրինակ է հայը: Խաղաղ օրերուն կը ձգէ իր հայրենիքը քայլ պատերազմի ու ճգնաժամի ատեն կը վերադառնայ ու կը համարձակուի անոր շուրջ»: Երեւի մեր պատմութի՛ւնն է եւ այդ պատմութեան ստեղծած հոլովոյթնե՛րը, որոնք հայը վերածած են ճգնաժամի ժողովուրդի մը:

Կայան աւանն դուրս եկանք եւ հասանք Իջեան: Ճաշարանի մը մէջ մեզի պատրաստած էին ընթրիք: Արմեն Կիրակոսեանը մեր տղանին սպասարկողն էր: Երիտասարդ հայ մը, որ կ'ապրի Իջեանի մէջ: Ճաշի մատակարարումէն ետք Արմենը արտասանեց Սիամանթոյի «Չաւակը»: Եւ բանաստեղծին հոգին ու միտքը որքան դիպուկ էին այդ մթնոլորտին հետ:

Եւ «Չաւակը»: Չայրը գիշերով իր գաւակը կը հասցնէ Միջերկրականի ափերը՝ մաքառելով ահաւոր ալիքներուն դէմ, փրկելով միակ «յոյսը անբուռած իր գիւղին»: Եւ եթէ հայ ժողովուրդին պատմութիւնը մինչեւ այսօր լեցուն է ալիքներով, սակայն ուրիշ ելք չկայ քոս:

յի մաքառելէ անոնց դէմ: Դժուար թէ այլընտրանք մը ըլլայ: Չայր պիտի պահէ իր միակ յոյսը՝ հայրենի հողը:

Եւ Կայան աւանը եւ անոր խրամատին կողքին ապրող սահմանամերձ հայը ցոյց տուին կեանքը ապրելու եւ շարունակելու այս վճռակամութիւնը: Թէ կարելի է ապրիլ եւ պահել մեր միակ յոյսը, որքան ալ ատիկա դժուար ըլլայ:



Կայան աւան: Սահմանամերձ հայը: Խրամատին ընդմէջէն կեանքը պահելու եւ ապրելու մարտահրաւերը: Եւ դարձեալ Սիամանթոն է իր «Չաւակը»:

Բանաստեղծը հայ ժողովուրդին հարստութիւնը տեսաւ ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան մէջ: Եւ հայր, սահմանամերձ թէ այլ, պիտի պահէ այս հարստութիւնը: Ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան, ի՞նչ՝ հայուն հարստութեան ամուր գրաւակնը հայրենի հողն է:

Կայան աւան:

Սահմանամերձ հայը, որ վճռած է պահել իր հայրենի հողը եւ իր հարստութիւնը:

## ՍԱՅԻՏԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Իւրաքանչիւր Յալէպ ճամբորդութեան անպայման պէտք էր կանոնաւորաբար Մաարա գիւղը՝ Յալէպէն առաջ եւ մօտաւորապէս ութսուն քիլոմէթր հեռու: Եւ ասիկա ձեռով մը անգիր օրէնք եղած էր: Կամայ պէտք էր հոն կանգ առնէիք, թէ՛ քիչ մը հանգստանալու եւ թէ՛ համտեսելու գիւղին համեղ ճաշերը եւ անուշեղէնները: Փոքր տարիներ մինչեւ չափահասութիւն այս եղաւ մեր սովորութիւնը: Մաարա գիւղին հետ կը կամրջէի երկրորդական վարժարանի մէջ սորված արաբական գրականութեան մեծերէն՝ Ապու Ալա Մաարին: Սիրած էի այս բանաստեղծը եւ անոր հետ նաեւ կը սիրէի (ու տակաւին) անոր գիւղը:

Մաարա գիւղին ճաշարանները կը կոչուէին հանգիստի վայրաբերէնով՝ իսթիրահա: Այս ճաշարանները երբեք չունէին այսպէս ըսած բարձր մակարդակ եւ արդիականութիւն: Անելին, հոն կրնայիք տեսնել խոհանոցը ու մեզի հրամցուելու համար պատրաստուող ճաշերը: Յապա՛ լուացարանները եւ անոնց առնչակից բնութեան մէջ բացուող բաղնիքները: Այս բոլորը աննկատ կը դառնային այն քան ատեն, որ կար կերակուրը՝ համեղ էին ճաշերը: Բայց իրօրութիւն էր նաեւ, որ անոնք հանգիստ վայր էին եւ կը հանգստացնէին մեզ:

Բայց կար տակաւին անելին. մարդկային հաղորդականութիւնը եւ անոր ընդմէջէն ստեղծուած ջերմութիւնը: Կճարելու պահուն անպայման կար յանկերզը. «հալլի ալէնա» (հաշիւը մեր վրայ): Ճիշդ է, որ ասիկա միայն խօսք էր, բայց նաեւ իրական է այն, որ թէեւ պիտի վճարէիք մեր կերակուրին հաշիւը, բայց կար այդ մարդկային կապը թէկուզ խօսքով, որուն ընդմէջէն կը զգայիք, թէ մարդը կը խօսի մարդուն հետ, եւ թէ ան իր խօսքին ճամբով կ'արտայայտէ իր մտքի կայնութիւնը: Իմ քսանվեց երկար տարիներու ճամբորդական հեռիս մէջ չեմ տեսած նոյնանման արտայայտութիւն, նոյնիսկ երբ ան խօսքի սահմանը պիտի չանցնի:

Կը յիշեմ այս մարդկային ջերմութիւնը եւ այս բոլորը կ'անցնեմ ներկային: Ինչպէ՛ս կրնայ ըլլալ, որ այս ջերմ հոգին պիտի վերածուի այսօրուան ատելութեան ու տակաւին մահուան ու քանդումի:

Բայց կ'ուզեմ անցնիլ, քանի Յալէպի մէջ ալ կայ իմ շատ մը յիշատակներուն շարքին այլ ջերմութիւն մը:

Յալէպի երկու պարտեզները՝ Մաշըալը եւ Սեպիլը: Պատանեկան օրերես սկսած իւրաքանչիւր այցելութեանս պէտք էր, որ անգամ մի մտնէի այս պարտեզները եւ նկատի ունենալով, որ երկու պարտեզ-

ները կը գտնուէին հօրեղբորս Յալէպի տան շրջակայքը, դժուար էր այդ մէկը ընելը: Պարտեզները չունէին մասնաւոր բացառիկ գեղեցկութիւն մը բայց ունէին կարեւոր արտականիշ մը՝ հանգստութիւն: Անոնք մարդուն ներաշխարհը կը հանգստացնէին ու կը մեղմէին ամեն տազնապ: Վերջապէս Յալէպին նկարագիրն էր այդ՝ հանգստացնող քաղաք, յատկութիւն մը, որ նաեւ կ'ապրէր անոր պարտեզներուն մէջէն:

Ու դարձեալ իմ անհանգիստ հոգին: Ինչպէ՛ս կրնար այս հանգստացնող քաղաքը դառնալ այսքան անհանգիստ տեղ մը:

Սեպիլ պարտեզին մէջ կային քանի մը փոքր վանդակներ, որոնց մէջ սիրամարգ, նապաստակներ եւ կապիկներ կային: Մեր պատանեկան օրերու ներաշխարհին մէջ անոնք բաւարար էին, որպէսզի տարածքը կոչուէր կենդանաբանական պարտեզ, թէկուզ քանի մը անասուններով:

Պիտի սպասէիք, որ սիրամարգը բարեհաճէր իր թացստոցէն յուրս գալ ու բանար իր պոչը եւ մենք հիանայինք անոր գեղեցիկ գոյներով: Փոքրիկ նապաստակները մէկը միւսը պիտի հալածէր եւ մեզ պիտի զբաղցնէին: Ու տակաւին, երկու կապիկներ, որոնք կը նայէին մեր այցելուն եւ կարծես կ'ուզէին խօսիլ մեզի հետ: Այս բոլորը մեր պատանեկան օրերուն մեզի համար ուրախութիւն էր՝ պարզ, պզտիկ, աննշան, բայց գեղեցիկ եւ ուրախ:

Իւրաքանչիւր Յալէպ այցելութեանս պիտի ուզէի երթալ պարտեզ՝ տեսնելու համար նոյն այս աննշան վանդակներուն մէջ գտնուող կրեք տեսակ անասունները: Ճիշդ է, որ աշխարհով մէկ այցելած էի հսկայ տարածքներու վրայ գտնուող կենդանաբանական անտառներ, ուր բնութեան եւ անասուններուն հմայքը կը զգոյսէ ու կ'անցնի ամեն երեսակայութիւն, բայց չեմ գիտեր ինչո՛ւ Յալէպի Սեպիլի պարտեզի այդ քանի մը անասունները այդքան ուրախ հետք ձգած են իմ հոգիս մէջ: Երեւի նոյն այս ջերմութիւնն է, որ դրուած է յիշատակի անմար կրակին վրայ մինչեւ այսօր, նոյնիսկ երբ քաղաքը աներուած է:

Արդէն եղաւ անելի քան ութ տարի, որ Յալէպ չեմ այցելած բայց իմացայ եւ կարողացի, որ Սեպիլ պարտեզին մէջ կան տակաւին այդ



վանդակները եւ անոնց մէջ գեթ մէկ հատ կապիկ: Դետաքրքրուած էր իմանալ, որ կապիկը անուանած են Սայիտ, որ արաբերէնով կը նշանակէ ուրախ: Քաղաքի մը մէջ, որ ուրախ չէ այս օրերուն:

Երեւի Սայիտը միշտ ալ ուրախացուցած է իր այցելուները, բայց մը, որ գարմանակի չէ քանի իւրաքանչիւր այցելութեանս միշտ ալ կապիկ սայիտները ուրախ տրամադրութիւն ստեղծած են նաեւ իմ մէջս: Բայց Գալէպի պատերազմէն ի վեր մարդիկ սկսած են նշմարել, թէ Սայիտը տխուր է: Եթէ մէկ կողմէ ան կորսնցուցած է իր կողակիցը, բայց կան նաեւ ռուսները եւ քաղաքին ահաւոր վիճակը: Սայիտը ինք ալ կը վախնայ, ինք ալ տխուր է, ինչպէս ամբողջ Գալէպը: Իր պզտիկ տնակէն դուրս չի գար, ոչ ալ կ'ուզէ տեսնել զինք այցելողները:

Եւ հետաքրքրական էր իմանալ Սեպիլ պարտեզը այցելողներին մէկուն գրոյցը. «Սայիտը ասօջ շատ ուրախ էր, մեզ ալ կ'ուրախացնէր: Պատերազմէն ի վեր տխուր է: Պետք է իր տունը՝ Ափրիկէ երթայ, որպէսզի գտնէ իր ուրախութիւնը»:

Սայիտը տխուր է եւ ուրախութիւն կը փնտռէ եւ այդ ուրախութիւնը տուն վերադառնալուն մէջ է: Դապա՝ այդ միլիոնաւոր սուրբացի գաղթականները: Դոս, հոն եւ քիչ մը ամէն տեղ: Ե՞րբ է, որ անոնք ալ տուն պիտի վերադառնան եւ իրենց ուրախութիւնը գտնեն:

Զեմ գիտեր Սայիտը ինչպէ՛ս դուրս պիտի գայ իր վանդակէն եւ վերադառնայ տուն իր ուրախութիւնը գտնելու համար: Զեմ ալ գիտէր, թէ ե՞րբ եւ ինչպէ՛ս միլիոնաւոր սուրբացի թէ այլ գաղթականները պիտի վերադառնան իրենց տուները՝ գտնելու համար իրենց ուրախութիւնը: Ու Գալէպը, որ ուրախ եւ հանգստացնող քաղաքն է, ինչ գիտեր ե՞րբ եւ ինչպէ՛ս պիտի գտնէ իր անդորրութիւնը:

Բայց երեւի պետք է համոզուել, որ ուրախութիւնը իրաւունքի նման կ'առնուի եւ չի տրուիր, եւ թէ մարդ պիտի տքնի, որպէսզի իր տան մէջ ուրախութիւն կերտէ բայց նաեւ ուրախ պահէ եւ աշխարհի անելի լաւ տեղ մը ըլլայ ապրելու համար:

Մինչ այդ Սայիտը կը փնտռէ իր ուրախութիւնը եւ նաեւ մարդիկ ու հաւաքականութիւններ՝ Գալէպէն սկսած ու աշխարհով մէկ տարածուած, անոնք ալ կ'ուզեն տուն վերադառնալ եւ ուրախ ապրիլ:

Աստուած ստեղծեց աշխարհը մարդուն համար եւ զայն բարի որակեց: Դոն, ուր մարդը պիտի կարենար ուրախ ապրիլ: Բայց միշտ չէ ե՞րբ է, որ քաղաքական եւ տնտեսական ու տակաւին մեկնելով այլ հաշուառուներէ, պիտի սակարկեն նոյնիսկ մարդուն շնորհուած այս ուրախ տունը:

Սայիտին ուրախութիւնը ստեղծագործութեան շնորհած ուրախութիւնն է, արժէ պահել զայն:

# ՔԱՎՆԱՅԱՊԵՏԻՆ ԿԵՅՈՒՄԾՔԸ «ՉԵՐ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱԾԵՑԷՔ»

*«Բանի մը համար հոգ մի ընէք, հապա  
ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով,  
գոհութիւնով մէկտեղ չեք խնդրանքը Աս-  
տուծոյ յայտնի ըլլայ»:*

*(Թուրք սու Փիլիպպոս 4.6)*

Վիրակի, 11 Դեկտեմբեր 2016-ի ահաբեկչական արարքը Գահիրէի իրար համայնքի պատկանած Սբ. Մարկոս եկեղեցիին մատրան մէջ ինչքան անելի քան քսան եւ հինգ հաւատացեալներու կեանքերը եւ մեծ թիւով վիրաւորներ թողուց: Ահաբեկչական այս արարքը անգամ մը ալ ցնցեց Եգիպտոսի համայնքային կեանքը մասնաւորապէս եւ ռարածաշրջանի իրադարձութիւնները ընդհանրապէս: Քրիստոնէայ հաւաքականութիւններ դարձեալ մատնուեցան ահազանգային վտանգի մը, ուր քրիստոնէան մէկ կողմէ զգաց վախը բայց նաեւ իր զգացումները գրգռելով, իր ներաշխարհին մէջ յառաջացուց տառապանակ եւ քարկոթիւն:

«Ես կը սիրեմ Եգիպտոսը եւ միայն լաւն է, որ կը ցանկամ այս երկրին: Բայց այլեւս յուսախաբ եմ այն ապահովական ու համերաշխութեան խոստումներէն, որոնք արդիւնք չեն տար: Կը հաւատամ թէ Աստուած ինքն է

Վանքիս ղեկը եւ իրեն կը վստահիմ բայց սիրոտ վա-  
հով լեցուն է: Տա-  
պալին ունիմ հա-  
ւատքը քարիին  
վստումամբ, որ  
ուզայ Աստուծմ  
բայց չեմ կրնար  
թողցնել, թէ ին-  
քն այս բոլորը կը







պատահի: Ներաշխարհիս մէջ կայ անտելութիւն եւ բարկութիւն այս ոճրային արաքը ընդունելու նկատմամբ»: Եզիպտոսի գրասենեակը գործակիցներէս մէկն է, որուն հոգեվիճակը պետք չունի ոչ մէկ այլ բացատրութեան:

Վերջապէս քրիստոնէան ալ մարդ է իր մտահոգութիւններով եւ նոյնքան իրական են այն բոլոր մարդկային զգացումները, ուր հաւատացեալը նոյնպէս կրնայ ապրիլ ինչպէս բոլորը: Եւ պիտի չզարմանալ այս փոթորկալից ներաշխարհին համար:

Չուշացաւ դպտի համայնքի քահանայապետ Թաւադրոս Պապին քաջարի կեցուածքը: «Այս նահատակները, որոնք մեզմէ անոյ մեկնեցան այս աշխարհէն կը սորվեցնեն մեզի, որ պետք է պատրաստուի՞նք յաւիտենականութեան»: Եթէ Զահանայապետին խօսքը քրիստոնէական աստուածաբանութեան մեկնութիւնն է, բայց նախ ան յորդոր մըն է ժողովուրդին՝ տոկալու յաւիտենականութեան հասնելու համար: «Ձեր արցունքները եւ նեղութիւնները աղօթքի վերածեցէք», ըսաւ ան:

Աղօթքը կարեւոր հիմք է կրօններու կիրարկման մէջ եւ շէշտուած կերպով քրիստոնէական հաւատամքին պարագային: Մարդիկ կրնան աղօթել տարբեր ձեւերով: Ու տակաւին կայ տարբեր պատճառներ աղօթքի եւ անոր կիրարկումին մէջ: Աղօթքը պաշտամունքի խորհրդակաշի է մեղքերու խոստովանութեան եւ զղջումի, շնորհակա-

լութեան Աստուծոյ եւ իր բոլոր օրհնութիւններուն համար եւ տակաւին ուրիշներու պետքերուն համար խնդրանք: Բայց իրականութիւն մը կայ, որ պետք է առանձնացնել աղօթքի պարագային: Եւ այդ աղայանքով աղօթքն է:

Աղայանքը աստուածաբանութեան պրիսմակէն խնդրանք է պտղականութեան մը կամ անիրաւեշտութեան մը, որ կը ներկայացուի եւ կը կատարուի համեստութեան հոգիով եւ անոր ձգտելու ջերմեանով ներաշխարհով եւ անոր տեսլականովը:

Յին Կտակարանին մէջ քանիցս կ'երեւնայ աղօթքը՝ աղայանքը եւ տարբեր միջոցառումներու մէջէն: Եւ այս բոլոր միջոցառումներու միտք բանին հասնիլ եւ ձգտիլ է մարդկային կենցեղի մէջ համեստութեանը: «Ողորմէ ինծի եւ լսէ իմ աղօթքս» (Սաղմոս 4.1): «Ըու արդարութեանդ ինծի առաջնորդ եղիր» (Սաղմոս 4.8): «Փրկէ իմ անձս» (Սաղմոս 6.4) ու տակաւին՝ «Ով իմ Տէր Աստուած քեզի կը յուսամ» (Սաղմոս 7.1):

Ու դարձեալ Յին Կտակարանին մէջ կը հանդիպինք Դանիէլին, որ աղօթքէ Աստուծոյ՝ երախտագիտութեամբ եւ աղայանքով, որպէսզի օգնէր իրեն դէմ դնելու Դարեհ թագաւորի հրովարտակին, որ արգիլած էր աղօթել բացի թագաւորին: Դանիէլ կ'աղայէր՝ համեստութեամբ, իր աղօթքին մէջէն եւ օգնութիւն կը խնդրէր այդ կացութեան համար: «Օրը երեք անգամ ծունկի վրայ գալով կ'աղօթէր ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր նախկին սովորութեանը պէս» (Դանիէլ 6.10):

Նոր Կտակարանին մէջ Յիսուսի Գեթսեմանիին մէջ կատարած աղօթքը տիրական է եւ օրինակէի: «Ով Յայր իմ Եթէ կարելի է այս գաւաթը ինձմէ անցնի. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ հապա ինչպէս դուն կ'ուզես» (Մատթոս 6.13): Պօղոս Առաքեալ կը գծէ Աստուծոյ կամքի այս ճամբան, որուն մարդ կրնայ ձգտիլ եւ հասնիլ: Եւ այդ ճամբան աղօթքն է՝ աղայանքը: Եւ կը բացատրէ:

Պօղոս Առաքեալ քրիստոնէային կը յորդորէ իր վրայ անել Աստուծոյ սպառազինութիւնը (Եփեսացիս 6.13): Եւ այս սպառազինութիւնը ունի իր դրոյապատճառները. «Որպէսզի կարող ըլլաք չարութեան օրը դէմ դնել» (Եփեսացիս 6.13): Իսկ չարութեան օրը: Մարդկային պատմութեան առանցքին կրկնուող իրականութիւն է եւ մինչեւ այս օրը: Եւ սպառազինութիւնը պահելու համար պետք է «յարատեւութիւն եւ աղայանք» (Եփեսացիս 6.18): Եւ այս յարատեւութիւնը աղայանքին մէջ է եւ անոր համար: Եւ աղայանքը՝ աղօթքը, եթէ մէկ կողմէ մեզ պիտի ընէ համեստ՝ դառնալու համար Աստուծոյ պատկերին պէս բայց նաեւ եռանդուն, ուր Աստուծոյ պատկերը մեր մէջ պիտի խթանէ ընելու համար այն, որ ինք կ'ուզէ: Եւ այն, որ ինք կ'ուզէ:

իր խաղաղությունն է (Փիլիպեցիս 4.7), որ տարբեր է աշխարհի հարազատությունն: Եւ Իր ապահովությունն է (Փիլիպեցիս 4.7), որ միևնույն ժամանակում աշխարհի վերջաւան հայթայթել զայն: Եւ այս խաղաղութեանն է ապահովութեամբ է, որ Աստուած «դուրս պիտի հանէ արդարութիւնը լոյսի պէս եւ իրաւունքը կտօրուան պէս» (Սաղմոս 37.6):

Եթէ աշխարհի այս երկրային կեանքի չափանիշերը կ'ուշացնեն արդարութեան եւ իրաւունքին կիրարկումը համամարդկային միջկենսերուն մէջ, անոր համար կայ Զրիստոսի շնորհած խաղաղութիւնը եւ ապահովութիւնը իրաւաբանութիւնը անհատի համար: Եւ քրիստոնեային այս անհատական խաղաղութիւնով եւ ապահովութիւնով է, որ կարելի պիտի ըլլայ կերտել հաւաքականութիւնը: Յաւաքականութիւնը, ուր մարդիկ պիտի կրնան տեսնել, թէ կայ խաղաղութիւն եւ ապահովութիւն մը տարբեր բնութագրումով, որ մարդկային հաւաքական կեանքերուն համար արդարութիւն եւ իրաւունք կը կերտէ եւ այս արժէքը տեսանելի կը դառնայ երբ կրնանք կերտել եւ կամ փոխել մարդուն կեցուածքը: Կեցուածքը, ուր արցունքը, նեղութիւնը վախը, ատելութիւնը կը փոխարինուին աղօթքով: Ազաւանքով:

Քահանայապետին քաջարի կեցուածքը այս դժուարին օրերուն համար: Կեցուածք մը, որ կեանքեր կը կերտէ եւ ոչ թէ կը խլէ:

«Ձեր արցունքները եւ նեղութիւնները աղօթքի վերածեցէք»:

Աղօթքը ատելութիւնը կը վերածէ սիրոյ, պատերազմները՝ խաղաղութեան, անհանդուրժողականութիւնը՝ համերաշխութեան: Կրօնքներ, որոնք մարդ պէտք է ձգտի:

## ՔՐԻՍ ՊՈՒՆՏԱԿԱՆՆԻ ՀՊԱՐՏ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆԸ

«Նիւ Եորք Թայմզ»ի միջազգային տարբերակը ծանօթ է, որ լրատուական աշխարհի մէջ ունի իր վարկը: Եւ անոր մէջ երեւցող հաղորդում, հրապարակագրութիւն եւ յօդուած՝ իր կշիռը: Այս իմաստով «Նիւտսմէթը 7, 2016-ի թիւին մէջ երեւցած ամերիկահայ եւ միջազգային համաբաւ վայելող գրող Զրիս Պոհճալեանի մէկ յօդուածը հայուն դիմագիծը դրաւ միջազգային քարտէսի վրայ եթէ մէկ կողմէ պատմական իրողական իմաստով թայց նաեւ ներկայի քաղաքական-ոսկրամարական, իրաւական ու ճշմարիտ պահանջատիրութեան համար:

Իսկ յօդուածը: «Յպարտ ուխտագնացութիւն դէպի իմ հայրենական հողը»:

Զրիս Պոհճալեան կը նկարագրէ իր այցելութիւնը-ուխտագնացութիւնը դէպի Արցախ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ինչպէ՛ս կը նկարագրէ «փոքր, չճանչցուած Հանրապետութիւն»ը: Թայց այցելութիւնը եւ անոր նկարագրութիւնը կը սկսի ապրիլեան պատերազմին պատճառով ներկային դատարկ Թալիշէ՛ն՝ սահմանամերձ տարածաշրջանէն, պատերազմական գօտիի պաշտպանողական խրամատին տեսէն, ուր ան կը գրուցէ գնդապետ Գեղամ Պրիզորեանի հետ. «Եթէ խաղաղութիւն կ'ուզես, պէտք է պատրաստ ըլլաս պատերազմի»:

Զրիս Պոհճալեան եթէ մէկ կողմէ կը նկարագրէ իր գրոյցը գնդապետ Գեղամին հետ, յատկապէս անոր ներաշխարհը, թայց մէջբերումէ յետադարձ ակնարկ կը կատարէ պատմութեան եւ անոր հոլոփոյթներուն, թէ ինչպէ՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը



անցաւ տարբեր ժամանակահատուածէ՝ հասնելով անցեալ ապրիլի չորսօրեայ պատերազմին: Ան շէշոը կը դնէ ազերիական բարբառութեան վրայ, որ խթան եղած էր միջազգային հետազոտութիւններէ: Եւ անոր քննարկման: Եւ յօդուածը, որուն մէջ չեն պակսիր գիտական-առարկայական նուազւելերը, կայ Պոհնալեանին յստակ դիրքորոշումը. «Ես չեմ ուզեր դիրքորոշուիլ Լեռնային Ղարաբաղի կողմ քանի կայ արեան իմ պատկանելիութիւնս: Ես կը հաւատամ, որ պատմութիւնը հայերուն կողմն է»:

Իսկ Պոհնալեանի արեան պատկանելիութիւնը: «Ղարաբաղ այցելեցի այս ամառ նոյն պատճառով եւ նպատակով, որ ամէն տարի կ'այցելեմ Հայաստան եւ պատմական Կիլիկիան ու հայկական մշակութային կոթողներու մնացորդացները, որոնք տարածուած են սուրբը թրջական արեւելեան կողմը»:

Եւ Պոհնալեանի «ուխտագնացութիւնը» ունի իր խթանը. «Այս ամբողջ տարածաշրջանը իմ արեանս մէջն է: Իմ այցելութիւնս ուխտագնացութիւն է: Ես ամերիկահայ եմ եւ միայն միջին տարիքիս է, որ կապուեցայ եւ յարեցայ այս հնագոյն երկրին»:

Եւ ուշագրաւ երեւոյթը: Պոհնալեանի արեան մէջ ծնած եւ մեծցած ազգային-մշակութային իր ինքնութիւնը: Հայկական գիտակցութիւնը:

Եւ հոս արժէ բանալ փակագիծ մը:

Կարելի չէ մշակոյթին եւ անոր հետ անջուրդ ինքնութեան հասկացողութիւններուն տալ գիտական եւ առարկայական վերլուծում (Ուեյպըր, 2011): Մշակոյթի սերտողութիւններ չեն կրնար պարփակել մէկ մօտեցում այն բոլոր նիւթերուն, զորս մշակոյթը կ'ընդգրկէ եւ կ'անջուրդ: Անոր պատճառը կը կայանայ այն իրականութեան մէջ,



որ մշակոյթը ընկերային գիտութիւն է եւ անջուրած է հասարականութիւններու կեանքին մէջ պատահած եղելութիւններու որոշ ժամանակահատուածի եւ միջավայրի մէջ (Սթորի, 1994):

Քրիս Պոհնալեան՝ իր միջին տարիքին կրցաւ յարիլ իր ազգային-մշակութային ժառանգութեան, այդ ալ իր ծնած ու ապրած միջավայրին ու ժամանակահատուածին մէջ՝ իր յատուկ դիրքորոշումով: Որովհետեւ մշակոյթը՝ ազգային ինքնութիւնը, տեղ մը կրցաւ կամրջել իր անծին եւ իր կեանքին մէկ իրափոճակին հետ: Արդարեւ, մշակոյթը, որպէս ընկերային գիտութիւն չի կրնար ունենալ մէկ տեսակի տարագ, որ պիտի յարմարի իւրաքանչիւր հայու, սփիւռքահայու, առանց նկատի ունենալու անոր ապրած վայրն ու միջավայրը ու անոր տուեալները: Նոյնիսկ երբ ան ազգային-մշակութային ինքնութիւն է:

Պատմութեան սլաքը կարելի չէ ետեւ տանիլ: Այս է մեր պատմութիւնը եւ անոր հետեւանքները: Ցղոսսպանութիւնը արմատախիլ ըրաւ հայը, որ տարածուեցաւ աշխարհի բոլոր կողմերը: Իմ անելի բան քանակեց տարիներու ճամբորդական ասպարեզիս ընթացքին այցելեցի շատ մը գաղութներ եւ հանդիպեցայ նոյն հայուն, որ սակայն կը տարբերէր միւս հայէն՝ համաձայն իր ապրած երկրին ու միջավայրին: Եւ այս սփիւռքեան հայուն իրափոճակն է, ուր պէտք է տեսնել ազգային-մշակութային ինքնութեան ընկալումը եւ անոր միջոցներուն տարբերութիւնը մէկ գաղութէ միւսը:

Ու դարձած Պոհնալեանն ու իր յօդուածը: «Համաշխարհային առաջին պատերազմին իւրաքանչիւր չորս հայուն մէկը նահատակուեցաւ, այդ ալ ծրագրուած կերպով: Արցախի պատերազմը հայուն ինքնորոշման եւ գոյատեւելու պատերազմն է»:

Գեղամ Գրիգորեան Ղարաբաղի մէջ՝ սահմանամերձ տարածքին



վրայ, կը մղէ այս պատերազմը: Եւ նոյնիսկ այս պատերազմն է տարբեր բովանդակութեամբ, զոր իւրաքանչիւր հայ կը մղէ իր ապրած վայրին ու վիճակին մէջ: Պատերազմը իր ազգային-մշակութային ինքնութեան ու անոր հպարտութեան համար: Իւրաքանչիւր հայ իր ապրած վիճակին մէջ՝ ուխտագնացութեան մէջ է: Երեւի տարբեր ոլորտներով ու ձեւերով՝ հասնելու համար իր հպարտութեան:

Քրիստոսի ուխտագնացութիւնը եթէ իր հպարտութիւնն է, բայց նաեւ այդ իւրաքանչիւր հայունն է: Հայաստան, Ղարաբաղ եւ Ափիւղը: Հայկական գաղութները եւ հաւաքականութիւնները կրնան տարբերիլ մէկը միւսէն ըստ իրենց թիւին եւ մարդուժին: Ու տակաւին՝ ընկերային, քաղաքական ու տնտեսական իրավիճակէն կախեալ: Եւ տակաւին՝ մայրենիին ու լեզուապահպանման տարբեր մակարդակներով: Այս բոլորը հայուն մեծ պատկերին տարբեր մասնիկներն են:

Բայց այս բոլորին մէջէն հայը ունի մէկ ուխտագնացութիւն, թուեալ տարբեր ուղիներով եւ մարտահրաւերներով, հասնելու համար նոյն հպարտութեան՝ հայուն հպարտութեան:

Հայուն հպարտութիւնը, որ քով-քովի բերելով կը կազմէ մէկ, մեծ եւ զօրաւոր հայը: Եւ հայը պիտի շարունակէ իր ուխտագնացութիւնը՝ չկորսնցնելու համար իր հպարտութիւնը:

# 2017

«Հրայր, այն, ինչ որ կը գրես, այդ կը մնայ  
կհանքին մէջ»

Շահան Գանդասարեան

Իրաքանչիւր անհատ, հաւաքականութիւն եւ ժողովուրդ ունի իր պատմութիւնը: Եթէ պատմութիւնը մէկ կողմէ անձնական է, քայքայ նաեւ հաւաքական ու տակաւին՝ ազգային: Պատմութիւնը անցեալէն է, քայքայ նաեւ ներկայ օրերուն համար ու տակաւին: Եւ պատմութիւնը ինչ ներառեր միայն ապրուած կեանքի իրականութիւնները՝ տուեալ ժամանակաշրջանի եղելութիւններուն ընդմէջէն: Պատմութիւնը ունի նաեւ պատգամ՝ իր յոյսերով եւ յոյզերով: Ու տակաւին, պատգամը հասկնալու, հասկցնելու, համոզելու, փոխելու՝ իրաւունքի, արդարութեան եւ ճշմարտութեան իր միտումներով:

Պատմութիւնը ինքնութիւն է, մշակոյթ եւ ապրելակերպ: Գաղափարները եւ տեսակետները ուժ են, քայքայ թէ ինչպէ՛ս կրնաս այդ նոյնը պատմել, այդ կը մնայ իրականացուելիք գլխաւոր տեսլական: Մարդուն եւ հաւաքականութեան կեանքերու շարժառիթները պատմութեամբ է, որ կը յառաջանան եւ պատմութիւնը կը գործածենք, որպէսզի կեանքի մէջ նպատակակետեր իրագործենք: Եթէ կը միտիք հաւաքականութիւններու մտքին ու սրտին հասնիլ, ուրեմն պետք է պերտել, թէ ինչպէ՛ս եւ ի՞նչ տեսակի պատմութիւն պետք է փոխանցել, որպէսզի կարելի ըլլայ իրագործել ատիկա:

Կան պատմութիւններ, որոնք կը թափանցեն մարդուն մտքին մէջ եւ որոնք կու գան մարդուն կեանքին համար նշանակութիւններ ստեղծելու: Եւ այս իմաստով պատմութիւնները եւ անոնք ընկալումը շատ աւելի մեծ ազդեցութիւն կրնան ունենալ, քան դասապահի մը լինթաքքին ջամբուած գիտելիքները: Պատմութիւնները կ'օգնեն պահմանելու, թէ ո՛վ է իւրաքանչիւր անհատ, ուրկէ՞ եկած է եւ մասնաւորաբար ո՞ր պետք է ուղղուի: Պատմութիւնները այս իմաստով կը դառնան կողմնացոյց՝ օգնելով անհատն ու հաւաքականութիւնը իրենց կեանքերուն ուղղութիւնները ճշդելու: Պատմութիւնները կը խօսին մարդու ինքնութեան մասին եւ կ'օգնեն ստեղծելու հասարակաց հասկացողութիւններ:

Եւ հոս վեր պետք է առնել այն, թէ ինչպէ՛ս այս նոյն պատմութիւնը պետք է փոխանցել եւ օգնել զանգուածին, որպէսզի ըմբռնէ եւ հասկնայ գայն:

Ներկայ օրերու մշակոյթը իր համապարփակ հասկացողութեամբ գիր, գրականութիւն, արուեստ, հաւատք, կենցաղ, պահանջատիրութիւն եւ այլն, կը կազմուի ու կը կերտուի որոշ համեմատութեամբ տեղեկատուութեան աշխարհին ստեղծած միջոցառումներուն մէջէն ու անոր միջոցով: Այսօր կեանքի իւրաքանչիւր քայլ տեղ մը կը հանդիպի տեղեկատուութեան աշխարհին մէջ եղած մէկ միջոցառումին: Տեղեկատուութիւն կրնայ ընդգրկել իր տպագիր ու թուայնացած ձևերը: Եւ այս իմաստով մշակոյթ մը, որուն զլիսաւոր փոխանցումն է ընկալումի ձեւերէն մէկը տեղեկատուութեան աշխարհին է, եթէ իր մէջ եւ իր շուրջ չունի գրաւիչ պատմութիւն, զոր պետք է փոխանցել, մտքացթողումներ կրնայ ստեղծել եւ շատ դժուար կ'ըլլայ այլ ձեւերով գայն ամբողջացնելը: Եւ տեղեկատուութեան աշխարհին համար անհրաժեշտ կը դառնայ այն, թէ տեղեկատուութեան միջոցները ինչպէ՛ս պիտի կարենան անձնականացնել մշակոյթի այս պատմութիւնը եւ պատմել գայն, որպէսզի կարելի ըլլայ նոյնը փոխանցել ընթերցողին եւ լսողին:



Եւ նոյն այս պատմութիւնը եւ անոր փոխանցումը ունին երկու մակարդակ-հանգրուան: Եթէ մէկ կողմէ ներազգային, ուր կարելի պիտի ըլլայ նոյն այս պատմութիւնը պատմել նոյնիսկ պատմութեան սեփականատիրոջ՝ ժողովուրդին, այսինքն՝ մարդուն եւ հաս-

կականութեան տալ իր ինքնութիւնը եւ մշակոյթը, միւս կողմէ անկայն միջազգայինն ու համամարդկայինը, զոր կարելի պիտի ըլլայ փոխանցել ուրիշին: Ան, որ օտար է, անհրաժեշտ է, որ նաեւ գիտնայ միւսին պատմութիւնը:

Եւ պատմութիւնը փոխանցելու մէջ եթէ կայ նոյնիսկն պատմութիւնը, բայց նաեւ կարդացող-լսող անհատն ու տակաւին նոյնիսկն պատմութեան նպատակակէտը: Եւ այս երեք իրականութիւնները իրարու հետ անչուած են: Եթէ անհատը պիտի կարդայ-լսէ պատմութիւնը, պիտի կարդայ-լսէ ըմբռնելու եւ հասկնալու միտումով: Եթէ մէկ կողմէ կայ նիւթը, պատգամը, միւս կողմէ կայ անոր պատմաբաղաճական ու մշակութային տուեալները եւ անոնց բաղադրիչ մասերը: Եւ կարդացողը այդ բաղադրիչ մասերը զիրար կապելով պիտի կարենայ ստեղծել իմաստ, զոր պիտի թարգմանէ իր կեանքին մէջ ու անոր տայ արժէք: Եւ այս իմաստով փոխանցուած-կարդացուած պատմութիւնը կը կամրջուի կարդացողին-լսողին հետ: Եւ այս կամրջը կը լիցքաւորէ մշակութային, գրական, բարոյական ու տակաւին այլ արժէքափէր կարդացողին-ուկնկրողին համար իր ապրած կեանքի պատմաքաղաքական ժամանակաշրջանին համար:

«Ազգակ»ն ալ ունի իր պատմութիւնը, որ հայունն է: Եթէ մէկ կողմէ հոն կայ հայուն անցեալի պատմութիւնը՝ իր ապրած կեանքով ու տաճապով, միւս կողմէ կայ ներկան ու հորիզոնին վրայ (չ)երեւցող իրավիճակները: Պատմութիւնը միայն անցեալը չէ. պատմութիւնը կը խօսի ներկային ու գալիք օրերուն համար նաեւ: Եւ «Ազգակ» եթէ ունի հայուն պատմութիւնը, եւ եթէ մէկ կողմէ անոր անցեալը, բայց նաեւ կը պատմէ ներկան:

«Ազգակ»ի ինստուն երկար տարիներու ճամբան լեցուն է հայուն այս պատմութիւններով: «Ազգակ» յաջողեցաւ կամրջել նիւթը, պատմութիւնը ընթերցողին հետ: Ան կրցաւ հայուն պատմութիւնը իր իրայատկութեամբ եւ ամբողջութեամբ կամրջել ընթերցողին հետ՝ հասնելով անոր մտքին ու հոգիին: Ան ընթերցողին կեանքին, նաեւ հաւաքականութեան կեանքերուն, տուաւ իմաստ եւ արժէք: Տեղեկատուութեան ներկայ օրերու բոլոր յառաջադաճքները ի գործ դնելով այս թերթը կրցաւ հայուն պատմութիւնը հասցնել աշխարհասփիւռ հայութեան՝ հայրենիքի մէջ թէ սփիւռքի, առանց խորականութեան, այդպիսով դառնալով համահայկական ու նաեւ համամարդկային:

Ու պատմութիւնը ունի իր շարունակական հոլովոյթները, որովհետեւ կարելի չէ, որ պատմութիւնը ընդհատուի: Եւ այս շարունակական հոլովոյթը «Ազգակ»ին համար իր ներկայ ժամանակներու մարտահրաւէնն է:

## «ՊԱՊԻԻ ԼԵԶՈՒՆ ԽՕՍԱՎ»

«Չրայր, այն, ինչ որ կը գրես, այդ կը մնայ կեանքին մէջ»: «Ազգակ»ի գլխաւոր խմբագիր եւ տնօրէն Շահան Գանտահարեանի յորդոր-քաջալերանքն է, որ աշխատակիցը, գրողը աւելիով արտադրութիւն արտադրելը աննպատակ չէ: Պատմութիւնն է դարձեալ՝ նոյն պատմութիւնս, բայց նաեւ հայունը: Եւ այս հայուն պատմութիւնը տանելու համար անցեալի օղակներուն մէջէն եւ հասցնելու միջին այսօրը, ու տակաւին վարդուան իրականութիւններուն մէջէն: Որով հետեւ հայուն պատմութիւնը պէտք է շարունակուի եւ երբեք չունի հատուի: Եւ «Ազգակ» կը հաւատայ հայուն պատմութեան շարունակականութեան անհրաժեշտութեան եւ հաւատացածը կը վերահսկող գործի՝ խթանելով բոլորը քալելու այդ ճամբէն:

«Այն, ինչ որ կը գրես այդ կը մնայ»: Եւ «մնալը» կեանքի գոյութեան եւ շարունակականութեան ամուր եւ ամոռջ հիմք է:

«Ազգակ»ի պատմութիւնը, հայո՛ւն պատմութիւնն է՝ անցեալի սկսած մինչեւ օրս շարունակուող ու ապագայի փայլուն տեսլականով: Եւ «Ազգակ» կրցաւ ու տակաւին լաւապէս կը շարունակէ պատմել հայուն պատմութիւնը: Պատմութիւն մը, որ կը լիցքաւորէ հայուն արժէքային կեանքը:

«Ազգակ»ին պատմութիւնը, անապամանօրէն՝ հայունը:

### Օգտագործուած աղբիւրներ

Cooke, P. (2008) *Branding Faith. California: Regal Publishers.*

Crockett, J. V. (2012) *Bible in the Life of the Anglican Communion Reflections. New York: Nida Institute for Biblical Scholarship.*

Flood, G. D. (July 2006) *The Phenomenology of Scripture: Patterns of Reception and Discovery behind Scriptural Reasoning. Modern Theology 22, 3.*

Snow, C. (2002) *Reading for Understanding, toward an R and D program. Washington, DC: US Department of Education.*

Աթլանթա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Փետրուար 2017: Աթլանթա եղած էր տեղացի հնդիկ ժողովուրդին կարեւոր ուստանը կոր Եւրոպայէն տարբեր ազգեր սկսան տեղաւորուիլ այս շրջանը: Ամերիկայի քաղաքացիական պատերազմին՝ 19-րդ դարուն, Աթլանթան դարձած էր գինուրակեան գործունէութիւններու կեդրոն: Եթէ քաղաքը մեծապէս քանդուեցաւ այդ օրերուն, ապա այսօր կը նկատուի Ամերիկայի տնտեսական եւ էլեմտական կարեւոր կեդրոններէն մէկը: Աթլանթան գեղեցիկ է. փոքր լեռներ իրարու կցուած՝ ստեղծած են ոլորանման միաւորներ եւ շրջապատած են զայն: Այս տարածքին մէջ կան խիտ անտառներ եւ կանաչ մարգագետիններ: Այս գեղեցիկ ընկերութեան մէջ սկսայ փնտռել հայկական գեղեցկութիւնը:

«Գաղութը բաղկացնող ընտանիքներուն թիւը յստակ չէ», Մարի Կարապետեան-Աւետիսեանն է խօսողը: «Երեւի չորս հարիւր ընտանիք»: Բայց ինչ որ հիմնական է, եղած է այն, որ քանի մը նուիրեալներ 2001 թուականին ուզած են համախմբել հայկական այս ցիրուցան գաղութը եւ ստեղծած են «Յայ Տուն»: Պզտիկ բարձունքի մը վրայ, անտառներուն մէջ, «Յայ Տուն»ը մինչեւ այսօր դարձած է հայուն կեդրոնը: Եթէ մէկ կողմէ հոգեւոր-եկեղեցական, բայց նաեւ ընկերային ու տակաւին կրթական-դաստիարակչական կեդրոն:

Մարին եկած է Թեհրանէ: 1974 թուականին դուրս եկած է իր ծննդավայրէն եւ երեւի ուզած է նոր աշխարհին մէջ գտնել նորը, տարբերը, քան այն, ինչ որ ինչ ունեցած է: Մեծ Ամերիկայի մէջ թափառած է տարբեր շրջաններ եւ քիչ մը հեռու հայկական իրականու-



թեն, մինչև որ հանդիպած է Գրիգորին, որ Լիբանանէն Ամերիկա հաստատուած էր, եւ միասին կազմած են ընտանիք: Ընտանիքին հետ սկսած է Մարիի հայկական ուղեւորութիւնը: Չաւակներուն ծնունդէն ետք սկսած է տեսնել, թէ որքան կարեւոր է ազգային ինքնութիւնը, այդ ինքնութեամբ դաստիարակութիւնը եւ անոր պահպանումը: Տեսնելով իր ընտանիքին դաստիարակութեան ակադեմիութիւնը՝ Մարին եղած է շրջահայեաց եւ կամովին համարկած է զազուրի հայկական կեանքի կազմակերպումին մէջ: Եւ այսօր ան փոխատենապետն է հայկական զազուրի յանձնախումբին:

Բայց կար Մարիին հօր պատուէրը: Այս պատուէրը կարծէք Մարիին հետ ճամբորդած է մէկ քաղաքէն միւսը եւ դարձած անոր կեանքին զգաստութիւնը՝ «Պապիդ լեզուն խօսա՛»: Եւ այդ լեզուի պահպանումին հետ Մարի նոր աշխարհի իր կեանքի տարբեր փորձառութիւններուն ընդմէջէն սկսած էր տեսնել, թէ որքան կարեւոր է եղեր հպարտութիւնը: «Ինքզինքդ բարձր պետք է տեսնես իրեն հայ», ըսաւ Մարին: «Իբրեւ ծնողք եւ ընտանիք մենք շատ կարեւոր պարտականութիւն ունինք մեր զաւակներուն նկատմամբ՝ ազգային անանդին հանդէպ այս հպարտութիւնը փոխանցելու առումով», նշեց Մարի:

Շաբաթ 25 Փետրուար: «Չայ Տուն»ին մէջ կար եռանդ եւ խանդավառութիւն: Բարեկենդանի հաւաք-ճաշկերոյթի պատրաստութիւն: Աթլանթայի այս անտառներուն մէջ հայ կեանքը կ'եռար հայկական տոհմական մեր սովորութիւններուն վայելքին ընդմէջէն: Խումբ մը նուիրեալներ սկսած էին կարգադրութիւններ տեսնել՝ պատրաստուելու համար երեկոյեան յայտագիրին:

Մարիամ Տիպան կու գայ Չայլէպէն: Երկու տարի առաջ եկած է Աթլանթա: Ակրած է Չայլէպի արհաւիրքը, տեսած աւերն ու մահը՝ Տակաւին, կը յիշէ իրենց ապրած շէնքին վրայ արձակուած ռումբը եւ անոր յառաջացուցած հրդեհին պատճառով հրկիզուած իր որպցին: Բայց այդ հրդեհը միայն քանդող ուժ չէր Մարիամին համար, այլ նաեւ հոգեկան ջերմութիւն սնուցող երեւոյթ: Չայլէպի ստեղծած հոգեկան ջերմութիւնը, որ Մարիամ կը փնտռէ Աթլանթայի մէջ: «Աղբկան մօտ ուզեցի ըլլալ», ըսաւ Մարիամ: Եթէ դէմքին վրայ կար յուզում, ապա առանց յուսահատութեան: «Մարդ ո՛ր կը ծնի եւ ո՛ր կը մահանայ, չի գիտեր եղեր», նշեց ան՝ աւելցնելով. «Պէտք է ապրի»:

Լարան ծնած է Աթլանթա: Չայրը՝ Արա Զէյֆեր, եկած է Պոլիսէն Մայրը ամերիկացի է: «Մայրս միշտ օտար նկատուեցաւ եւ անոր համար ալ շատ աշխատանք տարաւ, որպէսզի ընդունուի հայկական իրականութեան մէջ», ըսաւ Լարա: «Փոքր տարիքէս հայկական գիտակցութեամբ մեծցայ», ընդօժեց ան:

«Չայ Տուն»ին մէջ ստեղծուած է փոքր մատուռ մը: Ամիսը մէկ անգամ կը մատուցուի պատարագ, երբ տեր հայրը գայ շրջանի քաղաքէն: «Եկեղեցին կարեւոր է իմ կեանքիս մէջ: Անկա կարեւոր դեր ունի հայ մշակոյթի պահպանման առումով», ըսաւ Լարան:

Լարա ամուսնացած է ամերիկացիի մը հետ: Երեկ ընտանիքին հոլովոյթն է, որ ինքզինք պետք է կրկնէ: «Չաւակ քառորդ հայ է», յարունակեց Լարան՝ աւելցնելով. «Եթէ իր մէջ կայ քառորդ հայութիւն, ատիկա բաւարար է, որ ան հայ ըլլայ»: Եթէ Լարային մէջ կայ զգացական խանդավառութիւն, բայց կայ նաեւ իրապաշտ մօտեցում: «Կը ցաւիմ, որ հայոց լեզուն չտրվեցայ: Բայց իմ զակիս հայրէն կը տրվեցնեմ, նոյնիսկ երբ ան քառորդ հայ է», ըսաւ Լարան՝ նշելով միաժամանակ, որ «լեզուն շատ կարեւոր է, որպէսզի կարեանք պահել մեր մշակոյթը»:



Ամեն Կիրակի «Չայ Տուն»ին մէջ հայերէն, հայ մշակոյթ ու կրօն կը սորվեցնեն: Մարիա Թերզեան 14 տարիէ ի վեր ստանձնած է այս առաջելութիւնը: Մարիան պէրյութահայ մայրն է, որ գիտէ կեանքին մէջ տոկալու վճռակամութիւնը:

Նայիրա Պաղտասարեան ընդհանրապէս լուռ էր: Եկած է Չայատանէն, 17 տարի առաջ: Երեք երեխայ ունի, բայց իր ծնողքն է հաւաքատները տակաւին Երեան են: «Աւելի լաւ կեանքի համար եկանք», ըսաւ Նայիրան: Եւ չուշացաւ իմ հարցումս: «Գտա՞ր այդ կեանքը»: «Գտայ եւ չգտայ», պատասխանեց Նայիրա:



Նախիրայի գաւակները յաճախ Հայաստան կ'երթան, որպէսզի մեծ ծնողքին հետ ըլլան: Բայց Նախիրան՝ Հայաստանէն հեռանալէ ետք՝ Նոյնիսկ այցելութեան համար չէ վերադարձած: «Մայրը պէտք է այլ խառնի, որ գաւակները ապրին», ըսաւ Նախիրա:

Եթէ Նախիրայի դէմքին վրայ կար պզտիկ ժպիտ մը, բայց այդ ժպիտին ետին ակներեւ էր յուզումը: Յստակ էր, որ Ամերիկա գալու որոշումը երաճ էր դժուար: Բայց առած էին այդ դժուար որոշումը: Այդ որոշումին մէջ Նախիրան նաեւ դրաւ իր հաստատ համոզումը՝ «Ինչ շատ եմ սիրում Հայաստանը»:

Դարձեալ Մարին է: Կը խօսի Տեղասպանութեան ահաւորութեան մասին: «Տեղասպանութենէն ճողոպրած երրորդ սերունդն ենք եւ այսօր տակաւին կը խօսինք պահանջատիրութեան մասին: Չեմ կրնար հանդուրժել, որ այսքան նահատակ տուած ենք եւ մեծ տարածութեամբ հող կորսնցուցած»: Եթէ Մարին մէջ կար զսպուած բարկութիւն, բայց կար նաեւ գիտակցութիւն: Գիտակցութիւնը Մարին, որ իր հորագատ հողին վրայ չէ, որ կ'ապրի այսօր:

Թեհրան, Պեյրութ, Հայկա, Պոլիս, Երեւան: Եւ այսօր այս քորթը Աթլանթա: Հայուն հարագատ հողէն հեռու, բայց հայու հարագատ կեանքն է, որ կը շարունակուի՝ ինչ եւ Նոր սերունդը միասին: Այդ «Հայ Տուն»ին մէջ հայու հարագատ կեանքերուն ընդմէջէն տեսայ թիւնչալէս Նոյնիսկն հայուն զգացումները եւ մտահոգութիւնները քորթուի կու գան եղեր: Եթէ մէկ կողմէ կայ Հայաստանի սերը եւ կրօնուած հողին գիտակցութիւնը, միւս կողմէ կայ նաեւ հայուն պահանջատիրութեան շարունակականութեան մէջ տոկալու հրամայականը:

Բայց ներկայ օրերուն շատ են մարտահրաւերները:

Եթէ պապիդ լեզուն կը խարխալի ու կը կոտորուի, իսկ հայուն արիւնը լման է թէ կէս, քառորդ ու տակաւին: Բայց կայ պատմութեան ճշմարտացիութիւնը եւ փաստը, որ հայը պիտի մղէ Նախիրայի դէպի առջեւ եւ աւելի լաւին:

Հարկը եւ երկու տարիներ առաջ հայուն հոսած արիւնը երբեք չցամքեցաւ: Անիկա այսօր ապրող ու ճշգրտը արին է: Ու իր հողին արմատախիլ եղած պապի լեզուն տակաւին ողջ է:

Այս ողջ լեզուն եւ ապրող արիւնն են, զորս պիտի տանինք դէպի ապագայ, դէպի աւելի լաւ: Պիտի տանինք մեր սիրով, կարօտով, հպարտութեամբ, գիտակցութեամբ, բայց անպայմանօրէն մեր տոկունութեամբ: Եւ երեւի միշտ յիշելով եւ յիշեցնելով՝ «Պապիդ լեզուն խօսա՛»:

Աթլանթայի «Հայ Տուն»էն հնչող պատուերը: Ինծի եւ քորթին «Պապիդ լեզուն խօսա՛», որպէսզի հայուն արիւնը չցամքի եւ շարունակէ ապրիլ:

## «ՑԱԷԸ ԻՆՉՊԷՄ ԿԲՆԱՍ ՄՈՒՆԱ»

Իրաքանչիւր աշխատանքային ճամբորդութեան եւ ոչ հայկական հանդիպում-ժողովներու եւ ելոյթներու ընթացքին միշտ ալ հետամուտ կ'ըլլամ ներկայացնելու, զեթ համարօտ, իմ՝ հայուս պատմութիւնը: Պէտք չէ երբեք ակնկալել, որ ամբողջ աշխարհի գիտնայ մեր պատմութիւնը: Եթէ կան շատեր, որոնք լսած են մեր պատմութեան եւ անոր ստեղծած ցաւին մասին, բայց նաեւ կան ուրիշներ, որոնք համար այս մէկը երրորդին է: Եւ յարմար է, որ լսողը նաեւ գիտնայ, թէ ո՛վ է գեկուցողը, որուն պատմութեան ակնաշաւուր ըլլալով շատ աւելի լաւ պիտի յիշուի գեկուցողին քան թէ:

Մարտ 2017, Զէյի թաւուն, Հարաւային Աֆրիկէ: Կը խօսուի մեր նստուածաշնչային ընկերութեան գրասենեակի անձնակազմին՝ Միջին Արեւելքի Զրիտուկական առաքելութեան վերջին ժամանակներու մարտահրաւերներուն մասին: Ներկայացուցի, թէ ինչալէս եւ, որ հայ եմ, ծնած եմ արարական երկրի մը մէջ: Ո՛չ միայն խօսեցայ Տեղասպանութեան արեւելիքին, հայութեան տեղահանումին եւ աշխարհով մէկ տարածուելու մեր իրականութեան մասին, այլ նաեւ այն ահաւոր ցաւին



մասին, որ հետեանք է այդ մեծ համամարդկային ողբերգության «Յեղասպանութենէն ճողոպրած երրորդ սերունդի ներկայացուցիչն եմ, բայց տակաւին իմ մէջ կը կրեմ այս ցաւը», եղաւ իմ մատնած շումս:

Սրահին անկիւնը նստած էր չափահաս տարիքով սեւամորթ պստասպանատու պաշտօնեայ մը: Անդրադարձայ, որ միակ սեւամորթն էր սրահին մէջ. իր մնացեալ բոլոր գործակիցները սպիտակամորթներ էին: Չեկուցումիս վերջաւորութեան ուղղեց իր հարցումը՝ ոչ թէ Միջին Արեւելքի տագնապին առնչութեամբ, այլ Յեղասպանութեան պատճառած իմ ներաշխարհի ցաւին մասին: «Ցաւը ինչ պէ՞ս կրնաս մոռնալ», հարցումս:

Ինծի համար զարմանալի չթուեցաւ այդ հարցումը: Ակնկալելի էր նկատի ունենալով, որ Զարաւային Ափրիկէն երկար տարիներ ապրած ու տազնապած է ցեղապաշտական իրավիճակէն իր ընկերութեան ջաղաքական ու պետական կարգավիճակներուն ընդմէջէ: Թեւ այսօր պետական ու կազմակերպչական կառոյցները փոխուած են բայց չեմ գիտեր հոգիները ու մտածողութիւնը որքա՞ն: Զարաւային Ափրիկէն տակաւին կը տազնապի ցեղապաշտական կարգավիճակի դրութեան ստեղծած խտրականութեան իրականութենէն եւ անոր պատճառած ցաւէն: Ու սեւամորթ գործակիցիս հարցումը կու գտնայ այդ նոյնինքն ցեղապաշտական կեանքին ստեղծած ու ապրուած ցաւին փորձառութենէն: Եւ երեւի ան ուզեց տեսնել, բայց նաեւ համեմատել, թէ ես ինչպէ՞ս կրցայ լել գտնել, ինչպէս կրցայ դուրս գալ ցաւով ծանրաբեռնուած կեանքին ու փորձառութեան մէջէն՝ գտնելու համար բարւոյց հանգստութիւն:

«Բարկութիւն կայ մէջս», Զարաւային Ափրիկէի գործակիցներու Զենլի Ռուսոն է, որ կ'ընկերակցեր ինծի այցելելու Ռոպին կղզիի բանտը: Դոն, ուր Նելսըն Մանտելան եւ աւելի քան հազար սեւամորթ թաղաքական բանտարկեալներ երկար տարիներ իրենց կեանքերը անցուցին հաւասարութեան տեսլականին հասնելու եւ ստեղծելու նոյնը իրենց երկրին համակարգին համար: Զենլին սպիտակամորթ է՝ «Անգլիացիք իրենց զաղութատիրութեան ժամանակ ամէն անմարդկային հնարքներու ձեռնարկեցին կախելու համար մեր երկիրը եւ հարստութիւնը: Անգլիական զաղութատիրութիւնը վերջացաւ եւ մենք ըրինք ճիշդ նոյնը մեր ժողովուրդին», ըսաւ ան:

Զենլիին ներաշխարհին մէջ ակներեւ էին անհանգստութիւնն ու անորոշութիւնը: Եթէ կը փորձէ գտնել պատճառ եւ հիմք իր երկրին իրականութիւններուն, բայց նաեւ ելք: «Բայց արդեօք միայն մե՞նք ցեղապաշտ էինք», շարունակեց ան: «Զապա՞ ամերիկացիները՝ նոր այդքան դաժան վարուեցան բնիկ հնդիկ ժողովուրդներուն հետ»:

Մնկին կը փորձէր գտնել բուժում: Բուժումը ցաւին, որ իր եւ ամբողջ երկրին համար եղած էր մղձաւանջ, որ մինչեւ այսօր կը շարունակուի՝ տարբեր երեւոյթներու մէջէն:

«Զարաւային Ափրիկէն, ինչպէս շատ մը ուրիշ երկիրներ, կը տառապի ցեղապաշտական հիւանդութենէ: Եւ պետութեան ժխտումը այս իրականութեան որեւէ բան չի կրնար փոխել կացութենէն: Եթէ պիտի բուժենք այս հիւանդութիւնը, պէտք է ընդունինք, որ ցեղապաշտութիւնը իրական է» (Եպրահիմ, Էլիպ Թայմզ, Մարտ 2017): Եւ այս «իրական»ը ապրեցայ երբ սկսայ շրջագայի կղզիի բանտի կցիկներուն մէջ:

Խոթցուն զբօսաշրջիկներուն առաջնորդն էր իմ այցելութեան նոյնը: Ան այս պաշտօնին նշանակուած էր մեկնելով իր կեանքի փորձառութենէն: Խոթցուն երկար տարիներ ապրած էր Ռոպին կղզիի բանտին արհաւիրքը, որպէս ջաղաքական բանտարկեալ եւ ցեղապաշտական խտրական իրավիճակին հետեանք: «Բոլորս ալ սեւամորթներ էինք բանտին մէջ», իր պատմութիւնը սկսաւ ներկայացնել Խոթցուն: Անցած էր ամէն տեսակի ֆիզիքական բռնարարքներէ, հոգեբանական ճնշումէ եւ ցաւէ: Տեսած էր, թէ ինչպէ՞ս իր քարկամութեան մուտք պայմաններու մէջ անհետացած էին բանտէն: Ապրած էր վախը: Չինք ամբաստանած էին որպէս յեղափոխականի եւ պետութեան դէմ դաւադրութիւն սարքելու յանցագործութեամբ:

Խոթցուն կը պատմէր իր սրտէն: Կը տեսնէի, թէ ինչպէ՞ս կը քրտներ երբ այդ ամբողջ ապրածը դարձեալ կը վերապրէր՝ պատմելով մեզի: Կը փոխադրէր մեզ այդ կցիկներուն մէջ ապրած իւրաքանչիւր վայրկեանը: Եւ թէ ինչպէ՞ս մարդ կրնար ըլլալ անմարդկային: Արտաքին աշխարհէն գրեթէ խզուած պիտի ապրէին այս կեանքը՝ միշտ գիտակցելով այն համոզումին-իտեալին, թէ ի՞նչ բանի համար եւ ինչ՞ տեսլական եր, որ խթանած էր զիրենց մտնելու այս մեկուսացած կղզին:

Զարցուցի Խոթցոյին. «Արժե՞ց կեանք մը տալ այդ նպատակին համար»: Խոթցուն աչքերը ինծի սեւեռեց: Չգացի, թէ պատասխանը պիտի հար սրտէն: «Ինծի համար սկիզբի տարիներուն շատ դժուար էր պատմութիւնս պատմել մարդոց: Բայց հիմա կ'ընեմ»:

Սկսայ տեսնել, թէ որքա՞ն հաւատք կայ Խոթցոյին կեանքին մէջ: «Երբ նոր բանտ մտայ, շատ ատելութիւն կար սրտիս մէջ», ըսաւ ան: Բանտին մէջ սորվեցայ տեսնել ուրիշը, որ ինձմէ տարբեր է, եւ ատելութեան զգացումներս փոխուեցան եւ համոզուեցայ, որ պէտք է բուժել մեր երկիրը եւ նորը շինել»:

Խոթցուն բանտէն դուրս գալէն ետք բարձրացած է լեռը եւ այնտեղն դիտած է բանտը, որ խլեց իմէ կեանքին մեծ բաժինը: «Եւ այն

## «ՔԱՌՄ ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

*«Աստուծոյ Հոգին ցոյցերուն  
վրայ կը շարժէր»:*

*(Ծանոցը 1.2)*

ժամանակ հոն՝ բանտին նայելով, տեսայ ազատութիւնը», ըսաւ ան  
«Անիկա իմ պատմութիւնս չէ, այլ իմ երկրիս պատմութիւնը: Եւ տե-  
սայ անհրաժեշտութիւնը, թէ՛ նորը պետք է շինենք»:

Խոթցոն այսօր կազմած է ընտանիք եւ իր համեստ աշխատանքի  
մէջէն եթէ մէկ կողմէ կը ներկայացնէ իր ապրած ցաւը, բայց նաեւ նոր  
ըլ շինելու արժեքը: Եւ հրաժեշտ առնելէն առաջ ձեռքս ամուր սեղ-  
մեց է ըսաւ. «Պէտք չէ յուսահատիլ, նորը պետք է շինել»:

Բայց տակաւին պետք էր, որ պատասխանէի գործակիցիս հար-  
ցումին: «Ցաւը ինչպէ՞ս կրնաս մոռնալ»:

«Չայը իր ցաւը չմոռցաւ», ըսի գործակիցիս: «Բայց այդ ցաւին մե-  
ջէն հայը տքնեցաւ շինելու նորը՝ որպէս կեանքի շարունակականու-  
թիւն: Բայց այս նորին մէջ հայը իր ցաւը պահանջեց եւ մինչեւ այսօր  
կը շարունակէ՝ վկայելով ճշմարտութիւնը եւ արդարութիւնը: Եւ նոր  
ըլ պետք է հիմնել արդարութեան եւ ճշմարտութեան գրասականնե-  
րուն վրայ», եղաւ իմ բացատրութիւնս:

Խոթցոն չմոռցաւ իր ցաւը: Եթէ ցաւը կը պատմէ, այդ կ'ընէ շինե-  
լու համար նորը: Նորը, որ արդար է ու ճշմարիտ:

Չայն ալ իր ցաւը չմոռցաւ: Եւ կ'ապրի այսօր արդար ու ճշմարիտ  
նորը ստեղծելու եւ նորին հասնելու տեսլականով: Բայց արդեօք ե՞րբ  
պիտի գայ այդ օրը երբ աշխարհի պիտի գիտակցի, որ ցաւը պետք է  
վերանայ մարդկային կեանքին մէջէն:

Մինչ այդ երեւի ուրիշ ելք ու ճար չկայ:

«Ցաւը ինչպէ՞ս կարելի է մոռնալ»:

Յիշելով եւ պահանջելով: Յիշելով ցաւը եւ պահանջելով, ու տա-  
կաւին տքնելով՝ շինելու նորը, արդարութեան եւ ճշմարտութեան  
տեսլականով:

Երեւան, Չայաստան,  
Նոյեմբեր 2017: Յով-  
հաննէս Այվազովսքի՝  
մեծ գեղանկարիչին,  
ծննդեան երկու հարիւր  
ամեակին առթիւ կազ-  
մակերպուած ցուցա-  
հանդէսը Չայաստանի  
պետական թանգարա-  
նի ազգային պատկե-  
րասրահին մէջ:  
UNESCO-ն 2017 տար-  
ուայ յիշարժան ցուցա-  
կին մէջ նետարած է մեծ  
գեղանկարիչին այս ամ-  
եակը:

Եթէ յաճախ լսած եւ  
գիրքերուն մէջէն տե-  
սած էի Այվազովսքիի  
ընտրութեան, անպայմա-  
նօրէն ծովու գեղան-  
կարչական գործերը,  
բայց բոլորովին տար-  
բեր է տեսնել իրական  
նկարները եւ մօտիկ  
վանդակած անոց: Կրնայի տեսնել իր գծագրած ծովերը եւ անոց  
ահատութիւնը բայց նաեւ գեղեցկութիւնը:

Ակառի ունենալով որ Այվազովսքի ճամբորդած է շատ մը երկիր-  
ներ, ան կրցած է օտար այդ երկիրներու եւ անոց ընտրութեան հսկայ  
տարբերակները իր գեղանկարչութեան հիմքը դարձնել: Եւ ծովը



եղած է կարծեք իր գլխաւոր սերը: Եւ ինչպէս որ ինք կը նկարագրէ «Ծովը իմ կեանքն է»:

Եւ Նայելով նկարներուն, սկսայ տեսնելու ծովը իր փոթորկոտ փճակներուն մէջէն: Անոր նկարներուն մէջէն սկսայ տեսնել ծովուն ու բնութեան տարբերակները: Եւ այդ իր գործերուն մէջէն նաեւ կ'երևար մարդը եւ անոր գոյապայթարը: Այվազովսքին եւ իր գործերուն մէջէն կը տեսնուէր ոչ այսպէս ըսած ծովուն ափին կեցած դիտորդ, այլ այդ ամենուն մէջ մասնակից գործընկեր: Եւ իր գործերը դիտորդ ինք ալ կը դառնար մասնակից, նոյն այդ ահաւորութեանը:

Բայց կային նաեւ բնութեանը հակասական պատկերները: Այվազովսքի ինչքան որ զօրաւոր կերպով կը ներկայացնէր փոթորիկը բայց նոյնքան նաեւ սեւ ամպերուն մէջէն դուրս ճեղքող յոյսի շողորդ: Եւ այս յոյսի շողերը ունէին տարբեր ելեւէջները: Անոնք երբեմն կ'ը դառնային սուր եւ ծակող: Երբեմն թոյլ եւ հազիւ նշմարելի: Եւ այս երեւոյթը կը դառնայ իրական կեանքի մը մէկ պատկերը, ուր Այվազովսքի կը մխրճէ նոյնիսկն դիտողը անոր մէջ:

Կեանքը, որ կը դառնայ թարգմանը մեր բոլորին ապրած անհատական եւ հաւաքական կեանքերու տարբեր մարտահրաւերները: Եւ կը գրաս, թէ ինչպէս ապրուած կեանքի մը բոլոր փոթորիկներուն մէջէն միշտ արկայ է յոյսը եւ իր տարբեր ուժգնութիւններով: Ու տակաւին յոյսին ներշնչած ու մատուցած փրկութիւնը, որ պիտի հասնէր: Եւ հայագի գեղանկարիչ մեծ վարպետ Մարտիրոս Սարեանի վերլուծումը շատ դիպուկ է. «Փրկութեան այդ յոյսի մէջ է Այվազովսքիի բոլոր փոթորիկներու իմաստը»:

Բայց ցուցահանդէսի այդ բոլոր գեղեցիկ նկարներուն մէջէն պիտի կենայի մէկ հատին առջեւը. «Զառս՝ աշխարհի ստեղծագործութեան մէջ» խորագրով: Այվազովսքին իր այս նկարին ներշնչումը եւ քննարկը առած էր Աստուածաշունչի 3ին Կտակարանի համարէն. «Աստուծոյ 3ոգին ջուրերուն վրայ կը շարժէր» (ՄՆՆդոց 1:2):

Եթէ նկարին մէջ կը տեսնէի ծովը՝ ալեկոծ եւ փոթորկոտ: Բայց նաեւ խաւար ամպերը՝ չարը, ու անոր ետեւէն դուրս ժայղող արեւը՝ լոյսը: Եւ խաւարին ու լոյսի պայքարին մէջէն «Ստեղծագործիչին» լոյսը կը հայլածէ տիրապետող խաւարին: Եւ վերջապէս կը հասնի այն իրականութեանը, ուր «Աստուծոյ 3ոգին ջուրերուն վրայ կը շարժէր»:

Այվազովսքին կրցած էր տեսնել, թէ Աստուածաշունչի ստեղծագործութեան պատմութիւնը դառցած է ուղեցոյց երկինքի ու երկրի սկզբնաւորութեանը: «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (ՄՆՆդոց 1:1): Եւ թէ ստեղծագործութեան սկիզբը աշխարհը ունայն էր եւ քառս. «Երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդին վրայ

խաւար կար» (ՄՆՆդոց 1:2): Բայց Աստուծոյ ստեղծագործութիւնը՝ 3ոգին, «ջուրերուն վրայ շարժելով» դարձուց այդ բոլորը քառի եւ խաղաղ եւ ուր չ'ուշանար Աստուծոյ զօրութիւնը, որ անդունդին ու խաւարին կը յաղթէ: Եւ թէ լոյսը պիտի յաղթէ խաւարին ինչքան որ այդ դժուար ըլլայ եւ ուր փրկութիւնը պիտի գայ Աստուծոյ զօրութեանը վրայով: Եւ նկարին մէջէն կրնայի տեսնել այս փրկութեանը վրայ ապաւինելու եւ կառչելու անհրաժեշտութիւնը:

Եւ պէտք էր որ ընկալէի այս բոլորը:

Եւ որպէս մարդ եթէ մեր ուղեքը դրած ենք երկրին վրայ բայց մեր աչքերը պէտք է սեւերել դէպի երկինք: Աստուած ինքն է, որ ստեղծեց աշխարհը իր պատկերովը եւ այդ պատկերը Բարին է: Եւ այս Բարին կ'արտադրէ յոյսը, որ կը շնորհէ փրկութիւնը: Փրկութիւնը, ուր խաւարը վերջնականօրէն կը պարտուի եւ լոյսը կ'երևնայ:

Յովհաննէս Այվազովսքին իր գեղանկարչական աշխարհի մէջէն խօսեցաւ՝ մեր աչքերը լոյսին վրայ սեւերել եւ փրկութեանը ապաւինելով խաւարին դէմ դնելու գրաւականին վրայ: Ան, որպէս հայ ժողովուրդի գաւակ, իր ծայրը նաեւ բարձրացուց հայերու դէմ բոլոր ոճիրագործութիւններուն եւ անիրաւութիւններուն համար: Ան իր վրձինով եւ գրիչով խօսեցաւ յոյսին եւ անոր փրկութեանը՝ ապաւինելու հաւատքին վրայ:

Եւ եթէ մեր ներկայ աշխարհին մէջ ալ շատ են քառները, մարդուն կը մնայ տեսնել ու կառչել Աստուծոյ 3ոգիին: 3ոգին, որուն դիմաց խաւարը պիտի իյնայ եւ լոյսը յաղթէ:

Աստուծոյ ստեղծագործութիւնը Բարին է: Զառսը աշխարհի ստեղծագործութիւնն է: Բայց Աստուծոյ ստեղծագործութիւնը յաղթեց աշխարհինին:

Այվազովսքին հաւատաց Աստուծոյ ստեղծագործութեանը: Եւ իր նկարներով բայց նաեւ կեանքով փառափանեց «Աստուծոյ 3ոգին», որ «ջուրերուն վրայ կը շարժէր»:

Եւ ուր նոյն այս Աստուծոյ 3ոգին յաղթեց խաւարին:

Եւ մարդուն «Զառսի» կեանքը վերածուեցաւ «Լոյսի» կեանքին:

## «ԴԱ ԻՄԸ ՉԷՐ»

Հայաստան-Սփիւռք վեցերորդ համաժողովի աշխատանքները աւարտել էտք ուզեցի դարձեալ այցելել Հայաստանի պատմական որոշ վայրեր: Տեսած էի Գառնին, Գեղարդը եւ Խոր Վիրապը, բայց բնականաբար արժէր նորէն տեսնել զանոնք: Վերջապէս, չէ՛ որ ինչ է, մերն է, Հայաստանն է: Եւ նորէն այցելելն ու տեսնելը կ'աւելցնէ շէրմուփիւնը եւ հպարտութիւնը հայուն՝ իր քաղաքակրթութեան նկատմամբ, ինչ որ անհրաժեշտ գրաւական է ապրելու եւ երբեք ձանձրացուցիչ:

Ձիւանը մեր վարորդն է: Միջին տարիքի հայաստանցի հայը, որ կ'ապրի Երեւան: Ան իր ու ընտանիքին ապրուստը կը հոգայ զօր սաշոքիկներ պտտցնելով Հայաստանի տարբեր վայրեր: 'Կը հանդիպի բազմաթիւ մարդոց՝ հայ թէ օտար, եւ այս իմաստով վարժուած է ըլլալ համբերող: «Մարդիկ տարբեր բնաւորութեան տնր են,» կ'ընէ Ձիւան, «պէտք է համբերել: Կ'ըլլան պարագաներ, երբ մարդիկ կ'ուզեն անցընել իրենց այցելութիւնները քիչ մը ասնձարձակ, առանց հաշուի ամենելու սահմանուած ժամը: Մեր երկիրն է, որ ցոյց կու տամ, եւ անոր համար արժէ ամէն համբերութիւն»:

Ձիւանը միշտ չէ, որ կը գրուցեր, հաւանաբար նկատի առնելով այցելուն եւ յարգելով անոր տրամադրութիւնները: Բայց ան ունի իր պատմութիւնը, եւ ես ուզեցի իմանալ ատիկա:

Ձիւան ամուսնացած է եւ ունի երկու դուստր: Հայաստանի մէջ ընտանիքին ապրուստ ճարելը եղած է դժուար, ուստի ընտանիքը տարած է Ռուսիա՝ աշխատելու եւ անոնց ապահովելու բարօր կեանք: Իսկ աշխատանքային վայրը եղած է Ռուսիոյ հարաւային մասին մէկ շատ հեռաւոր շրջանը: Ռուսիոյ մէջ է, որ ան բախտաւորուած է իր երկրորդ գաւակով: «Հագուստի գործ կ'ընէի», Ձիւանն է խօսողը: Եկամտուրը լաւ էր: Երեւի ինչ, ընտանիքը եւ պարագաները քոլորով միասին ձեռնարկած էին այս աշխատանքին: Բայց այս բարօքը վիճակը երեւի չէր գոհացներ Ձիւանը: Ան ունէր տխրութիւն մը իր սրտին ու հոգիին մէջ: Ռուսիոյ շնորհած կեանքին ու ընտանեկան ապահովութեան մէջ կար պակասաւոր իրականութիւն մը, որ Ձիւանը դարձուցած էր տխուր:

«Ղա իմը չէր», ըսան Ձիւան: Եթէ կար նիւթական ապահովութիւնը, որուն միջոցով կ'ապրեցնէր իր ընտանիքը, բայց նաեւ անկար էր տխրութիւնը, երբ կը զգար, թէ այդ ամբողջ ունեցածը իրը չէր, իր երկիրը ու հողը չէին: Այս կացութեան մէջ կը զգար նաեւ, որ «իրենիկն» մէջ ապրիլը տարբեր էր եւ ամբողջական: Ուստի Ձիւանն ու իր

ընտանիքը վերադարձած են Երեւան:

Բայց ուզեցի իմանալ Ձիւանին ներկայ կեանքին մասին: «Իսկ իի մա ինչպէ՞ս է կեանքը Հայաստանի մէջ», հարցուցի:

Ձիւան անկեղծ էր: Ան յստակացուց, որ Հայաստանի մէջ իր եկամտուրը անէն նուազ էր, քան ինչ որ կը վաստկէր Ռուսիոյ մէջ: Բայց ան հաշտուած էր այս իրականութեան հետ: «Ըիչ լինի, թող Հայաստանի՝ իմինին, մէջ լինի», ըսաւ ան միշտ պահելով իր գոհուական ժպիտը, որուն մէջ կրնայիր տեսնել իր հաշտ ու համոզուած հոգին: Պոգին, ուր նաեւ կ'արտացոլար ուրախութիւնը «իրենիկն» մէջ ըլլալու եւ ապրելու գիտակցութեան:

Հայաստան-Սփիւռք վեցերորդ համաժողովը լաւ կազմակերպուած էր, եւ օրակարգի վրայ շատ էին համահայկական մեր հիմնախորհրդերը՝ Հայաստանի, Արցախի ու սփիւռքեան տեսադաշտերու մէջ: Եւ երեք օրերու վրայ երկրած համաժողովը դարձաւ «հեղք» մը իւրաքանչիւր մասնակից հայու համար, միասնաբար ապրեցանք մեր շատ մը հիմնախնդիրները՝ Հայաստանի զարգացման եւ պաշտպանութեան քաղաքականութեան առանձնայատուկութիւնները, արտաքին քաղաքականութեան օրակարգը, եւ հայապահպանումի մարտահրաւերները: Բայց նաեւ անհրաժեշտ էր այդ բոլորը վեր առնել իրբեւ մէկ ամբողջութիւն ու իւրաքանչիւր ուղղութիւն տարանջատել իր տարբեր ոլորտներուն մէջէն, նաեւ տեսադաշտերը քննարկել, լուծումներ առաջարկել ու անոնց իրականացման աշխատանքի ձեռնարկել:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը համաժողովի առաջին լիագումար նիստին ըրաւ համահայկական մեր կեանքին մէկ այժմէական ախտաճանաչումը. «Սփիւռքը կը մաշի եւ Հայաստանը կը պարպուի», ըսաւ վեհափառ տէրը: Անոր այս մատնանշումը սոսկ քննադատութեան համար չէր, այլ զգաստութեան կոչ էր՝ ուղղուած բոլոր հայերուն, համաժողովին մասնակից կամ ոչ: Եւ անհրաժեշտութիւնը հայուն համար ըլլալ զգուշ եւ արթուն՝ տիրող համընդհանուր մթնոլորտին ու պայմաններուն, սփիւռքեան թէ հայրենի իրականութիւններու մէջէն հաւասարապէս, ու անոնց համար:

Համաժողովի փակման լիագումար նիստին Սփիւռքի նախարար Պրանուշ Յակոբեան նշեց նաեւ մէկ կարեւոր մարտահրաւեր. «Ժողովը այսօր չվերջացաւ, այլ նոր սկսաւ», ըսան ան: Իսկ «նոր սկսիլը» գործին հաւատալու եւ անոր կառչելու անհրաժեշտութիւնն է: Նախարարին գործունէութիւնը՝ տարիներու վրայ երկարած, ցոյց կու տար, թէ ան աշխատասեր ղեկավարն է, որ կը հաւատայ հայուն կեանքի շարունակականութեան անհրաժեշտութեան: Իսկ այդ գրականակնի համար ան միշտ պատրաստ է հայուն այս կեանքին հա-

մար դրական ուժ սրսկել: Ուժը, որ հայուն համահայկական կեանքերուն պիտի տայ նոր սլացքներ կերտելու տեսլականը: Եւ այս տեսլականներով կեանքեր կերտելու զգաստութեան համար էր, որ նախարար Յակոբեան ժողովը չաւարտեց, այլ տուաւ անոր սեղանակի՞ք»:

Բայց այս երկու զգաստութիւններուն միջեւ կարծեք կար զիտո՞ր կապող նախաձեռնութիւն: Եւ այդ Ծիծեռնակաբերդ տրուած այցելութիւնն էր եւ նոր ծառ մը տնկելու իրականութիւնը: Եթէ պահ մը լի շեցինք անցեալը եւ մեր նահատակները, բայց նաեւ պահանջեցինք նորը: Եւ նորը եղաւ մեր հաւաքական ու միասնական աշխատանքով, ուր մէկ կողմէ կային հայուն միտքերն ու գրիչները, բայց նաև բաիերն ու բրիչները: Պարզապէս հաւաքական գործը, երբ բոլորն միասին նոր ծառ մը եւս ատելցուցինք հայրենի հողին մէջ: Եւ այս նորին մէջէն եւ նոյնիսկ հայրենի հողին կապուելով է, որ հայը պիտի շարունակէ ապրիլ:



Ու դարձեալ Ջիւանը: Ան այսօր կը հաւատայ իր հողին՝ Հայաստանին, պատկանելիութեան: Եթէ ան կ'ապրի քիչով, բայց կ'ապրի զի-

տունակ եւ վճռական, որովհետեւ որոշած է չմաշիլ եւ չպարպուիլ: Եւ ասիկա այսօրուան հայուն գլխաւոր իրամայականն է, թէ անհրաժեշտ է պահել իմը, մերը, հայրենիքը, հայն ու հայուն ինքնութիւնը, եւ անոր համահայկական կեանքը:

Եւ հայուն այս ամբողջական կեանքը կը պահուի գործով: Գոն, ուր նորը անընդհատ կը սրսկուի, որպէսզի նոյնիսկ այս հայուն կեանքը չմաշի եւ նաեւ կը շինուի, որպէսզի չպարպուի: Եւ հոն ու այդպէս է, որ կ'ապահովուի հայուն կեանքին շարունակականութիւնը:

«Դա իմը չէր»: Զանի հայուն փնտռածը՝ «իմը», նոյնիսկ իր հայուն շարունակական կեանքն է:

Եթէ Ջիւանին փնտռածը կեանքն է, բայց նաեւ իմս եւ իւրաքանչիւր հայունը:

Կեանքը, որ եթէ նոյնիսկ հայը պիտի ապրի «քիչով», բայց պիտի ապրի գոհունակութեամբ եւ հպարտութեամբ:

Եւ այս հայուն ամբողջական կեանքն է, զոր պիտի պահենք եւ շարունակենք:

# 2017 ՀԱՅՈՒՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ԳՈՐԾԸՆԹ-ԱՅԸ

«Քրիստոնեական մօտեցումով, մարդն է վերանորոգման կիզակէտը»:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետ

Աստուածաբանությունը՝ քրիստոնեական-աստուածաշնչական էթե մէկ կողմէ ունի համամարդկային տեսադաշտ եւ պարունակութիւն, բայց միեւնոյն ժամանակ առանձնայատկութիւն, ուր իւրաքանչիւր անհատ կ'ընդելուզուի հաւաքականութեան մշակութիւն, քաղաքակրթութեան եւ կենցաղի հետ եւ այս բոլորին ընդմէջն անոր/անոնց ապրած կեանքին ու փորձառութեան կու տայ նկարագիր եւ ինքնութիւն:

Սակայն հիմնական կը մնայ այն, որ քրիստոնեական աստուածաբանութեան միտք բանին փոփոխութիւն յառաջացնել է մարդուն եւ հաւաքականութեան կեանքերուն համար (Մուկամպէ եւ Կայ, 2009) Այս իմաստով, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը իւրաքանչիւր տարուան սեմին հայ ժողովուրդի զաւակները կը իրաւիբէ իրենց մտածումներուն, աշխատանքներուն ու կեանքին մէջ լուսարձակի տակ բերելու ազգին ու եկեղեցիին անչուած արժէք մը խոր մտահոգութիւն մը կամ լուրջ սպասում մը: Եւ այս արժէքի մտահոգութեան եւ սպասումի գիտակցութիւնը վեհափառ հայրապետի ջանքերէն մին է փոփոխութիւն յառաջացնելու մեր անհատական, հաւաքական ու ազգային կեանքերուն մէջ: Փոփոխութիւնը, էթե մէկ կողմէ հնամաշ գործելակերպերն եւ յոռի կենցաղակերպեր հեռու մնալ է, բայց նաեւ է կրօնական, ազգային ու բարոյական արժէքներու, արանդութիւններու ամբողջ կառուցիչ, հետամուտ ըլլալով բացուելու՝ քննական ու զգուշաւոր մօտեցումով մեզ շրջապատող իրականութիւններուն եւ մարտահրաւերներուն:

Եւ այս հասկացողութեան մէջ եւ անոր ընդմէջէն կ'արժէ վեր առնել 2017 թուականը վերանորոգումի տարի յայտարարելու վեհափառին քայլը: Արամ Ա. կաթողիկոս իր վերանորոգումի բացատրութիւնը կը սկսի աստուածաշնչային տեսանկիւնէն՝ զետեղելու համար զայն մեր ազգային-հաւաքական-հասարակական կեանքերուն մէջ: Որովհետեւ, եւ ինչպէս վեհափառ հայրապետը կը մատնանշէ. «Աստուածաշունչը իր էութեամբ, իր խորքով ու նպատակով մարդը

նկաի հոգեւոր ու բարոյական վերանորոգում առաջնորդող երկնային պատգամ մըն է՝ Աստուծոյ յայտնութեամբ փոխանցուած մարդուն»:

Քրիստոնեական աստուածաբանութեան եւ անոր մարդկային անհատականութեան ու կեանքին մէջ փոփոխութիւն յառաջացնելու հասկացողութիւնը կը սկսի Աստուածաշունչի Հին Կտակարանէն: Եհովան՝ Հին Կտակարանի Աստուծոյ անուանումը, եւ անոր խոստումը իր ժողովուրդին, իմա՝ յոյսը: Եւ այս խոստումը ակնբեր է Հին Կտակարանի շատ մը գիրքերուն մէջէն սկսելով Ելից գիրքէ:

Հրեայ ժողովուրդի քառասուն երկար տարիներու անապատին մէջ թափառումը պետք է ընկալել որպէս Աստուած-ժողովուրդ յարաբերութեան, իրարու նկատմամբ վստահութեան եւ իրարու անոնցութեան գրաւակնելը: Եւ թէ Աստուծոյ խոստումը՝ յոյսը, որ իր ժողովուրդը պիտի հասցնէ խոստացուած երկիրը, պետք է անպայմանօրէն անոնցէլ մէկ ժողովուրդի պատմութեան եւ ոչ ալ երկիրը պետք է հասկնալ ներկայ օրերու միջիննարեւելեան հողի ու տարածաշրջանի քաղաքական ու ռազմավարական հակամարտութիւններու բացատրութեան մէջէն:

«Իր ժողովուրդը» ունի ընդհանրական (համամարդկային) բացատրութիւն եւ մեկնաբանութիւն: Իսկ «երկիր»ը խոստումն է հասնելու նորին ու նոր սկիզբին եւ բոլոր ժողովուրդներուն համար (Աթիք, 1995): Հին Կտակարանի մարգարէութիւններուն մէջէն կը տեսնենք այս համապարփակ իրականութիւնը: «Ո՛վ կըզինէր, ինծի մտիկ լըռք, ո՛վ ժողովուրդներ, հեռուէն ականջ տուէք... որպէսզի մինչեւ երկրին ծայրը իմ փրկութիւնս ըլլայ» (Եսայեայ 49:1, 6): Նոյն մարգարէութիւններուն մէջ վերանորոգումի խոստումը կ'երեւի. «Իմ տունս անոր մէջ պիտի շինուի... իմ քաղաքները նորէն բարիքներով պիտի յորինէ եւ Տըքը նորէն Սիոնը պիտի մխթաբտ» (2աքարեայ 1:16-17):

Բայց կայ այս նոյն խոստումին՝ յոյսին, իրականացումը: Եւ այս կու գայ Նոր Կտակարանի մէջ Աստուծոյ Մեսիայով՝ Քրիստոսով: Եւ խոստումը մարդուն՝ վերանորոգումի հասկացողութեան մէջ էր, որ իրականացաւ Աստուծոյ մարդեղութեամբ: Հոս է, որ պետք է կամփոյշ Հին Կտակարանի Աստուածը՝ Եհովան ու Նոր Կտակարանի Մեսիան՝ Քրիստոսը, որպէս մէկ ինքնութիւն: Եհովային յոյսի խոստումը՝ մարդուն վերանորոգումը, որ կ'իրականանայ Մեսիային՝ Քրիստոսի յայտնութեամբ:

Պրուկման (2001) «նոր»ը կը նկարագրէ Քրիստոսի խաչին հասկացողութեան ընդմէջէն: Ան կը ներկայացնէ, թէ Քրիստոս քննադատեց ինքնը երբ այս աշխարհի մէջ էր եւ իր մահուամբ քննեց այն բոլորը, զորս քննադատեց: Իր յարութեամբը շինեց նորը՝ վերանորոգ-

ուած հաւաքականութիւնը, որպէսզի մարդկութիւնը ունենայ նոր սկիզբ: Եւ այս նոր սկիզբն է, որ մարդուն եւ հաւաքականութեան կեանքերուն մէջ կը յառաջացնէ փոփոխութիւն՝ վերանորոգում տեսլականով: Այս վերանորոգումի տեսլականը վեհափառ հայրապետը կը ղեկ որպէս «անյետաձգելի անհրաժեշտութիւն»:

«Այս վերանորոգումի կիզակետը... մարդն է»: Մարդուն փոփոխութիւնն է, վերանորոգումն է, որ յառաջ պիտի տանի հաւաքականութեան վերանորոգումը: Եւ եկեղեցի հասկացողութիւնը պետք է ընդարձակել նոյնիսկ այս վերանորոգուած մարդկային կեանքի տեսադաշտէն: Հոն, ուր եկեղեցին «իր կեանքին ու առաքելութեանը օրակարգին վրայ միշտ առաջնահերթ տեղ տուաւ վերանորոգումին» (Արամ Ա. վեհափառ հայրապետ): Որովհետեւ եկեղեցին այս վերանորոգուած եւ վերանորոգող կեանքերը տեսապէս արտադրելու հրամայականին մէջ գտնուած է ու պէտք է շարունակել ընել նոյնը:

Եթէ Զրիստոսի խաչը եւ յարութիւնը աշխարհը չփոխեցին, բայց Ան փոխեց իր առաքելները: Եւ առաքելները փոխեցին աշխարհը (Տեյափլէյն, 2012): Եւ վերանորոգումի գործընթացը փոփոխութիւն յառաջացնելու մէջ է: Եթէ այս փոփոխութիւնը չըլլայ քրիստոնէական հասկացողութենէն եւ անոր պրիսմակէն, սխալ բան մը պատահած պիտի ըլլայ: Փոփոխութիւնը եւ անոր հետ յառաջ եկած նորն ու նորութիւնը շարունակուող եւ տեսապէս աճող, զարգացող եւ վերանորոգող գործընթաց մըն է, ուր անհատական եւ հաւաքական մեր կեանքերը տեսապէս կը վերանորոգուին:

Եւ վեհափառ հայրապետը վերանորոգումի այս աստուածաբանական միտք բանին է, որ կը ղեկ մեր ազգային-հաւաքական կեանքերուն համար եւ 2017 տարուան որպէս գիտակցութիւն: Որովհետեւ, եւ ինչպէս վեհափառ հայրապետը կ'ընդարձակէ իր տեսութիւնը, «կարելի չէ բաժանման գիծ մը քաշել քրիստոնէական ու ազգային մօտեցումներուն կամ արժեւորման միջեւ»: Եւ այս իմաստով մեր համահայկական վերանորոգումի գործընթացը կը սկսի նոյնիսկ այս մարդէն: Իւրաքանչիւրէն:

Հայ մարդուն վերանորոգումը կարելու հիմք է: Բայց կայ նոյնքան գիտակցութիւնը: Իւրաքանչիւր վերանորոգուած հայ անհրաժեշտ է որ դառնայ Առաքեալ: Առաքեալ, որ պարտի վերանորոգել միւս հայը: Ու բոլորը միասին հայ հաւաքականութիւնը՝ Ազգ ու Հայրենիք: Եւ վեհափառը կը ղեկ այս իրականութիւնը հայուն դիմաց, որպէս մարտահրաւեր: «Իւրաքանչիւր ազգի գաւակ՝ որպէս հարազատ անդամ մեր Մեծ Ընտանիքին, որ կոչուած է իր ապրած կեանքի որակով ու հարուստ գործերով կարելու նպաստը բերելու մեր եկեղեցու ազգին ու հայրենիքին»:

Հայուն վերանորոգումի գործընթացը հայ մարդէն կը սկսի, բայց կը շարունակուի՝ հասնելու համար հաւաքականութեան, ազգին ու հայրենիքին: Ապա թէ ոչ, եւ ինչպէս վեհափառ հայրապետը կը զգուշացնէ. «Մեր համայնական կեանքերը դէպի մեկուսացում, աղքատացում ու ճահճացում կրկան երթալ»:

Հայ մարդուն վերանորոգումը: Թող, որ 2017 տարուան համար դառնայ առաքելութիւն, ուր իւրաքանչիւր հայ կը վերանորոգուի բայց նաեւ կը դառնայ Առաքեալ: Եւ կը վերանորոգէ միւս հայը: Ու բոլորը միասին կը վերանորոգեն հայկական հաւաքական կեանքը: Եւ ասիկա հայուն վերանորոգումի գործընթացն է, ուր իւրաքանչիւր հայ կը վերանորոգուի եւ կը վերանորոգէ: Հայ անհատը եւ նաեւ հայկական հաւաքականութիւնները:

### Օգտագործուած աղբիւրներ

- Արամ Ա. կաթողիկոս, «Վերանորոգումի տարի», 2017: Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Ամբիփաս, Լիբանան, 2017:
- Ateek, N. S. (1995). *A Palestinian Perspective: Biblical Perspectives on the Land. In Voices from the Margins*, ed. R.S. Sugirtharajah. London: Orbis Books.
- Brueggemann, W. (2001). *The Prophetic Imagination*. Minneapolis: Fortress Press.
- Delaplane, J. (Nauary-March, 2012). *A Future Full of Hope. The Living Pulpit*.
- Mugambi, J. N. K. and Michael R. Guy. (2009). *Contextual Theology across Cultures*. Nairobi: Action Publishers.



# ԱՐԱՐԱՏԻ 80 ԱՄԵԱԿԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՊԷՏՔ Է ՊԱՀՊԱՆՈՒԻ ԲԱՅՅ ՆԱԵՒ ԿԵՐՏՈՒԻ

Իւրաքանչիւր մարդու կեանքը պատմութիւն է: Եւ պատմութիւնը կը սկսի մարդուն ծնունդով, ուր իր կեանքի իւրաքանչիւր հանգուան կը դառնայ նոյնիսկ մարդուն՝ իր հարազատ պատմութիւնը: Եւ մարդուն՝ իւրաքանչիւրիս, պատմութիւնը կը մտնէ նաեւ իր մեղքն տանեկան պատմութեանը մէջ: Եթէ ընտանիքը ծնողք են, քոյրեր, եղբայրներ, եւ հարազատներ բայց նաեւ կողակից ու զաւակներ: Ին տակաւին, ընտանեկան կեանքի մեր պատմութիւններն են, որ դարձեալ քով-քովի գալով կը կազմեն հաւաքականութեանը՝ գաղութի, եւ իրեն յատուկ իր պատմութիւնը: Իսկ հաւաքականութիւններու այս պատմութիւնները կուզան միանալու եւ կազմելու ազգին ու ժողովուրդին պատմութիւնը: Եւ այս կը դառնայ նոյն ժողովուրդի պատմութիւնը: Եւ այս պատմութեամբ է, որ ժողովուրդը իր նկարագիրը կը կերտէ իր ապրած ու ապրելիք կեանքին համար: Եւ մեր պարտքային հայուն պատմութիւնն է:

Եւ ի՞նչ կայ հայուն պատմութեանը մէջ:

Եթէ մեր՝ հայուն, պատմութիւնն է բայց այդ պիտի ընդգրկէ իր կենցաղը, միտքը, մտահոգութիւնը, կերակուրը, վարուելակերպը, հաւատքը, գիրը, գրականութիւնը ու աւելին: Ու տակաւին հայուն համար կայ իր պահանջատիրութիւնը, որ հայուն պատմութեանը համար եղած է ինքնութիւնը: Եւ այս պատմութիւնը կը դառնայ հայուն մշակույթը, որ կ'ըլլայ ամբողջական՝ ընդգրկելով նոյնիսկ հայուն բոլոր կեանքը իր տարբեր երեւոյթներով:

Ահա թէ ինչն էր նաեւ որ հայը կորսնցուց Յեղասպանութեան ժամանակ: Եթէ մեծ թիւով մարդկային հոգի, հողատարածք ու կալուածք բայց նաեւ երեք հազարամեայ պատմութիւնը: Դայը արմատախիլ ըլլալով իր հողէն, իր կեանքի պատմութիւնն ալ կորսնցուց երբ պիտուէցաւ իր արմատներէն:

Եւ հայուն սփիւռքեան կեանքի մեծ մարտահրաւերը եղաւ եթէ փրկարկիլը բայց նաեւ վերստին շինելու եւ պահպանելու իր պատմութիւնը: Եւ եթէ հայը պիտի վերապրեցներ իր պատմութիւնը, նոյնքան նաեւ պիտի կերտեր իր նոր պատմութիւնը: Եւ այս՝ սփիւռքեան իր նոր կեանքին մէջ, երբ փորձեց շինել իր նոր «հայաստանները»:

Եթէ հայը շինեց եկեղեցի եւ դպրոց իր սփիւռքեան իւրաքանչիւր

կեանքերուն մէջ, որովհետեւ հաւատաց ու կառչեցաւ այս իր պատմութիւնը ապրեցնելու տեսլականին: Եւ այդ ապրեցնելու տեսլականին մէջ հայը հաւատաց նաեւ մամուլի կարեւորութեանը: Դայական մամուլը, ուր հայուն կեանքին համար պիտի ըլլար զգաստութիւն իր խօսքով եւ կեցուածքով՝ միշտ յիշեցնելու համար, թէ անհրաժեշտ է որ հայը շարունակէ վերապրիլ իր պատմութեամբը:

Եւ այս իրականութեանը մէջ է նաեւ որ պիտի գնահատել բայց նաեւ արժեւորել «Արարատ» օրաթերթի կորած ութնու երկար տարիներու ճամբան իր տպագիր ու անցումային տարբեր միջոցառումներուն մէջէն: Արարատ օրաթերթը յաջողեցաւ իր կեանքին ընթացքին սատարել հայուն պատմութեանը ու զայն վերստեղծելու իրավայականը ու տակաւին պահպանելու եւ կերտելու համար զայն:

«Արարատ» օրաթերթը իր շատ կարեւոր ու նուիրեալ մասնակցութիւնը բերաւ մեր համահայկական կեանքերուն զոյատեւելու ի նուիր Նամանաւանդ Յեղասպանութենէն ետք սփիւռքեան մեր կեանքերուն կազմաւորելու եւ վերակազմակերպելու ջանքերուն մէջ: Եւ հոս պարտի շնորհակալութիւն յայտնել «Արարատ» օրաթերթի իւրաքանչիւր խմբագիրի՝ անցեալէ մինչեւ այսօր, վարչական ու պատասխանատու տնօրէններուն, աշխատակազմին ու զայն հովանաւորող կուսակցութեանը եւ միութեանը, որոնք մեծապէս սատարեցին հայուն պատմութիւնը պահպանելու համար:

Պատմութիւնը մարդուն ու հաւաքականութեանը կեանքն է: Եւ պատմութիւնը պահպանելով կեանքերը կը պահենք: Ու երբ կեանքեր կը պահես, կը նշանակէ թէ կը նպաստես նոր պատմութիւնը կերտելու տեսլականին: Եւ «Արարատ» օրաթերթը այս հայուն պատմութիւնը պահպանելու եւ նորը կերտելու մէջ իր կարեւոր ներդրումը ունեցած է ու տակաւին:

Իսկ «տակաւին»ին մէջ պիտի մաղթել, որ «Արարատ» օրաթերթը ութնու ամեակի իր հզօր պատմութեան այս հանգրուանին նայի հորիզոնէն անդին դէպի նոր ամեակներ:

Ութնու ու տակաւին: Նոր ուժ սրկելու համար հայուն պատմութիւնը պահպանելու եւ կերտելու մէջ: Որովհետեւ հայը որոշած է ապրիլ ու ապրեցնել իր հարազատ պատմութիւնը:

Շնորհաւորութիւններ «Արարատ» օրաթերթին եւ բարի երթ դէպի նոր ամեակներ:

## ԱԲՍՏՐԱԽԱՅԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՐ. «ԿԱՆՔ, ԿԸ ՄՆԱՆՔ»

Երեւի հայ ըլլալու եւ մնալու հրամայականը քիչ մը ամեն տեղ ինքզինք զգալի կը դարձնէ աշխարհի ամբողջ տարածքին: Աստրալիոյ Սիտնի քաղաքը բացառութիւն պիտի չկազմէ: Եթէ քաղաքին գեղեցկութիւնը կը զգլխէ ու կ'անցնի ամեն երեսակայութիւն, կը սքանչուսաս եւ երեւի քիչ մըն ալ կը նախանձիս այն բոլորին, որոնք կ'ապրին այդ գեղեցկութեան մէջ, բայց այդ քաղաքին մէջ առկայ է նաեւ հայկական գեղեցկութիւնը: Եւ իմ աշխատանքային ու ասպարեզային կեանքիս եւ անոր ամբողջ միջազգային պարունակին ընդմէջէն անկարելի է, որ ազգայինը, հայկականը չիտոմեմ, չզոնեմ ու չտեսնեմ: Բայց նաեւ չհպարտանամ անոր՝ հայկականին գեղեցկութեամբ: Եթէ ասիկա ինքնութեան կանչ է, բայց նաեւ մշակութային հիմք մըն է: Գրեւորուն պիտի պարպուի իմ եւ ոեւէ մարդու ներաշխարհը:

Սիտնի, Աստրալիա, Յունիս-Յուլիս 2017: Եթէ կը մասնակցիմ միջազգային մեր կազմակերպութեան աշխատանքային մէկ համագործակցութիւն, ուր արեւի քան հարկը երկիրներէ եկած էին մտաւորապէս 220 ներկայացուցիչներ, բայց նաեւ մէկ-մէկ կ'ուզեմ քակել հայկա-

կան իրականութիւնը՝ հանդիպելով հայուն՝ հեռուոր (գլխի ինքի համար) Աստրալիոյ մէջ: Ոչ հայ գործակիցներս վարժուած են իմ այս սովորութեանս: «Քանի՞ հայու հանդիպեցար այս անգամ», կը հարցնեն ինձի, ամանց ուշացնելու իրենց դիպուկ սրամիտ կատակը:

Հայկազուն եպս. Նաճարեանին հետ ծանօթութիւն ունիմ այն օրէն, երբ 1990-ական թուականներէն սկսեալ յաճախակիօրէն կ'այցելէի Էջմիածին, ուր կը փորձէիք հիմը դնել աստուածաշնչային ընկերութեան մեր գրասենեակին: Հալելու ծնած, Պէրլուք մեծցած ու տակաւին բազմաթիւ երկիրներու մէջ ապրած՝ ան իր հոգեւոր-եկեղեցական առաջնորդութեան ընդմէջէն միշտ ալ եղած է հաստատ իր ինքնութեան եւ կոչումին: «Չեմ գիտեր ո՞ր երկրին հետ առնել իմ կեանքս», իրեն յատուկ կատակ-տրամադրութեամբ մը սրբազանը իր առաջնութեան կեանքին ճամբան կը ներկայացնէր: Բայց սրբազանին համար Քրիստոսի է Գայ եկեղեցւոյ ծառայութիւնը ամեն բան վեր է, եւ ան այսօր իր կարեւոր ներդրումը կը բերէ Հայ եկեղեցւոյ առաջնորդութեան մէջ Աստրալիոյ հայկական գաղութին համար:

Նշան Պասմաճեանը դիանապետն է: Ծանօթութիւնս իրեն հետ կը սկսի Տուպայէն: Իր մէջ տեսած եմ հայ մարդուն տոկոսն նկարագիրը, որ իր մէջ սրկուած է Քեսապէն՝ իր ծննդավայրէ: «Կուսակցական պատկանելիութիւնս եւ անոր սկզբունքները դարձուցի կեանքի ձեւ», կ'ըսէ Նշան: «Եւ քրիստոնէութիւնը ծառայութեան եւ սիրոյ սկզբունքներուն լաւագոյն վարդապետութիւնն է, իսկ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին այդ սկզբունքներուն կիրարկման գործելադրաշարք», կ'արեւցնէ ան: Այս բոլորին համադրումով Նշանը երջանիկ հայն է, որ հեռուոր Աստրալիոյ մէջ կը շարունակէ իր ազգային կեանքը:

Վեր. Գրիգոր Եւմուշաքեանի հետ եղած ենք դասընկերներ եւ գործակիցներ Պէրլուք օրերէն, եւ ան այսօր Սիտնիի Միացեալ Անտարակական եկեղեցւոյ հովուական ծառայութեան մէջ է: Եթէ տեղական եկեղեցւոյ մէջ է ան, բայց հայկականը միշտ ալ ցայտուն է իր կեանքին մէջ: Վեր. Եւմուշաքեան մեծ աշխատանք տարաւ, որպէսզի Հայոց Տեղասպանութիւնը ընդունուի Աստրալիոյ Միացեալ Անտարակական եկեղեցւոյ կողմէ, որ կը նկատուի երկրին երրորդ մեծագոյն եկեղեցական-կրօնական համայնքը:

Տոքթ. Յարութիւն Ճէպլեճեան հոգեբուժ է: Աղէքսանդրիայէն գաղթած է Սիտնի: Ընտանեկան հարազատներ ենք, եւ անոր առաջին անգամ կը ծանօթանայի եւ կը հանդիպէ: Մեր երկուքիս մեծ ծնողները Այնթապէն տեղահանուած են: Իր ընտանիքը հասած է Եգիպտոս, իսկ իմ պարագաներս՝ Հալէպ-Պէրլուք: Ընտանեկան-ազգականական մեր կապը պիտի հաստատուէր Աստրալիոյ մէջ: Եւ ինչ-





պէ՛ս չապրիլ Յեղուպանութեան անհատութիւնը այն իմաստով, որ հայ ընտանիքներ ոչ միայն նահատակուեցան, այլ նաեւ անջատուեցան: Եւ զրկուեցան իրարու հետ ըլլալու եւ միասին ապրելու տեսլականներ: Բայց այս (չ)ապրումը կեանքերուն եւ անոնց կորստած ու կարստի հաղորդակցութեան օրերուն պահանջատիրութիւնը ինչպէ՛ս պիտի ըլլայ:

Ետի Տեմիրճեան ծնած է Սիտնի: Ան տնօրէն է Համազգայինի Արշակ եւ Սոֆի Գոլստըն հայկական վարժարանին: Գեղեցիկ անտառներով շրջապատուած եւ դպրոցական շէնքի բոլոր արդիական յարմարութիւններով օժտուած այս վարժարանը հայեցի դաստիարակութիւն կը ջանք անելի քան 320 աշակերտներու: Եթէ եղած է ժամանակ, որ աշակերտներուն թիւը նուազած է, բայց այսօր արդէն սկսած է կամաց-կամաց աւելնալ: «Ամէն աշխատանք եւ կարելիութիւն կը ստեղծենք, որպէսզի հայ ընտանիքներ իրենց զաւակները հայկական վարժարան ուղարկեն», Ետին է խօսողը:

Եւ նայելով դպրոցին, արդիական շրջափակին, կարելիութիւններուն, հանդարտ մթնոլորտին եւ կրթական մակարդակին, հարց տուի. «Ինչո՞ւ հայ ծնողները իրենց զաւակները հայկական դպրոց չորկեն»:

Մանուկ Տեմիրճեան Պելրուֆի տղան է: Ան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ալեքսանդր դպրոցի տնօրէնն է: 41 աշակերտներով փոքր գումարտակով մը Մանուկը կը պայքարի դպրոցը պահելու: «Մեր Միութեան կեդրոնական ղեկավարութիւնը ուզեց դպրոցը փակել տնտեսական պատճառներով», ըսաւ Մանուկը աւելցնելով. «Ճատ զօրաւոր կերպով դէմ կեցանք»: Եւ զարմանալի չէ: Մանուկը ապրած է Լիբանանի պատերազմը եւ անոր արհաւիրքը: Թրծուած է կեանքի դժուար պայմաններուն դէմ պայքարելու եւ

մարտնչելու ոգիով: «Վերջապէս համաձայնեցանք, որ մեր ղեկավարութիւնը տնտեսական օժանդակութիւնը պիտի կասեցնէ, եւ մենք մեր գլխուն ճարին պիտի նայինք», եզրափակեց Մանուկը: Իսկ «գլխուն ճարին» նայի՞րը: Մանուկը դիմած է պետական օժանդակութեան, եւ այսօր դպրոցը կը տանայ նպաստ եւ կը շարունակէ իր հայակերտումի առաքելութիւնը:

Եւ հարց պիտի տայ: Ի՞նչն է սփիւռքեան մեր հայկական իրականութեան մեծագոյն եւ կարեւոր հիմնահարցը: Եթէ հայապահպանումն է եւ անոր հետ պահանջատիրութիւնը, բայց այս սրբազան առաքելութիւնները ի՞նչ նժարի վրայ պիտի դրուին: Արեւական պարտաւորութիւնը, թե՛ հայկական ամբողջական մշակոյթի ապահովութիւնը եւ շարունակականութիւնը: Ու տակաւին, պետք չէ՛ մտածել չորրորդ հայ սերունդին մասին, որ կը մեծնայ: Հապա՛ ինչ գերորդը՝ հայ մատղաշ մանուկներու սերունդը: Կարելի է՝ այս սերունդներու հայ մեծնալու հուղովոյթը սակարկութեան դնել:

Այս իմաստով իւրաքանչիւր հայկական հանդիպում օղակ մըն էր տեսնելու հայկական կեանքի մեծ խճանկարը Սիտնիի մէջ:

Վարուժան Իսկէնտերեան կու գայ Երուսաղէմէն, ան Արցախի Հանրապետութեան նախկին ներկայացուցիչն է Աւստրալիոյ մէջ: Գայլար Միքայէլեան Իրանէն է եւ Արցախի Հանրապետութեան այժմու ներկայացուցիչը: Գօգօ Մողովունեանը կու գայ Եգիպտոսէն եւ ստանձնած է Հայ Դատի գրասենեակի պատասխանատուութիւնը: Դենրիէթ Անդրեսեան Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան ներկայացուցիչն է եւ կու գայ Իրանէն: Վիգէն Գարօլեան Հայէպէն է եւ աշխուժ մասնակցութիւն ունի Համազգայինի մշակութային գործունէութիւններու կազմակերպումին մէջ: Սեմ Արոյեան կու գայ Հայէպէն, իսկ անոր կինը՝ Լիւսին, Եգիպտոսէն: Ճորճը եւ Լենան՝ Զեսայէն եւ Հայէպէն: Եւ այս բոլորին դիմաց անպայմանօրէն հարց կու տաս: Ինչո՞ւ հայը այսքան պետք էր տեղափոխուեր ու տարածուեր: Ու տակաւին, ապրեր իր հողէն հեռու եւ մէկէ աւելի ոստաններու մէջ:

Բայց իւրաքանչիւր հայկական հանդիպումիս կարելի էր տեսնել նուիրական ծառայութիւնը: Ծառայութիւն մը, որ պիտի ապահովէ հայուն շարունակականութիւնը: Եւ իւրաքանչիւր հայու մէջ, որ հանդիպեցայ, կրցայ տեսնել, թէ ինչպէ՛ս իր սրտին մէջ ճգմած ու շարունակ է այս քաղցր լուծը: Ու կ'ապրի այս քաղցր լուծը ապրեցնելու իրամասնակով:

Հայկական Արշակ եւ Սոֆի Գոլստըն վարժարանի քակին մէջ կար արծան մը, որուն վրայ արծանագրուած էր՝ «Կանք, կը մտանք»:

Եւ Աւստրալիոյ իւրաքանչիւր հայկական կեանքին, որ հանդիպե-



ցայ, եւ իր բոլոր տարբերութիւններուն մէջն ունէր մէկ նուիրական պատմութիւն:

«Կանք, կը մնանք»:

Այս ալ հայկական սփիւռքի բարդ իրավիճակին ու անոր բոլոր տարբերութիւններուն մէջէն դուրս ցցուող հասարակ յայտարարն է, որ կը միացնէ մեզ յոյժը:

Եւ եթէ Ցեղասպանութենէն ետք հայը ստիպուած եղաւ տարածուելու աշխարհով մէկ եւ քանի մը անգամ, բայց նոյն հայը տակաւին ունի ապրող առաքելութիւն:

Եւ այս իմաստով, եթէ հայը կը յիշէ Ռուսաստանութիւնը,

քանի որ ան կայ: Եւ եթէ կը պահանջէ, քանի նոյն հայը պիտի մնայ:

«Կանք, կը մնանք»: Սիտնի եւ տակաւին աշխարհով մէկ:

## ԲԱՔԵՂՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ «ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆԸ»

*«Քանզի Տէրը հոն բոլոր երկրի լեզուն խառնեց եւ Տէրը անկէ բոլոր երկրի երեսը ցրուեց զանոնք»:*

*(Ծննդոց 11, 9)*

Բաբելոնի Աշտարակը կը հանդիսանայ Աստուածաշունչի Յին Կտակարանի ամենէն գիտցուած եւ կարդացուած հատուածներէն մին: Ան շատ մը տուեալներով կը հանդիսանայ իւրայատուկ, ուր իր անունը շատ աւելի մեծ է քան իր պարունակ-բովանդակութիւնը եւ որուն կերպար-նշանակութիւնը շատ աւելի ժողովրդական է քան իր աստուածաշնչական բովանդակութիւնը: Այս իմաստով, եթէ մարդիկ նոյնիսկ չեն կարդացած Բաբելոնի Աշտարակի պատմութիւնը, ապա անոր անունը անպայման գիտեն: Ասկէ մեկնելով, արժէ կարդալ-



վերլուծել Բաբելոնի Աշտարակի Աստուածաշունչի այս հատուածը՝ տեսնելու եւ հասկնալու համար անոր նշանակութիւնը եւ հասկացողութիւնը, միշտ մեկնելով Աստուածաշունչի քրիստոնէական դիտանկիւնէն:

Բայց նախ պատմութիւնը:

Աշտարակը հսկայական շինարարութիւն մըն է: Մարդուն շինածը եւ նոյն մարդուն ձգտումը ու անոր ապաւինելով յաջողութեան հասնելու իր գրաւականը: Անոնք շինեցին իրենց մարդկային հիմքերով՝ գերադասելով զայն աստուածայինէն, որ կրնար արելի տոկոս ըլլալ: Ու տակաւին իրենց մտայրացած մարդկային հիմքերը իրենց այն խարհի նպատակակէտերու համար էր եւ ոչ անպայմանօրէն Աստուծոյ ու Անոր կամքին ու հաճութեանը համար:

Եւ հոսկէ արժէ սկսիլ մէկ-մէկ քակել այս պատմութեան իւրաքանչիւր օղակը:

Բայց նախ ենթահողը եւ իրավիճակը:

«Եւ բոլոր երկրին լեզուն ու խօսուածքը մէկ էր» (Ճննդոց 11. 1): Եւ մէկը՝ մենակեացը, ուր մարդը կը ձգտէր ըլլալու ինքնիշխան ու տիրապետող՝ ապաւինելով ինքն իր անձին: Ու տակաւին «Սեւասոր երկրին մէջ դաշտ մը գտաւ ու հոն բնակեցաւ» (Ճննդոց 1.2): Դաշտը՝ մարդուն գծած սահմանն էր, իւրացում-ինքնամփոփումը ինքն իր մէջ, որ պիտի տար իրեն ապահովութիւնը: Բայց Աստուծոյ ստեղծագործութեան նպատակակէտը «մէկ լեզու» եւ «մէկ դաշտ» չէր: Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը, զանոնք օրինեց եւ ըստ: «Աճեցեք ու շատցեք ու երկիրը լեցուցեք» (Ճննդոց 1. 28): Եթէ Աստուծոյ նպատակը տարածուիլն էր ու տարբեր լեզուներու մէջ բայց մարդը նախընտրեց իր լեզուն եւ իր դաշտը: Մէկը՝ միևնաճիւն է իրը:

Մարդը իր այս մէկութեան մէջէն ուզեց շինել իր Աշտարակը, որ պիտի հասնի մինչեւ երկինք: Իսկ երկինք հասնելու նպատակը «կրակով թօծելն» է (Ճննդոց 3.1): Մարդը ինքն իր ապահովութիւնը կը փորձէր գտնել իր ձգտումներու մէջէն: Եւ իր ձգտումը, մեկնելով իր շահերէն, կրակին յաջողութեանը մէջ էր:

Բայց Աստուծոյ ձգտումը ուրիշ էր: Ան երկիր «իջաւ» (Ճննդոց 1.7), որպէսզի մարդը «դադրի» (Ճննդոց 1.8) իր կեանքը շինելէ, որ մեկնակեաց է ու միահեծան: Այլ չիւն այն որ Աստուած կ'ընէ եւ ուր Աստուծոյ շինածը տարբեր է: Աստուած շինեց մարդուն կեանքը, որպէսզի ան իր անձէն դուրս գայ եւ տեսնէ իր Ստեղծիչը եւ ինքն այդ դառնայ ստեղծագործ՝ ուրիշ կեանքեր ստեղծելով: Եւ ստեղծագործ մարդը չի կրնար ինքն իր մէջ պահուողած մնալ այլ պէտք է տարածուի:

Տարածուիլը աշխարհագրական չէ միայն: Ան կ'ընդգրկէ լեզու,

մշակոյթ, ինքնութիւն, պատմութիւն եւ տակաւին: Եւ մարդը իր այս համամարդկային նպատակին ու անոր տարածուելուն մէջ է, որ պէտք է ապրի համերաշխ՝ Աստուծոյ պատկերովը ստեղծուած եւ Անոր նման, ուր նաեւ մարդը նոյնանման պատկերներ պէտք է ստեղծէ: Եւ այս կ'ամբողջանայ եւ կ'իրականանայ Աստուածաշունչի Նոր Կտակարանի իրականութեանը մէջ: Եթէ Աստուած «լեզուները խառնեց» (Ճննդոց 11.7) եւ «բոլոր երկրի երեսը ցրուեց գանոնք» (Ճննդոց 11.8), այդ մէկը սոսկ քանդելու համար չէր: Դապա պիտի ապացուցէր եւ իրականացներ Քրիստոսի հեղինակութիւնը եւ Անոր զօրութեանը գրաւականը: «Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկնքի ու երկրի մէջ: Ուրեմն զացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, մկրտեցեք զանոնք յանուն Դօր եւ Որդւոյ եւ Դոգւոյն Սրբոյ» (Մատթոս 28.18):

Այս իմաստին մէջէն է, որ պիտի տեսնենք թէ ինչու Աստուած լեզուները խառնեց եւ մարդիկը բաժնեց: Որովհետեւ մարդը սխալ ընկացքի մէջ էր եւ Աստուած խառնելով եւ բաժնելով մարդուն շնորհեց նոր լեզու եւ նոր դաշտ իր Շնորհքին միջոցաւ շինուած: Այս Աշտարակը մնայուն է եւ մարդուն կու տայ տեսական ապահովութիւն, «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի վերջը» (Մատթոս 28.20):

Դապա՝ ներկայ օրերու աշխարհը:

Մարդը նոյնն է կարծեք: Այսօր ալ մարդիկ կը շինեն իրենց աշտարակ(ներ)ը, բարձրացնելով զանոնք մինչեւ երկինք: Նոյն մարդը այսօր ալ կը փորձէ կերտել իր ապահովութիւնը՝ մեկնելով իր տրամադրութիւններէն եւ նպատակակէտերէն: Այդ նպատակակէտերը ծառայելու համար իր ծրագրին: Նոյն մարդը այսօր ալ կը կառնի իր լեզուին՝ իր դաշտին միայն, գերակայելով զայն մնացեալներէն, ու տակաւին՝ անտեսելով: Բաւարար է նայիլ ներկայ օրերու աշխարհի քաղաքական, տնտեսական ու ընկերային իրավիճակներուն եւ իմաստահարցերուն, ուր իւրաքանչիւր անկիւն վերածուած է քառսի, ուր անդադար աշտարակներ կը շինուին՝ կրակը թօծելով քիչ մը ամէն տեղ: Մարդիկ կ'աղերսեն ու կը փնտռեն պարկեշտ կեանք ու ապահովութիւն: Բայց այդ մէկը ո՛ր է եւ ինչպէ՛ս:

Բաբելոնի Աշտարակին մէջ լեզուները խառնուեցան, որպէսզի Աստուծոյ նոր կեանքի զօրութիւնը ի յայտ գայ:

Այսօր ալ պէտք ունինք, որ լեզուները խառնուին, որպէսզի աշխարհ անգամ մը եւս գիտակցի թէ «Ամէն իշխանութիւն երկնքի ու երկրի Աստուծոյ հետ է», եւ թէ համերաշխ կեանք մը Քրիստոսի նոր կեանքի զօրութեանը մէջ է:

Եթէ լեզուները խառնուեցան: Բայց մարդը Շինուեցաւ: Քրիստոսով:

## ԵՐԵՔ ԱՊՐՈՒԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ



«Նոստումը» ժապաւենը կրցայ դիտել 8 Մայիսին, Պէյրոսը: Այլ կողմէ ապրեցայ յուզում, բայց նաեւ հպարտութիւն: Յուզումը՝ Յնդասպանութեան ահաւորութեան, որ անգամ մը եւս գծուեցաւ մտքիս ու հոգիիս մէջ իբրեւ ապրող իրականութիւն: Բայց «Նոստումը» ժապաւենին աննշխարհ յատկանշականը այն էր, որ չկային սարսափազդու եւ արիւնալի տեսարաններ, ինչպէս որ է պարագան մերօրեայ շարժանկարի շատ մը արտադրութիւններու մէջ: Կրցան էին Յնդասպանութեան ահաւորութիւնը ներկայացնել ոչ ահաւոր տեսարաններու միջոցով: Եւ նոյն այդ տեսարաններուն միջոցով կրցած էին Յնդասպանութեան իրողութիւնը, ֆիզիքական, հոգեկան եւ հոգեբանական ապրուած սարսափազդու ցաւը դուրս հանել: Եւ այս՝ հայուն ցաւը: Եւ իւրաքանչիւր կերպարի հետ՝ հայ, թուրք, ամերիկացի կամ այլ, կենցիկ իրական ապրուած փորձառութիւններու եւ զգացումներուն մէջէն կրցած էին դուրս բերել հայուն ողբերգութիւնը, բայց նաեւ ապրելու վճռակամութիւնը:

Բայց կար նաեւ հպարտութիւնը: Նոյն այդ ցաւին մէջէն դուրս եկած ըլլալու իմ արդար հպարտութիւնս, թէ հայը կրցաւ մէջտեղ հա-

նել նման իրագործում մը տնտեսական մեծ ներդրումով, ու տակաւին, շատ մը դիւանագիտական հաշուառկումներով, ուր միջազգային հանրութեան կրցան ներկայացնել հայուն արդար իրաւունքը՝ Յնդասպանութեան իրողականութիւնը, այդ ալ համաշխարհային լիմահարթակին վրայ շարժապատկերի արուեստի միջոցով:

Ժապաւենը դիտելուս յաջորդ օրը պետք էր մեկնելի Ռաշինկոթըն՝ Միացեալ Նահանգներու մայրաքաղաք, ներկայ գտնուելու քրիստոնեական միջազգային մեծ համաժողովի մը՝ նուիրուած կրօնական ազատութիւններու եւ քրիստոնեական եկեղեցիներու ու համայնքներու ներկայ օրերու ապրած ճգնաժամներուն: Կը մասնակցէիս անելի լան ութ հարիւր եւ քառասուն ներկայացուցիչներ, որոնք եկած էին հարիւր երեսուն տարբեր երկիրներէ: Համագումարը նոյնքան ներկայացուցչական էր, որովհետեւ կրցած էր ի մի հաւաքել տարբեր քրիստոնեական համայնքներու բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ կաթողիկէ, ուղղափառ եւ անտարանական, ներառեալ պապական աթոռի պատուիրակը:

Համաժողովը թեւ ընթացք առաւ կրօնական ազատութիւններու եւ անոնց իրաւունքի եւ յարգումի անհրաժեշտութիւններուն վրայ լուսարձակ քանակով, բայց նաեւ անոր ոչ համահաւասար կիրարկումին: Շեշտը դրուեցաւ քրիստոնեական համայնքներու կրած տազնապններուն եւ ահաբեկումներուն վրայ, մասնաւոր միջինարեւելեան տարածաշրջանին մէջ:

Հայր Տուկլաս Ալպազի կու գայ Իրաքէն: Ան քաղդեական համայնքի հոգեւոր հովիւ է, որ մինչեւ օրս լծուած է տքնաշան ծառայութեան իր եկեղեցիին ու համայնքին համար: Կ'ապրի ու կը գործէ Պաղտատի մէջ: «Անելի քան տասը օր առեւանգուած մնացի» նախադասութեամբ իր ելոյթը սկսաւ հայր Ալպազի: Ան ներկայացուց իր տասը օրերու արգելակումը, ֆիզիքական, հոգեկան ու հոգեբանական այն ահաւոր չարչարանները, որոնց ենթարկուած էր: Ծայրայեղական ու ահաբեկչական խմբաւորումներ առեւանգած էին զինք: «Այս խմբաւորումները կը ձգտէին առեւանգել եկեղեցական առաջնորդներ, որպէսզի անելով վախ եւ անորոշութիւն յառաջացնեն»:

Հայր Ալպազի ներկայացուց Իրաքի ներկայ իրավիճակը իր տարբեր կնճռոտած երեւոյթներով: Միջհամայնքային տարբեր քախումները՝ փոքրամասնութիւններուն, քրիստոնեայ թէ այլ, կրած չարչարանները եւ տեղահանութիւնները, լուսարձակի տակ հանելով այն, թէ ինչպէ՛ս քրիստոնեայ համայնքը կը նուազի, եւ մարդիկ ստիպուած կ'ըլլան լքելու իրենց տունն եւ երկիրը:

«Եթէ պիտի ընտրեմ սիրելը, թէ լքելը, ես կ'ընտրեմ սիրելը», ըստին: «Կը սիրեմ իմ հայրենիքս՝ Իրաքը, եւ կ'ուզեմ կառնած մնալ

անոր, որովհետև քրիստոնեայ եկեղեցին այս երկրին ծնունդն է, շարունակեց ան:

Հայր Ալլազգիի մէջ եթէ մէկ կողմէ նշմարելի է նուիրումութիւնը, բայց նաեւ ինքնավստահ եւ քաջ կոերակաւի նկարագիրը: Ան չկարձակեցաւ իր խօսքը ուղղել ամերիկեան հասարակութեան՝ նոյնիսկ անոր մայրաքաղաքին մէջ. «Արթնցի՛ր, Ամերիկա: Արթնցիդ տեսնելու համար, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ իրացի մէջ, եւ թէ ինչպէ՛ս երկիրը պառակտուած եւ քառասալին վիճակի մը մէջ յայտնուած է, իսկ փոքրամասնութիւններ, յատկապէս քրիստոնեաներ, ինչպէ՛ս հաւածանքի կ'ենթարկուին»:

Համաժողովին կարեւոր անդրադարձներն մէկն էր Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Մայք Փենսիի ելոյթը. ան ընդգծեց միջին և արեւելեան տարածաշրջանի իրադարձութիւններուն մէջ կրօնական ազատութիւններու չգոյութիւնն ու ոտնակոխումը՝ փոքրամասնութիւններու նկատմամբ հալածանքներն ու անոնց կրած զրկանքները լուսարձակի տակ անելով: Փոխ նախագահը անդրադարձաւ քրիստոնեայ համայնքներուն իրավիճակին եւ ընդգծեց, որ Ամերիկայի ներկայ վարչակարգը մօտէն կը հետեւի եւ իրազեկ է բոլոր իրականութիւններուն: «Մենք մօտէն կը հետեւինք բոլոր դժբախտութիւններուն եւ այն զրկանքներուն ու հալածանք-ջարդերուն, որոնք ենթակա են համայնքային փոքրամասնութիւններ Միջին Արեւելքի մէջ», ըսաւ ան ու շարունակելով՝ անելցուց. «ժամանակն է, որ Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող այս բոլոր աղետները իրենց անունով կոչուին: Եւ այդ անունը ցեղասպանութիւն է», եզրափակեց փոխ նախագահը:

Եթէ զօրաւոր հաստատում մըն էր այն, որ փոխ նախագահը կատարեց, եւ այդ ալ բաւական ինքնավստահ, բայց չուշացաւ իմ մէջս ծնած հարցումը: «Բայց արդեօք ե՞րբ Հայոց Ցեղասպանութիւնը եւս պիտի կոչուի իր անունով»:

Բաւական յագեցած էի ժողովներէն: Եթէ մէկ կողմէ կար շատ տեղեկութիւն, ողբերգութիւն եւ զգաստութիւն եկեղեցական մեծ թիւ ներկայացնող համաշխարհային համակարգի մը կողմէ, բայց նոյնքան նաեւ սպառնիչ էին այդ բոլորը: Սպառնիչ, որ կը յոգնեցնէ մարդուն միտքն ու հոգին:

Բայց կար նաեւ պատեհ առիթը ժողովի ընթացքին բաժնեկցելու իմ՝ հայուն ցաւը: Եւ ակնարկելով շրջանի տագնապներուն ու մտահոգութիւններուն, նաեւ այն բոլոր սպանողներուն, որոնք կը շարունակուին տարբեր համայնքներու հաշուոյն, ըսի. «Եթէ քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը հայ ժողովուրդի հանդէպ ընդունուէր եւ դատապարտուէր ըստ պատշաճի, պիտի կանխուէին եւ

հաւանաբար չբաշխուէին պատմութեան ընթացքին մարդկութեան հանդէպ կրկնուող իրերայաջորդող դժբախտութիւնները տարիներէ ի վեր եւ մինչեւ օրս»:

Ուաշինկթընի օդակայանէն կը վերադառնամ Պէյրութ՝ մտորումներու մէջ սուզուած: Յօգնած, սպառած եւ երեւի քիչ մըն ալ գայլորթով լեցուն մտորումներ, թէ ինչո՞ւ մինչեւ այսօր կայ քաշքշուքը հայուն ցեղասպանութեան եւ զայն իր ճշգրիտ անունով (վկայելու յանդուութիւնը:

Եւ կը վերադառնամ «հոստումը» ժապաւենին եւ այն բոլոր կերպարներուն, զորս ժապաւենը կրցած էր ստեղծել: Անան, որ Փրանսիա ապրած էր, բայց «զօրաւոր հայ է», Միքայէլը, որ Ցեղասպանութեան բոլոր դժբախտութիւնները ապրել էր որբերու խումբին հետ հասած էր Միացեալ Նահանգներ, եւ որ իր վերապրումի տրկանքին ընթացքին, Ցեղասպանութենէն ու արհաւիրքէն տարիներ ետք, արդէն չափահաս դարձած որբերուն դիմաց վճռակասօրէն յայտարարեց. «Բայց մենք այսօր կա՛նք եւ հո՛ւ ենք»:

Օդակայանին մէջ, յոգնած՝ մտորումներէս, դարձեալ տեսայ, թէ հայը այսօր տակաւին «կա՛յ ու հո՛ւս է», եւ եթէ «հոս»ը քիչ մը ամէն տեղ է, բայց հայը կեցած է զօրաւոր: Եւ «հոսկէ» թէ «հոնկէ» կը շարունակէ արթնցնել համաշխարհային համակարգը՝ զոչելով, թէ հայուն ցաւը պետք է կոչել իր անունով՝ Ցեղասպանութիւն:

«հոստումը», հայր Ալլազգին եւ Միացեալ Նահանգներու փոխ նախագահը:

Երեք իրադարձութիւններ, զորս ապրեցայ մէկ ամսուան ընթացքին: Երեք իրադարձութիւններ, որոնք իրարու անջուած են եւ կու գային դարձեալ յիշեցնելու, իմա՝ արթնցնելու, թէ հայուն աղետը պետք է կոչել իր անունով՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ: Իսկ հայը միշտ պիտի շարունակէ յիշել եւ պահանջել զայն՝ Ցեղասպանութիւն եզրին ճշգրիտ ու լիիրաւ օգտագործումը:

# ԷՄԻՐԱԹԵԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ՝ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Շատ անգամ մարդիկ ու բարեկամներ հարց տուած են ինծի այն խտանաբաշխի ասպարեզիս՝ Աստուածաշունչի Ընկերութեան եւ Շոցի տարածաշրջանի մէջ գործելու կարելիութեան մասին, որովհետեւ, եւ հասկնալի պատճառներով, դժուար կ'ըլլայ պատկերացնել, որ իսլամական այս երկիրները, որոնք ծանօթ են նաեւ որպէս նոյն այս կրօնին հիմքը նկատուող ոստաններ, որպէս պետութիւն եւ պետականութիւն, իրենց մէջ կրնան ընդգրկել քրիստոնեական ներկայութիւն:

Բայց եւ այնպէս իրականութիւնները կը տարբերին՝ այսօրուս իրավիճակէն մեկնելով եւ ընթանալով պատմութեան հոլովոյթներուն մէջէն: Այսօր կիսապաշտօնական վիճակագրական տուեալներով, մօտաւորապէս հինգ միլիոն քրիստոնեայ կ'ապրի ու կ'աշխատի այս տարածաշրջանին մէջ եւ անոնք կու գան աւելի քան հարիւր տարբեր երկիրներէ ու ազգութիւններէ:

Յոս արժէ բանալ փակագիծ մը, որովհետեւ կայ պատմութեան ճշմարտացիութիւնը եւ փաստը այն մասին, որ Շոցի այս ամբողջ տարածաշրջանը կազմուած էր քրիստոնեայ երկիրներէր ստացին իսկ դարերէն սկսեալ: Իսլամական ներխուժումը, հիկեբորդ դարէն սկսեալ, կամաց-կամաց սկսած է տկարացնել քրիստոնեայ ներկայութիւնը, իսկ իններորդ դարուն արդէն քրիստոնեայ ներկայութիւնը ամբողջութեամբ անհետացած է:

Պատմութիւնը կ'անդրադառնայ այս անհետացման քանի մը վարկածներու: Կար տնտեսական գործօնը, ուր իսլամական պետութիւններու պարտադրած տուգանքը՝ ճիզան, ստիպած է քրիստոնեայ հաւաքականութիւններուն արտագաղթել բայց նաեւ կրօնափոխուի: Պատմական տուեալներ նաեւ կը խօսին հալածանքներու մասին, որոնց ենթարկուած են քրիստոնեայ հաւաքականութիւններ տարբեր շրջաններու մէջ: Կայ նաեւ ներքրիստոնեական վարկածը՝ եկեղեցիներու միջէն եղած ու ծագած աստուածաբանական թէ այլ հարցերը, որոնք մղած են քրիստոնեաները աւելի մատչելի գտնելու իսլամական կրօնը ու փարելու անոր:

Յոս պիտի զոցենք փակագիծը: Բայց կան նաեւ ներկայ օրերու տուեալները՝ եկեղեցիներու յայտնաբերումը, հնութիւններու եւ պեղումներուն գործընթացը: Եւ այս՝ անկախ անկէ, թէ ինչ վարկած(ներ) պատճառ եղած են այս շրջաններէն քրիստոնեութեան շոգիացման:

Այսօր քրիստոնեայ ներկայութիւնը Շոցի տարածաշրջանին մէջ կազմուած է, ջախջախիչ մեծամասնութեամբ, օտարներէ (բացի Քուեյթի եւ Պահրէյնի շատ փոքր ազգային քրիստոնեայ համայնքէն), որոնք կազմակերպած են իրենց եկեղեցական կենսքերը օրինական կարգավիճակով:

Արաբական Միացեալ Եմիրութիւնները, գլխաւորութեամբ Տուպայ քաղաքին, ստեղծած են յատուկ հմայք մը ամբողջ աշխարհի տարածքին: Յմայքին մէջ կայ գրաւութիւնը, որուն պատճառով աւելի քան հարիւր եւ քսանհինգ տարբեր ազգութիւններ կ'ապրին հոն: Թեւ Արաբական Միացեալ Եմիրութիւններ են, բայց խորքին մէջ աշխարհը մէկտեղող երկիր կը հանդիսանան: Աշխարհի այս բոլոր քաղաքակրթութիւններու համախմբման վայր եղող այս երկիրը կրցած է ստեղծել համակարգ մը, որուն հիմքը այս բոլոր ազգութիւններու եւ անոնց մշակոյթներու համակեցութիւնն է: Եւ պետութիւնը այս համակեցութեան գաղափարախօսութիւնը ոչ միայն կը քաջալերէ ու կը պաշտպանէ, այլ նաեւ ատիկա վերածած է պետական կառոյցի՝ ստեղծելով հանդուրժողականութեան նախարարութիւնը:

Երեքշաբթի, 17 Յունուար 2017: Ապու Տապիե (Արաբական Մի-





ացեալ Եմիրութիւններու մայրաքաղաք) երեսուն քրիստոնեական առաջնորդներով, պետական հրաւերով ու դասաւորումով, յատուկ օդանաւով էջք կը կատարենք Սիր Պանի Եաս կղզին, ուր 1994 թ. յայտնաբերուած են քրիստոնեայ եկեղեցիի մը հնութիւններ իրենց բոլոր դարէն մնացած: Մինչեւ օրս, պետական նախաձեռնութեամբ Երոպայէն յատուկ մասնագետներ եւ հնագետներ կը պեղեն, կը խնամեն եւ կը պահպանեն այս եկեղեցական հնութիւնները:

Եթէ տարածաշրջանի տարբեր երկիրներու մէջ պատմական քրիստոնեական մշակոյթներ ու կոթողներ կը քանդուին, Արարական Միացեալ Եմիրութիւններու մէջ անոնք կը պահպանուին: Գոսկ մը ընթացք առաւ մեր այցելութիւն-հաւաքին հիմքը:

Ելիսա Լուպան Զասիմի նախարարն է հանդուրժողականութեան այս պետական կառոյցին: Ան ընդարձակեց հանդուրժողականութեան պետական հայեցակէտը, որ կ'ընդգրկէ իսլամական հաւատքը, պետական կանոնագրութիւնը, պատմական աւանդը, բայց նաեւ երկրի բարոյական սկզբունքները, եւ ուր այդ նոյն բարոյական սկզբունքներուն մէջ ներառած են համամարդկային արժէքները: «Ամէն օր հանդուրժողականութեան օր պէտք է ըլլայ», ըսաւ շէյխու:

Այս հաւաքին Սիր Պանի Եասի կղզիին մէջ տեղի ունեցող պարզ գուգարիպութիւն չէր, այլ այն պատճառով էր, որ հանդուրժողականութիւնը եւ անոր արժէքը հիմնուած են անհատին ու հաւաքարկութեան աւանդին ճանաչումին եւ պահպանման վրայ: Բայց կոյ



նաեւ անոր նկատմամբ յարգանքի գիտակցութիւնը: Եթէ ուրիշ 20 պէտք է ընդունիլ, բայց նաեւ պէտք է տեսնել անոր աւանդը: Գաւաքական մեր կենսքերուն եւ շատ անգամ անոր հակադիր կեցուածքներու եւ տրամադրութիւններու մէջ «համախոհութիւն ստեղծելու կարելիութիւնները շատ ատելի կրնան ըլլալ, երբ կայ հանդուրժողականութիւնը» (Մերքել, 2017):

Նախարարը հաղորդական է եւ յարաբերութիւններ մշակելու ստակ: «Պէտք է ունենալ դրական կեցուածք, բացուիլ մարդկութեան եւ աշխատիլ ու յարաբերիլ բոլորին հետ: Բայց նաեւ արժէ գիտակցիլ, որ ապրիլը այս մեր բազմաթիւ մշակոյթները ընդգրկող հաւաքականութեանը մէջ համագօր է հարստութեան», ըսաւ ան: Նախարարին հարստութիւնը մարդկային արժէքին գիտակցութեան մէջ ու անոր համար է: Նախարարը կը գիտակցեր իր պաշտօնին անհրաժեշտութեան, բայց նաեւ այժմեականութեան, թէ ներկայ աշխարհի հրատապ հարցերէն մէկն է անհանդուրժողականութիւնը: Եւ անհանդուրժողականութեան հետ կը յառաջանայ ատելութիւնը, որ համբայ կը հարթէ ժխտական կեցուածքի ու առճակատումի: «Մեր պիտաւոր նպատակակէտը երիտասարդութիւնը եւ ընտանիքներն են: Պէտք է դաստիարակենք զանոնք հեռու մնալու ատելութենէ: Եւ հանդուրժողականութիւնը կը հեռացնէ մարդը ժխտական մտածողութենէ եւ կամուրջներ կը հաստատէ անհատներու եւ մշակոյթներու միջեւ», հաստատեց ան:

*«Մենք ստրկեցանք, բէ այն ինչ, որ մեզ կը մի-  
ացնէ շաբ առկի մեծ Է քան այն, որ կը բաժնէ»*

Կային իմ մտածումներս:  
Արդեօք ուշացա՞ծ ենք այս բոլորին համար: Անհանդուրժողականությունը միայն միջինարեւելեան ներկայ օրերու ճգնաժամը չէ: Այսօր ընդհանրացած երեւոյթ է, որ ներառած է ամբողջ աշխարհը: Չեմ գիտեր, թէ այս վիճակները հակազդեցութի՞ն են, թէ՛ այլ բան: Ծայրայեղականությունն եւ անհանդուրժողականությունն սկսած են մշակոյթներու դիմագիծները փոխել:

Նախարարը կոչ ուղղեց քրիստոնեայ եկեղեցիներուն, որպէսզի աշխուժ մասնակցութիւն բերեն այս արշաւին, քանի որ երեւի կը գիտակցեր, գէթ լռելեայն, թէ քրիստոնեական աստուածաբանութիւնը ուրիշը հասկնալու եւ ընդունելու գիտակցութեան մէջ է: Ուրիշը, որ տարբեր է ինձմէ, քեզմէ, եւ որ նոյնքան արժանի է, որ ան-անոնք նա: Եւ ընդունուին, այդ ալ ըստ պատշաճի: Եթէ ուշ է այս նախաձեռնութիւն-մտայղացումը, բայց երբեք ուշացած: Եւ ժողովրդային խօսքը դիպուկ է. «Աւելի լաւ է ուշ, քան երբեք»: Որովհետեւ «երբեք» կը փակէ ամեն կարելիութիւն, բայց «ուշը» կրնայ յուսադրել, որ կարելիութիւններ կան պատեհ առիթը եւ առիթները ստեղծելու, քիչ մը շտկելու այն հսկայ աւերները, որոնք կը գործուին մարդկային կեանքերու մէջ եւ ամեն տեղ:

Չուշացաւ մեր խմբակին յանձնառութիւնը նախարարին, թէ «քրիստոնեայ եկեղեցին Արաբական Միացեալ Եմիրութիւններու մէջ կ'ուզէ իր մասնակցութիւնը բերել միջավայրի մը մէջ, որ ցոյց կրնայ տալ, որ կրօնները, իրենց տարբերութիւններով, պէտք չէ խթանեն պատերազմներ, այլ պէտք է դառնան ամուր կռուան՝ շինելու հասարակ կեանքերը արդարութեան եւ խաղաղութեան տեսլականով»:

Նախարարին հանդուրժողականութիւնը եւ հանդուրժողականութեան նախարարութիւնը: Ուշ է, բայց երբեք ուշացած: Զանի արժի հաւատալ, որ կարելի է այս ոչ խաղաղ ու անարդար աշխարհին մէջ մէջտեղ հանել խաղաղութիւն եւ արդարութիւն:

Նախարարին հանդուրժողականութիւնը: Եթէ նախարարին է, նաեւ արժէ որ ըլլայ իմս եւ բոլորինը: Զանդուրժողականությունն մը, ուր ուրիշը կը տեսնես եւ կ'ընդունիս:

Յետեւելով բանաստեղծին միտքին արժէ ընել համեմատականը Այսօր աշխարհի «հացի, օդի եւ ջրիկ նման պէտք ունի» խաղաղութեան եւ արդարութեան: Եւ ՈՒԻԻՇԸ հանդուրժելը կրնայ ճամբայ բանալ կերտելու համար այս սպասուած խաղաղութիւնը եւ արդարութիւնը:

Մարտ 2017: Գերմանիոյ Պերլին քաղաքին մէջ կը մասնակցիմ Աստուածաշունչի Ընկերութեան մէկ միջազգային գործ-համագումարին: Գերմանիոյ գրասենեակը, այս առիթով, յարմար տեսած էր նաեւ կազմակերպել երեք օրերու շրջագայութիւն մը Մարթին Լուտերի ծնած, ապրած եւ գործած այն քաղաքները, ուրկէ սկսաւ եւ ծաւալեցաւ Բարեկարգումի Շարժումը, որուն հիկց հարիւր ամեակն է այս տարի: Գերմանիան ու այլ երկիրներ շատ մը ձեռնարկներով կ'ոգեկոչեն զայն:



Լուտերի քաղաքները, Ուիթընպըրկ, Էյզլըպէն, Էյզինակ, հասնելով մինչեւ Լայփցիկ: Բոլոր քաղաքներն ալ նախկին Արեւելեան Գերմանիոյ մաս կազմած են: Ակներեւ էր, թէ պատմական նշանակութիւն ունեցող բոլոր կողողները, Արեւելեան Գերմանիոյ ժամանակաշրջանին եւ ի մասնաւորի քրիստոնեական եկեղեցիներն ու անոր հետ առնչուած կառոյցները, լքուած վիճակի մէջ էին: Գերմանիոյ վերամիացումէն ետք է, որ անոնք ստացած են յատուկ ուշադրութիւն եւ վերանորոգուած՝ նկատի ունենալով անոնց պատմական եւ մշակութային ժառանգը: Եւ չուշացաւ Գերմանիոյ գործակիցներու՝ նախկին Արեւմտեան Գերմանիոյ քնակիչներ, սրամիտ արտայայտութիւնները: «Մեր դրամով վերաշինուցեալ այս բոլորը»:

Բայց նախ Լուտերին վարդը: Այսպէս ըսած՝ Լուտերին նշանը, որ Գերմանիոյ ամբողջ տարածքին գետեղուած է այս օրերուն: Եթէ վարդը ունի իր ճերմակ գոյնը՝ կարմիր սիրտ միջուկով եւ մէջտեղ սեւ խաչ, բայց ունի խորհրդանշական արտայայտութիւն: Մեւ խաչը՝ մահուան, մեղքի եւ ցաւի նշանն է: Իսկ սիրտը կը պատէ իր կարմիր գոյնը, առանց արատաւորուելու: Այս կը նշանակէ, թէ խաչը չի կրնար մեղքնել կեանքը, բայց կը պատէ զայն. «Արդարը իր հաւատ»:



քով պիտի փրկուի» (Յոսմեացիս 1.17): Եւ հաւատքը կու գայ խաչին եւ անոր թափած կարմիր արիւնին միջոցաւ:

Սիրտը գետնորսած է ճերմակ վարդին մէջանդը, ինչ որ կը խորհրդանշէ, թէ հաւատքը կը թրթուրախութիւն, հանգստութիւն եւ խաղաղութիւն եւ կը վերանորոգուրախութեան արտայայտութեամբ մը: Այս կ'իրականանայ ոչ թէ աշխարհի տուած խաղաղութեամբ եւ ուրախութեամբ, այլ երկնայինին:

Այս պատճառով է, որ վարդը ճերմակ է, քանի ճերմակ գոյնը կը ցուցնէ հրեշտակը եւ Սուրբ Զոգին՝ երկնայինը: Ճերմակ գոյնը կը կենայ երկնային կապոյտ յենարանի մը տակ, որովհետեւ Սուրբ Զոգին եւ հաւատքին ուրախութիւնը սկիզբն են երկնային յաւիտենականութեան: Այս յոյսի նշանն է, որ հաւատացեալը կ'ունենայ, եւ կ'արտայայտուի ոսկեայ մատանիով մը, որ կը խորհրդանշէ յաւիտենականութիւնը՝ պիտանի ու արժեքաւոր, ինչպէս որ է ոսկի մատանին:

Լուստրին աստուածաբանութեան ու վարդապետութեան վերլուծումն էր, որ սկիզբ տուաւ բարեկարգումի շարժման: Եթէ սկսած էի տեսնել բարեկարգումի մեծ նպաստը՝ շրջագայելով այս քաղաքներուն մէջ ու անոր պատմական կրթողներուն, բայց նաեւ կը տեսնէի դժուար կեանքը Լուստրին եւ իր հաւատամքին: Բայց նաեւ հակասութիւններն ու (չ)հասկցուելու իրականութիւնները: Նաեւ վարդապետական-դաստիարակչական իր շէշտերը, որ ունեցաւ իր հետեւանքները:

Ու Լուստրին «շէշտը»: Աստուծոյ խօսքը եւ անոր կարեւոր եւ այժմեական ներդրումը քրիստոնեային կեանքին համար: Ան ուզեց Աստուծոյ խօսքը լսելի դարձնել լեզուով մը, որ իրական եւ ապրող կեանք է: Չարմանալի չէ, որ ուր շարքաթներու տընաջան աշխատանքով կրցաւ նոր կտակարանը թարգմանել այս հասկնալի լեզուովը: Բայց նոյնը չկրցաւ ընել Զին Կտակարանի պարագային, որ իրմէ խլեց շատ անելին եւ երեւի ամբողջ կեանք մը: Աստուածաշուն-

չի Գերմաներէն ամբողջական թարգմանութիւնը կարելի եղաւ իրականացնել եւ իրատարակել իր մահուընէ միայն մէկ տարի անց՝ 1645 թուականին:

Բարեկարգումի շարժման նպաստը մեծ է կրթական-ակադեմիական ու տակաւին մարդուն անձնական ու հաւաքական կեանքի լուսաւորութեան մէջ: Յստակ էր, թէ Լուստր իր բարեկարգումի շարժման կիզակետը դարձուցած է Զրիստոսը եւ յանդգնած է այդ օրերուն ըսել. «Պէտք է նայինք նոյնինքն այն մարդուն, որ Զրիստոս կը կոչուի»: Եւ ինչ խօսք, որ Զրիստոսի վրայ յենած կեանքը լոյսի կ'առաջնորդէ:

Աստուծոյ շնորհքը բաւարար է, որ մարդ ունենայ-ստանայ իր կեանքին ուղղութիւնը: Ուղղութիւնը, որ կը կերտէ արդարութիւն եւ իրաւունք: Ուղղութիւնը՝ լոյսի: Եթէ Լուստր շէշտեց այս շնորհքին կարեւորութիւնը, գիտակցութիւնը, բայց մանաւանդ՝ բաւարարութիւնը մարդկային կեանքին ու անոր փրկութեան համար: Բայց ան դարձաւ խնդրալարոյց օրուան եկեղեցական առաջնորդներուն համար, որոնք կը հաւատային թէ մարդուն մեղքի հատուցումը կու գայ կիւթական պարտաւորութեամբ՝ այդ օրերու եկեղեցական համակարգին: Այդ կիւթական հատուցումի միջոցով կ'պահովուի նոյնինքն մեղաւոր մարդուն տեղը զաւարանի հասկացողութեան մէջ: Եւ հոս արդէն ակնյայտ էր բախումը Լուստրին եւ տեղական եկեղեցիին միջեւ:

Ու բախումը պիտի շարունակուի: Ան ամբաստանուեցաւ որպէս հերետիկոս, բայց նաեւ ստիպուած եղաւ որոշ ժամանակի մը համար պահուցած կեանք մը ապրիլ: Բայց այս պահուցած կեանքը արտադրեց նոր Կտակարանի թարգմանութիւնը Գերմաներէն լեզուով եւ զայն ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու իրականութեան:

Եւ կար ժողովուրդին ընդվզումը եւ բարեկարգումի կոչը այդ օրերու տիրող ոչ-նպաստաւոր պայմաններուն համար: Լուստրի Անտարանի քարոզութիւնը եթէ մէկ կողմէ ճամբայ բացաւ լուսաւորութեան, բայց նաեւ իրաւունքի եւ արդարութեան պահանջատիրութեան: Ու գիւղացի-հողագործը դուրս եկաւ իր երկար տարիներու իրաւագրկուած վիճակէն եւ ուզեց իր իրաւունքները ունենալ այդ օրերու տեղական-պետական վարչակարգէն: Լուստրի մեկնաբանութիւնները նաեւ ընկալուեցան այլ միտքերով: Լուստր չկրցաւ երկու պատերազմող կողմերուն միջեւ իր կեցուածքը հաւասարակշռել եւ հակասութիւններու մէջ իյնալով՝ մեղադրուեցաւ երկուստեւ:

Գերմանիան, միջին դարերէն սկսեալ, իր հաւաքական կեանքին մէջ սկսած էր անհանդուրժողական կեցուածք ունենալ իրենց իրականութեան նկատմամբ: Այս անհանդուրժող կեցուածքը զարգացաւ,

տարիներու ընթացքին, դառնալով հակասեմական: Լուստեր չկրցաւ բարեկարգել այս մթնոլորտը: Այլ՝ մեկնելով աստուածաբանական-վարդապետական մեկնաբանութիւններ, հրահրեց այս մթնոլորտը:

Լուստերի կեանքը եղաւ աշխատանքով լեցուն եւ արդիւնաւետ: Այս լեցուն կեանքին մէջ պիտի պատահին բացթողումներ: Եւ մինչեւ այսօր ալ նոյնն է պարագան չէ՞: Աշխատանքով լեցուն կեանքին մէջ եթէ կ'ըլլան յառաջիադացքներ, բայց նաեւ սխալներ:

Լուստեր, մահուան անկողիին մէջ, ուզեց իր լեցուն կեանքին մէջ փոքր սահմանումը տալ. «Ոչ ոք թող մտածէ, թէ բաւարար չափով համեստած է Աստուծոյ խօսքը: Մենք բոլորս ալ մուրացկաններ ենք»: «Մուրացկան»ը դարձեալ խորհրդանշական է: Մարդ երբեք պիտի չկշտանայ Աստուծոյ խօսքէն եւ պիտի մնայ «մուրալու» վիճակի մէջ, ուզելով աւելին, որովհետեւ մարդը միշտ ալ պետք ունի Աստուծոյ խօսքին ընծայած շնորհքին:

Բարեկարգումի շարժման հինգ հարիւր ամեակի հանդիսութիւններու բացման արարողութեան, Շուշուի մէջ, Կաթողիկէ եկեղեցիին քահանայապետ Ֆրանսիս Պապը եւ Լուստերական եկեղեցիին համաշխարհային համակարգի նախագահ Եուան Եպիսկոպոս, վերանայելով պատմութեան փորձին տարբեր հոլովոյթներուն մէջէն, համատեղ կեցուածքով ընդգրկեցին. «Մենք սորվեցանք, թէ այն ինչ որ մեզ կը միացնէ շատ աւելի է, քան այն, որ կը բաժնէ»:

Եւ այս կը մնայ քրիստոնէայ եկեղեցիին ներկայ օրերու մարտահրաւերներու հիմնական ուղեգիծը՝ միութիւնը: Այս միութիւնը անպատակ չէ: Միութիւնը՝ թէ քրիստոնէական աստուածաբանութեան նպատակը քրիստոնէայ եկեղեցիին օգնել է՝ քալելու շնորհքի ճամբէն, որ Աստուծոյ խօսքին միջոցաւ մարդուն կու տայ յոյս այսօրուայ կեանքին համար եւ մինչեւ յաւիտենականութիւն:

Ու դարձեալ Լուստերի վարդը եւ այդ վարդին միտք բանին: Սա խաչին պարտութիւնը կարմիր սրտին դիմաց: Այդ կարմիր սրտին տուած կեանքը, որ կը քալէ ճերմակ վարդին հովանիին տակ դեպի երկնային կապոյտ երկինքը: Հոն, ուր մարդուն կեանքը կը մնայ ոսկի եւ չի ժանգոտիր:

Քրիստոնէայ եկեղեցիին միութեան հիմքն ալ հոն է: Շնորհքին տուած կեանքը երկրի վրայ, բայց նաեւ երկնքի, որ չի ժանգոտիր, այլ կը մնայ միշտ ոսկեգոծ: Այս ոսկեգոծ կեանքին ու անոր դաստիարակութեան համար է, որ քրիստոնէայ եկեղեցին պարտի պահել իր միութիւնը: Միութիւն մը, դաստիարակութիւն մը, որ մարդուն կեանքին կու տայ եւ կը կերտէ նպատակ, բայց նաեւ արժէք:

Եւ այս արժէքի կեանքը կերտելը շատ աւելի պատճառ է միութեան:

## ԿԱՐԵԼԻ ԶԷ ԿԵԱՆՔԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ Թ-ԱՔՅՆԵԼ

22 Մարտ 2017: Ուիթնպերկ՝ այսպէս ըսած նախկին Արեւելեան Գերմանիոյ գեղեցիկ քաղաքներէն մէկը: Հոն, ուր Մարթին Լուստեր ապրեցաւ եւ ստեղծագործեց, նաեւ հիմը դնելով եկեղեցիին ու ընդհանրական կեանքի բարեկարգումի գործընթացին: Այս տարի կը զուգարհպի այս բարեկարգումի շարժումին հինգ հարիւր ամեակին: Գերմանիան եւ շարք մը այլ երկիրներ մեծ հանդիսութիւններով պիտի յիշատակեն այս տարեդարձը: Գերմանիան այս իմաստով ծրագրած է ձեռնարկներու շարք մը՝ ոգեկոչելու համար այս իրադարձութիւնը:

Քաղաքին տարբեր շրջանները ու տակաւին պատմական հիմք ունեցող ամեն կողող ու թանգարան այցելելով կարելի էր տեսնել բարեկարգումի շարժումին բերած հոգեւոր մեծ նպատեղ եկեղեցական, կրթական ու ընկերային շատ մը ոլորտներու մէջ: Բարեկարգումի շարժումը սկսաւ գլխաւորաբար Աստուածաշունչի թարգմանութեամբ եւ զայն ժողովուրդին տրամադրելի դարձնելու միտումով: Ան նաեւ կրթական-ակադեմական մեծ վերելք մը ստեղծեց եւ մարդկային, ընկերային ու հաւաքական կեանքերուն տուաւ մեծ սլացք: Այս սլացքն էր, որ շատ յստակ կերպով սկսայ տեսնել երբ կը շրջագայէի պատմական այս քաղաքին մէջ:

Այս քաղաքին ու բարեկարգումի լուսաւոր կեանքին մէջ կար տիրուր եւ խաւար երես մը: Ուիթնպերկ քաղաքին կեդրոնական եկեղեցիներէն մէկուն պատին վրայ գետեղուած էր միջին դարերէն



մնացած խոզի նկար մը ու հրեայ պզտիկներ, որոնք խոզին կաթն կը խմէին: Նկարը տեսնողը կը հասկնար, թէ պզտիկները դասուած էին համահաւասար սերունդ եւ պատկանե-



լիութիւն նոյնիսկ խոզին:

Հակասեմական տրամադրութիւնները, բայց նաեւ ատելութիւնը ու անոր մթնոլորտը, Գերմանիոյ հաւաքական կեանքին մէջ տիրական դարձած է միջին դարերէն սկսեալ եւ ըստ երեւոյթին բարեկարգումի շարժումն ալ որբէւ ձեւով չէ կրցած բարեկարգել այս մթնոլորտը: Իսկ պատմութեան տունեալները անելիով կ'ապացուցին, թէ բարեկարգման շարժումը նաեւ հրահրած է այս զգացումները, հասնելով մինչեւ քսաներորդ դարու Ողջակիզումին:

Նոյն եկեղեցիին կից գտնուող յուշակոթող մը գրաւեց ուշադրութիւնս: Երբ գերմանական պետութիւնը ընդունած է իր գործած քստմանի ոճիրները, առաջարկուած է անոր եկեղեցիի ճակատէ վերցնել այդ նկարը: Տեղույն հրեայ հաւաքականութիւնը մերժած է այդ առաջարկը եւ որոշած է այդ նոյն նկարին կողքին գետեղել այլ յուշարձան մը նոյն եկեղեցիին կից, բայց գետինը: Այս պարագային գետինը ունի խորհրդանշական իր պատգամը: Կոթողը կը ներկայացնէր կիսով բացուած գետինը եւ կարծես գերբնական ուժով մը կը փորձէր դուրս ժայթքեցնել ճշմարտութիւնը: Կոթողին միտք բանիին մէջ չէն մոռցած յիշատակելու, թէ կարելի չէ կեանքի ճշմարտութիւնը թաքցնել:

Մարդկային կեանքին ու անոր պատմութեան մէջ գործադրուած քստմանի մէկ ոճիրին ու Ողջակիզումի իրականութիւնն էր, որուն դէմ յանդիման կանգնած էի: Կանգնած էի յուզումով եւ յուսախաբութեամբ: Հարց կու տայի, թէ ինչպէ՞ս մարդկային միտքն ու բանականութիւնը կրնան այսքան ոճիր հանդուրժել: Այս երկու կողողներուն մօտ նաեւ ցանած էին Մայրիի ծառ մը: Անզգալաբար անցայ Մայրիի ծառին տակը, որովհետեւ զգացի հարգատ. վերջապէս իմս էր՝ լի-



բանանեանը: Ուիթնպերկի մէջ Մայրիի ծառը իր կարգին ունէր խորհրդանշական այլ պատգամ: Կեանքին պատգամն էր այդ, անիկա կեանքին շարունակականութեան հաւատալու եւ անոր վերապրելու իրականութեան ամուր կառչելու գրաւական էր: Իբրեւ լիբանանահայ ապրած էի կեանքին ու անոր շարունակականութեան նկատմամբ հաւատքը, որովհետեւ Լիբանանի երկար տարիներու պատերազմին արհաւիրքն ու անոր դժուար փորձարութիւնները առկայ էին, ինչպէս որ այդ դժուար փորձարութեան մէջ վերապրելու հրամայականը ինքզինք կը փաստեր:

Ճիշդ է, որ Մայրիի ծառին տակ հանգիստ զգացի եւ ապահով, բայց անպայմանօրէն սկսայ ապրիլ իմ՝ հայուն ցաւը: Հայոց Յեղասպանութեան ցաւը ու այդ ահաւոր ատելութիւնը, որ օսմանեան Թուրքիան գործադրէր հայուն դէմ: Մէկ կողմէ հայուն նահատակութիւնն ու տեղահանումը, իսկ միւս կողմէ հայոց լեզուին, մշակոյթին եւ հաւատքին դէմ գործուած չարիքն ու ամբողջ ժողովուրդի մը արմատախիլ ըլլալը իր պապենական հողերէն: Այս բոլորը օսմանեան կայսրութիւնը գործէր հայոց ժողովուրդին դէմ ու տակաւին ան ցայտօր կը փորձէ թաքցնել, իր՝ Թուրքիոյ եւ մեր՝ հայուն կեանքերուն ճշմարտութիւնը:

7 Ապրիլ 2017: Սիկոսիոյ խորհրդարան: Կիպրոսի պետական ներկայացուցիչ Վարդգէ Մախտեսեան կը խօսի Հայոց Յեղասպանութեան յիշատակին մասին: Մինչ կը լսէի Վարդգէսը, մտքիս մէջ կը փորձէի Սիկոսիոյ մէջ ունեցած այս իր ելոյթը կամովն այն պահին հետ, որ ապրեցայ Ուիթնպերկի մէջ:

# «ԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ» ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՀԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔ

Ըստ Մեքս Ուեպլըրի, մշակոյթը ընկերային գիտութիւն է, որ կ'առընչուի առաւելաբար հաւաքականութեան մը տուեալներուն հետ, եւ որուն միջոցաւ մարդիկ կ'ապրին իրենց կեանքերը նոյնինքն այդ տուեալներուն մէջ եւ մէջէն, եւ որ իրենց համար կը դառնայ իւրայատուկ:

Եւ այս իմաստով, ճոն Սթորի կը բացատրէ, մշակոյթը չի կրնար ունենալ մէկ եւ միայնակ մօտեցում այն բոլոր հիմնահարցերուն, որուն հետ ան կ'առընչուի, որովհետեւ իւրաքանչիւրը ունի իր հասկացողութիւնը եւ ըմբռնումը: Եւ ասկէ կարելի է մեկնարկել այն հասկացողութիւնը, թէ մշակոյթը կը վերլուծէ կեանքը կազմող շատ մը բնագաւառները, որոնք կ'առընչուին նոյն այդ հաւաքականութեան տեսադաշտներուն, մտահորիզոններուն եւ ըմբռնումներուն, եւ որ նաեւ կը ստեղծէ արժէք եւ սովորութիւն նոյնինքն այդ հաւաքականութեանը:

Եւ այս իմաստով, այս տեսադաշտերը եւ ըմբռնումները կը դառնան կեանքի ուղի տուեալ այդ հաւաքականութեան, եւ ինչ որ կը վերածուի ամբողջական մշակոյթի բնորոշումին, որուն մէջ կը պարփակուի գաղափար, կեցուածք, լեզու, վարուելակերպ, կազմակերպչական կառոյց բայց նաեւ արուեստի սովորութիւններ ինչպէս գրականութիւն, երգ, ճարտարապետութիւն եւ այլն: Այս խորքով, Մեքս Ուեպլըր կը պնդէ, հաւաքականութեան մը մաս կազմող մարդիկ կը դառնան մշակոյթի եւ մշակութային եակներ՝ զինուած մշակութային այդ արժէքներով, եւ որ պիտի օգնէ իւրաքանչիւրը կերտելու համար իր կեցուածքը աշխարհի նկատմամբ բայց նաեւ շինելու համար նպատակ-իմաստ իր կեանքի բոլոր տուեալներուն մէջէն:

Ահա թէ ինչն էր նաեւ, որ որպէս հայ ժողովուրդ, մենք կորսնցուցինք Յեղափոխութեան ժամանակ եւ ասկէ վերջ: Եթէ մենք թիւով մարդկային հոգի, աշխարհագրական հողատարածք եւ կառոյցներ, բայց նաեւ կեանքին մէջ մեզի իւրայատուկ այս ամբողջական մշա-

*«Արտասանուած» «Փոխադարձ Վստահուողութիւն, Միասնականութիւն եւ Պատասխանատուութիւն» խորագրով, Հայաստան-Ափիւղը Համահայկական Յոր Համաժողովին, Երեւան, Սեպտեմբեր 18-20, 2017:*

Մահտեսեան խօսեցաւ քաներորդ դարու առաջին ցեղասպանութեան մասին. ան անդրադարձաւ հայուն նահատակութեան, չարարանքին, հայոց ինչքերուն եւ կալուածներուն կողոպուտին, անոր ենթարկուած թալանին, կրած ահաւոր տանջանքին եւ տեղահան դառնալուն: Մահտեսեան իր երախտագիտական խօսքը յայտնեց կիպրական կառավարութեան, որ աշխարհի երկրորդ երկիրն էր հայուն այս կեանքի ճշմարտութիւնը ճանչցող, ինչպէս նաեւ Յեղասպանութեան միտումը իբրեւ քրեական օրէնք հաստատող պետութիւն: Մահտեսեանի երախտագիտական խօսքին անմիջապէս յաջորդեց եզրափակիչ խօսք մը, որ անոր սրտին ու մտքին արտայայտութիւնն էր: Ինչպէս ամէն հայ, Մահտեսեան եւս սորված էր կեանքին պատմութիւնը կամրջել սրտով ու մտքով:

Ճիշդ է, որ Յեղասպանութենէն մէկ դար անցած է, սակայն հայը կը շարունակէ պայքարը՝ հասնելու համար իր պատմութեան ճշմարտութեան, կառչած մնալով իր իրաւունքներուն եւ պահանջատիրութեան: Վարդգէսին խօսքը ունեցաւ իր համոզիչ գրաւականը, այն իմաստով, որ հայը պիտի շարունակէ պայքարիլ, առանց թաքցնելու կեանքի ճշմարտութիւնները: Ճշմարտութիւնն է, որ պիտի ճնշվի պատմութեան բոլոր հողվոյթները եւ ճշմարտութեան ուժով է, որ պիտի ժայթքեցնէ իր արդար պահանջը՝ իրաւունքը:

Ուրիշընայերկէն մինչեւ Նիկոսիա ապրեցայ ցաւը, բայց նաեւ ճշմարտութիւնը եւ այն իրականութիւնը, թէ կեանքի մէջ ճշմարտութիւնը կարելի չ'է թաքցնել: Մինչեւ օրս հայուն պատմութիւնը կը շարունակեն խեղաթիւրել, բայց անոր դիմաց կայ պատմութեան ճշմարտութիւնը եւ ճշմարտացիութիւնը:

Հայը ունի իր այսօրը եւ այսօրէն կը նայի դէպի վաղուան: Հայը չ'իյնաւ հատած իր իրաւունքը պահանջելէ, որովհետեւ հաւատացած է ու տակաւին կը հաւատայ, թէ կարելի է կեանքի ճշմարտութիւնը թաքցնել: Եւ իբրեւ այդպիսին, հայը կը յիշէ ու կը պահանջէ. ան պիտի շարունակէ յիշել եւ պահանջել, որովհետեւ հաւատացած է, թէ իր կեանքին ճշմարտութիւնը անպայման պիտի պարտադրուի:

Այս ճշմարտութեան եւ արդարացիութեան նկատմամբ հայուն հաւատքն է, որ կը ծառայէ պատմութիւնը նենգափոխելու եւ խեղաթիւրելու բոլոր փորձերուն դէմ պայքարելու իբրեւ իւրայատուկ ուժ կը հաւատքը երբեք կարելի չ'է հարուածել կամ պարտութեան մատնել:

Հայը պիտի շարունակէ հաւատալ, թէ այսօր կեանքի ճշմարտութեան ուժը պիտի հաստատուի, իբրեւ արդար ու ապրող իրաւունք:

Ահա այս հաւատքով է, որ հայը պիտի շարունակէ աշխատիլ կերտելու համար այս արդար ու ապրող իրաւունքը:

կոյթը: Առաջին այսպես կը բացատրէ պատահածը: «Երբ հայկական հողը դատարկուեցաւ իր ժողովուրդէն, անոր մշակութային լուր լծակները՝ դպրոց, վանք, արուեստի կոթող եւ պատմական վայրեր՝ կործանեցան Օսմանեան կառավարութեան կողմէ: Մէկ տարուան մը ընթացքին հայը կորսնցուց իր երեք հազարամեայ պատմութեան ժառանգը: Դայը կրցաւ պահել միայն այն, որ կու գար իր հաւաքական յուշերէն: Եւ յուշերուն մէջ կար իր լեզուն, բանաստեղծութիւնը, երգը եւ ողբերգական ճակատագիրը՝ իբրեւ հայուն եւ իրենց մնացած մշակոյթը»:

Եւ այս հաւաքական յուշերուն մէջէն է, որ հայը վերստեղծեց իր ամբողջական մշակոյթը եւ կառուցեցաւ անոր, որպէս ապրելու գրասկզբ եւ հիմք: Եւ այս ունի իր գիտական ենթահողը:

Բիչըրտ Յովհանեսեան կը հաւատայ, թէ Տեղասպանութիւնը հայուն համար դարձաւ ինքնութեան հաւատարմութեան պահպանումը: Եւ այս իմաստով Տեղասպանութիւնը նոյն հայուն տուաւ պատկանելիութեան գիտակցութիւն, մշակութային վերածնունդ եւ պատմութեան շարունակականութիւն: Փիթըր Պալաքեան կ'ըսէ, թէ Տեղասպանութիւնը կերտեց ու տակաւին՝ հայուն հաւաքական ինքնութիւնը: Ազգային, համազգային, կրօնական, գաղափարախօսական, քաղաքական, ընկերա-տնտեսական եւ սերնդական տարբերութիւններով հանդերձ, Տեղասպանութեան այս ինքնութիւնը դարձաւ ու կը կը դառնայ հասարակ յայտարարը՝ միացնելով բոլորը: Ահա, թէ ինչու հայուն հայկական մշակոյթը՝ իր այս ամբողջական հասկացողութեան մէջէն, հայուն կը շնորհէ ոչ թէ միայն ամբողջական կենսոյ բայց նաեւ շարունակականութեան հիմք:

Եւ սկսաւ հայուն շարունակականութեան այս կենսոյ սփիւռքեան իր նոր «հայրենիքներուն» մէջէն եւ պայքարը իր ամբողջական մշակոյթի պահպանումին համար: Տեղասպանութենէն անմիջապէս ետք կազմուած հայկական սփիւռքեան գաղութները հայախօս էին մնոնք ստեղծած էին կեթոններ, ուր փոքրիկ հայաստաններ շինելով իրենց իրենց կենսոյցերը կը տնօրինէին:

Նոյնը չէ պարագան այսօր:

Դայկական գաղութները շատ աւելի յարաբերութեան մէջ են իրենց ապրած տեղական մշակոյթներուն եւ մթնոլորտներուն հետ: Եւ ասոր հակադէմութիւններն են մայրենի լեզուի նահանջ, օտար դպրոց յաճախել, խառն ամուսնութիւններ ու տակաւին ազգային եւ մշակութային արժէքներու այլազանութիւն եւ փոփոխութիւն:

Եւ հոս պիտի բանալ մէկ այլ պակագիծ՝ ընդգծելով հակասութեան մէջ ապրող սփիւռքահայու կենսոյցը: Սփիւռքի մէջ ծնած հայը պիտի դասուի հայ, թէ՛ տեղական երկրի հպատակ: Լիբանանցի հայ-

կական ծագումով կա՛մ լիբանանահայ, կա՛մ հայ լիբանանեան հպատակութեամբ, կա՛մ լոկ լիբանանցի: Եւ հոս արկայ է երկու մշակոյթներու պատկանելիութեան հիմնախօսքը եւ անոնց միջեւ հաւասարակշռութիւն գտնելու հրամայականը:

Եթէ միջին արեւելեան գաղութներու պարագային տակաւին հայրենի լեզուի պահպանումը բաւական քաջալերական է, նոյնը չէ պարագան այլ գաղութներու մէջ: Արեւելի հայկական վարժարաններու հայրենի ուսուցիչներուն հետ հանդիպումին ընթացքին մտահոգութիւնը նոյնն էր: «Դազիւ դասարանէն դուրս կուզան աշակերտները եւ տակաւին դպրոցի բակին մէջ, արդէն յունարէն կը խօսին»: Պունտուս Արեւիկի հայկական մէկ վարժարանի մը տնօրէնին հետ հանդիպումին ընթացքին ան ըսաւ. «Մեքը է համոզուինք, թէ այլեւս հայրենի պիտի սորվեցնել որպէս երկրորդական լեզու»:

Բայց քաջալերական երեւոյթ է եւ միւնչեւ այսօր, թէ ինքնութեան, մշակոյթի եւ պահանջատիրութեան գործօնները տակաւին տիրական են: Եթէ մէկ կողմէ կայ լեզուի նահանջը, բայց ինքնութեան կանչը տակաւին արկայ է:

Եւ այս իրականութիւնը պիտի առնչել ներկայ համաշխարհայինացած աշխարհի կարգավիճակին եւ անոր դիմաց զօրաւոր կերպով հակադրուող տեղակայնացումը: Երբ մարդիկ ու հաւաքականութիւններ սկսած են տեսնել, թէ համաշխարհայինացած աշխարհին մէջ կը կորսնցնեն իրենց հարազատ պատմութիւնը, կ'ուզեն աւելի ու կառնչել իրենց ինքնութեան ու մշակութային արժէքներուն գիտակցութեան եւ այս որպէս ապահովութիւն իրենց անհատական ու հաւաքական կենսոյցերուն համար: Այս իրականութիւնը սկսած է զարգացնել քաղաքական ինքնութեան հասկացողութիւնը տարբեր հաւաքականութիւններու մէջ ապրող փոքրամասնութիւններու համար: Եւ այս գարթումները այսօր սկսած են շատ աւելիով դառնայ ապրող իրականութիւններ տարբեր հաւաքականութիւններու մէջ, ներառեալ նաեւ հայունը եւ ի մասնաւորի իր սփիւռքեան իրավիճակին մէջ:

Տեղասպանութեան հարիւր ամեակի ոգեկոչումները աշխարհով մէկտեղ ստեղծեցին մեծ արթնութիւն: Եւ այս նոյնքան նաեւ երիտասարդ սերունդի մասնակցութեամբ եւ աշխուժ ներդրումով: Ան, որ կը խօսի հայերէն կորուկ եւ կամ երբեք: Դարիւր ամեակի կարգախօսքը՝ «Յիշել եւ Պահանջել» դարձաւ ինքնութեան եւ համապարփակ մշակոյթի հասկացողութեան մէջէն վերանորոգումի խթան մը:

Բայց կայ նաեւ երկրորդ երեւոյթ մը:

Եւ այս հայրենիքի՝ Դայաստանի եւ Արցախի իրականութիւններն են: Սփիւռքեան մեր ներկայ իրավիճակներուն մէջէն Դայաստանը,

որպես հայրենի պետականության և հող, այսօր կը սրսկե համայնքի ինքնագիտակցություն և կը հաստատե, կը կապե ու կ'արթնցնե մատի հասկացողությունը հայուն մէջ և այդ արմատին տուն տան հողի և մշակոյթի գիտակցութիւնը:

Սանթիակոյի հայկական փոքր գաղութի կարգ մը անդամներ հետ հանդիպումս եղաւ քաջալերական: Խառն ամուսնութեան զաւակներ էին, որոնք Յայաստանէն վերադարձէն ետք տեսնու ապրած էին հայկական ինքնութեան ուժը, արժեքը և կարևորութիւնը: Եմիլիան, որ մօրը կողմէն հայ է, քաւ. «Եթէ մէկը ինչը եղաւ Նէ այսօր, թէ ուր կ'ապրիմ իրենց կ'ըստէ, թէ Չիլիի մէջ բայց հոս էմիլիան այսօր հայերէն սկսած է սորվիլ:

1970-ական տարիներուն երբ աշակերտներ էին Պիլլոյի և Վական վարժարանի մէջ, Յայաստանէն յաճախակիօրէն կ'ուրեւն ինքը հայրենի արուեստագետներու խումբեր: Մեզ, որպէս աշակերտներ, կը տանէին հայրենի արուեստագետներու ելոյթներուն: Եւ արուեստագետները՝ Ռայիսան, Ռուբիկը, Պելլան, Սուսանան, Մարիո Կոմիսիանեան ու տակաւին: 1973-ին Արարատ ֆուլբրայքի Երը՝ Յովհաննէսը, Էտեռը, Արկադիին, Ալիոչան, Մարգարիտը, հոս է ու տակաւին: Այս արուեստագետները և ֆուլբրայքիստները մեզ ամբար և մեր պատանեկան կեանքերուն և հոգիներուն մէջ ուրեւն հերոսներ: Եւ հերոս ոչ միայն արուեստի ու ֆուլբրայքի պատանե մէջ, հապա ազգային ինքնութեան գիտակցութեան ու անոր պահպան կամ զին կամչելու անհրաժեշտութիւնը:

Յայ երգը, գեղանկարչութիւնը, պարը, մարզանքը, կերպար կենցաղը, ճարտարապետութիւնը կարելի չէ անջատել ամբողջական հայկական մշակութային արժեքներու հասկացողութենէն: Եւ տի Նայի բոլորին, որպէս մէկ ամբողջութիւն և այդ ամբողջութեան հանդէպ կրտսէ գիտակցութիւն և այդ գիտակցութեան նպատակ հպարտութիւն: Եւ հպարտութիւնը Նաե կու գայ մշակութային երոսներով՝ Յայրենիքէն և Սփիւռքէն, որոնք կը սրսկեն այս ինքնութեան գիտակցութիւնը:

Եւ հոս պիտի բանալ մէկ այլ փակագիծ՝ հայկական սպանի մշակութային կրթողներու դերը և կարեւորութիւնը հայապահպանութի առաքելութեան մէջ: Ճիշդ չէ այդ բոլորը դնել պատմութեան առանցքին և չարժեւորել անոնց հիմնական դերը այսօր ստեղծած մշակութային ինքնութեան գիտակցութեան մէջ:

Եթէ ունիկնք պատմական կրթողներ Յայաստանի և Արարատի մէջ՝ մեր զոյգ պետութիւններու հսկողութեան տակ, և որ հիւսիսը չիւր հայուն կը ներշնչէ իր ինքնութեան և պատմութեան հոգովը: Եւ որ մէջէն ստեղծուած հայկական քաղաքակրթութեան ինքնութեան

հոգովութիւնը, բայց Նաե կան հայկական կրթողներ այլ երկիրներու մէջ, որ վտանգուած են անյայտացումի և այս մեծամասնամբ դիմաւոր քաղաքականութեամբ:

Եւ այս կրթողներու անյայտացումը ներկայ հայուն համար պիտի լինի, որպէս «կրկնակի սպանութիւն», ինչպէս հրեայ մտաւորութեան էր Ռայզըլը հայոց ցեղասպանութեան ժխտումը կը որոշէ: Եւ ստակիին հասկացողութեան մէջ կայ Նայի Ֆիզիքականը - ուր այս քաղաքային պիտի համեմատէ, որպէս մէկ քաղաքակրթութենէն ճշմարտ կրթող մը, որ կը բանդուի և երկրորդը յիշատակը - ուր այդ քաղաքակրթութեան ձգած աւանդը և անոր նկատմամբ գիտակցութիւնը, որ կը վերանայ: Եւ հոս է, որ միջազգային քաղաքական և մշակութային հիմնարկներու ուշադրութիւնը պէտք է կեդրոնացնել, թէ կարելի չէ համաշխարհային քաղաքակրթութեան մէջ ինքնին ունեցող հայկական յուշարձանները անյայտանալ: Այս քաղաքակրթութեան կրթուստ և հայկական իմաստով բայց Նոյնքան Նաե անհրաժեշտաբար քաղաքակրթութեանը:

Եւ ինչ մը մատնանշումներ և գործունակ բայլեր՝

1. Հայկական Սփիւռքը բարդ է, գունաւոր և այլազան ու տարբեր մէկը միւսէն տարբեր: Սփիւռքահայը՝ աշխարհով մէկտեղ, անհամուած է և Նոյնանման չէ: Յայ է, բայց իւրաքանչիւրը իր ապրումն էրկրին հայեցակէտէն՝ տարբեր է: Տարբեր է բայց Օտար չէ: Եւ սփիւռքահայը իր տարբերութիւններով՝ կենցաղային ու լայնութեան ու տակաւին իր ապրած երկրի պայմաններուն ու մթնոլորտին մէջէն, պիտի վեր առնել և ոչ որպէս Օտար: Եւ պիտի Նայի սփիւռքահայուն իր տարբերութիւններուն մէջէն, որոնք արժէ փորձել իր լոյսի բերել, որպէս տարբեր Նոյնութիւններ և ոչ որպէս Օտար: Եւ այս իմաստով Նաե պիտի վերանայի, թէ ինչպէս պիտի լինայ սփիւռքահայուն ամբողջական մշակոյթի պահպանումի հող ու կրթութեան իւրաքանչիւրը իր պարունակին մէջէն:

2. Սփիւռքեան մեր մշակութային արժեքներու պահպանութեան անհրաժեշտները այսօր մեծ համեմատութեամբ Նոյնանման են: Եւ ինչ պահպանում, քրիստոնէական հաւատը, ինքնութիւն, գրաստութիւն, արուեստ և պահանջատիրութիւն: Եւ մեր այս համեմատական հիմնահարցերը կարելի չէ, որ պարփակել գաղութներու շահարկաբարակ տուեալ սահմաններու մէջ միայն: Պետքը ունիկնք անհրաժեշտաբար ռազմավարութեան մը, ուր նիւթական, մարդկային և կառուցային բոլոր կարողականութիւնները լաւապէս կարելի է կիրառել: Եւ ինչ խօսք, որ ներկայի տեղեկատուութեան աշխարհը ու ընկերային համացանցերու լաւապէս օգտագործումը կրնայ



մեծապես օգնել մեր բոլոր ուժերու եւ կարողականութիւններու օգտագործումի եւ համադրումի աշխատանքներուն մէջ:

3. Աւելի գոյշ պիտի ըլլանք գաղութներու եւ անոնց ազգային եւ մշակութային կեանքի շարունակականութեան ի խնդիր: Ճիշդ չէ առաջ վճիռներ արձակել այս կամ այն գաղութի եւ կամ այս կամ այն ազգային, կրթական ու մշակութային հաստատութիւններու նկատմամբ: Պիտի չմոռնանք, թէ սփիւռքեան կեանքին մէջ հայապահպանումի մեծ պատերազմին մէջ ենք եւ մեր ազգային մշակութային արժէքներու ինքնագիտակցութիւնը առաջնահերթ խնդիրներ են եւ անոր համար ամեն տեսակի աշխատանք անհրաժեշտ է եւ այդ կ'ենթադրէ մեծ գոհողութիւն: Նոր տեսիլքը եւ աշխատանքային ծրագիրը պէտք է եւ անհրաժեշտ է գայն կերտել ծառայելու համար հայապահպանումի մեծ տեսլականին:

4. Հայաստանը եւ Արցախը այսօր շատ կարեւոր մղիչ ուժեր են սփիւռքեան մեր կեանքերուն համար: Հայաստան-Արցախ-Սփիւռք այսօր շատ աւելի լաւ գտնեալորում են իրարու հետ եւ շատ աւելի լաւ հասկցած են զիրար: Եւ այս իմաստով պէտք է նայիլ, թէ ինչպէս մեր այս երեք լծակները պէտք է լաւապէս համադրել, որպէսզի հայուն ամբողջական մշակութիւնը դառնայ վերանորոգող մղիչ ուժ, եւ ուր պիտի ապահովուի հայուն կեանքի շարունակականութեան գործընթացը:

#### Օգտագործուած Աղբիւրներ

Adalian, R. (1991, February). *The Armenian Genocide: Context and Legacy, Social Education*, vol. 55, no. 2, pp. 99-104.

Bakalian, P. (1997). *The Armenian People: From Ancient to Modern Times*, 2 vols., New York, St. Martin's Press.

Hovannesian, R. (Ed.) (1986). *The Armenian Genocide in Perspective*, New Brunswick, Transaction Publishers.

Storey, J. (1994). *Cultural Theory and Popular Culture: A Reader*, London: Harvester and Wheatsheaf.

Weber, M. (2011). "Objectivity in Social Science and Social Policy," in *Social Theory Roots and Branches*, ed. Peter Kivisto. New York: Oxford University Press.

Wiesel, E. (2003). quoted in Bakalian, P. (2003) *The Burning Tigris*, New York, Harper Collins Publishers.

## ՅԱԿՈՒԲԻՆ ԵՐԱԶՐ

«Սանդուխ մը երկրի վրայ դրուած էր, որուն զլուխը երկինք կը հասներ»:

(Մանդոց 28:12)

«Մենք մեզմէ մեր անչկրուն մէջ կը յատուցենք որդեգրուած, այսինքն մեր մարմնին ազապտութիւնը սպասելով»:

(Հովմայեցիս 8:23)

«Թող արուք որ երկուքն այ մէկ փոք ածին մինչեւ հունչքի արհնը»:

(Մաքրեա 13:30)

Յակոբ ուներ իր կեանքին վախերը: Եթէ ոչ անպայմանօրէն կը գիտակցեր Աստուծոյ՝ իմմա Եհովային վստահութեանը, բայց այդ օրը երբ Բերաբէէն դէպի խառնակ կ'երթար, ան ապրեցաւ ահաւոր փորձառութիւնը: «Ինչ ահաւոր է այս տեղը» (Մանդոց 28:17): Եւ Յակոբին համար այդ եղաւ անկիւնադարձային երբ զգաց, թէ տկար է եւ պէտք ունի առաջնորդութեան: Ու ան նաեւ ապրեցաւ Աստուծոյ ապահովութիւնը եւ անոր ներշնչումը: «Ուր որ երթաս թեզ պիտի պահեմ» (Մանդոց 28:15): Բայց այս բոլորը Յակոբին համար իրականութիւն դարձաւ երազին միջոցաւ: Հոն, ուր ան անդրադաձաւ, թէ ինք տկար է իր վախերուն մէջ ու պէտք ունի Աստուծոյ առաջնորդութեանը շնորհած ապահովութեանը:

Եւ երազը: «Սանդուխ մը որ երկրի վրայ դրուած էր, որուն զլուխը երկինք կը հասներ» (Մանդոց 28:12):

Եթէ սանդուխը կը միացներ երկիրը երկինքին, բայց նաեւ կար իրելշտակները, որոնք «անկէ կ'ելլէին եւ կ'իջնէին» (Մանդոց 28:12): Յակոբ եթէ անդրադաձաւ իր կեանքի վախին իրականութեանը, բայց նաեւ տեսաւ, թէ ան միակ չէ իր երկրային կեանքին մէջ: Ան անդրադարձաւ, թէ իր երկրային կեանքը կապուած է երկնայինին: Եւ թէ սանդուխը եւ այս պարագային Աստուած, շարժող իրականութիւն է երկրային-երկնային կեանքերուն մէջ եւ որ ուներ խոստումը: Եւ խոստումը այն Ապահովութիւնն էր որ Աստուած դրաւ Յակոբին առջեւ սանդուխի վրայ կայնած:

Աստուծոյ այս խոստումը՝ ապահովութիւնը, ունի մէկ կողմէ առաքելութիւն մը ազգերը օրհնելու բայց նաեւ պարզեւր «թեզ այս երկիրը պիտի դարձնես» (Մանդոց 28:14-15): Եթէ ազգերը օրհնելու առա-

քելութիւնը դժուար է եւ յոգնեցուցիչ, բայց եւ որուն ճամբան կը հասցնէ մինչեւ երկիր: Եւ երկիրը դարձնելը Աստուծոյ շնորհած նոր կեանքի հասկացողութիւնն է, որ կը շարունակուի յաւիտենականութեանը հասկացողութեանը եւ իրականութեանը մէջէն: Եւ այս խոստումը, որ Հին Կտակարանի մէջ երեւցաւ որպէս երազ իրականացաւ Նոր Կտակարանի մէջ:

Պօղոս Առաքեալ կը բացատրէ այս խոստումին իրականանալը: Հոն, ուր մարդը Զրիստոսի միջոցաւ որդեգրուեցաւ եւ Զրիստոս մարդուն համար դարձաւ «Աբբա Հայր»: (Հռովմայեցիս 8:15): Բայց մարդուն որդեգրումը Զրիստոսի միջոցաւ չ'անչատր զինք՝ մարդը «ժամանակի չարչարանքներէն» (Հռովմայեցիս 8:18): Կայ հսկայական աշխատանք ու կեանքի մէջ մարտնչելու գրաւականը: Որդեգրուած քրիստոնէան պիտի շարունակէ ազգերը օրհնելու իր առաքելութիւնը, որպէսզի «ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէ ազատուին» (Հռովմայեցիս 8:21): Եւ այս շարունակական գործընթացը մըն է Զրիստոսով որդեգրուած մարդուն համար մինչեւ իր՝ իմնա քրիստոնէայի «մարմնին ազատութեանը սպասելը» (Հռովմայեցիս 8:23): Եւ այս Զրիստոսի պարգեւ-շնորհքն է, որ խոստացուած է մարդուն համար եթէ ան ուզէ ունենալ:

Եւ Յիսուսին Որոմին Առակը մէկ շարունակական եւ ամբողջացող օղակն է: Եթէ կայ բարի սերմը բայց նաեւ թշնամին, որ «որով ցանեց» (Մատթէոս 13:24): Եւ չուշացաւ տիրոջ իրաւանզը. «Թող տուէ որ երկուքն ալ մէկ տեղ աճին» (Մատթէոս 13:30): Եւ մէկ տեղ աճիլը պիտի նշանակէ առաքելութիւնը նոյնիքն երկրային մտկեանքերուն ընթացքին: Հոն, ուր որդեգրուած քրիստոնէան պիտի շարունակէ ազգերը օրհնելու իր գործը, այսինքն որոմները շտկելու նուիրական առաքելութիւնը: Եւ մինչեւ ե՞րբ: «Մինչեւ հունձքի ատենը» (Մատթէոս 13:30): Եւ հունձքի ատենն է, որ պիտի իրականանայ խոստումին շնորհած պարգեւը բայց նաեւ պատիժը: «Առաջ որոմը քաղեցէ, խուրձ խուրձ կապեցէ այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէ» (Մատթէոս 13:30): «Իմ ամբարս», «որդեգրուած» քրիստոնէային «երկիրը»՝ իմնա «մարմնին ազատութիւնը», յաւիտենականութեանը տիրանալու պարգեւ-շնորհքն է: Եւ խուրձերը այրելը՝ «կորսուիլը», եւ այս անոնց համար, որոնք չի շտկուեցան:

Յակոբին երազը իւրաքանչիւրին երազն է: Աշխարհի ստեղծած վախերուն մէջէն կայ Զրիստոս՝ սանդուխը: Հոն, ուր Զրիստոս կը կապէ մարդը եւ կը որդեգրէ զինք որպէս Իր Թագաւորութեանը հարազատ քաղաքացին: Բայց այդ քաղաքացիութեանը մէջ կայ պարտաւորութիւնը՝ գործելու նոյն այս թագաւորութեանը համար, որպէսզի ազգերը օրհնուին եւ ազգերու օրհնութեանը մէջէն է, որ Զրիստոս

եան պիտի հասնի «Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը» (Հռովմայեցիս 8:22): Եւ փառաւոր ազատութիւնը երկիրն է, որ ետովան խոստացաւ Յակոբին:

Յակոբը կրնայ ըլլալ իւրաքանչիւր անհատ: Դուն եւ ես:

Անոր երազը իւրաքանչիւր անհատի երազն է:

Իսկ երազին շնորհած ապահովութիւնը իւրաքանչիւրին համար է, որ կ'ուզէ ունենալ:

Հապա՞ երկիրը: Ան կարելի չէ սահմանափակել աշխարհագրական տարածութեան մը տուեալներուն մէջէն: Երկիրը ընդհանրական է, որովհետեւ նոր կեանքի իրականութեանը մէջէն է:

Եւ այս նոր կեանքը, իւրաքանչիւր մարդ էակի համար է, որ կը ձգտի ունենալ զայն:

Յակոբին երազը՝ նոր կեանքին խոստումն է եւ անոր շնորհած ապահովութիւնը, որ երազէն դարձաւ իրական եւ այսօր ապրող իրականութիւնն է:

Եւ այս բոլոր մարդկութեան համար է: Ան, որ կ'ուզէ ունենալ զայն:

# ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆՂԵԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՍՏՈՒԲԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊՐԻՍՄԱԿԷՆ\*

Յովհաննես Յինղեան ծնած է 1866-ին Պոլիս: Լորահաստատ «Պերպլերեան» վարժարանի անդրանիկ եւ շնորհալի սաներէն էր, որ կանուխէն նետուեցաւ մանկավարժական ասպարէզ՝ պատրաստելով իր ժամանակի ամենէն յառաջադէմ գաղափարներով սերունդները:

5 Յոկտեմբեր 1909-ին, 1908-ի Օսմանեան սահմանադրութեամբ հաստատուած համեմատաբար ազատ գործունեութեան պայմաններէն օգտուելով, Գալուստ Մալաթեանի հետ գործակցաբար հիմը դրաւ Պոլսոյ հայոց «Լոր Դպրոց» վարժարանին: Եւ ինչպէս Յինղեան վկայած է. «Լոր Դպրոցը իմ կեանքը եղաւ եւ իմ կեանքս՝ Լոր Դպրոցը»:

Յինղեանի կեանքը այս իմաստով եղաւ Լոր. ան անընդհատ Լորն էր, որ ջամբեց հայ սերունդին: Պոլսոյ Գարեգին արք. պատրիարքը կը վկայէ հետեւեալը. «Յինղեանի հիմնած Լոր Դպրոցը իսկապէս լեցուած է կենսունակութեամբ, շնորհիւ շունչի մը, որ աշխուժացուցած է դաստիարակչական գործը բարոյական բնորոշ նկարագիրով



\*Մրտասանուած՝ Յովհաննես Յինղեանի ծննդեան 150 ամեակին նուիրուած գիտաժողովին՝ Խայատուր Արովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանին մէջ, Երեւան, Մայիս, 2016:

մը: Կոչեցէ՛ք զայն «Յինղեան շունչ» առանց տատամելու»:

Յովհաննես Յինղեանի «Լոր Դպրոց»-ին Լոր շունչին մէջ կային յստակ երեւոյթներ: Անոնք են.

- Անոր սահմանումով. «Գիտական միտքը որքան հազուադէպ քան մըն է մարդոց մէջ, ուր կեղծը անկեղծէն զանազանելու չափ յստակատես չկրցանք ըլլալ»:

- Ազգասիրութիւնը Յինղեանի բառերով. «Ճշմարիտ, արդիւնաւոր ազգասիրութիւնը անելի բանականութիւնն է քան զգացումը»:

- Կշռադատութիւնը, որ «շատ օգտակար է ասպարէզի ցնորութեան»:

- Ողջմտութիւնը եւ Յինղեանի մարտահրաւերը, թէ «ամէն ինչ առատ է բացի ողջմտութենէն»:

- Եւ վերջապէս ճշմարտութիւնը, որ «անհատական սեփականութիւն» չէ, այլ ամէնունն է:

Արարատ Զրիսեան կը նկարագրէ. «Յինղեան չէր կրնար գոհանալ դրութիւն մը կիրարկելով: Իր պրպտող եւ միշտ նորութիւն որոնող միտքը, ինչպէս նաեւ բարոյական սկզբունքներով յորդառատ հոգին չէին կրնար սահմանափակուիլ դպրոցի մը նեղ ու կաշկանդիչ տարածութեան մէջ, այլ անոնք դարձան շատ անելի համապարփակ»:

Եւ այս իմաստով, Լորը եւ անոր արգասիքը՝ գիտութիւն, ազգասիրութիւն, կշռադատութիւն, ողջմտութիւն եւ ճշմարտութիւն՝ Լորին համապարփակ աշխարհը դարձաւ ոչ թէ միայն Յինղեանի անհատական ու անձնական կեանքի շունչը, այլ նաեւ որոշմեց զայն աշակերտներուն եւ Լորահաս սերունդներուն մէջ անելի քան յիսուն երկար տարիներ: Լորը եղաւ ուղղութիւն ու ոգի. Յինղեանին ուղղութիւնը եւ ոգին, որոնք տարիներ շարունակ իւրաքանչիւր աշակերտի կեանքը փոխող եւ փոխուող Լոր շունչն էին: Եւ այս Լորին գիտակցութեան ու հասկացողութեան ընդմէջէն է, որ Յինղեանը եւ անոր առաքելութիւնը քրիստոնեական պրիսմակէն վեր կ'առնուի:

Քրիստոնեական աստուածաբանութեան կորիզը, մարդկային անհատականութեան եւ անոր կեանքին մէջ փոփոխութեան հասկացողութիւնն է: Քրիստոս Ինք սկսաւ փոխել այն իւրաքանչիւրը, որուն հանդիպեցաւ իր երկրային կեանքին մէջ, սկսելով իր աշակերտներէն: Եւ անոնք իրենց կարգին փոխեցին մարդիկ եւ հաւաքականութիւններ: Եթէ այս փոփոխութիւնը չ'ըլլար քրիստոնեական հասկացողութեան եւ անոր պրիսմակէն, սխալ բան մը պատահած պիտի ըլլար: Փոփոխութիւնը եւ անոր հետ յառաջ եկած Լորն ու Լորութիւնը՝ շարունակուող եւ տեսապէս աճող ու զարգացող գործընթաց մըն է, անհատական եւ հաւաքական մեր կեանքերուն մէջ:

Պրոկման, Միացեալ Նահանգներու ներկայ ժամանակներու

ականաւոր աստուածաբաններէն, նորը կը նկարագրէ Զրիստոսի խաչին հասկացողութեամբ: Ան կը ներկայացնէ, թէ Զրիստոս քննադատեց հինը երբ այս աշխարհին մէջ էր եւ իր մահուամբ խաչին վրայ բանդեց այն բոլորը, զորս քննադատեց: Իր յարութեամբ շինեց նորը՝ նոր հաւաքականութիւնը, որպէսզի մարդկութիւնը ունենայ նոր սկիզբ:

Այդ նորին պիտակը քրիստոնեական աստուածաբանութեան մէջ ստեղծողին պատկերին պէս է: Ստեղծողը՝ Աստուած, ստեղծեց աշխարհը, ինչպէս նաեւ մարդը իր պատկերին պէս: Եւ իր պատկերը, ինչպէս Աստուած նկարագրեց Շննդոց գրքին մէջ. «Բայց երբ մարդը սխալեցաւ եւ հեռացաւ Աստուծմէ: Բայց Աստուած երբեք յուսահատեցաւ մարդը հետապնդելէ, որովհետեւ Աստուած միշտ սիրեց մարդը եւ անոր կեանքը:

Զրիստոսի աշխարհ գալը Աստուած-մարդ յարաբերութիւնը հաշտեցնել է եւ մարդուն նոր սկիզբ մը շնորհել: Այս նորին մէջ մարդը կը մտնենայ Աստուծոյ պատկերին եւ իբրեւ այդպիսին, մարդը նոյնպէս կը դռնայ ստեղծագործ՝ բարին ստեղծելով իր ապրած հաւաքականութեան մէջ: Եւ Աստուած-մարդ հաշտեցումը մարդուն համար է, որպէսզի ան այս նորութիւնը ներմուծէ հաւաքականութեան մէջ իբրեւ նոր կեանք: Զրիստոնեական աստուածաբանութեան համար եկեղեցի հասկացողութիւնը կու գայ նոյնիմեջ այս նորի հաւաքականութեան իրականութենէն, որ յանձնառու է ստեղծելու շարունակական այս նորը:

Յովհաննէս Գինդեանի «Նոր Դարոց» հասկացողութիւնը պետք է տեսնել քրիստոնեական այս նորի հիմքին վրայ: Գինդեան ինք ներմուծեց նորը իր բովանդակ կեանքին մէջ եւ զայն դրաւ հաւաքականութեան մէջ իբրեւ դարոց, շուկ, որ փոխող եւ փոխուող է, նպատակ ունենալով հաւաքականութիւնը ներմուծել նորի նկարագիրով: Այս նորին պարունակով, Գինդեան հիմը դրաւ փոխուող եւ փոխող հաւաքականութեան մը, նոր սկիզբ մը տալով հայ նոր սերունդներուն: Գինդեանի այս տեսութիւնը կամ փիլիսոփայութիւնը կ'արժէ յանդէս խորքով մեկնաբանել եւ կամրջել քրիստոնեական աստուածաբանութեան հետ:

Գինդեան կ'ըսէ. «Կատարեալ ուրախութիւնը կ'ենթադրէ ամբողջական դաստիարակութիւն»:

Մէքուրի կը հաստատայ, թէ քրիստոնեական նոր կեանքի հասկացողութիւնը համապարփակ է եւ կ'ընդգրկէ կեանքը իր ամբողջութեան մէջ, նետարելով բոլոր երեւոյթները՝ լաւ եւ վատը, ուրախը եւ տխուրը: Այս նորին մէջ, մարդուն կեանքը կը շարունակուի եւ չի կաշկանդուի եւ կամ չեզոքանար նոյնիմեջ այս վախին ու ցաւին

ներկայութեամբ, հասնելով մինչեւ մահուան իրականութիւնը: Յետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս Գինդեան զարկ կու տայ եւ գործնական թելադրանքներով ջատագովը կը դառնայ համապարփակ այս դաստիարակութեան, նոյնիսկ խթանելով մանկավարժը, որ ճամբորդէ: «Եթէ ճամբորդութիւնը օգտակար է առհասարակ ամեն մարդու համար, պիտի ըսեմ, որ անիկա պէտք մըն է այն հայ դաստիարակին համար, որ մանկավարժական առումով գրեթէ ոչինչ կը տեսնէ այն միջավայրին մէջ, ուր կ'անցնէ իր կեանքը»: Գինդեանի համար ճամբորդելը միայն տեսարժան վայրերը տեսնել չէ, այլ հանդիպիլ տարբեր երեւոյթներու, մարդոց ու անոնց մշակոյթներուն:

Գինդեանի մանկավարժական այս համապարփակ դաստիարակութեան մէջ կան արժէքներ:

Գինդեան հաւատաց, որ կեանքի մէջ պէտք է կառչիլ դրական ներգործութեան: Կեանքը շինելու եւ ոչ թէ բանդելու անհրաժեշտութեան: Այս շինելու միտք բախին հիմնեց քրիստոնեական առաքելութեան վրայ, նոյնիսկ երբ այդ մէկը կատարելը դժուար էր եւ ըսաւ. «Խաչը սեր է, խաչը զոհ է, իսպիկ կոնքովը կապտացեց»: Անվին, Գինդեան տրովցեցուց նաեւ հետեւեալը. «Չարին դէմ չար մի գործեր, յաղթէ չարին՝ բարիով»: Այս գիտակցութեամբ ան ապրած ու ապրուելիք կեանքին արժէքը դրաւ ոչ թէ թիւին, իմա կեանքի տեսողութեան, այլ գործին: «Երկար կեանքը այն չէ, որ մեծ թիւ կը հաշուէ, այլ այն, որ ցոյց կու տայ շարք մը ազնիւ գործեր»:

Տելաբլէյն կը հաստատէ, որ քրիստոնեական կեանքին յառաջացուցած նորը կը հաստատէ յոյսը, որ կ'օգնէ մարդուն ու հաւաքականութեան՝ չսահմանափակուելու եւ չկաշկանդուելու վախի մթնոլորտին մէջ, եւ ամբողջական ջանտնուելու: Նորի գիտակցութեան ստեղծած յոյսը ուժ կու տայ՝ գործելու եւ ներկայի ու ապագայի մէջ նոր բան մը ընելու:

Գինդեան ջատագովն է ազատական մտածողութեան, պայմանաւ որ անիկա «անկարգապահութեան եւ անիշխանութեան» չենթարկուի: Ան կ'ըսէ. «Ազատութիւնը ամենէն մեծ բարիքն է մարդուն համար երբ ան գիտէ զայն գործածել: Ազատութիւնը օրէնքին ինքնակամ հպատակութիւնն է, որ զմեզ կը պահպանէ մեզմէ իւրաքանչիւրին ներաշխարհին մէջ մրափող բարբարոսութեան դէմ»:

Վեր. Դոկտ. Եղիա Զատունի կ'ըսէ. «Աստուածաշունչը եւ անոր դաստիարակութիւնը կը զարգացնեն ազատական սկզբունքները, կը խթանեն խղճի եւ մտքի ազատութիւնը, կը սերմանեն քննական մտածողութիւնը եւ կը բաշխէրեն տարբեր կեցուածքներու որդեգրումը մարդու կեանքին մէջ հաւասարակշռութիւն հաստատելով»:

Պօղոս Առաքեալ այս իմաստով կը հաստատէ, թէ նորին մէջ քրիստոնէական կեանքը երկչոտութեան կենցաղ չ'է, այլ զօրութեան, սիրոյ եւ զգաստութեան: Այս իմաստով, Հինդլեան կրցաւ տեսնել, թէ ազատութիւնը սիրելու համար պէտք է ունենալ զօրութիւն, բարբարոսութեան դէմ դնելու համար պէտք ունիք սիրոյ, իսկ օրէնքի հպատակութեան համար կարիքը ունիք զգաստութեան:

Հինդլեան կրցաւ նաեւ տեսնել, թէ առողջ միտքը առողջ մարմնին մէջ է, ինչ որ իր կարգին համապարփակ դաստիարակութեան հաւատամքին մէկ մասը կը նկատուի: Առողջ միտքը զուգորդուած է առողջ մարմնին մէջ: Հինդլեանի համար երիտասարդը չի կրնար առողջ միտք ունենալ եթէ չունի առողջ մարմին: Եւ եթէ Հինդլեան եղաւ միայն ուժը ՅՄՄՄ-ի հսկայ մարմնակրթութեան կազմակերպութեան, ապա որովհետեւ կրցաւ տեսնել, որ «Բարձրացիր եւ Բարձրացուր» կարգախօսով կարելի է ապահովել հայուն առողջ ներաշխարհը:

Աւետարան ըստ Մատթեոսի պատգամը այս իմաստով ցայտուն է. «Ուստի եթէ աջ արջ կը գայթակղեցնէ քեզ, հանձն զայն ու նետ, որովհետեւ աւելի օգտակար է քեզի, որ անդամներէն մէկը կորսուի բայց ամբողջ մարմինը չնետուի գեղեն» (18:9): Այս համարը պէտք չի հասկնալ իր բառացի իմաստով, այլ պէտք է մեկնաբանել դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, որպէսզի մարդուն միտքը չէ մարմինը զարգացնեն ու բարիի գիտակցութեան մէջ մնան ու ապրին: Այս իմաստով ՅՄՄՄ-ի կարգախօսը «Բարձրացիր, Բարձրացուր»-ը իր կարգին քրիստոնէական հիմքի վրայ կը գտնուի: Աստուածաշունչի հետեւեալ հատուածը. «Սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս»: Եթէ մարդ իր անձը չսիրէ, չի կրնար բարեկամը եւ ուրիշը սիրել: Պէտք է անձը բարձրանայ, որպէսզի կարենայ բարձրացնել դիմացինը: Բայց հոս պէտք է նաեւ զգուշանալ եւ միայն անձը բարձրացնելու մասին չմտածել, առանց նկատի ունենալու դիմացինը:

Հինդլեան կը կառչի դատողութեան եւ խղճին: Ան կ'ըսէ. «Միայն յիշողութիւնը լեցնել կ'աշխատիքը, դատողութիւնը եւ խիղճը պարտալ կը թողուք»: Յոս ակնյայտ է Հինդլեանի գիտական մարդու մօտեցումը. կշռադատութիւնը, որջմտութիւնն ու ճշմարտութեան կառչիլը: «Խիղճը պարտալ կը թողուք»: Հինդլեանի այս մօտեցումին մէջ անկալ է քրիստոնէական միտք բանին, որուն համաձայն. «Այն ինչ որ Աստուծոյ է՝ տալ Աստուծոյ, իսկ այն ինչ որ Կայսրին է՝ Կայսրին»: Հինդլեանի յստակատեսութիւնը կը դրսեորուի այնպէս, թէ մարդու հոգին պէտք է լեցուի դատողութեամբ, ուր պարտականութիւնները պէտք է կատարուին այս խղճին գիտակցութեամբ եւ անաչառութեամբ՝ Աստուծոյ եւ կայսրին հանդէպ:

Հինդլեան կրցաւ տեսնել, թէ իւրաքանչիւր աշակերտ ունի իր կա-

րողութիւնը եւ ճիշդ չէ «պահանջել աշակերտն քան մը, որ իր կարողութենէ վեր է»: Ան միաժամանակ պայքարեցաւ երկչոտութեան դէմ եւ ճիշդ ինչպէսզի գիտակից դարձնելու աշակերտները եւ անոնց կարողութեան սահմաններուն մէջ անոնցմէ պահանջելու որոշ պարտականութիւններու ստանձնումը:

Աստուածաշունչի Ա. Կորնթացիներուն 12-րդ զուլիցը ուսանելի է. «Շնորհները գանազան են» բայց «Նոյն մարմինը»: «Չանազան հոգեւոր պաշտօններ կան, բայց նոյն Տէրն է զայն բաշխողը» (4): Ու կը շարունակէ հատուածը գանազանութիւնները նմանցնելով մարդու մարմնի: «Ինչպէս մարմինը իր գանազան անդամներով մէկ ամբողջութիւն է, այսինքն բոլոր անդամները միասին մէկ մարմին կը կազմեն» (5-6): Հինդլեան կրցաւ տեսնել, թէ իւրաքանչիւր աշակերտ ունի իրեն յատուկ կարողութիւն: Ան կրցաւ իւրաքանչիւրը խթանել, իմա պայքարիլ երկչոտութեան դէմ, որպէսզի ամէն մէկը իր կարելին ընէ իր բաժինը բերելու եւ կազմել մէկ մարմին հասկացողութիւնը հայկական իրականութեան մէջ:

«Բազմաթիւ են անդամները բայց մարմինը մէկ: Այնք չի կրնար ձեռքին ըսել քեզի պէտք չունիմ: Մարմնին ամենեւն տկար կարծուած անդամները ամենեւն կարեւորներն են: Իւրաքանչիւր մաս ունի տարբեր պարտականութիւններ» (21-22): Ուրեմն, եթէ Հինդլեան կը հաւատայ, որ իւրաքանչիւր աշակերտ ունի իր կարողութիւնը եւ պէտք չէ անկկալել առկէ արեւելին, ապա ան կը պահանջէ խթանել իւրաքանչիւրին կատարելու իր բաժինը: Հետեւաբար Հինդլեանի համար, իւրաքանչիւր հայ աշակերտ ինքնին արժէք մըն է, ու պէտք է զայն խթանել եւ քաջալերել:

Հինդլեանի նորը եւ անոր «Նոր Դպրոց»ը մնացին միշտ նոր, որովհետեւ ան հաւատաց, թէ «ուսուցման մեթոտները կը փոխուին ժամանակին, տեղին ու միջավայրին համեմատ»:

Յոս կ'արժէ բանալ փակագիծ մը: Քրիստոնէական աստուածաբանութիւնը կարելի չէ ներառել առանց միջավայրի ու անոր բովանդակութեան: Աստուածաբանութիւնը կը հասկնայ միջավայրը եւ անոր բովանդակութիւնը եւ վեր կ'առնէ այն բոլոր մարտահրաւերները, զորս կը չարչրկեն հաւաքականութիւնը իր ապրելակերպին մէջ: Այս իմաստով, ճնշւած կը հաստատուէ, որ աստուածաբանութիւնը կը ներառէ ամբողջական հասկացողութիւն մը հաւաքականութեան ապրած կեանքին եւ միջավայրին ու տակաւին հիմնահարցերուն մասին: Ան կը հաստատուէ, թէ Քրիստոսի պատգամը նոյնն է տարբեր լեզուներու համար, սակայն տարբեր լեզուներ տարբեր ձեւերով կ'ընկալեն զայն:

Յոս հարկ է հաստատել, թէ քրիստոնէական աստուածաբանու-

թեան նորը՝ փոխող եւ փոխուող կեանքը, կը դառնայ գործընթաց՝ Մուկամսի եւ Կայ այս հոլովոյթը կը կոչեն «վերաշինելու աստուածաբանութիւն» եւ կ'ըսեն. «Քրիստոնէական աստուածաբանութիւնը հիմնուած է մարդը փոխելու եւ անոր կեանքին փոփոխութեան հոլովոյթին վրայ: Սակայն փոփոխութիւն կատարելով պէտք չէ նոյն այս անհատը եւ հաւաքականութիւնը արմատախիլ ընել իր պատկանակ մշակութային, լեզուական եւ կրօնական ժառանգէն, ընդհակառակն պէտք է զօրացնել զայն: Մարդիկ եւ հաւաքականութիւններ պէտք է ապրին իրենց իրապատու կենցաղը այնպէս ինչպէս իրենք կը հասկանան ու կ'ապրին»:

Յովհաննէս Գինդեան եթէ հաւատաց, կառչեցաւ եւ ապրեցաւ նորին բայց երբեք զայն չհանցէ իր ազգային-մշակութային պարունակէն: Ան հաւատաց հայը վերաշինելու գործընթացին: Ան ամէն ձեռով նորը գործարդեք մեկնելով նոր ժամանակներու տուեալներէն, բայց միշտ պահելով հիմքը՝ հայկականը: ԳԷ՝ որ Գինդեանի համար «ազգասիրութիւնը բանականութիւն է»: Եթէ բանականութիւնը նոր կերպար կ'առնէ եւ պիտի շարունակէ առնել ժամանակի հոլովոյթներուն հետ, հիմքը՝ ազգասիրութիւն, կը մնայ անշեղ:

Ահա այսպէս կը դրսեւորուի Գինդեանի մեծութիւնը: Եւ իր մեծութեան վկայութիւնները: Քրիստեանի համար Գինդեան պրպտող եւ միշտ նորութիւն որոնող միտքն էր: Պրպտող եւ նորութիւն որոնող միտքը, որ կրցաւ ժամանակին եւ միջավայրին առնել նոր կեանքի մարտահրաւերները: Եթէ Գինդեան մնաց նոր, ապա որովհետեւ ան ինչպէս Նիկողոսեան կ'ըսէ. «Դաստիարակութիւնը ըմբռնեց նոր ոգին»:

Յովհաննէս Գինդեանի կեանքին հիմքը կազմեցին՝

Գործը՝ մեթոտը ճանչցնելը

Գործաւորը՝ հրահանգողը

Գործիքը՝ հայթայթողը:

Բայց արդեօք հնարաւոր է այս երրորդութիւնը կամրջել քրիստոնէական աստուածաբանութեան եւ երրորդութեան հետ:

Աստուած՝ գործը, մեթոտը, նոր կեանքը, ճանչցնողը

Որդին՝ գործակատարը, նոր կեանքը, հրահանգողը

Սուրբ Գոգին՝ նոր կեանք հայթայթողը:

Յովհաննէս Գինդեան իր աշակերտներէն մեկուն զրկած նամակին մէջ ըսած է հետեւեալը. «Շրի ինչ որ կարողացայ ընել»: Գինդեան իր բովանդակ կեանքին մէջ մեծ արժէք մը իրագործեց ստեղծելով նորը: Եւ այս նորին մէջ վերաշինեց հայուն կեանքը: Այն կեանքը, որ կը փոխէ եւ կը փոխուի եւ որ յաջորդականութիւն կ'ապահովէ: Ան Պօղոս Առաքեալի նման արժանի է որ ըսուի. «Բարի պատերազմը

պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի»:

Գայ ժողովուրդը այսօր ամէն ժամանակեւ աւելի պէտք ունի այս նորին՝ ստեղծելու համար բարի պատերազմ մղողներ: Եւ այս օրերուն, երբ պատերազմները շատ են, մեզի պէտք է նորը եւ բարին: Ան, որ կը փոխուի ու կը փոխէ, միշտ նորին գիտակցութեամբ: Գայուն մարտահրաւերները կը մնան նորին ու անոր բարիին համար յաղթանակներ ապահովողները:

Գինդեան եղաւ հայ ժողովուրդին այս «նոր»ին համար յաղթանակները կերտող մէկ մեծ մանկավարժ-ազգայինը, որուն աւանդը պէտք է շարունակուի:

Յարգանք իր ապրած կեանքին եւ անոր վաստակին:

### Օգտագործուած աղբիւրներ

«Գամազգային Մեծարանք Ողբացեալ Դաստիարակ-Մանկավարժ Յովհաննէս Գինդեան», 1951, Պոլիս:

Brueggemann, W. (2001). *The Prophetic Imagination*. Minneapolis: Fortress Press.

Delaplane, J. (Jan-Mar 2012). *A Future full of Hope*. *The Living Pulpit*.

Jensen, A. S. (2007). *Theological Hermeneutics*. London: SCM Press.

Macquarrie, J. (Jan-Mar 2012). *Hope as Idea and Reality*. *The Living Pulpit*.

Mugambi, J. N. K. and M. R. Guy. (2009). *Contextual Theology across Cultures*. Nairobi: Action Publishers.

Գինդեան Յովհաննէս, «Անկեղծ էջեր», Ա. հատոր, Կ. Պոլիս:

Գինդեան Յովհաննէս, «Անկեղծ էջեր», Բ. հատոր, 1913, Կ. Պոլիս:

Գինդեան Յովհաննէս, «Անկեղծ էջեր», Գ. հատոր, 1921, Կ. Պոլիս:

Գինդեան Յովհաննէս, «Անկեղծ էջեր», Դ. հատոր, 1922, Կ. Պոլիս:

Գինդեան Յովհաննէս, «Դաստիարակին անբաժան ընկերը», 1925, Կ. Պոլիս:

Գինդեան Յովհաննէս, «Նորահաս Մերունդներու Մարդակերտման ու 8-8-Յայակերտման գաղափարակիրը», *փետրուար 17, 2012*, «Ազատ Օր», Յունաստան:

Նոր Դարոց, «50 տարուան կեանք մը», 1959, Պէտլոլու, Պոլիս:

# ՈՍԿԱՆ ՎԱՐՂԱՊԵՏԻՆ ՏԵՍԻԼՐԸ

*«Խօսքը կը բռնի, բայց գիրը կը մնայ»*

Լատին փիլիսոփայությունը կը հաւատար, թէ գիրը իր տպագիր ձեւին մէջ է որ կը մնայ: Եւ մնալը տակ գոյութեան համար չէ: Այլ ֆիզիքականէն անդին պատգամը պահելու գիտակցութեանը մէջ: Պատգամը, որ կը կերտէ ֆիզիքական գոյութիւնը, բայց նաեւ իմացական ու հոգեմտաւոր եւ անհատին ու հաւաքականութեանը մշակութային արժեքները փոխանցելու կարեւոր հարամայականով:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետը Անթիպի 3այ գիրքի երեսուն եւ եօթներորդ ցուցահանդէսը 30 ֆոնտեմբեր 2016-ին Նուիրտեց հայերէն Աստուածաշունչի տպագրութեան երեք հարիւր եւ յիսուն ամեակին: Որովհետեւ, եւ ինչպէս վեհափառ հայրապետը կը վկայէ, Աստուածաշունչը Աստուծոյ յայտնութիւնն է՝ իրայատուկ, սուրբ եւ ամբողջական արժեքը քրիստոնէական հաւատքին: Եւ այս իրականութենէն մեկնելով վեհափառ հայրապետը առաջնահերթ կը նկատէ, թէ Աստուածաշունչը պէտք է ներմուծել հաւաքականութեան կեանքին մէջ, նպատակ ունենալով Նոյն այս կեանքերուն տալ յառաջիտադաքք, փոխելով զանոնք արժեքի հակադրութեանը մէջ եւ անոր համար:

Եւ այս ներմուծելը իրականացաւ ու տակաւին խօսքէն անցաւ Աստուածաշունչի տպագրութեամբ, ուր գիրը յաւերժացաւ եւ որ Ոսկան վարդապետի տեսիլքին արքասիքն էր:

Գաղթականի զաւակ՝ ծնողը Շահ Աբասի ժամանակ երեսնէն տեղահանուած էր ու Սպահան, Նոր Զուղայ հաստատուած: Ոսկան ծնած էր 1614 թուականին հայրենի հողէն հեռու: Ան կրցաւ ունենալ

երազը եւ զայն իրականացնելու համար տեսիլքը, թէ իր հողէն հեռու ապրող հայը պէտք է շարունակէ ապրիլ: Եւ այդ ապրելուն մէջ պէտք էր պատգամը ու անհրաժեշտութիւնը Նոյն այդ պատգամը ներմուծելու հայուն հաւաքական կեանքերուն մէջ:

Եթէ Ոսկան վարդապետի կեանքը ստացաւ տարբեր հեւք, որովհետեւ ան կրցաւ տեսնել, թէ հայ ժողովուրդին ապրելու հրամայականին համար պէտք էր հայերէն Աստուածաշունչին տպագրութիւնը: Ան առանց յուսահատելու, անդադար թափառեցաւ, բայց նաեւ տառապեցաւ եւ իր երազին տուաւ տեսիլք: Նոյն այդ տեսիլքը իրականացուց 1666-էն մինչեւ 1668 տարիներուն երբ հայը ունեցաւ տպագիր առաջին հայերէն Աստուածաշունչը տպուած Ամսթերտամի մէջ իր իսկ ձեռքով:

Եւ վեհափառ հայրապետը. «Աստուածաշունչը տպագրելով Ոսկան վարդապետ տակ տպագրական մարզին մէջ կարեւոր իրագործում մը չէր կատարեր: Անոր հիմնական նպատակը մեր ժողովուրդը իրաւիրել էր Աստուածաշունչը կարդալէն ու ճանչնալէն անդին՝ զայն ապրելու: Դու կը կայանայ խորունկ իմաստը Աստուածաշունչի տպագրութեան»:

Եւ իրաւացի է պատմաբան Լեոյի զգանալու մի վկայութիւնը. «Ոսկան վարդապետ օտար հողի վրայ գործելով հանդերձ եւ նկատի ունենալով այդ օրերու տպագրութեան գործի հանգամանքները, կարելի չէ չզարմանալ այդ տպագրութեան վրայ»:

Եթէ Մովսէս մարգարէն Սինայի բարձրունքին վրայ իր ժողովուրդին սեփականութիւնը դարձուց երկնային օրէնքին տախտակները եւ որ զարկ տուաւ երբայական գրականութեան, Մեսրոպ Մաշտոցը Աստուածաշունչը հայացուց: Իսկ Ոսկան վարդապետ զայն ժողովուրդին սեփականութիւնը դարձուց եւ այդպիսով հայ գիրի նկատմամբ նաեւ տէր ներմուծեց հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Բայց կայ տակաւին Ոսկան վարդապետի երազին եւ տեսիլքին խորքային տուեալները: Թէ ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար էր Ոսկան վարդապետի մղումը Աստուածաշունչը ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու հեւքը:



Արամ վեհափառը ունի պատասխանը. «Յոգեւոր արթնութիւն»:  
 Եւ հոգեւոր արթնութիւնը պէտք չէ սահմանափակել այսպէս ըսած  
 իր կրօնա-քրիստոնէական տեսադաշտին միայն, որովհետեւ Աստ-  
 ոածաշունչի դաստիարակութիւնը համապարփակ է: Եւ այս համա-  
 պարփակ դաստիարակութեան միջոցաւ է, որ անհատը կը շինէ եւ կը  
 վերաշինէ իր հաւատամքները եւ անոնց մեկնաբանութիւնները, ուր  
 հաւաքականութեան կեանքերուն համար կուտայ հասարակական  
 նշանակութիւններ եւ զանոնք կիրարկելու համար համակերպման  
 միջոցառումներ:

Եւ այս համակերպման միջոցառումներով եւ հասարակական  
 նշանակութիւններով է, որ մարդիկ եւ հաւաքականութիւններ կը շար-  
 րունակեն ապրիլ՝ իրենց կեանքերուն տալով նոր եւ նորոգուող լիցք:  
 Եւ այս նոր լիցքով է, որ հաւաքականութիւններ կ'արձանագրեն յա-  
 ռաշխադաքք:

Եւ դարձեալ Լեոն է: «Ոսկանը զոհ եր: Չոհ իր զարմանալի եռակ-  
 դիկ»: Միջոց պէտք չէ մտահան ընել, թէ այս զոհի ինքնագիտակցու-  
 թիւնը միտեց զինք իր երազը եւ տեսիլքը իրականացնելու: Եւ իրա-  
 կանացնելու մէջ կար հաւատքը Ոսկան վարդապետին եւ երեք հա-  
 րիւր եւ յիսուն տարիներ ամաչ, թէ հայ ժողովուրդը պէտք է շարու-  
 նակէ ապրիլ միշտ նոր ու նորոգուող լիցքով մը՝ հասնելու համար  
 մինչեւ այսօրը ու տակաւին աւելին: Եւ նոր լիցքը կարելոր է, որպէս-  
 զի հայուն կեանքը չի լճանայ ժամանակի սլացքին հետ, այլ յառաջ-  
 խաղաքք արձանագրէ:

Ոսկան վարդապետին տեսիլքը: Յայուն համար է: Որպէսզի հայը  
 իր կեանքը ապրի եւ շարունակէ ապրիլ նոր լիցքի այս տեսլականու-  
 վը եւ անոր համար:

#### Օգտագործուած աղբիւրներ

Aram I. (2011). *Taking the Church to the People. Beirut: Armenian Catholicosate of Cilicia.*

Crockett, J. (2005). *Engaging Scripture in Everyday Situations: An Interactive Perspective that Examines Psychological and Social Processes of Individuals as they Engage Scripture Texts.* London: Equinox Publishing.

Kybird, P. (2006). *Using the Bible in Adult Christian Education.* JATE 3, no. 1.

Լեոն. (1904). «Հայկական Տպագրութիւն», Թիֆլիս.

Ներսէս Արք. Պոզապալեան. (1966). «Ոսկան Վարդապետ երե-  
 վանցի». Էջմիածին Ամսագիր, Էջմիածին.

## ՉԻԼԻԷՆ ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՕՏ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՃԻ ՀԱՄԱՐ ՏՈՒՆ Է»

Նելսոն Փալոյեանը ծնած է Սանթիակո, Չիլի: Ան երկրաշափ է եւ  
 մասնագիտացած համակարգիչներու մէջ: Ան Տեղասպանութենէ  
 ճողորած երրորդ սերունդի հայ է: Կը խօսի եւ կը կարդայ հայերէն  
 եւ ստացած է հայեցի դաստիարակութիւն իր հայ ծնողքէ: Նելսոն  
 իր մասնագիտութեան կողքին նաեւ հետեւած է երաժշտութեան եւ  
 այսօր իր կարելոր բաժինը կը բերէ Սանթիակոյի հայկական մշակու-  
 թային կեանքին մէջ: Կազմած է երգչախումբ մը հայկական գաղու-  
 թին անդամներէն, բոլորն ալ սիրողական եւ կոչած է զայն «Օիծե-  
 նակ», եւ թերեւս կը փորձէ ծիծեռնակին շինած բոյնին նման հեռա-  
 ւոր Սանթիակոյի մէջ շինել իր հայկական բոյնը:

Բայց Նելսոն հարստացուցած է իր կեանքը, եւ այս հարստութիւնը  
 անպայմանօրէն նիւթական չէ: Ան կոչում զգացած է պայմանաւոր-  
 ուիլ երեւակի Ամերիկեան Յամալսարանին հետ եւ տարին քանի մը  
 անգամ կը մեկնի Յայաստան՝ դասախօսելու: Եւ ինչպէս ինք ըսաւ,  
 «Երբ Յայաստան սկսայ երթալ, աւելի լաւ տրվեցայ հայերէն: Յիմա  
 ինձի համար աւելի դիւրին է արեւելահայերէն խօսիլը»:





10 Յունիս 2017: Նելսոն բարի գտնուեցաւ իր տան մէջ հիւրընկալելու զԳԽ, երբ աշխատանքային այցելութեամբ դարձեալ կը գտնուէի Սանթիակո: Բայց կար նաեւ աւելին: Ան նաեւ հրաւիրած էր իր «Ծիծեռնակ» երգչախումբին կարգ մը անդամները, որոնք վերջերս Գայաստան այցելած էին եւ վերադարձած՝ մեծ ոգեւորութեամբ: Եթէ մէկ կողմէ պիտի վայելէի Սանթիակոյի «Ծիծեռնակ»ի անդամները, բայց նաեւ անոնց հայրենի կարօտի վկայութիւնները:

Հռուար Սանթիակոյի մէջ հայկական այս փոքրիկ բոյնը կը դիտէի: Լման հայ՝ հայ ծնողներուն ժառանգութիւնը, կէս հայ՝ խառնածին ամուսնութիւններու արդիւնը, եւ տակաւին քառորդ: Խառն ամուսնութիւններու յաջորդականութիւն: Իսկ այս բոլորը հետաւանքն են Հայոց Յեղասպանութեան, որուն պատճառով հայը տեղահան եղաւ իր բնօրրանէն եւ տարածուեցաւ աշխարհով մէկ: Այս բոլորին վկայութիւնը Նելսոնին մեծ ծնողներն են, որոնց նկարները իր տան հիւրասենեակի պատին վրայ գետեղուած՝ կը խօսին այդ ապրուած կեանքին մասին: Անոնք Յեղասպանութենէն ճողապրած՝ հասած էին Սանթիակո:

«Յեղասպանութիւնը իմ ընտանիքիս պատմութիւնն է, իմ պատմութիւնն է, իմ ժողովուրդիս պատմութիւնն է»։ Նելսոնն է խօսողը «Անիկա շատ անձնական բան մըն է ինծի համար», շարունակեց ան։

Նելսոն ամուսնացած է Անտրէի հետ, որ տեղացի է: Ունին երկու զաւակներ՝ Մարալ եւ Գերոգ: Անտրէի համար յստակ էր հայկականութեան կարեւորութիւնը, երբ ամուսնացած էր Նելսոնին հետ: «Հայկական ընտանիքի մէջ մտած էի եւ հիմա անոր մէկ անդամն եմ», ըսաւ ան: Անտրէ Նելսոնին հետ քանի մը անգամ այցելած է Գայաստան, ապրած է հայրենիքի գեղեցկութիւնը եւ ջերմութիւնը: «Փարիզը գեղեցիկ է, բայց Երեւանը աւելի դիւր կու գայ ինծի», ըսաւ ան:

Եմիլիա Ալմարզա Նազար՝ հայրը, տեղացի է, իսկ մայրը՝ հայ: Այսպէս ըսած ան «կէս» հայ է, բայց Հայաստանէն վերադարձին ան արդէն «լման» հայն է եւ աւելին: «Առաջին իսկ օրէն զգացի, որ Հայաստանի հողը զիս գրկեց», ըսաւ Եմիլիան: Ան շատ բան ուներ պատմելու եւ կը փորձէր ջնոնալ իր ընելիքները: «Շատ հպարտ զգացի, որ հայ էի, երբ Հայաստան կը գտնուէի», ըսաւ Եմիլիան: «Ուզեցի Հայաստանէն ամէն ինչ հետս բերել»: Եմիլիան հեւքի մը մէջ էր՝ հայրենիքին եւ անոր ջերմութեան հեւքը: «Ո՛չ միայն արիւնը կը կապէ եղեր, բայց նաեւ հողը: Եւ զգացի հողին զօրութիւնը»:

Եմիլիան սկսած էր հայերէն սորվիլ եւ Հայաստանէն վերադարձին: «Կ'ուզեմ երթալ եւ Հայաստան ապրիլ», ըսաւ ան: Եմիլիային արջերուն մէջ ակնհերեւ էր իր վերագաժած հպարտութիւնը: «Երբ մէկը ինծի հարցնէ այսօր, թէ ուրկե՞ս, կ'ըսեմ իրենց՝ Չիլիէն, բայց հայ

եմ»: Ան այսօր հայը եւ Հայաստանը կ'ապրի Սանթիակոյի մէջ: «Երբ Սանթիակոյի լեռներուն կը նայիմ, Արարատը կը տեսնեմ»:

Մարիա Թերեզան Եմիլիային բոյնն է: Առաջին անգամ էր, որ Հայաստան կ'այցելէր: «Չզացի, որ շուրջս ամէն մարդ հայ է, եւ շատ արագ բոլոր հայերը իմ ընտանիքս դարձան»: Մարիան կը փորձէր ներկայացնել իր ապրած հայրենի հողին ջերմութիւնը: «Բայց նաեւ զգացի, որ ես շատ աւելի հայ էի, քան ինչ որ կը կարծէի»:

Շաքէ Չիքիի ծնողը Պոլիսէն հաստատուած են Սանթիակո: Ան ծնած է Չիլի: Քիչ-քիչ կը խօսի հայերէն: «Շատ զգացական էր Հայաստանը: Չզացի, որ ես Հայաստանն եմ, եւ թէ ես հայ եմ», ըսաւ Շաքէն: «Գեղեցիկ է Երեւանը եւ չունի բարդութիւններ: Արուեստը եւ երաժշտութիւնը զիս շատ կապեցին քաղաքին եւ շատ անգամ լացի»: Եւ չուշացաւ Շաքէին վճռակամութիւնը: «Պէտք է աւելի շատ բան սորվիմ մեր հայոց պատմութեան մասին»:

Խումբին մէջ էին Վիսենթէն, Զրիսթապալը եւ Մարթինը: Երեք երիտասարդներ, այսպէս ըսած «քառորդ» հայեր, որոնք այցելած էին Հայաստան: Երեքն ալ համալսարանական ուսանողներ, բայց նաեւ երաժշտասէրներ եւ «Ծիծեռնակ»ի խումբի անդամ իբրեւ երգող ու նուագող: Երեքն ալ այցելած էին Ծիծեռնակաբերդը եւ Յեղասպանութեան բանագարանը:

«Ծիծեռնակաբերդի մէջ ապրեցայ Յեղասպանութեան ահաւորութիւնը», Զրիսթապալն է խօսողը: Ան հետը տարած է ծաղի հուստ եւ ցանած է Հայաստանի մէջ: «Վերապրելու եւ նոր կեանքի նշան է», ըսաւ ան:

Վիսենթէն կրցած էր զգալ այն, որ լսած է իր մեծ-մեծ մօր տեղահանութեան կեանքի պատմութեան մասին: «Յեղասպանութեան բանագարանին մէջ մանուկերու նկարները տեսնելով կրցայ ապրիլ իմ մեծ-մեծ մօրս դժբախտ կեանքը», ըսաւ ան:

Մարթինին համար Հայաստանի «տուֆ» քարերը ինքնութեան նշան դարձած էր: «Չզացի, թէ այն արիւնը, որ հայկական է իմ մէջս, որ ինչքան կապեց զիս Հայաստանին»: Բայց Մարթին տակաւին ուներ պատմելիք: «Ծիծեռնակաբերդի մէջ տեսայ մէկ կողմէ ցաւը, բայց միւս կողմէ հայուն կեանքին զգայնութիւնները: Ցաւը եւ զգայնութիւնները իրարու միացած են հայու կեանքին մէջ», ըսաւ ան:

Տղաքը Հայաստանէն իրենց հետ բերած էին շուի, տուտուկ եւ քոբուկ: Անոնք նուագեցին հաջատուրեանէն մէկ յօրինուած ու նաեւ քոչարի: Եւ նուագէն ետք ինծի նայելով՝ ըսին: «Միայն նուագարան չբերիք մեզի հետ, այլ նաեւ Հայաստանէն մաս մը մեր սրտերուն մէջ դնելով մեզի հետ բերիք»:

Ու դարձեալ Նելսոնն է: Կը խօսի, թէ ինչու որոշած է ստանձնել



Երեւանի մէջ իր մասնագիտութեան աննշութեամբ իր կատարած գործունէութիւնները: «Կը սիրեմ Հայաստանը: Այն, ինչ որ կ'ընեմ, ազգային պարտականութիւն է: Հայաստանը ինծի համար տունն է»:

**Պէտք էր մեկնէի:** Կարելի էր տակաւին շատ երկար խօսիլ: Նելսոնը ուզեց, որ երգչախումբին իր սորվեցուցած «Հայր Մեր»ով բաժնուիւնէր: Անոնք երգեցին «Հայր Մեր»ը՝ հայերէնով, արօթք եւ օրհնութիւն: Կրցայ տեսնել, թէ ինչպէս Նելսոն հայ երգի միջոցով կը փորձէր հայկական բոյներ՝ իմա տուններ շինել Սանթիակոյի իւրաքանչիւր հայու սրտին մէջ:

Նելսոն դարձեալ ինծի նայեցաւ: Ան դրական եւ իրապաշտ հայ է՝ «Եթէ հայկական զգացումը եւ ինքնութիւնը զօրաւոր պահենք, այդ մէկը պիտի քաջալերէ, որ հայեր հայերէն սորվին: Եթէ Զիլիի մէջ հայերէն խօսող գաղութ պիտի չունենանք, բայց պիտի ունենանք հայ զօրաւոր գաղութ», ըսաւ ան: «Եւ այս զօրութիւնը Հայաստանէն պիտի առնենք»:

«Հայաստանը ինծի համար տունն է»: Նելսոնին տունը, բայց նաեւ իւրաքանչիւր հայունը: Եւ Սանթիակոյի հայերը գացին իրենց տունը եւ վերադարձան աւելի զօրաւոր: Չօրաւոր հայեր:

Եւ սփիւռքի մեր ներկայ օրերու հայկական իրականութեան այս մեծ խճանկարին մէջ հայը ունի մէկ մեծ առաքելութիւն-պարտականութիւն՝ հայը զօրաւոր պահել:

Եթէ իւրաքանչիւր սփիւռքահայ գաղութ ունի իր տունակները,

անոնցմէ բխող եւ ստեղծուած իրավիճակները՝ իր յառաջնադասքներով թէ բացթողումներով, բայց բոլորն ալ ունին մէկ հասարակաց մարտահրաւեր մը՝ հայը զօրաւոր պահել:

Չօրաւոր, որպէսզի հայը ապրի եւ ապրեցնէ:

Չօրաւոր, որպէսզի հայը յիշէ եւ պահանջէ:

Չօրաւոր, որպէսզի հայուն պատմութիւնը շարունակուի հորիզոնէն անդին:

Եւ հայը իր այս զօրութիւնը պիտի առնէ իր տունէն:

Եւ տունը Հայաստանն է:

# ՍԷՈՒՏԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

«Կարելի չէ մեր պարեանին մեջ միայն ապրիլ այլևս»

Արաբական Շոցի տարածաշրջանին մեջ Սեուտական Արաբիան կը նկատուի այն եօթը երկիրներէն մէկը, որ Աստուածաշունչի մեր Ընկերութեան աշխատանքային իմ պատասխանատուութեան ծիրին մեջ կ'իյնայ: Բայց նկատի ունենալով, որ երկիրը «գոց» է քրիստոնեական ներկայութեան համար, կարելի չէ եղած հոն այցելել աշխատանքային իմ երկար տարիներուս ընթացքին: Զաւանաբար պէտք էր սպասել պատեհ օրուան եւ առիթին:

ԵՌՆԵՍԵՍՕ-ն, որ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կրթական, գիտական եւ մշակութային հիմնարկ-յան ձևաժողովն է, կազմակերպած էր իր եօթներորդ համախմբումը 3-4 Մայիս 2017-ին, իսկ վայրը որոշած էր Ռիատ՝ Սեուտական Արաբիոյ մայրաքաղաքը: Եւ նկատի ունենալով, որ Աստուածաշունչի Ընկերութեան մեր կեդրոնական գրասենեակը անդամ է ԵՌՆԵՍԵՍՕ-ի, ստացած էր հրաւեր՝ մասնակցելու այս ժողովին: Այդ հրաւերին ընդառաջելը վստահուեցաւ ինծի՝ ներկայացնելու մեր կազմակերպութիւնը այս «գոց» երկրին մէջ:

ԵՌՆԵՍԵՍՕ-ն իր այս տարեկան ժողովը կեդրոնացուցած էր երիտասարդական մտահոգութիւններու եւ ներկայի ընկերային եւ քաղաքական կեանքին մեջ անոնց դերին ու ներդրումին վրայ:

Բայց նախ պէտք էր մուտքի արտօնագիրը, ուր կար իմ անունն եւ անունը այն կազմակերպութեան, զոր պիտի ներկայացնէի: Եւ իմ պարագայիս՝ Աստուածաշունչի Ընկերութիւնը: Եւ «մտմտութք» սկսաւ մեջս, թէ ինչպէ՛ս պէտք էր պատասխանէի գործիս բովանդակութիւնը եւ անոր պարունակութիւնը պարզաբանելու վերաբերող հարցումին, զոր պիտի ուղղուէր դեսպանատան կողմէ՝ արտօնագիրը (չ)շնորհելէ առաջ:

Բայց պէտք է հաւատալ ու ակնկալել, որ կրնայ պատահիլ անսպասելին. այդպէս ալ եղաւ, մուտքի արտօնագիրը անցագիրիս մէջ գետնդուեցաւ առանց հարց ու փորձի: Եթէ առաջին «քննութենէն» ձեւով մը անցած էի, բայց տակաւին կար երկրորդը՝ օդակայանը:

Պաշտօնեային դէմքին վրայ ուրուագծուեցաւ ժպիտ: Մայրիներու մեր երկիրը ունի յատուկ ջերմութիւն մը Արաբական Շոցի երկիրներուն համար: Ունեցանք հաճելի գրոյց, մինչ պաշտօնեան կը կատարէր կարգ մը սովորական ստուգումները: Եւ հաճելի գրոյցներն ալ

արաբական օդակայաններուն եւ անոնց մշակոյթին մէկ մասն է: Այլ օդակայաններու մէջ նման երեւոյթի յաճախ չես հանդիպիր:

Զ ա մ ա գ ու մ ա թ ի ն սկսայ մասնակցիլ ւաւելի հանգիստ եւ ինքնավստահ: Վերջապէս մուտք գործած էի «գոց» երկիրը, այդ ալ՝ պաշտօնական հանգամանքով: Ուզեցի տեսնել, թէ ի՞նչն է իւրայատուկը այս երկրին:

Զամաժողովին կը մասնակցէին աւելի քան 1500 ներկայացուցիչներ՝ 350 կազմակերպութիւններէ: Բաւական մեծ թիւով ներկայացուցիչներ՝ նաեւ Սեուտական Արաբիայէն, կարելոր մասը՝ երիտասարդներ: Ժամանակաւ ու հանդիպումները առաւելաբար կեդրոնացուցի տեղացի սեւուցիներուն հետ տեսակցելով: Վերջապէս, կ'ուզէի զգալ տեղական բազմերկանը, որպէսզի գիտնայի եւ հասկնայի, թէ ի՞նչ էր այդ «գոց»-ը:

Եւ իւրաքանչիւր երիտասարդ սեւուցիի հետ հանդիպումին սկսաւ քիչ մը աւելի բացուիլ ինծի համար «գոց» նկատուող այդ երկիրը: Սկսած էի տեսնել երիտասարդութիւն մը, որ ուսեալ եւ զարգացած է, տիրապետած է մէկ կամ երկու օտար լեզուներու, ստացած է համալսարանական բարձրագոյն վկայականներ, եւ որ կը խօսին հանգիստ եւ առանց քաջքուլքի: Իրենց երկրին նկատմամբ տածած անոնց սերը՝ մշակոյթի պահպանումը, բայց նաեւ օտարին նկատմամբ բացուելու անհրաժեշտութիւնը կարելոր գրաւական էր բոլորին համար: Եւ իւրաքանչիւր երիտասարդի հետ հանդիպումին կար հիմնական մտահոգութիւնը. «Կարելի չէ մեր պատեանին մէջ միայն ապրիլ այլևս»: Կը զգայի, որ անոնք կ'ուզէին տեսնել, բայց նաեւ ընդունիլ անոնք, որոնք իրենցմէ չեն, իրենց պէս չեն, եւ որոնք հետ պէտք է ապրին:



Դուկտ, Նուրա Մանսուրի միջին տարիքի սեուտցի մտաւորական կին մըն է: Ան պատասխանատու պաշտօնի վրայ է սեուտական «Գափսարկ» գիտա-հետազօտական հիմնարկին մէջ: Խօսեցաւ դրական աշխարհին մասին, եւ թէ ինչպէ՛ս ներկայ օրերուն երիտաւորութիւնը պէտք ունի աւելի առողջ եւ նպատակասլաց կեանքի «Պէտք չունինք հաւատալու, որ անցեալը միշտ աւելի լաւ է», ըսաւ ան: «Այս դժուար եւ վտանգաւոր աշխարհին մէջ արժէ հաւատալ դաստիարակութեան, որ կ'օգնէ քեզի անդրադառնալու, թէ ինչո՞ր կ'ապրիս այս աշխարհին մէջ», շարունակեց ան:

Դասախօսութենէն ետք մօտեցայ անոր: Թէեւ զգուշ էի ձեռքս երկարելու եւ բարեւելու, բայց արդէն ան զիս կանխեց եւ ձեռքը երկարեց, ու արդէն ընթացք առաւ մեր զրոյցը:

Երբ Նուրային կը փորձէի ներկայացնել Աստուածաշունչը եւ անոր կրօնական եւ մշակութային արժէքները, ան յայտնեց իր հիացմունքը: «Աստուածաշունչը կարողացած էմ, երբ Ամերիկա էի՝ իբրեւ ուսանող: Աստուածաշունչին մէջ կան բարձր արժէքներ, որոնց հանդէպ ունիմ յարգանք եւ սքանչացում»:

Նուրային դէմքին վրայ կար ինքնավստահութիւն: Ան շատ հասկատ կերպով դրսեւորեց իր կեցուածքը գիտնալով հանդերձ, որ տարբեր կրօնի եւ մշակոյթի կը պատկանէինք: «Կրօնը ճիշդ պարունակով եւ բովանդակութեամբ պէտք է սորվեցնել: Մեր՝ իսլամներուս հարցն ալ այս է ներկայ օրերուն: Եւ իսլամներուս ներքին միջլարան-ուսանական տագնապն ու, տակաւին, արտաքին աշխարհին հետ դժուարութիւնը կը ծագի, քանի ճիշդ ձեւով չէ, որ կ'ուսուցանենք մեր հաւատամքները», ըսաւ ան:

Նուրան մեր երկխօսութեան ընդմէջէն կը փորձեր ինք ալ իր պատեանէն դուրս գալ: Եւ Նուրային համար դուրս գալը սկսաւ ինքն իր անձէն: Եթէ անդրադարձած էր իր իրավիճակին, իր ինքնութեան, բայց նաեւ դուրս գալով՝ կը փորձեր հասկնալ նաեւ զիս եւ իմ ինքնութիւնս, կրօնս ու պատկանելիութիւնս:

Ռիատի օդակայանէն կը պատրաստուիմ վերադառնալ: Գալու ատեն մտահոգութեամբ մտայ Նոյն օդակայանը, բայց հիմա դուրս կու գամ աւելի խաղաղ: Խաղաղ, որովհետեւ հանդիպեցայ մարդոց, որոնք կը տեսնէին, թէ՛ կարելի չէ միայն իրենց պատեանին մէջ ապրիլ: Անոնք կը փորձէին դուրս գալ իրենց անձերէն՝ ճեղքելով պատերը, որպէսզի տեսնեն ուրիշը:

Եւ արժէ նայիլ ներկայ օրերու աշխարհին:

Եթէ այսօր կան մարդիկ, որոնք կը փորձեն պատեր հիւսել իրենց եւ իրենց երկիրներուն համար, երեւի իրենց ապահովութեան եւ բարօրութեան համար: Բայց կան նաեւ անոնք, որոնք պատերը կը

քանդեն, որովհետեւ չեն ուզեր իրենց պատեանին մէջ միայն մնալ: Եւ երեւի կը փորձեն ու կ'ուզեն տեսնել, թէ իրենց ապահովութիւնը նաեւ կախեալ է ուրիշին ապահովութենէն:

Սեուտական կրօնիոյ նախածնունդութիւնը մէկ լաւ օրինակ-փորձառութիւնն էր, որ ապրեցայ եւ հասկցայ, որ կարելի է ուրիշը հասկնալ, եթէ փորձես քու պատեանիդ մէջ չմնալ:

Եւ եթէ դրական աշխարհ մը շինելու շատագույն պիտի ըլլալ, այդ մէկը ունի իր նախապայմանը:

Թէ՛ կարելի չէ քու պատեանիդ մէջ միայն մնալ:

# ՍՓԻՌՔԻ ՀԱՅՐ ՔՍԱՆՄԷԿԵՐՐՈՐԴ ԴՎՐՈՒ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՆ ՄԷՋԷՆ՝

Նոյեմբեր 2016: Պուենոս Այրես, Արժանթին:

Աստուածաշունչի մեր ընկերության հինգ գործակիցներու հետ նստած կը գրուցեմ: Բոլորին ալ արմատները Իտալիայէն է եւ անոնք երրորդ սերունդի իտալացի զաւակներ են: Երբ հարց տուի, թէ ո՞րքան իտալերէն կը խօսին, պատասխանը եղաւ. «Ոչ մէկ բառ»: Ու տակաւին ի՞նչքան իտալացի կը զգան: «Ոչ մէկ առընչութիւն ունինք իտալական մշակոյթի հետ: Բոլորս ալ արժանաւորեցի ենք», եղաւ անոնց շատ առագ է կտրուկ պատասխանը:

Հայուն պարագան սփիւռքեան պայմաններուն մէջ տարբեր է: Հայը տակաւին հոն չէ հասած, ուր պիտի ըսէ: «Ոչ մէկ առընչութիւն ունիմ հայկական ինքնութեան հետ»:

Եթէ դրական մտեցումով մը սկսայ ելոյթս, բայց այդ չի նշանակեր, թէ սփիւռքահայ իրավիճակին մէջ քիչ են մարտահրաւերները եւ մտահոգութիւնները: Բայց այս մարտահրաւերներուն եւ մտահոգութիւններուն մէջ արկայ է դրական իրականութիւնները եւ իրավիճակները, թէ տակաւին հայկական ինքնութիւնը հոն է: Եւ այս ինքնութեան կրակը իր տարբեր ուժգնութիւններով կ'ենթադրեմ արդիւնք է Ցեղասպանութեան: Հողէն, արմատէն եւ ինքնութենէն արմատախիլ եղած ժողովուրդի մը կապուածութիւնը՝ կառչիլը կեանքին եւ անոր մէջէն իր ինքնութեան եւ պահանջատիրութեան:

Աշխատանքային կեանքս եղած է հեռւ մը՝ լեցուն ճամբորդութիւններով եւ աշխարհով մէկ տեղ: Եւ իւրաքանչիւր ճամբորդութեան մէջ միշտ ալ հետամուտ եղայ փնտռելու, գտնելու եւ հաղորդակցելու հայուն հետ իր ապրած վիճակին մէջ: Եթէ հանդիպեցայ առաջնորդ հայուն իր տարբեր պատասխանատուութիւններուն մէջէն, բայց նա եւ այն հայը իր առօրեայ կեանքի ապրուստի եւ գոյապայքարի փնտրտուքին մէջէն: Եւ այս երկուքին միաձուլումով է, որ կրնաս պատկերացնել սփիւռքեան իրավիճակը հայուն իր ամբողջական երեւոյթով եւ իր ապրած երկրի մթնոլորտին մէջէն:

*\*Պրտասանուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպութեամբ՝ «Սփիւռքը Նոր Հորիզոններու Դիմաց – Սփիւռքի Հայուն Ինքնատեսակացողութիւնը» գիտաժողովին, Պիքֆայա, Յուլիս 11, 2017:*

Եւ իւրաքանչիւր անգամ, որ կ'այցելեմ հայկական սփիւռք մը եւ կը հանդիպիմ հայուն եւ իր կեանքին մէջ տարած իր բազմատեսակ պայքարներուն, կ'ապրիմ դարձեալ Ցեղասպանութեան անաւորութիւնը: Թէ ինչու՞նչ այսքան պետք է, որ մարտնչիք պահելու համար լեզուն, հաւատքը, մշակոյթը, գրականութիւնը, պարը, կենցաղը, ապրելակերպը ու տակաւին:

Պատմութեան եւ ժամանակի սլաքը կարելի չէ ետեւ տանիլ: Այսօր մեր իրավիճակն է այս, որ աշխարհով մէկ տեղ տարածուած ենք ու տակաւին պետք է, որ ընտելանանք եւ ընդգրկուինք մեր ապրած տեղական մշակոյթներուն հետ նաեւ, որպէսզի շարունակենք մեր կեանքերը որպէս լիբանանահայ, սուրիահայ, յունահայ, ֆրանսահայ, կիպրահայ, արժանդիւնահայ ու տակաւին: Եւ այս իւրաքանչիւր գաղութներուն մէջ ապրելով կիրարկած եւ շինած ենք հայկական-տեղական նկարագիր եւ որ եղած է այլապէս՝ ստեղծելով սփիւռքահայ իրականութիւններ, որ ունին իրենց կենցաղային եւ մտածողութեան հաղորդականութեան իւրայատկութիւնները, որ կրնայ տարբերիլ մէկը միւսէն բայց բոլորը միասին կուզան մէկ մեծ հասարակ յայտարարի մը տակ որպէս ՀԱՅ: Եւ այս իր պահանջատիրութեան եւ ամբողջական մշակոյթի պահպանման առաջնահերթ մտահոգութիւններուն մէջէն:

Եւ այս իմաստով ինչպէ՞ս կրնամ մոռնալ Նորվանը եւ Սոնան եւ իրենց երկու զաւակները, որոնք տասը տարիէ աւելի Իրաքէն փախչելով ապաստան գտած էին Սանաա, Եմեն: Եւ երկու պոստիկներ տեղական դպրոց յաճախելով ոչ թէ միայն հայերէն չէին սորվիր այլ նաեւ ստիպուած էին իսլամական կրօնքի դասաւանդութիւններ ստանալ եւ Զուրանը սորվիլ: Եւ ծնողացը ճարահատ նայուածքը ինծի. «Հրայր ի՞նչ կրնանք ընել»:

Սաու Փառուլոյի երջանկայիշատակ Ղարիպեան Սրբազանը. «Հրայր չորս ընտանիք չես գտներ այս մեծ Պրագիլիայի մէջ, որ հայերէն կը խօսին տան մէջ»: Ու տակաւին Սագոն եւ ընտանիքը ճոհանկազոյկ, Հարաւային Աֆրիկէ, որ եթէ տղանք է հայերէն սորվեցնել իր զաւակներուն, բայց մեծ աղջիկը արդէն ամուսնացած է տեղացի ճերմակամորթ մը հետ, տղան հետիկի մը եւ մնացած է միայն երրորդ մանջ զաւակը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Աթլանթա քաղաքին մէջ հայկական փոքր գաղութ մը կը տղնի իր ինքնութիւնը պահել Հայ Տունին մէջէն, ուր հայերէն լեզու, պատմութիւն եւ քրիստոնէական դաստիարակութիւն կուտան բայց նաեւ ամիսը մէկ անգամ եկեղեցական պատարագ: Պէճինկի Լուսինէ Սարգիսեանը, որ ամուսնացած է յիւնացիի մը հետ բայց իր երկու զաւակները մկրտած է էջմիածին:

Հնդկաստանի Զալբուբա քաղաքին երբեմնի Հայոց Մարդասիրական Ընժամարանը, որ այսօր նոր տեսիլք գտած է եւ արտասահմանէն եւ հայրենիքէն ուսանողներ ունի, ուր կը ստանան հայեցի եւ գիտական ուսում ու դաստիարակութիւն: Եթովպիայի Եօթանասուն հոգիներէ բաղկացած հայախօս գաղութը, որոնք տակաւին կը պահեն հայ եկեղեցին եւ ամէն Կիրակի կանոնաւոր ժամերգութիւն նոյնիսկ երբ մնայուն հոսիլի չունի: Աղքատներին հայկական վարժարանը այսօր ունի միայն տասնըհինգ աշակերտ:

Եւ միջին արեւելեան միւս գաղութները իրենց տարբեր քաղաքական վերիվայրումներով թիփ եւ կարողակախութեան նուազումներով կը փորձեն շակել հայապահպանումի մեծ պատասխանատուութիւնը: Եւ ապրած տարբեր հանդիպումներու եւ փորձառութիւններու շարքը կրնայ երկարիլ:

Սփիւռքեան մեր ներկայ իրավիճակին վրայ պիտի աւելցնել նաեւ նոր երեւոյթ մը: Հայաստանէն հաստատուած բաւական մեծ թիւով հայրորդները: Եւ այս զարգացումը աւելիով կ'աւելցնէ հայկական սփիւռքեան մարտահրաւերները:

Եւրոպայի մէջ այսօր կազմուած են նոր հայկական գաղութներ մեծամասնութեամբ ու կարգ մը պարագաներու ամբողջութեամբ Հայաստանէն եկած հայերով: Սթրազպուրկ քաղաքը, որ քանի մը տարիներ առաջ ուներ միայն երեք հայ ընտանիք Պէյրութէն, Հալեպէն եւ Պոլսէն, այսօր կը հաշուէ աւելի քան ութ հազար հայրորդներ՝ բոլորն ալ Հայաստանէն: Բայց միայն այս նոր կազմուող գաղութները չէ մտահոգութիւնը: Արկայ է նաեւ մերձերցումի եւ հաղորդակցութեան պակասը տեղացի սփիւռքահայերու եւ Հայաստանէն ժամանած հայերուն միջեւ:

Տեղասպանութենէն անմիջապէս ետք կազմուած հայկական սփիւռքեան գաղութները հայախօս էին: Անոնք ստեղծած էին կէտներ, ուր փոքրիկ հայաստաններ շինելով իրենց իրենց կեանքերը կը տնօրինէին:

Նոյն չէ պարագան այսօր: Հայկական գաղութները շատ աւելի յարաբերութեան մէջ են իրենց ապրած տեղական մշակութիւններուն եւ մթնոլորտներուն հետ: Եւ ասոր հակազդեցութիւններ են մայրենի լեզուի նահանջ, օտար դպրոց յաճախել, խառն ամուսնութիւններ ու տակաւին:

Եւ հոս պիտի բանալ մէկ այլ փակագիծ՝ ընդօժեւելով հակասութեան մէջ ապրող սփիւռքահայու կեանքը: Սփիւռքի մէջ ծնած հայը պիտի դատուի որպէս հայ, թէ՛ տեղական երկրի հպատակ: Լիբանանցի հայկական ծագումով, կա՞մ լիբանանահայ, կա՞մ հայ լիբանանեան հպատակութեամբ, կա՞մ լիբանանցի՝

Եթէ միջին արեւելեան գաղութներու պարագային տակաւին հայերէն լեզուի պահպանումը բաւական ջաջալերական է, բայց նոյն չէ պարագան այլ գաղութներու մէջ: Աթենքի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներուն հետ հանդիպումիս ընթացքին մտահոգութիւնը նոյնն էր: «Հազիւ թէ դասարանէն դուրս կուզան աշակերտները եւ տակաւին դպրոցի բակին մէջ, արդէն յունարէն կը խօսին»: Պուէնտ Այրտի հայկական մէկ վարժարանի մը տնօրէնին հետ հանդիպումիս ընթացքին ան ըսաւ. «Պետք է համոզուիլք, թէ այլեւս հայերէնը պիտի սորվեցնել որպէս երկրորդական լեզու»:

Բայց քաջալերական երեւոյթ է եւ մինչեւ այսօր, թէ ինքնութեան, մշակութիւնի եւ պահանջատիրութեան գործօնները տակաւին տիրական են: Եթէ մէկ կողմէ կայ լեզուի նահանջը, բայց ինքնութեան կանչը տակաւին արկայ է:

Նելսոն Փալդեանը Սանթիակո ծնած երրորդ սերունդի հայ է: Հայերէն բաւական կը խօսի: Ան ըսաւ. «Չիլիի մէջ, եթէ հայախօս գաղութ պիտի չունենանք, բայց պիտի ունենանք հայկական գորաւոր գաղութ»:

Եւ այս իրականութիւնը պիտի առնչել նաեւ ներկայ համաշխարհայնացած աշխարհի կարգավիճակին եւ անոր դիմաց զօրաւոր կերպով հակադրուող տեղակայնացումը: Երբ մարդիկ ու հաւաքականութիւններ սկսած են տեսնել, թէ համաշխարհայնացած աշխարհին մէջ կը կորսնցնեն իրենց հարազատ պատմութիւնը, կ'ուզեն աւելիով կառչիլ իրենց ինքնութեան ու մշակութային արժեքներուն գիտակցութեանը եւ այս որպէս ապահովութիւն իրենց անհատական ու հաւաքական կեանքերուն համար: Եւ այս իրականութիւնը սկսած է զարգացնել քաղաքական ինքնութեան հասկացողութիւնը տարբեր հաւաքականութիւններու մէջ ապրող փոքրամասնութիւններու համար: Եւ այս զարթումները այսօր սկսած են շատ աւելիով դռնալ ապրող իրականութիւններ տարբեր հաւաքականութիւններու մէջ, ներառեալ նաեւ հայունը եւ ի մասնաւորի իր սփիւռքեան իրավիճակին մէջ:

Տեղասպանութեան հարիւր ամեակի ոգեկոչումները աշխարհով մէկտեղ ստեղծեցին մեծ արթնութիւն: Եւ այս նոյնքան նաեւ երիտասարդ սերունդի մասնակցութեամբը եւ աշխուժ ներդրումով: Ան, որ կը խօսի հայերէն կտրուկ եւ կամ երբեք: Հարիւր ամեակի կարգախօսքը «Յիշել եւ Պահանջել» դարձաւ ինքնութեան եւ իր համապարփակ հասկացողութեան մէջէն վերանորոգումի խթան մը:

Բայց կայ նաեւ երկրորդ երեւոյթ մը: Եւ այս Հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի իրականութիւններն են: Սփիւռքեան մեր ներկայ իրավիճակներուն մէջէն Հայաստանը, որպէս հայրենի պետականու-

թիւն եւ հող, այսօր կը սրսկէ հայկական ինքնագիտակցութիւնը եւ կը հաստատուի, կը կապէ ու կ'արթնցնէ արմատի հասկացողութիւնը հայրն մէջ եւ այդ արմատին տուն տուող հողի գիտակցութիւնը:

Պունոս կրտսի ժամկոչեանը, որ երրորդ սերունդի հայ մըն է եւ ոչ մէկ բառ հայերէն կը խօսի, ուներ հայարտութիւն մը որ փորձեց ինծի հետ՝ թարգմանիչի մը միջոցաւ, բաժնեկցի: «Տղաս Յայաստան է եւ որոշած է հոն մնալ իր հայութիւնը վերագտնելու համար»:

Սանթիակոյի հայկական փոքր գաղութի կարգ մը անդամներու հետ հանդիպումս եղաւ քաջատրական: Խառն ամուսնութիւններու գաւակներ էին, որոնք Յայաստանէն վերադարձէն ետք տեսած ու ապրած էին հայկական ինքնութեան ուժը, արժեքը եւ կարեւորութիւնը: Եմիլիան, որ մօրը կողմէն հայ է, ըսաւ. «Եթէ մէկը ինծի հարցնէ այսօր, թէ ո՞ր կ'ապրիմ իրենց կ'ըստմ, թէ Չիլիի մէջ բայց հայ եմ»: Եմիլիան այսօր հայերէն սկսած է սորվիլ: Տղաս Վահէն քսան չորս տարեկան երկրաչափ է: Կ'ապրի ու կ'աշխատի Չուիցերիա: Անցելաները հեռաձայնեց եւ ըսաւ: «Պապ, որոշած եմ հայաստանէն տուն գնել»:

Հայկական Սփիւռքը բարդ է: Դիրին չէ այն բոլորը, որ տեսայ եւ ապրեցայ եւ տարիներու վրայ երկարած, դնել մէկ նժարի վրայ: Դարձեալ կ'ուզեմ ըսել. Յեղասպանութեան անհարութիւնը կ'ապրիմ իւրաքանչիւր հայկական գաղութ, որ կը տեսնեմ:

Այս իմաստով սփիւռքեան մեր կեանքը կը փորձեմ ներկայացնել որպէս «պատերազմական» վիճակի: Եւ մեր «պատերազմը» զենքով է մեռցնելու համար չէ, այլ ինքնութեան, լեզուի, մշակոյթի պահպանումի պատերազմը՝ բայց անպայմանօրէն պահանջատիրութեանը: Եւ ինչպէս որ պատերազմի մը մէջ միշտ ալ կան շատ մը ճակատամարտեր, նոյնն է պարագան սփիւռքեան մեր համընդհանուր պատերազմի պարագային: Իւրաքանչիւր գաղութ մէկ ճակատամարտ է այս հայկական մեր մեծ պատերազմին մէջ: Եւ ինչպէս որ պատերազմի ու ճակատամարտերու մէջ կան զոհեր, վնասներ ու տակաւին նոյնն է պարագան մեր սփիւռքեան իրավիճակներու: Սփիւռքեան գաղութներու մեր բոլոր «պատերազմ-ճակատամարտերուն» մէջ ալ կ'ունենանք «զոհ»եր: Կարգ մը գաղութներու պարագային՝ շատ, ուրիշ տեղեր՝ անելի նուազ: Բայց միշտ կան «զոհեր» լեզուի, ինքնութեան, խառն ամուսնութիւններու, արմատներու, մշակոյթի, եւ այլն:

Բայց այս «պատերազմին» մէջ ենք եւ պիտի շարունակենք: Ուրիշ ելք չկայ:

Եզրափակելու համար քանի մը մատնանշումներ:

1. Հայկական Սփիւռքը եւ սփիւռքահայը նոյնանման չեն: Հայ է, բայց իւրաքանչիւրը իր ապրած երկրին հայեցակէտէն տարբեր է:

Տարբեր է բայց Օտար չէ: Եւ սփիւռքահայը իր տարբերութիւններով կենցաղային ու արեւելակերպի ու տակաւին իր ապրած երկրի պայմաններուն ու մթնոլորտին մէջէն, պիտի վեր առնել եւ ոչ որպէս Օտար: Եւ պիտի նայիլ սփիւռքահայուն իր տարբերութիւններուն մէջէն, որոնք արժէ փորձել քով-քովի բերել, որպէս տարբեր նոյնութիւններ եւ ոչ որպէս Օտար:

2. Սփիւռքեան մեր մարտահրաւերները այսօր մեծ համեմատութեամբ նոյնանման են: Լեզուի պահպանում, քրիստոնեական հաւատք, մշակոյթ, ինքնութիւն եւ պահանջատիրութիւն: Եւ մեր այս համահայկական հիմնահարցերը կարելի չէ, որ պարփակել գաղութներու աշխարհագրական տուեալ սահմաններու մէջ միայն: Պետք ունինք համասփիւռքեան ռազմավարութեան մը, ուր նիւթական, մարդկային եւ կառուցային բոլոր կարողականութիւնները լաւապէս կարելի է ներմուծել: Եւ ինչ խօսք, որ ներկայի տեղեկատուութեան աշխարհի ու ընկերային համացանցերու լաւապէս օգտագործումը կրնայ մեծապէս օգնել մեր բոլոր ուժերու եւ կարողականութիւններու օգտագործումի եւ համադրումի աշխատանքներուն մէջ:

3. Աւելի զգոյշ պիտի ըլլանք գաղութներու եւ անոնք ազգային եւ մշակութային կեանքի շարունակականութեան ի խնդիր: Ե՛րբ չէ արագ վճիռներ արձակել այս կամ այն գաղութի եւ կամ այս կամ այն ազգային, կրթական ու մշակութային հաստատութիւններու նկատմամբ: Պիտի չի մոռնանք, թէ սփիւռքեան մեծ պատերազմին մէջ ենք եւ հայապահպանումը եւ պահանջատիրութիւնը առաջնահերթ խնդիրներ են եւ անոր համար ամէն տեսակի աշխատանք անհրաժեշտ է եւ այդ կ'ենթադրէ մեծ զոհողութիւն: Նոր տեսիլքը եւ աշխատանքային ծրագիրը պէտք է եւ անհրաժեշտ է զայն կերտել ծառայելու համար հայապահպանումի մեծ տեսլականին:

4. Հայաստանը եւ Արցախը այսօր շատ կարեւոր մղիչ ուժեր են սփիւռքեան մեր կեանքերուն համար: Հայաստան-Արցախ-Սփիւռք այսօր շատ անելի լաւ գօտեպնդուած են իրարու հետ եւ շատ անելի կա հասկցած են զիրար: Եւ այս իմաստով պէտք է նայիլ, թէ ինչպէս անելի եւս զարգացնել այս երրեակ համագործակցութիւնը եւ կապը:

Վերջապէս, երբեք մտահան պէտք չէ ընել, թէ հայուն հաւատքը քրիստոնեական աստուածաբանութեան շնորհած Յոյսին հաւատքն է: Զրիստոնեան ոչ լաւատես մարդն է եւ ոչ ալ յոռետես: Զրիստոնեան Յոյսի մարդն է եւ այս Յոյսին մէջն է անով գօտեպնդուելով ան կը նայի բաժակին, որ կիսով լեցուն է եւ զայն մահ կը տեսնէ: Եւ այս Յոյսին շնորհած դրական ուժն է, որ մենք պիտի սրսկենք մեր ժողովուրդին կեանքերուն մէջ հայապահպանումի այս մեծ պատերազմին առաքելութեանը համար:

# ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԱԲԱՆԴԸ՝ ԿԱՏԱՐԵԱԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

*«Ոչ թե ես արդեն առեր եմ, կամ արդեն կազարկայ  
կզեր եմ, հապա երբեւէ ինկած եմ որ բռնեմ մրցանա-  
կը, որուն համար այ բռնուեցայ Քրիստոս Յիսուսն»:  
(Փիլիպպեցիս 3.12)*

*«Ահա կը տեսնեմ երկինքը բացուած ու Որդին մար-  
դոյ Աստուծոյ աջ կողմը կայնած»:  
(Գործք Առաքելոց 7.55)*

Ստեփանոս կը համարուի Քրիստոնեայ եկեղեցիին առաջին նա-  
հատակը: Անոր նահատակութիւնը աննպատակ չէր: Ան Քրիստոսի  
Աւետարանին քարոզութեանը մէկ զօրաւոր շատագույն էր: Իրակա-  
նութիւնը պարզօր էր և զայն բարձրաձայն արտայայտող, ու տակաւին  
տոյնինքն այդ իրականութեանը տուած ինքնութիւնը ամուր կերպով  
պահող և սատարող անձն էր: Եւ նոյն այդ իրականութեանը եւ անոր  
քարոզութեանը համար դարձաւ նահատակ:

Իրականութիւնը միշտ չէ որ մարդիկ ուրախութեամբ կ'ուզեն ըն-  
կալել: «Անոնք այս բաները լսելով սրտերնուն մէջ կը կատրիէին եւ  
ակռանին անոր վրայ կը կրճտէին» (Գործք Առաքելոց 7.54): Պատ-  
մութեան ընթացքին եւ մինչեւ օրս, միշտ ալ եղած են մարդիկ ու հա-  
ւաքականութիւններ, որոնք փորձած են ու տակաւին չէզոքացնել  
իրականութեան ամրապնդումը տարբեր հաշուառկումներու հա-  
մար: Այդպէս էին պատմութեան հողովոյթներու մէջէն ստեղծուած  
իրադարձութիւնները, որոնք կը շարունակուին տակաւին: Բայց  
Ստեփանոս միշտ ալ կառչած մնաց իր իրականութեան՝ ինքնու-  
թեան տուած հաւատամքին: Եւ զայն հասցուց իր ապրած ու ապրե-  
լիք կեանքի հաւատամքին կատարելիութեան, նոյնիսկ երբ զինք կը  
տանէին քարկոծելով մահապատիժի ենթարկելու: «Ահա կը տեսնեմ  
երկինքը բացուած ու Որդին Մարդոյ Աստուծոյ աջ կողմը կայնած»  
(Գործք Առաքելոց 7.55):

Ստեփանոս իր հոգին աւանդեց առանց զիջելու իր Տիրոջ նկատ-  
մամբ իր հաւատքը ու իր ինքնութիւնը. «Տէր Յիսուս, ընդունե իմ հո-

գիս» (Գործք Առաքելոց 7.58): Եթէ Ստեփանոսի ֆիզիքական մարմի-  
նը անշնչացած, բայց մնաց իր ինքնութիւնը եւ այդ ինքնութեան  
նկատմամբ իր հաւատամքը, որ զայն հասցուց կատարելութեան ի  
զին իր նահատակութեան: Եթէ Ստեփանոսի ֆիզիքական կեանքը  
վերջացաւ, բայց շարունակուեցաւ իր ինքնութիւնը՝ իր հաւատամքը:  
Որովհետեւ այդ ինքնութեան եւ հաւատամքին մէջ Ստեփանոս դրաւ  
իր ամբողջ կեանքը ու զայն հասցուց կատարելութեան:

Իսկ Ստեփանոսի աւանդին կառչելու եւ շարունակելու իրականու-  
թիւնը կը կայանայ նոյնինքն Սօղոսի կեանքին մէջ: Երբ Ստեփանոսը  
քարկոծելու տարին, «վկաները իրենց հանդերձները պահ զրին Սօ-  
ղոսի մօտ» (Գործք Առաքելոց 7.57): Եւ եթէ մէկ կողմէ «Սօղոսը կա-  
մակից էր» (Գործք Առաքելոց 7.59) Ստեփանոսի սպանութեան,  
բայց նաեւ եղաւ ժառանգորդը անոր հաւատքին ինքնութեան՝ Ստե-  
փանոսի կեանքին իրականութեանը:

Սօղոս քալեց երկար ճամբայ մինչեւ հասաւ Ստեփանոսի ինքնու-  
թեան, իրականութեան: Սօղոս հալածեց Քրիստոնեայ եկեղեցին եւ  
քրիստոնեաները: Ան շարունակեց բռնել իւրաքանչիւր քրիստոնեայ  
մինչեւ այդ օրը երբ ինք «բռնուեցաւ Քրիստոսէն Դամասկոսի ճամ-  
բուն վրայ», եւ որ եղաւ իր կեանքին անկիւնադարձը: Սօղոսը եղաւ  
Պօղոս: Եւ Պօղոսը այդ օրուանէ ետք անդադար հետամուտ եղաւ  
հասնելու համար Ստեփանոսի ինքնութեանը ու հաւատքին: Եւ ոչ  
մէկ ճիգ ինչայեց, որպէսզի այդ հաւատքը՝ ինքնութիւնը, հասցնէ կա-  
տարելութեան: «Ոչ թե ես արդէն առեր եմ, կամ արդէն կատարեալ  
եղեր եմ, հապա ետեւէն ինկած եմ» (Փիլիպպեցիս 3.12): Պօղոսի  
կեանքը եղաւ անդադար հեւք հաւատքին տեսնել ինչպիսի եւ զայն  
կատարելութեան հասցնելու:

Եւ հոս արժէ բանալ մէկ փակագիծ մը:

Կատարեալ բառին յունարէն արմատը կու գայ թելէտ բառէն: Եւ  
թելէտ բառին ընկերակցութեան հարաբերութիւնը եւ բացատ-  
րութիւնը կը դրուէր հատմութեան հասկացողութեան հետ: Հոն, ուր  
անձը եւ հաւաքականութիւնը կը հասունանայ, կը մեծնայ իր իմացա-  
կան-գիտական կարողականութեան մէջ: Իսկ առաջին դարու եկե-  
ղեցիին համար, կատարեալը՝ թելէտ, եղաւ հաւատքի կեանքի ու ինք-  
նութեան հատմութեան մէջ եւ անոր համար: Կատարեալը առաջին  
դարու եկեղեցիին համար կրցաւ հասնիլ մինչեւ ֆիզիքական նահա-  
տակութիւն: Անոնք համար կարելի չէր հաւատքին ինքնութիւնը սա-  
կարկութեան նժարին վրայ տեղաւորել: Առաջին դարու քրիստոնեայ  
եկեղեցիին համար հաւատքին նահատակութիւնը վերջակտ մը չէր:  
Այլ ամուր գրաւական կեանքի շարունակականութեանը եւ աւանդին  
փոխանցումը: Եւ այս գիտակցութեամբ կարելի չէր զիջիլ անկէ:



Ստեփանոս, Պողոս ու տակաւին շատեր իրենց հաւատքին ինքնութիւնը պահելու համար եթէ հասան մինչեւ Նահատակութիւն, որովհետեւ չուզեցին սակառկել իրենց հաւատքի ինքնութիւնը դեպի կատարեալի հասցնելու առաքելութեանը մէջ: Անոնք կատարեալին հասնելուն մէջ տեսան կեանքի շարունակականութեան ապահովութիւնը:

Եթէ հայ ժողովուրդի պատմութեան մէջ Վարդանանքը՝ 451 թուականը, եղաւ յատկանշական ու անկիւնադարձային, որովհետեւ կար հայուն հաւատքին կատարեալի հասնելու ձգտումը եւ անով միայն ապրելու համոզումը եւ գիտակցութիւնը:



Աւարայրի ճակատամարտ-պատերազմը, ռազմա-քաղաքական ու զինուորական մարդուժի եւ զինամթերքի կարողականութեամբ, անհաւասար պայքար մըն էր: Վարդան եւ իր նուիրեալ զինուորականները կը գիտակցէին այս անհաւասար ուժերու ճակատամարտին: Բայց Վարդանին ու հայ ժողովուրդին համար, պատմութեան այդ առանցքին կար ազգային-քրիստոնէական հաւատքին գիտակցութիւնը եւ զայն պահելու իրականութիւնն ու մարտահրաւերը: Եւ թէ այս գիտակցութեան իրականութիւնը հայ ժողովուրդի կեանքին ինքնութեան ապաւենն էր: Եւ թէ կարելի չէր զայն սակարկել: Այս

ինաստով անհրաժեշտ էր, որ Վարդան եւ իր զինակիցները մղէին այս անհաւասար ճակատամարտը՝ ապահովելու համար հայուն կեանքին ու հաւատքին շարունակականութիւնը:

Եւ չուզեցաւ Վարդանի հաւատքին կատարեալին ձգտելու գիտակցութիւնը, որ գնաց մինչեւ Նահատակութիւն: Անհաւասար ուժերու այս պատերազմը եթէ վերջացաւ Վարդանի եւ իր զինակիցներուն մահուամբ՝ Նահատակութեամբ, բայց ոչ հայունը: Իր մահուամբ, Վարդան իր հաւատքին գիտակցութիւնը եթէ հասցուց կատարելութեան, բայց ան կրցաւ ապրեցնել հայուն հաւատքը, որ շարունակուեցաւ ու փոխանցուեցաւ: Եթէ մէկ կողմէ Վահանի ու Վահանեայց պայքարով, որ վերջացաւ հայուն յաղթանակով, բայց մինչեւ այսօր տակաւին ապրող հայ ժողովուրդով՝ հայրենիք եւ սփիւռք: Եւ այս կատարեալին ստեղծած յաղթանակն է, որ չի մեռնիր: Դայուն յաղթանակը, ուր ան շարունակեց տարիներու վրայ ու իր պատմութեան դարերուն մէջէն եւ մինչեւ այսօր ապրելու համար իր ազգային-քրիստոնէական գիտակցութեան համար ու անոր մէջ:

Ստեփանոս, Պողոս, Վարդան ու տակաւին: Կատարեալին ձգտող բայց Նաեւ հասած-հասնող Նահատակները: Անոնք ապրեցան Զրիստոսի համար եւ քրիստոնէական ինքնութեամբ եւ համոզմունքով եւ տքնեցան Նոյն այդ համոզմունքը հասցնելու կատարելութեան Նոյնիսկ ի զին իրենց կեանքի Նահատակութեամբ: Որովհետեւ անոնք տեսան հորիզոնէն անդին, թէ կատարեալին հասնելու նուիրական ինքնութեան մէջ է, որ կեանքերը կը շարունակուին:

Ու դարձեալ հայ ժողովուրդի իրականութեանը համար: Կայ Վարդանի ու Աւարայրի աւանդը: Թէ հայուն կեանքի ապահովութիւնը այս հաւատքի ինքնութիւնը կատարելութեանը հասցնելու գիտակցութեան մէջ եւ անոր համար ապրող կեանքով է Նոյնիսկ երբ առկայ է Նահատակութիւնը: Որովհետեւ հայուն պատմութեան փորձը յստակ է: Այս Նահատակութիւնները կեանքեր ապրեցնող իրականութիւններ են:

Վարդանը ապրեցաւ Զրիստոսի հաւատքի ինքնութեան համար եւ ըրաւ ամէն ինչ հասնելու համար Անոր կատարելութեանը: 451 թուականին եթէ Վարդան Նահատակուեցաւ, բայց հայը այսօր տակաւին կ'ապրի: Եւ այս լաւագոյն ապացոյցն է, թէ հաւատքի այս ինքնութիւնը չմեռնող իրականութիւն է:

Վարդանանց իերոսամարտի աւանդը կատարեալին հասնելու աւանդն է Նոյնիսկ երբ կայ Նահատակութիւն:

Նահատակութիւն մը, որ չի մեռնիր բայց կ'ապրի ու կ'ապրեցնի:

## «ԱՄԵԱԿՆԵՐ»

# ԱՊՐՈՒԾ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՄԵՋԷՆ

Մարդուն անհատական, հաւաքական ու ազգային կեանքին մէջ կարեւոր իրադարձութիւն է ամեակներու նշումը: Կարծեք ի՞նչ կեանքը պահ մը կանգ կ'առնէ տեսնելու համար, թէ ի՞նչ պատահած է նուիրելի կեանքին՝ անհատական, հաւաքական եւ ազգային իր պատմութեան տարբեր հոլովոյթներուն ընդմէջէն: Այս իմաստով է, որ ամեակները կը դառնան կեանք՝ ապրուած պատմութիւն, իրենց տարբեր ելեւէջներով: Ու տակաւին նոյն այդ կեանքին մէջ, եթէ պիտի կարեւորենք ներկան, բայց անոր կողքին նաեւ պիտի նայինք ապագային՝ հորիզոնէն անդին, ծրագրելու համար նոյն կեանքին գալիք օրերը:

Ինչպէս բոլորին, իմ կեանքիս մէջ ալ ամեակները ունեցած են յաջորդական փուլային հոլովոյթներ, որոնք ստեղծած են ինքնութեան եւ պատկանելիութեան գիտակցութիւն: Սակայն հիմնականը եղած է կեանքիս փորձառութեան ընթացքին այդ գիտակցութեան առկուած դաստիարակութեան ընկալումը տարբեր բնագաւառներուն մէջ:

Անշուշտ իւրաքանչիւր փորձի ու փորձառութեան պարագային ինքզինք կը պարտադրէ նաեւ ապրած ամեակներուն իմ մէջս կերտած գիտութիւնը, եւ մասնաւոր ինքնագիտակցութիւնը՝ կեանքիս համար:

Ծնած եմ ընտանիքի մը մէջ, որ երկար տարիներու վրայ ու տարբեր սերունդներու համար ունեցած է ազգային եւ եկեղեցական աւանդ: Եւ այս Այնթապէն-Հասան Պէլիկէն սկսելով, հասնելով՝ Հայլէպ ու շատ Պէյրութ, եւ ներկայիս քիչ մը տարածուած ամեակորէք: Հայրս շատ մանուկ՝ Այնթապէն տեղահանուելով, իր ընտանիքին հետ հասած է Հայլէպ եւ մեծցած ու դաստիարակուած «երազային Հայլէպ»ի այդ ջերմ մթնոլորտին մէջ: Անցած է Պէյրութ եւ մասնագիտացած է որպէս դեղագործ, բայց երաժշտութիւնը մնացած է իր կեանքին սերը: Եւ իր ողջ կեանքին ընթացքին հայկական կեանքին մէջ իր ներդրումը ունեցած է երգի ու երաժշտութեան ընդմէջէն: Մայրս ծնած է Այնթապ, ապա Հայլէպ, եւ եղած է հիւանդապահուիչ:

Ազգային-հայկական կեանքի կազմաւորումս եղաւ եկեղեցիի դաստիարակութեան միջոցաւ: Չունեցայ այսպէս ըսած կուսակցա-

կան-միութեանկան պատկանելութիւն եւ անոր միջոցաւ փոխանցուած ազգային կրթութիւն: Հօրս լռելեան օրհնութեամբ եւ մօրս հզօր քաջալերանքով հասակ առի հոգեւոր-եկեղեցական աշխարհին մէջ, եւ որուն միջոցաւ ալ տակաւ-տակաւ սկսայ բացուիլ ազգային ինքնութեան եւ անոր գիտակցութեան:

Հայրս ապրած էր 1958-ի Լիբանանի քաղաքացիական կռիւները: Եւ ականատես եղած էր այդ կռիւներուն մէջ ներառուած միջհայկական թշնամանքին եւ բախումներուն: Ունեցած էր իր սեփական դեղարանը Պէյրութի Մար Միսայելի շրջանին մէջ, եւ քաղաքացիական կռիւներուն ժամանակ ստիպուած եղած էր միշտ բաց պահելու զայն՝ շտապ օգնութեան հասնելու արտակարգ իրավիճակին: Եւ ի՞նչ ան ապրած էր ցաւը:

Երկու երիտասարդ հայ եղբայրներ, որոնք իր դեղարանին առջեւ հայկական փամփուշտով գետին փռուած էին: Ու կար այդ մէկ երիտասարդ եղբոր նայուածքը իրեն եւ վերջին խօսքը աչքերը փակելէն առաջ. «Քիչ մը ջուր հաճիս»:

Հայրս երբեք չէր պատմած այս պատմութիւնները ինծի: Մայրս էր, որ կը պատմէր. «Ամիսներ հայրդ չի կրցաւ քնանալ», ըսաւ ան: «Փիշերները կ'արթնար շնչահեղձ ու կ'ըսէր - քիչ մը ջուր»: Եւ չէր ուշանար մօրս գոլուացումը ինծի. «Հօրդ բան մը չ'ըսես, որ գիտես այս պատմութիւնները»: Բայց ես կրնայի տեսնել նոյնիսկ այդ ցաւերը հօրս ներաշխարհին մէջ: Երբ քաղաքական նիւթեր կը խօսուէր, կը տեսնէի, թէ հայրս ի՞նչ չէր: Եւ կամ չէր ուզեր ի՞նչ ըլլալ: Պարզապէս իր աշխարհը չէր: Բայց երաժշտութեան հետ ան կը դառնար կեանքին: Եւ կը փորձէր մեր ազգային արժէքները սորվեցնել ինծի՝ երաժշտութեան եւ մշակոյթի միջոցաւ:

1975-ին սկսաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Այս անգամ իմ կարգս էր ապրելու զայն եւ իմ փորձով: Հայրս մեկնեցաւ այս աշխարհէն եւ կարծեք ձգեց ինծի ապրելու զայն, իմ փորձով: Հայ քաղաքական կուսակցութիւններու որդեգրած «դրական չեզոքութիւնը» մէջս ամրապնդեց ազգային հաւասարակշռուած դաստիարակութեան առաջին հիմքը: Եթէ 1958-ի դեպքերը միայն լսած էի, 1975-ի իրադարձութիւնները կ'արժէր բայց նաեւ կը սորվէի ու կը գիտակցէի: Եթէ ահաւոր էր պատերազմը եւ անոր ձգած ողբերգական ցնցումները, բայց կար նաեւ մէջս մեծօրջ ազգային ինքնութեան ու անոր հաւատարմութեան նկատմամբ քննական-առարկայական մտտեցումը: Եւ մեր գաղութի ղեկավարները յաջող կերպով այդ մտտեցումները մեզի փոխանցեցին:

Բայց սորվելու եւ գիտակցելու այս գործընթացը տակաւին երկար էր: Եթէ Ցեղասպանութեան ամեակները համահայկական էին, բայց

ոյ, օրինակի համար, առաջին Հանրապետության հիմնադրութիւնը՝ Մայիս 28-ը: Եւ այս թուականը թէ՛ գիտիք, թէ՛ հայկական էր, բայց մտտիկ չէր: Հոն տեղ մը հորիզոնին վրայ երեցող-չերեցող ամառիկ մը: Ու կարգ մը կրթական հաստատութիւններ՝ յարգելու համար դպրոցները փակ պահելու իրականութիւնը, կը յայտարարէին այդ օրը որպէս «դաշտագնացութեան օր»: Կը հարցնէիք, կը փնտռէիք, ու կը մտածէիք: Թէ ի՞նչ է այս թուականը եւ որո՞ւ է: Մերն է՝ թէ՛ միայն է: Բայց ո՞վ է մերը եւ ո՞րքան են միաները:

Հայկական երկրորդական վարժարանէն ետք պիտի անցնէիք համալսարանական կրթութեան եւ իմ պարագայիս՝ Հայկազեան Թուլժեմ (այժմ համալսարան): Եւ մասնագիտական ուսումին կողքին կային նաեւ ուսանողական գործունէութիւնները: Եւ հոն էր Հայկական Ակումբը եւ անոր ներկայացուցչական կազմը: Եթէ կար կուսակցական ներկայացուցչութիւնը, բայց նաեւ կար համայնքայինը: Եւ քանի՞ անգամ իւրաքանչիւրէն: Թիւի թէ՛ ներկայացուցչական հսկազանքները պէտք էր, որ նկատի առնուէին: Եթէ կազմը ամբողջացուցինք, կարգը կուգար ձեռնարկներուն: Եւ անոր մէջ կարտուր տու պիտի գրաւէր Մայիս 28-ի ձեռնարկը: Ինչո՞ւ պէտք էր կազմակերպուէր եւ ի՞նչ բովանդակութեամբ: Ռ՛վ եւ ի՞նչ պէտք էր որ խօսէր: Ու տակաւին Եռագոյն դրօշակը: Պէտք է՛ր, որ գետեղուէր, թէ՛ ոչ: Կար այդ վարկածը, թէ այդ դրօշակը հատուածական էր: Բայց երե՛ն պիտի սպասէիք հասնելու համար ներկայ օրերուն, ուր Եռագոյնը պիտի գետեղուէր ամէն տեղ հայկական մեր իրականութիւններուն մէջ՝ ներառեալ մեր սրտերուն մէջ:

Հայաստանի Հանրապետութեան ներկայութիւնը Սովետական համակարգի մէջն էր: Հայաստանը մերն էր, բայց նաեւ հեռու է ոչ շատ հասանելի: Զիչ մը կ'ընդունէիք, երբեմն ալ ո՛չ: Կար քաջըջուքը, երկմտանքը ու տարակուսանքը: Իմ պարագայիս, կար հօրեղբօրս տոբթ. Ռուպեր Ճեպլեճեանի հաւատամբը Հայաստանի նկատմամբ: Հօրեղբօրս համար Հայաստանը վեր էր ամէն տեսակի համաձայնութիւն: Արժէք էր եւ այդ գիտակցութեամբ ան իր ողջ կենսակը նուիրեց հայրենիքի կեանքին եւ անոր յառաջխաղացքին: Եւ իր միջոցաւ առջեւ կը բացուէր Հայաստանի գիտա-մտաւորական ու պատմական մեծ աւանդ մը: Բայց կային նաեւ հայրենի արուեստագետներու պարբերական այցելութիւնները եւ լոյսները Պէյրուսի մէջ: Ու տակաւին հայրենի Արարատ ֆուլբոլի խումբը, ուր իւրաքանչիւր մարզիկ մեզի համար դարձած էր ազգային հերոս: Կ'ուրախանայիք, կ'ոգեւորուէիք, կը լիցքաւորուէիք բայց նաեւ մէկ-մէկ ազգային ինքնութեան կազմաւորում կը դառնար այդ բոլորը:

1988-1990: Ղարաբաղեան շարժումը եւ Հայաստանի անկախա-

ցումը: Ու ահաւասիկ պատմութեան մէջ հայրենի երրորդ Հանրապետութիւնը արդէն իմ եւ մեր աշխարհին մէջ էր: Եւ առիթը ունեցայ 1991-1996 տարիներուն կանոնաւորաբար այցելել Հայաստան եւ աշխատիլ՝ հիմնելու համար Աստուածաշունչի Ընկերութեան մեր գրասենեակը հայրենիքի մէջ: Հոս արդէն հայրենիքի իրականութիւնը դարձած էր անմիջական կեանքիս մէջ: Կ'ապրէի զայն, իր հարգատուութեամբ ու ուղքս դրած հայրենի հողին վրայ կ'ապրէի ոչ թէ հեռուն եւ կամ պատմութենէն ինծի փոխանցուած իրականութիւնը եւ կամ դաստիարակութիւնը: Հայրենիքը իրական էր, շօշափելի եւ զգալի իրականութիւն: Եթէ մէկ կողմէ կը տեսնէի հայրենիքը իր հարգատուութեամբ, միւս կողմէ կ'ըմբռնէի զայն իր բոլոր մարտահրաւրներով: Բայց նաեւ կը սորվէի, թէ քննադատութիւնը բաւարար չէ Հայրենիքը պէտք ունի դրական ուժին սրսկումին: Թէ ներկայիս այն է իմ ունեցածս եւ թէ անհրաժեշտ էր զայն պահել, բայց մանաւանդ աւելցնել անոր վրայ: Եւ այս միևնչէ այսօր իմ ապրած կեանքիս փորձն է:

Կիրակոսը չափահաս տարիքի Հայաստան ապրող վարորդ է: Իմ վերջին այցելութիւններես մէկուն ընթացքին խնդրած էի իրմէ, որ զիս տանէր Արցախ: Եւ ճամբորդութիւնը բաւական երկար ըլլալով կար հաճելի գոյցը: Եւ անոր ընդմէջէն իմ հետաքրքրութիւնս: «Կիրակոս, դուն որ ապրած ես սովետական ժամանակաշրջանը ինչպէս կը համեմատես զայն ներկայ օրերու իրականութեանը հետ», եղաւ իմ հարցումներես մէկը:

Կիրակոսը եւ երեւի իր կեանքի փորձէն մեկնելով, ուներ քննական հաւասարակշռուած մօտեցում: «Ո՛չ մէկ տեղ եւ համակարգ անախալ է ամբողջական է», ըսաւ աս: «Սովետի օրերուն ալ նոյնն էր եւ այդպէս պէտք է մօտենալ», շարունակեց Կիրակոս: Ան անդադարձաւ սովետական ժամանակաշրջանին ժխտական եւ դրական կողմեր ունենալու իրականութիւններուն: Եւ ինչպէս արեւելահայրենի մէջ կան դիպուկ արտայայտչական մօտեցումներ: Կիրակոս եզրափակեց. «Սովետական շրջանը ուներ իր միևնույնները եւ բլուսները»:

Հոկտեմբեր 20, 2017: «Ազգակ» օրաթերթի կազմակերպած լսարանի դասախօսն էր Փրոֆ. Աշոտ Մելքոնեանը՝ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ակադեմիայի Պատմութեան հիմնարկի տնօրէնը: Ան խօսեցաւ «Հայաստանի Հանրապետութեան 1918-1920, պատմութիւն եւ արդիական ինդիկները» նիւթին մասին: Փրոֆ. Մելքոնեան քննական-առարկայական մօտեցումով վեր առաւ մեր երեք հանրապետութիւնները եւ անոնց պատմական տուեալները: «Երրորդ հանրապետութիւնը պիտի չ'ըլլայ, եթէ չ'ըլլար երկրորդը, եթէ երկրորդը կեանքի կոչուցաւ, այդ ալ առաջինին շնորհիւ:

Մինչև երրորդ ֆանրապետության երկարող այս շրթան մեք կը պարտիքը 1918-ի Մայիս 28-ի հրաշքին եւ իբրեւ ազգ եւ երկիր պատրաստ ենք յաւուր պատշաճի նշել այդ փառահեղ հարիւր ամեայ յօբելեանը», ըսաւ ան:

Փրոֆ. Մելքոնեանի շրթան կրցայ հետեւցնել ապրած կեանքի փորձառութիւններու շրթայիս: Եւ կեանքիս շրթաներէն իւրաքանչիւրը՝ լսած, ապրած թէ փորձուած, ինք իր պարունակին մէջ դարձաւ ինքնութեան փորձառութիւններու վերահաստատում: Եւ տեսայ նա: Եւ ինչպէս այս փորձառութիւններու շրթան իրարու հետ կապուած եւ զիրար ամբողջացնող իրականութիւն դարձած է: Եւ թէ ինչպէս այն փորձառութիւնները կամաց-կամաց կազմեր են ազգային ինքնութեան հասկացողութիւնը, որ համահայկական է եւ մեր բոլորին կը պատկանի: Ան կը պատկանի իր «մինիւսներով» եւ «բլուսներով»: Մերն է, հայկական է, իւրայատուկ է եւ իւրաքանչիւր հայ պէտք է իր ունեցնէ ու պահէ զայն, մէկ կողմէ սորվելով անցեալէն, իսկ միւս կողմէ պահելու համար ներկան եւ կերտելու համար ապագան:

Ու դարձեալ փրոֆ. Մելքոնեանը. «Թիւր կարծիք է, որ մենք անկախութեան մտայնութիւնը չենք ունեցած: Անկախութեան համար պայքարը շատ անթեղուած ձեւով մեր հասարակական-քաղաքական միտքը իր սրտին մէջ ունեցած է արդէն»:

Եւ անկախութիւնը միայն աշխարհագրական ու հողատարածք-սահմաններու հասկացողութիւն չէ: Ան մտքի, մտածողութեան, ինքնութեան անկախութիւն է: Հոն, ուր հայ մարդը կ'ապրի իր ազգային կեանքը իր հարազատութեամբ եւ հպարտութեամբ: Կ'ապրի այս աշխարհին մէջ եւ կը յարաբերի իր մշակութային եւ անոր ամբողջական ազատութեան հասկացողութեան ընդմէջէն:

Ամեակները մեր պատմութեան մէջ այս ազատութիւնն է, որ կրնաւ ու շնորհած են՝ ինծի համար, եւ իմ իւրաքանչիւր կեանքի փորձառութիւններու ընդմէջէն, ինչպէս նաեւ իւրաքանչիւր հայու համար:

Եւ հայը իր այս ամեակ(ներ)ը պարտի իւրացնել, ինչպէս նաեւ շարունակել պահել ու կերտել նոր ամեակներ:

Ամեակներ՝ ապրուած փորձառութիւններու ընդմէջէն:

Եթէ ամեակը հայուն պատմութիւնն է, ապա ապրուած փորձառութիւնը հայուն անկախութիւնն է՝ հողին, ինքնութեանը եւ մշակութիւնին, հայուն համար, մեր բոլորին համար:



Տարլին ինք տարեկան աղջիկ մըն է: Կ'ապրի էլ Սալվատորի փոքր քաղաքներէն մեկուն՝ Սան Վինսենթի մէջ, ուր կը մասնակցի միջեկեղեցական համագումարի մը եւ կը խօսի Աստուածաշունչի ընկալումի տարբեր բնութագրումներուն մասին՝ անգլերէն լեզուով: Չնշմարտեցի, որ խումբին մէջ կայ նաեւ Տարլին, որ մեծ հօրը հետ եկած էր համագումարին:

Կետորուան ճաշի դաղարին մօտեցաւ ինծի եւ անգլերէնով ըսաւ. «Կ'ուզեմ հետդ անգլերէն խօսիլ, քանի որ դպրոցը կը սորվիմ, եւ լաւ կ'ըլլայ, որ վարժութիւն ընեմ»:

Սիրեցի համարձակութիւնն եւ սկսայ հետը զրուցել՝ հարցնելով իր եւ իր յաճախած դպրոցին մասին: Ուզեցի գիտնալ, թէ ի՞նչ են իր հետաքրքրութիւնները դպրոցը աւարտելէ ետք: «Ի՛նչ կ'ուզես ընել դպրոցը աւարտելէդ ետք»:

«Կ'ուզեմ հայրս տեսնել», եղաւ իր արագ եւ կտրուկ պատասխանը:

Տարլին՝ խարտեաշ մագերով եւ անուշիկ մպիտով, իր հաստատ համոզմունքը տուաւ ինծի: Քիչ մը շուարած էի եւ չէի գիտեր, թէ ինչպէ՛ս աննչէլ իր պատասխանը իմ հարցումիս: Տարլին չսպասեց, որ ես զարմանքս փարատեմ: «Հայրս երեք տարիէ ի վեր Ամերիկա է, եւ զինք չեմ տեսած: Շատ հաւանաբար պիտի չվերադառնայ», ըսաւ ան ու աչքերէն սկսան հոսիլ մանկական անմեղ արցունքներ, որոնց մէջ կար հօրը կարօտը, բայց նաեւ ընտանիք ունենալու ապահովութիւնը:

Տարլինի մայրը կ'աշխատի տեղական վարժարանի մը մէջ իբրև վերակացու: «Գիշերները կը վերադառնայ շատ յոգևած եւ ուժ չ'ունենար ինծի հետ ժամանակ անցընելու», ըսաւ աղջնակը: Արցունքները քիչ մը աւելի հոսեցան, բայց արդէն ես զինք զրկած էի, եւ ան կամակամայ պապհով կը զգար:

Տարլինի հայրը երեք տարի առաջ մեկնած էր Թեքսաս՝ Միացեալ Նահանգներ, գործի աւելի լաւ պայմաններ ձեռք ձգելու եւ հոգալու համար իր ընտանիքին ապրուստը: Այս ալ էլ Սալվատորի ընկերալին կեանքի, տնտեսական դժուար իրականութիւններէն մէկն է: Բայց կար նաեւ այլ երեւոյթ մը: Ան սպառնալիքներ ստացած էր տեղական աւագակախումբերու կողմէ, որոնք սպառնացած են իր կեանքին, եթէ ան իրենց մեծ գումարներ չտայ: Տարլինի հայրը, ճարահատ, փախուստ տուած էր Ամերիկա: Մէկ կողմէ իր ընտանիքի նիւթական ապահովութեան համար, բայց նաեւ իր կեանքին: Այս էլ Սալվատորի իրական կեանքին տխուր երեւոյթներէն մէկն է:

Էլ Սալվատոր շատ գեղեցիկ երկիր մըն է՝ շոքապատուած լեռներով, որոնք հրաբխային են: Խիտ անտառներով ծածկուած է այս երկիրը. կը սկսիս մտածել, թէ արդե՞ք աշխարհի բոլոր ծառերը հոս մէկտեղուած են: Կարելի չէ չինարուիլ երկրին գեղեցկութեամբ եւ անգամ մը ես չհամոզուիլ, որ Աստուծոյ ստեղծագործութիւնը իսկապէս «բարի» է եղած իր գեղեցկութեամբ:

Բայց այդ «բարիին» դիմաց զօրաւոր կերպով կեցած է «չարը»:

«Յրա՛յր, պիտի խնդրի, որ միևնա՛կ դուրսը չըջագայիս»: Փալուն է զիս խրատողը, մեր էլ Սալվատորի գրասենեակի երիտասարդ գործակիցս: «Մեր երկրին մէջ կը գործեն աւագակախումբեր, զորս մենք կը կոչենք Մարա, որոնք պետութեան մէջ պետութիւն հիմնած են եւ մեծ վտանգ կը սպառնան ժողովուրդին», ըսաւ ան:

Էլ Սալվատոր 1980-1992 տարիներուն անցած է քաղաքացիական պատերազմի դառն փորձութիւններու մէջէն, որուն ընթացքին արձանագրուած են բազմաթիւ մարդկային կորուստներ: Պատերազմէն ետք պետութիւնը, ըստ պատշաճի, չէ հոգացած ժողովուրդին՝ ընկերային-հոգեբանական դառն փորձառութիւններուն բուժում ապահովելու ծրագիրներ մշակելով: Եւ այսօր այդ վիճակները բարդացած են եւ վերածուած՝ «կողդպուտի, վայրագութեան եւ մահուան» իրականութիւններու, որոնք կը գործարդուին կազմակերպուած աւագակախումբերու՝ «մարա»-ներու կողմէ, որոնք ահ ու սարսափ կը սփռեն ժողովուրդին մէջ:

«Ամէն ամիս երեսուն հազար մարդ կը ձգէ երկիրը տարբեր ձեւերով», ըսաւ Փալուն: «Մարդիկ կ'ուզեն աւելի լաւ կեանք ու ապագայ եւ հնարաւոր ամէն ձեւ կը գտնեն դուրս ելլելու երկրէն»: Ու տակա-

լին, փոքրերու եւ պատանիներու մաքսանենգութիւնը նոյնքան տարածուած է, որովհետեւ անոնք կը գործածուին մարաներուն կողմէ՝ սպանութիւններ եւ ոճիրներ իրականացնելու նպատակով:

Էռնեսթոն քսանիինգ տարեկան երիտասարդ մըն է, որ կ'աշխատի այն պանդոկին մէջ, ուր իջեանեցի: Ան առեւտրական գիտութեանց ուսանող է տեղական համալսարանին մէջ եւ պանդոկին մէջ այս իր ըրած գործը քիչ մը նիւթական ապահովել է իր ապրուստին եւ ուսման ծախսերուն համար: «Մեր երկրին գլխաւոր մտահոգութիւնը անապահովութիւնն է», ըսաւ Էռնեսթոն: Ան համալսարանը աւարտելէ ետք կ'ուզէ դուրս գալ երկրէն՝ նոր կարելիութիւններ գտնելու նպատակով: Մինչ այդ Էռնեսթոն կարծես գտած է ապրելու ձեւը իր երկրին մէջ: «Երեւի պիտի հաշտուիմք այս կեանքին», ըսաւ ան՝ պզտիկ ու գոհունակ ծախտ մը զծելով իր ունեցիլ վրայ:

Բայց այս երկու իրականութիւններուն մէջէն՝ բարիին, գեղեցիկին, եւ չարին՝ անապահովութեան եւ վայրագութեան, ապրեցայ երրորդ իրականութիւնը: Եւ այդ ալ հեռաւոր էլ Սալվատորի մէջ Արմենիա քաղաքն էր:

Երեւի քիչ մը զարմանալի, բայց նոյնքան ուրախանալի երեւոյթ էր, որ հեռաւոր էլ Սալվատորի մէջ կը մտնէի Հայաստան քաղաքը՝ առանց հայրու: Իսկ անո՞նք: Էլ Սալվատոր կաթողիկէ երկիր է, եւ անոնք Արմենիա անունը տուած են՝ մեկնելով Աստուածաշունչի Նոյեան տապանի պատմութենէն, որ կայք դրաւ Արարատ լեռան վրայ: Ծիշդ է, որ ոչ մէկ հայ կայ, բայց Արմենիա անունը տեսնել քիչ մը ամէն տեղ շատ լաւ ու հպարտանալիք զգացում էր: Բայց չուշացաւ

«չար» զգացումը: Կրնա՞ր ըլլալ, որ կը հասնիք այն օրը, երբ պատմութեան մէջ միայն Արմենիա անունը կը մնայ եւ առանց հայ մարդու:

Խու՛մբ մը եկեղեցական առաջնորդներու դիմաց կը խօսէի ընկերա-լեզուաբանական եւ մշակութային ու ազգային ինքնութեան գործոններուն եւ Աստուածաշունչի ընկալումի գործընթացին մէջ անոնց



ուևեցած ազդեցութեան մասին: Շատ տարբեր դիմագիծներ, իւրաքանչիւրը՝ իւրայատուկ իր ինքնութեանը մէջ, քով-քովի կեցած եւ կազմած են էլսալվատորեան ազգային մշակոյթը: Անպայմանօրէն հարց կու տաս, թէ ինչպէ՛ս կազմաւորուած է այս ժողովուրդը: Ո՛ր է ե՛րբ անոնք միաձուլուած են իրարու հետ եւ կազմած այս նոր ինքնութեամբ երկիրը: Կան սպանական գաղութատիրութեան գործած ատերները: Եւ թէ ինչպէ՛ս նոյն այդ գաղութատիրութիւնը «վերացուցած» է երկրին ազգագրական ու ցեղային ինքնութիւնը, եւ որուն յաջորդած է շատ մը ժողովուրդներու հոսքը դեպի նոր երկիր: Եւ այս հոսքին հետ՝ նոր ժողովուրդը:

Խօսեցայ հայ ժողովուրդին ու անոր պատմութեան, բայց նաեւ Յեղասպանութեան ահաւորութեան եւ անոր պատճառած մեծ ցաւին մասին, այդ ցաւին խթան եղող ազգային ինքնութեան եւ անոր պատկանելիութեան հպարտութեան եւ պահպանումի անհրաժեշտութեան մասին: Դրի առաջարկս բոլորին. «Պետք է հպարտ զգայ ձեր ինքնութեամբ, մշակոյթով եւ Աստուածաշունչը պետք է դնէք ձեր երկրին կեանքին մէջ, որպէսզի բարին զօրանայ»:

Բարին, չարը եւ Արմենիա: Էլ Սալվատորի իմ մէկ շաբթուան ապրած փորձառութիւններս: Բայց բարին պետք է յաղթէ ու իր տեղը գտնէ, որովհետեւ կայ Տարլինը, ու տակաւին՝ բոլոր Տարլիները, որոնք «կ'ուզեն իրենց հայր(եր)-ը տեսնել»: Ու տակաւին՝ Էռնեսթօն եւ բոլոր երիտասարդները, որոնք պետք է հաւատան իրենց երկրի ապագային եւ մնան հպարտ:

Բայց Փաւլոն համոզուած է. «Մեր երկրի դրօշակին վրայ կայ երեք իրականութիւն՝ Աստուած, միութիւն եւ ազատութիւն: Մեր երկիրը այս իրականութիւնները վերածեց լոզունգի՝ առանց դարձնելու զանոնք ապրող իրականութիւններ: Բայց ինծի համար այս երեքը իմ կեանքի ներշնչումս է եւ անոնց միջոցով կը պահեմ եւ կը կերտեմ իմ ինքնութիւնս եւ մշակոյթս»:

Փաւլոն որոշած է մնալ Էլ Սալվատոր: Ան կ'ուզէ աշխատիլ, որպէսզի այս երեք իրականութիւնները սերմանէ հաւաքականութեան կեանքին մէջ, եւ որպէսզի բարին յաղթէ: Ան չ'ուզէր հաշտուիլ իր երկրին ներկայ իրականութեան հետ:

Բայց կայ նաեւ իմ եւ հայուն պայքարը: Արմենիան սոսկ անուն պետք չ'է մնայ: Դոն պետք չ'է հասցնենք երբեք: Արմենիան ապրող կեանք եւ իրականութիւն պարտի մնալ եւ պետք է աշխատիլ՝ պահելու համար զայն:

Բայց մինչ այդ կան Տարլիինն արցունքները նաեւ սրտին փափաքը, որ՝ «կ'ուզէ հայրը տեսնել»:

Մինչեւ ե՛րբ աշխարհ ու անոր բոլոր քաղաքական կարգավիճակ-

ները պիտի անտեսն Տարլիինն ու անոր նման մանուկներու արցունքները: Բարի արցունքները, որոնք՝ «կ'ուզեն իրենց հայրը տեսնել»:

Բարին, չարը եւ Արմենիա:

Պայքարի մեր կեանքերը: Դոն, ուր բարին պիտի կերտել եւ ապրեցնել:

Եթէ Փաւլոյին պայքարն է, բայց նաեւ իմս: Եւ որ նաեւ պետք է դառնայ իւրաքանչիւրիս պայքարը:

Պայքարը՝ բարին կերտելու:

## د. هراير جبه جيان حياة الارمن في الشتات مثلما رأيتها

حرره: د. آردا جبه جيان

يقدم الكتاب مجموعة من المقالات التي كتبها هراير جبه جيان بين عامي 2011 و 2017. ظهرت هذه المقالات في الصحف والمجلات الأرمنية في لبنان والشتات. تتناول المقالات التحديات الوطنية والثقافية والسياسية والاجتماعية والاقتصادية للأرمن في كل مكان تقريبا - من دبي إلى قبرص والولايات المتحدة إلى تشيلي وبولندا إلى تركيا وإثيوبيا إلى أستراليا.

تم تجميع المقالات زمنيا. وهي تسلط الضوء على تجارب المؤلف المباشرة واللقاءات في السنوات السبع الأخيرة مع الأرمن في أفريقيا وآسيا وأستراليا وأوروبا وأمريكا الشمالية وأمريكا الجنوبية. بحق، دراسة إثنوغرافية عن واحدة من أكبر مجتمعات الشتات في العالم، لأنها توثق الحياة اليومية لعدد لا يحصى من الجماعات والأفراد الأرمن المنتشرة في جميع أنحاء العالم وتؤكد نضالهم من أجل الحفاظ على الثقافة الأرمنية والهوية والإيمان.

هراير جبه جيان هو الأمين العام لجمعية الكتاب المقدس في الخليج. حصل على درجة الدكتوراه في اللاهوت من جامعة نيويورك اللاهوتية. وهو متزوج من الدكتورة آردا جبه جيان. لديهم طفلان، فاهه وأليك.

## ARMENIAN DIASPORAN LIVES: AS I SAW THEM

By DR. HRAYR JEBEJIAN

The book offers a collection of articles written between 2011 and 2017. These articles appeared in Armenian newspapers and magazines in Lebanon and the Diaspora. The articles deal with the national, cultural, political, social and economic challenges of Armenians almost everywhere - from Dubai to Cyprus, the US to Chile, Poland to Turkey, Ethiopia to Australia.

The articles are compiled chronologically. They highlight the author's firsthand experiences and encounters in the last seven years with Armenians in Africa, Asia, Australia, Europe, North America and South America. Rightly, an ethnographic study of one of the biggest diaspora communities in the world, as they document the daily lives of countless Armenian communities and individuals scattered globally and underscore their struggle for the preservation of the Armenian culture, identity, and faith.

Hrayr Jebejian is the General Secretary of the Bible Society in the Gulf. He received his doctoral degree in Bible Engagement from the New York Theological Seminary in 2014. He is married to Dr. Arda Jebejian. They have two children, Vahe and Alik.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՂԵՆԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ԽՄԲԱԳԻՐԻ ԽՕՍԲԸԸ

ԳՈԿՏ. ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

ՆԵՐԱՃԱԿԱՆ

ՊՐՕՅԵՏՈՐ ՍՈՒՐԷՆ ԳՆՆԻԷԼԵԱՆ

ԷՁ

5

9

11

## 2011

Ի՞նչ Հաճելի է Հայերեն Լսել	19
«Մենք Միշտ էլ Հայ կը Մնանք»	23
Արձանին Պատգամը	26
ԳԷԱԿԻ ԷՃՃԱՌԱՍ՝ ՈՐԻՉՂ ԾԱՆՀՆԱՂՈՒ ԺԱՏԱՊԵՐԱՎԱՅՐԸ	31
Եղբայրության և Ծառայության Համար Կեանք մը	34
Ընկճուածութեան և Օրինականութեան Գոյապայքարը	36
Խաչին Ուրուականը	41
Կորսուած Զաղա՞ք, քէ՞ Յաւերժական Հայրենիք	45
Հայ Մանուկը և Աստուածաշունչը	49
Ծամբայ Ելան	53
Մակարա Վանքին Հաասարը	55
Մեսրոպին Երկայնճութիւնը	58
Շօփենին Սիբաը	61
Սարկունին Վերադարձը	64
Տարբերութիւններուն Հասարակ Յայտարարը	67
Յեղային Այլազանութիւն և Ազգային Ինքնութիւն	72
Քրիստոսի Ծնունդը՝ Միջո՞ց, քէ՞ Նպատակ	75

## 2012

«Սիփան»-ի Աղջիկներուն Հեզաճկուն Պարը	79
Այսօր Երազ մը Տեսայ	82

Այրող Արժէքները

Անորոշ Վերամուտներ

Իսկ Դուն Ծանօթացար

Իտալիայէն Երկու Նշմար. Կրնա՞նք Շտկել

Հայուն Հպարտութիւնը

Հայուն Երեք Երախտագիտութիւնները

Ծամբայ Ելան Աստղը Գտնելու

Ծշմարիտ Մշակոյթը

Ներքին Առաջնորդութիւն

Նիւ Եորքէն Բացիկ. «Հիմա Տարբեր Անձ մըն եմ»

Ո՞վ Ըսաւ, Ո՞րուն Ըսաւ և Ե՞րբ Ըսաւ

Պահանջատիրութեան Նեղ Դուռը

Սրտերու Նախագահը

Տեղեկատուութեան Մշակոյթը և Պատգամին Ընկալումը

## 2013

«Ալ Գրելու Ուժ Չմնաց»	
«Ես Եկեղեցի Չեմ Երթար»	
«Ի՞նչ Զուգադիպութիւն»	
«Հալէպ կը Ծնին, Պէյրութ Կ'ապրին և Ամերիկա կը Մեռնին»	
«Չեղք Ելած է»	
«Մշակոյթը Զգաստութիւն է»	
Ազատեան Հանդիպումներ. «Չեմ Գիտեր Ինչպէ՛ս Կ'ընեն»	
«Երբ չի Մնում Երբ ու Դար»	
Ժամանակը և Անոր Ստեղծած Պատմութիւնը	
Կիրակոս Գոյումճեանի Կեանքի Կայանները	
և Էութեան Դիրքորոշումները	
Հալէպէն Արժէքներ՝ Յովսէփին Երազը	
Հայրենի Յուշեր. «Դուն Հայերէն կը Խօսիս»	
Հին Բայց Նորոգուող Յաջորդականութիւնը	



Յոյսը, որ կը Վերաշինէ	185
Պուրճ Համուտէն Սկսած Կեանք՝ Վարդանին Անցեալը	189
Վկայութիւն Յորդանանէն. Մեռեալ Ծովն ու Ապրող Եկեղեցին	193
Քրիստոնեայ Եկեղեցին Օտա՞ր, թէ՞ Յրուած	197
Քրիստոնէական Մտածողութիւնը Անհատական	200
Բայց Նաեւ Հաւարական	

## 2014

«Կեանք Չկայ»	205
«Այլ Փանփուշտ Ունիս Միայն»	209
«Վերքը Խորունկ է»	212
«Տղա՛ք, Պիտի Վագենք»	216
Դաստիարակը Մեռաւ, Բայց ոչ Դաստիարակութիւնը	220
Էսթրոնիայէն Հայկական Պատառիկներ.	224
«Եկեղեցին Նոր Չունչ Տուաւ Մեզի»	
Ին՝ Հայկական Սիրտս	229
Իրարէն Առաքելութիւն. Ֆայեզին Յաւը եւ Կոչումը	234
Լաթվիայէն Հայկական Արձագանգներ. Մէկ Եկեղեցի,	238
Երկու Խաչքար եւ Երեսունչորս Դաշարան	
Համաշխարհայնացումը Ազգային	243
եւ Մշակութային Ինքնութեան Վերացո՞ւմ,	
թէ՞ Վերանորոգում	
Հայուն Կիրակի Օրուան Հեքը	251
Հերիին Հայկական Ոսպնեակը	254
Մանկապատանեկան Յուշերէս. «Քեսապ էլ Ժնմիլ»	257
(Գեղեցիկ Քեսապը)	
Միրայէլ Գալաշնիբովի Մղձաւանջը	262
Ո՞վ է Մեղադրողը եւ Զո՞ւլ	265
Պէյրութէն Վարշաւա. «Ես Կ'ուզեմ Յաւը Դուրս Հաննէլ»	269
Ռուկերթ Անիրխանեանի Ապրելու Ուժը	272

Վաչէին Ընտրանքը
Տիգրանին Իտեալը
Քրիստոսի Նորը եւ Քրիստոնէութեան Նորութիւնը

## 2015

Աստուծոյ Թագաւորութիւնը. «Մարդը Ի՞նչ է, որ Զանիկա կը Յիշես»
«Մեր Պատմութիւնը Դաժան է»
Ամնօ Արտոյին Կուէրը
Այլային Անէծքը
Անապատի Խորանը
Աստուծոյ Խոստումը
Կանաչեան, Աքաբիրը եւ «Հոթել Պարոն»
Կը Յիշեմ Եւ Կը Պահանջեմ՝ Մարգարտական Երեակայութեան Մէջէն
Հայուն Բարեկամները
Հաշուատկուած Ուրախութիւնը
Հերոսներուն Կանչը՝ Սեֆերպերլիք
Մաշեցումի Ռազմավարութիւնը Ընդդէմ Արժանապատուութեան Պահանջատիրութիւնը
Մշակութային Եւ Ընկերպեզուաբանական Գործօնները
Աստուածաշունչի Պատգամին Ընկալումին մէջ
Ունեցածդ Ամուր Բոցնէ
Պապենական Տունը. «Կը Յիշեմ եւ կը Պահանջեմ»
Պատգամին Ընկալումը Նաեւ Մամուլով
Պատմութիւնը, որ Ինքզինք կը Կրկնէ
Սիմոնին Որբին Կարօտը
Սուրբշին Ելքի Դամբան
Տունդարձի Երկար Դամբան
Օրօրը, որ Չմահացաւ

## 2016

«Հայկական Փողոց»	375
«Ուրիշ Դամբով Գացին»	381
2016 Ծառայութեան Տարի՝ Ծառայութիւնը Քրիստոնէական Աստուածաբանութեան Պրիսմակէն	384
Աստուծոյ Քով Պահուած	387
«Արձագանգ»ի Երեսուն եւ Հինգ Տարիներու Առաքելութիւնը	390
Բարոյական Յեղափոխութի՞ւն	394
Կտակը	398
«Հայ Տուն»	402
Հայաստանայց Անտարանական Եկեղեցիի 170 Ամակ՝ Ստեղծագործող Եկեղեցին	407
Հայուն Պատերազմը	412
Հինգ Միտոր, Հինգ Ցամաքամաս	416
Չեղէպիին Խոստումը	420
Սահմանաներձ Հայը	425
Սայիտին Ուրախութիւնը	430
Քահանայապետին Կեցուածքը՝ «Չեր Արցունքները եւ Նեղութիւնները Աղօթքի Վերածեցէք»	433
Քրիստոսի Պոհնալեանի Հպարտ Ուխտագնացութիւնը	437

## 2017

«Ազրակ»ին Պատմութիւնը	443
«Պապիկ Լեզուն Խօսա՛»	447
«Յաւր Ինչպէ՞ս Կրնաս Մոռնալ»	451
«Քառս՝ Աշխարհի Ստեղծագործութեան Մէջ»	455
«Դա Ինք Չէր»	458
2017 Հայուն Վերանորոգումի Գործընթացը	462
Արարատի 80 Ամենակը՝ Պատմութիւնը, որ Պէտք է Պահպանուի Բայց Նաեւ Կերտուի	466

Աստրալիայէն Հայկական Կեանքեր. «Կանք, կը Մնանք»	468
Քարերունի Աշտարակը՝ «Լեզուններու Խառնակութիւնը»	473
Երեք Ապրում Իրադարձութիւններ	476
Էմիրաթեան Փորձառութիւններէն՝ Նախարարին Հանդուրժողականութիւնը	480
Լուսերին Վարդը	485
Կարելի չէ Կեանքի Իրականութիւնը Թարցնել	489
Հայկական Մշակոյթ՝ Արողական Կեանք եւ Շարունակականութեան Հիմք	493
Յակոբին Երազը	499
Յովհաննէս Հինգիւնը Քրիստոնէական Աստուածաբանութեան Պրիսմակէն	502
Ոսկան Վարդապետին Տեսիլը	510
Չիլիէն Հայրենի Կարօտ. «Հայաստանը Ինձի Համար Տուն է»	513
Սէուտական Նախածեռնութի՞ւն	518
Սփիւռքի Հայը Քսանմէկերրորդ Դարու Տարբեր Ոլորտներուն Մէջէն	522
Վարդանանց Հերոսամարտի Աւանդը՝ Կատարեալին Նահատակութիւնը	528
«Ամենակներ»՝ Ապրում Փորձառութիւններու Ընդմէջէն	532
«Կ'ուզեմ Հայրա Տեսնել»	537
ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ (Արաբերէն եւ Անգլերէն)	

ԳՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

ՍՓԻՒՌԱԿԱՅ ԿԵԱՆՔԵՐ՝  
ԻՆՉՊԷՍ ՈՐ ՏԵՍԱՅ

د. هراير جبه جيان

حياة الارمن في الشتات مثلما رأيتها

DR. HRAYR JEBEJIAN

ARMENIAN DIASPORAN LIVES:  
AS I SAW THEM


Կողքի ձևաւորում  
ՄԵՂՐԻ ՇԱՄՍԱՍԵԱՆ

Էջաղրում  
ԱՆԻ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ-ՍԱՐԳՍԻՍԵԱՆ

Ընդհանուր Զարտու-  
ղարն է Արաբական  
Ծոցի Աստուածաշուն-  
չի Ընկերության: Ան  
մասնակցած է շատ  
մը ազգային, միջազ-  
գային եւ միջեկեղե-  
ցական համագործար-  
ներու եւ ներկայացու-  
ցած զանազան դասա-  
խօսութիւններ՝ կրօ-  
նական, սուրբ գրա-  
յին, ազգային, մշա-  
կութային եւ միջին արեւելեան քրիստո-  
նեական ներկայութեան մասին: 2010-ին ան  
հրատարակեց իր առաջին հատորը՝ «Հայոն  
Գոյապայքարի Ճանապարհը», ուր ամ-  
փոփոսած էին անոր 30 տարիներու  
փորձածներու հաաքածոն: 2014-ին ստա-  
ցած է Դոկտորական վկայականը Նիւ Եոր-  
քի Աստուածաբանական Ճեմարանէն՝  
քի Աստուածաշունչի Յանձնարութիւն (Bible  
Engagement) ճիւղին մէջ: Պարգեատրուած է  
Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի  
Նախարարութեան «Մայրենի Դեպքան»  
շքանշանով: Ամուսնացած է Դոկտ. Արուս  
Պոյներեան-ձեպէճեանին հետ, եւ ունին երկու  
զտակներ՝ Վահէ եւ Ալիք:



Յ-54  
հ2



ՀԱՄԱՉԳԱՅԻՆ  
«ՎԱԷ ՍԵԹԵԱՆ»  
ՀՐԱՏԱՐԱՎՉԱՏԱՌ